United Nations
Educational, Scientific and
Cultural Organization

International Institute
for Educational Planning

ՀՀ ԿԳ Նախարարություն

ՈՐԱԿԻ ԱՐՏԱՔԻՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Ուղեցույց բարձրագույն կրթության մենեջերների համար

ԵՐԵՎԱՆ
2008

UNE 182478

United Nations Educational, Scientific and Cultural Organization

International Institute for Educational Planning

ՀՀ ԿԳ Նախարարություն

ՈՐԱԿԻ ԱՐՏԱՔԻՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Ուղեցույց բարձրագույն կրթության մենեջերների համար

Միքաելա Մարտին Էնտոնի Ստելլա

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԵՐԵՎԱՆ
2009

ՀՏԴ 378
ԳՄԴ 74.58
Մ 393

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՈՐԱԿԻ ԱՐՏԱՔԻՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Ուղեցույց բարձրագույն կրթության մենեջերների համար

Մ 393 Մարտին Միքաելա, Ստելլա Էնտոնի,
Որակի արտաքին ապահովում
Ուղեցույց բարձրագույն կրթության մենեջերների համար -
Եր.: Կրթության ազգային ինստիտուտ, 2009.- 400 էջ:
Բնօրինակի վերնագիրը. External quality assurance: options for higher education managers
Բնօրինակը հրատարակվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի Կրթության պլանավորման միջազգային ինստիտուտի կողմից :
Էժեն Դելակրուա փողոց 7-9, բ. Փարիզ 75016, Ֆրանսիա.

Սույն ուղեցույցը բարգմանվել և հրատարակվել է Կրթության ազգային ինստիտուտի կողմից, ՅՈՒՆԵՍԿՕ-ի Կրթության պլանավորման միջազգային ինստիտուտի համաձայնությամբ:

Հրատարակությունում ներկայացված մտքերը և կարծիքները հեղինակներին են և կարող են չհամընկնել ՅՈՒՆԵՍԿՕ-ի կամ Կրթության պլանավորման միջազգային ինստիտուտի տեսակետների հետ : Օգտագործված բնաբռնումները և ներկայացված տվյալները չեն պարունակում ՅՈՒՆԵՍԿՕ-ի կամ Կրթության պլանավորման միջազգային ինստիտուտի կողմից երկրների, տարածաշրջանների, քաղաքների կամ տարածքների կամ դրանց իշխանության իրավական կարգավիճակի, ինչպես նաև սահմանների վերաբերյալ որևէ դիրքորոշում:

ԳՄԴ 74.58

Մասնագիտական խմբագիր՝ Արայիկ Նավոյան

Խմբագիրներ՝ Վրեժ Սարգսյան
Վաղարշակ Խաչատրյան

ISBN 978-9939-806-04-4 © Կրթության պլանավորման միջազգային ինստիտուտ - ՅՈՒՆԵՍԿՕ
© Կրթության ազգային ինստիտուտ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ծանոթություն.....4

Մոդուլ 1. ՈՐԱԿԻ ԱՐՏԱՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ.....5

Մոդուլ 2. ՈՐԱԿԻ ԱՐՏԱՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱՆՑԿԱՑՈՒՄ.....72

Մոդուլ 3. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՀԻՄՆՈՒՄ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ.....155

Մոդուլ 4. ՈՐԱԿԻ ԸՄԲՌՆՈՒՄ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ.....236

Մոդուլ 5. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐՈՂՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ ԵՎ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ.....315

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում բարձրագույն կրթության մասսայականցման, բուհերի ինքնավարության ընդլայնման, եւ պետական ֆինանսվորման կրճատման համատեքստում առանձնակի կարեւորվում է որակի արտաքին ապահովման ժամանակակից համակարգերի դերը որպես պետական կանոնակարգման միջոցի Այն հնարավորություն է տալիս ապահովել անհրաժեշտ որակ բարձրագույն կրթությունը ծառայեցնելու ազգային, պետական, հասարակական զարգացման առաջնահերթություններին եւ դիմագրավելու միջազգային ինտեգրման ընթացքում առաջացող մարտահրավերները՝ առանց խաթարելու բուհական ինքնավարությունն ու ակադեմիական ազատությունը

Միաժամանակ, որակի արտաքին ապահովման նման համակարգի հաջող ներդրումը եւ արդյունավետությունը մեծապես պայմանավորված են որակի ապահովման ժամանակակից տեսությունների ու մեթոդների իմացությամբ մասնագետների առկայությամբ եւ դրանց վերաբերյալ բարձրագույն կրթության հիմնական շահառուների իրազեկմամբ.

ՅՈՒՆԵՍԿՕ-ի Կրթության պլանավորման միջազգային ինստիտուտի «Որակի արտաքին ապահովում. ուղեցույց բարձրագույն կրթության մենեջերների համար» ուսումնական նյութի հայերեն հրատարակության նպատակը Հայաստանի բարձրագույն կրթության մենեջերների՝ որակի ապահովման ժամանակակից տեսությունների, համակարգերի եւ մեթոդների վերաբերյալ իրազեկության մակարդակի բարձրացումն է: Տարբեր երկրներում որակի արտաքին ապահովման համակարգերի ներդրման փորձառության հայերեն ներկայացումը նաեւ հնարավորություն է քննարկելու մեր պայմաններում դրանց տեղայնացման եւ կիրառման արդյունավետ ճանապարհները.

Կարծում ենք հրատարակությունը կհանդիսանա յուրահատուկ ուղեցույց Կրթության եւ գիտության նախարարության, Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի, բուհերի ղեկավարների, պրոֆեսորադասախոսական անձնակազմի, ուսանողների եւ բարձրագույն կրթության այլ շահառուների համար·

Սիրով ակընկալում ենք ընթերցողների առաջարկությունները եւ դիտողությունները ուղեցույցի հայերեն հրատարակության բարելավման ուղղությամբ:

Մոդուլ 1

ՈՐԱԿԻ ԱՐՏԱՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Մոդուլի նպատակները 12

Խորհելու հարցեր 13

Ներածություն 14

Որակի արտաքին ապահովման դերը որակի ապահովման համակարգերում 15

1. Բարձրագույն կրթության համակարգերի զարգացման հիմնական տենդենցները 15
2. Ակադեմիական որակի կանոնակարգման քաղաքականության այլընտրանքային միջոցներ 24
3. Որակի արտաքին ապահովման դերը որակի ապահովման ընդհանուր համակարգում 27
4. Որակ. ընդհանրական և բազմաչափ հասկացություն 29
5. Սահմանումներ. որակի ապահովում, որակի վերահսկում, որակի գնահատում, որակի աուդիտ և հավատարմագրում 31
6. Հավատարմագրման համակարգերի նպատակները և արդյունքների կիրառողները 36

Որակի արտաքին ապահովման համակարգերի հիմնական կազմակերպական և մեթոդաբանական տեսակների ընտրությունը 38

1. Որակի արտաքին ապահովման հիմնական նպատակները 39
2. Որակի արտաքին ապահովման հիմնական մոտեցումները 42
3. Որակի արտաքին ապահովման համակարգերի գործունեության շրջանակը 56
4. Եզրակացություններ 65

Յուրացված դասեր 67

Գրականություն 70

Հապավումների ցանկ

ՆԲԴԶԱ / AACSB	Նախապատրաստական Բիզնես Դպրոցների Զարգացման Ասոցիացիա (ԱՄՆ) / Association to Advance Collegiate Schools of Business (US)
ՔԴՔՀ-ՀԳ / ACSCU-AA	Քրիստոնեական Դպրոցների, Քոլեջների և Համալսարանների Հավատարմագրման Գործակալություն (ԱՄՆ) / Association of Christian Schools, Colleges and Universities Accrediting Agency (US)
ԲԿԵԿ / CEPES	Բարձրագույն Կրթության Եվրոպական Կենտրոն (Ռումինիա) / European Centre for Higher Education (Romania)
ԲԿԱԽ / CESU	Բարձրագույն Կրթության Ազգային Խորհուրդ (Կոլումբիա) / National Council for Higher Education (Colombia)
ԲԿՀԽ / CHEA	Բարձրագույն Կրթության Հավատարմագրման Խորհուրդ (ԱՄՆ) / Council for Higher Education Accreditation (US)
ՀԱԽ / CNA	Հավատարմագրման Ազգային Խորհուրդ (Կոլումբիա) / National Council for Accreditation (Colombia)
ԲԿԳԱԿ / CNE	Բարձրագույն Կրթության Գնահատման Ազգային Կոմիտե (Ֆրանսիա) / National Higher Education Evaluation Committee (France)
ԳՀԱԽ / CONEAU	Գնահատման և Հավատագրման Ազգայի Խորհուրդ (Արգենտինա) / National Evaluation and Accreditation Council (Argentina)
ՈԱԵՑ / ENQA	Որակի Ապահովման Եվրոպական Ցանց / European Network for Quality Assurance
ՈԱԱ / EQA	Որակի Արտաքին Ապահովում / External quality assurance
ՖՀԳՖ / FAAP	Ֆիլիպինների Հավատարմագրման Գործակալությունների Ֆեդերացիա / Federation of Accrediting Agencies in the Philippines
ՍՈԱԸՀ /GATS	Սպասարկման Ոլորտում Առևտրի Ընդհանուր

	Համաձայնագիր / General Agreement on Trade in Services
ԲՈՒՀ / HEI	Բարձրագույն ուսումնական հաստատություն / Higher education institution
ՀԱԸՇ / MERCOSUR	Հարավային Ամերիկայի Ընդհանուր Շուկա / Common Market of South America
ԿՆ / MOE	Կրթության նախարարություն / Ministry of education
ԳՀԱԽ / NAAC	Գնահատման և Հավատարմագրման Ազգային Խորհուրդ (Հնդկաստան) / National Assessment and Accreditation Council (India)
ՀԱԿ / NAC	Հավատարմագրման Ազգային Կոմիտե (Հունգարիա) / National Accreditation Committee (Hungary)
ՀԿԱ / NCA	Հյուսիսային Կենտրոնական Ասոցիացիա (ԱՄՆ) / North Central Association (USA)
ՈԳՀԱԳ / NQAAA	Որակի Գնահատման և Հավատարմագրման Ազգային Գործակալություն (Եգիպտոս) / National Quality Assurance and Accreditation Agency (Egypt)
ՀԱԱ / NWA	Հյուսիսարևմտյան Ասոցիացիա (ԱՄՆ) / Northwest Association (USA)
ՖՊՔՀՀԱ / PAASCU	Ֆիլիպինների Դպրոցների, Քոլեջների և Համալսարանների Հավատարմագրման Ասոցիացիա / Philippine Accrediting Association of Schools, Colleges and Universities
ՖՔՀԱ-ՀՀ / PACU-COA	Ֆիլիպինների Քոլեջների և Համալսարանների Ասոցիացիա - Հավատարմագրման Հանձնաժողով և Քրիստոնեական Դպրոցների, Քոլեջների և Համալսարանների Ասոցիացիա / Philippine Association of Colleges and Universities – Commission on Accreditation and the Association of Christian Schools, Colleges and Universities
ԲԿՈՀԻՑ / RIACES	Բարձրագույն Կրթության Որակի և Հավատարմագրման Իբերոամերիկյան Ցանց / Iberoamerican Network for Quality and

	Accreditation of Higher Education
ՀԱԺԿ / TNAC	Հավատարմագրման Ազգային Ժամանակավոր Կոմիտե (Հունգարիա) / Temporary National Accreditation Committee (Hungary)
ՀԴՀ / UGC	Համալսարանական Դրամաշնորհների Հանձնաժողով / University Grants Commission
ԴՔԱԱ / WASC	Դպրոցների և Քոլեջների Արևմտյան Ասոցիացիա (ԱՄՆ) / Western Association of Schools and Colleges (USA)
ԱՀԿ / WTO	Առևտրի Համաշխարհային Կազմակերպություն / World Trade Organization

Ներդիրների ցանկ

Ներդիր 1. Տարածաշրջանային ինտեգրացիոն գործընթացները և որակի ապահովումը 20

Ներդիր 2. ԱՄՆ հավատարմագրման համակարգի միջազգային նշանակությունը. Բարձրագույն Կրթության Հավատարմագրման Խորհուրդի (ԲԿՀԽ/CHEA) տեղեկատվական բազան բացահայտում է ոչ ամերիկյան սակայն ամերիկյան հավատարմագրում անցած մի շարք համալսարաններ 23

Ներդիր 3. Պարտադիր հավատարմագրումը Հունգարիայում..... ... 43

Ներդիր 4. ԱՄՆ-ի հավատարմագրման տարածաշրջանային գործակալությունների կողմից կիրառվող չափորոշիչների վրա հիմնված մոտեցումը..... 46

Ներդիր 5. Ֆրանսիայի Գնահատման ազգային կոմիտեի «Չափորոշիչների գիրքը»..... 48

Ներդիր 6. Բարձր որակի հավատարմագրումը Կոլումբիայում..... 50

Ներդիր 7. Նորվեգիայում կիրառվող որակի աուդիտը..... .53

Ներդիր 8. Մասնավոր բարձրագույն կրթություն տրամադրողների նկատմամբ որակի վերահսկման պարտադրանքի քաղաքականությունը Հարավային Աֆրիկայում.....57

Ներդիր 9. ԱՄՆ հավատարմագրման համակարգի ճկունությունը 59

Ներդիր 10. Պետության կողմից հաստատված ծրագրերի պարտադիր հավատարմագրման պահանջը Արգենտինայումմ.....63

Աղյուսակների ցանկ

Աղյուսակ 1. Ակադեմիական որակի կարգավորման այլընտրանքային քաղաքականության միջոցներ ըստ ներգործության ոլորտի.....26

Աղյուսակ 2. Բարձրացույց կրթության համակարգում որակի ապահովման գործառույթների աղյուսակ 28

Աղյուսակ 3. Հավատարմագրման համակարգերի օգտագործումը տարբեր շահառուների կողմից.....37

Աղյուսակ 4. Որակի արտաքին ապահովման համակարգերում կիրառվող հիմնական տարբերակների դասակարգումը ...55

Մոդուլի նպատակները

Այս մոդուլը՝

- ներկայացնելու է միջազգային այն զարգացումները, որոնք երկրներին մղում են ստեղծել որակի արտաքին ապահովման համակարգեր (ՈԱԱ),
- բացատրելու է, թե ինչպես են որակի արտաքին ապահովման մեխանիզմները համապատասխանեցվում որակի ապահովման ընդհանուր համակարգերին,
- մեկնաբանելու է « որակ » գաղափարը և սահմանելու է որակի արտաքին ապահովման հետ կապված հիմնական հասկացությունները,
- քննարկելու է որակի արտաքին ապահովման համակարգերի ընդհանուր նպատակը,
- կապելու է այդ ընդհանուր նպատակը հիմնական կազմակերպական և մեթոդաբանական տարբերակներին:

Այս մոդուլն ավարտելուց հետո ակնկալվում է, որ դուք կկարողանաք՝

- հասկանալ որակի արտաքին ապահովման համակագերի ներդնման համատեքստային գործոնները և քաղաքականության նպատակները,
- սահմանել որակի արտաքին ապահովման հետ կապված տարբեր հասկացություններ, ինչպես օրինակ՝ գնահատում, աուդիտ և հավատարմագրում
- հասկանալ որակի արտաքին ապահովման դերը կառավարությունների կողմից իրագործվող որակի ապահովման գործառույթում,
- տարբերակել որակի արտաքին ապահովման մեխանիզմի ներդնման հիմնական կազմակերպական տարբերակները:

Խորհելու հարցեր

Որո՞նք են որակի ապահովման հիմնական կառույցները իմ երկրի բարձրագույն կրթության համակարգում:

Ազգային մակարդակով ներկայումս որակի ապահովման ո՞ր գործառույթներն են թույլ և կարիք ունեն հետագա զարգացման:

Ինչպիսի՞ դեր է խաղում, կամ կարող է խաղալ որակի արտաքին ապահովման մեխանիզմը այս պարագայում:

Որակի արտաքին ապահովման համակարգի կազմակերպման ո՞ր տարբերակները կարող են առավել համապատասխան լինել իմ երկրի համար:

Մոդուլ 1

Ներածություն

Բարձրագույն կրթության քաղաքականության մշակումը և կառավարումը ավանդաբար առընչվում է ակադեմիական գործընթացների և չափորոշիչների ապահովման ու բարելավման խնդրին: Դրանք ապահովելու համար ըստ համակարգի կառուցվածքի կիրառվում են տարատեսակ վարչական միջոցներ: Առավել կենտրոնացված կառավարում ունեցող երկրների բարձրագույն կրթության համակարգերում մեծ տեղ է տրվում բյուրոկրատական կառավարմանը, մինչդեռ ոչ կենտրոնացված կառավարում ունեցող երկրներում զգալի ինքնուրույնություն է տրվում բարձրագույն ուսումնական հաստատություններին՝ (ԲՈՒՀ-եր) որակի ապահովման իրենց սեփական համակարգը հաստատելու հարցում:

Որակի արտաքին ապահովման (ՈԱԱ) մեխանիզմները կարող են այս երկու տիպի վարչական մոտեցումների դեպքում էլ որպես միջոց ծառայել որակի ապահովման ավանդական մեխանիզմների առկա թերությունները շտկելու համար: Իրապես, հաճախ ազգային կառավարությունները ունակ չեն և հնարավորություն չունեն արդարացիորեն գնահատել ակադեմիական ծրագրերի և հաստատությունների որակը: Միևնույն ժամանակ, դժվար է չափորոշիչները համեմատել, երբ բարձրագույն կրթության հաստատությունները իրենք իրենց ծառայությունների և տրամադրողն են, և գնահատողը:

Բացի այդ, գլոբալիզացիան լայնորեն ներգործում է բարձրագույն կրթության վրա և նոր մարտահրավերներ առաջադրում նրա կարգավորմանն ու կառավարմանը: Մինչ բարձրագույն կրթության տրամադրումը դառնում է էլ ավելի բազմակողմանի, գլոբալիզացիան իր հերթին առաջադրում է ստանդարտացման ավելի լայն պահանջարկ՝ որպեսզի ավելի հեշտ լինի որակավորումները գնահատելը: Ահա թե ինչու վարչական մոտեցում և ավանդույթ ունեցող շատ երկրներում գնալով աճում է որակի արտաքին ապահովման պահանջարկը:

Սա որակի արտաքին ապահովման համակարգերի հինգ մասից բաղկացած շարքի ներածական մոդուլն է: Գլուխ 1-ում ներկայացվում է որակի արտաքին ապահովման տեղը որակի ապահովման ավելի լայն համակարգի սահմաններում՝ ազգային մակարդակով: Որակի արտաքին ապահովումը որակի երաշխավորման մի նոր գործառույթ է ավելացնում,

որը տվյալ դեպքում ընկալվում է որպես բարձրագույն կրթության կառավարման մասնի կողմից իրականացվելիք ազգային գործառույթ: Գլուխ 1-ը ներկայացնում է նաև որոշ հիմնական հասկացությունների սահմանումը՝ դրանց ընդհանուր ըմբռնումը մշակելու և սկզբունքային պարզաբանումը ապահովելու նպատակով: Գլուխ 2-ը ներկայացնում է այժմ արդեն լայնորեն ընդունված որակի արտաքին ապահովման եռափուլ մոդելը, ինչպես նաև որակի արտաքին ապահովման համակարգ նախագծելիս անհրաժեշտ մի շարք հիմնական տարբերակների ընտրությունը: Այս հիմնական տարբերակների ընտրությունը մեծապես կախված է որակի արտաքին ապահովման համակարգի ընդհանուր նպատակից, ինչն իր հերթին նրա գործառույթներից մեկն է՝ պայմանավորված որակի ապահովման ազգային համակարգում նրա հավելյալ դերով:

Որակի արտաքին ապահովման դերը որակի ապահովման համակարգերում

1. Բարձրագույն կրթության համակարգերի զարգացման հիմնական տենդենցները

Ողջ աշխարհում բարձրագույն կրթության համակարգերի վրա ուժեղ ներգործություն են ունենում մի շարք ընդհանուր ու հաճախ փոխկապակցված գործոններ: Այդ գործոնները թե ազգային, և թե ինստիտուցիոնալ մակարդակում պահանջում են շարունակական փոփոխություններ կատարել և հարմարվել իրավիճակին:

Աճող հասարակական պահանջարկը և համակարգերի ընդլայնումը

Վերջին տասնամյակների ընթացքում գնալով աճում է բարձրագույն կրթության հասարակական պահանջարկը՝ մասնավորապես զարգացող երկրներում: Դրա հետևանքով կրթական համակարգերը ավելի են ընդլայնվում, մինչդեռ այս պահանջարկին արձագանքելու համար անհրաժեշտ ֆինանսական հնարավորությունները հաճախ համապատասխան չեն: Ողջ աշխարհում ուսանողների ներգրավվածությունը 1998/1999թ. 69.4 միլիոնից աճել է մինչև 120.4 միլիոնի 2002/2003թ:

Եթե բացառենք Հյուսիսային Ամերիկան և Արևմտյան Եվրոպան, աշխարհի մնացած երկրներում ուսանողների ներգրավվածությունը միայն վերջին չորս տարվա ընթացքում ավելի քան կրկնապատկվել է՝ 41.1 միլիոնից հասնելով 88.2 միլիոնի: Միայն Չինաստանի բաժնեմասը

1998/1999թ. 6.4 միլիոնից ավելացել է մինչև 15.2 միլիոն 2002/2003թ (UNESCO, 2006, Աղյուսակ 9A).[1]

Ավելի մեծ թվով ուսանողներ ներգրավելու նպատակով կրթական համակարգերը ավելի բազմակողմանի են դարձել: Այսպես, զարգացել է ոչ համալսարանական, միջին մասնագիտական կրթության ոլորտը և դասընթացները գնալով ավելի հաճախ դասավանդվում են հեռավար ուսուցման միջոցով: Արդյունքում, ազգային իշխանությունների համար ավելի դժվար և բարդ է դառնում որակի ապահովումը ավանդական մեխանիզմների միջոցով:

Բարձրագույն կրթության մասնավորեցումը

Շատ երկրներ, որոնք անցյալում հավատարիմ էին միայն պետական կրթության համակարգերին, այլևս ֆինանսական միջոցներ չունեն դրա աճող պահանջարկը բավարարելու համար: Արդյունքում, շատ երկրներ ստիպված էին օրենսդրորեն թույլատրել բարձրագույն կրթության մասնավոր ոլորտի զարգացումը:

Վերջին տասնամյակի ընթացքում առկա է մասնավոր բարձրագույն կրթության տրամադրման հսկայական աճ՝ հատկապես զարգացող երկրներում: Պետական բարձրագույն ուսումնական հաստատությունները մեծամասամբ նույնպես կրեցին մասնավորեցման գործընթացի ազդեցությունը՝ ծախսերի տարաբաշխման կարգավորումից և եկամուտ բերող գործոններից աճող կախվածության պատճառով: Շատ երկրներում մասնավորեցման գործընթացների հետևանքով բարձրագույն կրթության տրամադրումը հատկապես որակի առումով դարձել է ավելի անհավասար:

Աճում է բարձրագույն կրթության ընկալումը որպես շուկայական ապրանք

Առկա է բարձրագույն կրթության՝ անհատի համար օգտակարության դերի ընդունումը: Դա մասնավորապես վերաբերում է մասնագիտական որակավորումներին, որոնք անհատ մարդկանց անկասկած մեծ օգուտներ են ապահովում: Մասնավորապես, և պետական, և մասնավոր ԲՈՒՀ-երը՝ ինչպես ազգային, այնպես էլ միջազգային շուկայում, նշանակետ են վերցրել աշխատող չափահասներին բարձրագույն կրթություն տրամադրելը (ուսուցում ողջ կյանքի ընթացքում):

[1] Համաձայն Չինաստանի Պետական Վիճակագրական ծառայության պատրաստած Ազգային կրթության զարգացման Վիճակագրական տեղեկագրի 2004թ. տարբեր ԲՈՒՀ-երում ընդգրկվածների թիվն անցնում էր 20 միլիոնից: Այսպիսով Չինաստանը հայտնվել է ցուցակի առաջին տեղերում՝ ըստ ընդգրկվածության մակարդակի:

ՄՈԴՈՒԼ 1 - Որակի արտաքին ապահովման համակարգերի հիմնական տարբերակների ընտրությունը

Արդյունքում, բարձրագույն կրթության որոշակի սեգմենտներ (չափահասների բարձրագույն մասնագիտական կրթությունը) շատ երկրներում դիտարկվում են որպես շուկայական ապրանք: Որոշ կառավարություններ ակտիվորեն քաջալերում են իրենց պետական ԲՈՒՀ-երին այս դաշտի ավելի ակտիվ մասնակիցները դառնալու:

Մասնագիտական բարձրագույն կրթություն տրամադրելու գործընթացի աճի հետ, ինչի զգալի մասը կազմակերպվում է մասնավոր տրամադրողների կողմից, հարցականի տակ է դրվում նաև կառավարությունների՝ որակ ապահովողի ավանդական դերը, ինչպես նաև այն մեթոդները, որ կառավարությունները կիրառում են այս դերը կատարելու համար:

Ապակենտրոնացումը և կառավարությունների պահանջը՝ արժեք փողի դիմաց

Ներկայումս շատ երկրերում կառավարությունները կազմվում են Հասարակական կառավարման նոր մոդելի համաձայն[2], ինչը ստիպել է դրանց որպես հասարակական իշխանության մարմին վերանայել իրենց դերը: Այս մոդելի ազդեցության տակ աճող տենդենցներից մեկը ապակենտրոնացման նկատմամբ աճող վստահությունն է և պետական իշխանության ապակենտրոնացումը, իշխանության փոխանցումը պետական մարմիններից ուսումնական հաստատություններին:

Շատ երկրներում ապակենտրոնացումը պետական հաստատությունների ավելի լայն բարեփոխման մի մասն է կազմում: Նման դեպքերում գերակա միջոցներ են հանդիսանում կառույցների և աշխատակազմի կողմից որոշում կայացնելու դրդապատճառների ապակենտրոնացումը, քննարկումները նպատակների և նշանակետերի վերաբերյալ, ելքային ցուցանիշների վերահսկումը և ելքային ցուցանիշի չափումների վրա հիմնված ֆինանսավորման համակարգը: Այդ միջոցները կապված են այնպիսի հասկացությունների հետ, ինչպիսիք են ինքնակարգավորումը և ինքնավարությունը:

Այս համատեքստում կառավարությունները հակված են ընդունել կատարելագործված մեխանիզմների անհրաժեշտությունը, որոնցով կարող են ապահովել որակի վերահսկողությունը հեռավորության վրա՝ կարևորելով հաշվետվողականությունը:

Այն երկրներում որտեղ բարձրագույն կրթությունը ղեկավարվում է «անուղղակիորեն», իշխանությունները սահմանափակում են իրենց դերը պատրաստելով ուղեցույցներ և տրամադրելով ռեսուրսներ ու խրախուսման այլ միջոցներ: Միևնույն ժամանակ, ուսումնական հաստատությունները և պետությունը բանակցում են գործունեության կոնկրետ նպատակների և ելքային ցուցանիշների վերաբերյալ: Այսպիսով, հաշվետվողականությունը և վստահությունը.ներառվում են քաղաքական օրա-

[2] New Public Management (թարգմ.)

ՄՈԴՈՒԼ 1 - Որակի արտաքին ապահովման
համակարգերի հիմնական տարբերակների ընտրությունը

կարգի մեջ, իսկ ԲՈՒՀ-երը ավելի մեծ ազատություն են ստանում ինքնուրույն որոշումներ կայացնելու համար: Միաժամանակ, քաղաքական գործիչները, կառավարությունը, խորհրդարանը և քաղաքացիները ցանկանում են համոզված լինել, որ ԲՈՒՀ-երը հասարակությանը համապատասխան ծառայություններ են տրամադրում:

Ավելի քան երբևէ կառավարությունները ԲՈՒՀ-երից ակնկալում են, որ նրանք երաշխավորեն և ներկայացնեն «արժեք փողի դիմաց», ինչպես նաև հաշվետու լինեն իրենց հաճախորդների և ողջ հանրության առջև: Հետևաբար, աշխարհի շատ երկրներում ԲՈՒՀ-երը ստիպված են տեղեկատվություն տրամադրել իրենց արդյունքների, ինչպես նաև ծախսերի վերաբերյալ:

Հակումը դեպի շուկան և շուկայի թափանցիկությունն ապահովելու սպառողի պահանջը

Կառավարությունների գործունեության նոր ձևերը հաճախ հենվում են շուկայական մեխանիզմների վրա: Որոշ երկրներ այս բնագավառում ուժեղ ավանդույթներ ունեն, մինչդեռ մյուսները նոր են դրանք ընդունել: Չափազանց բազմաբնույթ և շուկայական հարաբերություններին կողմնորոշված համակարգերում, ինչպես օրինակ Ամերիկայի Միացյալ Նահանգներում, հավատարմագրման միջոցով սպառողներին և հանրությանը տեղեկատվության տրամադրումը հնուց եկող գործելակերպ է: ԲՈՒՀ-երի գործունեության մասին տեղեկատվության տրամադրման պահանջը ուսանողների և ծնողների կողմից նկատելի են դարձել նաև այլ տարածաշրջաններում, որոնք գնալով ավելի հակված են ղեկավարվելու շուկայական հարաբերություններով: Նույնիսկ խիստ կենտրոնացված կառավարում ունեցող երկրների բարձրագույն կրթության համակարգերում նկատելի է հակումը ընդլայնելու ԲՈՒՀ-երի ինքնավարությունը:

Նման դեպքերում որակի արտաքին ապահովման մեխանիզմը սովորաբար վերահսկում է մուտքային ցուցանիշները, քան թե արդյունքները և պետք է հարմարեցվի տեղական մշակույթին:

Գլոբալիզացիա

Բարձրագույն կրթության համակարգերը գնալով ավելի շատ են զգում գլոբալիզացիայի ազդեցությունը: Տարածաշրջանային ինտեգրացիոն գործընթացների և առևտրական համաձայնագրերի ոլորտներում վերջին զարգացումները, ինչպես նաև տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաները, առաջ են բերում ապրանքների, կապիտալի ու մարդկանց միջազգային տեղաշարժի լայն հնարավորություններ: Դրանք զգալի ազդեցություն են թողել բարձրագույն կրթության համակարգի կառուցվածքի, բովանդակության և մատուցման ձևերի վրա ողջ աշխարհում: Իրապես, առևտրական պայմանագրերը առաջ են բերել շարժունակության

աննախադեպ աճ որոշակի մասնագիտությունների գծով: Մի շարք մասնագիտությունների համաշխարհայնացումը աճող մասնագիտական շարժունակությունը ուժեղ ճնշում են գործադրում կառավարությունների և ուսումնական հաստատությունների վրա՝ առաջացնելով աշխատանքի միջազգային շուկայի կողմից ճանաչվող որակավորումներ ստանալու պահանջարկ: Ավելին, մեծանում է շահագրգռությունը կրթական չափորոշիչների համեմատելիության հարցում:

Սպասարկման Ոլորտում Առևտրի Ընդհանուր Համաձայնագիրը (ՍՈԱԸՀ) և առանց սահմանների շուկաներ բարձրագույն կրթության համար

Բարձրագույն կրթության մեջ գլոբալիզացիայի ուղղակի դրսևորումը «միջազգային բարձրագույն կրթության» շարունակական աճն է: Այն ընդգրկում է ուսումնական ծրագրերը, ուսումնական դասընթացների կամ կրթական ծառայությունների ամբողջությունը (ներառյալ հեռավար ուսուցումը), որի դեպքում մասնակիցները մեկ այլ երկրից են, իսկ որակավորում շնորհող հաստատությունը տեղակայված է մեկ ուրիշ երկրում: Միջազգային կրթությունը հաճախ առաջնորդվում է կոմերցիոն նպատակով և ընկալվում է որպես «կրթական ծառայությունների միջազգային առևտուր»:

Տեղին է ընդգծել, որ թե միջազգային կրթությունը, և թե դրա կոմերցիոն կիրառությունը բոլորովին նոր երևույթ չեն: Սակայն, դրա զարգացման արագացումը նոր երևույթ է, և աճի միտում ունի: Իսկապես, Առևտրի Համաշխարհային Կազմակերպությունը մտադիր է «կրթական ծառայությունները» ներառել Սպասարկման Ոլորտում Առևտրի Ընդհանուր Համաձայնագրի (ՍՈԱԸՀ) շրջանակներում: Սա սա հանգեցրել է այն փաստի գիտակցմանը, որ բարձրագույն կրթությունը վերածվել է համաշխարհային շուկայական ապրանքի և որի միջազգային մակարդակով կարգավորման համար գոյություն չունեն համապատասխան միջոցներ: Միջազգային բարձրագույն կրթությանը առընչվող մասնավոր խնդիրները կդիտարկվեն *Մոդուլ 5-ում:*

Որակի ապահովման ծառայությունների միջազգային շուկան

Կրթական ծառայությունների համաշխարհայնացմանը միտված շարժումը ներառում է նաև որակի ապահովման և հավատարմագրման ծառայությունները: Ազգային մակարդակով գործող հավատարմագրման մասնավոր գործակալություններից շատերը, հատկապես կառավարման կամ ճարտարագիտության մասնագիտական բնագավառներում, իրենց ծառայություններն են առաջարկում այլ երկրներում տեղակայված կազմակերպություններին: Այդ իսկ պատճառով փորձեր են արվել ստեղծել նոր կազմակերպություններ (օրինակ՝ Միջազգային Կրթության Համաշխարհային Միություն), որոնք կարող են ծառայություններ առաջարկել

միջազգային մակարդակով: ԱՄՆ-ում տեղակայված տարածաշրջանային և մասնագիտական հավատարմագրման որոշ գործակալություններ հավատարմագրված ծրագրեր ունեն 40 տարբեր երկրներում:

Սակայն, որակի ապահովման ծառայությունների միջազգային տրամադրողները հաճախ պարտադրում են իրենց սեփական արժեքներն ու չափորոշիչները, որոնք միշտ չէ որ համապատասխանում են ազգային նպատակներին: Դա մեկ անգամ ևս ստիպում է ազգային կառավարություններին ստեղծել իրենց սեփական կառույցները, որոնց կարելի է ավելի հեշտությամբ նպատակաուղղել ազգային արժեքների ու շահերի պահպանությանը:

Այսպիսով, ԲՈՒՀ-երը ողջ աշխարհում դիմակայում են նոր զարգացումների թե ազգային, և թե միջազգային մակարդակներում, որոնք ուղղակիորեն ազդում են երկրների բարձրագույն կրթության համակարգերի վրա: *Ներդիր 1-ում* ներկայացված է Բոլոնիայի գործընթացը Եվրոպական տարածաշրջանում և MERCOSUR-ի (Հարավային Ամերիկայի Ընդհանուր Շուկա) նախաձեռնությունը հավատարմագրման վերաբերյալ: Երկու օրինակներն էլ ցույց են տալիս, թե ինչպես են միջազգային համաձայնագրերի (այդ թվում նաև առևտրային) վրա հիմնված տարածաշրջանային ինտեգրացիոն գործընթացները ազդում կրթական զարգացումների վրա և խթան հանդիսանում որակի ապահովման համակարգերի միջազգային մակարդակով զարգացման համար: *Ներդիր 2-ը* տեղեկություն է տալիս ԱՄՆ հավատարմագրման գործակալությունների վերաբերյալ:

Ներդիր 1 - Տարածաշրջանային ինտեգրացիոն գործընթացները և որակի ապահովումը

Օրինակ Ա. Բոլոնիայի Գործընթացը

Եվրոպայում Բոլոնիայի գործընթացը սկսվել է 1999թ.-ին և ներկայումս ներառում է 46 անդամ պետություններ եվրոպական երկրներից: Բոլոնիայի գործընթացի գաղափարը այն է, որ բարելավելով կրթությունը, հատկապես բարձրագույն կրթությունն ու ուսումնառությունը ողջ կյանքի ընթացքում, տարածաշրջանի տնտեսական զարգացումը նույնպես կբարելավվի:

Բոլոնիայի Գործընթացը իրավական կառույց չէ, բայց ավելի շատ կապված է իրական ուժերի և գործողությունների հետ: Այն ուժեղ ազդեցություն է թողել եվրոպական երկրներում բարձրագույն կրթության զարգացման վրա: Ընդհանուր առմամբ Բոլոնիայի գործընթացն ունի տասը նպատակ: Դրանցից մեկը որակի ապահովումն է: Այս նպա-

տակը միտված է ուսանողների և գիտական աշխատակազմի շարժունակությանն աջակցմանը և եվրոպական բարձրագույն կրթության մրցունակության բարելավմանը:

Բոլոնիայի գործընթացի շրջանակներում որակի ապահովման գործում մի ուշագրավ քայլ տեղի ունեցավ 2003թ., երբ գործընթացի անդամ պետությունները հանձնարարեցին Որակի Ապահովման Եվրոպական Ցանցին (ՈԱԵՑ) մշակել որակի ապահովման չափորոշիչներ, ընթացակարգեր և ուղեցույցներ: Առաջարկվեց նաև հետազոտել որակի ապահովման կամ հավատարմագրման գործակալությունների համար համապատասխան արտաքին փորձագիտական գնահատման համակարգ ապահովելու ուղիները: Մի շարք այլ գործակալությունների օգնությամբ, ՈԱԵՑ-ը ավարտեց այդ աշխատանքը: Ներկա պահին համանման չափորոշիչներ և ուղեցույցեր են ընդունվել Բոլոնիայի Նախարարական Գագաթաժողովի (որոշում կայացնող կոմիտե) կողմից և ստեղծվել է որակի ապահովման գործակալությունների եվրոպական ռեգիստր:

Բոլոնիայի Գործընթացի վերաբերյալ մանրամասն տեղեկությունների համար կարող եք այցելել www.dfes.gov.uk/bologna/ կայքը:

Աղբյուրը: Hendriks, 2005.

Օրինակ Բ: Հավատարմագրումը ՀԱԸԾ-ում (MERCOSUR)

MERCOSUR-ի՝ Հարավային Ամերիկայի Ընդհանուր Շուկայի լիիրավ անդամ են Արգենտինան, Բրազիլիան, Պարագվայը, Ուրուգվայը և Վենեսուելան: Բոլիվիան, Չիլին, և վերջերս նաև Կոլումբիան, Էկվադորը, Պերուն դարձել են անդամակցության թեկնածու: Երկրներին առաջարկվել էր սխեմա մշակել իրենց երկրների միջև կրթական որակավորումները համեմատելի դարձնելու համար, չսահմանափակելով ազգային ինքնիշխանությունը կամ բուհերի ինքնավարությունը: Հետաքրքրքական է, որ երբ այդ աշխատանքը սկսվեց, այս երկրներից միայն երեքը ունեին որակի ապահովման համակարգեր:

Աշխատանքը կենտրոնացվեց հավատարմագրման ընդհանուր փորձնական մեխանիզմ նախագծելու վրա: Վեց երկրների փորձագետները աշխատում էին երեք Խորհրդատվական Հանձնաժողովներում, յուրաքանչյուր ընտրված կրթական աստիճանի ծրագրերի գծով (գյուղատնտեսություն, ճարտարագիտություն և բժշկություն): Այս հանձնաժողովները մշակեցին ամբողջական ընդհանուր ստանդարտներ տա-

ռածաշրջանում կիրառելու համար: Նրանք նաև սահմանել են գործողությունների հաջորդականություն, ինչը յուրաքանչյուր հաստատության հնարավորություն կտա հասնել ցանկալի արդյունքների:

Ընդհանուր ստանդարտների շուրջ համաձայնության գալուց հետո, համաձայնություն ձեռք բերվեց նաև որակի ընդհանուր սահմանման վերաբերյալ: Այդ սահմանումը բաղկացած է երկու բաղկացուցիչից՝ արտաքին և ներքին համապատասխանություն: Արտաքին համապատասխանությունը նշանակում է յուրաքանչյուր կրթական ծրագրի համապատասխանեցումը տվյալ մասնագիտական խմբի հետ համաձայնեցված էտալոնային սահմանումներին: Ներքին համատեղելիությունը՝ տվյալ կրթական ծրագրի համապատասխանությունն է ԲՈՒՀ-երի առաքելությունից կամ սահմանված նպատակներից բխող սկզբունքներին և նախապատվություններին:

Հաջորդ քայլը պետք է լինի որակի ապահովման ընդհանուր ընթացակարգեր մշակելը, ինչը պետք է կատարեն որակի ապահովման ազգային գործակալությունները: Այն ներառելու է նաև արտաքին գնահատողներ հրավիրելը տարածաշրջանի այն երկրներից, որոնք չեն մասնակցում ծրագրին: Այդ գնահատողները պետք է նախ MERCOSUR-ի հատուկ վերապատրաստման փուլ անցնեն ու կիրառեն տրամադրված ձեռնարկները և նյութերը: Արդյունքում յուրաքանչյուր երկիր կկարողանա վստահել այլ երկրների որակի ապահովման ազգային գործակալությունների կայացրած որոշումներին: Նման ձևով նրանք կարող են փոխճանաչել հավատարմագրված կրթական որակավորումները:

MERCOSUR-ի Հավատարմագրման գործընթացը դեռ փորձնական փուլում է՝ ավարտվել է գյուղատնտեսական ծրագրի հավատարմագրումը, իսկ մյուս երկու ծրագրերի գծով աշխատանքը շարունակվում է: Գործընթացը հնարավոր դարձավ մի շարք գործոնների շնորհիվ, օրինակ՝ ազգային կառավարությունների աջակցության, բոլոր երկրների հավասար մասնակցության և գործընթացի կայուն ու շարունակական լինելու շնորհիվ: Այն վստահություն է ստեղծել մասնակից երկրների և գործակալությունների միջև, ինչը իր հերթին նպաստում է տարածաշրջանի երկրների տևական ինտեգրմանը:

Այս նույն ժամանակ Լատինական Ամերիկայի երկրները և Իսպանիան ստեղծեցին Բարձրագույն Կրթության Որակի և Հավատարմագրման Իբերոամերիկյան Ցանցը (RIACES): Այս ցանցը ստեղծվել է անհրաժեշտ աջակցություն տրամադրելու այն երկրներին, որոնք նոր են միայն սկսել որակի ապահովման ծրագրեր մշակել:

Աղբյուր: Lemaître, 2005.

ՄՈԴՈՒԼ 1 - Որակի արտաքին ապահովման
համակարգերի հիմնական տարբերակների ընտրությունը

Ներդիր 2. ԱՄՆ հավատարմագրման համակարգի միջազգային նշանակությունը Բարձրագույն Կրթության Հավատարմագրման Խորհուրդի (ԲԿՀԽ /CHEA) տեղեկատվական բազան բացահայտում է ոչ ամերիկյան սակայն ամերիկյան հավատարմագրում անցած մի շարք համալսարաններ

ԱՄՆ Բարձրագույն Կրթության Հավատարմագրման Խորհուրդը (ԲԿՀԽ /CHEA), որը Միացյալ Նահանգների բարձրագույն կրթության հավատարմագրումը կոորդինացնող մարմինն է, հրապարակել է իր անդամների կողմից հավատարմագրված բոլոր հաստատությունների / ծրագրերի նորացված տվյալները: Ինչպես նախկինում զեկուցվել էր Դիտորդական կենտրոնի կողմից, քանի որ համալսարանները գնալով ավելի շատ են ձգտում միջազգային համբավ ձեռք բերել, միտում է նկատվում դրան հասնել արտաքին հավատարմագրման կամ ճանաչման միջոցով: Առավել ակնառու օրինակ են ոչ ամերիկյան բիզնեսի դպրոցները, որոնք հավատարմագրում են ստացել ԱՄՆ Նախապատրաստական Բիզնես Դպրոցների Զարգացման Ասոցիացիայի կողմից (AACSB), ինչպես նաև մի շարք երկրների բիզնեսի դպրոցները, որոնք հավատարմագրվել են Եվրոպայում EQUIS համակարգով, կամ MBA Ասոցիացիայի կողմից Միացյալ Թագավորությունում: CHEA տեղեկատվական ցանկը ընդգրկում է Միացյալ Նահանգների տարածքից դուրս գտնվող 31 երկրներում (ներառյալ Ավստրալիան, Կանադան, Գերմանիան, Նոր Զելանդիան, Սինգապուրը և Միացյալ Թագավորությունը) ամերիկյան հավատարմագրում անցած բարձրագույն կրթության հաստատությունների օրինակներ:

Աղբյուր: Բարձրագույն Կրթության Դիտորդական կենտրոնի (Observatory on Higher Education) համացանցի կայք

Վարժություն 1

Կազմեք ձեր երկրում որակի արտաքին ապահովման համակարգ ստեղծելուն դրդող ազգային և միջազգային զարգացումների ցանկը.

Զարգացումների այդ ցանկում կան արդյո՞ք որևէ տարածաշրջանային առևտրային համաձայնագիր կամ միջազգային այլ համաձայնագրեր:

Արդյո՞ք Ձեր երկրի կառավարությունը վերջին ժամանակներս իրականացրել է փոփոխություններ բարձրագույն կրթության կանոնակարգման մեջ, ինչպես օրինակ բարձրագույն կրթության հաստատությունների ինքնավարության ընդլայնում՝ հաշվետվողականության մեծացման և որակի ապահովման ուժեղացման դիմաց:

2. Ակադեմիական որակի կանոնակարգման քաղաքականության այլընտրանքային միջոցներ

Վերը նշված զարգացումները գնալով աճող հետաքրքրություն են առաջացրել բարձրագույն կրթության «որակի» հիմնախնդրի, հետևաբար նաև «ինչպես այն ապահովելու» նկատմամբ: Բարձրագույն կրթության որակի ապահովումը պետական իշխանությունների, ԲՈՒՀ-երի կոլեգիալ մարմինների կամ հենց ԲՈՒՀ-երի կողմից բնավ էլ նոր փորձ կամ պահանջ չէ: Ոչ էլ անգամ որակի համար անհանգստությունը

Ավանդաբար, բարձրագույն կրթության համակարգերի մեծ մասը վերահսկում է ակադեմիական գործունեությունը տարատեսակ մեխանիզմների միջոցով: Այս մեխանիզմների բնույթը և չափերը զգալիորեն տատանվում են բարձրագույն կրթության տարբեր համակարգերում:

Բարձրագույն կրթության այն համակարգերը, որոնք ուժեղ ներգործության են ենթարկվում պետական վերհսկողության և միջամտություն միջոցով (ինչպես օրինակ մայրցամաքային Եվրոպայի բարձրագույն կրթության համակարգերը ի համեմատ Միացյալ Թագավորության հաստատությունների), ավանդաբար գործել են վերահսկելով համակարգի «մուտքային ցուցանիշները»: Դա կարող էր արվել, օրինակ, պարտադրելով «առանձին տողով» տարեկան բյուջեներ, ակադեմիական աշխատակազմին տալով պետական ծառայողի կարգավիճակ ու սահմանելով նվազագույն որակավորումներ և կիրառելով պետության կողմից կարգավորվող ընդունելության համակարգեր:

Կրթական գործընթացը վերահսկվում էր նույն կերպ: Այսպես, նոր ուսումնական ծրագրերի ուսումնական պլանի հաստատման համար կարող էր պահանջվել ծանրաբեռնվածության և նվազագույն բովանդակության համապատասխանեցումը պետության կողմից սահմանված ստանդարտներին, ինչպես նաև անցկացվելիք քննությունների տեսակների համաձայնեցումը:

Հաստատություններում անհատ գիտնականների գործունեության գնահատումը (մասնավորապես նրանց գիտահետազոտական գործունեության) հիմնականում իրականացվում է բաժանմունքի պետի կամ բաժանմունքի հանձնաժողովի կողմից, կամ էլ վերահսկողական կոմիտեների կողմից ազգային մակարդակում: Գործունեությունը գնահատվում է հաշվի առնելով հրապարակումների քանակը և որակը: Պրոֆեսորադասախոսական աշխատակազմի գնահատման այս ձևը իրականացվել է ինչպես աշխատանքային առաջընթացի, այնպես էլ աշխատանքի ընդունելու վերաբերյալ որոշում կայացնելու համար:

Գիտնականների գիտահետազոտական գործունեության արդյունք-

ների հիմնականում ոչ պաշտոնական գործընկերային գնահատման միջոցով կատարվող գնահատումը վերածվել է բարձրագույն կրթության համակարգերում կայուն կիրառվող պրակտիկայի:

Որակի արտաքին ապահովման նկատմամբ նոր հետաքրքրությունը և աճող ճնշումը, մասնավորապես կառավարությունների և միջազգային ֆինանսավորող գործակալությունների կողմից, իրենց հետ բերում են երեք տեսակի նորույթ.

- առաջինը՝ դրանք վերաբերում են ակադեմիական կյանքի այն բնագավառներին, որոնց հետ կառավարությունները կամ ֆինանսավորող գործակալությունները անցյալում առնչվել են միայն անուղղակիորեն: Մասնավորապես, դասավանդման / ուսումնառության որակի նկատմամբ հատուկ հետաքրքրություն է առաջ եկել այն երկրներում, որտեղ կառավարությունները կամ ներդնում են դասավանդման / ուսումնառության պայմանները ուսումնասիրելու մեխանիզմներ, կամ էլ հաստատություններին քաջալերում են ստեղծելու իրենց սեփական մեխանիզմները՝ երաշխավորելու, որ սահմանված ստանդարտներն իրականացվել են:
- երկրորդը՝ ազգային իշխանությունները կամ հաստատությունները պահանջում են կանոնավոր հիմունքներով իրականացվող գնահատում (այլ ոչ թե ցանկացած պահին անցկացվող գնահատում որևէ առանձին հարցի մասին որոշումներ կայացնելու համար),
- երրորդը՝ որակի ապահովման ներկա գործընթացը ավելի շատ մտահոգ է վերջնական արդյունքներով (մասնավորապես ուսանողների ուսումնառության և ավարտելու), քան մուտքային ցուցանիշներով և արդյունավետությամբ: Լատինական Ամերիկայի որոշ երկրներում, ինչպես օրինակ Բրազիլիան[3], Կոլումբիան և Մեքսիկան, հասարակական վերահսկողության մեխանիզմներ են ստեղծվել ստուգելու համալսարանի շրջանավարտների գիտելիքներն ու կարողությունները ընտրված ուսումնական բնագավառներում: Չափման այս ձևը ներդրվել է բազմաթիվ պետական և մասնավոր բարձրագույն կրթության հաստատությունների գործունեությունը ավելի թափանցիկ դարձնելու համար:

Կառավարությունները ակադեմիական չափորոշիչների վրա ներգործելու համար քաղաքականության մոտեցումների լայն ընտրություն ունեն: Կլարկը (Clark, 1983) հիմնավորել է բարձրագույն կրթությունը համակարգող երեք ուժերի առկայությունը. ակադեմիական օլիգարխիան,

[3] Բրազիլիայում մի շարք մասնագիտությունների գծով շրջանավարտների գիտելիքների գնահատման համար հատուկ մեխանիզմը՝ Ազգային Քննությունների Համակարգը (ENC- Provão) ներդրվեց 1996 թ. և վերացվեց 2003 թ.:

պետությունը և շուկան: Ընդհանուր առմամբ, դրանք ներառում են երեք տարբեր տեսակի միջոցներ, որոնք կարող են կիրառվել որակի ապահովման համար, կախված նրանից, թե ուժերից որն է գերիշխողը.

- ԲՈՒՀ-երի և ուսումնական ծրագրերի որակի ուղղակի վերահսկողություն պետության կողմից,
- մասնագիտական կազմակերպություններին շահագրգռելը նրանց ինքնակարգավորման համար,
- ակադեմիական որակի բարելավման վստահումը շուկայական մեխանիզմներին:

Աղյուսակ 1. Ակադեմիական որակի կանոնակարգման այլընտրանքային քաղաքականության միջոցներ ըստ ներգործության ոլորտի

Ոլորտ	Մասնագիտական ինքնակարգավորում	Պետական (ուղղակի) կանոնակարգում	Շուկայական կանոնակարգում
Հետազոտություն	Մասնագիտական գործընկերային դատողություն	Հետազոտության գնահատում	Պետության կողմից հետազոտական դրամաշնորհների մրցակցային տարաբաշխում
Դասավանդում /ուսումնառություն	- Մասնագիտական բնագավառներ / կազմակերպություններ - Մասնագիտական վկայագրում / լիցենզավորում - Արտաքին քննական համակարգեր - Կամավոր հավատարմագրում	- Գնահատման «կանոնակարգում» - Ակադեմիական աուդիտներ - Առարկայական գնահատում - Պետական վկայագրում / լիցենզավորում - Պետության կողմից իրականացվող հավատարմագրում - Կատարողականի ցուցիչներ - Ազգային քննություններ	- Ուսանողների քանակի վրա հիմնված ֆինանսավորում և ուսման վճարներ - Տեղեկատվության տրամադրում

Աղբյուրը. Դիլլ, (Dill,) 2003.

Ինչպես կարելի է տեսնել Աղյուսակ 1-ում, ակադեմիական որակի կանոնակարգման համար միջոցների ընտրությունը կախված է ուժերի այն հարաբերակցությունից, որ բարձրագույն կրթության համակարգում ստեղծվում է պետության, ակադեմիական օլիգարխիայի և շուկայի փոխներգործության արդյունքում: Միջոցները սովորաբար ընտրվում են իշխանության մարմինների կողմից այնպես, որ ներդաշնակեն բարձրագույն կրթության կանոնակարգման ոլորտում գերակա մոտեցումների հետ: Միջոցների մեկ

տեսակի փոխարինումը այլ տեսակով հաճախ ցույց է տալիս, որ բարձրագույն կրթության համակարգում տեղի ունենում համակարգող ուժերից մեկի ուժեղացում՝ սովորաբար ի հաշիվ մյուս ուժերի:

3. Որակի արտաքին ապահովման դերը որակի ապահովման ընդհանուր համակարգում

Որակի ապահովման շրջանակը բաղկացած է իրար հետ փոխկապված տարատեսակ մեխանիզմներից: Արդյունքում, դրանք վերածվում են համակարգի: Դրանցից որևէ մեկի գործառույթներում կատարվող փոփոխությունը ներազդում է մյուսների վրա:

Որակի գնահատման համակարգերը վերաբերում են հաստատություններին և ուսումնական ծրագրերին (ինչպես բակալավրի, այնպես էլ մագիստրոսի): Դրանք վերաբերում են տարբեր գործառույթների, որոնք կարող են ներառել՝

- ծրագրերի և հաստատությունների ստեղծման հետ կապված գնահատում (սովորաբար կոչվում է «լիցենզավորում» և տալիս է հրապարակայնորեն ճանաչված կարգավիճակ),
- ընթացիկ գործունեության վերահսկում (սովորաբար կապված է նվազագույն չափորոշիչների վերահսկման հետ, ինչպես նաև ընդգրկում է վարչարարության և ֆինանսների վերահսկումը),
- հավատարմագրում (հաճախ՝ որակի համապատասխան մակարդակի),
- շրջանավարտների մասնագիտական վկայագրում ընտրված մասնագիտությունների ոլորտում,
- տեղեկատվության տրամադրում ԲՈՒՀ-երի և ուսումնական ծրագրերի ճանաչման ու հավատարմագրման կարգավիճակի մասին:

Տարբեր կառույցներ (պետական կամ ոչ պետական) կարող են պատասխանատու լինել այս տարաբնույթ գործառույթների համար: Սովորաբար հիմնական դերակատարներն են Կրթության նախարարությունը (հիմնականում որակի ապահովման ուղղությամբ), այլ լիազորված մարմիններ, ինչպես օրինակ՝ որակի տեսչությունը (ավելի հազվադեպ է կիրառվում բարձրագույն կրթությունում, քան կրթության այլ մակարդակներում), վերջին ժամանակներս՝ պետական կամ մասնավոր կազմակերպություններ, ինչպիսիք են որակի գնահատման գործակալությունները և վերջապես մասնագիտական մարմիններն այն դեպքում, երբ

համակարգը պահանջում է մասնագիտական վկայագրում:

Որակի ապահովման գործառույթներում ԲՈՒՀ-երի մասնակցության խնդիրները մանրամասն կքննարկվեն *Մոդուլ 3-ում*.

Ինչպես երևում է *Աղյուսակ 2*-ում, որակի ապահովման ամբողջությունը հաճախ կարող է ներկայացվել աղյուսակի ձևով՝ պատասխանատվության հետևյալ տարաբաշխումով.

Աղյուսակ 2. Բարձրագույն կրթության համակարգում որակի ապահովման գործառույթների աղյուսակ

Գնահատման միավոր/ Գործունեության	ԲՈՒՀ-եր	Ծրագրեր (բակալավրի)	Ծրագրեր (մագիստրոսի)	Ուսանողներ
Հիմնադրում՝ նախնական գնահատում (լիցենզավորում)	- Կրթության նախարարություն - Մասնագիտացված հասարակական գործակալություն	- Կրթության նախարարություն կամ լիցենզավորված ԲՈՒՀ	Կրթության նախարարություն կամ լիցենզավորված ԲՈՒՀ	Ընդունելության թեստ
Վերահսկում	Տեսչություն	ԲՈՒՀ	ԲՈՒՀ	ԲՈՒՀ
Հավատարմագրում	Բուֆերային կազմակերպություն կամ որակի ապահովման գործակալություն	-Բուֆերային կազմակերպություն կամ գործակալություն - Մասնագիտական կազմակերպություն	Բուֆերային կազմակերպություն կամ գործակալություն - Մասնագիտական կազմակերպություն	Շրջանավարտների կրթական արդյունքի գնահատում
Մասնագիտական վկայագրում		Մասնագիտական կազմակերպություններ	- Մասնագիտական կազմակերպություններ - Գործընկերային գնահատում	-Մասնագիտական կազմակերպություններ
Հանրային տեղեկատվություն	Կրթության Նախարարություն և / կամ գործակալություն	Կրթության Նախարարություն և / կամ գործակալություն	Կրթության Նախարարություն և / կամ գործակալություն	

Աղբյուրը: World Bank, 2003

Վարժություն 2

Պատրաստեք ձեր երկրում գործող որակի ապահովման մեխանիզմների աղյուսակ կիրառելով վերը քննարկված կանոնակարգման տեսակները. Ի՞նչ եզրակացություններ կարող եք անել այդ աղյուսակից

Պատրաստեք ձեր բարձրագույն կրթության համակարգի որակի ապահովման գործառույթների աղյուսակ և նշեք, թե ազգային որ մարմինն է պատասխանատու դրանց համար Կա արդյո՞ք որակի ապահովման չիրականացվող գործառույթ

Որո՞նք են ձեր երկրում որակի ապահովման գործող համակարգի ուժեղ և թույլ կողմերը

4. Որակ. ընդհանրական և բազմաչափ հասկացություն

Որպես բարձրագույն կրթության շուրջ ծավալված ընդհանուր բանավեճի մի մաս, որակի հասկացությունը քննարկումների լայն թեմա է: Ավելին, այն հաճախ օգտագործվում է շահառուների կողմից իրենց առանձնահատուկ պատկերացումները կամ շահերը օրինականացնելու նպատակով: Բարձրագույն կրթության որակի հասկացությունը սահմանելիս երկու հանգամանք դժվարություններ են հարուցում. .

1. Չկա միակարծություն բարձրագույն կրթության ճշգրիտ նպատակների շուրջ: Կարելի է, ի թիվս այլոց, առանձնացնել հետևյալ նպատակները.
   - բարձրագույն կրթությունը որպես որակյալ աշխատուժ պատրաստող/արտադրող,
   - բարձրագույն կրթությունը որպես ուսուցում գիտահետազոտական կարիերայի համար,
   - բարձրագույն կրթությունը որպես ուսուցման արդյունավետ կազմակերպում,
   - բարձրագույն կրթությունը որպես կյանքում հնարավորությունների ընդլայնման միջոց:
2. Բարձրագույն կրթությունը, ինչպես ցանկացած կրթություն ընդհանրական և բազմաչափ գործընթաց է՝ հիմնված դասավանդողների և սովորողների փոխադարձ հարաբերությունների վրա: Դժվար է պար-

զորոշ սահմանել մուտքային ցուցանիշների ու արդյունավետության փոխազդեցությունը և ճշգրիտ չափել արդյունքները:

Քանի որ բարձրագույն կրթությունը դառնում է ավելի բովանդակալից իսկ ուսանողների կազմը՝ ավելի բազմատարր, ԲՈՒՀ - երի և դասընթացների նկատմամբ պահանջարկը գնալով ավելի բազմազան է դառնում: Այն ինչը կարող է որակի համապատասխան սահմանում լինել մի դասընթացի կամ հաստատության համար, կարող է բոլորովին անհամապատասխան լինել մյուսների համար:

Գրինը (Green, 1994) առանձնացրել է բարձրագույն կրթության ոլորտում որակի սահմանման հինգ տարբեր մոտեցում.

- որակը որպես բացառիկություն (բարձրագույն չափորոշիչ),
- որակը որպես համապատասխանություն չափորոշիչներին,
- որակը որպես համապատասխանություն նպատակին,
- որակը որպես ինստիտուցիոնալ նպատակների իրականացման արդյունավետություն,
- որակը որպես հաճախորդների ներկայացրած կամ ենթադրվող պահանջմունքների բավարարում:

Որակի սահմանման այս մոտեցումները կքննարկվեն Մոդուլ 4-ում: Իրականում դրանք որակի ապահովման գործակալության կողմից «որակը» ներդնելու ճանապարհների համար հիմնարար մոտեցումներ են:

Ո՞վ է սահմանում որակը և ի՞նչ նպատակով

Որակին տրվող նշանակությունը միայն դրա հիմքում ընկած գաղափարը չէ: Շատ կարևոր է նաև, թե ո՞վ է այն սահմանում և ինչ նպատակով: Արդյո՞ք դա իրենք դասախոսներն են, ուսանողները, կառավարությունն ու նրա գործակալությունները, մասնագիտական մարմինները, թե գործատուները: Դասախոսները բարձրագույն կրթության որակը կսահմանեն ընդգծելով գործընկերոջ կամ հաստատության կողմից արված հետազոտական աշխատանքի որակը: Մագիստրատուրայում սովորող ուսանողները կկենտրոնանան դասավանդման, իրենց ուսումնառության փորձի և միջավայրի որակի վրա: Մինչդեռ մասնագիտական մարմինները հակված են կենտրոնանալու մասնագիտական չափորոշիչների և ուսուցանվող մասնագիտությունների ոլորտում շրջանավարտների կարողությունների վրա:

Նպատակների նման բազմազանությունը նշանակում է, որ որակի ապահովման ցանկացած գործակալության մեթոդաբանություն պետք է հավասարակշռի շահառուների տարբեր հետաքրքրությունները այնպես, որ կրթության որակի հասկացության շուրջ փոխհամաձայնություն ձեռք բերվի:

Որակի ապահովման գործակալության հիմնական խնդիրներից մեկը որակի սահմանման հստակ մոտեցման ընտրությունն է: Այն պետք է ներառի շահառուների հետ խորհրդակցելը, միջազգային չափորոշիչները և սահմանումները տեղայնացնելու ձևը, առաջարկվող սահմանումը ընկալելի և ողջ համակարգի համար ընդունելի դարձնելու ճանապարհը:

5. Սահմանումներ. որակի ապահովում, որակի վերահսկում, որակի գնահատում, որակի աուդիտ և հավատարմագրում

«Որակ» տերմինի սահմանման ու կիրառության մեջ դնելու ձևը ակնհայտորեն ազդում է այն կառավարելու և ապահովելու փորձերի վրա: Կարևոր է նաև ընկալել որակի արտաքին ապահովման քննարկումների և գործունեության ընթացքում օգտագործվող տարբեր տերմիններ: Այդ տերմինները հաճախ օգտագործվում են շատ անփույթ: Այս տեսակետից կարևոր է քննարկել որակի ապահովման շրջանակում հաճախակի կիրառվող հետևյալ տերմինները.

- որակի ապահովում (ներքին և արտաքին),
- որակի գնահատում,
- որակի աուդիտ,
- հավատարմագրում:

Այս տերմիններից յուրաքանչյուրի ճշգրիտ իմաստի վերաբերյալ ընդհանուր համաձայնություն չկա: Դրանցից մի քանիսը բնորոշում են ամբողջ ոլորտը, ինչպես օրինակ որակի ապահովումը (ներքին և արտաքին) և որակի գնահատումը, մինչդեռ մյուսները վերաբերում են միայն առանձին մոտեցումների (որակի աուդիտ և հավատարմագրում): Դրանք կապված են նաև համակարգում տարբեր դերակատարների պատասխանատվության և դիտարկման տարբեր ոլորտների հետ:[4]

Որակի ապահովումը բնորոշող ընդհանուր տերմին է, որը կիրառվում է որպես պայմանական սահմանում որակի արտաքին մոնիթորինգի, գնահատման կամ վերանայման բոլոր ձևերի համար: Այն կարող

[4] Նշենք, որ ԲԿՈԱԳՄՑ –ն (INQAAHE) ստեղծել է տերմինների բառարան, որին կարելի է ծանոթանալ http://www.qualityresearchinternational.com/glossary/ կայքում:

է սահմանվել որպես շահառուների մոտ վստահության հաստատման գործընթաց առ այն, որ կրթությունը (մուտքային ցուցանիշները, գործընթացը և արդյունքները) բավարարում են ակնկալիքները կամ համապատասխանում նվազագույն պահանջներին:

Ինստիտուցիոնալ մակարդակում որակի ապահովումը հիմնականում սահմանվում է որպես ընդհանուր կառավարման գործառույթի մաս, որը պայմանավորում և ներդնում է որակի քաղաքականությունը (կազմակերպության նպատակները և ուղղությունները): Ընթացակարգերը հաստատություններին կարող են պարտադրվել կառավարության կամ ֆինանսավորող գործակալությունների կողմից (օրինակ՝ հաշվետվողականության և համապատասխանության նպատակով): ԲՈՒՀ-ի կամ բաժանմունքի ղեկավարությունը նույպես կարող է դրանք սահմանել:

Ընթացակարգերը կարող են լինել ավանդական գործընթացի (այսինքն՝ ԲՈՒՀ-ի հավատարմագրման կամ ուսումնական ծրագրի վավերացման / վերանայման) մի մասը կամ կապված լինել նոր գործունեության հետ, ինչպես օրինակ ուսանողների կողմից դասավանդողների գնահատման կիրառումը: Դրանք կարող են վերաբերել՝ 1) գիտահետազոտական գործունեությանը, 2) դասընթացներին, 3) պրոֆեսորադասախոսական անձնակազմին, կամ 4) աջակցման գործառույթներին (օրինակ՝ վարչական աուդիտ): Այս ընթացակարգերը կարող են նաև այդ գործառույթները վերլուծել խմբավորած ձևով՝ բաժանմունքներում կամ ամբողջ հաստատությունում:

Որակի ներքին ապահովումը հենվում է յուրաքանչյուր ԲՈՒՀ-ի կամ ուսումնական ծրագրի նպատակների և մեխանիզմների վրա՝ երաշխավորելու որ այն իրականացնում է ոչ միայն իր նպատակները, այլ նաև ընդհանրապես բարձրագույն կրթությանը, մասնագիտությանը կամ մասնավորապես տվյալ առարկային վերաբերող չափորոշիչները:

Որակի արտաքին ապահովումը վերաբերվում է արտաքին մարմնի գործունեությանը, որը կարող է լինել որակի ապահովման գործակալություն կամ ԲՈՒՀ-ից տարբեր մեկ այլ մարմին, որը գնահատում է հաստատության գործունեությունը կամ էլ նրա ուսումնական ծրագրերը, որոշելու, թե արդյոք դրանք համապատասխանում են ընդունված չափորոշիչներին:

ՅՈՒՆԵՍԿՕ/ԲԿԵԿ-ի կողմից հրատարակված «Որակի ապահովում և հավատարմագրում. հիմնական տերմինների և սահմանումների բացատրական բառարանը» (Vlăsceanu, Grünberg, and Pârlea, 2004),որակի ապահովումը սահմանում է հետևյալ կերպ.

«**Որակի ապահովումը** վերաբերում է բարձրագույն կրթության համակարգի, հաստատությունների կամ ծրագրերի որակի գնահատման (ստուգում, մոնիտորինգ, երաշխավորում, պահպանում և բարելավում)

ՄՈԴՈՒԼ 1 - Որակի արտաքին ապահովման
համակարգերի հիմնական տարբերակների ընտրությունը

շարունակական գործընթացին: Որպես կանոնակարգման մեխանիզմ, որակի ապահովումը միաժամանակ կենտրոնանում է հաշվետվողականության և բարելավման վրա՝ համաձայնեցված ու հետևողական գործընթացի ու հստակ սահմանված չափանիշի միջոցով տրամադրելով տեղեկատվություն և կարծիք (առանց դասակարգման): Շատ համակարգեր տարբերություն են դնում որակի ներքին ապահովման (այսինքն՝ ներ-ԲՈՒՀ-ական պրակտիկան մոնիթորինգի և բարձրագույն կրթության որակի բարելավման առումով) և որակի արտաքին ապահովման (այսինքն՝ ԲՈՒՀ-երի և ծրագրերի որակի ապահովման միջբուհական կամ արտաբուհական մեխանիզմներ) միջև: Որակի ապահովման միջոցառումները կախված են անհրաժեշտ ինստիտուցիոնալ մեխանիզմների առկայությունից, որոնք ցանկալի է որ երաշխավորված լինեն որակի ապահովման հիմնավոր փորձառությամբ: Որակի ապահովման գործունեության շրջանակը որոշվում է բարձրագույն կրթության համակարգի կառուցվածքով և չափերով: Որակի ապահովումը տարբերվում է հավատարմագրումից այն իմաստով, որ առաջինը վերջինիս անհրաժեշտ նախապայմանն է միայն: Որակի ապահովումը հաճախ համարվում է բարձրագույն կրթության որակի կառավարման մի մասը, մինչդեռ երբեմն երկու տերմիններն էլ օգտագործվում են որպես հոմանիշներ»:

Որակի ապահովման հետ առընչվող և հավասարապես ընդհանուր հասկացություն է որակի գնահատումը: Հաճախ դա «ստուգման» կամ «վերանայման» հոմանիշն է: Շատ երկրներ սկսել են ստեղծել որակի գնահատման մեխանիզմներ, որոնք որևէ ձևով ԲՈՒՀ-երի աստիճանավորում կամ դասակարգում չեն առաջարկում, այլ ավելի շուտ իրենցից ներկայացնում են երաշխավորություններ կոնկրետ ԲՈՒՀ-ի կամ ծրագրի որակի բարելավման ուղղությամբ:

«Որակի գնահատումը» (հաճախ օգտագործվում են նաև որակի ստուգում կամ վերանայում բնորոշումները) արտացոլում է բարձրագույն կրթության հաստատությունների և ծրագրերի որակի արտաքին գնահատման (վերանայում, չափում, համեմատում) գործընթացը: Այն կազմված է արտաքին մարմնի կողմից, բարձրագույն կրթության գործընթացների, գործունեության, ծրագրերի և ծառայությունների որակը արժևորելու համար օգտագործվող հնարքներից, մեխանիզմներից ու գործողություններից : Որոշ ասպեկտներ շատ կարևոր են, երբ սահմանում և կիրառում ենք որակի գնահատման գաղափարը՝ 1) համատեքստը (ազգային, ինստիտուցիոնալ), 2) մեթոդները (ինքնագնահատում, արտաքին գործընկերային գնահատում, այցելություն տեղանք), 3) մակարդակները (համակարգ, ԲՈՒՀ, բաժանմունք, անհատներ), 4) մեխանիզմները (խրախուսում, քաղաքականություն, կառուցվածք, մշակույթ), 5) որակի գնահատմանը առընչվող որակի արժեհամակարգ, ինչպես օրինակ ակադեմիական արժեքները (որոնք կենտրոնացած են մասնագիտական դաշտի վրա), կառավարման արժեքները (որոնք կենտրոնացած են դասավանդողների և

նրանց դասավանդման ունակությունների ու լսարանային փորձառության վրա), աշխատանքային արժեքները (որոնք կենտրոնանում են շրջանավարտների ելքային ցուցանիշների բնութագրիչների և էլեկտրոնային ուսումնառության արդյունքների վրա)»: (Vlăsceanu, Grünberg, and Pârlea, 2004) :

Որակի գնահատման առանձնահատուկ մոտեցում է որակի ուադիտը: Այն չի գնահատում բուն որակը կամ դրա իրականացումը, այլ ավելի շուտ որակի ապահովման գործող մեխանիզմների որակը: Այն կարող է կիրառվել ԲՈՒՀ-ի կողմից ընտրված որակի ապահովման մեխանիզմների ուժեղ և թույլ կողմերը գնահատելու համար: Դա կարող է օգնել վերահսկելու և կատարելագործելու առարկայի, ծրագրի կամ ամբողջ հաստատության գործունեությունն ու ծառայությունները:

«**Որակի աուդիտը** որակի գնահատման գործընթաց է, որի միջոցով արտաքին մարմինը երաշխավորում է, որ՝ 1)ԲՈՒՀ-ի կամ ծրագրի որակի ապահովման ընթացակարգերը, կամ 2) համակարգի ողջ (ներքին և արտաքին) որակի ապահովման ընթացակարգերը համապատասխան են ու իսկապես իրագործվում են: Որակի աուդիտը հետևում է ոչ թե բուն որակին, այլ որ համակարգը գործի որակով: Որակի աուդիտը կարող է իրականացվել միայն այն անձանց (այսինքն՝ որակի աուդիտորների) կողմից, որոնք ուղղակիորեն ներգրավված չեն աուդիտի ենթարկվող ոլորտում: Որակի աուդիտները կարող են իրականացվել ներքին նպատակներին (ներքին աուդիտ) կամ արտաքին նպատակներին (արտաքին աուդիտ) համապատասխանելու համար: Աուդիտի արդյունքները պետք է արձանագրվեն աուդիտի զեկույցի միջոցով»:

(Vlăsceanu, Grünberg, and Pârlea, 2004)

Հավատարմագրումը որակի արտաքին ապահովման ամենաշատ կիրառվող մեթոդն է և վերջերս ներմուծվել է բարձրագույն կրթության շատ համակարգերում: Այն իրենից կարող է ներկայացնել կամ որակի արտաքին ապահովման գործող մեթոդների վերափոխում, կամ էլ լիովին նոր մեթոդ: Հիմնված լինելով ստուգման և գնահատման վրա, այն պարզապես որոշում է, թե արդյոք ծրագիրը կամ ԲՈՒՀ-ը համապատասխանում է որակի որոշակի չափորոշիչներին: Այդպիսի չափորոշիչները կարող են լինել կամ նվազագույն չափորոշիչների համախումբը, բարձր որակի կամ գերազանցության չափորոշիչները, կամ էլ ԲՈՒՀ-ի սեփական նպատակները: Հետևաբար, հավատարմագրումը միշտ ներառում է ինչ որ օրինակելի ցուցանիշ և որակի գործող չափանիշների համախումբ: Այսպիսով դա որակի ապահովման ձևերի բազմազանության մեջ միակ մեթոդն է, որը հստակ որոշում է կայացնում նախապես սահմանված չափորոշիչներին հաստատության կամ ծրագրի համապատասխանության աստիճանի վերաբերյալ:

Նվազագույն («շեմային») չափորոշիչներով հավատարմագրումը

ապահովում է ծրագրերի և ԲՈՒՀ-երի համապատասխանության երաշխիք: Երբ դա կապված է նաև գործունեություն ծավալելու թույտվության հետ, այն սովորաբար կոչվում է *լիցենզավորում*: Որոշ համակարգեր կիրառում են նաև բարձր որակի չափորոշիչներ: Դա հնարավոր է դարձնում տարբերակել այն ծրագրերը կամ ԲՈՒՀ-երը, որոնք համապատասխանում են շեմային չափորոշիչներին (և այդպիսով ընդունելի են) կամ դրանց գերազանց են: Որոշ համակարգեր հավատարմագրում են նաև ԲՈՒՀ-երը կամ ծրագրերը բացառապես իրենց նպատակներին համապատասխանության համեմատ: Սակայն, դա հազվադեպ է պատահում, եթե իհարկե ԲՈՒՀ-երը չեն հիմնավորում, որ իրենց նպատակները ընդհանուր առմամբ նաև համապատասխանում են մասնագիտության կամ բարձրագույն կրթության հիմնական չափորոշիչներին:

«Հավատարմագրումը գործընթաց է, որի միջոցով կառավարությունը կամ մասնավոր մարմինը գնահատում է ԲՈՒՀ-ի կամ որևէ կրթական ծրագրի որակը նախապես սահմանված կոնկրետ նվազագույն չափորոշիչներին կամ չափանիշներին դրա համապատասխանությունը պաշտոնապես ճանաչելու համար: Այս գործընթացի արդյունքը սովորաբար կարգավիճակի ճանաչումն է (այո / ոչ որոշումը), իսկ երբեմն էլ որոշակի ժամկետով գործունեության արտոնագրի շնորհումը: Գործընթացը կարող է ընդգրկել նախնական և պարբերական ինքնավերլուծություն և գնահատում արտաքին գործընկերների կողմից: Հավատարմագրման գործընթացը հիմականում ներառում է երեք աստիճան որոշակի գործողություններով.

1) հավատարմագրման մարմնի կողմից հաստատված չափանիշների և չափորոշիչների հիման վրա ֆակուլտետի, վարչական ղեկավարների ու ԲՈՒՀ-ի կամ ուսումնական ծրագրի աշխատակազմի կողմից իրականացրած ինքնագնահատման գործընթաց, որի արդյունքները ամփոփվում են զեկույցում,

2)հավատարմագրող կազմակերպության կողմից ընտրված գործընկեր-փորձագետների թիմի կողմից իրականացված գնահատման այց, որը ուսումնասիրում է ապացույցները, այցելում մասնաշենքերը և հարցազրույցներ անցկացնում դասախոսների ու վարչական աշխատակազմի հետ, ինչի արդյունքում կազմվում է գնահատման զեկույց, ներառյալ հավատարմագրող մարմնի հանձնաժողովին ուղղված երաշխավորություն,

3) հանձնաժողովի կողմից ապացույցների և երաշխավորության ուսումնասիրումը որակին վերաբերող սահմանված չափանիշների համախմբի հիման վրա և վերջնական որոշման կայացումը, պաշտոնական որոշման հաղորդումը ԲՈՒՀ-ին և հոգաբարձուներին, եթե այդպիսիք կան»:

(Vlăsceanu, Grünberg, and Pârlea, 2004)

Որոշ հիմնական հասկացությունների այս քննարկումը ցույց է տա-

լիս գործընթացների և ընթացակարգերի սահմանման ու դասակարգման դժվարությունները: Դա հատկապես դժվար է, եթե նաև հաշվի է առնվում միջազգային փորձը: Պատճառն այն է, որ ամեն մի երկրում սովորաբար կիրառվում են բազմազան մոտեցումներ և այն էլ ոչ համապատասխան ձևերով: Հետևաբար իմաստ չունի փորձել հավատարիմ մնալ հստակ սահմանված հասկացությունների: Սակայն, որոշակի անհրաժեշտություն կա ընդհանուր ձևակերպումներ սահմանել մանկավարժական նկատառումներից ելնելով:[5]

Վարժություն 3

Ծանոթացեք որակի ապահովման հիմնական տերմիններին ԲԿՈԱԳՄՑ-ի (INQAAHE) բառարանից՝ http://www qualityresearchinternational com/glossary/.

Վերանայեք հավատարմագրման հասկացության վերաբերյալ քննարկումները Ինչպիսի՞ն են ԲԿՈԱԳՄՑ-ի բառարանի սահմանումները համեմատած UNESCO /CEPES-ի տված սահմանումներին

6. Հավատարմագրման համակարգերի նպատակները և արդյունքների կիրառողները

Որակի արտաքին ապահովումը և հավատարմագրումը տեղեկատվություն են տրամադրում ծրագրերի և ԲՈՒՀ-երի որակի վերաբերյալ: Այս տեղեկատվությունը կարող է կիրառվել տարբեր շահառուների կողմից, ներառյալ՝

- կառավարությունը,
- ուսանողները,
- գործատուները,

[5] Հասկացությունների ավելի ամբողջական քննարկումը, ներառյալ սկզբունքային տարբերակների վերլուծությունը, կարելի է գտնել ԲԿՈԱԳՄՑ-ի կողմից պատրաստված բառարանում հետյալ կայքում՝ www.qualityresearchinternational.com/glossary/

- ֆինանսավորող կազմակերպությունները,
- բարձրագույն կրթության հաստատությունները:

Փիս Լեննը (Peace Lenn, 2004) տարբերակում է որակի արտաքին ապահովման համակարգերի, մասնավորապես հավատարմագրման, հետևյալ կիրառումները (տես Աղյուսակ 3):

Աղյուսակ 3. Հավատարմագրման համակարգերի օգտագործումը տարբեր շահառուների կողմից

Օգտագործողներ	Կիրառությունը
Կառավարություն	- Տվյալ երկրի մակարդակով բարձրագույն կրթությունը բնորոշելու համար, - Ապահովել որակյալ բարձրագույն կրթություն քաղաքացիների համար, - Ապահովել որակյալ աշխատուժ, - Սահմանել, թե որ ԲՈՒՀ-երը և ծրագրերը պետք է ստանան պետական ֆինանսավորում, - Քաղաքացիական ծառայության ընդունել միայն հավատարմագրված ԲՈՒՀ-երի շրջանավարտներին, - Որակի ապահովումը գլխավորապես կիրառել շահառուների շահերը պաշտպանելու նպատակով
Ուսանողներ	- Աջակցել ԲՈՒՀ-ի ընտրության հարցում, - Երաշխավորել տեղափոխությունը հավատարմագրված ԲՈՒՀ-երի միջև, - Երաշխավորել բակալավրիատ ավարտելուց հետո մեկ ուրիշ ԲՈՒՀ-ում մագիստրատուրա ընդունվելու հնարավորությունը, - Աջակցել աշխատանքի ընդունվելու գործում, մասնավորապես ըստ մասնագիտության և քաղաքացիական ծառայության ուղղությամբ:
Գործատուներ	- Երաշխավորել որակյալ աշխատողներ
Ֆինանսավորող կազմակերպություններ	- Որոշել ֆինանսավորման պայմանները բավարարող ԲՈՒՀ-երը
ԲՈՒՀ-եր	- Բարելավել ԲՈՒՀ-իվերաբերյալ տեղեկատվությունը և տվյալների բազան, - Կատարելագործել ինստիտուցիոնալ պլանավորումը , - Որոշել առանձին կազմակերպությունների անդամակացելու հարցը, - Աջակցել տեղափոխման սխեմաներին, - Ապահովել որակյալ ուսանողների քանակություն

Աղբյուրը: Peace Lenn, 2004.

Վարժություն 4

Ովքե՞ր են կամ կլինեն որակի արտաքին ապահովման վերաբերյալ տեղեկատվության հիմնական հասցեատերերը ձեր երկրում

Արդյո՞ք պետք է ԲՈՒՀ-երի և ուսումնական ծրագրերի ճանաչման կամ հավատարմագրման և/կամ որակի ապահովման վերաբերյալ տեղեկատվությունը հասարակայնորեն մատչելի լինի ձեր երկրում Եթե այո, ապա ու՞մ կողմից և ինչպե՞ս դա պետք է արվի

Որակի արտաքին ապահովման համակարգերի հիմնական կազմակերպական և մեթոդաբանական տեսակների ընտրությունը

Որակի արտաքին ապահովման հասկացությունների սահմանումները կարող են տպավորություն թողնել, որ որակի արտաքին ապահովման մեթոդաբանական և կազմակերպական տարբերակները համասեռ են: Թեև որակի արտաքին ապահովման նպատակները կարող են նման թվալ, կարևոր շատ տարբերություններ նկատելի են դառնում, երբ մենք համեմատում ենք մեթոդաբանական տարբերակները: Դա մեզ ցույց է տալիս, որ թեև գործընթացի որոշ հիմնական էլեմենտներ ընդհանուր են, որակի արտաքին ապահովման համակարգերը տարբերվում են իրենց հիմնական նպատակներով և մոտեցումներով:

Ընդունված է, որ որակի արտաքին ապահովումը իրականացման առումով պետք է հիմնված լինի ներքին ինքնագնահատման վրա՝ անցկացված հիմնական միավորների (բաժանմունք, ֆակուլտետ կամ ԲՈՒՀ) կրթության կամ գիտական հետազոտության համար պատասխանատու մասնագետների կողմից:

Ինքնագնահատումը սովորաբար ուղղորդվում է դիտարկման կամ վերլուծության ենթակա բնագավառների ցուցակով : Այն գործընթացը ղեկավարելու համար անհրաժեշտ շրջանակ է տրամադրում: Սակայն, ինքնագնահատումը կիրառվող ընթացակարգերի և չափորոշիչների առումով արտաքին վավերացման կարիք ունի: Արտաքին փորձագետների թիմը, որը տեղում դիտում է գնահատման միավորը և քննում է ԲՈՒՀ-ի ինքնավերլուծության զեկույցը ամենից հարմարն է նման վավերացում տրամադրելու: Այդ թիմը այնուհետ կպատրաստի զեկույց, որի հիման վրա կայաց-

վում են որակի արտաքին ապահովման մասին որոշումները:

Հետևաբար հավատարմագրման գործընթացը, որպես որակի արտաքին ապահովման տարբերակ, հիմնականում ներառում է հետևյալ երեք տարրերը՝

- ինքնագնահատում,
- արտաքին գործընկերային գնահատում,
- որոշման կայացում և հրապարակային զեկույց:

Լայնորեն ընդունված այս գործընթացի տարրերը մանրամասն կքննարկվեն *Մոդուլ 2*-ում:

1. Որակի արտաքին ապահովման հիմնական նպատակները

Բարձրագույն կրթության ոլորտում որակի արտաքին ապահովումը առընչվում է լայն նպատակների և դրանց հետ կապված մեթոդաբանական շրջանակների ընտրությանը: Դրանց մի մասը արտահայտում են կառավարության շահագրգռությունը և պահանջները, մինչդեռ մյուսները վերաբերում են ԲՈՒՀ-ի անմիջական ներքին պահանջներին: Արդյունքում, որակի արտաքին ապահովման նպատակները սերտորեն կապված են ստացվող արդյունքների հետագա կիրառության հետ:

Որակի արտաքին ապահովման համակարգերը ունեն երեք հիմնական ընդհանուր նպատակ;

- որակի վերահսկում,
- հաշվետվողականություն / ուղղորդում,
- բարելավում :

Որակի վերահսկումը կապված է կառավարությունների ավանդական դերի հետ երաշխավորելու, որ տրամադրվող բարձրագույն կրթությունը համապատասխանում է որակի նվազագույն պահանջներին: Այնտեղ ուր բարձրագույն կրթության համակարգերը պետական էին, այս գործառույթը ավելի քիչ նկատելի էր, քանզի համարվում էր, որ մուտքային ցուցանիշի բավարար ղեկավարումը ինքնին կապահովի որակի ընդունելի մակարդակ: Սակայն ներկայումս այս մոտեցումը հարցականի տակ է դրված: Շարունակվող մասնավորեցումը և տեղական ու միջազգային բարձրագույն կրթություն տրամադրողների թվի աճը բարձրացրել է կառավարությունների կողմից որակը ստուգելու անհրաժեշտությունը՝ գոնե ազգային սպառողներին պաշտպանելու համար և համոզվելու, որ բարձրագույն

կրթությունը համապատասխանում է ազգային զարգացման նպատակներին:

Երկրորդ, թեև որակի արտաքին ապահովումը հիմնականում կառուցված է հաշվետվողականության հեռանկարով, այն սովորաբար օգտագործվում է իշխանությունների կողմից նաև որպես բարձրագույն կրթության ոլորտի իրենց քաղաքականության օրակարգի մի մասը: Այն հաճախակի կապում են «ներդրումների փոխհատուցման» շուրջ մտահոգության, թափանցիկության և հասարակական երաշխավորման խնդիրների հետ: Բարձրագույն կրթությունը հաշվետու դարձնելու և ընդունված չափորոշիչներին համապատասխանեցնելու համար հասարակությունը պետք է տեղեկացված լինի ԲՈՒՀ-երի՝ «նպատակին համապատասխանության» հուսալիության կամ դրանցում հասարակության բավարարվածության վերաբերյալ: Որակի արտաքին ապահովումը հաճախ իրականացվում է հիմնականում հաշվետվողականություն պարտադրելու համար, արտաքին շահառուներին վստահեցնելու ինչպես պետական, այնպես էլ մասնավոր ԲՈՒՀ-երի կրթության «որակի» մակարդակների, դրանց՝ ընդունված կամ բարձր չափորոշիչների համապատասխանության և «միջազգային համեմատելիության» վերաբերյալ (Harvey, 2001) :

Որակի արտաքին ապահովման մոդելները կարող են նաև կառավարության կողմից կիրառվել ԲՈՒՀ-երը ընդհանուր քաղաքականությանը և նախաձեռնված բարեփոխումներին ավելի համապատասխանեցնելու համար: Դա կարելի է անել մշակելով որակի մոդել և սահմանելով չափանիշներ ու չափորոշիչներ, որոնք պետք է պահպանվեն: Անշուշտ, որակի ապահովման չափորոշիչները մանրակրկիտ տեղեկատվություն են տրամադրում թե ինչպես պետք է ԲՈՒՀ-երը գնահատվեն: Ոլորտի օրենսդրության և ֆինանսավորման մեխանիզմների հետ մեկտեղ, հավատարմագրումը այսպիսով վերածվում է ակադեմիական հանրությունը ղեկավարելու ուժեղ գործիքի: Մասնավորապես, ԲՈՒՀ-երի և պետական իշխանության մարմինների միջև զեկուցման համակարգերը կարող են զգալի հարստացվել տվյալների և զեկույցների կանոնավոր տրամադրման միջոցով:

Երրորդ, որակի արտաքին ապահովումը կարող է նաև ստեղծվել հաստատության ներկա գործունեությունը բարելավելու համար: Դրան հասնելու համար, այն պետք է լայնորեն հենվի ակադեմիական հանրության անհատական կամ կոլեկտիվ ներգրավման վրա: Որակի արտաքին ապահովումը բնականորեն կբերի բարելավման, մասամբ նպատակներին համապատասխանության միջոցով, մասամբ էլ որպես նշանակետեր ներդնելով բարձր կամ հաջողված փորձի չափորոշիչներ, որոնց ԲՈՒՀ-երը և նրանց ստորաբաժանումները պետք է ձգտեն:

Բայց որակի արտաքին ապահովման միջոցով իրավիճակի բարելավման հիմնական պատճառն այն է, որ այն աջակցում է ԲՈՒՀ-երում

պաշտոնական և սիստեմատիկ ինքնագնահատման ընթացակարգերի հաստատմանը: Իրականում որակի «վերափոխվող» բարելավումը ավելի հեշտ է կատարվում, երբ ակադեմիական հանրությունը ինքնագնահատումը սկսում է անդրադառնալով առկա կրթական իրողություններին: Այլապես որակի արտաքին ապահովման համակարգը կարող է պարզապես ստեղծել «հարմարվողականության մշակույթ»:

Որակի նվազագույն չափորոշիչների ապահովումը կարևոր է բարձրագույն կրթության այն համակարգերում, որոնք դարձել են չափազանց բազմակողմանի և անհամասեռ, կամ որտեղ նվազում է հասարակական վստահությունը ԲՈՒՀ-երի նկատմամբ: Նման դեպքերում կարևոր է հիմնավոր երաշխիքներ տալ, որ ԲՈՒՀ-ը գործում է համակարգի նվազագույն կամ շեմային չափորոշիչների շրջանակներում: Շեմային չափորոշիչները սովորաբար կապված են լինում որոշակի պատժամիջոցների կիրառման հնարավորության հետ: Դա նշանակում է, որ ԲՈՒՀ-երը կամ ուսումնական ծրագրերը, որոնք չեն համապատասխանում սահմանված չափորշիչներին՝ դուրս են մղվում համակարգից, նրանց շնորհած որակավորման աստիճանները պաշտոնապես չեն ճանաչվում կամ նմանատիպ այլ միջոցներ են կիրառվում:

Հաշվետվողականությունը կամ չափորոշիչներին համապատասխանությունը, ներառյալ ԲՈՒՀ-ի սեփական նպատակներին, կիրառվում են, երբ տվյալ ԲՈՒՀ-ի կամ ուսումնական ծրագրի որակի վերաբերյալ հանրային տեղեկատվությունը կարևոր է: Որոշ դեպքերում, դա կապվում է նաև խրախուսման կամ պատժամիջոցների հետ: Տրամադրվող տեղեկատվությունը թույլ է տալիս գործել նաև շուկայական ուժերին, ինչը օգնում է շահառուներին որակը նկատի առնել որոշումներ կայացնելիս:[6]

Բարելավումների վրա կենտրոնացող որակի ապահովումը սովորաբար հնարավոր է միայն ավելի կայացած համակարգերում, որտեղ շեմային չափորոշիչները արդեն հաղթահարված են և ԲՈՒՀ-երը մշակել են ինքնակարգավորման հիմնական մոտեցումներ: Ամեն դեպքում, որակի բարելավումը հիմնական նպատակ դարձնելը որոշակի պահանջներ է առաջադրում ԲՈՒՀ-երին և որակի արտաքին ապահովման մեխանիզմներին:

Տևական քննարկումներ են եղել այն հարցի շուրջ, թե արդյոք որակի վերահսկման, հաշվետվողականության և բարելավման նպատակները համատեղելի են, թե փոխադարձաբար իրար բացառող: Թեև որակի արտաքին ապահովման համակարգերը այս կամ այն չափով այդ ամենը կարևորում են, սակայն գործնականում որակի արտաքին ապահովման

[6] Պետք է նկատի ունենալ, որ ոչ բոլոր շահառուներն են որակը որպես հիմնական չափանիշ դիտարկում: Որոշում կայացնելու համար այլ չափանիշներ էլ կան: Ի վերջո որակի ապահովումը պետք է նրանց, ովքեր ցանկանում են որակը դարձնել իրենց համար հիմնական չափանիշ՝

ՄՈԴՈՒԼ 1 - Որակի արտաքին ապահովման
համակարգերի հիմնական տարբերակների ընտրությունը

յուրաքանչյուր համակարգ սովորաբար առավելություն է տալիս դրանցից որևէ մեկին, ի հաշիվ մյուսների:

2. Որակի արտաքին ապահովման հիմնական մոտեցումները

Պարտադիր թե կամավոր որակի արտաքին ապահովում

Որակի արտաքին ապահովման համակարգը ստեղծելիս ամենակարևոր հարցերից մեկը որոշելն է, թե այն պարտադիր, թե կամավոր բնույթ պետք է ունենա: Պարտադիր համակարգը պահանջում է բոլոր ԲՈՒՀ-երից և ծրագրերից, որոնք գտնվում են որակի արտաքին ապահովման մեխանիզմների դաշտում, պարբերաբար անցնել որակի ապահովման գործընթաց: Իհարկե, որակի արտաքին ապահովման պարտադիր համակարգը սովորաբար շահագրգռված չէ միայն ստուգելով, որ նվազագույն չափորոշիչները բավարարված են: Պարտադիր համակարգերը հաճախ ստեղծվում են որովհետև չկա լիցենզավորման համակարգ կամ այն արդյունավետ չէ: Դրանք կարող են վերաբերվել կրթության այնպիսի ոլորտների, որտեղ պետությունը հատուկ պատասխանատվություն է կրում (օրինակ ուսուցիչների կրթություն) կամ ազգային զարգացման և անվտանգության համար կարևոր մասնագետներ պատրաստող ծրագրերի (օրինակ բժշկություն, ճարտարապետություն և քաղաքացիական ճարտարագիտություն):

Այնուամենայնիվ, որակի արտաքին ապահովման համակարգերի մեծ մասը կամավոր բնույթ է կրում: Դա նշանակում է, որ ԲՈՒՀ-երը և ստորաբաժանումները իրենք են դիմում որակի արտաքին ապահովման համար: Այդպես վարվելու դրդապատճառը կարող է լինել հավատարմագրման միջոցով հատուկ կարգավիճակ ստանալու հնարավորությունը, որը ԲՈՒՀ-ին առավելություն կտա մրցակցային դաշտում ուսանողներ և ֆինանսավորում գտնելու հարցում: Կամ դրանք կարող են շահագրգռված լինել առանձնահատուկ ֆինանսավորման հնարավորությունով (ինչպես օրինակ ուսանողների թվով ֆինանսավորում կամ հատուկ խրախուսական մեխանիզմներ):

Երբ որակի արտաքին ապահովման համակարգերը կամավոր են, ակնկալվում է, որ որակի արտաքին ապահովման հետ կապված առավելությունները կստեղծեն շարժում, որի շնորհիվ բոլոր ԲՈՒՀ-երը կամ գոնե դրանց մեծամասնությունը կներառվի համակարգի մեջ:

Որակի արտաքին ապահովման կամավոր համակարգերը հաճախ ավելի ուղղակիորեն են առընչվում բարեփոխումների քաղաքականության օրակարգին: Դրա պատճառը այն է, որ կախված որակի առաջարկվող մո-

դելին միանալու ցանկությունից ԲՈՒՀ-երը և ստորաբաժանումները կարող են որոշել, մասնակցել գործընթացին թե ոչ: Բացի այդ որակի արտաքին ապահովման համակարգերը ավելի հեշտ են ընդունվում ակադեմիական հանրության կողմից:

Ներդիր 3. Պարտադիր հավատարմագրումը Հունգարիայում

Հունգարիան մշակեց իր ընթացակարգերը և հավատարմագրման կազմակերպական շրջանակը 1990-ականներին ու դրանք պաշտոնական դարձրեց կառավարության օրինագծերի միջոցով և կառույցների հիմնմամբ, որոնք հետագայում փոփոխվել են երեք տարբեր առիթներով. Հավատարմագրման Ազգային Ժամանակավոր Կոմիտե (ՀԱԺԿ) 1993-1994, Ազգային Հավատարմագրման Կոմիտե (ԱՀԿ) 1994-1996 և Հունգարիայի Հավատարմագրման Կոմիտե՝ ՀԱԿ 1997: ՀԱԿ-ը «հեռվից վերահսկման» կազմակերպություն է և պատասխանատու է թե ուսուցման բովանդակության, և թե որակի համար, որոնք երկուսն էլ ներդրվում են ԲՈՒՀ-երի ու ուսումնական ծրագրերի հավատարմագրման ձևով:

ՀԱԿ-ը պատասխանատու է տարբեր գործառույթների համար: Այն իրականացնում է համալսարանների և քոլեջների հավատարմագրում յուրաքանչյուր ութը տարին մեկ (հատուկ կանոնակարգ կիրառելով պետական ճանաչման համար դիմած եկեղեցական և մասնավոր հաստատությունների համար), որի միջոցով հաստատության կառավարումից ու ենթակառուցվածքներից բացի, որպես հավելում գնահատվում են բոլոր կրթական ծրագրերը (ինքնագնահատման, գործընկեր փորձագետների այցի և հրապարակված զեկույցի միջոցով):

ՀԱԿ-ը պատասխանատու է նաև որակավորում շնորհող կրթական նոր և դոկտորական ծրագրերի, մասնագիտացած մագիստրական ծրագրերի և ԲՈՒՀ-երի երկամյա միջին մասնագիտական ծրագրերի գնահատման համար: Այն լիցենզավորում է նորաբաց համալսարանները, քոլեջները և երկրում բացված արտասահմանյան բարձրագույն ուսումնական հաստատությունները: Բացի որակի կառավարման հետ ուղղակիորեն կապված այս գործառույթներից, այն հաստատում է ազգային որակավորման պահանջները և կրեդիտային համակարգի կանոնակարգերը, փորձաքննություն է իրականացնում դիպլոմի ճանաչման և համարժեքության միջազգային համաձայնագրերի նախագծերի վերաբերյալ: Բոլորովին վերջերս, նրա գործառույթներին ավելացել են միջազգային բարձրագույն կրթության հավատարմագրումը և ակադեմիայի աշխատանքների գնահատումը :

Հունգարական հավատարմագրման համակարգի առանձնահատկութ-

յուններից մեկն այն է, որ ինստիտուցիոնալ հավատարմագրումը կատարվում է միաժամանակ ուսումնական ծրագրի գնահատման հիման վրա և հաստատության ունեցած հավատարմագրված (ըստ դասակարգման բացառիկ կամ ուժեղ ճանաչված) ծրագրերի նվազագույն քանակի առկայության դեպքում :

Վերոնշյալ գործառույթներն իրականացնելու համար, ՀԱԿ-ը հրապարակում է երաշխավորություններ (կամ որոշումներ) երեք տարբեր մակարդակով: Մակարդակներից առաջինը կազմված է առարկայական ծրագրերի կոմիտեներից, երկրորդը (միջինը) վերաբերում է քոլեջային, ինստիտուցիոնալ ու միջառարկայական կոմիտեներին և երրորդ մակարդակը ՀԱԿ-ի խորհուրդն է: Վերջնական որոշումները հաստատությունների կողմից իրականացվելիք գործողություններ են ենթադրում, որոնք վերաբերում են ծրագրերին, ֆակուլտետներին և ԲՈՒՀ-երին: ՀԱԿ-ի երաշխավորմամբ Կրթության նախարարությունը որոշումներ է կայացնում ուսումնական ծրագրերի, տարբեր ֆակուլտետների և ԲՈՒՀ-երի հավատարմագրման վերաբերյալ:

Հունգարական հավատարմագրման համակարգի նպատակները ի սկզբանե նպատակաուղղված էին որակի նվազագույն չափորոշիչների ապահովմանը, մասնավորապես ծրագրային մակարդակով, ինչի համար մասնագիտական կոմիտեները սահմանել էին ծրագրերի հավատարմագրման նվազագույն պահանջները: Հետևաբար, Հունգարիայում հավատարմագրումը պարտադիր է: Այնուամենայնիվ, ինստիտուցիոնալ հավատարմագրումն ունի մի բաղադրիչ, որն ուղղված է հատկապես որակի բարելավմանը: Ֆակուլտետները և ԲՈՒՀ-երը պետք է պատրաստեն ինքնավերլուծության զեկույց, որին հետևում է ստուգողների թիմի այցը և ողջ հաստատության, ինչպես նաև տարբեր մակարդակներում իրականացված ինքնագնահատման փաստաթղթերի ուսումնասիրությունը:

Նվազագույն չափորոշիչների երաշխավորման և բարելավման նպատակների միաժամանակ իրականացման արդյունքում զգալի լարվածություն է առաջացել և համակարգի քննադատները համոզված են, որ որակի բարեփոխման գործառույթը պետք է որևէ նախադեպ ունենա: Ներկայումս մտադրություն կա, որպես հավատարմագրման գործընթացի մաս, ԲՈՒՀ-երին օգնել մշակելու և գնահատելու որակի կառավարման իրենց սեփական ընթացակարգերը:

Աղբյուր: Kozma , 2003.

Համապատասխանությունը նպատակին ի հակադրություն չափորոշիչների վրա հիմնված մոտեցման

Որակի արտաքին ապահովման համակարգերի հիմնարար բնույթի (պարտադիր կամ կամավոր) և նպատակների միջև եղած հակադրությունը վերաբերում է նաև որակի գնահատման մոտեցմանը: Դա կարող է լինել կամ «համապատասխանություն նպատակներին» կամ «չափորոշիչների վրա հիմնված» մոտեցում:

«Համապատասխանություն նպատակներին» մոտեցումը սկսում է վերլուծելով ԲՈՒՀ-ի կամ ուսումնական ծրագրի սահմանված նպատակը (առաքելության սահմանումը): Այն կարող է նաև դիտարկել, թե արդյոք այդ նպատակը ընդունելի է բարձրագույն կրթության համար, թե՝ ոչ (նպատակի համապատասխանություն): Այս մոտեցումը լայն տարածում է գտել: Իսկապես, ԲՈՒՀ-երը և ծրագրերը չեն կարող բոլորը դիտարկվել նույն չափորոշիչներով, քանզի նրանք կարող են սպասարկել բարձրագույն կրթության բազմակողմանի համակարգի յուրահատուկ հաճախորդների և խմբերի: Օրինակ՝ մեծ քաղաքում տեղակայված ավանդական համալսարանը, որը մեծապես կարևորում է գիտահետազոտական ոլորտում գերազանցությունը, չի կարող նույն չափորոշիչներով գնահատվել, ինչպես միայն ուսուցում իրականացնող ԲՈՒՀ-ը, որը կենտրոնացած է ոչ ավանդական ուսանողական խմբերի կրթության վրա: Միևնույն ժամանակ, ընդունված մոտեցում է նաև այն, որ որոշակի չափորոշիչներ (մասնավորապես նվազագույն նորմաները) պետք է պահանջվեն բոլոր ԲՈՒՀ-երից: Այս կարծիքը գնալով ավելի է արմատավորվում, մասնավորապես միջազգային կրթության համեմատելիության նկատմամբ աճող պահանջի համատեքստում: Որակի ապահովման ավելի և ավելի շատ համակարգեր են դրա հետևանքով հակվում դեպի հավատարմագրման՝ չափորոշիչների վրա հիմնված մոտեցումը:

«Համապատասխանություն նպատակներին» մոտեցումը սովորաբար ընկալվում է որպես որակի բարելավմանն ուղղված ավելի հարմար մոտեցում, մինչդեռ չափորոշիչների վրա հիմնված մոտեցումը ավելի սերտորեն կապվում է հաշվետվողականության և համապատասխանության հետ:

Երբ որակի արտաքին ապահովման նպատակն է որոշել, թե արդյոք ԲՈՒՀ-ը կամ ծրագիրը կարող է հավատարմագրվել թե ոչ, անհրաժեշտ է օգտագործել չափորոշիչների վրա հիմնված մոտեցումը: Սա ԱՄՆ-ի հավատարմագրման տարածաշրջանային գործակալությունների մոտեցումն է:

Ներդիր 4. ԱՄՆ-ի հավատարմագրման տարածաշրջանային գործակալությունների կողմից կիրառվող չափորոշիչների վրա հիմնված մոտեցումը

Հավատարմագրման գործակալությունների կողմից իրենց գործունեության վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու ԲՈՒՀ-երին ուղղված պահանջը երկար պատմություն ունի: Երբ քսաներորդ դարի սկզբին ԱՄՆ-ի հավատարմագրող գործակալությունները նոր էին սկսել իրենց գործունեությունը, նրանք պահանջում էին շատ առանձնահատուկ տեղեկատվություն քոլեջների կառուցվածքի և ծրագրերի վերաբերյալ: Չափորոշիչները քանակով սահմանափակ էին, հիմնականում հենվելով հասանելի տեղեկատվության վրա և սովորաբար քանակական էին: 1920-ականների ընթացքում, օրինակ, հիմնական պահանջները վերաբերում էին դասասենյակների քանակի և ծավալի, գրադարանում գրքերի քանակի, դասավանդող աշխատակազմի քանակի ու նրանց որակավորումների և տարեկան բյուջեի չափերի վերաբերյալ տեղեկատվությանը: Ընդհանուր առմամբ, նպատակն էր երաշխավորել, որ ակադեմիական հաստատություններն ունեն համապատասխան կազմակերպական ռեսուրսներ կամ հաստատուն միջոցներ որակյալ կրթություն տրամադրելու, համար: Հատկանշական է, որ ուշադրության կենտրոնում հաստատությունն էր, և ոչ թե ուսանողը, կամ ուսումնառությունն ու դասավանդումը:

Այս մոտեցումը քննադատվել է մի քանի պատճառներով: Առաջինը, նշվում էր, որ չափից ավելի շատ ուշադրություն է դարձվում մասնատված տեղեկատվությանը, մինչդեռ «հաշվելին» անպայման չէ որ բովանդակային լինի: Երկրորդը, այն թույլ չէր տալիս տարբերակել հաստատության առաքելությունը և տեսակը: Երրորդը, այս չափումները չափից ավելի շատ նշանակություն էին տալիս «մուտքային ցուցանիշներին» և «ռեսուրսներին», քան դրանց կիրառությանը: Անկասկած, այս փաստարկներին ավելանում էր նաև հավատարմագրման գործընթացում կուտակված փորձը, որը վկայում էր, որ լավ որակի ծրագրեր առաջարկող ԲՈՒՀ-երը հաճախ հավատարմագրվել են, թեև չեն համապատասխանել սահմանված որոշակի պահանջներին, հետևաբար այդ պահանջներն ուղղակի համարվում էին անիմաստ:

1930-ականներին, Հյուսիսային Կենտրոնական Ասոցիացիայի առաջնորդությամբ հրաժարվեցին չափորոշիչների մեկ համախումբ ունենալու գաղափարից: Փոխարենը ՀԿԱ-ն որոշեց կենտրոնանալ ԲՈՒՀ-ի գործունեության «ամբողջական պատկերի» վրա և հաշվի առնել այն նպատակները, որոնք հաստատությունն իր համար սահմանել է: Ընդունվեց, որ կրոնական ուղղվածության ոչ մեծ քոլեջը կարող է բոլորովին տարբեր նպատակներ ունենալ, քան Միջին Արևմուտքի մեծ պետական համալսարանները, և այն պետք է դիտարկվի իր սեփական

նպատակներին համապատասխան:

Այս նոր մոտեցումը կենսագործելու համար ՀԿԱ-ն վերանայեց իր մոտեցումը հավատարմագրման պահանջներին: ԲՈՒՀ-ի վերաբերյալ հավաքված փաստերը պետք է գնահատվեին դրանցով ներկայացված ընդհանուր պատկերի հիման վրա, յուրաքանչյուր առանձին չափորոշիչին համապատասխանելու նախկին շեշտադրման փոխարեն: Այդ ժամանակից սկսած չափորոշիչները դիտվում էին որպես իրենց նպատակները ըստ անհրաժեշտության փոփոխող «չափանիշներ»: Այս «ընդհանրական» մոտեցման ներքո ԲՈՒՀ-ը կարող է թերի լինել մի բնագավառում, բայց փոխհատուցող ուժեղ կողմեր ունենալ մյուս բնագավառներում:

Այս մոտեցումը ըստ համալսարանի գործունեության ընդհանուր պատկերի գնահատման ընդունվել է ՀԿԱ-ի կողմից և կիրառվել 1930-ականների և 1940-ականների ընթացքում (NCA, 1997, p.4): Հավատարմագրման տարածաշրջանային մյուս գործակալությունները նույնպես նմանատիպ քայլեր ձեռնարկեցին այդ ժամանակաշրջանում: Հատկանշական է, որ չնայած նրանք ավելի մեծ ճկունություն սկսեցին դրսևորել իրենց չափորոշիչների մեկնաբանության մեջ, սակայն չփոխեցին իրենց տերմինները՝ «չափորոշիչներից» «չափանիշի»: Քանակական տեղեկատվությունը շարունակվում էր կիրառվել, բայց դրան քիչ կարևորություն էր տրվում: Որակական դատողությունները ավելի կարևոր դարձան: Բայց առաջվա պես ուշադրության կենտրոնում մնում էր հաստատությունը, նրա կազմակերպական ուժեղությունը և կրթական առաջարկների ու առաքելության յուրահատկությունը:

Հետ նայելով կարելի է ասել, որ այդ «ընդհանրական» մոտեցումը դանդաղեցրեց, բայց չկանգնեցրեց հավատարմագրման գործընթացում աստիճանաբար ավելացող մանրամասնությունների պահանջը: Բառակազմը փոխվել է, ուղղորդումը դարձել է ավելի ճկուն, բայց չափորոշիչների քանակը գնալով աճում է: Հավատարմագրող գործակալությունների մեծ մասը այսօր աշխատում է բավական մանրամասն չափորոշիչներով, որոնք միաժամանակ արտահայտում են այն հիմնական պահանջները որոնց պետք է համապատասխանեն բոլոր ԲՈՒՀ-երը, ծրագրերը և չափանիշները, որոնցով կարելի է որոշել, թե արդոք այդ չափորոշիչները կատարվում են: Հյուսիսարևմտյան Ասոցիացիան (ՀԱԱ), օրինակ, ներկայումս ունի ինը չափորոշիչ՝ բաղկացած 45 ենթամասերից (Հյուսիսարևմտյան Ասոցիացիա, 1999):

Աղբյուրը: El-Khawas, 2001, 60-62

Ֆրանսիայում բարձրագույն կրթության գնահատման համակարգը արդեն 20 տարի հիմնված է որակի գնահատման բավական բաց համակարգի վրա: Այս համակարգի նպատակն է գնահատել ԲՈՒՀ-ի առանձնահատուկ ուժեղ և թույլ կողմերը՝ տվյալ հաստատության ներքին գործընթացները բարեփոխելու նպատակով տեղեկատվություն տրամադրելու համար: Վերջերս, գնահատողների և ԲՈՒՀ-ի ներքին կառավարման պատասխանատուների համար չափորոշիչների մի ընդհանրական համախումբ է ընդունվել (տես *Ներդիր 5*):

Ներդիր 5. Ֆրանսիայի Գնահատման ազգային կոմիտեի «Չափորոշիչների գիրքը»

Միևնույն ժամանակ մենք տեսնում ենք, որ Գնահատման Ազգային Կոմիտեի գործը պետք է ավելի մասնագիտական դառնա իր հեղինակությունը հաստատելու համար: Մենք ձգտում ենք ուժեղացնել մեր մեթոդաբանությունը և միջազգային ասպարեզում այն ավելի հստակ ներկայացնել: Ամենահաջողված ձեռքբերումը այս ոլորտում եղավ 2003թ. «Չափորոշիչների գրքի» (*Livre des references*) հրապարակումը, որն այժմ ծառայում է որպես ներքին գնահատման շրջանակ:

Այս փաստաթուղթը համալսարանին թույլ է տալիս բացահայտելու և ընտրելու այն ուղղությունները, որոնց պետք է հետևի: Այն վերաբերում է երեք բնագավառի՝ կրթական քաղաքականություն, գիտահետազոտական քաղաքականություն և համալսարանի կառավարման դերակատարությունը իր նպատակներին հասնելու գործում:

Գիրքը բաժանված է չափորոշիչների տասը խմբի, որոնցից յուրաքանչյուրը սահմանում է համալսարանի կյանքի մի մեծ բնագավառ, որի վրա հիմնված են կրթության օգտագործողների և գործընկերների սպասումները : Խմբերում ընդգրկված 63 չափորոշիչները կազմում են ներդրման համակարգը, իսկ 302 չափանիշներից յուրաքանչյուրը ձևավորում է նպատակին հասնելուն օժանդակելու մեխանիզմ: Սկսած իր հրատարակումից, *Livre des références* ոչ միայն կիրառվում է ԳԱԿ-ի բոլոր գնահատումներում, այլ նաև ծառայում է որպես արդյունավետ հաղորդակցական գործիք:

Աղբյուր: Levasseur, 2005.

Մոդուլ 4-ը կքննարկի և կխորացնի «համապատասխանությունը նպատակին» և չափորոշիչների վրա հիմնված որակի արտաքին ապահովման մոտեցումները, որոնք համակարգի ընտրության հիմքն են կազմում:

Նվազագույն չափորոշիչներն ի հակադրություն հավատարմագրման մեջ բարձր մակարդակի (կամ հաջողված փորձառության) չափորոշիչների

Որակի արտաքին ապահովման համակարգերը կարող են կիրառել կամ **նվազագույն** կամ **բարձր մակարդակի (հաջողված փորձառության)** չափորոշիչներ: Սովորաբար հիմնականում կիրառվում են նվազագույն չափորոշիչները: Այդպես վարվելով գործակալությունները հակված են գաղափարապես հարազատ մնալ ԲՈՒՀ-երի ու ծրագրերի լիցենզավորման սխեմային և այսպիսով գործել որպես պարբերաբար լիցենզավորող մեխանիզմ: Նման նվազագույն չափորոշիչները հաճախ միտված են ուսանողների, աշխատակազմի, շինությունների, հարմարությունների և ֆինանսների հետ կապված մուտքային ցուցանիշներին: Դրանք նաև ընդգրկում են գործընթացի տարրեր, ինչպես օրինակ ղեկավարման և կառավարման համակարգերը, հիմնական հետազոտական գործունեությունը, առանց որի բարձրագույն կրթությունն անիմաստ կլինի: Ընդհանուր առմամբ, նվազագույն չափորոշիչների վրա հիմնված որակի արտաքին ապահովման համակարգը նպատակ ունի ապահովել համապատասխանությունը չափորոշիչներին և հաշվետվողականությունը:

Բարձր չափորոշիչների վրա հիմնված որակի արտաքին ապահովումը ենթադրում է, որ կամ նվազագույն չափորոշիչներն արդեն ստուգվել են տարբեր մեխանիզմների միջոցով կամ բարձրագույն կրթության համակարգի հաստատությունների որակը համեմատաբար հավասար է: Օրինակ, այսպիսին է իրավիճակը Արևմտյան Եվրոպայի երկրներում, որտեղ պետությունը երկար ժամանակ իր վրա էր վերցրել հանրային կրթության համակարգի մեծածավալ ֆինանսավորման հիմնական պատասխանատվությունը: Բարձր կամ հաջողված փորձառության չափորոշիչների ապահովումը գերակայող է նաև այն երկրներում, որտեղ համալսարանները ավանդաբար ունեն ինքնավարության բարձր մակարդակ և որտեղ համապատասխանեցումը նվազագույն չափորոշիչների հետ, մասնավորապես ուսումնական ծրագրի մակարդակում, հակասում է ինքնավարության իրենց ըմբռնմանը: Բարձր մակարդակի կամ հաջողված փորձառության չափորոշիչների վրա հիմնված որակի արտաքին ապահովումը որակի բարելավման կարծես թե հարմար մեխանիզմ է, քանի որ այն տրամադրում է ուղեցույցների համախումբ, որոնց պետք է հետևեն ԲՈՒՀ-երը: Բացի այդ, այն ավելի հեշտ է կիրառել, քանի որ հաճախ կամավոր բնույթ է կրում և կարող է գործողության մեջ դրվել բարձր որակ ունենցող ԲՈՒՀ-երի կողմից:

Այս մեխանիզմի թերությունը կայանում է նրանում, որ այն այնքան էլ արդյունավետ չէ որակի անընդունելի մակարդակները կարգավորելու գործում: Այս առումով այն արդյունավետ մեխանիզմ չէ մեծ թիվ կազմող կրթություն տրամադրողների կողմից (կոմերցիոն հիմունքներով) առաջարկվող վատ մշակված, երբեմն էլ անընդունելի ծրագրերի հետ գործ

ունենալիս.

Ներդիր 6-ը ներկայացնում է հավատարմագրման Կոլումբիական մոտեցումը, որը չափորոշիչների վրա հիմնված համակարգ է, բայց միտված չէ նվազագույն չափորոշիչների ապահովմանը : Այն միայն վավերացնում է որակի բարձր չափորոշիչները և կազմակերպված է կամավորության հիմունքներով:

Ներդիր 6. Բարձր որակի հավատարմագրումը Կոլումբիայում

Բարձրագույն կրթության համակարգը Կոլումբիայում բարդ և անհամասեռ է: Այն կազմված է համալսարաններից, քոլեջներից, տեխնոլոգիական հաստատություններից, ինչպես նաև միջանկյալ տեխնիկական-մասնագիտական հաստատություններից: Բարձրագույն կրթության հասարակական պահանջարկը միջնակարգ դպրոցի շրջանավարտների ավելացող քանակի պայմաններում խիստ աճել է վերջին երկու տասնամյակների ընթացքում: Սակայն, ֆինանսավորման սահմանափակ լինելու պատճառով պետական կրթության տրամադրումը բավարարում է այդ պահանջարկի մի մասը միայն, ինչը նպաստում է բազմաթիվ մասնավոր ծրագրերի և հաստատությունների զարգացմանը, որոնք տարբեր մակարդակի բարձրագույն կրթություն են առաջարկում ինչպես կրթության որակի, այնպես էլ նպատակայնության առումով:

Լինելով 1992թ.-ին առաջարկված Կոլումբիայի բարձրագույն կրթության համակարգի բարեփոխման օրենքի (Law 30) մի մասը, Կոլումբիայի բարձրագույն ուսումնական հաստատությունների հավատարմագրման համակարգը ստեղծվել է Հավատարմագրման Ազգային Խորհրդի (ՀԱԽ) հովանավորության ներքո, ինչը ճշգրիտ իրագործվել է ըստ այդ օրենքի: ՀԱԽ-ը գործում է Բարձրագույն Կրթության Ազգային Խորհրդի (ԲԿԱԽ) ենթակայությամբ, որը Կոլումբիայի բարձրագույն կրթության ոլորտում քաղաքականություն մշակող հիմնական մարմինն է: ՀԱԽ-ը կազմված է Կոլումբիայի հայտնի գիտնականների խմբից և հավատարմագրման շարունակական գործընթացների կորդինացման համար պատասխանատու քարտուղարությունից:

ՀԱԽ-ը պատասխանատու է որակի բարձր մակարդակների կամավոր հավատարմագրման համար: «Բարձր որակի հավատարմագրումը» կամավոր և ժամանակավոր գործընթաց է և դրա մեթոդաբանությունը միտված է ավելի շատ որակի բարձրացմանը, քան որակի հսկմանը:

Արդյունքում «Բարձր որակի հավատարմագրումը» որդեգրել է մի համակարգ, համաձայն որի որակի կատարյալ բնորոշումները համեմատվում են իրականության հետ, այդպիսով զորեղ շարժառիթ ստեղծելով որակի բարելավման համար:

Ակադեմիական ծրագրերի և ԲՈՒՀ-երի *Բարձր որակի հավատարմագրման* մեթոդաբանությունը ընդհանուր առմամբ հենվում է չորս հիմնական փուլերից բաղկացած գործընթացի վրա: Երբ ԲՈՒՀ-ը դիմում է իր ծրագրերի հավատարմագրման համար, սկսվում է հավատարմագրումը սկսելուն անհրաժեշտ պայմանների չափանիշներին համապատասխանության ստուգումը: Այս փուլին հաջորդում է հավատարմագրման ենթարկվող ԲՈՒՀ-ի բակալավրական ծրագրի ինքնավերլուծությունը, հիմնված նախապես հաստատված մեթոդաբանության, չափանիշների համախմբի և որակի բնորոշիչների վրա: Դրան հետևում է արտաքին գործընկերների այցը ԲՈՒՀ: Արդյունքում պատրաստվում է զեկույց, որի վերաբերյալ ԲՈՒՀ-ի ղեկավարությունը կարող է դիտողություններ անել: Փորձագետների ամփոփիչ զեկույցը ուղարկվում է ՀԱԽ, որը այնուհետև իրականացնում է վերջնական գնահատում կամ ամփոփում և երաշխավորություն է ներկայացնում Կրթության նախարարությանը ծրագիրը հավատարմագրելու ըստ սահմանված տևողության՝ երեքից տասը տարվա սահմաններում:

ՀԱԽ-ը պատրաստել է մոդել *Բարձր որակի հավատարմագրման* համար, որը հիմնված է հետևյալ յոթ գործոնների վրա՝

- հաստատության զարգացման ծրագիրը,
- ուսանողները և դասավանդողները,
- ուսումնական գործընթացները,
- հաստատության ապահովվածությունը,
- կազմակերպումը, ղեկավարումը և կառավարումը,
- շրջանավարտները և նրանց ներդրումը,
- ֆիզիկական և ֆինանսական ռեսուրսները:

Այս գործոնները նկարագրված և համակարգված են ըստ 66 բնորոշիչների: Յուրաքանչյուր բնորոշիչ ներառում է ցուցիչներ, որոնք թույլ են տալիս չափել իրական արժեքի հետ դրա համապատասխանության աստիճանը: Ըստ հավատարմագրման օբյեկտի (համալսարան կամ ոչ-համալսարանական հաստատություն) մի շարք առանձնահատկություններ կարող են դիտարկվել որպես ավելի կարևոր քան մյուսները, իսկ որոշներն էլ՝ որպես վճռորոշ: Դա հաստատությունների և փորձագետների համար մի ցուցակ է այն կետերով, որոնցով պետք է բնորոշվեն բաժանմունքը կամ հաստատությունը՝ կոնկրետ իրողությունը-

ներից ելնելով: Ինստիտուցիոնալ հավատարմագրման գնահատումը հիմնված է համանման գործոնների և բնորոշիչների վրա, բայց ուշադրությունն ավելի կենտրոնացվում է ինստիտուցիոնալ և կազմակերպչական գործընթացների վրա:

Աղբյուր: Revelo Revelo, Augusto Hernandez, 2003, էջ 9-11

Հավատարմագրումը / գնահատումը ի հակադրություն որակի աուդիտի

Որակի արտաքին ապահովման համակարգերը կարող են, (*հավատարմագրման* և *գնահատման* մեխանիզմների օգնությամբ), կենտրոնանալ ԲՈՒՀ-ի կամ բաժանմունքի գործունեության ու ծառայությունների որակի վրա, կամ կենտրոնանալ որակի ապահովման համակարգի որակի վրա (որակի *աուդիտի* միջոցով): Որակի աուդիտը սկզբունքորեն տարբերվում է գնահատումից և հավատարմագրումից, քանի որ այն դիտարկում է թե հաստատությունը (կամ նրա բաժիններից մեկը) ունի արդյոք հստակ վերահսկման համակարգ, որը պարզորոշ արտացոլում է ուժեղ և թույլ կողմերը: Դա նշանակում է, որ որակի աուդիտը կենտրոնանում է հաստատության ներքին հավաստման մեխանիզմների և «ուսուցման իրականացման» մասին տվյալների հավաքման մեխանիզմների, ինչպես նաև ուսանողների, շրջանավարտների և գործատուների բավարարվածության վերաբերյալ հաստատության կողմից պարբերաբար տվյալներ հավաքելու վրա: Դա նաև նշանակում է, որ հաստատությունը ունի համապատասխան մեխանիզմներ ցածր որակի դեմ պայքարելու և որակը շարունակաբար բարելավելու համար: Քանի որ որակի աուդիտը կենտրոնանում է գործընթացների վրա, դրանով իսկ այն հիմնականում համընկնում է որակի արտաքին ապահովման «բարելավման» նպատակի հետ Սակայն, այն չի հավաստում ակնկալվող որակի որևէ մակարդակի կամ դրան համապատասխանության մասին: Այն նաև հնարավորություն չի տալիս իրականացնել որակի մակարդակների համեմատություն, ինչպես դա արվում է չափորոշիչների վրա հիմնված որակի գնահատման միջոցով:

Որակի ապահովման գործակալությունների մեծ մասը կիրառում են որակի ապահովման մի շարք մեխանիզմներ: Դրանք սովորաբար ընդգրկում են «ինստիտուցիոնալ աուդիտ» և ուսումնական ծրագրերի գնահատում, որոնք կարող են նաև չավարտվել հավատարմագրման որոշումով :

ՄՈԴՈՒԼ 1 - Որակի արտաքին ապահովման
համակարգերի հիմնական տարբերակների ընտրությունը

Ներդիր 7. Նորվեգիայում կիրառվող որակի աուդիտը

Ազգային և միջազգային զեկույցներում սահմանված որակին համապատասխանելու երկրի շահագրգռությունից ելնելով, Նորվեգիան 2002թ. ստեղծեց NOKUT կոչվող հավատարմագրման նոր գործակալություն: Որոշվեց որդեգրել աուդիտի մոտեցումը, որի միջոցով կարելի է գնահատել թե ինչպես են ԲՈՒՀ-երը կատարում կրթության որակի ապահովման իրենց պարտականությունը:

Նախնական ուսումնասիրության ավարտին որակի աուդիտի մոտեցման զարգացման համար պատրաստվեցին հետևյալ երաշխավորությունները.

1. *ԲՈՒՀ-ի քանակական տվյալները ներկայացնող փաստաթղթեր-զեկույցներ* որոնք պետք է ներառեն հիմնական ցուցանիշները հետևյալ ուղղություններով. մատչելիությունը, ներդրված ռեսուրսները և արդյունքները: Զեկույցում յուրաքանչյուր ուղղության գծով պահանջվող քանակական տվյալները ներկայացվում են բոլոր հաստատությունների համար հարցերի ընդհանուր շրջանակի և տվյալների ձևաչափի միջոցով:

2. *ԲՈՒՀ-ում որակի գծով աշխատանքների ուղեցույց:* Այդ ուղեցույցում պետք է ընդգրկվեն հետևյալ տարրերը.

- Որակի ծրագիրը և կառավարումը, ներառյալ՝ նպատակները, չափորոշիչները, պարտականությունները և վարչական ռեսուրսները, ղեկավարումն ու կառավարումը, առաջնահերթությունները և գործողությունների ծրագիրը,
- Գրանցամատյան (ռեգիստր) և զեկույցներ (ինչպես նշվեց կետ 1-ում),
- ԲՈՒՀ-ում իրականացված գնահատումներ (միաժամանակ ինքնավերլուծություններ և արտաքին գնահատումներ),
- Որակի բնագավառում աշխատանքների վերաբերյալ ԲՈՒՀ-ի ամենամյա զեկույցի հրատարակում

Կրթության որակի վերաբերյալ ամենամյա զեկույցը: Այս զեկույցը ամենամյա ինքնագնահատում կատարելու անհրաժեշտությունը փոխարինելու համար է: Զեկույցը բոլոր դեպքերում պետք է լինի որակի ներքին համակարգի մի մասը (տես կետ 2):

3. *Արտաքին աուդիտի գնահատումը:* Սա աուդիտի իրական կիրառությունն է: Աուդիտի զեկույցը շեշտադրում է համակարգից անկախ՝

իրական վիճակը և դրա ազդեցությունը տեսնելու կարևորությունը: Այն արտաքին աուդիտի անցկացման մանդատ է տալիս գնահատման թիմին (NNR. August 2002):

Սպասվում էր, որ աուդիտային մոտեցումը ունի հետևյալ համակարգային ուժեղ կողմերը

- Աուդիտային համակարգը համապատասխան ձևով հաշվի է առնում ընդարձակ, ինքնավար և մասնագիտորեն ղեկավարվող բարձրագույն կրթության հաստատությունների գոյությունը, որոնք ի վիճակի են ղեկավարել որակի ապահովման ներքին համակարգերը: Նման հաստատությունները կունենան անհրաժեշտ ներուժ այս համակարգերը իրենց հարմարեցնելու համար:

- Հաստատությունների կողմից նման համակարգերի ներդրման դեպքում, հաստատության ներսում կարող է ընդդիմություն առաջանալ: Նման դեպքերում աուդիտի համակարգը կարող է ճնշում գործադրել հաստատության վրա որակի ապահովման համապատասխան ներքին համակարգեր մշակելու հարցում:

- Այն ԲՈՒՀ-երին ազատություն է տալիս հիմնական ուղեցույցի և չափորոշիչների սահմաններում իրենց սեփական ներքին համակարգերն ու մեխանիզմները մշակելու: Կան մի քանի առանձնահատուկ հրահանգներ և նմուշներ, բայց չկա ընթացակարգը ղեկավարող ոչ մի ձեռնարկ, թե ինչ պետք է կամ պարտավոր են հաստատությունները անել իրենց ծրագրերին հետևելու և գնահատելու նպատակով: Ավելի շուտ չափորոշիչները առավելապես կլինեն այնպիսին, որին կարելի է տրամաբանորեն հանգել մի պարզ հարցից՝ ի՞նչ է նշանակում որակի ապահովման հուսալի համակարգ ունենալ: Նման բաց մոտեցումը հուսով ենք, որ կծառայի ճկունության, ստեղծագործական մոտեցման, բազմակարծության զարգացմանը և ընդհանուր առմամբ ԲՈՒՀ-ի ինքնուրույնության ամրապնդմանը:

- Աուդիտի համակարգը կարող է ավելի տնտեսող լինել, ինչը իր հերթին ավելի շատ ռեսուրսներ կթողնի այլ կարգի գնահատումների համար:

- ԲՈՒՀ-ի որակի համակարգի և նրա կողմից կազմված փաստաթղթերի վրա կենտրոնացող ազգային աուդիտը կարող է նպաստել զարգացմանը: Սկզբունքորեն, աուդիտը օգտագործելու է ԲՈՒՀ-ի կողմից օգտագործված գնահատման տվյալների նույն ամբողջությունը, բայց «ստուգելով» այդ տվյալները և ԲՈՒՀ-ի սեփական գնահատումը համեմատելով այլ աղբյուրներից ու ստուգումների ընթացքում անցկացված հարցազրույցներից ստացված տեղեկատվության հետ: Առանձին դասընթացները աուդիտին կարող են հետաքրքրել միայն եթե գնահատման ընդհանուր ցուցանիշները վկայում են

որակի անկման մասին: Այդ դեպքում կարող է կարիք առաջանալ ուսումնական առարկաների / ծրագրերի ավելի մանրակրկիտ ուսումնասիրության:

- Կարևոր է նկատի առնել արդեն ձևավորված, զարգացմանը նպաստող գնահատման ավանդույթը: Աուդիտի «բաց» համակարգը, հաշվետվողականություն ապահովելուց բացի, կարող է համարվել ըստ էության նաև զարգացմանը նպաստող գործընթաց: Լինելով ավելի տնտեսող քան պարբերական գնահատումների համակարգը, այն կարող է նաև ավելի շատ միջոցներ տնտեսել այլ տիպի գնահատումների անցկացման համար:

Աղբյուր: Levy, 2005.

Հետևելով մենեջմենթի այն սկզբունքին, որ «կառուցվածքը պայմանավորված է նպատակով», կարելի է որակի արտաքին ապահովման համակարգի տեսակի ընտրությունը կապել նրա հիմնական նպատակի սահմանման հետ: Միաժամանակ հասկանալի է, որ ցանկացած համակարգ առավելապես կհամապատասխանի այս կամ այն նպատակին: Որակի արտաքին ապահովման երեք հիմնական նպատակների և վերը քննարկված որակի ապահովման համակարգերի հիմնական տարբերակների միջև եղած կապերը ներկայացված են *Աղյուսակ 4*-ում:

Աղյուսակ 4. Որակի արտաքին ապահովման համակարգերում կիրառվող հիմնական տարբերակների դասակարգումը

Նպատակը	Որակի վերահսկում	հաշվետվողականություն / հանրային երաշխավորում	Բարելավում / ուղղորդում
Նախընտրելի մեխանիզմ	Լիցենզավորում	Հավատարմագրում / գնահատում	Որակի աուդիտ
Որակի շրջանակ	Չափորոշիչների վրա հիմնված մոտեցում	Համապատասխանություն նպատակին և նպատակի համապատասխանություն	Համապատասխանություն նպատակին
Ընթացակարգեր	Հիմնականում արտաքին գնահատում	Եվ արտաքին, և ներքին գնահատում	Հիմնականում ինքնագնահատում
Բնույթը	Պարտադիր	Պարտադիր կամ կամավոր	Կամավոր

Վարժություն 5

Ո՞րն է կամ որը պետք է լինի որակի արտաքին ապահովման ամենակարևոր նպատակը ձեր երկրի համար Ըստ ձեզ որո՞նք են որակի ապահովման նախընտրելի մեխանիզմը(ները), շրջանակը և համակարգի բնույթը

3. Որակի արտաքին ապահովման համակարգերի գործունեության շրջանակը

Որակի արտաքին ապահովման հիմնական տարբերակների երրորդ համախումբը վերաբերում է դրա *գործունեության շրջանակին*: Այն կարող է առընչվել բարձրագույն կրթության ողջ համակարգի կամ միայն դրա որոշ հատվածների հետ (համալսարանական և/կամ ոչ համալսարանական ոլորտ), պետական և/կամ մասնավոր բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ, և այլն:

Պետական ԲՈՒՀ-եր և /կամ մասնավոր բարձրագույն կրթություն

Սկզբում անհրաժեշտ է որոշել, թե արդյո՞ք որակի արտաքին ապահովումը գործ է ունենալու միաժամանակ և պետական, և մասնավոր ԲՈՒՀ-երի հետ: Որոշ դեպքերում, դա իրավական և քաղաքական ընտրության հարց է: Շատ համակարգերում պետական հաստատությունները ֆինանսավորվում են հիմնականում պետության կողմից և հետևաբար կարող են ավելի բարձր որակ ապահովել քան մասնավորները Ավելին, պետական ԲՈՒՀ-երը, հատկապես համալսարանները, հաճախ ճնշման հզոր ուժ են և կարող են ընդդիմանալ իրենց սեփական ոլորտում որակի արտաքին ապահովման մեխանիզմի ստեղծմանը: Այս պատճառով, որոշ երկրներում որակի արտաքին ապահովման համակարգերը ստեղծվել են հատկապես բարձրագույն կրթության մասնավոր ոլորտի համար:

Մի շարք երկրներում կառավարությունները և քաղաքացիները իրենց պետական ԲՈՒՀ-երից ակնկալում են, որ նրանք ցույց տան պետական միջոցների օգտագործման արդյունավետությունը՝ այդպիսով դառնալով որակի արտաքին ապահովման առաջնային թիրախ:

Եվ վերջապես, որոշ երկրներ թե պետական և թե մասնավոր ԲՈՒՀ-երից ակնկալում են նպաստել ազգային քաղաքականության նպատակների իրականացմանը (օրինակ մարդկային ռեսուրսների զարգացմանը, սոցիալական համերաշխությանը և գիտական ու մշակութային զարգացմանը): Հետևաբար, երկրի որակի ապահովման համակարգը պետք է

ստուգի, թե արդյոք ԲՈՒՀ-երը անհրաժեշտ չափով համապատասխանում են այդ նպատակներին:

Ի հավելումն, հեռանկարում պետությունները կարող են որոշել իրենց երկրի բարձրագույն կրթության շուկա մտնելու իրավունք տալ արտասահմանյան տրամադրողներին: Սպասարկման Ոլորտում Առևտրի Ընդհանուր Համաձայնագրի (ՍՈԱԸՀ) ընթացիկ բանակցությունների շրջանակում, առաջիկայում կարող է որոշում ընդունվել պետական ԲՈՒՀ-երի հետ համեմատելիս մասնավոր տրամադրողների հանդեպ ցուցաբերել «առանց նախապատվության» վերաբերմունք: Դա կնշանակի, որ այդ դեպքում պետական և մասնավոր կրթություն տրամադրողների գործունեության նկատմամբ հիմնական պահանջները, բացառությամբ հասարակական ֆինանսավորման տրամադրումից, կլինեն նույնը: Դա կվերաբերի նաև որակի արտաքին ապահովման ընթացակարգերին և չափորոշիչներին:

Երդիր 8. Մասնավոր բարձրագույն կրթություն տրամադրողների նկատմամբ որակի վերահսկման պարտադրանքի քաղաքականությունը Հարավային Աֆրիկայում

1996թ. Հարավային Աֆրիկայի Հանրապետության սահմանադրությունը, ինչպես նաև այլ օրենսդրական նախագծեր, ամրագրեցին Հարավային Աֆրիկայի քաղաքացիների իրավունքները և ազատությունները մի շարք ոլորտներում: Տարբեր լիազոր մարմիններ ստեղծվեցին այդ իրավունքները գործադրելու համար: Մասնավոր ծառայությունների տրամադրման աճը, ներառյալ բարձրագույն կրթության միջազգային տրամադրողների մուտքը, պետք է դիտարկել որպես քաղաքացիների իրավունքների և հնարավորությունների ընդլայնման աստիճանական գործընթացի մի մասը:

Սահմանադրության 2-րդ Գլուխում մանրամասն սահմանում է կրթության ոլորտում դրա մասնավոր իրականացման իրավունքը.

29 (3). Յուրաքանչյուրը ոք իրավունք ունի իր սեփական միջոցներով հիմնադրելու և աշխատացնելու անկախ ուսումնական հաստատություններ, պայմանով որ դրանք՝

- չդրսևորեն ռասայական խտրականություն,
- գրանցված լինեն պետության կողմից,
- ապահովեն չափորոշիչներ, որոնք պետք է համարժեք պետական

ուսումնական հաստատությունների չափորոշիչներից ցածր չլինեն» (Republic of South Africa, 1996բ.)

Վերոնշյալից ակնհայտ է, որ պարզորոշ սահմանվել են սահմանադրորեն պաշտպանված մասնավոր կրթության տրամադրման գոյության հիմքերը, բայց նաև հիմքեր են ստեղծվել նման կրթության կանոնակարգման, որակի ապահովման և չափորոշիչների պահպանման համար: Սահմանադրությունը ճանաչում է մասնավոր կրթություն տրամադրողների իրավունքը՝ գոյակցել (նույնիսկ մրցակցել) պետական ուսումնական հաստատությունների հետ, բայց կարգավորող հսկողություն պահանջող պայմանով, որպեսզի երաշխավորի, որ հավասարություն հաստատելու նպատակը իրականացված է և որ չափանիշների ապահովումը վտանգված չէ: Երկրի քաղաքացիների և քաղաքացիություն չունեցողների համար ընդլայնվել է բարձրագույն կրթության ընտրության ազատությունը և հնարավորությունները, բայց նրանց պաշտպանելով վատորակ կրթություն ստանալուց, ինչը ամրագրված է պետական ԲՈՒՀ-երի չափորոշիչներին համարժեք լինելու պահանջում: Այս վերջին պահանջները հիմք են ստեղծում որակի ապահովման ընդհանուր համակարգի զարգացման համար, որի շրջանակներում պետական և մասնավոր բարձրագույն կրթության միջև համեմատության հնարավորություն կստեղծվի:

Աղբյուր. Naidoo and Singh, 2005.

Համալսարանական և ոչ համալսարանական ոլորտի հաստատություններ

Որակի արտաքին ապահովման մեխանիզմը կարող է վերաբերել բարձրագույն կրթության համալսարանական և / կամ ոչ համալսարանական ոլորտներին. Ավելի հաճախ, որակի արտաքին ապահովումը ընդգրկում է համալսարանական որոլտը, քանի որ անցյալում դա բարձրագույն կրթության ակադեմիական ինքնավարության առավելագույն աստիճան ունեցող հատվածն էր, մասնավորապես ուսումնական ծրագրերի մշակման առումով:

Քանի որ ոչ համալսարանական բարձրագույն կրթության հաստատությունները, ինչպես օրինակ պոլիտեխնիկական, ինստիտուտները կամ համայնքային քոլեջները վերջ երս են հիմնադրվել, դրանք հաճախ դրվել են պետական մարմնի անմիջական վերահսկողության տակ: Այդ պետական մարմինն էլ հիմնականում պատասխանատու է նոր ուսումնական ծրագրերի ստեղծման և վերահսկման համար:

Սակայն, որոշ երկրներում որակի արտաքին ապահովման մեխանիզմները ուղղված են և համալսարանական և ոչ համալսարանական

ոլորտների հաստատություններին: Բայց այս դեպքում հարց է ծագում, թե արդյոք նույն մեթոդաբանությունը և չափորոշիչների համախումբը կարելի՞ է կիրառել այս երկու տեսակի հաստատությունների համար էլ. Շատ համալսարաններ պահանջում են առավել ակադեմիական մոտեցում. դրանով իսկ նրանց դասավանդումը պետք է ուժեղ տեսական և գիտահետազոտական հիմքեր ունենա: Սա բնավ պարտադիր չէ բարձրագույն կրթության մյուս հաստատությունների համար, որոնք հաճախ կիրառական բնույթ են կրում և պետք է առաջարկեն աշխատանքին միտված ուսուցում, որը փոխանցում է գործնական կարողություններ: ԱՄՆ-ի որոշ տարածաշրջանային հավատարմագրման գործակալություններ ունեն հատուկ հանձնաժողով, որը հավատարմագրում է համալսարանները և մեկ այլ հանձնաժողով, որը որոշումներ է կայացնում համայնքային քոլեջների վերաբերյալ (տես *Ներդիր 9*-ը):

Ներդիր 9. ԱՄՆ հավատարմագրման համակարգի ճկունությունը

Տարածաշրջանային հավատարմագրման գործակալությունները փորձել են պահպանել չափորոշիչների և կանոնների ընդհանուր մի համախումբ, միաժամանակ նաև ընդունելով հաստատության տեսակի և առաքելության միջև եղած կարևոր տարբերությունները: Այդ լարվածությունը առ այժմ լիովին հաղթահարված չէ: Խնդիրն այն է, թե արդյոք ակնկալիքները և պահանջները կարող են միատեսակ լինել հաստատությունների տեսակների տարբերության պայմաններում, և արդյո՞ք բոլոր հաստատությունները պետք է տրամադրեն նույն փաստաթղթերն ու տվյալները: Դա վերաբերում է հատկապես տարածաշրջանային հավատարմագրմանը, որի դեպքում գնահատվում է ողջ հաստատությունը: Նույնիսկ երբ ընդունվում է, որ հաստատությունների միջև էական տարբերություններ կան, չլուծված են մնում շատ խնդիրներ՝ ի՞նչ տարբերություններ կան և որքա՞ն կարող են լինել դրանք, դրանցից որքանը պետք է համապատասխանեցվեն և որքա՞ն տարբեր կարող են լինել ակնկալիքները:

Պատասխանները տարբեր են: Որոշ հավատարմագրող գործակալություններ ստեղծել են առանձին միավորներ տարբեր տեսակի ԲՈՒՀ-երի համար: Օրինակ, Դպրոցների և Քոլեջների Արևմտյան Ասոցիացիան (WASC) ունի մեկ հավատարմագրող հանձնաժողով դիտարկելու համայնքային քոլեջները և մեկ այլ հանձնաժողով ուսումնասիրելու բակալավրի կամ ավելի բարձր որակավորում շնորհող քոլեջները և համալսարանները: Այս երկու առանձին հանձնաժողովները սահմանում են իրենց առանձին չափորոշիչները և յուրաքանչյուր տեսակի հաստատության համար ուսումնասիրություն անցկացնում: Որոշ հարցերում նրանք նման են, բայց շատ առումներով էլ տարբեր են:

ՄՈԴՈՒԼ 1 - Որակի արտաքին ապահովման
համակարգերի հիմնական տարբերակների ընտրությունը

Հավատարմագրման ընթացակարգերը նաև այլ կարգավորումներ են անում՝ հաշվի առնելու հաստատությունների առաքելության տարբերությունները, յուրաքանչյուր հաստատության թույլ տալով դիտարկվել հենց իր կողմից ընտրված առաքելության հիման վրա: Այս տեսանկյունից, երաժշտական դպրոցը դիտարկվում է ճարտարագիտական դպրոցից տարբերվող հիմունքներով Այս մոտեցմամբ հանդերձ, հավատարմագրող գործակալությունը դեռ ուսումնասիրում է, թե արդյոք սահմանված է պարզ և հասկանալի ձևակերպած առաքելություն, թե արդյոք ապացույց կա, որ այդ առաքելությունը իրականացվում է և արդյոք հաստատությունն ունի անհրաժեշտ ռեսուրսներ իրականացնելու այդ առաքելությունը մոտ ապագայում՝ Այս մոտեցումը, որը ուժեղ պաշտպաններ ուներ 1970-ականներին, դեռևս հանդիպում է տարածաշրջանային հավատարմագրման որոշ գործակալությունների պրակտիկայիում:

Հավատարմագրման գնահատման ընթացակարգերի որոշ հիմնարար մոտեցումներ գործունեության ճկունության հնարավորություն են տալիս: Օրինակ, ներկա հավատարմագրման գործընթացը շարունակում է դիտարկել հաստատության և ուժեղ, և թույլ կողմերը: Նման գործունեությունը ճկուն մոտեցման հնարավորություն է տալիս, որովհետև նույնիսկ փաստերը արձանագրելուց հետո փաստերի գնահատման հարցում քննարկման հնարավորություն կա՝ Երբ որոշ բնագավառները թույլ են, ուժեղ և թույլ կողմերը հավասարակշռող փաստերի և զեկույցների կազմակերպման ավանդույթը ծառայում է մեղմելու բացասական տեղեկատվության ազդեցությունը, քանի որ դրանք գործում են որպես հավասարակշռման գործոններ:

Կա մեկ այլ մոտեցում ևս, որով ոչ մեծ կարգավորումներ են արվում ինստիտուցիոնալ տարբերությունների հարցում: Այս մոտեցմանը հավատարմագրող գործակալությունները կիրառում են չափորոշիչների և չափանիշների մի համախումբ, բայց հավատարմագրման վերանայման գործընթացում, հնարավորության սահմաններում ոչ մեծ կարգավորումներ են անում ընդգծելու ինստիտուցիոնալ տարբերությունները: Օրինակ, հավատարմագրման գնահատող թիմը կարող է կազմվել նմանատիպ հաստատությունների դասավանդողներից: Ոչ մեծ, համեմատաբար նոր քոլեջը գնահատելու ուղարկված թիմը չպետք է կազմված լինի ամենախոշոր, ամենահեղինակավոր համալսարանի դասավանդողներից, այլ ակնկալվում է, որ այցելող թիմը կազմված է նմանատիպ հաստատություններ ներկայացնող անձանցից: Արդյունքում, յուրաքանչյուր հաստատության վերաբերյալ դատողություններն արվում են հաշվի առնելով, թե ինչ կարելի է ակնկալել նրանից իր չափերից և ունեցած ռեսուրսներից ելնելով:

Աղբյուր: El-Khawas, 2001: 49-51.

ՍՈՂՈՒԼ 1 - Որակի արտաքին ապահովման
համակարգերի հիմնական տարբերակների ընտրությունը

Ինստիտուցիոնալ և / կամ ծրագրային որակի արտաքին ապահովում

Մեկ այլ հիմնական հարց, որին բոլոր որակի արտաքին ապահովման համակարգերը պետք է անդրադառնան դա *վերլուծության միավորն* է, այսինքն, արդյո՞ք որակի արտաքին ապահովումը պետք է լինի ինստիտուցիոնալ, թե ծրագրային:

Ինստիտուցիոնալ որակի արտաքին ապահովումը բնականաբար ավելի ընդգրկուն է քան ծրագրային որակի արտաքին ապահովումը: Ըստ Փիս Լեննի (Peace Lenn) (2004), այն ավելի հաճախ կենտրոնանում է վերլուծության հետևյալ բնագավառների վրա;

- առաքելություն,
- ղեկավարում,
- գործառնական կառավարում,
- ակադեմիական ծրագրեր,
- դասավանդող աշխատակազմ,
- ուսումնառության ռեսուրսներ,
- ուսանողներ և համապատասխան ծառայություններ,
- ֆիզիկական հարմարություններ,
- ֆինանսական ռեսուրսներ:

Ինստիտուցիոնալ որակի արտքին ապահովումը հետազոտում է, թե արդյոք ԲՈՒՀ-ի առաքելությունը և նպատակները համապատասխան են: Այն նաև հաշվի է առնում, թե արդյոք եղած ռեսուրսները և գործընթացները հարմար են դրանց հասնելու համար («համապատասխանություն նպատակին» մոտեցման ներքո) կամ արդյոք որոշակի չափորոշիչներ արդեն ձեռք են բերված: Ինստիտուցիոնալ որակի արտաքին ապահովումը ԲՈՒՀ-ը դիտարկում է որպես ամբողջական համակարգ, որի մի մասն են կազմում ակադեմիական ծրագրերը: Հետևաբար որակի ապահովումը պետք է համապատասխանաբար ընդհանուր լինի և միայն ինչ որ չափով հաշվի առնի ԲՈՒՀ-ի տարբեր միավորների նպատակների և կատարողականի միջև եղած տարբերությունները: Ինտիտուցիոնալ որակի արտաքին ապահովումը կարող է նախընտրելի տարբերակ լինել այն համակարգում, որտեղ որակը ըստ ԲՈՒՀ-երի խիստ տատանվում է և որտեղ ԲՈՒՀ-ի կառավարումը բավական թույլ է: Նման դեպքում այն կարող է ԲՈՒՀ-ի կառավարման կարողությունը ուժեղացնելու զորեղ միջոց լինել:

Ծրագրային որակի արտաքին ապահովումը կենտրոնանում է առան-

ձին ուսումնական ծրագրերի վրա, որոնցից շատերը ուսանողներին պատրաստում են որոշակի մասնագիտության համար. Յուրաքանչյուր ուսումնական ծրագիր կարող է ունենալ ուսանողների հավաքագրման իր սեփական քաղաքականությունը, չափորոշիչներն ու առարկայական ծրագրերը և բացի դա, ենթակա լինել ազգային որակավորման շրջանակի բխող պահանջներին: Հետևաբար, իմաստ ունի կիրառել առանձին ծրագրերի որակի ապահովում: Մասնավորապես ծրագրային որակի արտաքին ապահովումը կարող է գնահատել, թե արդյոք տվյալ կրթական ծրագիրը համապատասխան է տվյալ մասնագիտության մասնագիտական պահանջներին:

Բացի այդ, ԲՈՒՀ-երը կարող են առաջարկել տարբեր որակ ունեցող ծրագրեր տարաբնույթ մասնագիտությունների գծով, որոնք չեն կարող ճանաչվել ինստիտուցիոնալ որակի արտաքին ապահովման կողմից: Հետևաբար ծրագրային որակի արտաքին ապահովումը ուժեղ գործիք է կարգավորելու անբավարար որակի հետ կապված խնդիրները բաժանմունքի մակարդակում, որտեղ կայացվում են որակի բարելավման որոշումները

Սակայն, ծրագրային որակի արտաքին ապահովումը պետք է նաև ուղղված լինի ավելի ընդհանուր, ԲՈՒՀ-ի միջավայրի հետ կապված խնդիրներին: Դա կարող է ներառել ԲՈՒՀ-ի կառավարման, բաժանմունքի և ԲՈՒՀ-ի հարմարությունների ուղիղ ազդեցությունը (արգելակող կամ խթանող) ուսումնական ծրագրի որակի վրա: Հետևաբար ծրագրերի որակի արտաքին ապահովումը նույնպես պետք է ինստիտուցիոնալ ուղղվածություն ունենա·

Երկրների մեծ մասը կենտրոնանում են ծրագրերի որակի ապահովման վրա: Այն օգտակար տեղեկատվություն է տրամադրում շահառուներին, ովքեր ըստ էության պետք է որոշում կայացնեն հիմնվելով ստացված կրթական որակավորման ենթադրվող որակի վրա: Ավելին, ծրագրերի որակի ապահովումը հիմնականում ավելի հեշտ է ԲՈՒՀ բերել, քանի որ այն ընդգրկում է քիչ մարդկանց և գործողությունները սահմանափակված են առանձին ծրագրով: Բացի դա, որակի բարելավման միջոցները սովորաբար ավելի էժան են և այսպիսով ավելի հեշտ են իրականացվում. Միևնույն ժամանակ, որոշ երկրներ ինստիտուցիոնալ հավատարմագրման իրենց երկարատև փորձով (օրինակ ԱՄՆ) վիճարկում են, որ ծրագրի որակի հետ կապված խնդիրներից շատերը իրականում գտնվում են հաստատության մակարդակում: Բացի այդ, ավելի հեշտ է սպասարկել քանակով համեմատաբար քիչ ԲՈՒՀ-եր, քան գնահատել մեծ թվով ծրագրեր:

Որակի արտաքին ապահովման այս երկու տեսակներն էլ այսպիսով իրար փոխկապված են: Ինստիտուցիոնալ որակի արտաքին ապահովումը չի կարող իրականացվել առանց ծրագրերը հաշվի առնելու, իսկ ծրագրերի որակի արտաքին ապահովումը պետք է ուսումնասիրի հաստատության ընդհանուր միջավայրը:

Երկրները սովորաբար սկսում են կենտրոնանալ կամ ԲՈՒՀ-ի, կամ

դրա ծրագրերի վրա, ընդունելով սակայն, որ ի վերջո երկուսն էլ փոխկապակցված են և մեկը մյուսին լրացնում են: Շատ համակարգեր, որոնք անցյալում պարզորոշ կենտրոնանում էին միայն մի մոտեցման վրա, որոշել են ընդգրկել նաև մյուսը: Որոշ երկրներ երկուսն էլ կիրառում են և փորձում դրանք միացնել մի ընդհանուր գործընթացում: Որակի արտաքին ապահովման որոշ համակարգերում, ինչպես օրինակ ԱՄՆ հավատարմագրման համակարգն է, երկու մոտեցումներն էլ իրականացվում են տարբեր դերակատարների կողմից: Միաժամանակ փորձեր են արվում որակի արտաքին ապահովման ինստիտուցիոնալ և ծրագրային մոտեցումները համակարգել այնպես, որ նրանք կարողանան լրացնել մեկը մյուսին:

Բոլոր ծրագրերը կամ միայն որոշակի ծրագրեր (օրինակ՝ միայն պետականորեն հաստատվածները)

Երբ որակի արտաքին ապահովումը ծրագրային է, այն կարող է հարմար տարբերակ լինել որոշ տեսակի ծրագրերի վրա կենտրոնանալու համար: Դա կարող է ներառել, օրինակ, ուսուցիչների կրթական ծրագրերը կամ այլ ծրագրեր, որոնք պատրաստում են երկրի համար կենսական նշանակություն ունեցող մասնագիտություններ: Արգենտինայում, օրինակ, CONEAU ազգային հավատարմագրման գործակալությունը հավատարմագրում է պետության հավանությունը ստացած ծրագրերը: Պատճառն այն է, որ չնայած ուսումնական ծրագրերը ստեղծելը և կառավարելը ավանդաբար ԲՈՒՀ-երի իրավասությունն է, ժամանակի ընթացքում պետությունը հասկացել է, որ մասնագիտական ուսումնական ծրագրերի ավելի խիստ կանոնակարգման կարիք կա:

Ներդիր 10 Պետության կողմից հաստատված ծրագրերի պարտադիր հավատարմագրման պահանջը Արգենտինայում

Բարձրագույն կրթության նախարարությունը (LHE) պահանջում է, որ պետության կողմից կանոնակարգվող դասընթացներ առաջարկելու համար դրանք պետք է հավատարմագրվեն CONEAU-ի կողմից, այլ կերպ ասած, եթե ԲՈՒՀ-ը ցանկանում է առաջարկել պետության կողմից կանոնակարգվող դասընթաց, ապա այն պետք է դիմի CONEAU-ին որպեսզի այդ գործակալությունը գնահատի առաջարկվող դասընթացը: Ինչպես ինստիտուցիոնալ հավատարմագրման դեպքում, CONEAU-ի գնահատման զեկույցը պարտադիր է: Միայն համապատասխան դրական որոշմամբ թույլատրված դասընթացները կարող են տալ պաշտոնապես ճանաչում ունեցող որակավորումներ: Պետականորեն չճանաչված դասընթացները կարիք չունեն անցնելու CONEAU-ի հավատար-

մագրումը, բավական է արդեն այն փաստը, որ նրանք լիազորվել են Նախարարության կողմից և պահպանում են ամեն մի կոնկրետ ծրագրի համար համապատասխան համաձայնություններով սահմանված ժամանակի նվազագույն պահանջները:

Ինչ որ չափով, պետականորեն կանոնակարգվող դասընթացների հավատարմագրման հարկադրական բնույթը աշխատում է հետադարձ ուժով՝ քանի որ այն դասընթացները որոնք արդեն գործում էին մինչ այս որոշումը, նույնպես պետք է դիմեն CONEAU-ին գնահատման և հավատարմագրման համար: Եթե այն չի բավարարում չափորոշիչներին և ստանում է անբարենպաստ զեկույց CONEAU-ից, Նախարարությունն իրավունք ունի որակազրկել տվյալ դասընթացը և չճանաչել նրա շնորհած որակավորումները:

CONEAU-ի կողմից իրականացվող պետականորեն կանոնակարգվող դասընթացների հավատարմագրման գործընթացները իրականացվում են ըստ Մշակույթի և Կրթության նախարարության կողմից սահմանված տեխնիկական-ակադեմիական չափորոշիչների և Համալսարանի Խորհրդի հետ նախապես խորհրդակցելով: Այդ գործընթացները հիմնականում միտված են ակադեմիական որակի գնահատմանը, ինչին պետք է համապատասխանի նաև ԲՈՒՀ-ի (ներքին) գնահատումը: Չնայած գնահատման նպատակները հիմնականում ակադեմիական են, դասընթացների գնահատման վերաբերյալ CONEAU-ի որոշումները պարտադիր են քանի որ Կրթության նախարարության պաշտոնական թույլտվությունը հիմնվում է դրանց վրա:

Բակալավրական դասընթացի հավատարմագրման գործընթացը անցնում է երկու փուլ՝ առաջին հերթին՝ ինքնագնահատման իրականացումը տվյալ մասնագիտության շրջանակներում, և երկրորդը՝ գործընկերների փորձագիտական կոմիտեի կողմից գնահատումը:

Յուրաքանչյուր ակադեմիական միավորի առանձնահատկություններից ելնելով, ինքնագնահատումը կարող է տևել մեկից չորս ամիս: Դրա ավարտից հետո հրապարակվում է ինքնագնահատման զեկույց, որը պետք է տրամադրի համակարգված և համեմատական տեղեկատվություն, ինչպես նաև դասընթացների իրականացման պայմանների մանրակրկիտ գնահատումն ու դրա արդյունքները: Այդ փաստաթուղթը կարող է նաև ներառել բարելավումների ծրագիր, որը ապագայում թույլ կտա այն համապատասխանեցնել նվազագույն չափորոշիչներին:

Այնուհետև, գործընկեր փորձագետների կոմիտեն վերլուծում է այդ ինքնագնահատման զեկույցը առընչվող այլ տեղեկատվության հետ միասին, այցելում է դասընթացների անցկացման վայրը և վերջնական որոշում կայացնում: Այն ներառում է կոմիտեի գնահատման կարծիքը և ժամանակավոր հավատարմագրման կամ դիմումի մերժման երաշխա-

վորություն:

Եվ ինքնագնահատման փուլը, և փորձագետների կոմիտեի գնահատման փուլը իրականացվում են ըստ յուրաքանչյուր նպատակի համար մշակված մեթոդաբանական որոշակի միջոցներով: Ինքնագնահատման ուղեցույցը մշակված է կազմակերպելու և համակարգելու ակադեմիական միավորի ինքնագնահատման առաջադրանքը: Փորձագետների ուղեցույցը ուրվագծում է գնահատման տրամաբանական հաջորդականությունը, ներկայացված ըստ բաժինների և բովանդակության, ինչը հնարավորություն է տալիս գնահատելու դասընթացի ներկա վիճակը, բակալավրական կրթության տեսանկյունից համեմատելու դրա բնորոշիչներն ու դասախոսական աշխատակազմի գործունեությունը, ինչպես նաև ստուգելու չափորոշիչներին համապատասխանությունը:

Աղբյուր: Villanueva, 2007.

Վարժություն 6

Ի՞նչը դուք կհամարեք որակի ապահովման համակարգի ցանկալի շրջանակ ձեր երկրում. Մասնավորապես, արդյո՞ք այն պետք է ընդգրկի բարձրագույն կրթության և պետական, և մասնավոր տրամադրումը մեկ միասնական համակարգում: Եթե այո, ապա ի՞նչ պատճառներով:

4. Եզրակացություններ

Վերը բերված քննարկումները ցույց տվեցին, որ հիմնական նմանություններով հանդերձ, որակի արտաքին ապահովման համակարգերը կարող են ներդրվել տարբեր ձևերով: Ներդրման տարբերակները չի կարելի դիտարկել առանց նկատի առնելու բարձրագույն կրթության համակարգի ազգային քաղաքականության համատեքստը, մասնավորապես դրա ավանդույթները և մշակույթը: Օրինակ, ընդունված է, որ որակի արտաքին ապահովման համակարգերը միտված են որակի ապահովման ընդհանուր համակարգի գոյություն ունեցող բացերը լրացնելուն և կենտրոնանում են որևէ այլ գործակալության կողմից չիրականացվող գործառույթների վրա: Դրանով են բացատրվում որակի արտաքին ապահովման համակարգերի համեմատական վերլուծության արդյունքում հայտնաբեր-

ված տարբերություններից շատերը:

Տարբերությունների մեկ ուրիշ աղբյուր են տարբեր երկրների ակադեմիական ավանդույթները և մշակույթը: Տրված համակարգի շրջանակներում մանրակրկիտ ընթացակարգերի կիրառումը պետք է համարել օրինաչափ: Սակայն, որն է օրինաչափ, կախված է կոնկրետ համատեքստից: Մասնավորապես, «ինստիտուցիոնալ ինքնավարության» տարբեր ընկալումները բերում են տարբեր մոտեցումների այն հարցում, թե ինչպես պետք է գործի որակի ապահովման հաջողված համակարգը:

Մյուս հիմնական եզրակացությունն այն է, որ որակի արտաքին ապահովման համակարգի ընդհանուր նպատակը պետք է հստակորեն որոշվի: Այնուհետ դրանով կորոշվի որակի արտաքին ապահովման նկատմամբ որդեգրվող կոնկրետ մոտեցումը, մասնավորապես, որակի արտաքին ապահովումը պետք է կենտրոնանա գնահատման, հավատարմագրման, թե աուդիտի վրա, պետք է լինի պարտադրված թե կամավոր, պետք է կիրառի չափորոշիչների վրա հիմնված, թե «համապատասխանություն նպատակին» մոտեցումը և ինչ յուրահատուկ շրջանակ այն պետք է ընդգրկի: Ամեն դեպքում, ժամանակի ընթացքում որակի արտաքին ապահովման գործակալությունները սովորաբար դառնում են բազմաֆունկցիոնալ համակարգեր և որդեգրում նոր դերակատարում, ինչպես օրինակ լիցենզավորում, ինստիտուցիոնալ աուդիտներ և ծրագրերի հավատարմագրում:

Գլոբալիզացիայի, միջազգային առևտրական համաձայնագրերի և մասնագետների ու ուսանողների աճող շարժունակության համատեքստում ազգային բարձրագույն կրթության համակարգերը դառնում են բազմազան՝ ընդգրկելով հեռավար ուսուցումը և մասնավոր բարձրագույն կրթությունը: Արդյունքում աճում է ստանդարտացման պահանջը՝ վկայագրերի դյուրընթեռնելիությունը և համարժեքությունը բարելավելու համար: Դա առաջ է բերել հավատարմագրման գործառույթ որդեգրել ցանկացող կամ այդ ուղղությամբ զարգացող որակի արտաքին ապահովման համակարգերի քանակական աճ: Ահա ինչու, ներկա դրությամբ, հավատարմագրումը դարձել է որակի արտաքին ապահովման ամենատարածված ձևը:

Յուրացված դասեր

Դաս 1 - Նոր համատեքստային գործոնները, ինչպես օրինակ բարձրագույն կրթության համակարգի բազմազանությունը և գլոբալիզացիան որակի ապահովումը պետական իշխանությունների համար դարձնում են կարևոր գործառույթ

Բարձրագույն կրթության համակարգերի ընդլայնումը, աճող բազմազանությունը և մասնավորեցման գործընթացները պահանջում են կանոնակարգման նոր միջոցների կիրառություն: Դրանցից մեկը որակի ապահովումն է: Որակի ապահովման համակարգերի զարգացումը բարձրագույն կրթության քաղաքականության հիմնական տենդենցներից մեկն է և ավելի է զարգանում որակի ապահովման տարածաշրջանային գործակալությունների ցանցերի միջոցով: Նման ցանցերը օգնում են գործակալություններին փորձի փոխանակում կատարել և «գործունեության կարգեր» մշակել:

Դաս 2 - Որակի արտաքին ապահովման համակարգերը պետք է համապատասխանեն արդեն գոյություն ունեցող որակի ապահովման մեխանիզմին

Որակի ապահովման նոր համակարգերը հիմնականում լրացնում են արդեն գոյություն ունեցող որակի ապահովման կառույցները: Արդեն գոյություն ունեցող որակի ապահովման մեխանիզմների ուժեղ և թույլ կողմերի վերլուծությունը պետք է նախորդի որակի արտաքին ապահովման համակարգի ներդրմանը, որը պետք է լրացնի գոյություն ունեցող բացերը և վերացնի եղած թերությունները: Հաճախ որակի արտաքին ապահովման համակարգերը նպատակաուղղված են ընդհանուր որակի ապահովման նոր համակարգի որոշակի թույլ կողմերի ամրապնդմանը: Նրանք կարող են նաև ստեղծվել որպես երկրի ԲՈՒՀ-ական համակարգի կանոնակարգման նոր միջոց:

Դաս 3 - Անհրաժեշտ է սահմանել որակի ապահովման նոր համակարգի հիմնական նպատակը և երաշխավորել այդ նպատակի և մշակվելիք մեթոդաբանության համապատասխանությունը

Որակի արտաքին ապահովման կառուցվածքը պետք է համապատասխանի ընդհանուր մոտեցմանը (հաշվետվողականություն կամ համապատասխանություն ի հակադրություն որակի բարելավման և համակարգի զարգացման): Երբ նպատակը որակի բարելավումն է, կամավորության մեթոդը ավելի լավ տարբերակ է, քան պարտադրանքի մեխանիզմը: Որակի արտաքին ապահովման համակարգը կգործի որպես բարձրագույն կրթության զարգացման միջոց միայն այն դեպքում, երբ ԲՈՒՀ-երը շահագրգռ-

ված են և հակված են փոփոխություններ կատարելու: Անհրաժեշտ է ուժեղ ակադեմիական մասնակցություն ապահովել, որպեսզի որակի արտաքին ապահովումը դառնա որակի բարելավման միջոց:

Սակայն, կարող է անհրաժեշտություն առաջանալ ստեղծելու նվազագույն չափորոշիչների վերահսկմանը կողմնորոշված որակի ապահովման համակարգ, եթե ակընհայտ է, որ համակարգում շատ են կրթության ցածր որակ տրամադրողները:

Դաս 4 - Որակի արտաքին ապահովման համակարգերը կարող են օգտագործել որակի գնահատում, որակի աուդիտ կամ հավատարմագրում, ինչպես նաև կիրառել դրանց համակցությունը

Համաձայն որակի արտաքին ապահովման համակարգի հիմնական նպատակների, պետք է նախ որոշվի, թե որակի ապահովումը կազմակերպվելու է որպես որակի գնահատում, որակի աուդիտ, թե հավատարմագրում: Անշուշտ որակի աուդիտը, որը կենտրոնանում է ներքին որակի ապահովման համակարգի վրա, դեպի զարգացում առավել կողմնորոշված մոտեցումն է: Հետևաբար, դա առավել հարմարն է այն երկրների համակարգերի համար, որոնց ԲՈՒՀ-երը և ծրագրերը համեմատաբար որակի միատեսակ մակարդակի են և արդեն ձևավորված են: Որակի գնահատումը նաև բարելավմանը միտված մոտեցում է, քանի որ այն սովորաբար գնահատում է ԲՈՒՀ-ի կամ ծրագրի ուժեղ և թույլ կողմերը առանց հակադրություն ստեղծելու: Հավատարմագրումը, որը պարտադրում է այն չափը, թե ինչն է ընդունելի և ինչը՝ ոչ, ավելի հարմար է որակի վերահսկման առումով: Սակայն, այն կարող է նաև ԲՈՒՀ-ին մղել հարմարվողականության:

Դաս 5 - Որակի արտաքին ապահովման համակարգի մշակումը պահանջում է ցանկալի որակի մոդելի ստեղծում

Բարձրագույն կրթության որակը ընդհանրական և բազմաչափ հասկացություն է: Յուրաքանչյուր որակի արտաքին ապահովման համակարգ պետք է մշակի որակի մոդել, որը այնուհետև գործի կդրվի չափորոշիչների սահմանման և գնահատման հստակ ուղեցույցների միջոցով: Դրանք, իսկապես, որոշիչ են որակի արտաքին ապահովման համակարգի արդյունավետության և թափանցիկության համար:

Որակի արտաքին ապահովման համակարգերը գնալով ավելի շատ միտվում են դեպի «չափորոշիչների վրա հիմնված» մոդելը: Ժամանակին չափորոշիչները վերաբերում էին մուտքային ցուցանիշներին: Սակայն, դրանք արդեն ընդգրկում են գործընթացների և ելքային արդյունքների ցուցանիշները: Ելքային ցուցանիշներով և արդյունքներով ուսանողի ուսումնառությունը գնահատելը չափազանց կարևոր է, բայց հեշտ չէ մեթոդաբանական առումով:

Դաս 6 - Միաժամանակ քանակական և որակական չափորոշիչներ կիրառող որակի ապահովման համակարգերի թիվն աճում է

Որակի ապահովման ցանկացած մոդել սովորաբար գործում է քանակական և որակական չափորոշիչների միջոցով: Եվ ինքնագնահատման, և գործընկերային գնահատման փուլերի համար այդ չափորոշիչները ԲՈՒՀ-երին և գնահատողներին տրամադրվում են գործնական ձեռնարկ-ուղեցույցների միջոցով: Որոշ դեպքերում ձեռնարկները բավական մանրամասն են, մյուս դեպքերում՝ ԲՈՒՀ-երը ավելի ազատ են իրականացնելու իրենց ինքնագնահատումը:

Չափորոշիչների վրա հիմնված մոդելները նույնպես տատանվում են, չափորոշիչներին համապատասխանության աստիճանի հարցում գնահատողների դիտողություններին վերապահված դերի չափով: ԲՈՒՀ-երին և գնահատողներին անհատական գնահատման համար ավելի շատ տեղ է տրվում առավել ձևավորված որակի արտաքին ապահովման համակարգերում, որոնք այլևս կարիք չունեն նորից ապացուցելու իրենց նպատակների հուսալիությունը և համբավը:

Դաս 7 - Ինստիտուցիոնալ կամ ծրագրային որակի արտաքին ապահովումը փոխկապակցված են

Բաժանումը ծրագրային և ինստիտուցիոնալ որակի արտաքին ապահովման միջև գոյություն ունի բոլոր համակարգերում: Որոշ համակարգեր կենտրոնանում են ծրագրերի որակի արտաքին ապահովման վրա, մինչ մյուսները կենտրոնանում են ինստիտուցիոնալ որակի ապաովման վրա: Ուրիշներն էլ կիրառում են այդ երկուսի համակցումը: Հավաարագրված ուսումնական ծրագրերի նվազագույն քանակը նախապայման է հաստատության հավատարմագրման համար: Որակի արտաքին ապահովման համակարգերը հակված են սկսելու սրանցից որևէ մեկից, բայց հաճախ որոշում են ավելացնել նաև մյուսը:

Գրականություն

Antony, S 2002 *External quality assurance in Indian higher education. Case study of the National Assessment and Accreditation Council (NAAC).* Paris IIEP-UNESCO

Arcelo, A A 2003 *In pursuit of continuing quality in higher education through accreditation. The Philippine experience.* Paris IIEP-UNESCO

Clark, B R 1983 *The higher education system* Berkeley University of California Press

Dill, D D 2003 *Public Policy for Academic Quality research program* University of North Carolina at Chapel Hill Available at www unc edu/ppaq

El-Khawas, E 2001 *Accreditation in the United States. Origins, developments and future prospects.* Paris IIEP-UNESCO

Harvey, L 1999 *Evaluating the evaluators* Opening keynote address of the Fifth Biennial Conference of the INQAAHE, Centre for Research into Quality, Santiago, Chile, May, 1999

Harvey, L 2001 (May) *The end of quality?* Keynote speech presented at the Sixth Quality In Higher Education Seminar, Birmingham, UK

Hendriks, B 2005 *Regional integration processes and their dynamics for external quality assurance: What can other regions learn from the Bologna Process?* Paper presented at the IIEP Policy Forum, Paris, France, 13-14 June, 2005

Kozma, T 2003 *Accreditation in the higher education system in Hungary A case study for international comparison* Paris: IIEP-UNESCO

Lemaître, M.J 2005 *Regional networks of quality assurance agencies: Towards a common framework of standards and procedures for quality assurance.* Paper presented at the IIEP Policy Forum, Paris, France, 13-14 June, 2005

Levasseur, M. 2005 *Using evaluation for joint planning and creating more transparency: France.* Paper presented at the IIEP Policy Forum, Paris, France, 13-14 June, 2005

Levasseur, M 2005 *Using evaluation for joint planning and creating more transparency: France* Paper presented at the IIEP Policy Forum, Paris, France, 13-14 June, 2005.

Levy, J.S 2005. *Strengthening internal management capacity for quality audit improvement: quality audit in Norway.* Paper presented at the IIEP Policy Forum, Paris, France, 13-14 June, 2005.

Naidoo, P., Singh, M 2005 *In the aftermath of liberalization. Designing a common*

framework for public and private providers to serve national development goals: South Africa Paper presented at the IIEP Policy Forum, Paris, France, 13-14 June, 2005.

Peace Lenn, M. 2004 *Strengthening World Bank support for quality assurance and accreditation in higher education in East Asia and the Pacific* Paper presented at the Second Global Forum on International Quality Assurance, Accreditation and the Recognition of Qualification in Higher Education, UNESCO, Paris, 28-29 June, 2004

Republic of South Africa 1996 *Government Gazette* No 17678, *378*(108) of 1996: Constitution of the Republic of South Africa, 1996: 13, Section 29 (3).

Revelo Revelo, J., Augusto Hernandez, C 2003. *The national accreditation system in Colombia. Experiences from the National Council of Accreditation (CAN).* Paris IIEP-UNESCO

Said, M E 2005 Discussion paper presented at the IIEP Policy Forum, Paris, France, 13-14 June 2005

State Statistics Bureau, China 2004 *Statistical bulletin of national education development in 2004.*

UNESCO 2006. *Education for All global monitoring report 2006: literacy for life* Paris. UNESCO

Villanueva, E. 2007 (forthcoming) "Transnational commercial provision of higher education. Argentina case". In: M Martin (Ed), *Cross-border higher education: regulation, quality assurance and impact*. Paris IIEP-UNESCO.

Vlăsceanu, L., Grünberg, L., Pârlea, D. 2004. *Quality assurance and accreditation: a glossary of basic terms and definitions.* Bucharest. UNESCO-CEPES. Available at: www.cepes ro/publications/Default.htm

World Bank. 2003. *Tertiary education in Colombia: paving the way for change.* Washington, DC World Bank.

Web resources

International Network for Quality Assurance Agencies in Higher Education (INQAAHE) web site: www.inqaahe org/

INQAAHE glossary: www.qualityresearchinternational com/glossary/

Observatory on Higher Education web site www.obhe.ac.uk

Observatory on Higher Education web site news and reports page. www obhe.ac uk/cgi-bin/news/article.pl?id=377

Մոդուլ 2

ՈՐԱԿԻ ԱՐՏԱՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱՆՑԿԱՑՈՒՄ

Մոդուլի նպատակները **78**

Խորհելու հարցեր **79**

Ներածություն **80**

Ընդհանուր առանցքային տարրեր **81**

1. Ինքնագնահատման հաշվետվության պատրաստում 82
2. Արտաքին փորձաքննություն 85
3. Որոշումների կայացում և արդյունքների զեկուցում 86

Որակի ապահովման գործընթացի կազմակերպման տարբերակներ **89**

1. Նախնական պայմանների սահմանում 89
2. Որակի ապահովման չափանիշների սահմանում 96
3. Ինքնագնահատում 99

4. Արտաքին փորձաքննություն 108

5. Գործակալության կողմից որոշման կայացում և զեկուցում 126

6. Որակի ապահովման արդյունքի հետևանքները 140

7. Իրագործում 144

Յուրացված դասեր **148**

Գրականություն **153**

Հապավումների ցանկ

ԱԱՄ	Ակադեմիական աուդիտի միավոր (Նոր Զելանդիա) (AAU, Academic Audit Unit (New Zealand))
ՀԽ	Հավատարմագրման խորհուրդ (Հնդկաստան) (AB, Accreditation Board (India))
ԱՔՈԱ	Անկախ քոլեջների և դպրոցների ասոցիացիա (ԱՄՆ) (AICS, Association of Independent Colleges and Schools (USA))
ՏԿՀՀԽ	Տեխնիկական կրթության համահնդկական խորհուրդ (AICTE, All India Council for Technical Education)
ԱՀՈԳ	Ավստրալիական համալսարանների որակի գործակալություն (AUQA, Australian Universities Quality Agency)
ԲԿԱՀԽ	Բարձրագույն կրթության ազգային հավատարմագրման խորհուրդ, Ինդոնեզիա (BAN-PT *Badan Akreditasi Nasional - Perguruan Tinggi* (National Accreditation Board for Higher Education, Indonesia)
ՔԿԳՀ	Քոլեջային կրթության գնահատման հանձնաժողով (Քվեբեկ, Կանադա) (CEEC, College Education Evaluation Commission (Quebec, Canada))
ԲԿԽ	Բարձրագույն կրթության խորհուրդ (Հարավային Աֆրիկա) (CHE, Council of Higher Education (South Africa))
ՀԱԽ	Հավատարմագրման ազգային խորհուրդ (Կոլումբիա) (CNA, National Council of Accreditation (Columbia))
ԲԿՈԱԵԱ	Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիա (ENQA, European Association for Quality Assurance in Higher Education)
ՀՀԿ	Հավատարմագրման հունգարական կոմիտե (HAC, Hungarian Accreditation Committee)
ԲԿ	Բարձրագույն կրթություն (HE, Higher education)

ԱԲԿՖԽ	Անգլիայի բարձրագույն կրթության ֆինանսավորման խորհուրդ (HEFCE, Higher Education Funding Council of England)
ԲԿՀ	Բարձրագույն կրթության հաստատություն (HEI, Higher education institution)
ԲԿՈԿ	Բարձրագույն կրթության որակի կոմիտե (Հարավային Աֆրիկա) (HEQC, Higher Education Quality Committee (South Africa))
ԳՀՀԽ	Գյուղատնտեսական հետազոտությունների հնդկական խորհուրդ (ICAR, Indian Council for Agricultural Research)
ԿՊՄԻ	Կրթության պլանավորման միջազգային ինստիտուտ (IIEP, International Institute for Educational Planning)
ԲԿՈԱԳՄՑ	Բարձրագույն կրթության որակի ապահովման գործակալությունների միջազգային ցանց (INQAAHE, International Network for Quality Assurance Agencies in Higher Education)
ԳՀԱԽ	Գնահատման և հավատարմագրման ազգային խորհուրդ (Հնդկաստան) (NAAC, National Assessment and Accreditation Council (India))
ՀԱԽ	Հավատարմագրման ազգային խորհուրդ (Հնդկաստան) (NBA, National Board of Accreditation (India))
ԿՇԱԽ	Կրթական շնորհների ազգային խորհուրդ (Իռլանդիա) (NCEA, National Council for Educational Awards (Ireland))
ՔՀՀԱՀ	Քոլեջների և համալսարանների հյուսիսային արևմտյան հանձնաժողով (ԱՄՆ) (NWCCU, North West Commission for Colleges and Universities (USA))
ՀԿՕԽ	Հետբուհական կրթության Օնտարիոայի խորհուրդ (Կանադա) (OCGS, Ontario Council for Graduate Studies (Canada))
ԴՔՀՀՖԱ	Դպրոցների, քոլեջների և համալսարանների հավատարմագրման Ֆիլիպինների ասոցիացիա (PAASCU, Philippine Accrediting Association of Schools, Colleges and Universities)
ՈԱ	Որակի ապահովում
ՈԱԱ	Որակի արտաքին ապահովում

ՈԱԳ	Որակի ապահովման գործակալություն
ՀԳՎ	Հետազոտության գնահատման վարժություն (ՄԹ) (RAE, Research Assessment Exercise (UK))
ՄԹ	Միացյալ Թագավորություն (UK, United Kingdom)
ԱՄՆ	Ամերիկային Միացյալ Նահանգներ (USA, United States of America)
ԱԿ	Այցելող կոմիտե (VC, Visiting Committee)

Ներդիրների ցանկ

Ներդիր 1. Որակի արտաքին ապահովման եռափուլ մոդելի ընդունումը Հնդկաստանում 87

Ներդիր 2. Սկզբնական պայմանների սահմանում (ԱՄՆ) 91

Ներդիր 3. ԲԿՀ-երի ուղորդում ինքնագնահատման գործընթացին նախապատրաստվելու նպատակով (Նոր Զելանդիա և Հնդկաստան) 102

Ներդիր 4. Փորձաքննողների ընտրություն (ԲԿՈԿ, Հարավային Աֆրիկա) 111

Ներդիր 5. Փորձաքննող թիմի ձևավորում (Իռլանդիա և Ֆիլիպիններ). 117

Ներդիր 6. Փորձաքննության անցկացումը (այցելություն տեղանք) (Հունգարիա, Ֆիլիպիններ) 121

Ներդիր 7. Հաշվետվության ռազմավարություն (Ավստրալիա) 123

Ներդիր 8. Որակի ապահովման արդյունքների զեկուցում (Միացյալ Թագավորություն) 128

Ներդիր 9. Որոշման կայացումը որակի ապահովման գործակալության կողմից (ԱՄՆ) 137

Ներդիր 10. Ֆինանսավորման կապը որակի ապահովման արդյունքների հետ (Հունգարիա և Միացյալ Թագավորություն 143

Ներդիր 11. Իրագործման մեխանիզմներ, որոնք ներառված չեն որակի ապահովման ընթացակարգի մեջ (Նորվեգիա) 144

Ներդիր 12. Իրագործման մեխանիզմներ, որոնք ներառված են որակի ապահովման ընթացակարգի մեջ (Ավստրալիա) 146

Մոդուլի նպատակները

Այս մոդուլը

- կնկարագրի տարբեր երկրների որակի ապահովման տարաբնույթ փորձառության գլխավոր տարրերը,
- կբացատրի դրանց ընդհանրությունները և տարբերությունները,
- իրական դեպքերի ուսումնասիրման միջոցով կլուսաբանի այն գործոնները, որոնք ազդում են տարբեր երկրներում որակի ապահովման գործընթացի կազմակերպական տարբերակների ընտրության վրա,
- կառանձնացնի որակի ապահովման տարբեր գործընթացների հետևանքները՝ ներկայացնելով օրինակներ տարբեր երկրների փորձից:

Այս մոդուլի ավարտին ակնկալվում է, որ դուք կկարողանաք՝

- գնահատել որակի ապահովման գործընթացի կազմակերպման զանազան տարբերակները,
- հասկանալ այն նկատառումները և համատեքստային գործոնները, որոն ազդում են տարբեր երկրների կողմից ընտրված տարբերակների վրա,
- վերլուծել որակի ապահովման գործընթացի զանազան տարբերակների հետևանքները ,
- կատարել ձեր ազգային համատեքստում և ընտրված նպատակին համարժեք արդյունավետ որակի ապահովման համակարգի ընտրություն:

Ավելին, ինքնագնահատման և արտաքին գործընկերային փորձաքննության համակցությունը որոշակիորեն երկարատև և ծախսատար գործընթաց է: Այնուամենայնիվ, այն միշտ պետք է լինի առնվազն միջնաժամկետ կամ երկարաժամկետ նպատակ:

Տարատեսակ փորձառությամբ և ընդհանուր առանցքային տարրերի համադրմամբ որակի ապահովման տարբերակների ձևավորումը նպաստում է որակի ապահովման վիճահարույց շատ հարցերում փորձարարությունների իրականացմանը: Որակի արտաքին ապահովման տարբերակներից մի քանիսի շուրջ ծավալվող բանավեճը և որոշ գործակալությունների կողմից կատարած ընտրությունների պատճառները մանրամասն կքննարկվեն այս մոդուլում:

Ակնհայտ է, որ տարբերակները ունեն տարբեր հետևանքներ: Այս մոդուլը կառանձնացնի որոշ հիմնական արդյունքներ և դրանց հետևանքները: «Գրականություն» հատվածում նշված ամբողջական դեպքերի ուսումնասիրություններն օգտակար կլինեն՝ այս քննարկումները խորացնելու, ինչպես նաև ձեր ազգային համատեքստում քննարկումներ անցկացնելու համար:

Որպես ամփոփում, տարբեր մոտեցումների և յուրացված դասերի վերլուծությունը էական է, եթե մենք գնահատելու ենք առկա որակի ապահովման զարգացումները:

Ընդհանուր առանցքային տարրեր

Որակի ապահովման գործակալությունները «որակի ապահովում» տերմինը օգտագործում են նշելու տարբեր գործառույթներ: Այս գործառույթներից յուրաքանչյուրը ծառայում է տարբեր նպատակների և որակի ապահովումը իրականացնում է տարբեր ուղիներով: *Մոդուլ 1-ը* ներկայացնում է սահմանումներից և մոտեցումներից մի քանիսը, որոնք սակայն հստակ տարանջատված չեն: Գործնականում, որակի ապահովման գործակալությունները կիրառում են հիմնական մոտեցումների որևէ համակցություն: Դրա պատճառը բազմազան գործոններն են, որոնցից հիմնականները որակի ապահովումը գործակալության ազգային համատեքստերին և նախանշված նպատակին համապատասխանեցնելն է:

Չնայած որակի ապահովման մոտեցումները տարբերվում են՝ գոյություն ունեն ընդհանրություններ էական տարրերի շուրջ: Ինչպիսին էլ լինեն դրանց հիմնական տարբերությունները, որակի ապահովման համակարգերի մեծամասնությունը ունեն որոշ ընդհանրություններ՝

- գնահատումը հիմնվում է կանխորոշված և թափանցիկ չափանիշների վրա,

- օգտագործվում է ինքնագնահատման և արտաքին փորձաքննության համակցություն: Ինքնագնահատման ներդրումը գնահատման մեջ կարող է տարբերվել: Մասնագիտացված և պրոֆեսիոնալ հավատարմագրողներից շատերը պահանջում են միայն տեղեկատվություն՝ առանց վերլուծության կամ ծրագրերի գնահատվող մասի վերաբերյալ գնահատող դատողությունների,
- կարևորվում է արդյունքների հանրային հրապարակումը (հրապարակման չափը կարող է տատանվել միայն վերջնական արդյունքի հարապարակումից մինչև գնահատման ամբողջական զեկույցի հրապարակայնությունը),
- գնահատման արդյունքի վավերականությունը սահմանվում է որոշակի ժամանակահատվածի համար:

Այս ընդհանրությունների շրջանակում որակի ապահովման գործակալությունները հետևում են եռափուլ գործընթացի: Առաջին փուլը բաղկացած է հաստատության (կամ ծրագրի) վերաբերյալ համապատասխան տեղեկատվության տրամադրումից՝ ձևավորված և հրապարակային չափանիշների վերաբերյալ: Շատ դեպքերում այն նաև ուղեկցվում է ինքնագնահատումով, որը տրամադրում է տեղեկատվության քննադատական վերլուծություն:

Երկրորդ փուլը արտաքին փորձաքննության խմբի այցելությունն է հաստատություն ինքնագնահատման կամ ինստիտուցիոնալ զեկույցի գնահատման նպատակով, որի արդյունքը զեկույց կամ երաշխավորությունն է որակի ապահովման գործակալությանը հաստատության/ծրագրի որակի վերաբերյալ:

Երրորդ փուլը գործակալության կողմից վերջնական որոշման կայացումն է փորձաքննող խմբի երաշխավորությունների, ցուցումների հիման վրա և արդյունքների հրապարակումը, որը վավեր է որոշակի ժամանակահատվածի համար: Վերջնական որոշումը կարող է հիմնվել արտաքին փորձաքննող խմբի երաշխավորության և ինքնագնահատման փորձաքննության կամ երկուսի համակցության, ինչպես նաև հաստատության կամ ծրագրին առնչվող այլ տեղեկատվության վրա, որին տիրապետում է որակի ապահովման գործակալությունը:

1. Ինքնագնահատման հաշվետվության պատրաստում

Մի շարք տերմիններ հաճախ վերաբերում են քիչ թե շատ նման տարրերի, ինչպիսիք են «ինքնահետազոտումը», «ինքնավերլուծությունը» և «ինքնագնահատումը»: Հետագա քննարկումներում հիմնականում կօգտագործվի «ինքնագնահատում» տերմինը: Ինքնագնահատումը որակի արտաքին ապահովման ընթացակարգերի հիմնաքարն է: Որակի ապահովման բոլոր գործակալություններն ընդգծում և ընդունում են այն իրա-

Մոդուլ 2

ՈՐԱԿԻ ԱՐՏԱՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱՆՑԿԱՑՈՒՄ

Ներածություն

Մոդուլ 1-ը ներկայացնում է որակի ապահովման նկատմամբ հիմնական մոտեցումները: Հիմնվելով այս քննարկումների վրա այս մոդուլը կներկայացնի որակի ապահովման գործակալությանը (ՈԱԳ) հասանելի մի շարք տարբերակներ: Լեզվական, քաղաքական, տնտեսական և մշակութային բազմազանությամբ բարդ ու բազմազան աշխարհում բարձրագույն կրթության համակարգերը և քաղաքականությունները ըստ երկրների տարբեր են: Հետևաբար որակի ապահովման պրակտիկաները նույնպես տարբեր են և հանդես են գալիս զանազան համակցությունների տեսքով՝ ծառայելով տարաբնույթ նպատակների:

Մասնավորապես, հիմնվելով ազգային համատեքստերի և այլ նկատառումների վրա, որակի ապահովման գործակալությունները ունեն միմյանցից տարբերվող քաղաքականություններ այնպիսի հարցերի կապակցությամբ, ինչպիսիք են սկզբնական պայմանների սահմանումը, որակի չափանիշների սահմանումը, ինքնագնահատումը և արտաքին փորձաքննությունը, որակի ապահովման վերաբերյալ վերապատրաստումները, որոշումների կայացումը և զեկուցումը գործակալության կողմից: Դեպքերի լուսաբանման միջոցով այս մոդուլը կներկայացնի տարբեր ուղիներ, որոնցով որակի ապահովման գործակալությունները լուծում են այս հարցերը:

Չնայած փորձառությունները տարբեր են, գոյություն ունի համաձայնություն էական տարրերի շուրջ: Սա երաշխավորում է որակի ապահովման հենքի ամրությունը: Որակի ապահովման փորձերի մեծամասնությունը կարևորում են երկու հանգամանք: Դրանք են ինքնագնահատումը, որը հիմնված է կանխորոշված չափանիշների խմբի վրա և արտաքին փորձաքննությունը, որը իրականացվում է փորձագետների խմբի կողմից: Չնայած երկուսի համակցումը ցանկալի է, բայց միշտ հնարավոր չէ իրականացնել, քանի որ հաճախ բարձրագույն կրթության համակարգը պարունակում է որակի ապահովման համար չափազանց շատ միավորներ:

Խորհելու հարցեր

Ի՞նչով է պայմանավորված որակի արտաքին ապահովման (ՈԱԱ) գործընթացի իրականացման այսպիսի բազմազանությունը:

Եթե տարբեր երկրների փորձառությունները ծառայում են «որակի ապահովման» ընդհանուր նպատակին, ապա ո՞րոնք են այն ընդհանուր տարրերը, որոնք միավորում են դրանց՝ անկախ տարբերություններից:

Ի՞նչ է տեղի ունենում որակի ապահովման գործընթացից հետո: Ո՞րոնք են որակի ապահովման որոշումների կամ արդյունքների հետևանքները:

Որակի ապահովման ի՞նչ տարբերակներ են կիրառվել կամ պետք է կիրառվեն իմ երկրում տեղական համատեքստի առանձնահատկություններին համապատասխանելու համար:

Ի՞նչպես են դրանք տարբերվում կամ պետք է տարբերվեն իրենց մոտեցումներում այս մոդուլում առանձնացված այլ տարբերակներից. Ի՞նչու:

կանացնողների կողմից վերլուծական ու ինքնաքննադատական մոտեցման կարևորությունը: Միաժամանակ, որակի ապահովման շատ գործակալություններ նաև ընդունում են, որ միշտ հնարավոր կամ իրատեսական չէ ակնկալել, որ բարձրագույն ուսումնական հաստատությունները կիրականացնեն այդպիսի ինքնագնահատում: Դրա համար գոյություն ունեն շատ պատճառներ՝

- «գնահատման մշակույթի» բացակայության պարագայում ինքնագնահատումը սովորաբար քննադատական չի լինում: Եթե նույնիսկ օգտակար է ինքնագնահատման զեկույց պահանջելը, գործակալությունները և արտաքին փորձաքննողները գիտեն, որ որոշ համակարգերում այն շատ սահմանափակ արժեք է ներկայացնում,
- երբ ռիսկը բարձր է լինում (օրինակ՝ երբ որակի ապահովման ընթացակարգերը կարող են հանգեցնել պատժամիջոցների, կամ հավանության արժանանալը էական է ծրագրի կամ հաստատության գործունեության շարունակականության համար), իրատեսական չէ հաստատությունից ակնկալել իսկապես քննադատական վերլուծության իրականացում,
- երբ գործակալությունները միջազգային գործունեություն են ծավալում, նրանք նախընտրում են գնահատման ինքնուրույն իրականացում՝ տրամադրված տվյալների հիման վրա:

Որակի ապահովման գործակալության կողմից որոշված չափորոշիչների և չափանիշների համախումբը կազմում են ինքանգնահատման հիմքը: Գործակալությունները սովորաբար համընդգրկուն խորհրդակցություններ են ունենում երաշխավորելու շահառուների լայն մասնակցություն չափորոշիչների և չափանիշների մշակման գործում: Այստեղ կարող են տարբերություններ լինել: Որոշ գործակալություններ, օրինակ, կարող են բոլոր հաստատությունների և ծրագրերի նկատմամբ կիրառել միայն կանխորոշված չափանիշներ (չափորոշիչների վրա հիմնված մոտեցում): Մյուսները կարող են համեմատություն անցկացնել հաստատության սեփական նպատակների հետ («համապատասխանություն նպատակին» մոտեցում), մինչդեռ մնացածը գտնվում են այդ երկուսի միջև: Բոլոր դեպքերում, որակի ապահովման շրջանակը՝ հաստատության սեփական նպատակներին և գործակալության կողմից սահմանված չափորոշիչներին հատկացված դերը շահառուների համար պարզաբանվում է նախքան որակի ապահովման ընթացակարգերի կիրառությունը: Այս գործընթացն անցնող հաստատությունից (կամ ծրագրից) պահանջվում է իրականացնել ինքնագնահատում և զեկուցել որակի ապահովման գործակալության կողմից առանձնացված չափորոշիչների համախմբին կամ չափանիշներին համապատասխանության մասին:

Ստորև ներկայացվող իրավիճակները կարող են դիտվել որպես ինքնագնահատման կարողության ձևավորման փուլեր.

Մոդուլ 2 - Որակի արտաքին ապահովման գործընթացի անցկացում

- առաջին մակարդակը չափորոշիչներից և չափանիշներից յուրաքանչյուրին առնչվող հիմնական տվյալների և տեղեկատվության տրամադրումն է,
- երկրորդ մակարդակը վերլուծությունը և գնահատումն է,
- երրորդ մակարդակը, ինչին անհրաժեշտ է հասնել, չափորոշիչներին կամ չափանիշներին համապատասխանության մակարդակի մասին զեկուցումն է:

Ինքնագնահատման քննադատական զեկույց (երրորդ մակարդակ) պատրաստելու կարողությունը հաստատություններում որակի ապահովման կարողությունների ձևավորման կարևոր փուլն է: Այնուամենայնիվ այն շատ հաստատությունների համար դժվարությունն է ստեղծում, քանի որ լավ ինքնագնահատում իրականացնելը բարդ է և ժամանակատար: Դրա համար հարկավոր է ստեղծել համապատասխան կարողություններ:

Ինքնագնահատման շրջանակում ամբիոնի/հաստատության պրոֆեսորադասախոսական անձնակազմը և վարչական աշխատակիցները քննարկում են իրենց ստորաբաժանումների ուժեղ և թույլ կողմերը, բացահայտում հնարավոր թույլ կողմերի պատճառները՝ հիմնվելով բաց հարցերի կամ հավաքված ցուցանիշների ամբողջության վրա: Նրանք սովորաբար որոշում են որակի բարելավման համար անհրաժեշտ ապագա ռազմավարությունները: Ինքնագնահատման հիմնական օգտակարությունը արհեստավարժ մասնագետների ուղղակի ներգրավումն է, ովքեր պատասխանատվություն են կրելու բարեփոխումների իրագործման համար: Երկարաժամկետում այն օգնում է ստեղծել որակի մշակույթ: Այն նաև կարող է ամրապնդել համայնքի ոգին, որը հաճախ բացակայում է ակադեմիական ոլորտում:

Չնայած միշտ ցանկալի է և որակի արտաքին ապահովման համակարգերը պետք է փորձեն ԲՈՒՀ-երում ստեղծել ինքնագնահատման կարողություններ, պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ ԲՈՒՀ-երի համար միշտ հնարավոր չէ իրականացնել բովանդակալից ինքնագնահատումներ: Դրա համար գոյություն ունեն բազմաթիվ պատճառներ՝ համապատասխան պայմանների բացակայությունից (ինչպիսիք են տեղեկատվական համակարգերը, մասնակցության մեխանիզմները կամ անձնակազմի մեծ քանակը) մինչև գնահատման մշակույթի պակասը: Այս պատճառով ինքնավերլուծությունը կարող է վերածվել պահանջվող որոշ հարցերի ոչ քննադատական նկարագրության: Նաև միշտ իրատեսական չէ ակնկալել քննադատական ինքնավերլուծություն, երբ առկա են բարձր ռիսկեր (օրինակ, երբ հաստատության գոյությունը կախված է որակի ապահովման արդյունքներից, կամ կարող են պատժամիջոցներ կիրառվել):

Ինքնագնահատման պահանջի հիմքում սակայն ընկած է այն ենթադրությունը, որ հաստատությունը վերլուծելով իր ուժեղ և թույլ կողմերը, ներուժն ու սահմանափակումները, հավանաբար ավելի հաջողակ կգտնվի

իր կրթական առաքելության իրագործման հարցում, քան այն հաստատությունը, որի մոտ բացակայում է այդպիսի ինքնահիրազեկվածությունը: Ինքնագնահատումը այսպիսով դիտվում է որպես որակի ապահովման գործընթացի առանցք: Ինքնագնահատման զեկույցի միջոցով է, որ արտաքին փորձաքննող խումբը փորձում է հասկանալ և գնահատել հաստատությունը կամ ծրագիրը նախքան այցելություն տեղանք:

2. Արտաքին փորձաքննություն

Արտաքին փորձաքննությունը հաջորդ հիմնական տարրն է, որը դարձել է որակի ապահովման միջազգայնորեն ընդունված բաղադրիչ: Որակի ապահովման գործընթացին մասնակից փորձագետը սովորաբար բնորոշվում է որպես «արտաքին փորձագետ»: Արտաքին փորձագետները տիրապետում են գնահատվող ծրագրի (հաստատության) տերմինաբանությանը, կատեգորիաներին, համամիտ են վարքագծի կամ մասնագիտության տրամաբանությանն ու կանոններին և հետևաբար գործընկերներ են համարվում այն մարդկանց համար, ում նրանք այցելում են: Միևնույն ժամանակ նրանք արտաքին են ծրագրի կամ հաստատության նկատմամբ և դրա համար ներկայացնում են արտաքին կարծիք, որը հարստացնում է իրենց սեփականը: Շատ գործակալություններ այս իմաստով օգտագործում են «արտաքին գործընկերներ», «գործընկերային փորձաքննություն» և «գործընկերային գնահատում» տերմինները: Այս մոդուլի հաջորդող քննարկումներում հիմնականում օգտագործվելու է «գործընկերային փորձաքննություն» տերմինը: Ներդիրներում տրված տեղեկատվության մեջ օգտագործված են որակի ապահովման գործակալությունների կողմից կիրառություն գտած տերմինները: Դուք կհանդիպեք դրանց շատ տարբերակների, ինչպիսիք են աուդիտորներ, գնահատողներ, գործընկերներ և այլն:

Երբ հաստատությունը ներկայացնում է ինքնագնահատման իր զեկույցը, որակի ապահովման գործակալության կողմից կազմված արտաքին փորձաքննողների խումբը վերլուծում է այն և հաստատում դրանում արված հայտարարությունները՝ սովորաբար այցելելով հաստատություն: Փորձաքննող խմբի այցելությունը հաստատություն հնարավորություն է տալիս քննարկելու և գտնելու ուղիներ ամրապնդելու ու բարելավելու ակադեմիական միջավայրը: Չնայած գործընկերային փորձաքննության արդյունավետությունը որակի ապահովման հարցում դեռ վիճահարույց է մի շարք երկրներում, ավելի լավ այլընտրանք որևէ որակի ապահովման գործակալության կողմից դեռևս չի առաջարկվել:

Ակնկալվում է, որ արտաքին փորձաքննությունը կտրամադրի արտաքին տեսակետ և հաճախ նաև ինքնավերլուծումից բխող եզրակացությունների հաստատում: Այն օգտագործում է մասնագիտական դատո-

ղություն՝ հիմնվելով տեղական ու միջազգային առարկայական ծրագրերի, փորձագետների և ոլորտի մասնագետների փորձառության վրա:

Արտաքին փորձաքննությունը տեղեկատվություն է հավաքում այցելությունների և ԲՈՒՀ-ի ներքին,երբեմն նաև արտաքին շահառուների հետ անհատական հարցազրույցների միջոցով: Հետևաբար այն հաշվի է առնում այն պայմանները, որոնց դեպքում կարելի է հասնել որոշակի արդյունքների և հնարավորություն է տալիս արտահայտել արտաքին տեսակետ:

3. Որոշումների կայացում և արդյունքների զեկուցում

Հաստատության կամ ծրագրի զեկույցի և փորձաքննող խմբի երաշխավորությունների հիման վրա գործակալությունը կայացնում է վերջնական որոշում: Այն կարող է նաև պարունակել երաշխավորություններ պետական կառավարման մարմնի (Կրթության նախարարություն) որոշման համար: Որակի ապահովման բոլոր մեխանիզմներում առկա է արդյունքների հանրային հրապարակման բաղադրիչ: Այնուամենայնիվ, հրապարակայնության չափը տարբեր է լինում՝ միայն վերջնական արդյունքի հրապարակումից, ինչպես տիպային հավատարմագրման դեպքում, մինչև գնահատման ամբողջական զեկույցի հրապարակում՝ ինչպես տիպային աուդիտի դեպքում: Սովորաբար այն համակարգերում, որտեղ զեկույցը միակ արդյունքն է, այն հրապարակվում է: Այն համակարգերում, որտեղ գոյություն ունի պաշտոնական որոշում հավատարմագրման կարգավիճակի և զեկույցի վերաբերյալ, հանրային իրազեկման չափը տատանվում է: Արդյունքի վավերականության ժամկետը սովորաբար հինգից տասը տարի է:

Որոշումների կայացումը կարող է կամ պարզապես հանգեցնել «այո» կամ «ոչ» պատասխանի կամ ներառել լրացուցիչ տարրեր: Հաճախ հավատարմագրումը նաև ներառում է գնահատման լրացուցիչ համակարգ, որը ավելանում է պարզ «այո կամ ոչ» որոշմանը: Ընդունված պրակտիկա է այնուհետև հրապարակել որոշումը՝ գործընկերային խմբի կողմից պատրաստված փորձագիտական զեկույցի հետ միասին կամ առանց դրա:

Երբ ԲՈՒՀ-երը չեն համաձայնում որակի ապահովման գործակալության վերջնական որոշման հետ, կարող են այն բողոքարկել: *Մոդուլ 3-ը* մանրամասն կքննարկի բողոքարկման մեխանիզմները:

Ներկայումս որակի ապահովման ոլորտի հանրության շրջանում գոյություն ունի ընդհանուր համաձայնություն եռափուլ մոդելի վերաբերյալ՝ որպես որակի արտաքին ապահովման հիմնական տարբերակի: Միաժամանակ այն ծավալուն և ծախսատար մոտեցում է: Երբ որակի ապահովումը կենտրոնանում է բարձրագույն կրթական ծրագրերի վրա համե-

մատաբար մեծ համակարգերում, մեծապես կարևորվում է որակի արտաքին ապահովման ավելի պարզ և քիչ ծախսատար այլընտրանքային մոդելների որոնումը: Այդպիսի այլընտրանքային մոդելները կարող են նվազեցնել շեշտադրումը փուլերից որևէ մեկի վրա՝ օրինակ ինքնավերլուծությունը կատարել առկա վիճակագրության վրա կամ անցկացնելով գործընկերային հեռավար փորձաքննություն: Կարելի է նաև պարզապես բաց թողնել փուլերից մեկը: Այս առումով, եթե որակի արտաքին ապահովման համակարգերից ակնկալվում է ընդգրկել որոշակի մեծության համակարգերում առկա բարձրագույն կրթության բոլոր ծրագրերը, ստեղծագործական մոտեցումը կարևորվում է:

Ներդիր 1. Որակի արտաքին ապահովման եռափուլ մոդելի ներդրումը Հնդկաստանում

Հնդկաստանում բարձրագույն կրթության ոլորտում որակի արտաքին ապահովման բացահայտ կարևորումը սկսվել է վերջերս:

Ուքսունական թվականներին զգացվում էր, որ Հնդկաստանում բարձրագույն կրթության աննախադեպ տարածումը նախորդող հիսուն տարիների ընթացքում ի հայտ բերեց կանոնակարգող ներքին մեխանիզմների անկատարությունը: Մասնավորապես, նշվում էր, որ երկիրն իրեն թույլ էր տվել նորաոճ ծրագրերով, չափորոշիչներից ցածր կարողություններով և արդյունքում չափորոշիչների թուլացմամբ բարձրագույն կրթական հաստատությունների աննախադեպ աճ: Որակի վատթարացման խնդիրների լուծման համար Կրթության վերաբերյալ ազգային քաղաքականությունը (1986թ.) երաշխավորեց հավատարմագրման ազգային անկախ մարմնի հիմնումը: Արդյունքում 1994թ. սեպտեմբերին Համալսարանական դրամաշնորհների հանձնաժողովը (ՀԴՀ) հիմնադրեց Գնահատման և հավատարմագրման ազգային խորհուրդը (ԳՀԱԽ)՝ որպես անկախ մարմին:

Չնայած Հնդկաստանն ունի որակի ապահովման ընդամենը տասը տարվա փորձ, սակայն այն պետք է դիտարկել Հնդկաստանի վերջին 150 տարիների ընթացքում ունեցած բարձրագույն կրթության համակարգի որակի հսկողության համակարգի հետ համեմատության մեջ: Ներդրված կանոնակարգող և հավաստող մեխանիզմների շնորհիվ ազգային հավատարմագրման նպատակն է առաջնորդել բարձրագույն ուսումնական հաստատություններին դեպի որակյալ կրթության ներուժի առավելագույն օգտագործում՝ ի հակադրություն կարգավորիչ մեխանիզմների կողմից ապահովվող նվազագույն չափորոշիչների: Սա շատ առումներով Հնդկաստանի հավատարմագրման համակարգը դարձնում է յուրահատուկ:

Բարձրագույն կրթության որակի բարելավման համար մատչելի սահմանափակ ռեսուրսները և բարձրագույն կրթության համակարգի մեծու-

Մոդուլ 2 - Որակի արտաքին ապահովման գործընթացի անցկացում

թյունն ու բարդությունը այն մյուս գործոններն են, որոնք Հնդկաստանում հավատարմագրումը դարձնում են յուրահատուկ: Աշխարհում երրորդ խոշորագույն բարձրագույն կրթության համակարգում (322 բարձրագույն ուսումնական հաստատություն և ավելի քան 16 000 քոլեջ), որտեղ ծառայություններ են մատուցվում ավելի քան 9 մլն ուսանողների, որակի ապահովման ազգային մեխանիզմի մշակումը և գործընթացի գործարկումը ջանքեր է պահանջում:

Իր գործունեության սկզբից 1994թ. սեպտեմբերին, ԳՀԱԽ-ը առաջին երեք-չորս տարիները օգտագործել է զարգացնելու իր քաղաքականությունը, սկզբունքները և գործիքները: Տարբեր երկրների հավատարմագրման գործակալությունների փորձառության վերլուծությունը ցույց տվեց, որ որակի ապահովման համակարգերի մեծամասնությունն ունեն որոշակի ընդհանուր տարրեր՝ ինքնագնահատում և գործընկերային փորձաքննություն: Ուստի ԳՀԱԽ-ը որդեգրում է այս առանցքային տարրերը: Համատեքստային նկատառումներին անդրադառնալու նպատակով ԳՀԱԽ-ը հստակ մոտեցում է ցուցաբերել այնպիսի հարցերի կապակցությամբ, ինչպիսիք են իր դերը գնահատման գործում (ԳՀԱԽ-ը ուղղակի դերակատարում չունի գնահատման մեջ), գնահատման գործընթացի բնույթը (այն կամավոր գործընթաց է), գնահատման նպատակը (բարելավման նպատակ, ի տարբերություն հաշվետվողականության, որը հանդիպում է շատ երկրներում), գնահատման արդյունքների կապը ֆինանսավորման հետ (չի կապվում բազիսային ֆինանսավորման հետ), գնահատման միավորը (գնահատման միավորը հաստատությունն է), գնահատման զեկույցի հրապարակման մոտեցումը (գնահատման ամբողջական զեկույցը և ինստիտուցիոնալ վարկանիշը հրապարակվում են) և վավերականության ժամկետը (հինգ տարի):

ԳՀԱԽ-ի հիմնավորման փորձառությունը և մոտեցումը այս հարցերին կարող է շատ օգտակար լինել որակի ապահովման նոր ձևավորվող գործակալությունների համար:

Աղբյուր՝ Ստելա, (Stella), 2005

Վարժություն 1

Քննարկել որակի ապահովման եռափուլ մոդելի առավելությունները և թերությունները Ա՞րդյոք այն կիրառվում է, կամ կիրառելի կլինի՞ Ձեր երկրում բարձրագույն կրթական հաստատությունների և/կամ ծրագրերի որակի ապահովման համար Ինչու՞

Որակի ապահովման գործընթացի կազմակերպման տարբերակներ

Վերը քննարկված երեք հիմնական փուլերի շրջանակում գործակալությունները իրենց նպատակներին համարժեք ընտրում են որակի ապահովման գործընթացի կազմակերպման տարբեր ուղիներ: Ամենահիշարժան տարբերակներին կարելի է հանդիպել հետևյալ գործառույթներում՝

1. նախնական պայմանների սահմանում,
2. չափանիշների սահմանում,
3. ինքնագնահատում,
4. արտաքին փորձաքննություն,
5. գործակալության կողմից որոշման կայացում և զեկուցում,
6. արդյունքների հետևանքներ,
7. իրագործումներ:

Այս գործառույթների շրջանակում մի շարք տարբերակներ կքննարկվեն հետագա էջերում:

1. Նախնական պայմանների սահմանում

Որակի ապահովման գործակալությունների մեծամասնությունը հստակ սահմանում է իր գործունեության ոլորտը: Օրինակ՝ բարձրագույն կրթության հատվածում գործող որակի ապահովման գործակալությունը կդիտարկի միայն այն ծրագրերը, որոնց արդյունքում որակավորում է շնորհվում, կամ այն հաստատությունները, որոնք պաշտոնապես ճանաչված են որպես որակավորում շնորհող հաստատություններ: Այն չի դիտարկի միջնակարգ կրթության մակարդակում առաջարկվող ծրագրերը: Սահմանազատումը սակայն կարող է հստակ չլինել հետհանրակրթական, որակավորում չշնորհող ծրագրերի և դրանց տրամադրողների դեպքում: Օրինակ՝ գոյություն ունեն որակի ապահովման գործակալություններ, որոնք դիտարկում են նաև հետհանրակրթական կրթության դիպլոմները, ինչպես Հնդկաստանում ուսուցչական կրթության մասնագիտական խորհրդի դեպքում:

Ի հավելումն գործունեության ոլորտը սահմանող պայմանի, որակի ապահովման գործակալությունն ունի որակի ապահովման նպատակով հաստատությունների կամ ծրագրերի դիտարկման երկու տարբերակ: Այն կարող է առանց նախապայմանների դիտարկել ցանկացած հաստատություն/ծրագիր, որը գտնվում է իր պարտականությունների (կամ լիազորությունների) ներքո: Կամ այն կարող է դիտարկել միայն այն հաստատությունները կամ ծրագրերը, որոնք բավարարում են որոշակի նախնական պայմանների: Սա սերտորեն կապված է մեկ այլ տարբերակի՝ որակի ապահովման պարտադիր, թե կամավոր լինելու հանգամանքի հետ: Երկուսն էլ կապված են միմյանց հետ և ունեն հետևյալ հատկանիշները.

	Որակի ապահովման պարտադիր համակարգեր	Որակի ապահովման կամավոր համակարգեր
Բոլոր հաստատությունները/ծրագրերը	Շատ հազվադեպ, շատ թանկ	Հիմնականում կապված են բարելավման մոտեցման հետ
Հաստատությունների և ծրագրերի որոշակի խումբ	Հիմնականում կապված են հաստատությունների կամ ծրագրերի որոշակի խմբերի որակի հսկողության հետ	Հիմնականում կապված են որոշակի ռեսուրսներ օգտագործելու իրավունք ձեռք բերելու հետ

Կամավորության սկզբմունքով գործող համակարգերում գործում են երկու հիմնական տարբերակներ.

- Տարբերակ 1 - Որակի արտաքին ապահովման գործակալությունը սկզբնական պայմաններ չի սահմանում և որակի ապահովումը կիրառվում է բոլոր հաստատությունների կամ ծրագրերի համար, որոնք գտնվում են իր իրավասության ներքո,
- Տարբերակ 2 - Դիտարկվում են միայն որոշակի չափանիշների բավարարող հաստատությունները կամ ծրագրերը:

Դիտարկան համար ընտրության չափանիշները չպետք է դիտել որպես ընտրության խիստ մեխանիզմ որակի ապահովման գործակալությունների կողմից որոշ հաստատությունների հեռու պահելու համար: Սովորաբար դրանք նախատեսված են երաշխավորելու միայն այն հաստատությունների ու ծրագրերի դիմումը, որոնք ունեն որակի ապահովման պահանջների իրագործման լավ հնարավորություն: Դրանով հաստատությունները և ծրագրերը ապահովագրվում են ձախողումից և գործընթացի միջով անցնելու ծախսերից: ԱՄՆ-ում (որտեղ բարձրագույն ուսումնական հաստատությունները անդամակցում են տարածաշրջանային հավատարմագրման գործակալությունների) դիտարկման համար ընտրության պահանջները իրենցից ներկայացնում են չափորոշիչների լրացուցիչ խումբ, որին բոլոր անդամ հաստատությունները համաձայնել են բավարարել: Ընտրության չափանիշները կարող են տատանվել հաստատության գոյու-

թյան տեղողությունից մինչև ապացույցներն առ այն, որ բավարարում է չափորոշիչների այդ խմբին: ԱՄՆ-ի Քոլեջների և համալսարանների հյուսիսարևմտյան հանձնաժողովը (ՔՀՀԱՀ), օրինակ, հաստատություններին հավատարմագրում է՝ հիմնվելով ինը չափորոշիչների և համապատասխան քաղաքականությունների վրա: Այն սահմանել է նաև նախնական ընտրության 20 հիմնական պահանջներ, որոնք պետք է բավարարվեն հաստատության դիմումը գնահատելիս: Վերջիններս չպետք է շփոթել հավատարմագրման չափորոշիչների հետ: Նախնական ընտրության յուրաքանչյուր այդպիսի պահանջ չափորոշիչներից մեկի և/կամ քաղաքականության հետ կապված նախապայման կամ կատարողականության մակարդակ է:

Ներդիր 2. Նախնական պայմանների սահմանում (ԱՄՆ)

Հավատարմագրման համար թեկնածուների և հավատարմագրված բարձրագույն կրթության հաստատությունների ընտրության պահանջները

Քոլեջների և համալսարանների հյուսիսարևմտյան հանձնաժողովը դիմումներ է ընդունում այն հաստատություններից, որոնք՝

- գլխավորապես տրամադրում են բարձրագույն կրթություն,
- ունեն բարձրագույն կրթությանը առընչվող ընդհանուր առանձնահատկություններ,
- բավարարում են ընտրության պահանջներին:

Ընտրության յուրաքանչյուր պահանջ կատարողականության կամ նախապայմանի ակնկալվող մակարդակ է:

1. ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆ. Հաստատությունը լիազորված է համապատասխան կառավարական կազմակերպության, գործակալության կամ հսկող մարմնի կողմից գործելու և կոչումներ շնորհելու՝ ինչպես պահանջվում է օրենսդրությամբ կամ նահանգի կողմից, որտեղ այն գործում է:

2. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ. Հաստատության նպատակը հստակ սահմանված ու ընդունված է իր կառավարող խորհրդի (խորհուրդների) կողմից՝ իր օրինական լիազորության շրջանակում և համապատասխանում է բարձրագույն կրթության որակավորում շնորհող հաստատությանը: Հաստատության նպատակն է ծառայել իր ուսանողների

կրթական շահերին, իսկ նրա հիմնական ծրագրերը հանգեցնում են պաշտոնապես ընդունված որակավորումների շնորհման: Հաստատությունը իր ողջ կամ համարյա ողջ համախառն եկամուտը ուղղում է իր կրթական առաքելության և նպատակների իրագործմանը:

3. ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԷԹԻԿԱ. Հաստատությունը կանոնակարգվում և կառավարվում է հարգելով անհատին և առանց խտրականության դրսևորումների՝ միևնույն ժամանակ պատասխանելով իր հաճախորդների կրթական կարիքներին և օրինական պահանջներին, ինչպես սահմանված է իր կանոնադրությամբ ու հավատարմագրման կարգավիճակով:

4. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ. Հաստատությունն ունի գործող կառավարման խորհուրդ, որը պատասխանատու է հաստատության որակի, էթիկայի և տարբեր միավորից (ստորաբաժանումներից) յուրաքանչյուրի համար՝ հաստատության առաքելության իրագործումը երաշխավորելու նպատակով: Կառավարման խորհուրդը ունի առնվազն հինգ քվեարկող անդամ, որոնց մեծամասնությունը չունի պայմանագրային, աշխատանքային կամ անձնական ֆինանսական շահ հաստատությունում:

5. ԳԼԽԱՎՈՐ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ. Հաստատության գլխավոր գործադիր տնօրենը նշանակվում է կառավարման խորհուրդի կողմից և պատասխանատու է հաստատության համար: Բազմաթիվ ստորաբաժանումներ ունեցող հաստատությունների դեպքում կառավարման խորհուրդը իր գլխավոր գործադիր տնօրենին կարող է պատվիրակել առանձին գործող ստորաբաժանման գործադիր տնօրեն նշանակելու լիազորություն: Ոչ գլխավոր գործադիր տնօրենը, ոչ էլ գործադիր տնօրեններից որևէ մեկը չեն կարող լինել հաստատության կառավարման խորհրդի նախագահ:

.....

Ընտրության մյուս չափանիշները վերաբերում են հետևյալ ոլորտներին՝

ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ,

ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄ,

ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ,

ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄ,

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ,

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ,

ՈՒՍԱՆՈՂԻ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆ,

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ,

ՀԱՆՐԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ,

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ,

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ,

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԱՐԴՅՈՒՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ,

ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ,

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ,

ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԵՏ:

Աղբյուր: Քոլեջների և համալսարանների հյուսիսարևմտյան հանձնաժողովի ինտերնետային կայք:

Սկզբնական պայմանների սահմանման եղանակը նույնպես սերտորեն կապված է գործընթացի բնույթի պարտադիր կամ կամավոր լինելու հետ:

- Տարբերակ 1- Որակի պարտադիր ապահովման գործընթաց

Որոշ համակարգերում, որակի ապահովումը պարտադիր է, իսկ որակի ապահովման գործակալությունն ընդգրկում է իր իրավասության ներքո գտնվող բոլոր հաստատությունները կամ ծրագրերը առանց ընտրության որևէ չափանիշի կիրառման:[1] Այս տարբերակը առավելապես օգտագործվում է այն համակարգերում, որոնցում որակի ապահովման արդյունքը հանգեցնում է կոնկրետ որոշումների կայացմանը, ինչպես օրինակ, որոշակի ֆինանսական միջոցների հասանելիության, ԲՈՒՀ-ի կարգավիճակի շնորհման կամ կրթական ծրագիր իրականացնելու թույլտվության վերաբերյալ որոշումները:

Որակի ապահովումը կարող է տարբեր նպատակներ ունենալ: Ոմանց համար գերկշռող նպատակը որակի հսկողությունն է: Մյուսների համար դա որակի որոշակի չափանիշներին համապատասխանության վերաբեր-

[1]. Սա չի նշանակում, որ պարտադիր գործընթացները կիրառելի են համակարգի ներսում բոլոր հաստատությունների կամ ծրագրերի նկատմամբ, այլ միայն նրանց նկատմամբ, որոնք գտնվում են որակի ապահովման գործակալության իրավասության ներքո: Դրանք կարող են լինել միայն մասնավոր կամ միայն պետական հաստատություններ կամ յուրահատուկ «հանրային շահերի» առընչվող ծրագրեր, ինչպիս օրինակ բժշկական կամ մանկավարժական կրթությունը:

յալ հանրային վստահությունն է կամ հաստատությունների հաշվետվողականությանը: Ուրիշների համար հիմնական նպատակը համալսարանների ինքնաբարելավմանը օժանդակելն է: Մեծամասամբ որակի ապահովման նպատակը վերը նշված բոլորի համակցությունն է: Այնուամենայնիվ տարբեր երկրներում դրանցից յուրաքանչյուրի դերը տարբեր է՝ կախված բարձրագույն կրթության համակարգի առանձնահատկություններից և կառավարման տարբեր մարմինների կողմից պահանջվող հաշվետվողականության աստիճանից. Ընդհանրապես, երբ որակի ապահովումը հասկացվում է որպես որակի հսկողության մեխանիզմ և հետևաբար վերաբերում է նվազագույն չափորոշիչներին, այն պարտադրվում է հաստատությունների կամ ծրագրերի առնվազն այն խմբին, որն ունի որակի հսկողության կարիք:

Օրինակ, Միացյալ Թագավորությունում Անգլիայի բարձրագույն կրթության ֆինանսավորման խորհուրդն (ԱԲԿՖԽ) ունի ֆինանսավորվող ուսումնական ծրագրերի որակը երաշխավորելու մանդատ: ԱԲԿՖԽ-ը պայմանագիր է կնքում ՄԹ-ի Որակի ապահովման գործակալության (ՈԱԳ) հետ ԲՈՒՀ-երի ուսուցման ծրագրերի գնահատման նպատակով: Հետևաբար, կառավարությունից ֆինանսավորում ստանալու դեպքում բոլոր ծրագրերի համար որակի գնահատումը դառնում է պարտադիր :

Կանադայի Օնտարիոյի նահանգում համալսարանները կարող են հետբուհական ծրագրեր առաջարկել միայն դրանց գնահատման հիման վրա Հետբուհական ուսուցման Օնտարիոյի խորհուրդի (ՀՈՒՕԽ) կողմից տրված թույլտվությամբ: Չնայած ՀՈՒՕԽ-ն իր գործընթացը կոչում է կամավոր, սակայն կապը գործընթացի արդյունքի և պոտենցիալ պատժամիջոցի միջև գործընթացին հաղորդում է պարտադիր բնույթ· Իրականում ՀՈՒՕԽ-ի բոլոր անդամները համաձայնել են որևէ հետբուհական ծրագիր նախաձեռնելիս գնահատում անցնել:

- Տարբերակ 2: Որակի կամավոր ապահովման գործընթաց

Գոյություն ունեն համակարգեր, որոնցում հաստատությունների գործունեության որակի շեմային մակարդակը երաշխավորում են այլ պարտադիր մեխանիզմներ[2]: Հետևաբար որակի ապահովումը մնում է իսկապես կամավոր:

Մեծամասամբ որակի ապահովման այն գործակալությունները, որոնք հետապնդում են ավելին քան կանոնակարգող նպատակներ և գլխավորա-

---

[2] Դրանք սովորաբար որակի երաշխավորման տարբեր ձևեր են, որոնք կարող են գոյություն ունենալ որակի ապահովման համակարգին զուգահեռ:

պես ձգտում են ԲՈՒՀ-ի ինքնաբարելավմանը, ցուցաբերում են կամավոր մոտեցում որակի ապահովմանը: Ինքնաբարելավման ձգտումը ընդունում է «համապատասխանություն նպատակին» մոտեցումը, ըստ որի որակը հավասար է նպատակների իրագործման չափին: Սա նշանակում է, որ հաստատությունները գնահատվում են իրենց նպատակների և ոչ թե պարտադիր այլ նպատակների համեմատությամբ, որոնք սահմանվել են արտաքին մասնակիցների, ինչպես օրինակ կառավարության կողմից: Այս մոտեցումը երաշխավորում է, որ որակի ապահովումն իրականացվում է որպես բարելավման գործընթաց, իսկ ԲՈՒՀ-երը վտանգված չեն զգում: Այնուամենայնիվ, որակի ապահովման լավ արդյունքներ ունենալու խթանները և ԲՈՒՀ-երի անուղղակի օգուտները կապված շահառուների՝ իրենց որոշումների կայացման համար որակի ապահովման արդյունքներից օգտվելու հետ, ճնշում են ԲՈՒՀ-երին անցնելու որակի ապահովման գործընթաց: Սա կարող է քվազի-պարտադիր լինելու հանգամանք ստեղծել: Օրինակ՝ որակի ապահովման լավ արդյունքը կհանգեցնի ավելի բարձր հեղինակություն, հասարակական ավելի լավ ճանաչում, լավ ուսանողներ և կոմպետենտ դասախոսներ ունենալուն:

ԱՄՆ-ում հավատարմագրման համակարգը վկայում է, թե որքան ազդեցիկ կարող է լինել կամավորության մեխանիզմը, եթե այն լավ իրագործվի: ԱՄՆ-ում դաշնային և նահանգային կառավարությունները մեծապես ապավինում են հավատարմագրման արդյունքներին ուսանողական կրթաթոշակների տեղաբաշխման հարցում: Դաշնային շատ հիմնադրամներ, ինչպես նաև նահանգային հիմնադրամներում գտնվող միլիարդավոր դոլարներ տեղաբաշխվում են հավատարմագրման կարգավիճակի հիման վրա: Մասնագետների նահանգային վկայագրումը մեծապես կախված է ուսանողների հավատարմագրված ծրագրեր ավարտելու հանգամանքից: Այս ամենը տեղի է ունենում չնայած այն հանգամանքի, որ հավատարմագրումը ունի «ոչ կառավարական, կամավոր ինքնակարգավորման» բնույթ:

Այլ երկրներում, որտեղ ԲՈՒՀ-երը սովորաբար «լավ» և համեմատաբար հավասար որակի են, առավել կարևորվում է որակի ապահովման բարելավման գործառույթը: Այնուամենայնիվ, գոյություն ունեն շատ համակարգեր, որտեղ որակի ապահովումն ինքնին կապված է հաշվետվողականության պահանջի հետ, նույնիսկ երբ որակի ապահովումը կամավոր է:

Որակի ապահովման համակարգերը կարող են նաև որդեգրել խառը մոտեցում: Այսպես, որոշակի ծրագրերի կամ հաստատությունների համար կարող է գոյություն ունենալ որակի պարտադիր, իսկ որակի կամավոր ապահովում՝ մյուսների համար: Սա սովորաբար տեղի է ունենում, երբ կարևոր են և հաշվետվողականությունը, և որակի բարելավումը: Գլխավոր

տարբերությունն այս դեպքերում սանկցիաների բացակայությունն է այն հաստատությունների կամ ծրագրերի հանդեպ, որոնք կամավոր են դիմում հավատարմագրման համար:

Կոլումբիայում գործող որակի ապահովման համակարգը ունի պարտադիր և կամավոր մեխանիզմներ տարբեր նպատակների համար: Որպես Կոլումբիայում բարձրագույն կրթության համակարգի բարեփոխումների մաս Հավատարմագրման ազգային խորհրդի (ՀԱԽ) հովանու ներքո ստեղծվել է Կոլումբիայի բարձրագույն ուսումնական հաստատությունների և ծրագրերի հավատարմագրման համակարգը: ՀԱԽ որակի ապահովման ոլորտում կատարում է երկու հիմնական գործառույթ: Առաջինը. իրականացնում է պարտադիր բնույթի որակի ապահովում «նախկին հավատարմագրություն» կոչվող մեխանիզմի միջոցով: Այս մեխանիզմի միջոցով ստուգվում են հանրային կարևորություն ունեցող որոշակի ոլորտների վերաբերող կրթական նվազագույն չափորոշիչները: Երկրորդ, այն ձեռնարկում է բուհական ծրագրերի և ԲՈՒՀ-երի կամավոր հավատարմագրման գործընթաց, որը կոչվում է «գերազանցության հավատարմագրում»: Սա ճանաչում է որակի բարձր մակարդակները չափորոշիչների վրա հիմնված մոտեցման միջոցով: Մանրամասների համար կարող եք կարդալ Կոլումբիայի հավատարմագրման համակարգի մասին դեպքի ուսումնասիրությունը, որը հրապարակվել է ԿՊՄԻ-ի կողմից (Ռևելո Ռևելո և Ավգուստո Հերնանդես (Revelo Revelo, Augusto Hernandez), 2003):

Կամավոր համակարգերում ԲՈՒՀ-երն են որոշելում, թե արդյոք ունեն հավատարմագրման հասնելու ներուժ: Հրապարակված չափանիշները դառնում են այսպիսով հավատարմագրման դիտարկման համար նախնական պայմանների ուղղակի պահանջներ: Հաստատությունը, որը ցանկանում է կամավոր անցնել գնահատում, կարող է դիմում ուղարկել որակի ապահովման գործակալություն՝ ներկայացնելով մանրամասներ նախնական պայմանների մասին: Գնահատմանն անհրաժեշտ նախնական պայմանները ստուգելուց հետո, երբ որակի արտաքին ապահովման գործակալությունը հաստատում է հավատրմագրման դիմումը սկսվում է հավատարմագրման գործընթացը:

2. Որակի ապահովման չափանիշների սահմանում

Որակի ապահովման հաջորդ կարևոր փուլը որակի չափանիշի սահմանումն է: Սա էական փուլ է, որը կարելի է իրականացնել մի քանի ձևով՝

- Հիմնական քանակական ցուցանիշների խմբի սահմանում: Որոշ գործակալություններ օգտագործում են որակական ցուցանիշների, չափորոշիչների կամ օրինակելի ցուցանիշների մի խումբ,

որին պետք է բավարարեն ԲՈՒՀ-երը: Դրանք սովորաբար համապատասխանում են այն համակարգերին, որոնք համեմատաբար պարզ մոտեցման միջոցով ցանկանում են երաշխավորել համապատասխանությունը հիմնական պահանջներին: Այս չափորոշիչները կամ օրինակելի ցուցանիշները որպես կանոն որոշվում են կառավարության կողմից: Դրանք ծառայում են որպես հաստատության գործունեության կամ ֆինանսական միջոցների բաշխման հիմք: Այսպիսի ցուցանիշների օգտագործումը ապահովում է շեմային չափորոշիչներին համապատասխանության գնահատման օբյեկտիվ և համեմատաբար էժան հնարավորություն: Միաժամանակ, կառավարության կողմից սահմանված ցուցանիշները նաև միտում ունեն շեշտելու համապատասխանությունը պաշտոնական պահանջին՝ առանց այս ցուցանիշներում ներառված բոլոր էական տարրերի նկատմամբ ուշադրության: Ցուցանիշների բոլոր կողմերը հաշվի առնելու զարգացած և բարդ եղանակ է որոշակի օրինակելի ցուցանիշների ընտրությունը, որոնք այնուհետև համակարգի համար կծառայեն որպես չափորոշիչներ:

- Առավել տարածված մոտեցում է չափորոշիչների և որակական չափանիշների համակցությունը: Դրանք կարող են մշակվել գործակալության կողմից, բայց որպես կանոն ներառում են կարևոր շահառուների հետ խորհրդակցության որոշակի չափ: Դրանք երաշխավորում են առարկայական, մասնագիտական ծրագրերի կամ ինստիտուցիոնալ գործունեության չափորոշիչներին համապատասխանությունը: Միաժամանակ, անհրաժեշտ է հետևել, որպեսզի ծրագրերը և հաստատությունները չափազանց չմիատարրացվեն:

- Մեկ այլ մոտեցում է այնպիսի չափորոշիչների մշակումը, որոնք կիրառելի են հաստատության կամ ծրագրի նպատակների նկատմամբ: Որակի չափանիշները այս իմաստով կարող են գլխավորապես առնչվել «համապատասխանությանը նպատակին»: Միաժամանակ, շատ համակարգեր ուղղակի կարևորում են «նպատակի համապատասխանությունը»: Այն ներառում է որոշակի պայմաններ, որոնց հաստատությունների նպատակները պետք է բավարարեն որպես որակի չափորոշիչ ընդունվելու համար:

- Վերջապես, որոշ գործակալություններ հաստատությունները կամ ծրագրերը գնահատում են դրանց նպատակների և խնդիրների համեմատությամբ («համապատասխանություն նպատակին» մոտեցում): Այս մոտեցումը ԲՈՒՀ-երին թույլ է տալիս զարգանալ իրենց առաջնահերթություններին և սկզբունքներին համապատասխան: Սակայն, այն կարող է անբավարար գտնվել որակի երաշխավորման համար տարաբնույթ հաստատությունների կամ ծրագրերի առկայության դեպքում: Այս մոտեցումը կարող է

օգտակար լինել այնտեղ, որտեղ «համապատասխանությունը նպատակին» և «որակի նվազագույն շեմային մակարդակը» հստակ սահմանված են և երաշխավորվում են այլ մեխանիզմներով, որոնք համատեղ գործում են բարձրագույն կրթության համակարգում: Այսպիսի մեխանիզմների առկայությունը որակի ապահովման գործակալությանը հնարավորություն կտա կենտրոնանալու ԲՈՒՀ-երի կամ ծրագրերի կողմից սահմանված նպատակների իրագործման կատարողականի վրա:

Որակի ապահովման գործակալությունները պետք է որոշեն, թե չափանիշների այս տեսակներից որոնք են ամենահարմարը իրենց բարձրագույն կրթության համակարգի զարգացման մակարդակի համեմատ: Կայացած հաստատությունների նկատմամբ գերակշռող արտաքին բաղադրիչով սխեմայի կիրառումը կբշնամացնի նրանց և կմղի դիմադրության որակի ապահովման բոլոր ջանքերի դեմ: Միևնույն ժամանակ «համապատասխանություն նպատակին» մոտեցման կիրառությունը բազմաբնույթ և նոր հաստատությունների նկատմամբ չի հանգեցնի որևէ արդյունքի որակի հարցում և հավանաբար որևէ նպաստ չի ունենա համակարգում որակի բարելավման ուղղությամբ:

Մյուս կողմից գործակալությունները կարող են և սովորաբար միավորում են այս մոտեցումներն այնպես, որ առավելագույնս հարմարեցվի իրենց բարձրագույն կրթության համակարգի հաստատությունների առանձնահատկություններին: Կարևոր է, որ որակի ապահովման շրջանակը հաստատության նպատակներին հատկացված տեղի և որակի ապահովման գործակալության կողմից սահմանված չափորոշիչների դերի տեսակետից հստակեցվի շահառուների համար նախքան որակի ապահովման ընթացակարգերի կիրառումը:

Որոշ դեպքերում գործակալությունը պահանջում է հաստատությունից տրամադրել տեղեկատվություն յուրաքանչյուր չափորոշչի կամ չափանիշի վերաբերյալ: Այնուհետև գործակալությունը իրականացնում է իր սեփական գնահատումը: Սակայն շատ ցանկալի է, որ հաստատություններն իրենք իրականացնեն ինքնագնահատում պահանջվող տեղեկատվության շրջանակում և հաշվետվություն ներկայացնեն որակի ապահովման գործակալությունների կողմից սահմանված չափորոշիչների խմբի կամ չափանիշների բավարարման մասին:

Որակի ապահովման չափանիշը սահմանելիս գոյություն ունի տարբերակների ընտրության մեկ կողմ ևս: Խոսքը վերաբերում է այն շա-

հառուներին, որոնց որակի ապահովման համակարգը կարող է ընդգրկել որակի չափանիշների սահմանման գործընթացում: Այստեղ խորհուրդ է տրվում, որ համակարգը լինի առավել ընդգրկուն, քանի որ մեծ ընդգրկվածությունը նաև կմեծացնի չափանիշների կամ չափորոշիչների լեգիտիմությունը և ընդունումը տարբեր շահառուների կողմից: Պրոֆեսորադասախոսական կազմի, մասնագիտական և առարկայական ասոցիացիաների ներկայացուցիչների, գործատուների կամ այլ արտաքին շահառուների մասնակցությունը կարող է նշանակալի նպաստ բերել: Միաժամանակ, այն կարող է նաև ներգրավել կորպորատիվ հետաքրքրություններ, որոնք շատ քիչ են կապված որակի հետ:

3. Ինքնագնահատում

Գործակալությունը պետք է այնուհետև որոշի, թե ինչ դեր է հատկացնելու ինքնագնահատման գործընթացին: Ինչպես նշվել է վերևում, որակի ապահովման համակարգերի մեծամասնության նպատակը ԲՈՒՀ-երին օգնելն է իրականացնելու վերլուծական և քննադատական ինքնագնահատում: Դժբախտաբար այն միշտ հնարավոր չէ: Որակի ապահովման գործակալությունը պետք է իրատեսական լինի և հաշվի առնի իրական պայմանները համակարգի ներսում.

- Երբ բարձրագույն կրթության համակարգերը դառնում են բազմազան և նոր հաստատություններ են մուտք գործում համակարգ, սովորաբար անհրաժեշտ է լինում հաստատել որակի ապահովման մեխանիզմներ, որոնք սերտորեն կապված են որակի հսկողությանը: Այս մեխանիզմները կարող են ճշգրիտ և անաչառ ինքնագնահատումը դարձնել անիրատեսական, քանի որ հսկողության արդյունքում ԲՈՒՀ-երի համար ռիսկերը սովորաբար շատ բարձր են լինում: Հետևաբար թույլ կողմերի հստակ բացահայտումը և ընդունումը կարող են ԲՈՒՀ-երի կողմից ընդունվել որպես վտանգներ պարունակող: Այս պայմաններում, ինքնագնահատման հաշվետվությունը արդյուքում կլինի ուղղորդված կամ առնվազն ենթարկված կոսմետիկ խորը վերամշակման: Որակի ապահովման զգուշավոր գործակալությունը հաշվի կառնի այս հանգամանքը և ԲՈՒՀ-երից չի ակնկալի ավելին, քան լավ տեղեկատվության տրամադրումը որակի այն չափանիշների վերաբերյալ, որոնք գործակալությունը որոշել է կիրառել:
- Երբ ԲՈՒՀ-երն ու բարձրագույն կրթության համակարգերն անցել են զարգացման այս փուլը, հնարավոր է բարձրացնել սպասումները ԲՈՒՀ-երի ինքնագնահատման կարողություններից: Բոլոր դեպքերում սովորաբար մեծապես օգտակար է տրամադրել ճշգրիտ և հստակ ցուցում որակի մասին դատողությունների համար

անհրաժեշտ հիմնական տեղեկատվության վերաբերյալ և սահմանել կիրառվելիք չափանիշները:

- Բարձրագույն կրթության զարգացած համակարգերում, որտեղ «համապատասխանությունը նպատակին» մոդելն է կիրառվում, ԲՈՒՀ-երը ի վիճակի կլինեն իրականացնելու ինքնաքննադատական և վերլուծական ինքնագնահատումներ: Նրանք կկարողանան նաև մշակել բարելավման օգտակար ու արդյունավետ պլաններ:

Հաշվի առնելով այս տարբերակումները որակի ապահովման գործակալությունները պետք է աշխատեն ունենալով հստակ նպատակ և իրատեսական ակընկալիքներ: Մյուս կողմից դրանք պետք է օգնեն ԲՈՒՀ-երին դառնալու պատասխանատու իրենց աշխատանքի և հասարակությանը տրամադրվող կրթության որակի համար: Նոր ձևավորվող բարձրագույն կրթության համակարգերում ԲՈՒՀ-երը կարող են ունենալ ուղորդման կարիք որակի ապահովման գործակալության կողմից՝ բովանդակալից ինքնագնահատման հաշվետվություն պատրաստելու համար:

Բարձրագույն կրթության համակարգում որակի արտաքին ապահովման ներդրման սկզբնական փուլում ինքնագնահատման հաշվետվության պատրաստումը կարող է բավական խնդրահարույց լինել ԲՈՒՀ-երի համար (նույնիսկ «լավերի» համար), չնայած ժամանակի ընթացքում ԲՈՒՀ-երը կարող են ունենալ հաշվետվության համակարգեր այլ նպատակների համար: Խնդիրը կայանում է նրանում, որ այդ համակարգերը կարող են ամբողջովին տարբերվել ինքնագնահատման գործընթացի պահանջներից: Եթե ԲՈՒՀ-երին չօգնեն ձևավորելու ինքնագնահատման գործընթաց իրականացնելու սեփական կարողությունները, ապա հաշվետվությունները կարող են թերի լինել: Սովորաբար որակի ապահովման գործակալությունները տրամադրում են ուղեցույցներ ԲՈՒՀ-երին այս գործընթացում օժանդակելու նպատակով:

Միևնույն ժամանակ ըստ գործակալությունների գոյություն ունեն զգալի տարբերություններ ուղեցույցների ծավալների և բովանդակության հարցում:

- Տարբերակ 1 - Հակիրճ ուղեցույցների տրամադրում

Որակի ապահովման որոշ գործակալություններ տրամադրում են միայն հակիրճ ուղեցույցներ այն մասին, թե ինչպես պետք է անցկացվի ինքնագնահատման գործընթացը և ինչպես պետք է շարադրված լինի

ինքնագնահատման հաշվետվությունը: Սա մեծամասամբ հատուկ է այն համակարգերին, որտեղ լավ ձևավորված է որակի ներքին կամ արտաքին ապահովման ավանդույթը և որտեղ «ինստիտուցիոնալ խնդիրները և նպատակները» մեկնարկային կետերն են: Օրինակ այդպես է որոշ ինստիտուցիոնալ աուդիտների դեպքում: Այն որակի ապահովման գործակալության կողմից սահմանված ընդհանուր շրջանակում մեծ ճկունություն է տալիս ԲՈՒՀ-երին իրենց առաքելությանը և նպատակներին համապատասխան ներկայանալու համար:

- Տարբերակ 2 - Հատուկ շրջանակի տրամադրում

Երբ ԲՈՒՀ-երը պետք է հետևեն սահմանված առանձնահատուկ չափանիշների, որակի ապահովման գործակալությունների մեծամասնությունը տրամադրում է ավելի մանրամասն ուղեցույցներ և ձեռնարկներ: Դրանք կարող են ներառել հստակ պատասխաններ ակընկալող հարցերի ցանկ և աղյուսակներ, տվյալները որոշակի ձևով ներկայացնելու համար: Այսպիսի հատուկ շրջանակները կարող են քիչ թե շատ կենտրոնացած լինել քանակական տվյալների վրա: Այս մոտեցման լրացուցիչ առավելությունը հաստատությունների համար կայանում է նրանում, որ օգնում է նրանց զարգացնել սեփական տեղեկատվական համակարգերը: Դրանք կարող են օգտագործվել ոչ միայն ինքնագնահատմանը աջակցելու, այլև կառավարման և ինստիտուցիոնալ որոշումների կայացման նպատակով:

Որակի ապահովման գործակալությունների մեծամասնությունը ուղեցույցներ է տրամադրում այն մասին, թե ինչ է ակնկալվում ինքնագնահատման հաշվետվությունից՝ օգնելու ԲՈՒՀ-երին արժևորելու ինքնավերլուծության մոտեցումը: Այն փաստը, որ ինքնագնահատման հաշվետվությունը պարզապես ձեռքբերումների և հաստատության գործունեության վերաբերյալ տվյալների հավաքածու չէ, շեշտվում է որակի ապահովման բոլոր գործակալությունների կողմից: Նաև կարևորվում է, որ զեկույցը պետք է լինի վերլուծական, գնահատող և ինքնաքննադատական:

Հաստատության գործունեության վերաբերյալ հակիրճ կամ մանրամասն ուղեցույցները խթանում են մասնակցությունը և երաշխավորում ակադեմիական համայնքի լայն ներգրավվածությունը հաշվետվության պատրաստման գործում:

Ձեր համակարգի ԲՈՒՀ-երին ինքնագնահատմանը նախապատրաստելու ռազմավարության մշակման համար օգտակար կլինի որակի ապահովման գործակալությունների կողմից տրամադրվող ուղեցույցների բեռնավորումը դրանց ինտերնետային կայքերից և համեմատության անցկացումը: Ստորև ներկայացվում են երկու գործակալությունների կողմից տրամադրվող ուղեցույցներ: Գործակալություններից մեկը տրամադրում է միայն ընդհանուր ուղեցույցներ: Մյուսը մանրամասն թվարկում է տեղեկատվության տեսակները, որոնք պետք է ներկայացվեն հաշվետվությունում:

Ներդիր 3. ԲՈՒՀ-երի ուղղորդում ինքնագնահատման գործընթացին նախապատրաստվելու նպատակով (Նոր Զելանդիա և Հնդկաստան)

Հակիրճ ուղեցույցներ ԲՈՒՀ-երին. Նոր Զելանդիա

Աուդիտին ինստիտուցիոնալ համատեսքտը ներկայացնելու գլխավոր փաստաթուղթը պարունակում է՝

- հաստատության պատմությունը մեկ էջի սահմաններում և ներկայիս նկարագիրը,
- կառավարման և կազմակերպչական կառուցվածքի ընդհանուր նկարագիրը, ներառյալ կազմակերպության օրգանիգրաման (կամ համարժեքը),
- Աուդիտի շրջանակը ընդգրկող և հաստատության կանոնադրության, նկարագրի/նպատակների ու առանձնահատկությունների համատեքստում հաստատության որակի ապահովման սխեմաների ու համակարգերի համառոտ ներկայացում:

Հաստատությունները խրախուսվում են հնարավորինս շատ օգտագործել ամփոփակետեր, դիագրամներ և սխեմաներ հաշվետվության ծավալը կրճատելու և այն դյուրընթեռնելի դարձնելու համար:

Գլխավոր փաստաթուղթը կարող է պարունակել հավելվածներ, որոնք ընդգրկում են տվյալներ և փաստացի տեղեկատվություն, որը հասանելի չէ այլ նյութերում (օրինակ տարեկան հաշվետվություններում): Տեղեկատվությունը կարող է ներառել այնպիսի կետեր, ինչպիսիք են ընդունելության ժամանակ պահանջվող որակավորումները, չավարտողների քանակը, շրջանավարտների զբաղվածության և «շահառուի» բավարարվածության մասին տվյալներ, կատարողականի ցուցանիշներ, ինչպես նաև ցուցանիշներ, որոնք կապված են աուդիտի շրջանակի հետ: Հավելվածները կարող են ցույց տալ, թե ինչպես է այս տեղեկատվությունն օգտագործվում հաստատության ներսում որակի հսկողության և ապահովման գործընթացներում՝ ներկայացնելով հնարավոր օրինակներ: Դրանք կարող են նաև ներառել որակի ապահովման համակարգերի գործողության արդյունավետության և հատկապես հաջողված փորձի օրինակներ:

Աղբյուր: www.aau.ac.nz

ԳՀԱԿ-ի կողմից տրված մանրամասն ձևաչափեր. Հնդկաստան

Հավելված V - Ուսանողական աջակցություն և առաջընթաց

1.	Արտերկրից ուսանողներ կա՞ն	Այո ☐ Ոչ ☐
	Եթե այո, քանի՞սը	

2.		ա. Տվյալներ ուսանողների մասին (Տրամադրեք տեղեկատվություն հետևյալ ձևաչափով վերջին 5 տարիների համար)

Ուսանողների հաշվառում	Բ.			Մ			ՓՄ			Դոկտորանտուրա			Դիպլոմ / Վկայական			Ինքնաֆի-նանս.		
	Ա	Ի	Ը	Ա	Ի	Ը	Ա	Ի	Ը	Ա	Ի	Ը	Ա	Ի	Ը	Ա	Ի	Ը
Ուսանողների միջազգային դրոշակակիր ցանցում գրանցում																		
Ակ ՀԿ միջազգային ուսանողների վերաբերյալ																		
NRI միջազգային ուսանողների վերաբերյալ																		
Օտարերկրյա միջազգային ուսանողների վերաբերյալ																		

Ա – արական, Ի – իգական, Ը – ընդամենը

Բ - բակալավրիատ, Մ- մագիստրատուրա, ՓՄ – Փիլիսոփայության մասգիստրոս

բ Ինքնակամ հեռացածների տոկոսը բակալավրական և մագիստրական վերջին երկու խմբերի համար

3. Ուսանողական կրթաթոշակներ՝ (անցած տարի)

Քանակը	Գումարը

4	Հաստատությունը հավաքու՞մ է ուսանողների կարծիքը իրենց համալսարանական փորձառության վերաբերյալ	Այո ☐ Ոչ ☐

5. Գլխավոր մշակութային իրադարձությունները (անցյալ տարվա տվյալներ)

	Կազմակերպած			Մասնակցած		
	Այո	Ոչ	Քանակը	Այո	Ոչ	Քանակը
Միջքոլեջային						
Միջհամալսարանական						
Ազգային						
Այլ (նշել)						

6. Քննությունների արդյունքները (վերջին հինգ տարիներ)

	Բ					Մ					ՓՄ				
	1	2	3	4	5	1	2	3	4	5	1	2	3	4	5

Անցածների %-ը															
Առաջին կուրսերի քանակը															
Գերազանցներ ի քանակը															

7. Վերջին հինգ տարիների ընթացքում հետևյալները անցած ուսանողների քանակը՝

NET				
SLET				
CAT				
TOEFL				
GRE				
G-MAT				
IAS և այլն				
Բանակային ծառայության				
Այլ ծառայություններ				
Այլ (նշել)				

8.	Ուսանողների խորհրդատվության կենտրոն	Այո		Ոչ		Հիմնադր տարեթիվ	

9.	Բողոքների հասցեավորման		Այո		Ոչ		Հիմնադր. տարեթիվ	

	օղակ						
10.	Շրջանավարտների ասոցիացիա	Այո		Ոչ		Հիմնադիր տարեթիվ	
11.	Ծնող-դասախոսների ասոցիացիա	Այո		Ոչ		Հիմնադիր տարեթիվ	
12	Այլ (նշել)						

Ինքնավերլուծության (գնահատող հաշվետվության) վերաբերյալ ձեռնարկում տրված ուղեցույցներ՝

.

Ինքնավերլուծության հաշվետվությունը պետք է ներկայացնի հաստատության բովանդակալից ինքնագնահատում՝ շեշտադրելով հիմնական արժեքները. Այն կարող է բաժանվել հետևյալ երեք հատվածների՝

- Ընդհանուր ամփոփում,
- Չափանիշների կիրառմամբ գնահատման հաշվետվություն,
- Ստորաբաժանումների գնահատման հակիրճ հաշվետվություն:

Առաջին երկու հատվածները միասին չպետք է գերազանցեն 200 էջը. Ինստիտուցիոնալ տվյալների մեջ ընդգրկված քանակական տվյալները կարող են օգտագործվել միայն ցույց տալու փաստացի վիճակը. Հարցերին պատասխանները տրվում են նկարագրական ձևաչափով՝ հեշտացնելու գործընկերային խմբի կողմից գնահատումը: Չնայած որոշ հարցեր թողնում են «այո» կամ «ոչ» պատասխանների տպավորություն, հարցերին անհրաժեշտ է պատասխանել շարադրանքի տեսքով՝ ցույց տալով հաստատության ընդհանուր գործունեության ուժեղ/թույլ կողմերը, արդյունավետությունը, առկա հնարավորությունները և սպառնալիքները:

Աղբյուր www.naacindia.org

Որակի ապահովման գործակալությունները տարբերվում են նաև ըստ ԲՈՒՀ-երից պահանջվող տեղեկատվության: Կարող են պահանջվել և որակական, և քանակական տվյալներ: Ինքնագնահատման գործընթացում հիմնական շեշտը որակական վերլուծության վրա է: Հաստատություններից կարող են պահանջվել մի շարք քանակական տվյալներ,

ինչպիսիք են ընդունվողների, ինքնակամ հեռացածների քանակը, ուսման միջին տևողությունը և անձնակազմի քանակը:

Երբ որակի ապահովումը կապված է թույլտվության տրման կամ արդյունքների ճանաչման հետ, հնարավոր է կարևորվեն ինչպես քանակական տվյալները, այնպես էլ այդ տվյալների որակական վերլուծությունը՝ երաշխավորելու, որ ԲՈՒՀ-երի կամ ծրագրերի կողմից նվազագույն պահանջները կատարված են:

Որակի ապահովման որոշ գործակալություններ պահանջում են, որ ինքնագնահատման հաշվետվությունները հրապարակվեն: Դրանք ընդգծում են, որ ինքնագնահատման հաշվետվությունները բարձրագույն կրթության շահառուներին պետք է տրամադրեն արժեքավոր տեղեկատվություն հաստատությունների վերաբերյալ: Անշուշտ, հաստատությունները կարող են սովորել միմյանցից: Այն երկրները, որոնք պահպանում են ինքնագնահատման հաշվետվությունների գաղտնիությունը, փաստարկներ են բերում, որ կարող է նվազել ինքնաքննադատական և վերլուծական հաշվետվություններ ներկայացնելու հաստատությունների ցանկությունը, եթե դրանք հրապարակվեն: Ընտրությունը թերևս կախված է ազգային համատեքստից, որակի ապահովման նպատակից, ընթացակարգերի թափանցիկության ավանդույթից և հաստատությունների միջև մրցակցությունից:

Վերոնշյալ երկու տարբերակները՝ ԲՈՒՀ-երին հակիրճ ուղեցույցների կամ մանրամասն ուղեցույցների ու ձևաչափերի տրամադրումը, գերակշռող են: Միաժամանակ գոյություն ունեն նաև այլ տարբերակներ, երբ որակի արտաքին ապահովման գործակալությունը նաև օգնում է հաստատությանը կազմակերպելու ինքնավերլուծության գործընթացը այնպես, որ լավագույնս համապատասխանի իր զարգացման փուլին:

Վարժություն 2

Ուսումնասիրեք որակի ապահովման հետևյալ գործակալությունների ինտերնետային կայքերը և բացահայտեք ինքնավերլուծության այն ոլորտները որտեղ հաստատություններին տրված է ճկունություն

- Բարձրագույն կրթության միջին նահանգների հանձնաժողով, ԱՄՆ (www.msche.org)
- Քոլեջների և դպրոցների հյուսիսային կենտրոնական ասոցիացիա (NCA-HLC) (www.northcentralassociation.org/)

- Բարձրագույն ուսուցման հանձնաժողով, ԱՄՆ (www ncahigherlearningcommission org)

Ինքնավերլուծության կապումը որակի ներքին ապահովման համակարգերի հետ և հաստատության տարբեր բաղադրիչների ներգրավմամբ ընդհանուր գործընթացի կարևորումը հանդիպում են շատ մոտեցումներում: Ինչ մոտեցում էլ ընտրվի, ինքնագնահատման գործընթացում ակնկալվում է ընդգրկել լայն ոլորտներ: *Մոդուլ 4* կքննարկի այդ ոլորտները:

4. Արտաքին փորձաքննություն

ԲՈՒՀ-երի կամ ծրագրերի ինքնագնահատման հաշվետվությունների ավարտին, հաջորդում է արտաքին փորձաքննության կազմակերպումը՝ փորձաքննողների ընտրություն, նրանց հրահանգավորում և անհրաժեշտ վերապատրաստում:

Արտաքին փորձաքննողների դերը

Ինչպես ինքնագնահատման հաշվետվության դեպքում, կարևոր է, որ որակի ապահովման գործակալությունը որոշի, թե ինչ դեր է վերապահում արտաքին փորձաքննությանը.

- Որակի հսկողությունը կարևորող որակի ապահովման համակարգերում արտաքին փորձաքննությունները հետապնդում են գլխավորապես գնահատման նպատակներ: Փորձաքննողներից ակնկալվում է վերլուծել հաստատությունների տրամադրած տվյալները, ինչպես նաև այլ առնչվող տեղեկատվություն: Նրանց այցը պարտադիր կերպով ներառելու է հաստատության վիճակի իրական գնահատում և կարծիք այն մասին, թե ինչպես է հաստատությունը կատարում գործակալության պահանջները: Փորձաքննողները սովորաբար նշանակվում են գործակալության կողմից, հաստատության հետ խորհրդակցությունից հետո:
- Որակի ապահովման այն համակարգերում, որտեղ կարևորվում են հաշվետվողականությունը կամ որակի հանրային երաշխավորությունը, փորձաքննողները հաստատությունից ակնկալում են համեմատաբար ճշգրիտ հաշվետվություն, որի վրա հիմնվելու է իրենց աշխատանքը: Փորձաքննողների պարտականությունն է ոչ միայն ինքնագնահատման հաշվետվության հաստատումը, այլ նաև գործակալության չափանիշների կամ պահանջների կատարման վերաբերյալ որոշումների ընդունումը:

- Որակի ապահովման այն համակարգերում, որտեղ գլխավոր խնդիրը բարելավումն է, փորձաքննողները հավանաբար առավել ուշադրություն կդարձնեն ինքնագնահատման հաշվետվության հաստատմանը և հաստատության կամ ծրագրի կողմից ներկայացված բարելավման պլանի գնահատմանը:

Այս նկատառումները էական են, երբ որոշվում է թե ովքեր են լինելու արտաքին փորձաքննողները, ինչպես պետք է ընտրել և վերապատրաստել նրանց ու ինչ ուղեցույցներով ապահովել:

Փորձաքննող խմբի ձևավորումը

Որակի արտաքին ապահովման արդյունավետության հիմքում ընկած է գնահատման պարտականությունների կատարման համար անհրաժեշտ կարողությունների բացահայտումը և փորձաքննող խմբերում այդ կարողություններով օժտված փորձագետների ներգրավումը: Որակի ապահովման գործակալությունները ընտրում են այնպիսի փորձագետների, ովքեր կկարողանան գործել որպես արտաքին գործընկերներ: «Արտաքին փորձաքննողներ» կամ «արտաքին գործընկերներ» տերմինները արդեն քննարկվել են այս մոդուլի նախորդ հատվածում: Կարևոր է նշել, որ նրանք գործընկերներ են այնքանով, որ նույն առարկայի կամ մասնագիտության ոլորտի մասնագետներ են: Արդյունքում նրանք, ինչպես իրենց կողմից գնահատվողները, կիսում են միևնույն հայեցակարգային շրջանակը, տիրապետում են միևնույն տերմինաբանությանը և կատեգորիաներին:

Ավստրալիայում և Նոր Զելանդիայում որակի ապահովման գործակալությունները զգալիորեն ընդլայնել են «գործընկերոջ» մեկնաբանությունը: ԱՀՈԳ-ի *Աուդիտի ձեռնարկը* (Հունիս 2006) դրա պատճառները բացատրում է հետևյալ կերպ՝

> «Գործընկեր» տերմինը նշանակում է «համապատասխան համատեքստում նույնանման գիտելիքներով, հմտություններով, փորձով և կարգավիճակով օժտված անհատ կամ խումբ» (Վուդհոուզ, (Woodhouse, 1994): Ակադեմիական շրջանակներում այն հաճախ նշանակում է «մեկ այլ համալսարանական», իսկ ընդհարապես մատնանշում է միևնույն մասնագիտական ոլորտից որևէ մեկի: Այդ պատճառով այն կարող է գործընկերային փորձաքննության նկատմամբ հանրային կասկած առաջացնել և հարուցել զգացողություն, որ գործընկերային փորձաքննությունը չի հանգեցնում անկախ, օբյեկտիվ կարծիքի, քանի որ փորձաքննողները ավելի հակված են քողարկելու իրենց գործընկերների թերությունները:
>
> Այսպիսի դրսևորումներից խուսափելու նպատակով ԱՀՈԳ ընդլայնել է «գործընկերոջ» մեկնաբանությունը և բացի ավստրալիական համալսարաններից ընդգրկված մասնագետներից, փորձաքննող հանձ-

նաժողովներում միշտ ընդգրկվում են ավստրալիական ակադեմիական շրջանակներին չպատկանող փորձագետների, ովքեր ունեն գնահատվող ոլորտների վերաբերյալ գիտելիքներ և այլ համատեքստում դրանց կիրառման փորձառություն»:

Գնահատման այցելության ընթացքում փորձաքննողները փոխգործողության մեջ են մտնում հաստատության տարբեր բաժինների հետ, քննարկումներ են անցկացնում, պահանջում են համապատասխան փաստաթղթեր և հետևություններ անում: Այս ամենը պահանջում է միջանձնային հարաբերությունների ձևավորման և զարգացման կարողություններ, ինչպիս օրինակ արդյունավետ շփումը,որոշումների կայացման հարցում օբյեկտիվությունն ու ազատամտությունը· Երբեմն նրանք ստիպված են առաջնորդել ենթախմբեր կամ աշխատել անկախ և աջակցել խմբի ղեկավարին: Այս աշխատանքը կարող է արհեստավարժ կերպով իրականացվել այն դեպքում, եթե փորձաքննողներն ունեն փոքր խմբերում աշխատելու. ինչպես նաև դրանք առաջնորդելու ունակություն: Փորձաքննությունը նաև պահանջում է սեղմ ժամկետներում աշխատելու, պարզ գրելու և արդյունավետ ու համակարգված ձևով ապացույցներն արձանագրելու ունակություն:

Պետք է նաև ուշադրություն դարձվի այնպիսի փորձագետների ընտրությանը, ովքեր հայտնի են բարձրագույն կրթության տարաբնույթ իրողությունների իրենց իմացությամբ: Փորձաքննողները կարող են ընտրվել այնպես, որ փորձաքննող խմբում ներառվեն կառավարման, ֆինանսների, ընդհանուր/առարկայական ծրագրերի կամ ԲՈՒՀ-ի համար կարևոր այլ ոլորտների վերաբերյալ տարբեր փորձառությամբ մասնագետներ. Վերջապես փորձագետները պետք է ճանաչված լինեն իրենց դատողությունների անաչառությամբ: Հաստատության համար վստահությունը փորձաքննողների փորձագիտությանը բավարար չէ: Ամենից առաջ հաստատությունը պետք է կարողանա վստահել փորձաքննողներին:

Այսպիսի կարողություններով օժտված մարդկանց բացահայտելու համար որակի արտաքին ապահովման գործակալությունները սովորաբար ապավինում են նշանակումներին և փորձաքննողների բացահայտման ոչ ֆորմալ ձևերին: Այնուհետև նրանց հրահանգավորում են կամ ապահովում վերապատրաստման ծրագրերով: Գործակալությունների շրջանում դիտարկվել են հետևյալ պրակտիկաները.

1. Փորձաքննողները ընտրվում են նշանակումների միջոցով ԲՈՒՀ-երից: Որակի ապահովման որոշ գործակալություններ մշակել են ուղեցույցներ նշանակումների համար: Այդ շրջանակում ԲՈՒՀ-երը կարող են նշանակումներ կատարել:

2. Փորձաքննողները բացահայտվում են ոչ ֆորմալ ձևով: Առաջին փորձաքննությունից հետո միայն լավ գնահատականներով փորձաքննողներին են խնդրում միանալ նոր խմբերին:

3. Պահվում է հայտնի փորձաքննողների պաշտոնական ցուցակ կամ մատյան:

4. Հայտարարվում է մրցույթ, որի արդյունքում ընտրվում են նրանք, ովքեր համապատասխանում են գործակալության կողմից սահմանված պայմաններին:

5. Պոտենցիալ փորձաքննողներից պահանջվում է անցնել մանրակրկիտ վերապատրաստման ծրագրեր: Փորձաքննող խմբում ընդգրկվում են վերապատրատման ծրագիրը միայն լավ գնահատականներով ավարտածները:

6. Սկզբում կազմվում են փորձաքննող խմբերը: Այնուհետև յուրաքանչյուր խումբ անցնում է մանրակրկիտ վերապատրաստում, ինչպես Դանիայի դեպքում:

Ներդիր 4. Փորձաքննողների ընտրություն (ԲԿՈԿ, Հարավային Աֆրիկա)

Հատուկ պահանջներ, որոնց պետք է բավարարի աուդիտորի վերապատրաստման ծրագրին մասնակցել ցանկացող փորձագետ-թեկնածուն.

1. Ունակ է իրականացնել անկախ և հիմնավորված դատողություններ՝
   - բարձրագույն կրթական հաստատություններում որակի ապահովման ինստիտուցիոնալ գործընթացների արդյունավետության և ԲՈԷՀ-երին առչնվող հարցերի վերաբերյալ,
   - մասնագիտական փորձագիտություն պահանջող ոլորտներում: Այս ոլորտները պետք է սահմանվեն և փոխադարձ համաձայնեցվեն փորձագետի և ԲԿՈԿ-ի կողմից:
2. Ունի բարձրագույն կրթության որակավորում կամ հետբուհական կրթական աստիճան (բուհերից թեկնածուները պետք է ունենան ոլորտի առնըվազն մագիստրոսի որակավորում):
3. Ծանոթ է ԲԿՈԿ-ի աուդիտի մոտեցման հիմնական սկզբունքներին ու քաղաքականություններին և ցանկանում է աշխատել դրանց շրջանակում:
4. Անձը ունակ է յուրացնել և վերլուծել մեծ ծավալի տեղեկատվություն:
5. Ունի լայն մտահորիզոն, գիտելիքներ և փորձ բարձրագույն կրթության հաստատություններում որակի ապահովման գործընթացների որակի վերաբերյալ վստահելի, ապացույցների վրա հիմնված դա-

տողություններ անելու համար:

6. Ունակ է բարձր մակարդակով քննարկումներ անցկացնել բարձրագույն կրթության համատեքստում ռազմավարական և գործառնական մոտեցումների վերաբերյալ:

Լրացուցիչ պահանջներ, որոնց պետք է բավարարեն ակադեմիական գործընկեր-փորձագետները.

1. Նրանք պետք է լինեն լրիվ դրույքով աշխատողներ, ովքեր ներգրավված են դասախոսական, հետազոտական և/կամ բուհական կառավարման աշխատանքներում:
2. Ունենան դասավանդման և հետազոտական աշխատանքների փորձ և/կամ բուհական կառավարման առնվազն հինգ տարվա փորձառություն բարձրագույն կրթության ոլորտում:
3. Ունենան առնվազն մագիստրոսի կամ ավելի բարձր որակավորում:
4. Ունենան ուսումնական ծրագրի կազմման որոշ կողմերի իմացություն և փորձ:
5. Ունենան հրապարակումներ հայտնի ազգային և/կամ միջազգային ամսագրերում կամ հրատարակված գրքեր:
6. Ունենան անձնական վստահություն բարձրագույն ուսումնական հաստատությունների, ավագ կավառարիչների և ղեկավարների կամ մասնագիտական ու վարչական ոլորտների գործընկերների շրջանում:
7. Խստորեն խորհուրդ է տրվում, որ թեկնածուն՝

   - ունենա ԲՈՒՀ-ում դասավանդման, հետազոտության և/կամ վարչական աշխատանքի ավելի քան հինգ տարվա փորձ:

   - նախկինում ունենա ներգրավվածություն ԲԿՈԿ/ ԲԿԽ-ի (Բարձրագույն կրթության խորհուրդ) կամ առնչվող գործընթացներում:

   - Ունենա բարձրագույն կրթության արտաքին փորձաքննության փորձ:

   - ունեա հատուկ ոլորտների և համակարգերի իմացություն և փորձ՝ ինչպես օրինակ՝ բուհական պլանավորում, ուսանողական ծառայություններ և այլն:

Աղբյուր՝ Բարձրագույն կրթության խորհրդի ինտերնետային կայքը:

Արտաքին փորձաքննողներ ընտրելիս որակի ապահովման գործակալությունը դիտարկում է մի շարք հանգամանքներ, ինչպես օրինակ մասնագետների փորձը և փորձաքննության շրջանակը: Կախված այս նկատառումներից՝ գործակալությունը կարող է գնահատող խմբում ներգրավել միայն ունիվերսալների կամ նեղ մասնագետների, ինչպես նաև ձևավորել խառը խումբ:

- Տարբերակ 1 - Փորձաքննողները որպես նեղ մասնագետներ

Այս տերմինի ուղիղ իմաստով նրանք բուհական մասնագետներ են գնահատվող ակադեմիական ոլորտից: «Բուհական գործընկերները» կամ «մասնագետները» որպես մասնագետ փորձաքննողներ առավել հաճախ հանդես են գալիս առարկայական գնահատումների ժամանակ: Այն կարող է նաև օգտագործվել, եթե ծրագրերի գնահատումները գլխավորապես կենտրոնանում են դրանց ակադեմիական բովանդակության վրա:

- Տարբերակ 2 - Փորձաքննողները որպես ընդհանուր մասնագետներ

Որակի ապահովման գործակալությունները, որոնք իրականացնում են հաստատության՝ որպես ամբողջության որակի ապահովումը, փնտրում են այնպիսի փորձաքննողների, ովքեր հասկանում և կարևորում են ինստիտուցիոնալ համատեքստը: Գործակալությունները ներգրավում են փորձագետների, ովքեր բացի իրենց արհեստավարժությանը առանձին ոլորտում կամ մասնագիտության մեջ, կարող են ծառայել որպես «ունիվերսալներ» կամ ընդհանուր մասնագետներ: Այս փորձաքննողները կոչվում են ունիվերսալներ, քանի որ նրանք չեն դիտարկվում որպես որևէ առարկայի մասնագետներ: Այնուամենայնիվ, նրանք կարող են լինել բարձրագույն կրթության տարբեր հարցերի կամ կազմակերպչական գործառնությունների, օրինակ՝ ֆինանսների և մենեջմենթի, մասնագետներ:

Որակի ապահովման գործակալությունների մեծամասնությունը ներգրավում են մարդկանց, ովքեր կարող են, վերը ներկայացված իմաստով, համարվել «գործընկերներ» առարկայի կամ ունիվերսալ մասնագետի հանգամանքով: Կախված գործընթացի բնույթից, կարող է առաջանալ շահառուների, օրինակ՝ կառավարության, ֆինանսավորող գործակալությունների, ուսանողների, գործատուների և հանրության ներգրավման անհրաժեշտություն: Որակի ապահովման որոշ գործակալություններ որպես դիտորդ ներգրավում են որակի ապահովում անցնող հաստատությունից կամ ծրագրից ուսանողի կամ պրոֆեսորադասախոսական կազմի անդամի, ինչպես նաև տեղական համայնքի ներկայացուցչի: Մասնագիտական կրթության ոլորտների ծրագրային հավատարմագրումը կարող է ներգրավել ուսանողների կամ մասնագիտական գործունեությամբ զբաղ-

վողների, իսկ ինստիտուցիոնալ հավատարմագրումը կարող է ներգրավել արտաքին շահառուներ, ինչպիսիք են գործատուները: Այսպիսով որակի ապահովման նպատակը պայմանավորում է «գործընկեր» հասկացության սահմանումը և դրնացից կախված փորձագետների ընտրությունը:

Փորձաքննող խումբը կազմող մարդկանց որակավորումները և ունակությունները վճռական են ամբողջ գործընթացի վստահելիության համար: Միևնույն ժամանակ արհեստավարժությունը, որով որակի ապահովման գործակալությունը պլանավորում և իրականացնում է գործընթացը, հավասար կարևորվում է փորձաքննողների թիմի հաջողության համար: Նույնիսկ ամենաբարձր որակավորում ունեցող թիմը կարող է թերանալ իր աշխատանքում, եթե գործակալությունը հստակ չլինի փորձաքննող խմբից իր սպասումներում: Այս խնդիրների լուծման համար որակի ապահովման շատ գործակալություններ ստեղծել են տարբեր ընթացակարգեր և կանոններ համապատասխան փորձագետների ընտրության և վերապատրաստման համար: Դրանցից մի քանիսն ընդգրկում են շատ բարդ և խորացված վերապատրաստումների ծրագրեր: Մյուսները բաղկացած են պարզ հրահարգավորումից նախքան փորձաքննության սկսվելը: Վերապատրաստումների և հրահանգավորման մասին ավելի շատ կխոսվի *Մոդուլ 3-ում*.

Մինչդեռ որոշ գործակալություններ վարձատրում են փորձաքննողներին, մյուսները որևէ փոխհատուցում չեն տրամադրում նրանց ծառայությունների համար: Փորձաքննող խմբերում մասնակցության փորձը դիտվում է որպես մասնագիտական առումով հարստացնող և ներդրում երկրի բարձրագույն կրթության համակարգում:

Որակի ապահովման գործակալությունը փորձագետների խումբը կազմելիս պետք է հաշվի առնի մի շարք հարցեր: Գործընկերների խմբի կազմը և չափը կարող է կախված լինել որակի ապահովման ենթարկվող միավորի բնույթից, չափից, հաճախորդներից կամ ֆինանսավորումից և այլն: Փորձաքննող խմբի ցանկալի չափ գոյություն չունի: Այնուամենայնիվ այն պետք է բավական մեծ լինի՝ ընդգրկելու փորձագետների, ովքեր կարող են ապահովել փորձաքննվող կրթական ծառայությունը հասկանալու համար անհրաժեշտ փորձառություն և ծախսելու համապատասխան ժամանակ այն գնահատելու համար:

Հարկ է նշել, որևէ առանձին փորձաքննող չի կարող ծանոթ լինի ԲՈՒՀ-ի գործունեության կամ ծրագրի առաջարկի բոլոր կողմերին: Ուստի գործակալությունը պետք է երաշխավորի խմբի այնպիսի կազմ, որի արդյունքը կլինի կոլեկտիվ, խմբային լավ գնահատումը: Խմբում հմտությունների բազմազանությունը ավելի ամբողջական կդարձնի գնահատումը՝ որպես տարբեր տեսակետների միջև համաձայնության արդյունք :

Կոլեկտիվ գնահատման արդյունքի ամբողջականության համար որակի ապահովման գործակալությունները պետք է հաշվի առնեն երեք կարևոր հանգամանք.

ա) գնահատման նպատակին համապատասխան ակադեմիական և վարչական փորձագիտության առկայություն,

բ) առաջնորդելու և հաշվետվություն կազմելու փորձաքննողների ունակությունները,

բ) փորձաքննողների՝ խմբային աշխատանքների իրականացմանն անհրաժեշտ անձնական հատկանիշները, ինչպիս օրինակ խմբերով աշխատելու ունակությունը և մյուսներին լսելու կարողությունը:

Ինչպես արդեն նշվել է, գործակալությունները կարիք ունեն մասնագիտությունների գծով ակադեմիական մասնագետների՝ կոնկրետ առարկաների կամ ծրագրերի գնահատման համար: Միժամանակ, ինստիտուցիոնալ գնահատման համար անհրաժեշտ է ներգրավել փորձաքննողների, ովքեր պատկերացում ունեն հաստատության գործունեության ընդհանուր կողմերի մասին:

Վերոնշյալ նկատառումներից բացի գոյություն ունեն փորձաքննող խմբի կազմման ևս երկու տարբերակներ:

- Տարբերակ 1 – Միայն տեղացի փորձաքննողների ներգրավում

Որակի ապահովման գործակալությունների մեծամասնությունը փորձաքննողներին ընտրում են տեղացիներից: Այն օգնում է խմբին հասկանալու տեղական համատեքստը: Սակայն այս տարբերակի ընտրությունը երբեմն հնարավոր չէ, քանի որ բարձրագույն կրթության համակարգը շատ փոքր է (արտաքին փորձաքննողների և տեղի բուհերի միջև կապերը շատ ամուր են), չկան պատրաստություն անցած բուհական աշխատողներ, ովքեր կարող են արդյունավետորեն գործել որպես արտաքին փորձաքննողներ, տարբեր պատճառներով բուհական տեղացի աշխատողները բավարար վստահություն չեն վայելում ԲՈՒՀ-երի կողմից:

Այսպիսի իրավիճակներում կարող է անհրաժեշտություն առաջանալ դիտարկելու փորձաքննող խմբում միջազգային փորձագետների ընդգրկումը:

- Տարբերակ 2 - Միազգային փորձագետների ներգրավում փորձաքննող խմբում

Որակի ապահովման գործակալությունների միջև համագործակցության տարածաշրջանային շատ նախաձեռնությունների զարգացմանը զուգահեռ գնահատման ընթացակարգերի միջազգային համադրելիությունն ու ճանաչելիությունը ապահովելու նպատակով միջազգային փոր-

ձաքննողների ներգրավումը դիտվում է որպես օգտակար պրակտիկա: Միջազգային ներկայությունը նաև նոր որակներ է հաղորդում որևէ երկրի որակի ապահովման գործընթացներին և մեծացնում դրանց արհեստավարժությունը:

Այս տարբերակը մենք ավելի մանրամասն կքննարկենք *Մոդուլ 3-ում.*

Փորձագետներ ընտրելիս, որակի ապահովման գործակալությունները պետք է ստուգեն, թե արդյոք փորձագետները շահեր չունեն գնահատվող հաստատությունում: Անհրաժեշտ է ընտրել իրենց անաչառությամբ հայտնի փորձագետների. Օբյեկտիվության պահպանման և երաշխավորման համար որակի ապահովման որոշ գործակալություններ փորձագետներից պահանջում են հաստատել, որ նրանք անցյալում կամ ներկայում, որպես աշխատակից կամ որևէ պաշտոնական մարմնի անդամ՝ խորհրդատու կամ շրջանավարտ, ինչպես նաև բարեկամների միջոցով ուղղակիորեն կամ անուղղակիորեն կապված չեն գնահատման ենթադրվող հաստատության հետ: Այս տեսակետից նույնպես գոյություն ունի երկու տարբերակ

- Տարբերակ 1 - Խորհրդակցում ԲՈՒՀ-երի հետ փորձաքննող խմբի վերաբերյալ

Խորհրդակցությունը կարող է տեղի ունենալ տարբեր մակարդակներում: Կան գործակալություններ, որոնց փորձաքննողների ցանկը կամ մատյանը բաղկացած է ԲՈՒՀ-երի կողմից նշանակված փորձագետներից: Այսպիսի դեպքերում որակի ապահովման գործակալությունը փորձաքննողներին պարտադիր կերպով ներգրավում է ընտրված փորձագետների այս ամբողջությունից: Որոշ համակարգերում որակի ապահովման գործակալությունը գնահատվող ԲՈՒՀ-ից ճշտում է, թե արդյոք կա որևէ առարկություն ընտրված փորձաքննողների առնչությամբ: Երբ առարկությունները հիմնավոր են, որակի ապահովման գործակալությունը կարող է փոփոխություններ կատարել խմբի կազմում: Այնուամենայնիվ, գործակալությունը պահպանում է խմբի կազմի վերաբերյալ վերջնական որոշում կայացնելու իրավունքը: Խմբի կազմման հարցում հաստատությունների հետ խորհրդակցումը համարվում է դրական պրակտիկա բարելավելու որակի ապահովումը որպես փոխադարձ վստահությամբ գործընկերության ընկալումը:

- Տարբերակ 2 - ԲՈՒՀ-երը չեն մասնակցում փորձաքննող խմբի կազմմանը

Որոշ դեպքերում, հատկապես երբ որակի ապահովման ուշադրության կենտրոնում որակի հսկողությունն է, գործակալությունը արտաքին փորձաքննողներին ընտրում է ինքնուրույն, առանց խորհրդակցելու հաստա-

տության հետ: Մասնավորապես այն կարող է անհրաժեշտ լինել, երբ որակի ապահովման նոր մեխանիզմներ են ներդրվում և հաստատությունների կամ ծրագրերի գնահատումը գլխավորապես նպատակաուղղված է համապատասխանության շեմային չափորոշիչների ապահովմանը:

Այնուամենայնիվ խորհուրդ է տրվում խորհրդակցել հաստատությունների հետ: Իրականում արտաքին փորձաքննողների խորհուրդները կարող են կարևոր դեր խաղալ հաստատության կամ ծրագրի բարելավման գործում: Եթե հաստատությունը չի վստահում փորձաքննողներին կամ նրանց ինչ-ինչ պատճառներով վստահելի չի համարում, ապա նրանց կարծիքը կանտեսվի և արդյունքում կնվազի դրանց օգտակարությունը:

Ներդիր 5. Փորձաքննող խմբի ձևավորում

Իռլանդիա

Իռլանդիայի Կրթական շնորհների ազգային խորհուրդը (ԿՇԱԽ) կառավարական գործակալություն է, որը պատասխանատու է ոչ համալսարանական կրթական շնորհների և դասընթացների հաստատման համար: Այն հիմնադրվել է 1972թ. և ստացել իր կանոնադրական լիազորությունները և պարտավորությունները 1979թ. Կրթական շնորհների ազգային խորհրդի հիմնման մասին որոշմամբ: ԿՇԱԽ-ի որակի արտաքին գնահատման ներկա համակարգը ունի հինգ հիմնական տարր՝ ինստիտուցիոնալ փորձաքննություններ, լրիվ դասընթացի գնահատումներ, ծրագրային փորձաքննություններ, արտաքին քննողներ և որակի ազգային փորձաքննություններ:

Ինստիտուցիոնալ փորձաքննությունների համար ԿՇԱԽ-ն ունի ուղեցույցների համախումբ փորձաքննող խմբի կազմը որոշելու համար: Այս խումբը սովորաբար բաղկացած է.

1. Նախագահից,
2. Գործընկեր հաստատության ղեկավարից,
3. Երկու ավագ բուհական աշխատողներից, որոնցից մեկը պետք է հնարավորության դեպքում լինի ոչ Իռլանդիայից,
4. Երկու հոգի այլ ոլորտներից,
5. Մեկ հոգի արդյունաբերության/ծառայությունների ոլորտից և մեկ հոգի գնահատվող մասնագիտությունների բնագավառից,
6. ԿՇԱԽ տնօրենը կամ ներկայացուցիչը,
7. Հաշվետվության նախագծի կազմման համար պատասխանատու

ԿՇԱԽ-ի աշխատակիցը նույնպես ուղեկցում է խմբին:

Խմբի ապագա կազմը համաձայնեցվում է հաստատության հետ: Հաստատությունը նույնպես կարող է առաջարկել գնահատողների թեկնածություններ:

Աղբյուր: Hämäläinen *et al.*, 2001թ.

Ֆիլիպիններ

Տեղանք այցելություն կատարող խմբի անդամները ընտրվում են վերապատրաստված հավատարմագրողների ցուցակից: Հավատարմագրողները հայտնի են իրենց փորձի ու փորձագիտության համար և անցել են երկօրյա նախապատրաստական ծրագիր: Ունիվերսալ մասնագետները սովորաբար առաջնորդում են հավատարմագրողների խումբը, որը կազմված է վեցից ութ անդամից՝ կախված հաստատության բնույթից և հետազոտվող քոլեջի կամ ծրագրի չափից: Յուրաքանչյուր անդամի հանձնարարվում է ինքնագնահատման հաշվետվության մի ոլորտ: Ավանդաբար ԴՔՀՀՖԱ-ը միշտ ունեցել է դեպքեր, երբ հիմնավոր պատճառներով հաստատությունը պահանջել է խմբի կազմի փոփոխություն:

Աղբյուր: ԴՔՀՀՖԱ-ի ձեռնարկ հավատարմագրման վերաբերյալ, 2006թ.

Փորձաքննող խմբի կողմից ԲՈՒՀ-ի կամ ծրագրի գնահատման անաչառությունը ապահովելուց հետո որակի ապահովման գործակալությունը սովորաբար խորհրդակցում է ԲՈՒՀ-ի հետ գնահատողների այցելության ժամկետները որոշելու համար :

Փորձաքննության անցկացում (այցելություն տեղանք)

Որակի ապահովման գործակալությունը պետք է հստակ սահմանի սպասումները արտաքին փորձաքննողներից: Ինչպես նշվել է արդեն, նրանք իրենց աշխատանքին կարող են մոտենալ տարբեր տեսանկյուններից: Որակի ապահովման գործակալության պարտականությունն է սահմանել համապատասխան ուղեցույցներ և հաստատություններին ու ծրագրերի պատասխանատուներին տեղյակ պահել արտաքին փորձաքննության պայմանների մասին:

Այն ներառում է որակի ապահովման գործակալության և հաստատության պարտականությունների նկարագրությունը, աշխատանքի հետ կապված փորձաքննողների պարտականությունները (ինչպիսիք են գործակալության չափանիշներին հետևելը և գործընթացի ընթացքում փորձաքննված ոլորտների մասին գաղտնիության պահպահման խիստ պարտավորվածությունը), նրանց գործառույթները և գործակալության ու հաստատությանը հաշվետու լինելը: Որակի արտաքին ապահովման գործակալությունները որպես կանոն պատրաստում են մանրամասն ուղեցույցներ արտաքին փորձաքննողների գործունեության համար: Ուղեցույցները նաև օգնում են ապահովելու հետևողանակություն տարբեր խմբերի կողմից իրականացվող աշխատանքում:

Արտաքին փորձաքննողները որակի ապահովման գործընթացի մեջ հիմնականում ներգրավվում են այն պահից, երբ ինքնագնահատման հաշվետվությունները հանձնվում են որակի ապահովման գործակալությանը: Շատ դեպքերում արտաքին փորձաքննողները պատասխանատու են տեղանք այցելության համար, քանի որ նրանք են որոշում, թե ում են նրանք ցանկանում հանդիպել և ինչ թեմաներ քննարկել տարբեր շահառուների հետ կամ հաստատության ստորաբաժանումներում:

Երկուստեք հարմար ժամկետում խումբը այցելում է հաստատություն ինքնագնահատման հաշվետվության հաստատման և որակի ապահովման գործակալության կողմից հանձնարարված պարտականությունների կատարման համար: Այցելության տևողությունը կարող է կախված լինել գնահատվող միավորի մեծությունից և գնահատման մակարդակից:

Տեղանք այցելության ընթացքում, որակի ապահովման գործակալության գնահատման շրջանակին համարժեք, փորձաքննող խումբը ձեռնարկում է երեք հիմնական գործողություններ: Դրանք ներառում են այցելություն հաստատության միավորներ (մեծ մասը կամ ընտրվածները), շփումը հաստատության հաճախորդների հետ և փաստաթղթային ապացույցների ստուգումը:

Այցելությունները միավորներ և շփումները հարստացնում են խմբի գիտելիքները հաստատության մասին: Այցելության պլանավորման գործում գոյություն ունի երկու հիմնական տարբերակ՝

- Տարբերակ 1 - Փորձաքննող խումբը և խմբի նախագահը ներգրավված են այցի պլանավորման գործում:

Որակի ապահովման որոշ գործակալություններ պահանջում են, որ խմբի նախագահը նախնական քննարկումներ ունենա հաստատության հետ նախքան այցելությունը: Նախագահը կարող է նախնական այցելություն կատարել հաստատություն խմբի այցելության գրաֆիկը քննարկելու և համատեղ որոշելու հաստատությունը կամ ծրագիրը համապատասխան համատեքստում հասկանալուն նպաստող պայմանները: Որակի ապահովման գործակալության համակարգող աշխատակիցը կարող է ուղեկցել խմբի նախագահին:

- Տարբերակ 2 – Փորձաքննող խմբի այցը ամբողջովին կազմակերպում է որակի ապահովման գործակալությունը :

Որակի ապահովման գործակալությունների մեծ մասում ուղղակի հաղորդակցությունը փորձաքննող խմբի և հաստատության միջև սկսվում է միայն այցի ընթացքում: Մինչ այդ հաստատության ողջ հաղորդակցությունը միայն որակի ապահովման գործակալության հետ է: Ցանկացած հաղորդակցություն փորձաքննող խմբի հետ իրականացվում է որակի ապահովման գործակալության միջոցով: Որակի ապահովման գործակալության անձնակազմն է պլանավորում այցի գրաֆիկը՝ խորհրդակցելով հաստատության և փորձաքննող խմբի նախագահի հետ:

Առկա է նաև երրորդ տարբերակը, երբ այցի կազմակերպումը իրականացվում է որակի ապահովման գործակալության կողմից, բայց փորձաքննող խմբի կարգադրություններով: Այսպես, փորձաքննողները ինքնագնահատման հաշվետվությանը ծանոթանալուց հետո գործակալությանը տեղեկացնում են ստորաբաժանումների մասին, ուր ցանկանում են այցելել, այն մարդկանց մասին, ում ցանկանում են հանդիպել, ինչպես նաև ստուգման ենթակա ապացույցների մասին:

Ներդիր 6. Փորձաքննության անցկացում (այցելություն տեղանք)

Հունգարիա

Այցելող կոմիտեի (ԱԿ) նախագահն երաշխավորություններ է տալիս կոմիտեի կազմի մասին, իսկ Հունգարիայի հավատարմագրման կոմիտեի (ՀՀԿ) նիստը հաստատում է այդ երաշխավորությունները: ԱԿ-ի նախագահը և անդամներն այնուհետև ստանում են իրենց հանձնարարական նամակները, որոնք ստորագրվում են ՀՀԿ-ի նախագահի կողմից: Այցելող կոմիտեն սովորաբար կազմված է երեքից հինգ փորձագետներից՝ մեկ ֆակուլտետի համար: Այս փորձագետները ճանաչված և բարձր որակավորվորում ունեցող անձինք են, ովքեր ծանոթ են ֆակուլտետի դասավանդման ոլորտին:

ԱԿ-ի նախագահը նախնական այց է կատարում հաստատություն: Այդ հանդիպման ընթացքում հաստատության ղեկավարը և ԱԿ-ի նախագահը համաձայնության են գալիս եռօրյա այցի ժամկետի և գրաֆիկի շուրջ: Այս այցի ընթացքում ԱԿ-ի նախագահը հանդիպում է նաև ֆակուլտետների ղեկավարների հետ, այցելում ամբիոններ, գրադարան և լաբորատորիաներ, մասնակցում դասախոսությունների ու սեմինար պարապմունքների, հանդիպում ուսանողների հետ: Այնուհետև այցելող կոմիտեն նախապատրաստում է փորձաքննության այցը:

Անդամները ստանում են հավատարմագրման ուղեցույցներ, հավելվածներ և հաստատության կողմից պատրաստված հավատարմագրման դիմումի առաջին մասը (պատճեն ուղարկվում է ՀՀԿ): Նրանք սովորաբար մեկ շաբաթ են ունենում այս փաստաթղթերը ուսումնասիրելու համար: ԱԿ-ի նախագահն այնուհետև հավաքում է անդամներին՝ այցելությունը պատրաստելու և պարտականությունները (մագիստրական ծրագրի գնահատում, ֆակուլտետի և հաստատության գնահատման պարտականություններ) բաշխումը քննարկելու նպատակով:

Եռօրյա այցը կատարվում է նախապես սահմանված գրաֆիկին և պարտականությունների բաշխմանը համապատասխան: Փորձաքննության այցից հետո ԱԿ-ի նախագահը կարող է կազմակերպել վերջնական հանդիպում ԱԿ-ի բոլոր անդամների հետ՝ նրանց կարծիքները քննարկելու նպատակով: Այցելության վերաբերյալ հաշվետվությունը պատրաստում է ԱԿ-ի նախագահը:

*Աղբյուր: Կոզմա (*Kozma), 2003: 76-77.

Մոդուլ 2 - Որակի արտաքին ապահովման գործընթացի անցկացում

Ֆիլիպիններ

Հետազոտական այցը սկսում է խմբի նախագահի կողմից ղեկավարած կողմնորոշման հանդիպումով: Կողմնորոշման հանդիպումը սահմանում է այցի խնդիրները և տարբեր ընթացակարգերը, որոնց պետք է հետևել:

Երկօրյա այցի ընթացքում խմբի անդամները առանձին կամ տարբեր խմբերով հանդիպում են վարչական աշխատողների, պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների հետ, հետևում են դասախոսություններին, լաբորատոր պարապմունքներին ու ուսումնասիրում հաստատության կողմից տրամադրված փաստաթղթերը: Գնահատվում են նաև տարբեր ուսումնական ռեսուրսները և հարմարությունները, ներառյալ համայնքային օգնության ծրագրերը:

Այցելությունը ավարտվում է ամփոփիչ նիստով, որի ընթացքում ներկայացվում և ամբողջացվում են առանձին ոլորտների հաշվետվությունները: Խմբի նախագահը ամբողջական հաշվետվությունը հանձնում է Հանձնաժողովին և այնուհետև Խորհրդին, որը քննարկում է հաշվետվությունը և ձեռնարկում համապատասխան գործողություն:

Աղբյուր: ԴՔՀՀՖԱ-ի ձեռնարկ հավատարմագրման վերաբերյալ, 2006

Այցից հետո կամ այցի ավարտին փորձաքննողները պարտավոր են պատրաստել փորձաքննության հաշվետվություն՝ երբեմն որակի ապահովման գործակալության աջակցությամբ:

Փորձաքննող խմբի հաշվետվության պատրաստման ռազմավարություն

Հաճախ փորձաքննող խմբի մեկ անդամի վրա է դրվում խմբի մյուս անդամների հետ սերտ համագործակցաբար հաշվետվության կազմման պատասխանատվությունը: Երբեմն որակի ապահովման գործակալության ներկայացուցիչը գործում է որպես խմբի քարտուղար կամ հանդիպումները կազմակերպող անձ և ստանձնում է հաշվետվության պատրաստման պատասխանատվությունը:

Գոյություն ունի հաշվետվությունների կազմման երկու հիմնական տարբերակ.

- Տարբերակ 1 - Որակի ապահովման գործակալությունը ուղղակի դերակատարում ունի հաշվետվության կազմման գործում:

Որակի ապահովման գործակալության աշխատակիցը հանդես գալով որպես փորձաքննող խմբի հանդիպումները կազմակերպող, համակարգող

կամ անդամ-քարտուղար, պատասխանատու է գնահատման հաշվետվության պատրաստման համար՝ սերտորեն խորհրդակցելով փորձաքննող խմբի անդամների հետ:

Որակի ապահովման գործակալությունը ընտրում է այս տարբերակը իր քաղաքականությանը համապատասխան: Մասնավորապես, այն հաշվի է առնում բարձրագույն կրթության համակարգի չափը, որակի ապահովման գործակալության մեծությունը, որակի ապահովման համար կատարվելիք աշխատանքների ծավալը : Բնականաբար հաշվի է առնվում նաև այն հանգամանքը, թե հնարավոր է արդյոք փորձաքննող խմբերից յուրաքանչյուրում ապահովել մեկական աշխատակից: Օրինակ, Ավստրալիական համալսարանների որակի գործակալությունում (ԱՀՈԳ), աուդիտորական հաշվետվության պատրաստումը աուդիտորական խմբին կցված ԱՀՈԳ աշխատակցի պարտականությունն է: Սա տեխնիկապես հնարավոր է, քանի որ ԱՀՈԳ հնգամյա ժամկետում պետք է աշխատի գնահատման միայն 51 միավորի հետ: Նոր Զելանդիայի Ակադեմիական աուդիտի ստորաբաժանումը նույնպես հետևում է նույն օրինակին: Կանադայում Քոլեջային կրթության գնահատման հանձնաժողովը (ՔԿԳՀ) ակտիվ դեր է ստանձնում գնահատումների մեջ, քանի որ փորձաքննող խմբերը ղեկավարվում են հանձնաժողովի անդամներից մեկի կողմից:

Ներդիր 7. Հաշվետվության պատրաստման ռազմավարություն

Գործակալության անձնակազմի դերը հաշվետվությունը գրելիս (Ավստրալիա)

Աուդիտորական այցելության ընթացքում խմբում ընդգրկված ԱՀՈԳ-ի աշխատակցի պարտականությունները ներառում են՝

- օգնությունը Նախագահին պահպանելու (կամ փոփոխելու) պլանավորված ծրագիրը,
- աուդիտի ենթարկվողի կողմից նշանակված կոնտակտային անձի հետ կապի պաշտպանումը այցի ողջ ընթացքում (այդ թվում տեղեկատվության ձեռք բերում կամ անհրաժեշտության դեպքում լրացուցիչ հանդիպումների կազմակերպում),
- ԱՀՈԳ-ի կողմից վարձված աուդիտի քարտուղարի աշխատանքի (արձանագրելու հարցազրույցները և քննարկումները) վերահսկողությունը
- պարզաբանման, վերաքննարկման և զեկուցման համար նախատեսված հարցերի հակիրճ ամփոփումն ու նշումները,

- նախագահի հետ միասին հանձնաժողովի հանդիպումների վարումը՝ երաշխավորելու, որ դրանք հնարավորություն են տալիս հանձնաժողովի անդամներին քննարկելու ծագող հարցերը,
- նախագահի հետ մասին հանձնաժողովի անդամների ուղորդում դեպի ճիշտ և մանրակրկիտ քննարկված որոշումների կամ եզրակացությունների կայացումը,
- անհրաժեշտության դեպքում հանձնաժողովին ձեռնարկվելիք համապատասխան գործողությունների և եզրակացությունների վերաբերյալ խորհրդատվություն,
- այցելության համար վարչական և կազմակերպչական պատրաստությունների հաջող իրականացման ապահովում:

Աուդիտորական այցից հետո ԱՀՈԳ-ի աշխատակիցը պատասխանատվություն է կրում Աուդիտի հաշվետվության պատրաստման համար՝ խորհրդակցելով հանձնաժողովի մյուս անդամների, ստուգվողի և ԱՀՈԳ-ի խորհրդի հետ: Հաշվետվության հրապարակումից հետո աշխատակիցը վերահսկում է հանձնաժողովի մյուս անդամների և ստուգվողի արձագանքը, դրանք ներգրավում ԱՀՈԳ-ի «Հաջողված փորձերի» տվյալների բազայում և զեկուցում է ԱՀՈԳ-ի Խորհրդին աուդիտի վերաբերյալ : ԱՀՈԳ-ի աշխատակիցը նաև հետագայում ներգրավվում է աուդիտի ենթարկվածի գործողությունների պլանի և առաջընթացի հաշվետվության քննարկման գործընթացներում :

Աղբյուր ՝Ավստրալիական համալսարանների որակի գործակալության ինտերնետային կայք.

- Տարբերակ 2 - Որակի ապահովման գործակալությունը ուղղակի դեր չի ստանձնում :

Փորձաքննող խմբի նախագահը կամ նրա անդամներից մեկը պատասխանատու է հաշվետվության պատրաստման համար: Այս դեպքում գործակալության աշխատակիցը կարող է ընդհանրապես չմիանալ խմբին որևէ կարգավիճակով: Եթե նույնիսկ գործակալության աշխատակիցը միանում է խմբին որպես համակարգող, ապա գործակալության քաղաքականությունը կարող է լինել այնպիսին, որ անձնակազմի անդամն ակտիվ դերակատարում չստանձնի հաշվետվության կազմման հարցում: Սա այն տարբերակն է, որին հետևում է Գնահատման և հավատարմագրման խորհուրդը Հնդկաստանում: Ունենալով ինստիտուցիոնալ հավատարմա-

գրման ենթակա 16000 ԲՈՒՀ-եր և հավատարմագրման արդյունքի հնգամյա վավերականություն, գործակալությունը բացահայտորեն չի կարող ուղղակի դեր ստանձնել հաշվետվության կազմման գործում: Ուստի փոյթաքննող խմբի նախագահը պատասխանատու է հաշվետվության պատրաստման համար:

Այս տարբերակին հետևում են նաև ԱՄՆ տարածաշրջանային հավատարմագրող գործակալություններից մի քանիսը: ԱՄՆ-ի Անկախ քոլեջների և դպրոցների հավատարմագրման խորհուրդի (ԱՔԴՀԽ) աշխատակիցը միանում է փորձաքննող խմբին: Սակայն խորհրդի անձնակազմը դերակատարում չունի գնահատման որոշումների կայացման գործում: ԱՔԴՀԽ-ը անձնակազմի դերը նկարագրում է հետևյալ կերպ՝

> «Այցի ընթացքում անձնակազմի հիմնական դերը ԱՔԴՀԽ հավատարմագրման չափանիշների մեկնաբանումն է: Անձնակազմը խմբի անդամներին ուղորդում է չափանիշների ընկալման, կիրառման հարցում և կարող է աջակցել խմբի անդամներին տեղեկատվության հավաքման գործում: Անձնակազմը պարտականություն չի ստանձնում խմբի հաշվետվության որևէ մասի կազմման հարցում, բացառությամբ հրատարակության համար նախատեսված մասի :
>
> Անձնակազմը նաև ապահովում է, որ հաստատության գործունեության բոլոր ոլորտները պատշաճ կերպով գնահատվեն խմբի անդամների կողմից»: (ACICS, 2006)

Այս տարբերակը ԲՈՒՀ-երի և արտաքին փորձաքննողների համար նաև պարզաբանում է, որ գնահատման պատասխանատվությունն ընկած է արտաքին փորձաքննող խմբի և ոչ թե գործակալության անձնակազմի վրա: Շատ դեպքերում անձնակազմի անդամները ընթացակարգային հարցերի փորձագետներ են, հետևաբար նրանք չեն բավարարում որպես գործընկերներ հանդես գալու համար սահմանված պահանջները: Եթե նույնիսկ որոշ դեպքերում գործակալության անձնակազմը կարող է խմբին տրամադրել գործավարական, գրասենյակային կամ ընթացակարգային աջակցություն, խումբը մնում է պատասխանատու հաշվետվության բովանդակության համար:

Սովորաբար փորձաքննող խումբը գնահատման հիմնական մասերի մասին բանավոր կիսվում է հաստատության հետ տեղանք այցելության եզրափակիչ հանդիպման ժամանակ (որը կոչվում է «ելքային հանդիպում»):

Սրան կարող է հետևել մանրամասն հաշվետվություն կամ եզրակացությունների ամփոփում որակի ապահովման գործակալության կողմից՝ ակնկալելով ինստիտուցիոնալ արձագանք: Որոշ գործակալություններ փորձաքննողներին վերապահում են միայն հաշվետվությունների

կազմման դերակատարություն: Ինքնագնահատման հաշվետվության վերլուծության հիման վրա և տեղանք այցի ընթացքում փորձաքննողները դիտարկում ու սահմանված ձևաչափերով իրականացնում են գնահատում: Նրանք տրամադրում են այցի ընթացքում ձեռք բերված ապացույցները, բայց դատողություններ չեն անում կամ խորհուրդներ չեն տալիս: Փոխարենը գործակալությունն ունի փորձաքննողների դիտարկումները գնահատելու և որոշում կայացնելու իր սեփական մեխանիզմը: Սա կարող է օգնել կրճատելու միջխմբային տատանումները, քանի որ գործակալությունը ի վիճակի է համեմատելու նմանատիպ այլ հաստատությունների կամ ծրագրերի համար ներկայացված ապացույցները: Այս մոտեցումը կարող է քննադատվել որպես ուղղակի միջամտող դերակատարում այն գործընթացում, որտեղ հիմնականը գործընկերային գնահատումն է:

5. Գործակալության կողմից որոշման կայացում և զեկուցում

Երբ որակի ապահովման գործընթացը կենտրոնանում է միայն հաստատության կամ ծրագրի գնահատման վրա առանց չափորոշիչներին կամ չափանիշներին համապատասխանության վերաբերյալ որևէ որոշման կայացման, արտաքին փորձաքննող խմբի հաշվետվությունը կարող է լինել վերջին փուլը: Որոշ դեպքերում որակի ապահովման գործակալությունը կարող է ցանկանալ տրամադրել իր սեփական հաշվետվությունը:

Մյուս կողմից, երբ որակի ապահովումը ենթադրում է որոշման կայացում այն մասին, թե որքանով է հաստատությունը կամ ծրագիրը բավարարում նախասահմանված չափորոշիչներին կամ չափանիշներին, անհրաժեշտ է, որ որակի ապահովման գործակալությունը կամ նրա խորհրդատվական մարմինը որոշում կայացնի:

Որակի ապահովման գործակալության կողմից հաշվետվության ներկայացում

Գործակալության կողմից ներկայացվող որակի ապահովման արդյունքը որակի երաշխավորման գործընթացների վրա ազդեցության վճռական տարր է հանդիսանում: Որակի ապահովման գործակալությունների շրջանում հանդիպող որակի ապահովման արդյունքների զեկուցման հիմնական տարբերակներն են՝

- Տարբերակ 1 - Միայն պաշտոնական կարգավիճակի հայտարարում

Երբ որակի ապահովման նպատակն է հավաստել, թե արդյոք հաստատությունը (կամ ծրագիրը) որոշակի կարգավիճակի՝ օրինակ որպես բարձրագույն կրթական հաստատություն ճանաչվելու, որակավորում շնորհող ծրագրերի թույլտվություն կամ պետական ֆինանսավորման դիմելու իրավունք է ստանում, արդյունք-որոշումը կարող է լինել պարզ այո/ոչ կամ հավատարմագրված/չհավատարմագրված: Այսպիսին է լիցենզավորման և հավատարմագրման մոդելների մեծամասնության կիրառման արդյունքը:

Երբ ընտրել գնահատման «երկաստիճան սանդղակով արդյունք» տարբերակը

Երբ որակի ապահովումից ակնկալվում է ստուգել որակի շեմային մակարդակը, կամ երբ որակի ապահովման արդյունքն օգտագործվում է պարզ որոշումների համար, երկաստիճան կամ «երկակի» սանդղակը կարող է ծառայել այդ նպատակին: Այսպիսի սանդղակի (հավատարմագրված/չհավատարմագրված) սովորաբար կարելի է հանդիպել այն համակարգերում, որոնցում որակի ապահովումը ծառայում է կարգավորման, թույլտվության կամ ճանաչման նպատակին: Այն հաստատում է, որ հաստատությունը կամ ծրագիրը ապահովում է հիմնական պայմանները, բայց չի արտացոլում որակի տարբեր մակարդակները:

Հանրության համար սա նշանակում է հաստատության կամ ծրագրի արտաքին գնահատման ապահովում: Այն նաև նշանակում է, որ հաստատությունը կամ ծրագիրը համապատասխանում են ընդհանուր ակնկալիքներին բարձրագույն կրթության կամ մասնագիտական ոլորտում: Ավելին, այն նվազեցնում է կառավարության միջամտության անհրաժեշտությունը հաստատության գործունեությանը և ուսանողներին ապահովում է երաշխիքով, որ հաստատության կրթական գործունեությունը համարվում է ընդունելի և բավարարում է նրանց կարիքներին: Կրեդիտային հիմքով բարձրագույն կրթության համակարգերում այս արդյունքը անհրաժեշտության դեպքում կհեշտացնի կրեդիտների փոխանցումը հաստատությունների միջև: Եթե սա է որակի այն ապահովումը, որ ակնկալվում է ստանալ, ապա երկակի սանդղակը հարմար տարբերակ է: Հավատարմագրումը այսպես է սկսվել մասնագիտական կրթության ոլորտներում: Որոշ մասնագիտական ոլորտներում գործունեություն վարելու թույլտվություն ստանալու համար պետք է ավարտել հավատարմագրված ծրագիր:

Սրանք պարզ որոշումներ են, որտեղ որակի որոշակի մակարդակի հասնելը կամ դրա պահպանման կարողությունը դառնում է որոշիչ գործոն: Շատ հաճախ իրավիճակը ավելի բարդ է: Իրականում որակի արտաքին ապահովման գործակալություններից կարող են լինել շատ տարբեր ակնկալիքներ, որոնք պետք է իրագործվեն: Այս դեպքերում դիտարկման արժանի են մյուս տարբերակները:

- Տարբերակ 2 - Արդյունքների գնահատում բազմաստիճան սանդղակով

Եթե որակի ապահովումը պետք է պատասխանի այն հարցին, թե «որքան լավն են ձեր ելքային ցուցանիշները», ապա տիպային արդյունքը կլինի բազմաստիճան սանդղակով գնահատականը, այն է՝ գնահատական, որը բաղկացած է բազմաթիվ չափանիշների համար տրված միավորների ամբողջությունից: Այն կարող է լինել թվային, տառային կամ նկարագրական: Միացյալ Թագավորությունում Բարձրագույն կրթության ֆինանսավորման խորհրդի (ԲԿՖԽ) Հետազոտությունների գնահատումը (ՀԳ) համապատասխանում է այս տարատեսակին· 2008 թվականից հետազոտությունների գնահատման արդյունքը կարող է նկարագրվել հինգ մակարդակով, որոնք սահմանված են Ներդիր 8-ում Այս մեթոդը բազմաթիվ անգամ վերանայվել է, սակայն գնահատումը, ներառյալ որակի մակարդակների նշումը, կենտրոնական դեր է կատարում մեթոդաբանության մեջ

Միացյալ Թագավորության որակի արտաքին ապահովման գործակալության Ինստիտուցիոնալ աուդիտը նույնպես մոտ է այս մոտեցմանը: Ինստիտուցիոնալ փորձաքննության հաշվետվությունները պարունակում են վստահության աստիճանի մասին հայտարարություն, որը գործակալության համարմամբ կարող է տեղ գտնել հաստատության որակի ապահովման գործընթացների շարունակական արդյունավետության մեջ: Ակադեմիական փորձաքննության մեջ որակի արատաքին ապահովման գործակալությունը հետևում է նմանատիպ ռազմավարության. Օրինակները տրված են ստորև բերված ներդիրում:

Ներդիր 8. Որակի ապահովման արդյունքի զեկուցում (Միացյալ Թագավորություն)

Հետազոտությունների գնահատում (ՀԳ)	
Որակի մակարդակների սահմանումներ՝	
Չորս աստղ	Որակ, որը աշխարհում առաջատարն է ինքնատիպության, կարևորության և խստության առումով:
Երեք աստղ	Որակ, որը միջազգային մասշտաբներով գերազանց է ինքնատիպության, կարևորության և խստության առումով, բայց այնուհանդերձ հետ է մնում գերազանցության բարձրագույն չափորոշիչներից:
Երկու աստղ	Որակ, որը միջազգայնորեն ճանաչված է ինքնատիպության, կարևորության և խստության առումով:

Մեկ աստղ	Որակը, որը պետության մասշտաբով ճանաչված է ինքնատիպության, կարևորության և խստության առումով:
Չդասակարգված	Որակ, որը ցածր է պետության մասշտաբով ճանաչված հետազոտության չափորոշչից, կամ որը չի բավարարում գնահատման նպատակների համար հրապարակված սահմանմանը:

Ակադեմիական փորձաքննություն, Անգլիա

Ակադեմիական փորձաքննությունը առարկայական մակարդակի փորձաքննության գործընթաց է, որն օգտագործվում է Անգլիայում ըսկսած 2002 թվականից շարունակական կրթության քոլեջներում ուղղակի ֆինանսավորված* բարձրագույն կրթության համար:

Ակադեմիական չափորոշիչների վերաբերյալ դատողություններն արվում են առարկան մատուցողի կողմից սահմանված առարկայական օրինակելի ցուցանիշների, որակավորման մակարդակների և ընդհանուր նպատակների համեմատությամբ ուսումնական ծրագրի բովանդակության գնահատման ու ուսումնառության նախատեսված արդյունքների համապատասխանության, ինչպես նաև ուսանողի իրական առաջադիմության հիման վրա:

Ուսումնական հնարավորությունների որակի վերաբերյալ դատողություններն արվում են դասավանդման և ուսումնառության հնարավորությունների արդյունավետության հիման վրա, ուսումնական ռեսուրսների, այդ թվում անձնակազմի և ուսումնառության մեջ առաջընթաց ունենալու համար ուսանողներին տրամադրվող ակադեմիական աջակցության արդյունավետության հիման վրա:

Դատողություններ ակադեմիական չափորոշիչների վերաբերյալ

Փորձաքննողները հայտնում են առանձին և սահմանային կարծիք ակադեմիական չափորոշիչների վերաբերյալ: Նրանք հաշվի են առնում ստորև շարադրված կետերը փորձաքննվող կրթական ծառայությունների ակադեմիական չափորոշիչների նկատմամբ վստահության չափը որոշելու համար. .

* «վստահություն» կարծիք կհայտնվի, եթե փորձաքննողները գոհ լինեն ընթացիկ չափորոշիչների իրականացմամբ և ապագայում այդ չափորոշիչների պահպանման հեռանկարով,

* «սահմանափակ վստահություն» կարծիք կհայտնվի, եթե չափորոշիչները իրականացված են, բայց կասկածելի է հաստատության՝ դրանք

ապագայում պահպանելու կարողությունը,

* «անվստահություն» կարծիք կհայտնվի գնահատվող հարցերի և ակադեմիական չափորոշիչների կապակցությամբ, եթե փորձաքննողները գտնեն, որ գործընթացները բավարար չեն չափորոշիչների իրականացումը ապահովելու համար:

Ուսումնական հնարավորությունների որակի վերաբերյալ դատողություն

Ուսումնական հնարավորությունների որակի վերաբերյալ զեկուցելիս փորձաքննողները կրթական գործունեության յուրաքանչյուր ոլորտ դասում են երեք կատեգորիաներից մեկում՝ «գովեստի արժանի», «հաստատված» կամ «անբավարար»: Կարծիքները կազմվում են հիմք ընդունելով.հետևյալ հանգամանքները.

* կրթական գործունեությունը էապես նպաստում է ուսումնառության նախատեսված արդյունքների ստացմանը և բոլոր տարրերը լավ արդյունք են ցուցադրում: Հաշվետվության մեջ այս կարծիքը կկոչվի «գովեստի արժանի»,

* կրթական գործունեությունը հնարավորություն է տալիս հասնել ուսումնառության նախատեսված արդյունքների, բայց բարելավման անհրաժեշտություն կա թույլ կողմերը ուղղելու համար: Հաշվետվությունը սովորաբար ներառում է հայտարարություն, որը պարունակում է «հաստատված, բայց...» արտահայտությունը, որը ի հայտ է բերում այն ոլորտները, որտեղ բարելավման կարիք է զգացվում:

* կրթական գործունեությունը անբավարար է ուսումնառության նախատեսված արդյունքներին հասնելու համար: Կրթական գործունեությունը առնվազն բավարար դարձնելու նպատակով պահանջվում է անհապաղ իրականացնել զգալի բարելավում: Հաշվետվության մեջ այս կարծիքը կկոչվի «անբավարար»:

Աղբյուր՝ (www qaa ac uk)

Երբ ընտրել գնահատման «բազմաստիճան սանդղակով արդյունք» տարբերակը

Այս տարբերակը հարմար է, եթե որակի ապահովման գործակալությունը ցանկանում է ուշադրությունը սևեռել արդյունքների և ձեռքբերումների մակարդակների վրա: Օրինակ, եթե որակի ապահովման արդյունքը օգտագործվելու է կառավարության կամ ֆինանսավորող մարմնի կողմից՝ որոշելու ֆինանսավորման մակարդակները, ապա երկակի սանդղակով

արդյունքը կարող է բավարար չլինել: Այդպիսի դեպքերում գործակալությունը կարող է նախընտրել գնահատման այնպիսի տարբերակ, որտեղ որակի մակարդակները արտահայտված են բազմաստիճան սանդղակով: Մեծ համակարգերը, որոնք բնութագրվում են որակի մեծ տարբերություններով, կարող են նախընտրել գնահատման բազմաստիճան սանդղակով արդյունքը:

«Բազմաստիճան սանդղակի» օգտագործման մի տեսակ է երկակի սանդղակի (հավատարմագրված/ չհավատարմագրված) օգտագործումը, բայց հավատարմագրված լինելու կարգավիճակի տարբեր տևողությունների սահմանմամբ: Այս մոտեցումը կարող է տարբեր հաստատությունների հետ աշխատելու լավ ձև լինել: Եթե նրանք ընկալվում են որպես վստահելի և ունակ երաշխավորելու իրենց աշխատանքի որակը, հավատարմագրումը կարող է տրվել ավելի երկար ժամանակով (5-10 տարի): Իսկ եթե նրանք ուշադիր վերահսկողության կարիք ունեն, ապա նրանք կհավատարմագրվեն կարճ՝ միչև երկու տարի ժամանակով:

- Տարբերակ 3 - Հավատարմագրումը՝ որպես բազմամակարդակ գործընթաց

Ի լրումն հավատարմագրման գործընթացի որոշման-արդյունքի արտահայտմանը թվային կամ տառային գնահատականով՝ որոշ համակարգեր այս որոշում-արդյունքը նաև համարում են գործընթաց, որ ԲՈՒՀ-ը պետք է անցնի: Առաջին հավատարմագրումից հետո հաստատությունը կամ ծրագիրը ձեռք է բերում որոշակի կարգավիճակ: Այն կարող է բարելավվել, երբ վերլուծման միավորը վերահավատարմագրվի: Այդպիսին է հավատարմագրումը օրինակ, ԱՄՆ-ում և Ֆիլիպիններում: Հավատարմագրման տարբեր մակարդակները համապատասխանում են հավատարմագրվածի կարգավիճակի, ինչպես նաև տարբեր տիպի արտոնությունների կարճ կամ երկար տևողությանը: Այդպիսի համակարգ է ներդրված որակի տարամետ մակարդակներ ունեցող երկրներում: Միաժամանակ, հավատարմագրման բազմամակարդակ համակարգերը նաև որակի ավելի բարձր մակարդակների ձգտելու լրացուցիչ խթաններ են ապահովում հաստատությունների համար:

- Տարբերակ 4 - Միայն հաշվետվություն

Եթե որակի ապահովման իրականացումը հստակ կերպով կարևորում է այն, թե ինչպես է հաստատությունը հսկում իր ակադեմիական չափորոշիչները և ապահովում ու բարելավում իր կրթական առաջարկները, ապա որակի ապահովման գործունեության արդյունքը կարող է լինել հաշվետվությունը, ինչպես տիպային աուդիտի դեպքում: Հաստատության կամ ծրագրի նպատակները ընդունվում են որպես ելակետ աուդիտի համար:

Աուդիտորական հաշվետվությունը բացատրում է, թե ինչքանով է հաստատությանը հաջողվում իրագործել իր նպատակները:

Երբ ընտրել «միայն հաշվետվություն» տարբերակը

Երբ որակի ապահովման առարկան հաստատության կամ ծրագրի գործընթացներն են, որոնք պայմանավորում են կրթության որակը, որակի ապահովման գործակալությունը կարող է ընտրել աուդիտորական մոտեցումը: Որակի ապահովման գործունեության արդյունքը աուդիտի հաշվետվությունն է: Հաստատության կամ ծրագրի ներքին գործընթացների վրա շեշտադրման շնորհիվ այս մեթոդը կարող է օգտակար լինել զարգացած համակարգերի համար, որոնք ունեն լավ հաստատված ներքին գործընթացներ: Այն համակարգերը, որոնք որակի համար նախատեսում են ամրապնդել իրենց ներքին գործընթացները, կարող են նույնպես շահել այս մոտեցումից:

- Տարբերակ 5 - Վերոնշյալ տարբերակների համակցություն

Ձեկուցման ռազմավարության համար տարբերակի ընտրությունը այնքան հեշտ չէ, որքան կարող է թվալ վերը ներկայացվածից: Այն շատ ավելի բարդ գործընթաց է և պահանջում է հաշվի առնել շատ գործոններ: Միևնույն ժամանակ, վերոնշյալ տարբերակներից յուրաքանչյուրը հիմնված է մի շարք նկատառումների վրա: Ավելին, այս տարբերակների միջև տարբերությունը շատ մեծ չէ: Գործակալությունը կարող է օգտագործել դրանց համակցությունը՝ հաճախ կիրառել «հավատարմագրված/չհավատարմագրված» երկաստիճան սանդղակը որպես հիմք և որոշում-արդյունքին ավելացնել ևս մեկ կամ ավելի չափումներ:

Օրինակ, Ինդոնեզիայում Բարձրագույն կրթության ազգային հավատարմագրման խորհուրդի (ԲԿԱՀԽ) որակի ապահովման արդյունքի ներկայացումը տարբերակներ 1-ի և 2-ի համակցությունն է: ԲԿԱՀԽ-ը պաշտոնական հավատարմագրման որոշում է կայացնում գնահատման քառաստիճան սանդղակով՝ Ա-ից մինչև Դ գնահատականներ: Ա գնահատականը ցույց է տալիս, որ ուսումնական դասընթացը համապատասխանում է միջազգային չափորոշիչներին : Բ գնահատականը ցույց է տալիս դասընթացի լավ որակը : Գ գնահատականը ցույց է տալիս, որ դասընթացը բավարարում է նվազագույն պահանջները : Դ գնահատականը նշանակում է, որ այն հավատարմագրված չէ:

Հնդկաստանում Գյուղատնտեսական հետազոտության հնդկական խորհրդի (ԳՀՀԽ) Հավատարմագրման խորհուրդը (ՀԽ) հավատարմագրման արդյունքը ներկայացնում է եռաստիճան սանդղակով՝ հավատարմագրված, պայմանական հավատարմագրված և չհավատարմագրված:

Երբ ընտրել «տարբերակների համակցությունը»

Տարբերակների ընտրության գլխավոր պատճառներից մեկը հավանաբար կրթության ազգային համակարգերի տարբերությունն է: Այս տարբերությունները կարող են վերաբերել համակարգերի կառուցվածքին, քաղաքականություններին, զարգացման փուլին և բարձրագույն կրթության ոլորտում ընդգրկված մասնակիցներին: Արդյունքում որակի ապահովման նպատակը և առարկան կարող են տարբեր լինել: Որակի ապահովման արդյունքների ներկայացման տարբերակների համակցությունը նաև կախված է ոլորտի միջազգային զարգացումներից:

Օրինակ, Հնդկաստանում Գնահատման և հավատարմագրման ազգային խորհուրդը (ԳՀԱԽ) ընտրել է գնահատման ինքնաստիճան սանդղակ և հաշվետվությունը՝ որպես որակի ապահովման արդյունք· Ունենալով ավելի քան 16000 ԲՈՒՀ-եր, որոնք մեծապես տարբերվում են որակի առումով, որակի ապահովման արդյունքի ներկայացման համար պահանջվում է ավելի շատ դասակարգումներ: Միևնույն երկրում որակի ապահովման մարմինները տարբեր պատճառներով հետևում են որակի ապահովման գործընթացների տարբեր համակցությունների:

Տեխնիկական կրթության համահնդկական խորհուրդի (ՏԿՀՀԽ) Հավատարմագրման ազգային խորհուրդը (ՀԱԽ) հավատարմագրում է ինժեներական կրթության հետ առնչվող ծրագրերը: Սկզբում խորհուրդը հավատարմագրված ծրագրերին գնահատականներ էր շնորհում եռաստիճան սանդղակով՝ Ա, Բ և Գ: Գնահատման այս կարգը վերանայվել է 2003թ. հունվարից և դարձել երկաստիճան համակարգ՝ հավատարմագրված և չհավատարմագրված: Վերանայման նպատակը միջազգային մակարդակում այլ հավատարմագրման կառույցների, հատկապես Վաշինգտոնյան համաձայնագրին (որը ապահովում է ինժեներների շարժունակությունը երկրների միջև) համապատասխանելն է: Ավելացվել է նաև հավատարմագրման վավերության ժամկետը, որը տատանվում է երեքից հինգ տարիների միջև :

Ֆիլիպինների հավատարմագրող գործակալությունները պնդում են, որ «Որակի տարբերությունների պատճառով որոշվել է առաջարկել հավատարմագրում չորս տարբեր մակարդակներում, որոնցից յուրաքանչյուրը տալիս է որոշակի օգուտներ՝ վարչական և ֆինանսական ապակարգավորման, ուսումնական ծրագրի կազմման ինքնավարության, դրամաշնորհների ու սուբսիդիաների հասանելիության և ֆինանսավորման աջակցության կազմակերպում: Որքան բարձր է հավատարմագրման մակարդակը, այնքան ավելի շատ է հաստատությանը տրված ինքնավարությունը»: (Արսելո, (Arcelo), 2003)

Այսպիսով, որակի ապահովման արդյունքների ներկայացման ռազմավարության վրա ազդում է ազգային համատեքստի, որակի ապահովման ընդհանուր նպատակի և միջազգային զարգացումների համակցությունը:

Մոդուլ 2 - Որակի արտաքին ապահովման գործընթացի անցկացում

Վերոնշյալ քննարկումները հանգեցնում են հետևյալ դիտարկումների՝

1. Հավատարմագրումը գնահատման երկաստիճան սանդղակով (հավատարմագրված/չհավատարմագրված), օգտակար է պարզ որոշումների կայացման համար: Այն օգտագործվում է որպես ընտրության չափանիշ կամ նախապայման որոշակի կարգավիճակ ստանալու համար.

2. Որակի մեծ տարբերություններով խոշոր համակարգերի համար արդյունքի արտահայտումը գնահատման բազմաստիճան սանդղակով կամ որպես բազմամակարդակ գործընթացի բնորոշումներ (հավատարմագրման ձեռք բերված տարբեր մակարդակների ներկայացում) կարող է օգտակար լինել: Այն օգտակար է նաև այն դեպքերում, երբ որակի ապահովման արդյունքը օգտագործվում է տարբեր որոշումների համար, ինչպիսիք են որակի հիման վրա ֆինանսավորման բանաձևի կիրառում կամ տարբերակված խթանների ապահովում:

3. Միայն հաշվետվությունը կարող է օգտակար լինել այն դեպքում, երբ որակի ապահովումը վրաբերում է որակն երաշխավորող գործընթացներին: Այն կարող է նաև օգտակար լինել կայացած համակարգերի համար, որոնք ունեն լավ զարգացած ներքին գործընթացներ: Բարձրագույն կրթության համակարգերը, որոնք նախատեսում են ամրապնդել որակի ապահովման ներքին գործընթացները, նույնպես կարող են շահել այս տարբերակի կիրառումից:

4. Վերը քննարկված տարբերակների ճիշտ համակցությունը պետք է ընտրվի կախված ազգային համատեքստից և այն նպատակներից, որոնց պետք է ծառայի որակի ապահովումը այդ համատեքստի շրջանակում:

Վարժություն 3

Հաշվետվության ներկայացման և դասակարգման համակարգերի ո՞ր համակցությունը համապատասխան կլինի Ձեր երկրի համատեքստում

Որակի ապահովման գործընթացի իրականացման հաշվետվությունը ներկայացնում է եզրակացություններ և երաշխավորություններ՝ ինքնագնահատման և տեղանքային այցելության արդյունքների հիման վրա: Միաժամանակ, ըստ երկրների գոյություն ունեն զգալի տարբերություններ եզրակացությունների ու երաշխավորությունների ձևաչափի միջև: Որոշ հաշվետվություններ ներկայացնում են միայն վերլուծության արդյունքները՝ փորձագետների կարծիքը եզրահանգումների կամ երաշխավորությունների ձևով: Մյուս հաշվետվություններում փորձագիտական կարծիքը ներկայացված է համապատասխան վերլուծական համատեքստում, պատճառաբանելով նաև թե ինչով է պայմանավորված տվյալ երաշխավորությունը:

Երկրի մասշտաբով հաշվետվությունների ձևաչափին վերաբերող ընտրությունը կարող է արտացոլել դրանց ավանդական մոտեցումները՝ կապված վերջնական կարծիքների փաստաթղթավորման անհրաժեշտության հետ: Հաշվետվությունների թիրախային խմբերի շրջանակը և մակարդակը նույնպես կարևոր են: Այն հաշվետվությունը, որը ուղղված է և ուղղորդելու է պոտենցիալ ուսանողներին, գործատուներին կամ բարձրագույն կրթության այլ շահառուներին, պետք է տարբերվի միայն ակադեմիական համայնքի համար նախատեսված հաշվետվությունից:

Որոշման կայացում գործակալության կողմից

Փորձաքննող խմբի հաշվետվությունը կամ երաշխավորությունը կարևոր ներդրում է գործակալության՝ որակի ապահովման որոշումներում: Մինչդեռ որոշ գործակալություններ հաշվի են առնում միայն փորձաքննող խմբի հաշվետվությունը, ապա մյուսները հաշվի են առնում նաև առչվող տեղեկատվությունը, ինչպես օրինակ հաստատության ինքնագնահատման հաշվետվությունը:

Եթե ծագում են այնպիսի հարցեր, ինչպիսիք են «Ի՞նչ մուտքային ցուցանիշներ են հաշվի առնվել որակի ապահովման վերաբերյալ որոշումների համար» և «Ո՞վ է կայացնում վերջնական որոշումը», ապա գոյություն ունի առնվազն երեք տարբերակ յուրաքանչյուր հարցի համար:

- Տարբերակ 1 - Միայն արտաքին փորձաքննող խմբի երաշխավորություն

Այստեղ ենթադրվում է, որ խումբը վերլուծել է գործին առնչվող ողջ տեղեկատվությունը: Դրա համար նրանց երաշխավորությունը բավարար հիմք է որոշման կայացման համար:

- Տարբերակ 2 - Արտաքին փորձաքննող խմբի և հաստատության կամ ծրագրի ինքնագնահատման հաշվետվությունները

Այս դեպքում ենթադրվում է, որ չնայած արտաքին փորձաքննության հաշվետվությունը կարևոր ներդրում է, հաստատության կողմից պատրաստված հաշվետվությունը նույնպես բավականաչափ կարևոր է որակի ապահովման գործակալության կամ նրա խորհրդի կողմից լրացուցիչ դիտարկելու համար:

- Տարբերակ 3 - Փորձաքննող խմբի հաշվետվությունը, ինքնագնահատման հաշվետվությունը և գործին առնչվող այլ տեղեկատվություն

Որակի ապահովման գործակալությունը կարող է, փորձաքննող խմբի և հաստատության ինքնագնահատման հաշվետվություններից բացի, հաշվի առնել նաև գործին առնչվող այլ տեղեկատվություն, ինչպես օրինակ ընդհանուր տվյալներ հաստատության կամ ծրագրի վերաբերյալ: Այն կարող է նաև դիտարկել այլ հաստատություններին կամ ծրագրերին վերաբերող տվյալներ, որոնք կարող են օգնել համեմատական որոշման համար:

- Տարբերակ 4 - Արտաքին փորձաքննող խմբի հաշվետվությունը, ինքնագնահատման հաշվետվությունը, գործին առնչվող այլ տեղեկատվություն և հաստատության արձագանքը

Սա տարբերակ 3-ի փոփոխված տարբերակն է, որտեղ հաստատության արձագանքը առանձնակի կարևորվում է վերջնական որոշման կայացման գործընթացում: Այստեղ հաստատության արձագանքը ավելին է, քան պարզապես կարծիքի հայտնում տեղանքային այցելության և փորձաքննող խմբի վերաբերյալ: Նախքան որոշման կայացումը հաստատությունից կարող է պահանջվել արձագանքել որոշ հարցերի վերաբերյալ, որոնք կներառվեն վերջնական որոշման մեջ: Քոլեջների և համալսարանների հյուսիսային արևմտյան հանձնաժողովի (ՔՀՀԱՀ) դեպքը ներկայացված է ստորև:

Ներդիր 9. Որոշման կայացումը որակի ապահովման գործակալության կողմից (ԱՄՆ)

Թեկնածության վերաբերյալ որոշման կայացման ընթացքում Հանձնաժողովը՝

- ուսումնասիրում է հաստատության ինքնագնահատման հաշվետվությունը և այլ փաստաթղթեր,
- ուսումնասիրում է գնահատող կոմիտեի հաշվետվությունը,
- ուսումնասիրում է հաստատության գրավոր պատասխանը գնահատող կոմիտեի հաշվետվությանը, եթե այն առկա է,
- գնահատման կոմիտեի նախագայի հետ քննարկում է հաշվետվությունը և թեկնածությանն առնչվող գաղտնի երաշխավորությունը,
- հանդիպում է հաստատության գլխավոր գործադիր տնօրենի հետ և հրավիրում նրան հայտարարությամբ հանդես գալու հաստատության անունից:

Աղբյուր՝ Քոլեջների և համալսարանների հյուսիսարևմտյան հանձնաժողովի ինտերներային կայք

Ո՞վ է կայացնում որակի ապահովման վերաբերյալ վերջնական որոշումը: Այն կախված է որակի ապահովման գործընթացում փորձագետներին վերապահված դերից. փորձագետները կարող են միայն խորհուրդ տալ գործակալությանը, կամ նրանք կարող են նաև կարծիք հայտնել որակի վերաբերյալ:

- Տարբերակ 1 - Փորձաքննող խումբը ներկայացնում է երաշխավորություններ, իսկ գործակալությունը հաստատում դրանք

Գործակալությունների մեծամասնությունը ապավինում են գործընկերային գնահատմանը: Որոշ գործակալություններ նույնիսկ փորձաքննող խմբի երաշխավորությունները դարձնում են միակ հիմքը գործակալության որոշման համար:

Տեղանքային այցի ավարտին փորձաքննող խմբից կարող է ակընկալվել բանավոր ներկայացում հաստատության (կամ ծրագրի) ամբողջական կամ մասնակի գնահատման վերաբերյալ: Ակնկալվում է նաև գործակալությանը հանձնել երաշխավորությունների վերաբերյալ գրավոր հաշվետվություն: Իրադարձությունների բնականոն ընթացի դեպքում, եթե խմբի օբյեկտիվության կամ խմբի այցելության վերաբերյալ բողոքներ չեն լինում (բացառությամբ գործակալության մոտ անվստահության լուրջ հիմքերի), փորձաքննող խմբի երաշխավորությունները հաստատվում են գործակալության կողմից և հայտարարվում որպես վերջնական որոշում-արդյունք:

Չնայած կարող են լինել բողոքարկման և հետագա վերանայման մեխանիզմներ, այնուամենայնիվ փորձաքննող խմբի գնահատականը հիմք է

ծառայում գործակալության որոշումների կայացման համար: Եթե որակի ապահովման գործակալությունը հետևում է այս մոդելին, ապա էական է, որ փորձաքննողները ունենան համապատասխան որոշումներ կայացնելու բավականաչափ ունակություններ: Այս հանգամանքը վճռորոշ է հատկապես որակի ապահովման այն մոդելներում, որոնցում գործակալության անձնակազմը չի միանում տեղանքային այցին:

- Տարբերակ 2 - Փորձաքննող խումբը ներկայացնում է երաշխավորություններ, իսկ գործակալությունը՝ կայացնում որոշումը

Վերոնշյալ առաջին տարբերակից քիչ տարբերվող տարբերակ է: Չնայած գործակալությունը մեծ չափով ապավինում է գործընկերային գնահատմանը, այն հաշվի է առնում նաև այլ գործոններ ևս՝ երաշխավորելու, որ փորձաքննությունն իրականացվել է գործակալության ուղեցույցներին համապատասխան: Օրինակ, գործակալությունը կարող է ուսումնասիրել փորձաքննման հաշվետվությունը, ինքնագնահատման հաշվետվությունը և հաստատության արձագանքը այցելության վերաբերյալ: Համոզվելով, որ փորձաքննությունը հետևել է որակի ապահովման շրջանակին՝ գործակալությունը վերջնական որոշում է կայացնում:

- Տարբերակ 3 - Փորձաքննող խումբը միայն դիտարկումներ է անում

Որոշ գործակալություններ փորձաքննողներից պահանջում են միայն խորհուրդ տալ գործակալությանը: Կամ նրանցից կարող է պահաջվել զեկուցել գործակալությանը հաստատության (ծրագրի) վերաբերյալ իրենց տպավորությունների մասին՝ հղում կատարելով գնահատման շրջանակին: Կառավարման մարմինը կամ այդ նպատակով նշանակված մարմինը հաշվի է առնում փորձաքննողների դիտարկումները՝ որպես որոշման կայացման համար հիմք կամ մուտքային ցուցանիշներ:

- Տարբերակ 4 - Գործակալության խորհուրդը փորձաքննության հաշվետվության հիման վրա ներկայացնում է երաշխավորություններ, իսկ պետական կառավարման մարմինը կայացնում է որոշում: Այդպես է օրինակ ՀՀԿ-ի պարագայում Հունգարիայում:

Երբ որոշումները կայացված են, հաջորդ խնդիրը որոշումների հրապարակումն է: «Հանրային հրապարակում, թե որոշումների գաղտնիության պահպանում» և «Ինչ չափով կամ գնահատման որ մասը պետք է հրապարակել». այս հարցերը մնում են հիմնախնդիրներ շատ երկրներում: Կան հիմնավորված փաստարկներ ի օգուտ ինչպես հրապարակման, այնպես էլ գաղտնիության պահպանման ռազմավարությունների: Այնուամենայնիվ, շատ համակարգերում ընդունված միտումը ուղղված է շահառուների համար առավելագույն տեղեկատվության հանրային հրապարակմանը:

Ըստ որակի ապահովման հաշվետվությունների հանրային հրապարակման դեմ փաստարկների, հաշվետվությունները առաջին հերթին հաստատությունների համար են: Շատ հաստատություններ վախենում են, որ քննադատական հաշվետվությունը կարող է բացասական ազդեցություն ունենալ ուսանողների ընդունելության, ուսման ու հետազոտության համար արտաքին դրամաշնորհների վրա:

Հանրային հրապարակման օգտին է այն փաստարկը, որ հաշվետվությունները պարունակում են արժեքավոր տեղեկատվություն բարձրագույն կրթության որակի վերաբերյալ, ինչը պոտենցիալ մեծ հետաքրքրություն է ներկայացնում հանրության համար: Մեկ այլ դրական փաստարկ է այն, որ հրապարակային հաշվետվությունը կարող է հետագայում պարտավորեցնել հաստատությանը բարելավելու թույլ կողմերը՝ փորձաքննությունների բացասական հետևանքներից խուսափելու նպատակով:

Կարելի է առանձնացնել որակի ապահովման արդյունքի հանրային հրապարակման հետևյալ տարբերակները.

- Տարբերակ 1 - Ոչ մի հրապարակային բացահայտում բացի հավատարմագրման կամ գնահատման մասին վերջնական որոշումից:

Միայն վերջնական արդյունքը՝ հավատարմագրման որոշումը կամ բազմաստիճան սանդղակով գնահատման արդյունքը կարող է հրապարակվել: Եթե առկա է հաշվետվություն, ապա այն նախատեսված է միայն հաստատության համար:

- Տարբերակ 2 - Սահմանափակ հանրային հրապարակում:

Հրապարակման ենթակա են հաշվետվության կարևոր մասերը կամ գլխավոր ամփոփագիրը: Հաշվետվության մասերը կարող են հասանելի լինել կարևոր շահառուների համար, ինչպիս օրինակ կառավարության դեպքում:

- Տարբերակ 3 - Ամբողջական հանրային հրապարակում:

Բոլոր մանրամասները, այդ թվում հաշվետվությունը հանրորեն հրապարակվում են:

Հարկ է նշել, որ որակի ապահովման գործընթացի արդյունքների հրապարակումը և հանրության համար առավելագույն տեղեկատվության հասանելիությունը դիտվում են որպես որակի ապահովման գործակալությունների հաջող պրակտիկաներ: Այնուամենայնիվ, կարևոր է հավասարակշռել հանրային հրապարակման չափը գործընթացի արդյունավետության հետ՝ հաշվի առնելով ազգային և տեղական պայմանները:

Երբ որակի ապահովման գործակալությունները միավորվում են և խորացնում իրենց համագործակցությունը, ապա դրանք համաձայնում են

հետևել հաջողված պրակտիկաներին: Բարձրագույն կրթության որակի ապահովման գործակալությունների միջազգային ցանցը (ԲԿՈԱԳՄՑ) և Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիան (ԲԿՈԱԵԱ) կիրառում են հանրային հրապարակման քաղաքականությունը իրենց անդամներից շատերի նկատմամբ: Չնայած ԲԿՈԱԳՄՑ չի ներառում հաշվետվությունների հրապարակումը իր ուղեցույցներում, սակայն որակի ապահովման գործակալություններից ակնկալում է թափանցիկ կերպով զեկուցել հաստատության փորձաքննության որոշումների վերաբերյալ և գնահատման արդյունքները համապատասխան ձևով հանրորեն հրապարակել:

Հրապարակային հաշվետվության բովանդակությունը կարող է տարբերվել կախված երկրի մշակութային համատեքստից: Այն նաև պայմանավորված է հաշվետվողականությանը վերաբերող պահանջներից:

Միաժամանակ, ոլորտի զարգացումները կարող են որակի ապահովման գործակալություններին դրդել հրապարակել հաշվետվությունները: Օրինակ, Իռլանդիայում հաստատության փորձաքննության հաշվետվությունը մինչ օրս չի հանդիսանում հրապարակային փաստաթուղթ: Անհրաժեշտության դեպքում հաշվետվության համապատասխան մասեր ուղարկվում են կազմակերպություններին՝ երաշխավորությունները ներդնելու նպատակով:

Այս պրակտիկան շուտով կփոխվի, քանի որ ԲԿՈԱԵԱ-ի կողմից Եվրոպական միության անդամ երկրների համար մշակված ուղեցույցները կարևորում են հաշվետվությունների հանրային հրապարակումը:

6. Որակի ապահովման արդյունքի հետևանքները

Որակի ապահովման արդյունքը շահառուների կողմից կարող է օգտագործվել տարբերի նպատակներով՝ կախված հաստատության սեփականության ձևից, հաճախորդներից և հակվածությունից դեպի հաշվետվողականությունը կամ բարելավումը՝ որակի ապահովման արդյունքը ունենում է տարբեր հետևանքներ և կիրառումներ: Օրինակ, Հավատարմագրման հունգարական կոմիտեն (ՀՀԿ) իրականացնում է հետևյալը՝

- լիցենզավորում է դիպլոմ շնորհող և դոկտորական ծրագրերը ու որոշում, թե արդյոք ԲՈՒՀ-երը կարող են իրականացնել դոկտորական կրթական ծրագրեր տրված ակադեմիական և/կամ գեղարվեստական կրթության ոլորտներում,
- պարբերաբար գնահատում է կրթության և կրթական գործունեության որակի մակարդակը առանձին հաստատություններում (հաստատությունների հավատարմագրում)՝ առնվազն ութ տարին մեկ անգամ,

- իր կարծիքն է հայտնում գիտական աստիճան շնորհող ծրագրերի վերաբերյալ, հաստատում է հաստատության լիցենզիան (դասավանդման թույտվություն) և դոկտորանտուրայի կանոնակարգերը,
- Կրթության նախարարությանը փոխանցում է նոր հաստատությունների և ֆակուլտետների ստեղծման / հավատարմագրման վերաբերյալ կարծիք՝ հիմնվելով նրանց դասավանդման / հետազոտական կարողությունների վրա,
- կարծիք է հայտնում Հունգարիայում օտարերկրյա ԲՈՒՀ-երի գործունեության մասին:

Նոր ծրագրեր և ֆակուլտետներ ստեղծելու թույտվությունը, որպես որակի ապահովման արդյունքի հետևանքներ, ակնհայտորեն հիմնվում են ՀՀԿ-ի կարծիքի վրա:

Որպես հետևանք որակի ապահովման արդյունքի կապումը ֆինանսավորման հետ եղել է լայն բանավեճի առարկա: Մասնագետների մի մասը գտնում են, որ ֆինանսավորման հետ ուղղակի կապը անհրաժեշտ է, որպեսզի որակի ապահովումը ունենա նշանակալի ազդեցություն կրթության որակի վրա: Մյուսները գտնում են, որ որակի ապահովման արդյունքը պետք է կապվի միայն անուղղակի նպաստների և խթանների հետ:

Որակի ապահովման հետևանքներին կամ կիրառումներին վերաբերող տարբերակները հետևյալն են.

- Տարբերակ 1 - Որակի ապահովման արդյունքը կապվում է ուղղակի ֆինանսավորման հետ

Բարձրագույն կրթության համակարգերում, որտեղ գերակա խնդիր է հաշվետվողականությունը, որակի ապահովման արդյունքը կարող է կապվել ֆինանսավորման հետ: Սա Ինդոնեզիայի ԲԿԱՀԽ-ի դեպքն է:

Մասնագետների մի մասը պնդում են, որ ցանկացած կապ ֆինանսավորման հետ արդյունավետ է, եթե ֆինանսավորման չափը զգալի է: Միաժամանակ կա նաև մտավախություն, որ կապը ուղղակի ֆինանսավորման հետ միայն կխթանի համապատասխանության ապահովման մշակույթը և բարելավումը այն ոլորտներում, որոնք կարող են ավելի շատ ֆինանսավորում բերել: Այդ պատճառով այն կարող է պարզապես չապահովել որակի բարելավում:

Ըստ զարգացող շատ երկրներում ֆինանսավորման հետ ուղղակի կապին դեմ բերվող փաստարկների, այն կարող է խոչընդոտել բարձրագույն կրթության հասանելիության մեծացմանը, հաստատությունների բազմազանությանը և նպատակների իրագործմանը: Եթե ֆինանսավորում

ստանալու համար անհրաժեշտ է դրական արդյունք, որակի ապահովումը կարող է վերածվել շատ խտրական գործընթացի՝ աղքատ հաստատությունների համար անհնարին դարձնելով որևէ ֆինանսավորման ստացումը իրենց թերությունների վերացման և իրական բարելավման համար: Շատերը, ովքեր դեմ են ֆինանսավորումը որակի ապահովման արդյունքի հետ կապելուն, նաև ընդունում են, որ, եթե ֆինանսավորման մի փոքր մաս կապված լինի որակի ապահովման արդյունքի հետ, ապա այն կունենա բարձր ցուցադրական արժեք, բայց քիչ բացասական հետևանքներ: Սա հանգեցնում է հաջորդ տարբերակին:

- Տարբերակ 2 - Որակի ապահովման արդյունքը կապված է խթանների հետ

Գերազանցության համար պարգևատրումը և որակի ապահովման դրական արդյունքի կապումը ֆինանսավորման հետ գոնե որոշակի գործընթացների համար, հայտնի է որպես հաստատություններին խրախուսելու արդյունավետ գործոն: Միայն հավատարմագրված հաստատություններին ուսանողական կրթաթոշակներ շնորհելու Մոնղոլիայի կառավարության որոշումը դրա հաջողված օրինակ է: ԱՄՆ-ում, որտեղ հավատարմագրումը կամավոր է, դաշնային ֆինանսավորումը և ուսանողական օգնության հիմնադրամների միլիոնավոր դոլարները կապվում են հավատարմագրման հետ, ինչը հավատարմագրումը դարձնում է քվազի-պարտադիր գործընթաց:

- Տարբերակ 3 - Որակի ապահովման արդյունքը միայն հեղինակություն է ապահովում

Այս տարբերակը հատուկ է կամավոր համակարգերի համար, ինչպես Ֆրանսիայում և Հնդկաստանում:

Այն երկրներում, որտեղ որակի ապահովման արդյունքը կապված չէ ուղղակի ֆինանսավորման հետ, հաստատությունները կարող են անմիջապես չունենալ ֆինանսական պատժամիջոցներ կամ պարգևներ: Այնուամենայնիվ որակի ապահովման գործակալության երաշխավորությունները կարող են հաշվի առնվել կառավարության ֆինանսավորման քաղաքականության և բարելավմանն ուղղված ներդրումների պլանների կազմման ժամանակ:

Սակայն ազդեցությունը կարող է գծային չլինել այն իմաստով, որ դրա արդյունքում պարտադիր չէ, որ լավ ԲՈՒՀ-երը ստանան շատ ֆինանսավորում, իսկ ցածր որակ ունեցողները՝ քիչ: Եթե ցածր որակի պատճառները շտկելուն անհրաժեշտ է բարելավման պլան, որը կառավարության աջակցության կարիքը ունի, ապա այն կարող է նույնիսկ հանգեցնել կառավարության կողմից բարելավման նպատակով ֆինանսավորման ավելացմանը:

Ներդիր 10. Ֆինանսավորման կապը որակի ապահովման արդյունքների հետ

Հունգարիա

«Հավատարմագրման որոշումները ուղղակիորեն կապված են ֆինանսավորման հետ: Միայն այն ուսումնական ծրագրերն են ստանում պետական ֆինանսավորում, որոնք Բարձրագույն կրթության հետազոտության խորհրդի կողմից հավատարմագրվել են և երաշխավորվել նախարարության վերջնական հաստատման համար,: Քանի որ հավատարմագրումը պահանջ է դիպլոմների, կոչումների շնորհման համար, առանց հավատարմագրման ծրագրերը չեն կարող գովազդվել ուսանողների, գործատուների և ծնողների կողմից ֆինանսավորվող «շուկայում»»:

Աղբյուր՝ Կոզմա, (Kozma), 2003: 64.

Միացյալ Թագավորություն

Մենք (Անգլիայի Բարձրագույն կրթության ֆինանսավորման խորհուրդը) հետազոտությունների համար պետական միջոցների միակ խոշորագույն տրամադրողն ենք ԲՈՒՀ-երին: ... 2004-2005թթ. հետազոտությունների մեր ֆինանսավորումը կազմում է 1,081 մլն ֆունտ և բաշխված է երկու հիմնական ուղղություններով՝

- Որակով պայմանավորված հետազոտության ֆինանսավորում, որը կապված է հետազոտական գործունեության որակի և ծավալի հետ (1,061.4 մլն),
- Կարողությունների ձևավորման ֆինանսավորում (17.5 մլն)

Հետազոտության որակը գնահատվում է Հետազոտության գնահատման գործընթացի (ՀԳԳ) ընթացքում: Վերջին ՀԳԳ-ը անց է կացվել 2001 թվականին, որի ընթացքում յուրաքանչյուր հաստատությանը շնորհվել է ռեյթինգ 1-ից 5 աստղ սանդղակով՝ հետազոտության յուրաքանչյուր միավորի որակի գնահատման համար: 1, 2, 3բ և 3ա ռեյթինգները ֆինանսավորում չեն ապահովում, մինչդեռ 5* ռեյթինգը ներգրավում է երեք անգամ ավելի շատ ֆինանսավորում, քան 4 ռեյթինգը միևնույն ծավալի հետազոտական գործունեության համար: Արդյունքում հետազոտման մեր ֆինանսավորումը խիստ ընտրողական է:

Աղբյուր՝ ԱԲԿՖԽ, 2004.

7. Իրագործում

Որակի ապահովման արդյունքի հրապարակումից հետո սպասվում է, որ հաստատությունը կձեռնարկի փորձաքննության մեջ նշված երաշխավորությունների կամ հիմնահարցերի առնչությամբ անհրաժեշտ գործողություններ: Ֆինանսավորման հետ կապերը, խթանները և սանկցիաները կարող են շահագրգռող գործոններ լինել շատ ԲՈՒՀ-երի կողմից փորձաքննության արդյունքների հիման վրա քայլեր ձեռնարկելու համար: Այնուամենայնիվ զարգացած համակարգերում ԲՈՒՀ-երի մասնագիտական պարտավորվածությունն է, որ դրդրում է գործողությունների և բարելավման: Քննարկենք իրագործման ռազմավարության երեք տարբերակներ:

- Տարբերակ 1 - Իրագործման ընթացակարգերը ներառված չեն գնահատման գործընթացի մեջ

Գնահատման գործակալության պատասխանատվությունը և պաշտոնական դերը ավարտվում է գնահատման հաշվետվության հրապարակման հետ: Հաստատությունները պատասխանատու են իրագործման միջոցառումների պլանավորման և իրականացման համար: Կախված երաշխավորությունների բնույթից՝ կրթության նախարարությունները կամ այլ շահառուներ կարող են արձագանքել գնահատականներին:

Ներդիր 11. Իրագործման մեխանիզմներ, որոնք ներառված չեն որակի ապահովման ընթացակարգի մեջ (Նորվեգիա)

Արտաքին կոմիտեների մանդատները պահանջում են, որ վերջնական հաշվետվությունները խորհրդատվություն տրամադրեն հաստատություններին առ այն, թե ինչ միջոցառումներ կարելի է ներդնել որակի պահպանման, թույլ կողմերի բարելավման և մարտահրավերներին դիմակայելու համար:

Այնուամենայնիվ MNC-ի գործառնական խնդիրներից չէ հետևել, որ հաստատությունները գործեն գնահատականներից բխող խորհուրդների հիման վրա: Դրա պատասխանատվությունը դեռևս ընկած է նախարարության և հաստատությունների վրա: Բայց NNC-ը կպահանջի իրեն տեղյակ պահել իրագործման միջոցառումների և դրանց արդյունքներ մասին:Դատելով նրանից, թե ինչ•տեղի ունեցավ Տրոմսոյի համալսարանի գնահատումից հետո՝ նախարարությունը կպահանջի հաստատություններին կազմել գործողության պլաններ արտաքին հաշվետվությունները իրենց ներկայացվելուց և նախարարության հետ քննարկելուց հետո կես տարվա համար:

Աղբյուր `Hamálainen et al , 2001

Մոդուլ 2 - Որակի արտաքին ապահովման գործընթացի անցկացում

- Տարբերակ 2 - Իրագործումը որպես որակի ապահովման ընթացակարգի մաս

Որակի ապահովման գործակալությունները կարող են ունենալ սահմանված իրագործման ընթացակարգեր՝ խստության տարբեր մակարդակներով: Որոշները կարող են պահանջել ԲՈՒՀ-երի կողմից պարտադիր գործողության ձեռնարկում: Մյուս դեպքերում դա կարող է լինել «մեղմ մոտեցում»՝ ԲՈՒՀ-երից ակնկալվող մասնագիտական պարտավորվածության հիման վրա:

Միացյալ Թագավորությունում որակի արտաքին ապահովման փորձաքննության հաշվետվությունը միաժամանակ բացահայտում է հաջողված փորձը և ոլորտները, որտեղ Գործակալության կարծիքով բարելավման գործողություն ձեռնարկելու անհրաժեշտություն կա: Այդպիսի գործողության կետերը դասակարգվում են որպես «էական», «խորհուրդ տրվող» կամ «ցանկալի»: Գործողության ցանկացած կետի՝ որպես «էական» գնահատվելու դեպքում, հաշվետվության հրապարակումից 12 ամիս հետո, գործակալությունը սովորաբար պահանջում է ձեռնարկված գործողությունների վերաբերյալ զեկուցում խնդրոհարույց ոլորտների կապակցությամբ:

Շվեդիայում, աուդիտի ավարտից մեկ տարի հետո Համալսարանի ղեկավարը և գնահատման ազգային գործակալությունից նախագծի ղեկավարը միասին այցելում են հաստատություն: Այնտեղ նրանք ղեկավարության հետ քննարկում են իրագործման քայլերը:

Նիդեռլանդներում Կրթության նախարարության տեսչությունը պատասխանատու է գնահատման ընթացակարգերի որակի մետագնահատման համար: Տեսչությունը կարող է խորհուրդ տալ Նախարարությանը համապատասխանաբար կրճատել կամ դադարեցնել ֆինանսավորումը, եթե հաստատությանը չի հաջողվում ապահովել բավարար իրագործում:

Դանիայում նախարարական հրամանը սահմանում է իրագործման և հաստատությունների, կառավարության ու խորհրդատվական համակարգի պատասխանատվությունների ուղեցույցներ:

Ավստրալիայում, աուդիտից մոտավորապես 18 ամիս հետո ԱՀՈԳ-ի կողմից ստուգված ԲՈՒՀ-երից պահանջվում է պատրաստել «առաջընթացի հրապարակային հաշվետվություն»:

Ներդիր 12. Իրագործման մեխանիզմներ, որոնք ներառված են որակի ապահովման ընթացակարգի մեջ (Ավստրալիա)

Աուդիտի զեկույցի հրապարակումից մոտ 18 ամիս հետո ԱՀՈԳ-ը դիմում է ստուգված հաստատությանը՝ պահանջելով ԱՀՈԳ-ին ներկայացնել «Առաջընթացի հաշվետվություն»: Այն պետք է հրապարակվի ստուգված հաստատության ինտերնետային կայքում: ԱՀՈԳ-ը չի ստուգելու առաջընթացի հաշվետվությունը, բայց ուշադրություն կդարձնի, թե արդյոք այն հստակ ցույց է տալիս, թե ինչ է արել հաստատությունը՝ ի պատասխան երաշխավորությունների և փաստարկումների: Եթե այս տեսակետից ԱՀՈԳ-ը գոհ չլինի ներկայացվածից, ապա հաստատությունից կպահանջի բարելավել հանրային իրազեկումը ինչպես հարկն է: Երբ «Առաջընթացի հաշվետվությունը» տեղադրվում է ստուգված հաստատության ինտերնետային կայքում, հաստատությունը տեղյակ է պահում ԱՀՈԳ-ին կայքի հասցեի (URL) մասին, իսկ ԱՀՈԳ-ը հղումներ է տալիս «Առաջընթացի հաշվետվությանը» իր կայքից:

Գործընթացը.

- ԱՀՈԳ-ը ստանում է ստուգված հաստատության «Առաջընթացի հաշվետվությունը»:
- Հնարավորության դեպքում հաշվետվությունը քննարկվում է սկզբունական հանձնաժողովում ԱՀՈԳ-ի անձնակազմի անդամի և հանձնաժողովի նախագահի կողմից:
- ԱՀՈԳ-ը չի ստուգելու հաշվետվությունը, բայց ուշադրություն է դարձնում, թե արդյոք այն հստակ ցույց է տալիս, թե ինչ է արել հաստատությունը՝ ի պատասխան երաշխավորությունների:
- ԱՀՈԳ-ը կիրառում է հետևյալ թեստը. «Կարո՞ղ է տեղեկացված անձնավորությունը, կարդալով երաշխավորությունները/փաստարկումների և առաջընթացի հաշվետվությունը, հասկանալ, թե ինչ է արվել և արդյոք հիմնահարցը լուծվել է»:
- Եթե ԱՀՈԳ-ը բավարարված չէ հաշվետվությամբ, ապա Գործադիր տնօրենը գրում է հաստատության գլխավոր գործադիր տնօրենին՝ հայտնելով հաշվետվության անբավարար լինելու, դրա պատճառների, ուղղման ժամկետի և հարցերը քննարկելու ցանկության մասին:
- Եթե Առաջընթացի հաշվետվությունը չի ուղղվում, ԱՀՈԳ-ի գործադիր տնօրերը զեկուցում է ԱՀՈԳ-ի Խորհրդին, իսկ ԱՀՈԳ-ի Խորհրդի նախագահը գրում է հաստատության Գլխավոր գործադիր տնօրենին (պատճեն ուղարկելով համապատասխան նախարարին) և կազմա-

կերպվում է խորհրդակցական գործընթաց՝ օգտագործելով խորհրդակցական խումբ:

- Խորհրդակցական խմբում ներգրավվում են երկու անդամներ հաստատության կողմից (ընտրված հաստատության կողմից), ԱՀՈԳ-ի անձնակազմի մեկ անդամ և ԱՀՈԳ-ի մեկ աուդիտոր (ընտրված ԱՀՈԳ-ի կողմից):
- Խորհրդակցության արդյունքի մասին զեկուցվում է ԱՀՈԳ-ի խորհրդին վերջնական որոշում կայացնելու համար:
- Որոշումը կարող է լինել փոխադարձ համաձայնեցված գործողությունների շրջանակ, որը հետագայում հրապարակվում է ինտերնետային կայքում՝ Առաջընթացի հաշվետվության հետ միասին:
- Որոշումը կարող է արտացոլել անհամաձայնություն և հետևաբար զեկույց նախարարին՝ հավանական սանկցիաների կիրառման առաջարկով:
- Առաջընթացի բավարար հաշվետվությունը տեղադրվում է հաստատության ինտերնետային կայքում, իսկ ԱՀՈԳ-ի կայքից տրվում է հղում:

Աղբյուր՝ ԱՀՈԳ, 2006.

- Տարբերակ 3 - Սա նույնն է, ինչ տարբերակ 1-ը՝ որոշ փոփոխություններով

Իրագործումը հաստատության պատասխանատվությունն է: Սակայն քանի որ հավատարմագրման որոշումները ուժի մեջ են սահմանափակ ժամանակահատվածում, իրագործումը խստորեն հաշվի է առնում վերահավատարմագրման փուլում:

Այս տարբերակը տարբեր կերպ կապված է որակի ապահովման ցիկլերի հետ: Գործակալությունը կարող է որոշել ստուգել նախկին երաշխավորությունները և իր վերահավատարմագրման որոշումները հիմնել այն բանի վրա, թե ինչպիսի գործողություններ է իրականացրել հաստատությունը կամ ծրագիրը այդ երաշխավորությունների իրագործման ուղղությամբ: Մասնավորապես, այն կարող է որոշել ուշադրություն դարձնել որակի ապահովման վաղ փուլում հայտնաբերված թույլ կողմերի և հաստատության կամ ծրագրի կողմից այդ թույլ կողմերի ուժեղացման ուղիների վրա:

Վարժություն 5

Ուսումնասիրեք որակի ապահովման տարբեր գործակալությունների ինտերնետային կայքերը և պարզեք վերահավատարմագրման ընթացակարգերը Ստուգեք, թե գոյություն ունի արդյոք կապ առաջին փորձաքննության հիման վրա ձեռնարկված գործողությունների և հետագա փորձաքննության միջև ԳՀԱՀ-ի ինտերնետային կայքը (www naac-india org) կարող է Ձեզ օգտակար լինել Այն ցույց է տալիս, թե ինչպես է ԳՀԱՀ-ը կապել «գնահատման զեկույցի հիման վրա ձեռնարկված գործողությունը» և վերահավատարմագրման ռազմավարությունը

Քանի որ գնալով գնահատման պարտադիր համակարգերը ավելի շատ են ստեղծվում, համապատասխան և արդյունավետ իրագործման ընթացակարգերի խնդիրը դառնում է վճռորոշ: Կարելի է պնդել, որ իրագործումը պետք է ավելացվի հիմնական մեթոդաբանական սկզբունքներին՝ գնահատման ընթացակարգերը հաստատելիս հաշվի առնելու նպատակով:

Յուրացված դասեր

Դաս 1 - Որակի ապահովման ձևերի բազմազանությունը պայմանավորված է տեղական համատեքստի տարբերություններով

Տարբեր երկրներում բարձրագույն կրթության համակարգերը, դրանց քաղաքականությունները և զարգացման փուլերը տարբեր են: Հետևաբար որակի ապահովման գործընթացները նույնպես տարբերվում են: Նրանք կարող են դրսևորվել բազմաթիվ համակցություններով և ծառայել տարբեր նպատակների: Մասնավորապես, ազգային համատեսքտերից և այլ նկատառումներից ելնելով որակի ապահովման գործակալությունները ունեն տարբեր քաղաքականություններ: Դրանք կարող են, այլ հարցերից զատ, ներառել սկզբնական պայմանների ու չափանիշների սահմանման, ինքնագնահատման ուղորդման, արտաքին գնահատման անցկացման, որակի ապահովման գծով վերապատրաստումների կազմակերպման, որոշման կայացման, որակի ապահովման արդյունքի վերաբերյալ հաշվետվության ներկայացման և իրագործման տարբեր տարբերակներ:

Որակի ապահովման քաղաքականության և ձևերի ընտրությունը պետք է կայացվի ազգային համատեքստին համահունչ և որակի ապահովման մեխանիզմից ակնկալվող նպատակներին համապատասխան:

Դաս 2 - Որակի ապահովման տարբեր ձևերն ունեն հիմնական ընդհանուր տարրեր, որոնց մեջ ինքնավերլուծությունը և գործընկերային փորձաքննությունը գերիշխող ընդհանրություններն են:

Չնայած որակի ապահովման գործընթացների տարբերությանը, գոյություն ունի համաձայնություն էական տարրերի շուրջ, ինչը ապահովում է որակի ապահովման շրջանակի հիմքը: Որակի ապահովման գործընթացների մեծամասնությունը հաստատությունից (կամ ծրագրից) պահանջում են տրամադրել համապատասխան տեղեկատվություն՝ ըստ նախապես որոշված և հանրորեն հրապարակված չափանիշների: Շատ դեպքերում պահանջվում է նաև ինքնավերլուծություն և ինքնագնահատում, որից ակնկալվում է ստանալ տեղեկատվության քննադատական վերլուծություն: Չնայած քննադատական վերլուծության կարևորությանը այն միշտ հնարավոր չէ ապահովել: Միաժամանակ, այն պետք է համարվի նպատակ՝ առնվազն միջնաժամկետ կամ երկարաժամկետ հեռանկարում:

Հաստատության կամ ծրագրի կողմից տրամադրված տեղեկատվությունը ենթակա է փորձաքննության փորձագետների արտաքին խմբի կողմից: Որակի ապահովման գործակալությունները որակի ապահովման վերաբերյալ որոշումներ կայացնելիս արտաքին փորձաքննող խմբի ցուցումները կամ գնահատականը օգտագործում են տարբեր կերպ: Ակնհայտորեն տարբեր մոտեցումները ունենում են տարբեր հետևանքներ:

Դաս 3 - Արտաքին գործընկերների ընտրություն և վերապատրաստում՝ հաշվի առնելով որակի ապահովման մեխանիզմների կիրառման գործում նրանց կարևոր դերը

Անհրաժեշտ է համատեղել գործընկերային փորձագետների տարբեր խմբեր՝ համընդգրկուն փորձաքննության երաշխավորման համար: Այն հատկապես կարևորվում է, երբ հավատարմագրումը իրականացվում է հաստատության մակարդակով: Ավելի ու ավելի շատ երկրներ տարբեր ոլորտների մասնագետների են ընդգրկում գործընկերային փորձագետների խմբերի մեջ:

Հաջողված պրակտիկա է փորձագետների տվյալների բազայի ստեղծումը հատկապես բարձրագույն կրթության խոշոր համակարգերում: Տվյալների այսպիսի բազան պետք է ներառի նրանց, ովքեր արդեն մասնակցել են գործընկերային խմբի այցերի և ապացուցել են իրենց անաչառ գնահատողներ լինելը:

Մեկ այլ հաջողված պրակտիկա է գործընկերներին տեղանք այցելության վերաբերյալ ձեռնարկ տրամադրելը՝ այցելությունը և տվյալների հավաքագրումը թափանցիկ ձևով իրականացնելու համար:

Իրենց դատողություններում գործընկերային փորձագետների մասնագիտական անկախության մակարդակը տարբերվում է ըստ համակար-

գերի: Որոշ համակարգերում գործընկերները բավական ազատ են իրենց որակական դատողություններում: Մյուսներում փորձագետները պետք է օգտագործեն նախասահմանված քանակական սանդղակը:

Դաս 4 - Հաշվետվությունների համակարգերը տատանվում են երկաստիճան սանդղակով գնահատման հաշվետվություններից մինչև բազմաստիճան գնահատականով մանրակրկիտ հաշվետվությունները

Որակի ապահովման արդյունքի հաշվետվության տարբերակի ընտրությունը բարդ գործընթաց է, որը պահանջում է հաշվի առնել շատ գործոններ: Հիմնական տարբերակները տատանվում են պաշտոնական կարգավիճակի («հավատարմագրված» կամ «չհավատարմագրված») հայտարարումից մինչև բազմաստիճան կամ բազմագործընթացային որոշումներ:

Երբ որակի ապահովումից ակնկալվում է որակի շեմային մակարդակի ստուգում, այդ նպատակի համար ընտրվում է երկաստիճան սանդղակը: Այս մոտեցմանը կարելի է հանդիպել այն համակարգերում, որտեղ որակի ապահովումն օգտագործվում է կանոնակարգման, թույտվության կամ ճանաչման համար: Այն տեղեկացնում է, թե արդյոք հաստատությունը կամ ծրագիրը բավարարել են հիմնական պայմանները, սակայն անկարող է տարբերակել որակի տարբեր մակարդակները:

Որակի տարբեր մակարդակներ ունեցող մեծ համակարգերում նախընտրում են բազմաստիճան գնահատմամբ արդյունքը: Գնահատման բազմաստիճան սանդղակի օրինակ է երկսանդղակ որոշման (հավատարմագրված/չհավատարմագրված) համադրումը հավատարմագրման կարգավիճակի տարբերակված տևողության հետ:

Որակի ապահովման որոշումը կամ արդյունքը կարող է նաև հանգեցնել բազմափուլ գործընթացի: Առաջին հավատարմագրումից հետո հաստատությունը կամ ծրագիրը ստանում է որոշակի կարգավիճակ, որը կարելի է բարելավել, վերահավատարմագրում անցնելով: Այսպիսի համակարգ ներդրվել է որակի տարամետ մակարդակներ ունեցող երկրներում: Այն նաև հաստատությունների համար ապահովում է լրացուցիչ խթաններ՝ ձգտելու որակի ավելի բարձր մակարդակների:

Մեկ այլ տարբերակ է միայն հաշվետվության ներկայացումը: Եթե որակի ապահովման առարկան այն գործընթացներն են, որոնց միջոցով հաստատությունը հետևում է իր ակադեմիական չափորոշիչներին ու գործում է երաշխավորելու և բարձրացնելու իր կրթական առաջարկների որակը, ապա որակի ապահովման արդյունքը կարող է լինել միայն հաշվետվությունը, ինչպես տիպային աուդիտի դեպքում:

Յուրաքանչյուր տարբերակ հիմնված է բազմաթիվ նկատառումներից հիմնականում մեկի վրա, որն էլ պայմանավորում է

ընտրությունը: Հարկ է նշել, որ այս տարբերությունների սահմանազատումը շատ հստակ չէ: Գործակալությունը կարող է կիրառել դրանց համակցություն՝ հաճախ ընդունելով երկաստիճան սանդղակը որպես հիմք և արդյունքին ավելացնելով մեկ կամ ավելի չափումներ: Վերոնշյալ տարբերակների հարմար համակցությունը ընտրվում է կախված ազգային համատեքստից և որակի ապահովման համակարգի նպատակներից:

Դաս 5 - Որակի ապահովման արդյունքները օգտագործվում են տարբեր կերպ, իսկ հետևանքները տարբերվում են ըստ երկրների

Փորձաքննող խմբի հաշվետվությունը կամ երաշխավորությունը կարևոր հիմք են գործակալության կողմից որակի ապահովման որոշման կայացման հարցում: Կախված որակի ապահովման գործընթացում գործընկերների ակնկալվող դերից (նրանք կարող են միայն խորհուրդ տալ գործակալությանը կամ կարող են նաև կարծիք հայտնել որակի վերաբերյալ)՝ գործընկերային խմբի հաշվետվությունները կարող է տարբեր հետևանքներ ունենալ: Որակի ապահովման որոշ գործակալություններ միայն ստուգում են գործընկերային խմբի այցի համապատասխանությունը և ընդունում խմբի հաշվետվությունը որպես վերջնական որոշում:

Այլ դեպքերում պետական կառավարման լիազոր մարմինը (ինչպիս օրինակ Կրթության նախարարությունը) կամ այդ նպատակով նշանակված մարմինը որակի ապահովման արդյունքի վերաբերյալ որոշում կայացնելիս տարբեր գործոնների հետ միասին հիմք են ընդունում ներկայացված դիտարկումները:

Երբ որակի ապահովման արդյունքի վերաբերյալ որոշում է կայացվում, դրա ամբողջական կամ մասնակի հանրային հրապարակումը դիտվում է որպես որակի ապահովման գործակալությունների հաջողված փորձառություն: Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է հավասարակշռել հանրային հրապարակման չափը գործընթացի արդյունավետության հետ՝ հաշվի առնելով ազգային և տեղական պայմանները:

Որակի ապահովման արդյունքների բազմաթիվ հետևանքներից կապը ֆինանսավորման հետ եղել է վիճահարույց թեմա: Ոմանք պնդում են, որ ֆինանսավորման հետ ուղղակի կապն անհրաժեշտ է, եթե ցանկանում ենք, որ որակի ապահովումը նշանակալի ազդեցություն ունենա կրթության որակի վրա: Մյուսները պնդում են, որ որակի ապահովման արդյունքը անհրաժեշտ է կապել միայն անուղղակի օգուտների և խթանների հետ:

Որակի ապահովման գործակալությունները տարբերվում են որակի ապահովմանը հաջորդող իրագործման նկատմամբ իրենց մոտեցումներում: Շատ դեպքերում գնահատող գործակալության պատասխանատվությունը և պաշտոնական դերը ավարտվում են գնահատման հաշվե-

տվության հրապարակումով: Հաստատությունները պատասխանատու են իրագործման միջոցառումների պլանավորման և իրականացման համար:

Կախված երաշխավորությունների բնույթից, կրթության նախարարությունները կամ այլ շահառուներ կարող են արձագանքել գնահատականներին· Որակի արտաքին ապահովման որոշ գործակալությունների դեպքում պարտադիր իրագործումը որակի ապահովման ընթացակարգի բաղկացուցիչ մասն է: Գոյություն ունեն նաև գործակալություններ, որտեղ իրագործումը հաստատության պարտականությունն է:

Այնուամենայնիվ, քանի որ հավատարմագրման որոշումները ուժի մեջ են սահմանափակ ժամանակահատվածում, իրագործումը խստորեն հաշվի է առնվում վերահավատարմագրման փուլում: Գործակալությունը կարող է հիմք ընդունել նախկին երաշխավորությունները և իր վերահավատարմագրման որոշումները կայացնել հաշվի առնելով, թե ինչպիսի գործողություններ է իրականացրել հաստատությունը կամ ծրագիրը այդ երաշխավորությունների իրագործման ուղղությամբ: Մասնավորապես, այն կարող է որոշել ուշադրություն դարձնել որակի ապահովման վաղ փուլում հայտնաբերված թույլ կողմերի և հաստատության կամ ծրագրի կողմից դրանց բարելավման ուղիների վրա:

Գրականություն

1. Accrediting Council for Independent Colleges and Schools (ACICS). 2006. *Evaluation procedures and guidelines*. Available at http://www.acics.org/accreditation/documents/EvalProGuideAugust292006.pdf

2. Arcelo, A.A. 2003. *In pursuit of continuing quality in higher education through accreditation: the Philippine experience*. Paris: IIEP-UNESCO.

3. Australian Universities Quality Agency 2006 (June). *Audit manual* Melbourne. AUQA

4 Stella, A. 2002 *External quality assurance in Indian higher education: case study of the National Assessment and Accreditation Council (NAAC)* Paris: IIEP-UNESCO

5. Stella, A. 2005 "External quality assurance in India. the development of a decade". In: *IIEP Newsletter, 23*(1), January–March, 9-10.

6. Stella, A. 2004. *Quality assurance mechanisms in higher education in the Asia-Pacific* Desk study overview commissioned by the Higher Education Division of UNESCO, Paris.

7. El-Khawas, E 2001. *Accreditation in the United States: origins, developments and future prospects*. Paris: IIEP-UNESCO

8. Higher Education Funding Council for England (HEFCE). 2004. *Funding higher education in England: how HEFCE allocates its funds*. Bristol: HEFCE. Available at· www.hefce.ac.uk/pubs/hefce/2004/04_23/

9. Hämäläinen, K. et *al*. 2001. *Institutional evaluations in Europe: ENQA workshop reports 1*. Helsinki: European Network for Quality Assurance in Higher Education (ENQA).

10. Philippine Accrediting Association of Schools, Colleges and Universities, 2006. Primer for Accreditation, Manila, PAASCU

11. Revelo Revelo, J ; Augusto Hernandez, C. 2003. *The national accreditation system in Columbia: experiences from the National Council of Accreditation (CNA)*. Paris: IIEP-UNESCO.

12. Kozma, T. 2003. *Accreditation in the higher education system in Hungary: a case study for international comparison*. Paris: IIEP-UNESCO.

13. Thune, C. 2000. *Evaluation of European higher education: a status report*.Helsinki: European Network for Quality Assurance in Higher Education (ENQA).

Ինտերնետային ռեսուրսներ

14 Australian Universities Quality Agency (AUQA) web site: www.auqa.edu.au

15. Council on Higher Education (CHE) web site, South Africa: www.che ac.za

16. Council on Higher Education Accreditation (CHEA) web site, USA: www chea org

17 European Association for Quality Assurance in Higher Education web site: www.enqa.org

18. Higher Education Funding Council of England (HEFCE) web site, UK www hefce.ac.uk

19. Hong Kong Council for Academic Accreditation (HKCAA) web site. www hkcaa edu.hk

20. International Network for Quality Assurance Agencies in Higher Education (INQAAHE) web site: www.inqaahe nl

21. Lembaga Akreditasi Negara (LAN) web site, Malaysia: www.lan.gov my

22. Middle States Commission on Higher Education web site, USA: www.msche org

23. National Assessment and Accreditation Council (NAAC) web site, India. www.naac-india.org

24 National Council for Higher Education Accreditation (NCHEA) web site, Mongolia: www.accmon.mn

25 New Zealand Universities Academic Audit Unit (AAU) web site: www.aau.ac.nz,

North Central Association of Colleges and Schools (NCA-HLC) web site, USA. www northcentralassociation.org

26. North Central Association of Colleges and Schools (NCA-HLC), Higher Learning Commission web site, USA·

27 www.ncahigherlearningcommission org

28. Northwest Commission on Colleges and Universities (NWCCU) web site: www.nwccu.org

29. Quality Assurance Agency (QAA) web site, UK: www qaa.ac.uk

Մոդուլ 3

..... ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՀԻՄՆՈՒՄ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Մոդուլի նպատակները **162**

Խորհելու հարցեր **163**

Ներածություն **164**

Որակի ապահովման գործակալության հիմնում **166**

1. Որակի ապահովման գործակալության իրավական կարգավիճակը 166
2. Բարձրագույն կրթության համակարգի չափերը 175

Որակի ապահովման գործակալության գործառույթները **178**

1. Կիրառվելիք որակի ապահովման սխեմայի սահմանների, շրջանակի և ընդհանուր կողմնորոշվածության որոշումը 180
2. Մեթոդաբանության մշակում 181
3. Գործընթացների կառավարում 184
4. Որոշումների կայացում և արդյունքների ներկայացում 199
5. Կարողությունների ձևավորում 203

Գործակալության կառուցվածքը **208**

1. Կառավարումը և կազմակերպչական կառուցվածքը 208
2. Անհրաժեշտ ռեսուրսներ 215

3.Տեղեկատվական համակարգ 219

Գործակալության վստահելիությունը և հաշվետվողականությունը **223**

1.Որակի ապահովման գործընթացի վստահելիությունը 223

2.Հաշվետվողականության միջոցները 226

Յուրացված դասեր **232**

Գրականություն **234**

Հապավումների ցանկ

ԱՀԽ	Ավստրիական Հավատարմագրման Խորհուրդ AAC Austrian Accreditation Council
ՖՈՔՀՀԳ	Ֆիլիպինների Որակավորված Քոլեջների և Համալսարանների Հավատարմագրման Գործակալություն AACCUPAccrediting Agency of Chartered Colleges and Universities of the Philippines
ՀՍՈԱԻ	Հավատարմագրման, Հավաստագրման և Որակի Ապահովման Ինստիտուտ ACQUIN Accreditation, Certification and Quality Assurance Institute
ՆՍՊԻՄ	Նովա Սկոտիայի Պրոֆեսիոնալ Ինժեներների Ասոցիացիա APENS Association of Professional Engineers of Nova Scotia
ԿՕՈԱՀԳ	Կրթական Ծրագրերի Որակի Ապահովման և Հավատարմագրման Գործակալություն AQAS Agency for Quality Assurance and Accreditation of Study Programs
ԿՈԿԾ	Կրթական Որակի Կատարելագործման Ծրագիր AQIP Academic Quality Improvement Program
ԱՀՈԳ	Ավստրալիական Համալսարանների Որակի Գործակալություն AUQA Australian Universities Quality Agency
ԲԿՀԱԽ	Բարձրագույն Կրթության Հավատարմագրման Ազգային Խորհուրդ (Ինդոնեզիա) BAN-PT *Badan Akreditasi Nasional - Perguruan Tinggi* (National Accreditation Board for Higher Education, Indonesia)
ԲԿԽ	Բարձրագույն Կրթության Խորհուրդ (Հարավային Աֆրիկա) CHE Council of Higher Education (South Africa)

ՀԱԽ	Հավատարմագրման Ազգային Խորհուրդ (Կոլումբիա) CNA National Council for Accreditation (Colombia)
ՕՀԽ	Օնտարիոյի Համալսարանների Խորհուրդ COU Council of Ontario Universities
ՕՀՆՀ	Օնտարիոյի Համալսարանների Նախագահների Հանձնաժողով CPUO Committee of Presidents of the Universities of Ontario
ՀԿՈՒԽ	Հեռավար Կրթության և Ուսուցման Խորհուրդ (ԱՄՆ) DETC Distance Education and Training Council (USA)
ՀԿԽ	Հեռավար Կրթության Խորհուրդ (Հնդկաստան) DEC Distance Education Council (India)
ԲԿՈԱԵԱ	Բարձրագույն Կրթության Որակի Ապահովման Եվրոպական Ասոցիացիա ENQA European Association for Quality Assurance in Higher Education
ՈԱԱ	Որակի Արտաքին Ապահովում EQA External Quality Assurance
ԲԿՄՀՀ	Բիզնեսի Կազմակերպման Միջազգային Հավատարմագրման Հաստատություն FIBAA Foundation for International Business Administration Accreditation
ՀՀՀ	Հունգարական Հավատարմագրման Հանձնաժողով HAC Hungarian Accreditation Committee
ԲԿԱ	Բարձրագույն Կրթության Ակտ HEA Higher Education Act
ԲՈՒՀ	Բարձրագույն Ուսումնական Հաստատություն

HEI Higher Education Institution

ԲԿՈՀ — Բարձրագույն Կրթության Որակի Հանձնաժողով (Հարավային Աֆրիկա)
HEQC Higher Education Quality Committee (South Africa)

ՀԿՈՒՀԽ — Հոնգ Կոնգի Ուսումնական Հավատարմագրման Խորհուրդ
HKCAA Hong Kong Council for Academic Accreditation

ՀՆՄԱ — Համալսարանների Նախագահների Միջազգային Ասոցիացիա
IAUP International Association of University Presidents

ԿԲԿԶԻ — Կոլումբիայի Բարձրագույն Կրթության Զարգացման ինստիտուտ
ICFES *Instituto Colombiano Para el Fomento de la Educación Superior*

ԲԿՈԱԳՄՑ — Բարձրագույն Կրթության Որակի Ապահովման Գործակալությունների Միջազգային Ցանց
INQAAHE International Network for Quality Assurance Agencies in Higher Education

ԳՀԱԽ — Գնահատման և Հավատարմագրման Ազգային Խորհուրդ (Հնդկաստան)
NAAC National Assessment and Accreditation Council (India)

ԳԱՀԳԱԻ — Գիտական Աստիճանների և Համալսարանների Գնահատման Ազգային Ինստիտուտ (Ճապոնիա)
NIAD-UE National Institution for Academic Degrees and University Evaluation (Japan)

ՆԶՀՈՒԱԿ — Նոր Զելանդիայի Համալսարանների Ուսումնական Աուդիտի Կենտրոն
NZUAAU New Zealand Universities Academic Audit Unit

ՕԱԿԽ — Օնտարիոյի Ասպիրանտական Կրթության Խորհուրդ
OCGS Ontario Council on Graduate Studies

ԴՔՀՀՖԱ	Դպրոցների, Քոլեջների և Համալսարանների Հավատարմագրման Ֆիլիպինների Ասոցիացիա PAASCUPhilippine Accrediting Association of Schools, Colleges and Universities
ՈԱ	Որակի Ապահովում QA Quality Assurance
ՈԱԳ	Որակի Ապահովման Գործակալություն (Մեծ Բրիտանիա) QAA Quality Assurance Agency (UK)
ՀԴՀ	Համալսարանական Դրամաշնորհների Հանձնաժողով (Հոնգ Կոնգ) UGC University Grants Committee (Hong Kong)

Ներդիրների ցանկ

Ներդիր 1. Որակի ապահովման գործակալությունների իրավական կարգավիճակը (Հունգարիա, Կանադա, Ֆիլիպիններ և Եգիպտոս) 169

Ներդիր 2. Նովա Սկոտիայի Պրոֆեսիոնալ Ինժեներների Ասոցիացիա (ՆՍՊԻԱ)..... 173

Ներդիր 3. Դանիական Գնահատման Ինստիտուտ (ԴԳԻ) 186

Ներդիր 4. Արտաքին գնահատողների գործառույթներն ու պարտականությունները (Միացյալ Թագավորություն) 188

Ներդիր 5 . Շահերի բախման վերաբերյալ քաղաքականություն (Ավստրալիա, Հնդկաստան) 192

Ներդիր 6. Այցելության ժամանակացույց (Հնդկաստան) 196

Ներդիր 7 . Բողոքարկման Հանձնաժողով (Հարավային Աֆրիկա, Շվեյցարիա)..... 202

Ներդիր 8. ԲՈՒՀ-երի կարողությունների ձևավորումը (ԿՈԿԾ) 205

Ներդիր 9. Որակի ապահովման գործակալությունների կառավարման կառուցվածքը (Իռլանդիա, Չիլի) 209

Ներդիր 10. Կառավարման մարմնի պարտականությունները. Ավստրալիական Համալսարանների Որակի Գործակալություն (ԱՀՈԳ) 212

Ներդիր 11. Որակի ապահովման գործակալության համար անհրաժեշտ ռեսուրսները, ԱՄՆ և Կոլումբիա 217

Ներդիր 12. Հավատարմագրողների հաշվետվողականություն. Բարձրագույն Կրթության Հավատարմագրման Խորհուրդ (ԲԿՀԽ) 228

Ներդիր 13. Հաջողված փորձառության ուղենիշներ (ԲԿՈԱԳՄՑ) 229

Ներդիր 14. Եվրոպայում գործող որակի արտաքին ապահովման գործակալությունների ռեեստր (ԲԿՈԱԵԱ) 230

Մոդուլի նպատակները

Այս մոդուլը.

- կնկարագրի որակի ապահովման կառույցի իրավական կարգավիճակի տարբերակները,
- կբացատրի որակի ապահովման գործակալության հիմնական գործառույթները և գործակալության դերը որակի ապահովման գործընթացում,
- կքննարկի որակի ապահովման գործակալության գործառույթների իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսներն ու կարողությունները,
- կառանձնացնի գործակալության կառավարման ու կազմակերպչական կառուցվածքի հետ կապված տարբերակները,
- կվերլուծի որակի ապահովման գործակալությունների հաշվետվողականության ապահովման տարբեր մեխանիզմները:

Այս մոդուլի ավարտին ակնկալվում է, որ դուք կկարողանաք՝

- գնահատել որակի ապահովման կառույցի հիմնադրման իրավական կարգավիճակի տարբերակները,
- հասկանալ որակի ապահովման գործակալության կողմից իրականացվելիք հիմնական գործառույթները,
- պարզել ձեր երկրի պարագայում որակի ապահովման գործակալության ստեղծման և գործունեության կազմակերպման համար անհրաժեշտ ռեսուրսներն ու կարողությունները,
- կատարել գործակալության կառավարման և կազմակերպչական այնպիսի կառուցվածքի իրատեսական նախագծում, որն արդյունավետ կլինի ձեր երկրի պարագայում,
- վերլուծել որակի ապահովման ոլորտում գործող հաշվետվողականության ուղղակի և անուղղակի միջոցները:

Խորհելու հարցեր

Ինչպիսի՞ ազդեցություն են ունենում իրավական կարգավիճակի տարբեր տեսակները որակի ապահովման գործակալության գործունեության վրա:

Կա արդյո՞ք կապ իմ երկրում որակի ապահովման գործակալության կողմից իրականացվող առաջնահերթ գործառույթների և դրա կազմակերպչական կառուցվածքի միջև:

Ինչպիսի՞ ռեսուրսներ և կարողություններ են անհրաժեշտ այդ գործառույթների իրականացման համար: Արդյո՞ք այդպիսիք առկա են իմ երկրում:

Կառավարման և կազմակերպչական կառուցվածքի ո՞ր տիպն արդյունավետ կլինի իմ երկրում:

Ինչպիսի՞ կապ գոյություն ունի գործակալության իրավական կարգավիճակի և հաշվետվողականության մեխանիզմների միջև:

Մոդուլ 3

ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՀԻՄՆՈՒՄ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Ներածություն

Այս մոդուլում լուսաբանվում են որակի ապահովման գործակալության ստեղծման, կազմակերպման, կառավարման և վերահսկման գոյություն ունեցող տարբերակներն ու այդ գործակալության կողմից իրականացվելիք հիմնական գործառույթները: Քննարկվող տարբերակները առանձնացվել են այս ոլորտում մեծ թվով երկրների փորձից:

Որակի ապահովման գործակալությունները կարող են հիմնադրվել պետության, ԲՈՒՀ-երի կամ մասնավոր խմբերի կողմից: Վերջին ժամանակներում որակի ապահովման գործակալությունները ստեղծվում են պետական նախաձեռնությամբ, բացառությամբ փոքր թվով գործակալությունների, որոնք պատկանում են ԲՈՒՀ-երին կամ ստեղծվել են ԲՈՒՀ-երի մեծածավալ աջակցությամբ: Այս գործակալությունները պարզորոշ կերպով կատարում են պետական գործառույթներ: Որոշ երկրներում, որպես պետությունից և ԲՈՒՀ-երից անկախ մեխանիզմ, զարգացել է մասնագիտական հավատարմագրումը:

Որակի ապահովման որոշումներում որակի ապահովման գործակալության անկախությունը ցանկալի է: Սա ճիշտ է անկախ որակի ապահովման գործակալությունների իրավական կարգավիճակից, այդ թվում նաև պետական նախաձեռնությամբ ստեղծվելու դեպքում: Անհրաժեշտ է հաշվի առնել կրթական համակարգի չափերը, որակի ապահովման շրջանակը և դրա ընդգրկման աստիճանը յուրաքանչյուր կոնկրետ երկրի պարագայում:

Որակի ապահովման գործակալությունները պատասխանատու են որակի ապահովման շրջանակի հստակեցման, մեթոդաբանության մշակման (սովորաբար խորհրդակցելով ակադեմիական հանրության և տարբեր շահառուների հետ), ինչպես նաև արտաքին գնահատողների ընդգրկմամբ որակի ապահովման գործառույթների իրականացման համար:

Գործակալությունները նաև պատրաստում են տարբեր տեսակի ուղեցույցներ և ձեռնարկներ, որոնք կօգնեն գործընթացի մասնակիցներին, ինչպես նաև կազմակերպում են աշխատաժողովներ ԲՈՒՀ-երի և վերապատրաստման դասընթացներ գնահատողների համար: Այս գործառույթները իրականացվում են փոքրաթիվ, սակայն արհեստավարժ հիմնական անձնակազմի միջոցով, իսկ արտաքին գնահատողներին հիմնականում ընտրում են ակադեմիական հանրությունից: Գործակալությանն անհրաժեշտ մարդկային և ֆինանսական ռեսուրսների պահանջը կախված է նրանից թե ինչպիսին են որակի ապահովման գործակալության կողմից սպասարկվող բարձրագույն կրթության համակարգի չափերը և որակի ապահովման գործընթացում նրա ներգրավվածության աստիճանը:

Որակի ապահովման գործընթացի և դրա արդյունքների օբյեկտիվության և համարժեքության ապահովման համար ներդրվում են տարատեսակ ընթացակարգեր և երաշխիքներ: Դրանք երաշխավորում են գործակալության վստահությունը շահառուների շրջանում: Ընդհանուր առմամբ, որակի ապահովման գործակալությունները հաշվետու են բարձրագույն կրթության մեկ կամ մի քանի հիմնական շահառուների: Դրանք կարող են լինել պետությունը, ԲՈՒՀ-երը, ակադեմիական հանրությունը և հասարակության լայն շրջանակները: Կախված իրավական կարգավիճակից՝ որակի ապահովման գործակալությունները ներառում են կազմակերպչական մեխանիզմներ, որոնք ապահովում են նրանց հաշվետվողականությունը կառավարող մարմնին: Գոյություն ունեն նաև գործակալության հաշվետվողականությունը ապահովող տարատեսակ կամավոր մեխանիզմներ, ինչպես օրինակ՝ որակի ապահովման ցանցերին միանալը և գործակալության գնահատման իրականացումը (մետա-գնահատում):

Այս մոդուլում կքննարկվեն որակի ապահովման գործակալությունների ստեղծման տարբեր մոտեցումները, դրանց կողմից իրականացվող գործառույթները, դրանց իրականացմանն օժանդակող կառույցները, որակի ապահովման գործընթացի ու դրա արդյունքների վստահելիությունը երաշխավորող մեխանիզմները, ինչպես նաև կբերվեն կոնկրետ օրինակներ և կդիտարկվեն գործնական դեպքեր:

1-ին և 2-րդ Մոդուլները լայն պատկերացում են տալիս որակի ապահովման սցենարի վերաբերյալ, ինչպես նաև այն տարբերակների մասին, որոնցով որակի ապահովման գործակալությունը կարող է իրականացնել ապահովման գործընթացը: *Այս մոդուլում* հատուկ ուշադրություն կդարձվի որակի ապահովումը իրականացնող կառույցի (գործակալության) ստեղծմանը գործարկմանը և որպես որակի ապահովման գործակալության գործունեության տարբեր փուլերին:

Այս հարցերը քննարկվում են չորս բաժիններում: Առաջին բաժնում դիտարկվում է գործակալության հիմնադրումը, երկրորդում քննարկվում են հիմնադրումից հետո իրականացվելիք հիմնական գործառույթները և

դրանց իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսները: Երրորդ բաժինը ուսումնասիրում է այդ գործառույթների իրականացումն ապահովող կառավարման համակարգը և կազմակերպչական կառուցվածքը, իսկ վերջին բաժնում դիտարկվում է գործակալության հաշվետվողականությունը:

Որակի ապահովման գործակալության հիմնում

Հարկավոր է մանրակրկիտ ուսումնասիրել այն համատեքստը, որտեղ գործելու է որակի ապահովման գործակալությունը: Համատեքստի պայմանները ներառում են բարձրագույն կրթության համակարգի զարգացման մակարդակը, դրա չափերը, որակի ապահովման շրջանակը, նպատակները, որոնց այն ծառայելու է և գործակալության ընդգրկվածության աստիճանը: Այս գործոնների մեծ մասը քննարկվել է նախորդ մոդուլներում: Այստեղ քննարկվելու են ևս երկու գործոն՝ որակի ապահովման գործակալության իրավական կարգավիճակը և կրթական համակարգի չափերը:

1. Որակի ապահովման գործակալության իրավական կարգավիճակը

Որակի ապահովման գործակալությունը կարող է հիմվել տարբեր ձևով՝ պետության կամ ԲՈՒՀ-երի աջակցությամբ կամ առանց դրա: Գոյություն ունեն որակի ապահովման գործակալությունների իրավական կարգավիճակի չորս հիմնական տարբերակներ.

- պետական,
- քվազի-պետական կամ ինքնավար հանրային գործակալություններ,
- ԲՈՒՀ-երի կողմից տնօրինվող,
- մասնավոր խմբերի կողմից տնօրինվող :

Որակի ապահովման գործակալության կարգավիճակը այս կամ այն չափով ազդում է դրա գործունեության անկախության վրա: Չնայած որակի ապահովման գործակալությունների մեծ մասը, ներառյալ նաև պետության կողմից հիմնադրված և ֆինանսավորվող գործակալությունները, հռչակում են որոշակի աստիճանի անկախություն, սակայն ոչ պետական կառույցները կարող են պնդել իրենց որոշումների կայացման գործընթացի առավել անկախ լինելը: Մի շարք դեպքերում պետական պաշտոնյաները, օրինակ՝ Կրթության նախարարության ներկայացուցիչները, անդամակցում կամ նախագահում են ազգային կառույցների կառավարման մարմիններում: Այդպես է, մասնավորապես, Կամբոջայի Հավատարմագրման Կոմիտեում (ԿՀԿ):

ԲՈՒՀ-երի կողմից տնօրինվելու դեպքում որակի ապահովումը կապված է անդամակցող հաստատությունների կողմից կիրառվող ընթացակարգերի կամավոր ընդունման հետ: Ավելին, ԲՈՒՀ-երն են որոշում որակի ապահովման գործընթացի բնույթը և շրջանակը: Այս «ներքևից դեպի վերև» մոտեցումը կիրառվում է ԱՄՆ-ում, որտեղ հավատարմագրող գործակալությունները ԲՈՒՀ-երի մասնակցությամբ ոչ պետական կառույցներ են: Նոր Զելանդիայում ՆԶՀՈՒԱԿ-ը, ինչպես նաև ճապոնական մի շարք հավատարմագրող գործակալություններ կարող են նմանատիպ օրինակ հանդիսանալ ասիական-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում: Այս դեպքում խնդիրը կայանում է նրանում, թե որքանով գործակալությունը կարող է իրեն անկախ համարել ԲՈՒՀ-երից:

Որակի ապահովման գործակալության կարգավիճակը կարող է լինել բավականին վիճահարույց կապված որակի ապահովման նպատակի հետ: Քաղաքական և գաղափարախոսական հարցերը հաճախ դժվարացնում են իրական հիմնախնդիրների նշմարումը: Որոշ խմբերի համար գործակալության պետական պատկանելիությունը դիտվում է որպես արտաքին և բյուրոկրատական մոտեցում, որի դեպքում որակը գնահատվում է նախապես հստակորեն սահմանված արտաքին չափորոշիչների համեմատ՝ շեշտը դնելով վերահսկողության վրա:

Մյուս կողմից, ԲՈՒՀ-երի կողմից գործակալության տնօրինումը դիտվում է որպես ներքին, ոչ բյուրոկրատական մոտեցում, որի ժամանակ շեշտը դրվում է ոչ այնքան վերահսկողության, որքան՝ որակի բարելավման վրա: Սակայն, որակի ապահովման գործակալության կարգավիճակի և որակի բարելավման ու վերահսկողության հավասարակշռության միջև որևէ պարզ և ուղղակի կապ չկա: Որակի ապահովման շատ պետական համակարգեր շեշտադրում են որակի բարելավումը, իսկ ԲՈՒՀ-երի կողմից տնօրինվող որոշ գործակալություններ ձգտում են գործել որպես «վերահսկիչներ»՝ խոչընդոտելով նոր հաստատությունների մուտքը բարձրագույն կրթության շուկա:

Պետության աջակցությունը որակի ապահովմանը, առանց միջամտելու դրա անկախությանը և գործընթացի կազմակերպմանը, պետք է

դիտարկել որպես ևս մի տարբերակ: Այն պետություններում, որտեղ բարձրագույն կրթության համակարգն ինքնին բարեփոխումների շրջանում է, որպես պետական բարեփոխումների ռազմավարության մաս զարգանում են որակի երաշխավորման մեծ անկախությամբ օժտված որակի ապահովման նախաձեռնությունները: Ավելի կայացած համակարգերում ԲՈՒՀ-երը կարող են ղեկավար դեր ստանձնել տրամադրելով արտաքին գնահատողների կամ մասնակցելով գործընթացի տարբեր փուլերի: Հետևաբար նրանք կարող են որակի ապահովման համակարգի կարևոր զարգացումների վրա ազդեցության լծակներ ունենալ: ԱՄՆ-ում ինստիտուցիոնալ հավատարմագրումը զարգացել է որպես ԲՈՒՀ-երի կողմից ղեկավարվող գործընթաց: Մյուս համակարգերի մեծ մասում, այդուհանդերձ, նախաձեռնությունը պետության ձեռքում է: Ամեն դեպքում, որակի ապահովման գործընթացը ավելի է ամրապնդվում, երբ պետությունը աջակցում է որակի ապահովման գործընթացին՝ դրա արդյունքները օգտագործելով կարևոր որոշումների ընդունման նպատակով, ինչպես օրինակ՝ ֆինանսական խթանների ներդրման ժամանակ:

Գործակալության կարգավիճակի տարբերակները լուսաբանելու նպատակով *Ներդիր 1*-ում ներկայացված են իրական փաստեր Հունգարիայի, Կանադայի, Ֆիլիպինների և Եգիպտոսի փորձից: Հունգարիայում պետության դերը գործակալության հիմնադրման, իսկ նախարարի դերը դրա գործունեության կազմակերպման գործում բավական ուղղակի է: Հակառակ դրան, Կանադայի Օնտարիո նահանգում Օնտարիոյի Համալսարանների Խորհուրդը (ՕՀԽ) հիմնել է որակի ապահովման գործակալություն: Ֆիլիպիններում ընտրվել է մի համակարգ, որտեղ ԲՈՒՀ-երը հանդիսանում են մասնավոր հավատարմագրող գործակալությունների անդամներ, որոնք կազմակերպված են ըստ բարձրագույն կրթության համակարգի տարբեր սեգմենտների: Եվ վերջապես Եգիպտոսում հավատարմագրման գործակալությունը հիմնվել է որպես ինքնավար գործակալություն, որը ամբողջությամբ անկախ է պետությունից:

Ներդիր 1 - Որակի ապահովման գործակալությունների իրավական կարգավիճակը (Հունգարիա, Կանադա, Ֆիլիպիններ և Եգիպտոս)

Պետական (Հունգարիա)

Հիմք ընդունելով Բարձրագույն Կրթության Ակտի (ԲԿԱ) 80-րդ բաժնի 7-րդ պարագրաֆը Կառավարությունը որոշում է.

Հունգարական Հավատարմագրման Կոմիտեի (ՀՀԿ) իրավական կարգավիճակը

1. (1) Հունգարական Հավատարմագրման Կոմիտեն (այսուհետ՝ ՀՀԿ) անկախ մարմին է, որը ստեղծվել է պետության կողմից ԲԿԱ-ի 81-րդ բաժնում նշված խնդիրների լուծման նպատակով:

(2) Հիմք ընդունելով ԲԿԱ-ի 80-րդ բաժնի 7-րդ պարագրաֆը Մշակույթի և Կրթության նախարարը (այսուհետ՝ Նախարար) իրականացնում է ՀՀԿ-ի իրավական վերահսկողություն: Իրավական վերահսկողության իր լիազորությունների շրջանակներում նախարարը հսկում է, թե արդյոք ՀՀԿ-ի կազմը, կազմակերպումը, գործունեությունը և որոշումների կայացման մեխանիզմները համապատասխանում են օրենքներին և կարգերին, ինչպես նաև ՀՀԿ-ի ներքին կազմակերպման և գործունեության կանոնակարգերին...

ՀՀԿ-ի Քարտուղարությունը

31. «(1) Կառավարությունը ստեղծում է Քարտուղարություն, որը կազմվի ՀՀԿ-ի վարչական բնույթի աշխատանքներով: Քարտուղարությունը, համապարփակ լիազորություններով օժտված մարմին է, ֆինանսավորվում է կենտրոնական բյուջեից և գտնվում է Նախարարի վերահսկողության ներքո:

(2) Քարտուղարության ղեկավարը նշանակվում և ազատվում է պաշտոնից Նախարարի կողմից, բաց հանրային մրցույթի միջոցով: Նախարարը ՀՀԿ-ի Նախագահի համաձայնությամբ նաև հանձնում է մանդատը: Քարտուղարության ղեկավարի պաշտոնից ազատումը պետք է հաստատվի ՀՀԿ-ի, որպես համատեղ մարմնի, կողմից:

Աղբյուր: Kozma, 2003: 124, 142.

ԲՈՒՀ-երի կողմից տնօրինվող (Օնտարիո նահանգ, Կանադա)

Օնտարիոյի Համալսարանների Խորհուրդ (ՕՀԽ)

Այս կազմակերպությունը, որը սկզբնապես հայտնի էր որպես Օնտարիոյի Համալսարանների Նախագահների Կոմիտե (ՕՀՆԿ), ստեղծվել է 1962թ., կրթական բարեփոխումներին և բուհական կրթության ընդլայնմանը ԲՈՒՀ-երի մասնակցության անհրաժեշտությունից ելնելով: Օնտարիոյի նահանգային աջակցություն ունեցող յուրաքանչյուր համալսարանի գործադիր տնօրեն կոմիտեի անդամ էր հանդիսանում: Կոմիտեն հետագայում ընդարձակվեց և ընդգրկում է երկուական ներկայացուցիչ յուրաքանչյուր անդամ և համագործակցող ԲՈՒՀ-ից՝ գործադիր տնօրենին (համալսարանի նախագահին կամ ռեկտորին) և մեկ գիտաշխատող,որը նշանակվում է յուրաքանչյուր ԲՈՒՀ-ի բարձրագույն գիտական ղեկավար մարմնի կողմից: 1971թ.-ին կոմիտեն անվանափոխվեց Օնտարիոյի Համալսարանների Կոմիտեի:

Օնտարիոյի Ասպիրանտական Կրթության Խորհուրդը (ՕԱԿԽ) հիմնադրվել է ՕՀԽ-ի կողմից՝ ասպիրանտական ծրագրերի ոլորտում որակի ապահովման գործառույթներ իրականացնելու նպատակով: ՕԱԿԽ-ի անդամ են հանդիսանում Օնտարիոյի նահանգային աջակցություն ունեցող բոլոր համալսարանների ասպիրանտուրաների բաժինների վարիչները (կամ համարժեք պաշտոնյաները): ՕԱԿԽ-ն իրականացնում է նոր առաջարկվող ասպիրանտական ծրագրերի ստանդարտ գնահատում և Օնտարիոյում գործող ըստ բնագավառների բոլոր ասպիրանտական ծրագրերի պարբերական գնահատում: Գնահատումը իրականացվում է Գնահատման Կոմիտեի միջոցով, որը բաղկացած է անդամ համալսարանների պրոֆեսորա-դասախոսական կազմի ավագ անդամներից՝ ընտրված ՕԱԿԽ-ի կողմից:

Աղբյուր: Օնտարիոյի Ասպիրանտական Կրթության Խորհրդի վեբ-կայք

Մասնավոր հավատարմագրման գործակալությունները Ֆիլիպիններում

Բարձրագույն կրթությունը Ֆիլիպիններում շատ բազմազան է և տարատեսակ. այստեղ կաթոլիկ մասնավոր ԲՈՒՀ-երի կողքին գործում են բողոքականների կողմից հիմնադրված ոչ կրոնական հաստատություններ, ինչպես նաև պետական ԲՈՒՀ-եր: Այս տարանջատումը ժառանգություն է մնացել Ֆիլիպինների գաղութային պատմությունից, որի ընթացքում բարձրագույն կրթության հաստատությունները հիմնադրվել են հաջորդաբար իսպանական, ամերիկյան և ֆիլիպինյան իշխանությունների տարիներին:
Հավատարմագրման գործընթացները Ֆիլիպիններում սկսել են 1951 թ., մասնավոր ԲՈՒՀ-երի մի խումբ դասախոսների նախաձեռնությամբ, ով-

քեր մեծապես կարևորում էին չափորոշիչների, դրանց ապահովման շարունակական մոնիտորինգի և կամավոր կերպով կատարվող ինքնագնահատման համակարգի միջոցով բարձրագույն կրթության որակի բարելավումը: Այնուհետև Ֆիլիպինների բարձրագույն կրթության համակարգում հավատարմագրումն ընդունվեց որպես բարձր որակի ապահովման միջոց, որը գործում է կամավորության սկզբունքով: Նաև նախատեսվում էր, որ հավատարմագրման միջոցով համապատասխան կողմնորոշում կտրվի ծնողներին և ԲՈՒՀ ընդունվել ցանկացող անձանց: Հավատարմագրման ասոցիացիան նման կերպով ավելի սերտ դարձրեց ԲՈՒՀ-երի միջև համագործակցությունը: 1950-1970-ական թվականներին հավատարմագրման երեք հաստատություն հիմնադրվեց՝ Ֆիլիպինյան Դպրոցների, Քոլեջների և Համալսարանների Հավատարմագրման Ասոցիացիան (ՖԴՔՀՀԱ), Ֆիլիպինյան Քոլեջների և Համալսարանների Ասոցիացիա - Հավատարմագրրման Հանձնաժողովը (ՖՔՀԱ-ՀՀ) և Քրիստոնեական Դպրոցների, Քոլեջների և Համալսարանների Ասոցիացիա - Հավատարմագրման Գործակալությունը (ՔԴՔՀԱ-ՀԳ): Յուրաքանչյուր ասոցիացիա ունի հավատարմագրման իր գործիքներն ու չափորոշիչները:

Ընդհանուր ստանդարտներ և միջոցներ ձևավորելու նպատակով 1977թ. հիմնադրվեց հավատարմագրման գործակալություններին միավորող կառույց՝ Ֆիլիպինյան Հավատարմագրման Գործակալությունների Ֆեդերացիան (ՖՀԳՖ): ՖՀԳՖ-ն ծառայում է որպես երեք հավատարմագրող գործակալությունները համակարգող մարմին: Պետական քոլեջների և համալսարանների հավատարմագրման գործակալության ստեղծմամբ ձևավորվեց չորրորդ հավատարմագրող մարմինը՝ Ֆիլիպինյան Որակավորված Քոլեջների և Համալսարանների Հավատարմագրման Գործակալությունը (ՖՈՔՀՀԳ). ՖՈՔՀՀԳ-ն հիմնականում սպասարկում է Պետական Համալսարանների և Քոլեջների Ֆիլիպինյան Ասոցիացիայի անդամներին (ՊՀՔՖԱ), իսկ ՖԴՔՀՀԱ-ն հիմնականում կաթոլիկ դպրոցների համար է (ՖՔՀԱ-ՀՀ –ն ոչ կրոնական խմբերի համար, իսկ ՔԴՔՀԱ-ՀԳ՝ բողոքական հատվածի համար): Հավատարմագրող մարմինները համակարգը սահմանափակումներ չեն դնում. ՖՈՔՀՀԳ-ի անդամ որոշ ԲՈՒՀ-եր ոչ կրոնական կամ բողոքական խմբից են և/կամ պետական հատվածից, այնինչ որոշ կրոնական դպրոցներ հավատարմագրվում են ՖՔՀԱ-ՀՀ-ի կողմից:

Աղբյուր. Arcelo, 2003: 15-16.

Հավատարմագրման անկախ գործակալություն Եգիպտոսում

2000 թ. Եգիպտոսում սկիզբ դրվեց Որակի Ապահովման և Հավատարմագրման Ազգային Գործակալության (ՈԱՀԱԳ) ծրագրին, որպես Եգիպտոսի բարձրագույն կրթության բարեփոխումների Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող ծրագրի մաս: Դրա նպատակն էր ձևավորել ազգային համակարգ, որը կնպաստեր բարձրագույն կրթության

որակի բարելավմանը: Բրիտանացի խորհրդատուների օգնությամբ ՈԱՀԱԳ-ը ստեղծեց մի համակարգ, որը գլխավորապես զբաղվում է ինստիտուցիոնալ, ինչպես նաև ծրագրերի հավատարմագրմամբ: Գործակալության կողմից որոշումների ընդունման վրա ազդեցության տեսանկյունից գործակալությունը օժտված է պետությունից և/կամ այլ շահագրգիռ հաստատություններից իր լիարժեք ինքնավարությունը և ամբողջական անկախությունը ապահովող լիազորություններով: Այս պատճառով ՈԱՀԱԳ-ի կողմից կարող է ընդունվել որոշում, որը նույնիսկ Եգիպտոսի նախագահը չի կարող փոփոխել առանց Ազգային Խորհրդարանին դիմելու: ՈԱՀԱԳ-ը անկախ է կրթական ծառայություններ մատուցող կառույցներից, մասնավորապես՝ Բարձրագույն կրթության նախարարությունից և ԲՈՒՀ-երից:

Աղբյուր: Said, 2005.

Գոյություն ունեն նաև որակի ապահովման գործառույթներ իրականացնող կազմակերպություններ, որոնք ստեղծվում և կառավարվում են ԲՈՒՀ-երից ու պետությունից անկախ խմբերի կողմից: Այսպես է առաջ եկել մասնագիտական ոլորտներում ուսումնական ծրագրերի հավատարմագրումը: Այս տիպի հավատարմագրումը կոչվում է «մասնագիտական հավատարմագրում» և զարգացել է ի պատասխան կրթական ծրագրերի որակով և համապատասխանությամբ, ինչպես նաև այդ ծրագրերը պատրաստող մասնագետների որակով որոշակի պրոֆեսիոնալ խմբերի մտահոգության: Լիցենզիաների տրամադրման և գրանցման ընթացակարգերի միջոցով նման տիպի որակի ապահովմամբ են զբաղվում մասնագիտացված խորհուրդները կամ մասնագիտական կառույցները: Այս գործակալությունների գնահատման ուշադրության կենտրոնում է շրջանավարտների որակը, որոնք ապագայում դառնալու են այդ ոլորտի մասնագետներ: Ընթացակարգերը մշակվում և դիտարկվում են տվյալ բնագավառի հայտնի մասնագետների կողմից: Այս գործակալությունների մանդատում կենտրոնական դիրք է գրավում հանրային շահերի պաշտպանությունը և մասնագիտական գործունեության չափորոշիչների պահպանումը: Նրանց կողմից կայացված որակի ապահովման որոշումները հիմք են ծառայում մասնագետների համար՝ թե ազգային, թե միջազգային մակարդակով:

Ներդիր 2 - Նովա Սկոտիայի Պրոֆեսիոնալ Ինժեներների Ասոցիացիա (ՆՍՊԻԱ)

ՆՍՊԻԱ-ն հանդիսանում է լիցենզավորող և կանոնակարգող մարմին Նովա Սկոտիայում գործող կամ Նովա Սկոտիայի նախագծերի ավելի քան 4500 պրոֆեսիոնալ կամ փարձաշրջան անցնող ինժեներների համար:

ՆՍՊԻԱ-ի առաքելությունը

- Ծառայել հանրային շահերին և պաշտպանել դրանք,
- Բարձրացնել ինժեներական մասնագիտության վարկը և հմտությունները
- Աջակցել անդամներին իրենց մասնագիտական գործունեության ընթացքում

Այս մարմնի կողմից լիցենզավորումը պարտադիր պահանջ է Նովա Սկոտիայում որպես ինժեներ աշխատելու կամ հանրությանը մասնագիտական ինժեներական ծառայություններ մատուցելու համար: Այն նաև ազդեցություն ունի ինժեներների ազգային և միջազգային տեղաշարժի առումով: Այն հանդիսանում է մեկ այլ ազգային կառույցի՝ Կանադայի Պրոֆեսիոնալ Ինժեներների Խորհրդի (ԿՊԻԽ) անդամ: ԿՊԻԽ-ն իր հերթին ստորագրել է Վաշինգտոնյան համաձայնագիրը, որը կանոնակարգում է ստորագրող երկրների կողմից ինժեներական մասնագիտության որակավորումների փոխադարձ ճանաչումը:

Աղբյուր `Նովա Սկոտիայի Պրոֆեսիոնալ Ինժեներների Ասոցիացիայի համացանցի կայք

Որոշ մասնագիտություններ, ինչպես օրինակ բժշկությունը, մեծապես պաշտպանվում են պետության կողմից և նրանց գործունեությունը խիստ կանոնակարգվում է: Այսպիսով, շատ երկրներում առկա է որոշակի չափով կանոնակարգվող որակի ապահովման գործունեություն մասնագիտական կրթության բնագավառում: Որոշ երկրներում կոնկրետ մասնագիտությամբ աշխատելու համար անձը պետք է ունենա այդ մասնագիտության գծով ստացված կրթական որակավորում, իսկ ուսումնական ծրագրերը մեծամասամբ կանոնակարգվում են մասնագիտական մարմինների կողմից: Այս մոդուլի վերջում հղումներին ծանոթանալով և մոդուլի այս մասում բերված վարժությունները կատարելով՝ դուք կկարողանաք ավելի շատ տեղեկություններ ստանալ մասնագիտական հավատարմագրման վերաբերյալ: Հետևաբար այս մոդուլը չի անդրադառնում այդ մանրամասնություններին: Հետագա քննարկումները միայն ըստ անհրաժեշտության կանդրադառնան մասնագիտական հավատարմագրմանը: Ամեն

դեպքում, ուշադրության կենտրոնում լինելու են որակի ապահովման ընդհանուր համակարգերը:

Այսպիսով, գոյություն ունեն որակի ապահովման գործակալության իրավական կարգավիճակի չորս տարբերակներ:

- Տարբերակ 1.Այն կարող է հիմնվել որպես պետական (կամ քվազի-պետական) գործակալություն, թերևս որպես նախարարության մի ստորաբաժանում (Կամպուչիա և Հունգարիա):
- Տարբերակ 2. Այն կարող է լինել մասնավոր կառույց, որը լիովին անկախ է պետությունից հիմնադրման և գործունեության ընթացքում: Տիպային օրինակ կարող է ծառայել ԲՈՒՀ-երի կողմից որակի ապահովման գործակալության հիմնումը (Ֆիլիպիններ և ԱՄՆ):
- Տարբերակ 3. Այն կարող է լինել քվազի-պետական բուֆերային մարմին կամ հիմնադրվել տեղական բուֆերային կազմակերպության ներքո: Պետությունը կարող է մղել, որպեսզի այն նախաձեռնություն ցուցաբերի պետական գործառույթներին ծառայելու համար կամ այն կարող է կառավարվել պետությունից անկախ (Եգիպտոս):
- Տարբերակ 4. Այն կարող է լինել առանց պետության կամ ԲՈՒՀ-երի մասնակցության հիմնադված և գործող մարմին: Մասնագիտական հավատարմագրումը այս տարբերակի տիպային օրինակ է (Մասնագիտական Խորհուրդներ):

Այստեղ հարկ է նշել տարբերակներից յուրաքանչյուրի ընտրության հիմնավորումները: Եթե ակնկալվում է, որ որակի ապահովման գործակալությունը կենտրոնական դեր է խաղալու երկրի բարձրագույն կրթության համակարգում (օրինակ՝ ԲՈՒՀ-ի կարգավիճակ տալը կամ կրթական որակավորումներ շնորհելու և ուսումնական ծրագրեր առաջարկելու իրավունք տրամադրելը), ապա ամենայն հավանականությամբ նման գործակալության ստեղծման նախաձեռնություն կցուցաբերի պետությունը: Եթե ակնկալվում է, որ այլ երկրներ, կառավարություններ կամ պետություններ ճանաչեն և ընդունեն որակի ապահովման որոշումները, այդ դեպքում նույնպես որակի ապահովման գործակալության հիմնադրման, կազմակերպման և գործունեության մեջ պետության դերը ավելի մեծ կլինի: Դա չի նշանակում, թե այն պետք է անպայման լինի պետական գործակալություն: Այն կարող է լինել հասարակական կազմակերպություն, որն անկախ կլինի պետությունից, սակայն կկազմի պետական համակարգի մի մաս:

Միաժամանակ, գոյություն ունեն որակի ապահովման գործակալություններ, որոնք չեն հանդիսանում պետական համակարգի մաս, սակայն ճանաչվում են թե ազգային, թե միջազգային մակարդակով: Որպես օրինակ կարելի է բերել ԱՄՆ-ի հավատարմագրման համակարգը: Հարկ է նշել, որ չնայած ԱՄՆ-ի հավատարմագրման գործակալությունները պետա-

կան համակարգի մաս չեն կազմում, սակայն նրանք օգտվում են պետության աջակցությունից. պետական ֆինանսավորումը և շատ այլ որոշումներ կախված են ԲՈՒՀ-երի հավատարմագրումից:

Երբ որակի երաշխավորման հիմնական նպատակը ակադեմիական է, ԲՈՒՀ-երը պետք է կենտրոնական դեր խաղան: Երբ նպատակադրվել է, որ ապագա մասնագետները կրթվեն մասնագիտական գործունեության նորմերին համապատասխան, առաջնային դեր են ստանձնում մասնագիտական ասոցիացիաները:

Կարևոր է նշել, որ ամեն դեպքում անհրաժեշտ է երաշխավորել, որ գործակալությունը կգործի այս խմբերի հատուկ շահերից անկախ: Սովորաբար ստեղծվում է հակակշիռների համակարգ: Այսպես, պետությունը թույլատրում կամ վերահսկում է մասնավոր գործակալությունների գործունեությունը (ԱՄՆ-ում Կրթության դեպարտամենտը, օրինակ, նման գործառույթներ է իրականացնում տարածաշրջանային հավատարմագրման գործակալությունների համար), դասախոսներն ու մասնագիտական ասոցիացիաների ներկայացուցիչները պետական գործակալությունների համար հանդիսանում են արտաքին գնահատողներ, կարգավորվում են շահերի բախումները և այլն:

2. Բարձրագույն կրթության համակարգի չափերը

Բարձրագույն կրթության համակարգի չափերը կարող են տատանվել հազարավոր ԲՈՒՀ-երից մինչև մի քանիսը: Երբ որակի ապահովման գործակալությունը պետք է սպասարկի մեծ թվով ԲՈՒՀ-եր կամ ծրագրեր, որակի ապահովման քաղաքականությունը և գործառնությունները համապատասխան կերպով փոփոխվում են: Այսպես կարող է փոխվել գործակալության դերը որակի ապահովման որոշումների ընդունման գործում, ԲՈՒՀ-եր այցելություններին գործակալության անձնակազմի մասնակցության աստիճանը, գնահատման օբյեկտը (ԲՈՒՀ կամ կրթական ծրագիր), որակի ապահովման արդյունքներին հետևելու գործընթացը, գնահատողների ընտրությունը և գնահատող խմբի կազմը, ինչպես նաև գնահատողների վերապատրաստմանը տրվող կարևորության աստիճանը: Խոշոր համակարգերում գործակալության անձնակազմի համար հնարավոր չէ մասնակցել ուսումնական հաստատություններ բոլոր այցելություններին: Ուստի գործակալությունները հաճախ են դիմում արտաքին գնահատողների օգնությանը: Արտաքին գնահատողներին են փոխանցվում այնպիսի կարևոր պարտականություններ, ինչպիսիք են ուսումնական հաստատություններ այցելությունների արձանագրությունների կազմումը և դրանց հիման վրա առաջարկությունների ներկայացումը: Հետևաբար գործակալությունն ընտրում է այնպիսի գնահատողների, ովքեր կլինեն բավականաչափ կոմպետենտ՝ գործակալության անունից գործելու համար,

սակայն առանց նրանց ուղղակի ցուցումներ տալու: Մեծ համակարգերում կոմպետենտ արտաքին գնահատողներ գտնելը չպետք է մեծ խնդիր լինի: Այդուհանդերձ, որակի ապահովման գործակալության գնահատման սկզբունքներին համարժեք նրանց վերապատրաստումը և գնահատողների տարբեր խմբերի գործելաոճի միջև տարբերությունների նվազեցման համար երաշխիքների ձևավորումը կարող է բավականին խնդրահարույց լինել գործակալության համար:

Բարձրագույն կրթության մեծ համակարգերը հակված կլինեն ընտրել ինստիտուցիոնալ մակարդակով որակի ապահովումը: Մյուս կողմից, փոքր համակարգերը ավելի հեշտությամբ կկենտրոնանան ուսումնական ծրագրերի մակարդակով որակի ապահովման վրա:

Ըստ էության, համակարգի չափերը կարող են նաև որոշակի չափով ազդել որակի ապահովման գործակալությունների կողմից դիտարկվող (կամ առաջնային ուշադրության արժանացող) ԲՈՒՀ-երի կամ ուսումնական ծրագրերի կատեգորիաների վրա: Նույնը վերաբերում է որակի ապահովման արդյունքներին հետևելու գործընթացի ուղղվածությանը և շրջանակին, ինչպես նաև «գնահատումից հետո» տեղ գտնող զարգացումներին որակի ապահովման գործակալության դերին: Կան փաստարկներ, որ ավելի մեծ համակարգերը կարող են իրենց թույլ տալ ունենալ գործակալությունների ավելի մեծ անձնակազմեր: Այս մոտեցումը որդեգրվել է մեծ համակարգերը կանոնակարգող մարմինների կողմից, որոնց տրված են կարգավորման լիազորություններ իրենց տարածքային սահմաններում գործող բոլոր ուսումնական հաստատությունների նկատմամբ:

Գործակալության գործունեությունը կազմակերպելու և որակի ապահովման ռազմավարությունն իրականացնելու համար պահանջվող ռեսուրսների չափը նույնպես կապված է համակարգի մեծության հետ: Նոր կառույցի ստեղծումը կարող է ծախսային տեսանկյունից ոչ այնքան արդյունավետ լինել շատ փոքր համակարգերի դեպքում: Կարող են դժվարություններ առաջանալ կապված նաև որակի ապահովման գործակալության ստեղծման համար անհրաժեշտ մարդկային ռեսուրսներ գտնելու հետ: Նման դեպքերում պետք է վերափոխել գոյություն ունեցող կառույցները և շեշտը դնել ԲՈՒՀ-երի որակի կառավարման ներքին համակարգերի վրա: Որոշ համակարգերում կարող են օգտվել որակի ապահովման միջազգային կառույցների գործունեությունից ինչպես նաև որակի ապահովման գործակալությունների տարածաշրջանային ցանցերի միջոցով որակի ապահովման ծառայություններից:

Բարձրագույն կրթության փոքր համակարգերում դժվար է արտաքին գնահատողների խմբեր կազմել: Պատճառը բարձր համբավ ունեցող դասախոսների փոքր քանակն է և նրանց միջև հաճախ հանդիպող ամուր կապերը: Հետևաբար պետք է մշակվի շահերի բախման վերաբերյալ համապատասխան քաղաքականություն: Օրինակ, մեծ համակարգ ունեցող Հնդկաստանում ԳՀԱԽ-ը կարող է բծախնդրորեն մոտենալ գնահատող-

ների ընտրությանը և տվյալ ԲՈՒՀ-ի նահանգում բնակվող գնահատողները չեն կարող ընդգրկվել այդ ԲՈՒՀ-ի գնահատող խմբի մեջ: Բնականաբար, Նոր Զելանդիայի, Սինգապուրի և Հոնգ Կոնգի պարագայում նույն կերպ հնարավոր չէ վարվել:

Այսպիսով, չափերի (մասնավորապես փոքր չափերի) հարցը կարող է սահմանափակող գործոն հանդիսանալ բարձրագույն կրթության համակարգերից շատերում: Այն ազդում է որակի ապահովման հիմնական տարբերակների և գործընթացների ընտրության ու գործակալության իրավական կարգավիճակի վրա: Որակի ապահովման գործակալություն հիմնադրելիս ճիշտ որոշումներ կայացնելու համար անհրաժեշտ է հաշվի առնել այդ գործոնները:

Վարժություն 1.

---

1. Ուսումնասիրեք
   www.washingtonaccord.org/wash_accord_appl_provisional.html և
   www.washingtonaccord.org/wash_accord_principles.html

   վեբ կայքերը և փորձեք կապ գտնել Վաշինգտոնյան համաձայնագիրը ստորագրողների միջև:

2. Նշեք ձեր երկրի մասնագիտական հավատարմագրման և որակի ապահովման ոլորտում գործող մասնագիտական կառույցները: Փորձեք պարզել, թե ինչպես են նրանք հիմադրվել:

3. Եթե ձեր երկրում որակի արտաքին ապահովման նոր գործակալության կարիք առաջանար, հիմնադրման ինչպիսի՞ կարգավիճակ դուք կառաջարկեիք և ինչպիսի՞ փաստարկներով: Հիմնավորեք ձեր պատասխանը:

Որակի ապահովման գործակալության գործառույթները

Որակի ապահովման գործընթացներում կարելի է գտնել որոշ չափով համընկնող երեք գործառույթներ վարչարարություն, համակարգում և որոշումների կայացում: Որակի ապահովման բոլոր գործակալությունները որակի ապահովման ընթացակարգեր ներդնելիս իրականացնում են վարչարարական գործառույթներ: Առկա են նաև համակարգման հարցեր, որոնք սերտորեն կապված են վարչարարական խնդիրների հետ: Դրանց որոշ մասը կարող է ուղղակիորեն ազդել որոշումների կայացման գործառույթների վրա: Գործակալության անձնակազմի դերը համակարգման գործառույթներում և կրթության որակի վերաբերյալ որոշումների կայացման գործում կարող է չափազանց տարբեր լինել. Այս տարբերություններն ուղղակիորեն կապված են *2-րդ Մոդուլում* քննարկված գործընթացի կազմակերպման տարբերակների հետ:

Վարչարարական գործառույթներ: Այս գործառույթները ներառում են գործակալությունների մի շարք պարտականություններ, մասնավորապես ԲՈՒՀ-երին ծանուցումը, գնահատողների կազմի ձևավորումը և որակի ապահովման վերջնական արդյունքների հրապարակումը: Այս գործառույթներն իրականացվում են բոլոր որակի ապահովման բոլոր գործակալությունների կողմից· Դրանք չեն պահանջում մեծաթիվ լրացուցիչ կամ ակադեմիական բարձր որակավորում ունեցող մեծաթիվ անձնակազմ բարդ իրավիճակների հետ գործ ունենալու համար: Փոքրաթիվ, սակայն բանիմաց և պրոֆեսիոնալ հիմնական անձնակազմը կարող է արդյունավետորեն իրականացնել այս պարտականությունները:

Համակարգման գործառույթներ: Այս գործառույթները ներառում են որակի ապահովման շրջանակի զարգացման նպատակով միջոցառումների իրականացումը, որակի ապահովման հիմնական փուլերի դիտարկման պարտականությունների կատարումը, գործընթացի իրականացման համար փորձագետների վերապատրաստումը, ինչպես նաև ԲՈՒՀ-երին ինքնավերլուծության պատրաստվելուն աջակցությունը: Այս գործառույթների մի մասը կենտրոնական դեր ունի որակի ապահովման գործակալության վստահելիության ամրապնդման գործում և դրանց իրականացումը կարող է բավականին խնդրահարույց լինել: Հետևաբար գործակալության համար անհրաժեշտ է այս պարտականությունների կատարման համար բավարար գիտելիքներ ունեցող անձնակազմ:

Սկզբնական շրջանում հիմնական գործառույթը կարող է լինել որակի ապահովման շրջանակի զարգացումը: Այս գործընթացի կատարելագործմանը ուղղված ճշգրտումներին զուգահեռ, այլ գործառույթներ,

ինչպես օրինակ փորձագետների վերապատրաստումը և ԲՈՒՀ-երի կողմնորոշումը պետք է իրականացվեն շարունակաբար: Որակի ապահովման գործակալությունը պետք է իրատեսորեն գնահատի այս գործառույթներում իր ընդգրկվածությունը կախված բարձրագույն կրթության համակարգի մեծությունից և որակի ապահովման պարտականությունների ծավալից: Համակարգի չափերը և ընդգրկվածության աստիճանը ազդում են գործակալությանն անհրաժեշտ ռեսուրսների ծավալի և անձնակազմի բնութագրի վրա: Այս հարցերը կքննարկվեն հետագայում:

Որակի ապահովման շրջանակի ձևավորման և կիրառման հետևողականությունը երաշխավորելու նպատակով որակի ապահովման գործակալությունները կարևոր դեր ունեն այս գործառնություններում, չնայած գործակալության ընդգրկվածությունը դրանցում կարող է տարբեր լինել: Եթե որոշ գործակալություններ ուղղակի և ամբողջական դեր կունենան, ապա մյուսները կարող են համաձայնագրեր կնքել կամ կազմել ընկերակցություններ փորձագետների համար վերապատրաստման ծրագրերի իրականացման ու ԲՈՒՀ-երին կողմնորոշում տրամադրելու նպատակով:

<u>Որոշումների կայացման գործառույթներ:</u> Այս գործառույթներն ընդգրկում են գնահատման նպատակով ուսումնական հաստատություններ այցելությունները, գնահատման գործընթացներում տարբեր գործառույթները, ինչպես օրինակ՝ հաշվետվությունների կազմումը և մասնակցությունը որոշումների կայացմանը: Համակարգման գործառույթներին գործակալության անձնակազմի մասնակցության կողմ և դեմ բերվող փաստարկները գործում են նաև այս դեպքում: Բացի այդ, որոշումների կայացման գործընթացին գործակալության մասնակցությունը որոշվում է գործակալության քաղաքականությամբ: Որակի ապահովման հաջողված փորձի հիմնաքարը ինքնագնահատումն և արտաքին գնահատումն են: Եթե նույնիսկ գործակալությունն ուղղակի դեր է ստանձնում որոշումների կայացման գործընթացներում, մեծ թվով երաշխիքներ են սահմանվում, որոնք ապահովում են, որ գնահատման արդյունքները որևէ կասկածի տեղիք չտան: Եթե վարչարարական և համակարգման գործառույթները սովորաբար մասնագիտական կամ տեխնիկական անձնակազմի պարտականությունների մեջ են մտնում, ապա որոշումների կայացման պարտականությունը դրված է խորհրդակցական մարմնի կամ առնվազն մարդկանց այլ խմբի վրա:

Որակի ապահովման համակարգերից մի քանիսում անձնակազմը կատարում է բոլոր այս երեք գործառույթները: Սակայն, ընդհանուր առմամբ, հաջողված փորձը պարտադրում է, որ այս պարտականությունները կատարեն տարբեր մարմիններ (տարբեր որակավորմամբ և փորձով):

Անդրադառնալով այս գործառույթներին և առկա տարբերակներին կարելի է թվարկել որակի ապահովման գործակալության կողմից իրականացվելիք հետևյալ հիմնական գործառույթները.

1. Կիրառվելիք որակի ապահովման սխեմայի ընդհանուր սահմանների, շրջանակի և ընդհանուր ուղղվածության որոշումը,
2. որակի ապահովման գործընթացի համար անհրաժեշտ մեթոդաբանության և համապատասխան ձեռնարկների ու ուղեցույցների պատրաստումը,
3. գործընթացների կառավարումը,
4. գործընթացների արդյունքների վերաբերյալ հաշվետվությունների տրամադրումը և տարածումը,
5. բարձրագույն կրթության համակարգում որակի ապահովման համար կարողությունների ձևավորումը:

1. Կիրառվելիք որակի ապահովման սխեմայի սահմանների, շրջանակի և ընդհանուր կողմնորոշվածության որոշումը

Մոդուլ 2-ում ընդգծվեցին որակի ապահովման գործընթացի իրականացման տարբերակների հիմքում ընկած փաստարկները: Շատ կարևոր է, որ գործակալությունը դիտարկի այդ տարբերակները այն համատեքստի պայմաններում, որտեղ գործելու է: Դրանից հետո պետք է ընտրվի այն տարբերակը, որն առավելագույնի կհասցնի գործակալության ջանքերի արդյունավետությունը: Որոշ տարբերակներ կարող են արդեն իսկ որոշված լինել մեկ այլ (հաճախ ավելի բարձր) մակարդակում: Օրինակ, որակի ապահովման գործակալության միայն պետական կամ մասնավոր հաստատություններին սպասարկելու վերաբերյալ որոշումը կարող է կայացվել գործակալությունից դուրս: Նույնիսկ այդ դեպքում որոշված տարբերակների իրագործման ձևերը և դրանց հետևանքները գործակալության պատասխանատվության ներքո են: Ընդհանուր կողմնորոշումը դեպի որակի վերահսկողություն կամ որակի բարելավում նույնպես սահմանվում է կախված որակի ապահովման գործակալության հիմնադրման նպատակից: Որակի ապահովման համակարգերի հիմնական տարբերակների հիման վրա (տես *Մոդուլ 1*) որակի ապահովման շրջանակը գործի դնելու համար որակի ապահովման գործակալությունը պետք է համապատասխան որոշումներ կայացնի:

Այդ որոշումները կարող են վերաբերվել մասնավորապես ԲՈՒՀ-երի կողմից առաջարկվող հեռավար և/կամ միջազգային ուսուցմանը տրվող կարևորությանը, ուսուցման և հետազոտությունների համամասնությանը, կամ հանրության սպասարկման գործունեությանը և կոմերցիոն նախաձեռնություններին:

Որակի ապահովման գործակալություններից շատերը հաշվին են առնում ԲՈՒՀ-երի միջազգային գործունեությունը: Նման կրթական առա-

ջարկների որակի ապահովումը կքննարկվի *Մոդուլ 5-ում*: Միջազգային գործունեության հետ որոշ չափով համընկնող, սակայն այստեղ առանձին հիշատակվելու կարիք ունեցող կարևոր զարգացումներից է ԲՈՒՀ-երի կողմից հեռավար կրթական ծառայությունների առաջարկումը թե իրենց երկրում, թե իրենց երկրներից դուրս: Որոշ որակի ապահովման գործակալություններ սահմանափակվում են տեղական ակադեմիական ծրագրերի գնահատումներով: Սակայն մեծամասնությունը ձևավորել են ուղենիշներ նաև հեռավար ծրագրերի դիտարկման համար:

Որակի ապահովման գործակալության հիմնադրման ժամանակ նման հարցերը որոշակի մակարդակով քննարկման կարիք ունեն: Այստեղ սովորաբար ողջունելի է տարբեր շահառուների կողմից տրվող խորհրդատվությունը կամ այլ աջակցությունը: Երբ այս որոշումներն արդեն իսկ ընդունված են, կարելի է սկսել դրանց իրագործումը:

Գործակալության հաջողության համար չափազանց կարևոր է որակի ապահովման գործունեության սահմանների և շրջանակի որոշումը:

2. Մեթոդաբանության մշակում

Չնայած որակի ապահովման գործակալություններն իրենց վարչարարական, համակարգման և որոշումների կայացման գործառույթներն իրականացնում են տարբեր մոտեցումներով, սակայն բոլորն էլ կարևոր դեր են խաղում գնահատման ավելի լայն սցենարի սահմանման գործում, ինչը երաշխավորում է գնահատման գործընթացի հետևողականությունը: Գործակալությունից հատուկ ուշադրություն են պահանջում որակի ապահովման շրջանակի մշակումը (ներառյալ չափորոշիչների և չափանիշների, եթե այդպիսիք առկա են), գործողությունների ծրագրի պատրաստումը և տեղեկատվության տարածումը: Սա հատկապես վերաբերում է որակի ապահովման գործակալության ստեղծման սկզբնական փուլին:

Չափորոշիչներ կամ չափանիշներ որակի ապահովման համար

Մեթոդաբանության մշակման կարևոր մաս է հանդիսանում որակի ապահովման որոշումների համար հիմքի սահմանումը, ինչպես օրինակ չափորոշիչներ կամ չափանիշները: Դրանք կքննարկվեն *Մոդուլ 4-ում*.

Երբ որակի ապահովման ուշադրության կենտրոնում ուսումնական հաստատությունն է, ապա չափորոշիչներն ու չափանիշները նպատակ ունեն վեր հանել են նրան, թե հաստատությունն ինչ հաջողությամբ է կարողանում իրականացնել իր կրթական գործառույթները որպես ԲՈՒՀ: Կախված որակի ապահովման մոդելից կարող են լինել որոշ տարբերակումներ: Օրինակ, եթե որակի ապահովման օբյեկտը հանդիսանում է ուսումնական ծրագիրը, ուշադրության կենտրոնում գտնվում է տվյալ ծրագրի որակը և կրթության մատուցումը:

Բարձրագույն կրթության զարգացած համակարգերում որոշ գործակալություններ նախընտրում են «համապատասխանություն նպատակին» և աուդիտի մոտեցումները: Այս դեպքում նրանք հնարավոր է սահմանեն միայն գնահատման լայն շրջանակ, ինչպես օրինակ կազմակերպական կառավարումը, ուսումնական ռեսուրսները և ֆինանսական կառավարումը: Այդուհանդերձ, որակի ապահովման գործակալությունների մեծամասնությունը տրմադրում են մանրամասն նկարագրություններ: Օրինակ, Մավրիկիայի որակի ապահովման գործակալության ստանդարտ հաշվետվությունները, որոնք մշակվել են մեծ թվով որակի ապահովման գործակալությունների փորձի մանրակրկիտ ուսումնասիրությունից հետո, ներկայացնում են միկրո-մակարդակի մանրամասնություններ: Այս մոտեցմանը հակառակ, սակայն աուդիտի իր մոտեցմանը համահունչ, ԱՅՈԳ-ը նշում է միայն ուսումնական հաստատությունների աուդիտի շրջանակը: Որակի ապահովման գործակալությունները կարող են տարբեր չափի մանրամասներ տրամադրել ԲՈՒՀ-երին: Այնուամենայնիվ, նրանք պետք է ԲՈՒՀ-երին բացատրեն որակի ապահովման գործողությունների հիմքերը չափանիշներն ու չափորոշիչները: ԲԿՈԱԳՄՑ-ի ուղեցույցները որպես հաջողված պրակտիկա առանձնացնում են թափանցիկության մեծացումը: Հետևաբար սահմանվում է, որ որակի ապահովման գործակալությունը «պետք է ունենա ինքնագնահատման և արտաքին գնահատման հստակ փաստաթղթեր, իսկ ինքնագնահատմանը վերաբերվող փաստաթղթերը պետք է բարձրագույն կրթության հաստատություններին ներկայացնեն նպատակը, կիրառվող ընթացակարգերը և ակնկալիքները կապված ինքնագնահատման գործընթացի հետ:»

Չափորոշիչների կամ չափանիշների վերաբերյալ համաձայնության գալու համար տարբեր մակարդակներում կարող է բազմակողմանի ռազմավարության անհրաժեշտություն առաջանալ: Շատ կարևոր է հավա-

սարակշության հասնել որակի ապահովման միջազգայնորեն ընդունված տարրերի և ազգային ակնկալիքների միջև: Կարող է առաջանալ տարբեր մոտեցումների կիրառման անհրաժեշտություն: Դրանք կարող են ներառել օրինակ գործիքակազմի մշակման ուղղությամբ աշխատաժողովները, ճանաչողական ծրագրերը (որոնց նպատակն է տեղեկատվության տարածումը ակադեմիական հանրության շրջանում) հիմնական հարցերի վերաբերյալ բանավեճերը, տարբեր շահառուների համար ուղեցույցների և ձեռնարկների հրապարակման ծրագրերը, գնահատող փորձագետների վերապատրաստումը, ինչպես նաև ղեկավար պաշտոնյաների և պետական քաղաքականությունն իրագործողների հետ քննարկումները, որոնք նպատակ ունեն նրանց տեսակետների ներառումը որակի ապահովման ոլորտում:

Ընդհանուր առմամբ, որակի ապահովման գործակալությունն ինքն է սահմանում չափորոշիչները կամ չափանիշները հիմնական շահառուների հետ խորհրդակցությունից հետո: Չնայած այս մոտեցումը կարող է ընդունելի կամ նույնիսկ անհրաժեշտ լինել որակի ապահովման սխեմաների մշակման սկզբնական փուլերում, սակայն խորհուրդ է տրվում որքան հնարավոր է շուտ անցում կատարել այնպիսի մոտեցման, երբ հաշվի կառնվեն այլ շահառուների կարծիքներ:

Որակի ապահովման գործակալության համար միայն լավ մեթոդաբանության մշակումը բավարար չէ: Այն պետք է նաև ընդունելի լինի բարձրագույն կրթության համակարգի համար և համապատասխանի ազգային համատեքստին: Շատ դեպքերում մեթոդաբանության ընդունմանը կարելի է հասնել դրա մշակման քննարկումներին հիմնական շահառուներին մասնակից դարձնելու միջոցով: Փոքրաքանակ փորձագետների խմբերի կողմից խորքային քննարկումների և լայն հանրային խորհրդակցությունների համադրության միջոցով կարելի է ապահովել, որ շահառուների որևէ խումբ չունենա գերակշիռ ազդեցություն մեթոդաբանության մշակման գործընթացի վրա: Մշակված տարբերակի վերաբերյալ կարծիքների ընդունումը նույնպես ապահովում է գործընթացում շահառուների ընդգրկվածությունը: Բացի այդ, մոտեցման հստակությունը և թափանցիկությունը, որն ապահովվում է լայն շրջանակների ընդգրկմամբ խորհրդակցությունների միջոցով, կարող է մեծապես նպաստել կրթական ոլորտում վստահության ձեռք բերմանը:

Չնայած կրթական ոլորտի ներկայացուցիչների հետ խորհրդակցությունները ցանկալի են, սակայն որոշ համակարգերում նման մոտեցումը իրատեսական չէ: Այն երկրներում, որտեղ որակի ապահովման զարգացումներին աջակցելու հասարակական ներուժը սահմանափակ է, որակի ապահովումը պետք է սահմանվի պետական, ԲՈՒՀ-ական կամ մասնագիտական ղեկավար մարմինների որոշման հիման վրա: Իրական մասնակցությունը հնարավոր և արժեքավոր կլինի միայն հետագա փուլերում: Սա իհարկե չի նշանակում, որ շահառուների կարծիքներին չպետք է հետամուտ լինել: Այնուամենայնիվ, հնարավոր է, որ հարկավոր լինի սահմանա-

փակել այդ կարծիքները հաշվի առնելով միայն որակի ապահովման սխեմաների մշակման առավել յուրահատուկ ասպեկտներին վերաբերողները: Այս դեպքում կրկին ամեն ինչ կախված է նպատակներից: Որակի վերահսկմանն ուղղված համակարգերը սովորաբար ենթադրում են այլ սուբյեկտների մասնակցության փոքր չափ, մինչդեռ դեպի որակի բարելավում կողմնորոշված սխեմաները անպայմանորեն պահանջում են մասնակցության ավելի բարձր աստիճան:

Ընթացակարգեր

Որակի ապահովման գործակալությունը պետք է որոշումներ կայացնի որակի ապահովման շրջանակի ասպեկտներից շատերի վերաբերյալ և այդ որոշումների մասին տեղեկացնի իր շահառուներին, մասնավորապես ԲՈՒՀ-երին: Օգտակար կլինի հետևյալ ասպեկտներին վերաբերող ուղեցույցների և հնարավոր է նաև ձեռնարկների պատրաստումը.

- ինչպես դիմել որակի ապահովման գործակալությանը գնահատման համար,
- ինչպիսի տեղեկություններ պետք է տրամադրվեն,
- ինչպիսի պարտականություններ են ԲՈՒՀ-երը ստանձնում, երբ ընդգրկվում են որակի ապահովման գործընթացներում,
- ինչպիսի պարտականություններ են ստանձնում որակի ապահովման գործակալությունները այդ հաստատությունների նկատմամբ,
- ինչ է ակնկալվում ԲՈՒՀ-երից իրենց ինքնագնահատման գործընթացի առումով,
- ինչպես է իրականացվելու արտաքին գնահատումը,
- ինչպես են կայացվելու որոշումները,
- որոնք են լինելու որոշումների հետևանքները:

3. Գործընթացների կառավարում

Մեթոդաբանության հաջողությունը կախված է նրանից, թե ինչ հաջողությամբ է այն ներդրվում: Շատ կարևոր է, որ հետևյալ գործառույթներն իրականացվեն արհեստավարժ կերպով.

1. ԲՈՒՀ-երի հետ հաղորդակցությունը որակի ապահովման գործընթացում և ԲՈՒՀ-երից տվյալների ստացման կազմակերպումը,

2. արտաքին գնահատողների ընտրությունը և վերապատրաստումը,
3. գնահատող խմբի կազմի որոշումը և այցելությունների կազմակերպումը,
4. գնահատող խմբից երաշխավորությունների ստացումը:

Այս հարցերը և կիրառվող հնարավոր տարբերակները որոշ չափով քննարկվել են *Մոդուլ 2-ում*: Ստորև կդիտարկենք գործնական մի շարք մանրամասներ, մասնավորապես ձեռնարկների, երաշխիքների, ուղենիշերի, մշակումը, որոնք կօգնեն որակի ապահովման գործակալություններին արդյունավետորեն իրականացնելու իրենց պարտականությունները:

ԲՈՒՀ-երի հետ հաղորդակցությունը որակի ապահովման գործընթացում և ԲՈՒՀ-երից տվյալների ստացման կազմակերպումը

Գնահատման ոլորտում քաղաքականության և դրա հետ կապված մշակումների վերաբերյալ ԲՈՒՀ-երին տեղեկացումը, դեպի որակի ապահովման գործընթաց ԲՈՒՀ-երի կողմնորոշումը, նախապատրաստական գործընթացին աջակցումը, ինքնագնահատման գործընթացի արդյունավետ կազմակերպման համար անհրաժեշտ պահանջների կատարման ապահովումը և ԲՈՒՀ-երից տվյալների ստացման կազմակերպումը այնպիսի գործառույթներ են, որոնք պահանջում են ԲՈՒՀ-երի հետ սերտ կապերի հաստատում:

Լուրջ ուշադրություն պետք է դարձվի որակի ապահովման գործակալության կողմից կիրառվող տարբեր քաղաքականություններին, ընթացակարգերին և դրանց կիրառմանը, որպեսզի դրանք հստակ լինեն գործակալության անձնակազմի համար: Որակի ապահովման գործակալությունները դրան հասնում են մշակելով ձեռնարկներ և ուղեցույցներ, որոնք կարող են օգտագործվել անձնակազմի, գնահատողների և ԲՈՒՀ-երի կողմից: Այս գործառույթի իրականացմանը նպաստում են նաև փորձի փոխանակման նպատակով անձնակազմի մասնակցությամբ ներքին ժողովների և խորհրդակցությունների կազմակերպումը, «Հաճախակի տրվող հարցերի և պատասխանների» ամփոփումը և ԲՈՒՀ-երի հետ կապերը: Որակի ապահովման գործակալությունը կարող է դիտարկել հետևյալ գործառույթների իրականացումը.

- կանոնների և ընթացակարգերի հստակ ձեռնարկի մշակում,
- ինքնագնահատման ձեռնարկի մշակում,

- կարևոր բազային տեղեկատվության հստակ առանձնացում (այն կարող է ընդգրկել նաև ձևանմուշների կամ այլ գործիքների մշակումը),
- ԲՈՒՀ-երի անձնակազմերի համար աշխատաժողովների կազմակերպում:

Ներդիր 3-ը ստորև նկարագրում է Դանիական Գնահատման Ինստիտուտի (ԴԳԻ) անձնակազմի սերտ համագործակցությունը արտաքին գնահատողների հետ:

Ներդիր 3 - Դանիական Գնահատման Ինստիտուտ (ԴԳԻ)

Դանիական Գնահատման Ինստիտուտը (ԴԳԻ) յուրաքանչյուր գնահատման դիմումի համար կազմում է նախագծի խումբ: Նախագծի խումբը սովորաբար ընդգրկում է մեկ կամ երկու գնահատողի, մեկ գնահատողի օգնականի և մեթոդաբանության, հողորդակցության ու վարչարարության մեջ մասնագիտացված ստորաբաժանումների մեկական ներկայացուցչի: Խմբի բոլոր անդամները համարվում են ԴԳԻ-ի աշխատակիցներ: Գնահատողներից մեկը ղեկավարում է նախագիծը և պատասխանատու է գնահատվող հաստատության, նախագծի խմբի ու գնահատող խմբի միջև կապերի համար: Նախագծող խումբը պատասխանատու է գնահատման աշխատանքների կատարման, ներառյալ վերջնական հաշվետվության կազմման համար:

Նախագծող խումբը կատարում է նախնական ուսումնասիրություն, որպեսզի ստանա ընդհանուր պատկերը և համոզվի, որ գնահատումը ընդգրկում է ուշադրության կենտրոնում գտնվող բոլոր ոլորտները: Նախնական ուսումնասիրության հիման վրա ստեղծվում է գնահատող խումբ և ձևակերպվում են գործառույթներին և ակնկալվող արդյունքներին վերաբերող պահանջները: Այնուհետև դրանք հաստատվում են ԴԳԻ-ի խորհրդի կողմից:

Յուրաքանչյուր գնահատման համար ԴԳԻ-ն ձևավորում է գնահատող խումբ, որը կազմված է գնահատվող ոլորտում մասնագիտական գիտելիքներ և փորձ ունեցող անձանցից: Նախագծի խմբի անդամները չեն ընդգրկվում գնահատող խմբի մեջ: Գնահատող խումբը պատասխանատու է գնահատման բովանդակության և հաշվետվություններում ընդգրկվող երաշխավորությունների համար: Գնահատման վերաբերյալ միջազգային տեսակետ ունենալու համար ԴԳԻ-ը սովորաբար ներգրավում է մասնագետի սկանդինավյան որևէ երկրից:

Գնահատումն ընդգրկում է մեկ կամ մի քանի լրացուցիչ հետազոտություններ: Այս հետազոտությունները ԴԳԻ-ի համար հիմնականում իրականացնում են խորհրդատվական գործակալությունները և շուկայի հետազոտման ինստիտուտները: Գնահատման հաշվետվության մեջ ընդ-

Մոդուլ 3 - Որակի ապահովման գործակալության հիմնում և զարգացում

գբրկվող երաշխավորությունների համար այցելությունների և ինքնագնահատման հաշվետվությունների (նախագծի խմբի ուղենիշներին համապատասխան) հետ մեկտեղ հիմք են ծառայում նաև լրացուցիչ հետազոտությունները: Հաշվետվության հրապարակումից հետո այս հետազոտությունների արդյունքները կարելի է գտնել առանձին հավելվածներում:

Գնահատող և նախագծի խմբերը սովորաբար այցելում են այն հաստատությունները, որոնց պատրաստվում են գնահատել: Այցելությունների ընթացքում գնահատող խումբը հնարավորություն է ստանում զրուցել անձնակազմի, ուսանողների և ղեկավարության հետ: Այցելության նպատակը հաշվետվության համար լրացուցիչ տեղեկությունների և փաստաթղթերի ձեռք բերումն է: Նախքան այցելությունը, ինքնագնահատման հաշվետվությունների հիման վրա նախագծային խումբը պատրաստում է այն հարցերի ցանկը, որոնց պետք է անդրադառնա գնահատող խումբը: Նախագծի խումբը արձանագրություն է կազմում յուրաքանչյուր այցելությունից հետո: Այցելությունների արձանագրությունները նախատեսված են միայն ԴԳԻ-ի ներքին օգտագործման համար:

Ուսումնական ծրագրի գնահատման արդյունքում կազմվում է մեկ միասնական հաշվետվություն, մինչդեռ ուսումնական հաստատությունների գնահատումից հետո կազմվում են առանձին հաշվետվություններ յուրաքանչյուր հաստատության համար: Հաշվետվության մեջ գնահատող խումբը ներկայացնում է իր եզրակացությունները և առաջարկները կրթական ծրագրի որակի կատարելագործման ուղղությամբ: Հաշվետվությունը նաև պարունակում է գնահատման նպատակի ու գործընթացի նկարագրություն և փաստաթղթերի վերլուծություն: Նախքան հրապարակումը հաշվետվությունը ներկայացվում է ուսումնական հաստատությանը մեկնաբանությունների և հնարավոր սխալների ուղղման նպատակով:

Ուսումնական հաստատությունները պարտավոր են հետամուտ լինել գնահատման արդյունքներին: Դանիայի Կրթության նախարարության կողմից ընդունված որոշման համաձայն գնահատված բոլոր հաստատությունները պետք է պատրաստեն հետգնահատման գործողությունների ծրագիր: Այդ ծրագրում հաշվի են առնվում գնահատման հաշվետվության երաշխավորությունները, սակայն նաև կարող են ընդգրկել այնպիսի նախաձեռնություններ, որոնց իրականացման վերաբերյալ հաստատությունը որոշում է կայացրել ինքնագնահատման գործընթացի արդյունքում: Գործողությունների ծրագիրը պետք է հրապարակվի հանրությանը ոչ ուշ քան հաշվետվության հրապարակումից վեց ամիս անց և պետք է տեղ գտնի ուսումնական հաստատության ինտերնետային կայքում:

Աղբյուր. Դանիական Գնահատման Ինստիտուտի համացանցի կայք

Արտաքին գնահատողների ընտրություն և վերապատրաստում

Որակի ապահովման գործընթացների արդյունավետ իրականացման համար որակի ապահովման գործակալությունը պետք է հստակ պատկերացնի, թե ինչ է ակնկալում իր գնահատողներից: Հետևաբար այն պետք է ընտրի այնպիսի փորձագետների, որոնք կհամապատասխանեն ակնկալվող գործառույթներին: *Ներդիր 4-ը* նկարագրում է այն պարտականությունները, որոնց կատարումն ակնկալվում է Միացյալ Թագավորության ՈԱԳ-ան գնահատողներից, ինչպես նաև ներկայացնում է այդ պարտականությունների հաջող իրականացմանն անհրաժեշտ գիտելիքները և հմտությունները: Գնահատողներն ընտրվում են այս ակնկալիքների հիման վրա:

Ներդիր 4 - Արտաքին գնահատողների գործառույթներն ու պարտականությունները (Միացյալ Թագավորություն)

Գնահատողների պարտականությունների մեջ մտնում են.

- ուսումնական հաստատությունների կողմից պատրաստած ինքնագնահատման հաշվետվությունների, ինչպես նաև նախապես գնահատողներին ուղարկված այլ փաստաթղթերի վերլուծությունը,
- մասնակցությունը խորհրդակցություններին,
- փաստերի հավաքագրման, փոխանակման և ստուգման նպատակով ուսումնական հաստատություններ այցելություններին մասնակցելը,
- ուսումնական հաստատությունների ակադեմիական չափորոշիչների և որակի կառավարման վերաբերյալ դատողությունների ներկայացումը,
- գնահատման հաշվետվության կազմմանը աջակցելը և մեկնաբանությունների ներկայացումը,
- մասնակցությունը գնահատողների խորհրդակցություններին և վերապատրաստման ժողովներին:

Գնահատողների ընտրությունը կատարում է Գործակալությունը՝ ձգտելով ընդգրկել այնպիսի գնահատողների, ովքեր.

- ունեն բավարար գիտելիքներ ԲՈՒՀ-երի վերաբերյալ,
- ունեն ակադեմիական կառավարման և որակի ապահովման հարուստ փորձ,
- պատրաստ են ընկալել մեծ ծավալի տարատեսակ տեղեկատվություն,
- կարող են կատարել վերլուծություններ և հիմնավոր դատողություններ անել բարդ երևույթների վերաբերյալ,
- կարող են իրականացնել բարձր մակարդակի քննարկումներ ռազմավարական և գործառնական մոտեցումների վերաբերյալ,
- վայելում են ԲՈՒՀ-երի ղեկավար անձնակազմի և ղեկավարների անձնական վստահությունը:

Աղբյուր. Որակի Ապահովման Գործակալության համացանցի կայք

Այս ակնկալիքները չեն վերաբերվում միայն գնահատողների ընդունակությանը այցելել ուսումնական հաստատություն կամ կրթական ծրագրի իրականացման վայր և երաշխավորություններ ներկայացնել: Դրանք շատ ավելի բարդ են: Որակի ապահովման գործակալությունը պետք է չափազանց հստակ սահմանի, թե գնահատողներից ինչպիսի մակարդակի գնահատումներ և դատողություններ է պահանջում: Պետք է նաև հստակեցվի թե գործակալությունը ինչպես է պատկերացնում նրանց ներգրավումը որոշումների կայացման հետգա գործընթացներում. Սա անհրաժեշտ է, քանի որ գործակալությունների մեծ մասում այցելությունների արդյունքները առնվազն ևս մեկ մակարդակով ենթարկվում են մշակման: Ավելին, դրանց իրականացման եղանակները չափազանց բազմազան են:

Որոշ գործակալություններ մեծապես հենվում են գնահատող խմբի այցելությունների կամ գործընկերային փորձաքննության արդյունքների վրա: Նրանք միայն ստուգում են, թե արդյոք այցելության ընթացքում օբյեկտիվություն է ցուցաբերվել, գնահատվող ուսումնական հաստատություններից, ծրագրերից կամ այցելությունը համակարգող գործակալության անձնակազմից ստացվել են արդյոք բացասական կարծիքներ և արձագանքներ (պետք է նաև հստակեցվի, թե որ կարծիքն է անհրաժեշտ կամ ընդունելի): Եթե դրանք ընունելի են համարվում, որակի ապահովման գործընթացի արդյունքը դառնում են գնահատող խմբի երաշխավորությունները: Այս պարագայում որակի ապահովման գործակալությունը պետք է ավելի ուշադիր լինի խմբի կազմը որոշելիս: Ճիշտ կազմի ընտրությունը գնահատողներին հնարավորություն կտա պատշաճ երաշխավորու-

թյուններ տրամադրել գործակալությանը: Դա նաև թույլ կտա երաշխավորել, որ նրանց գնահատումները հետագայում չեն դառնա տարածայնությունների առարկա: Վերոնշյալը ավելի կարևոր է դառնում բարձրագույն կրթության խոշոր համակարգերում, ինչպես նաև որակի գնահատման այն մոդելներում, որտեղ գործակալության անձնակազմը չի մասնակցում ուսումնական հաստատություններ կատարվող այցելություններին:

Որոշ գործակալություններ գնահատողներից պահանջում են, որպեսզի նրանք գնահատման հենքի հիման վրա միայն խորհուրդ տան կամ հայտնեն ուսումնական հաստատության (կամ ծրագրի) վերաբերյալ իրենց տպավորությունները: Գնահատող խմբի դիտարկումների ամփոփման գործում հիմնական դերը կարող է ստանձնել գործակալության անձնակազմը: Այն նաև կարող է օգնել գործակալությանը կայացնելու որակի ապահովման վերաբերյալ վերջնական եզրակացությունը և որոշումը:

Գնահատող որոշ խմբեր հայտնում են ԲՈՒՀ-երին իրենց գնահատման հիմնական արդյունքները: Այուսները ոչինչ չեն բացահայտում: Յուրաքանչյուր տարբերակ կապված է գնահատող խմբի գործունեության մոտեցման հետ: Կիրառվող մոտեցումից բխող գործառույթները պետք է հստակ և ընկալելի լինեն գործընթացում ընդգրկված բոլոր անձանց համար: Կարևոր է, որ գործառույթները վերածվեն փաստաթղթավորված քաղաքականության և հասանելի լինեն բոլորին: Գնահատողներին ներկայացվող պահանջներին և նախատեսվող պարտականություններին համապատասխան ընտրելուց հետո անհրաժեշտ է գործի դնել համապատասխան վերապատրաստման ռազմավարություններ: Դրանք կքննարկվեն *4-րդ* հատվածում:

Գնահատող խմբի կազմի որոշումը

Հաշվի առնելով այնպիսի գործոններ, ինչպիսիք են որակի ապահովման միավորի բնույթը և գնահատողների խմբին ներկայացվող պահանջները, գործակալությունը կարող է նախապես առանձնացնել գնահատողների ընդհանուր ցանկ: Այս գնահատողներից այնուհետև կընտրվի այն խումբը, որը այցելելու է կոնկրետ ուսումնական հաստատություն· Այս ընթացքում անհրաժեշտ է ուշադրություն դարձնել երկու հիմնախնդրի վրա

- խմբի հավասարակշռման
- շահերի բախման բացառման:

Խմբի հավասարակշռում

Հարկ է նշել, որ միայնակ գործող գնահատողը չի կարող իրազեկվել ԲՈՒՀ-ի կամ ուսումնական ծրագրի գործունեության բոլոր աս-

պեկտներին (չնայած մեկ կամ երկու անձնանցից բաղկացած խումբը կարող է ողջամիտ գնահատում իրականացնել): Գնահատողներից յուրաքանչյուրի կողմից որակի ընկալման վրա կարող են ազդել որակի ապահովման գործակալության հսկողությունից դուրս գտնվող բազմաթիվ գործոններ: Վերապատրաստման ծրագրի ընթացքում գործակալությունը չի կարող չեզոքացնել բոլոր անձնական ընկալումները: Դրան չի կարող հասնել նույնիսկ առավել հիմնավոր և մանրամասն վերապատրաստումը:

Հաշվի առնելով այս ամենը գործակալությունը պետք է ապահովի խմբի այնպիսի կազմ, որը կիրականացնի որակյալ կոլեկտիվ գնահատում: Խմբի կազմում ընդգրկված անձանց գիտելիքների և հմտությունների համադրությունը ավելի անաչառ կդարձնի գնահատումը, քանի որ ներկայացված կլինեն տարբեր տեսակետներ: Կոլեկտիվ գնահատման արդյունքները առավելագույնի հասցնելու համար որակի ապահովման գործակալությունը կարող է հաշվի առնել երեք կարևոր գործոն: Դրանք են ա) գնահատման այցելության հետ առնչվող կրթական և վարչարարական առկա փորձառությունը, բ) գնահատողների կարողությունները, ինչպիսիք են, օրինակ, հաշվետվություններ կազմելը և հարաբերություններ ձևավորելը, գ) թիմային աշխատանքի համար անհրաժեշտ անձնական հատկանիշները, ինչպիսիք են, օրինակ, խմբերում աշխատելու ընդունակությունը և ուրիշներին լսելու պատրաստականությունը: *Մոդուլ 2-ում* քննարկվել են արտաքին գնահատողների փորձի հավասարկշռման տարբերակները (մասնավորապես մասնագետների և ունիվերսալների, կամ տեղական և արտասահմանյան փորձագետների ներգրավումը):

Արտաքին գնահատողների համար վերապատրաստումների աշխատաժողովները չափազանց օգտակար են գործակալության ակնկալիքները հստակ ներկայացնելու տեսակետից: Դրանց ընթացքում ապագա գնահատողներին կարող է նաև ներկայացվել, թե ինչպես իրականացնել այն աշխատանքը, որն ակնկալվում է իրենցից: Միևնույն ժամանակ դրանք նաև շատ լավ հնարավորություն են ուսումնասիրելու ապագա գնահատողներին և առանձնացվելու նրանց, ովքեր առավելագույնը կհամապատասխանեն որոշակի պայմանների (կամ նրանք, ովքեր ոչ մի պարագայում չեն համապատասխանի):

Շահերի բախման բացառումը

Վերը քննարկված գործոնները հաշվի առնելով ընտրված գնահատողների ընդհանուր ցանկի համար գործակալությունը պետք է պարզի, թե արդյոք այդ գնահատողներն ունեն շահերի որևէ բախում գնահատվող ուսումնական հաստատության կամ ծրագրի հետ: «Շահերի բախումը» առաջանում է այն ժամանակ, երբ անձնական շահերը կամ հանգամանքները հակադրության մեջ են գտնվում տվյալ անհատի պաշտոնական գործողությունների կամ պարտականությունների հետ:

Յուրաքանչյուր գործոն, որը կարող է ազդել գնահատվող միավորի վերաբերյալ օբյեկտիվ դատողություններ կատարելու գնահատողի ընդունակության վրա, կամ որը ողջամիտ հիմնավորմամբ հնարավոր է, որ նման ազդեցություն ունենա, կարող է մեկնաբանվել որպես շահերի բախման հիմք: Գնահատողները պետք է լինեն իրենց անաչառությամբ հայտնի փորձագետներ: Ամեն դեպքում, օբյեկտիվությունը երաշխավորելու և ապահովելու նպատակով գործակալությունը պետք է ունենա շահերի բախման վերաբերյալ հստակ քաղաքականություն: Որոշ գործակալություններում պահանջվում է հավաստիացման ներկայացում, որ գնահատողը որևէ առնչություն չունի գնահատման ներկայացված հաստատության հետ: Այդ առնչությունը, լինի դա ներկա թե անցյալ, կարող է լինել ուղղակի կամ անուղղակի որևէ մոտ բարեկամի միջոցով որպես այդ հաստատության աշխատակից կամ ղեկավար որևէ մարմնի անդամ, խորհրդատու կամ շրջանավարտ: Շահերի բախման վերաբերյալ հուսալի քաղաքականությունը էական նշանակություն ունի գործընթացի վստահելիությունը ապահովելու համար:

Ներդիր 5 - Շահերի բախման վերաբերյալ քաղաքականություն (Ավստրալիա, Հնդկաստան)

Ավստրալիա

Աուդիտի խմբի ընտրության ժամանակ հարցում է կատարվում առաջարկվող աուդիտորներին և աուդիտի ենթարկվող կազմակերպությանը, թե արդյոք նրանց հայտնի են փաստեր, որոնք կարող են առաջացնել շահերի բախում, եթե տվյալ աուդիտորը ընդգրկվի տվյալ հաստատության կամ գործակալության աուդիտի խմբում: Եթե առաջարկվող աուդիտորի պատասխանը դրական է, ԱՀՈԳ-ը կարող է նրան չընդգրկել խմբում, կամ պատճառները հաշվի առնելով որոշել, որ իրականում շահերի բախում առկա չէ: Եթե աուդիտի ենթակվող կազմակերպության պատասխանը դրական է, կամ կազմակերպությունը որևէ հիմնավորմամբ չի ցանկանում, որ տվյալ անձը ընդգրկվի աուդիտի խմբում, ապա պետք է նշվեն պատճառները: Աուդիտի խմբում տվյալ անձին ընդգրկելու վերաբերյալ վերջնական որոշումն ընդունում է ԱՀՈԳ-ը:

Եթե շահերի բախման առկայությունը հայտնաբերվում է (կամ ավելի հազվադեպ առաջանում է) աուդիտի ընթացքում, տվյալ աուդիտորը պետք է հայտնի խմբի ղեկավարին և/կամ խմբում ընդգրկված ԱՀՈԳ-ի անձնակազմի անդամին: Վերջիններս որոշում են, թե ինչպիսի քայլեր պետք է ձեռնարկվեն (խորհրդակցելով ԱՀՈԳ-ի գործադիր տնօրենի հետ):

Աղբյուր. Ավստրալիական Համալսարանների Որակի Գործակալության համացանցի կայք

Շահերի բախման վերաբերյալ հավաստագիր, որը ստորագրում է գնահատողների և ԲՈՒՀ-երի կողմից Հնդկաստանում

<u>Փորձագետի հայտարարությունը շահերի բախման բացակայության վերաբերյալ</u>

Սույնով հավաստվում է, որ ես չունեմ շահերի որևէ բախում ստորև ներկայացված հաստատության հետ.

- Ես որևէ կերպով կապված չեմ և կապված չեմ եղել նշված հաստատության հետ ուղղակիորեն կամ անուղղակիորեն, որևէ մոտ բարեկամի միջոցով, չհանդիսանալով այդ հաստատության աշխատակից կամ ղեկավար որևէ մարմնի անդամ, խորհրդատու կամ նույնիսկ շրջանավարտ:

- Ես ծագումով տվյալ հաստատության նահանգից չեմ:

- Ես որևէ կերպ կապված չեմ գնահատմանը ներկայացված հաստատության հետ ուղղակիորեն մրցակցող որևէ հաստատության հետ:

Փորձագետի անունը և ստորագրությունը

<u>Հաստատության հայտարարությունը շահերի բախման բացակայության վերաբերյալ</u>

Սույնով հավաստվում է, որ Փորձագիտական խմբի անդամներից որևէ մեկը կապված չի և կապված չի եղել մեր հաստատության հետ ուղղակիորեն կամ անուղղակիորեն՝ որևէ մոտ բարեկամի միջոցով, չհանդիսանալով աշխատակից կամ ղեկավար որևէ մարմնի անդամ, խորհրդատու կամ նույնիսկ՝ շրջանավարտ:

Առնվազն առաջիկա մեկ տարվա ընթացքում առաջարկվող խմբի անդամներից ոչ մեկը չի նշանակվի հաստատության որևէ կարևոր պաշտոնում:

Հաստատության ղեկավարի անունը և ստորագրությունը

ԱՀՈԳ-ը նշում է շահերի բախման երեք տեսակ անձնական, մասնագիտական և գաղափարական: Այս երեք տեսակների միջև կարող են որոշ համընկնումներ լինել: Անձնական շահերի բախումները կարող են ներառել գնահատողի և հաստատության գործադիր տնօրենի կամ ղեկավարության որևէ այլ անդամի միջև թշնամանքը, մտերիմ ընկերությունը կամ բարեկամությունը: Որպես այդպիսին կարող է դիտարկվել նաև գնա-

հատողի ծայարահեղ մոտեցումը գնահատվող հաստատության օգտին կամ դեմ, որպես նախկին իրադարձության արդյունք: Այդ պատճառով հաստատության շրջանավարտները սովորաբար չեն ընդգրկվում այդ հաստատությանը գնահատող խմբի կազմում:

Մասնագիտական բախումներ կարող են առաջանալ, եթե նախկինում մերժվել է գնահատողի կողմից տվյալ հաստատություն ներկայացված դիմումը, եթե գնահատողը ներկայումս դիմել է տվյալ հաստատություն կամ նրան հնարավորություն է ընձեռնվել հաստատությունում աշխատանքի անցնելու, եթե նա հանդիսանում է կազմակերպության գլխավոր խորհրդատու կամ փորձագետ, կամ աշխատում է գնահատվող հաստատության հետ ուժեղ մրցակցության մեջ գտվնող հաստատությունում:

Շահերի գաղափարական բախման օրինակ կարող է լինել գնահատողի հակակրանքը հաստատության ոճի կամ ավանդույթների նկատմամբ:

Որակի ապահովման գործակալություններից շատերը շահերի բախման վերաբերյալ շատ թե քիչ նմանատիպ ընկալում ունեն և փորձում են բացառել նույնիսկ շահերի բախման առերևութականությունը:

Վարժություն 2

Ուսումնասիրեք որակի ապահովման գործակալությունների համացանցի կայքերը, որպեսզի պարզեք «շահերի բախման» վերաբերյալ առկա քաղաքականությունները:

Եթե որակի ապահովման գործակալություններն իրենց համացանցի կայքերում տեղադրել են հաստատված ձևեր, որոնք պետք է ստորագրվեն գնահատողների և ԲՈՒՀ-երի կողմից, այն մասին, որ «շահերի բախում» առկա չէ, ներբեռնեք դրանք և համեմատեք

Այցելությունների իրականացում

Գնահատող խմբի կազմը որոշելուց հետո որակի ապահովման գործակալությունը կարող է խորհրդակցել ԲՈՒՀ-ի հետ այցելությունը պլանավորելու նպատակով: Այցելության հիմնական նպատակը գործակալության գնահատման շրջանակի հիման վրա ուսումնական հաստատության (կամ կրթական ծրագրի) որակի վերաբերյալ կոլեկտիվ եզրահանգման համար փաստերի ստացումն է: Փաստերի հավաքագրումը դյուրին դարձնելու համար այցելության օրակարգը սովորաբար ընդգրկում է երեք տեսակի գործողություններ.

- հաստատության մաս կազմող տարբեր անձնանց հետ հաղորդակցությունը,
- հաստատության որոշ կամ բոլոր գլխավոր ենթակառուցվածքներ այցելությունը,
- փաստաթղթերի ստուգումը:

Այցելության ընթացքում, բացի հաստատության (կամ ուսումնական ծրագրի) գործադիր մարմնի և կառավարչական անձնակազմի հետ հանդիպումներից, գնահատողները հաղորդակցվում են նաև դասավանդողների, անձնակազմի և սովորողների խմբերի հետ: Շատ դեպքերում կազմակերպվում են նաև քննարկումներ շրջանավարտների, գործատուների և հանրության հետ: Այս շփումները օգնում են գնահատողներին զգալ հաստատության ուսումնական միջավայրը և տեղեկատվություն ստանալ հստակեցման կարիք ունեցող հարցերի վերաբերյալ:

Գնահատողները կարող են խնդրել հաստատությունների կողմից ինքնագնահատման հաշվետվությունների մեջ կատարված պնդումները հիմնավորող փաստաթղթեր: Գնահատողները երբեմն կարող են աշխատել ենթախմբերով: Այս կերպ նրանք կարող են օգնել խմբի ղեկավարին ձևավորելու կոլեկտիվ եզրակացություն: Այցելության օրակարգը պետք է բավարար ժամանակ հատկացնի գնահատողների դատողությունների, ստացված փաստերի և դիտարկվելիք լրացուցիչ հարցերի քննարկման համար:

Որակի ապահովման գործակալություններից մեկի տիպային օրակարգը ներկայացված է *Ներդիր 6-ում:* Այս դեպքում այցելությունը տևում է մոտ երեք օր: Օրերի քանակը կարող է տարբեր լինել կախված այցելվող միավորի մեծությունից, գնահատման խորությունից և այցելության իրականացման մոտեցումից: Եթե հաստատությունը մեծ է կամ այցելության օրակարգը պահանջում է գնահատողներից այցելելու հաստատության բոլոր բաժանմունքները և ենթակառուցվածքները, ապա այցելությունը ավելի շատ ժամանակ կպահանջի: Սովորաբար այն տևում է երեքից հինգ օր:

Ներդիր 6 - Այցելության ժամանակացույց (Հնդկաստան)

Օր 0. Խմբի անդամների ժամանում և գործընկերային խմբի առաջին քննարկում

17:00-19:00. Ժամանման վայրում գործընկերային խմբի առաջին քննարկում (փորձագիտական խմբի դռնփակ ժողով)
Քննարկման օրակարգ.
- Նախնական անհատական գնահատումների վերաբերյալ նշումների համեմատություն
- Լրացուցիչ ուսումնասիրություն պահանջող հարցերի առանձնացում
- Լրացուցիչ փաստերի հավաքագրման համար պարտականությունների բաշխում
- Հաշվետվության կազմման պարտականությունների բաշխում:

Օր 1. Այցելություն ուսումնական հաստատություն
1-ին փուլ. 09:00 – 10:00 - Հանդիպում հաստատության ղեկավարի և ինքնագնահատման հաշվետվությունը կազմող հանձնաժողովի անդամների հետ

2-րդ փուլ. 10:00 – 11:00 - Հանդիպում կառավարման խորհրդի հետ

3-րդ փուլ. 11:00 – 12:30 - Այցելություն գրադարան ու համակարգչային կենտրոն և հաղորդակցում տեղի անձնակազմի հետ

(12:30 – 14:00. Գործնական ճաշ ղեկավար մարմնի և ինքնագնահատման հանձնաժողովի անդամների հետ)

4-րդ փուլ. 14:00 – 15:30 - Այցելություն ըստ բաժինների և հաղորդակցում դրանց դասախոսական անձնակազմի հետ (խումբը բաժանվում է ենթախմբերի)

5-րդ փուլ. 15:30 – 16:00 - Փաստաթղթերի հավաստիության ստուգում

6-րդ փուլ. 16:00 – 17:00 - Հաղորդակցում ծնողների և շրջանավարտների հետ

19:00 – 21:00. Գործընկերային խմբի երկրորդ քննարկում - այցելության վայր (փորձագիտական խմբի դռնփակ ժողով)
Քննարկման օրակարգ.
- Մինչ տվյալ պահը հավաքագրված փաստերի քննարկում ,
- Հետագայում ստուգման կարիք ունեցող հարցերի առանձնացում,
- Խմբի կողմից նախնական գնահատման համաձայնեցում,
- Հաշվետվության ենթադրվող հիմնական կետերի քննարկում :

Օր 2.
7-րդ փուլ. 09:00 – 13:00 - Այցելություն հաստատության մնացած բաժիններ և ենթակառուցվածքներ

(13:00- 14:00. Գործնական ճաշ բաժինների ղեկավարների հետ)

8-րդ փուլ. 14:00 – 15:00 - Հաղորդակցում ուսանողների խմբի հետ

9-րդ փուլ. 15:00 – 16:00 - Փաստաթղթերի ստուգում

10-րդ փուլ. 16:00 – 17:00 - Լրացուցիչ պարզաբանումների ստացում և մտահոգության առարկա հանդիսացող հարցերի ներկայացում ուսումնական հաստատության ղեկավարին:

19:00 – 21:00. Գործընկերային խմբի երրորդ քննարկում - այցելության վայր (փորձագիտական խմբի դռնփակ ժողով)
Քննարկման օրակարգ.
- Գնահատականների վերաբերյալ համաձայնության ձեռք բերում
- Հաշվետվության նախնական տարբերակի վերաբերյալ համաձայնության ձեռք բերում:

Օր 3: Այցելության վերջին օրը

11-րդ փուլ. 90:00 – 10:00 - Հաշվետվության նախնական տարբերակի ներկայացում ուսումնական հաստատության ղեկավարին

12-րդ փուլ. 10:00 – 11:00 - Ուսումնական հաստատության ղեկավարից արձագանքի ստացում (Այս փուլը կարող է անսովոր լինել որակի ապահովման համակարգերից շատերում: Սովորաբար խումբը պատրաստում է վերջնական հաշվետվությունը առանց հաստատությունից կարծիք կամ արձագանք ստանալու: Արձագանքը ստացվում է հետագայում, այն բանից հետո, երբ հաստատությունը ստանում է տպագիր հաշվետվությունը և բավարար ժամանակ է ունենում դրան մանրամասնորեն ծանոթանալու համար:)

13-րդ փուլ. 11:00 – 12:00 - Հաշվետվության ամփոփում՝ հաշվի առնելով ստացված արձագանքը

14-րդ փուլ. 12:00 – 12:30 - Ավարտական հանդիպում

Կախված նրանից, թե արդյոք գործակալության անձնակազմը մասնակցելու է այցելությանը, գործակալությունը տարբեր ձևով աջակցում խմբի գործունեությանը: Ուշադրության կարիք ունեցող հարցերից կարող են լինել տարբեր փուլերի համար ուղեցույցների տրամադրումը, քննարկումների և հարցազրույցների համար առանձին օրակարգերի պատրաստումը, փաստերի արձանագրման համար գրանցման թերթիկների տրամադրումը, հաշվետվությունների կազմման համար ձևանմուշների մշակումը, աջակցությունը խմբին խորհրդատվության անհրաժեշտության պարագայում, խմբի և գործակալության միջև արդյունավետ կապի ապահովումը: Գործակալությունների մեծ մասը մշակում է մանրամասն ձեռնարկներ, որոնք այցելությունների ժամանակ կարող են օգտագործվել խմբի կողմից: Այլ հարցերի թվում, դրանք կարող են օգնել հստակեցնելու քաղաքականությունների և ընթացակարգերի մեկնաբանությունները:

Ներդիր 6-ում ներկայացված այցելության օրակարգում գործակալությունն աջակցում է յուրաքանչյուր փուլի օրակարգի մշակման գործում: Օրակարգը նաև ցույց է տալիս, որ գնահատող խումբը պետք է ներկայացնի տպագիր հաշվետվություն ուսումնական հաստատության ղեկավարին արձագանք ստանալու համար: Սա ենթադրում է, որ յուրաքանչյուր փուլ կարող է բավականին յուրահատուկ լինել: Հետևաբար փուլերը պետք է ունենան հստակ կառուցվածք և ապահովվեն որոշակի միջոցներով: Դեպքերի մեծամասնությունում գնահատման հիմնական կետերը առնվազն բանավոր կերպով ներկայացվում են ուսումնական հաստատությանը այցելության վերջում հանդիպման ժամանակ (ավարտական հանդիպում): Սա խնդրահարույց գործողություն է և պահանջում է, որպեսզի այցելությունը հստակ սահմանված ու կշռադատված լինի:

Գնահատող խմբի երաշխավորությունների ստացում

Գնահատող խմբի դիտարկումները, հաշվետվությունը և երաշխավորությունները այնուհետև հանձնվում են գործակալությանը հետագա մշակման համար: Որակի ապահովման գործակալությունների մեծ մասը նախնական հաշվետվությունը կամ գնահատող խմբի երաշխավորությունները ուղարկում է ուսումնական հաստատություն: Վերջինս կարող է պատասխան ուղարկել և ստուգել փաստերի ճշտությունը:

Սովորաբար ԲՈՒՀ-երը մասնակցում են տպագիր հաշվետվությունում առկա սխալների կամ թյուրիմացությունների շտկմանը: Նոր Զելանդիայի Համալսարանների Ուսումնական Աուդիտի Կենտրոնը (ՆԶՀՈՒԱԿ) համալսարաններին հնարավորություն է ընձեռում մեկնաբանություններ ներկայացնելու հաշվետվությունում արձանագրված փաստերի և շեշտադրումների վերաբերյալ: Որակի ապահովման տարածվող գործելակերպ է ԲՈՒՀ-երին գնահատող խմբի և իրականացված գնահատման վերաբերյալ արձագանք տալու հնարավորության ընձեռումը: Այդուհանդերձ, որակի ապահովման և արտաքին գնահատման զարգացած ավանդույթներ չունեցող համակարգերում ԲՈՒՀ-երը կարող են արտաքին գնահատման խմբի վերաբերյալ կարծիք հայտնելու հնարավորություն չունենալ: Գոյություն ունեն նաև համակարգեր, որոնցում գնահատող խմբի երաշխավորությունները չեն ներկայացվում ուսումնական հաստատությանը:

Այս փուլից հետո քննարկվում են գնահատող խմբի երաշխավորությունները որակի ապահովման վերջնական որոշման կայացման նպատակով:

Մոդուլ 3 - Որակի ապահովման գործակալության հիմնում և զարգացում

4. Որոշումների կայացում և արդյունքների ներկայացում

Մոդուլ 2-ում մենք քննարկեցինք որոշումների տարբեր տեսակներ, որոնք կարող են կայացվել որակի ապահովման գործընթացի արդյունքում: Որակի ապահովման արդյունքների ներկայացման համապատասխան մոդել ընտրելու համար գործակալությունը պետք է հաշվի առնի տարբեր գործոններ: Դրանցից հիմնականները կարող են ներառել որակի ապահովման արդյունքների օգտագործման նպատակները, համակարգի չափերը և կրթության որակի առումով ուսումնական հաստատությունների միջև տարբերությունների աստիճանը: Որակի գնահատման արդյունքների ներկայացման հաստատված մոդելի շրջանակում գնահատողները ներկայացնում են իրենց երաշխավորությունները, դիտարկումները կամ հաշվետվություն են ներկայացնում որակի ապահովման գործակալությանը:

Ինչպես ներկայացվեց *Մոդուլ 2-ում,* այցելության ավարտվին որակի ապահովման գործակալությունը կարող է արդյունքները ներկայացնել կառավարման մարմնին՝ հետագա մշակման կամ հաստատման համար: Կամ էլ գնահատող խմբի երաշխավորությունները և ինքնագնահատման հաշվետվությունը կարող են քննարկվել գործակալության կառավարման մարմնի կողմից: Որոշ գործակալություններում գնահատող խմբերը կարող են միայն դիտարկումներ ներկայացնել: Այնուհետև դրանք քննարկվում են մեկ այլ մարմնի կողմից՝ որոշումների կայացման նպատակով:

Որակի ապահովման գործակալությունների կարգավիճակից և հաճախորդների բնույթից կախված որոշումներ կայացնող մարմնի անդամները տարբերվում են: Սակայն անկախ կարգավիճակից և հաճախորդների բնույթից, հաջողված փորձառությունը պահանջում է, որ որակի ապահովման գործակալությունը լինի բավականաչափ անկախ, որպեսզի ունենա ինքնուրույն պատասխանատվություն իր գործառնությունների համար և երրորդ անձինք չկարողանան ազդել հաշվետվություններում ներկայացվող դատողությունների վրա:

Գործակալությունը պետք է երաշխավորի, որ իր որոշումների կայացման գործընթացը անկախ է, անկողմնակալ, մանրամասն, սպառիչ և արդարացի: Գործակալությունը պարտավոր է երաշխավորել, որ իր որոշումները հետևողական են: Դա ճշմարիտ է նույնիսկ այն դեպքում, երբ դատողությունները կատարվում են տարբեր խմբերի, փորձագետների կամ հանձնաժողովների կողմից:

Մոդուլ 2-ում նաև քննարկվեցին «հաշվետվության գաղտնիության կամ հանրային հրապարակման» հետ կապված տարբերակները: Որոշ գործակալություններ պնդում են, որ հաշվետվությունները միայն ԲՈՒՀ-երի համար են: Նշվում է, որ հասարակությանը պետք է տեղյակ լինի միայն ԲՈՒՀ-երի կարգավիճակի մասին. օրինակ այն մասին, թե դրանք «հավա-

տարմագրված են» թե «չհավատարմագրված»: Հաշվետվությունների լրիվ բացահայտման դեմ փաստարկը կայանում է նրանում, որ թե ԲՈՒՀ-երը, թե արտաքին գնահատողները կարող են շատ ավելի զգուշավոր լինել ուսումնական հաստատության կամ ծրագրի իրական թերի կողմերը նկարագրելիս, եթե նրանք գիտեն, որ հաշվետվությունը հրապարակվելու է:

Այս տեսակետը սատարողները նշում են, որ գոնե որակի ապահովման ներդրման փուլում ցանկալի է ունենալ անկեղծ և ամբողջական, այլ ոչ թե «խմբագրված» հաշվետվություններ. Իհարկե, չի նշանակում, որ արդյունքները կամ արդյունքների հիմքերի հակիրճ ամփոփագիրը չպետք է հրապարակվեն:

Որոշ գործակալություններ հաշվետվությունը հասանելի են դարձնում հիմնական շահագրգիռ կողմերին, ինչպիսիք են պետությունը կամ ֆինանսավորող գործակալությունները: Մյուսները հանրությանը հասանելի են դարձնում միայն արդյունքների ամփոփագիրը:

Այնուամենայնիվ, համակարգերում կա միտում անցնելու դեպի որակի ապահովման արդյունքների վերաբերյալ ավելի շատ տեղեկատվության բացահայտումը շահագռգիռ կողմերին: Որակի ապահովման գործակալությունները, որոնք գնահատման ամբողջական հրապարակման կողմնակից են, նույնիսկ տեղադրում են ամբողջական հաշվետվությունը իրենց համացանցի կայքերում: Խրախուսվում են նաև օգտագործողների և ընթերցողների արձագանքներն ու մեկնաբանությունները: Եվրոպայի Բարձրագույն Կրթության Ոլորտում Որակի Ապահովման Չափորոշիչները և Ուղեցույցները, որոնք մշակվել են ԲԿՈԱԵԱ-ի (Բարձրագույն Կրթության Որակի Ապահովման Եվրոպական Ասոցիացիա) կողմից, անհրաժեշտ են համարում «հնարավորություն տրամադրել ընթերցողներին և օգտագործողներին (համապատասխան ուսումնական հաստատության ներսում կամ դրանից դուրս) հաշվետվությունների օգտակարության վերաբերյալ մեկնաբանություններ կատարելու» (ENQA, 2005):

Որակի ապահովման գործակալությունը պետք է ապահովի բողոքարկման օբյեկտիվ մեխանիզմ այն դեպքերի համար, երբ ԲՈՒՀ-երը չեն համաձայնվում որակի գնահատման արդյունքների հետ:

Բողոքարկման մեխանիզմ

Կայացած որակի ապահովման գործակալությունների մեծամասնությունում ներդրված են բողոքարկման հստակ մեխանիզմներ: Հստակ սահմանված բողոքարկման ընթացակարգի առկայությունը հատկապես կարևոր է այն գործակալությունների համար, որոնք կարող են պաշտոնապես հավատարմագրել ԲՈՒՀ-երը կամ ուսումնական ծրագրերը կամ հետ վերցնել հավատարմագրումը: Գործնականում բողոքարկման ընթա-

ցակարգն օգնում է որակի ապահովման գործակալություններին ավելի մեծ ուշադրություն դարձնել իրենց հայտարարած սկզբունքներին և ապահովում է գործընթացների ավելի արհեստավարժ կառավարումը: Այն նաև ստուգում է, թե ինչպես է կազմակերպված գործընկերային փորձաքննությունը, որպեսզի ապահովվի գնահատման շրջանակի կիրառման հետևողականությունը:

Եվրոպայի բարձրագույն կրթության ոլորտում ԲԿՈԱԵԱ-ի կողմից մշակված *Չափանիշները և Ուղեցույցները* խորհուրդ են տալիս գործակալություններին ունենալու բողոքարկման համակարգ, որը «հնարավորություն է տալիս գնահատվող սուբյեկտներին արտահայտելու իրենց կարծիքները և վիճարկելու գնահատման արդյունքներից բխող եզրահանգումները և որոշումները»:

Այն բանից հետո, երբ որակի ապահովման գործակալությունը հայտնում է ԲՈՒՀ-ին իր որոշման մասին և եթե արդյունքների մասին ծանուցվելուց հետո ձախողված թեկնածուն ցանկանում է բողոքարկել որոշումը, ապա սահմանված ժամկետի ընթացքում պետք է բողոքարկման մտադրության մասին ծանուցում ներկայացվի: Դրանից հետո ԲՈՒՀ-ը ներկայացնում է բողոքարկման դիմումը (որոշ գործակալություններ դրա համար վճար են գանձում): Դիմումում նշվում են որակի ապահովման արդյունքների վիճարկման հիմնավորումները:

Բողոքարկումները քննող գործակալության / հանձնաժողովի կազմի և լիազորությունների բազմաթիվ տարբերակներ գոյություն ունեն: Որակի ապահովման գործակալությունը կարող է ունենալ բողոքարկման հանձնաժողով ստեղծելու ընթացակարգ: Որոշ դեպքերում բողոքարկման հանձնաժողովը կարող է անկախ լինել որակի ապահովման գործակալությունից: Այդպես է, մասնավորապես, Նորվեգիայում, որտեղ բողոքարկման խորհուրդը կառավարվում է Նախարարության կողմից: Այդուհանդերձ, երկու դեպքում էլ ակնկալվում է, որ բողոքարկման հանձնաժողովը գործելու է անկախ և արդարացիորեն քննելու է բողոքարկման դիմումները:

Բողոքարկման հանձնաժողովներին տրված լիազորությունները և նրանց որոշումների հետագա ընթացքը կարող են տարբերվել ըստ գործակալությունների: Հանձնաժողովը կարող է կայացնել բողոքարկման դիմումի վերաբերյալ վերջնական որոշում կամ ներկայացնել իր երաշխավորությունները և տպավորությունները որակի ապահովման գործակալության քննարկմանը: Որոշ գործակալություններ իրավասու են դիմել դատական մարմիններին: Կախված գործունեության համատեքստից գործակալությունը պետք է ի սկզբանե մշակի համապատասխան բողոքարկման մեխանիզմ և դրա մասին տեղյակ պահի գործընթացում ընդգրկված բոլոր կողմերին:

Ներդիր 7 - Բողոքարկման Հանձնաժողով (Հարավային Աֆրիկա, Շվեյցարիա)

Բարձրագույն Կրթության Որակի Հանձնաժողովը (ԲԿՈՀ) Հարավային Աֆրիկայում

ԲԿՈՀ-ի Բողոքարկման Հանձնաժողովի կազմի մեջ են մտնում ԲԿԽ-ի գործադիր տնօրենը, ԲԿՈՀ-ում ԲԿԽ-ի ներկայացուցիչը և ըստ անհրաժեշտության լրացուցիչ նշանակվող մասնագետները: ԲԿՈՀ-ը չի ներգրավում գնահատողների նոր խումբ և չի իրականացնում այցելություններ, սակայն մանրակրկիտ ուշադրություն է դարձնում առաջին գնահատման ընթացքում իրականացված գործընթացներին և ընթացակարգերին: Բողոքարկման Հանձնաժողովը դիտարկում է հետևյալ փաստաթղթերը

- սկզբնական դիմումը,
- գնահատողների հաշվետվությունը,
- բողոքարկման դիմումը:

Բողոքարկման Հանձնաժողովի երաշխավորությունները ներկայացվում են ԲԿՈՀ-ի Մասնավոր Ծառայություններ Մատուցողների Հավատարմագրման Հանձնաժողովին վերջնական երաշխավորությունը մշակելու համար, որը կքննարկվի ԲԿՈՀ-ի ամբողջ կազմի կողմից: Դիմորդը ծանուցվում է բողոքարկման արդյունքների մասին բողոքարկման բոլոր հիմքերը ներկայացումից հետո երկու ամվա ընթացքում:

Աղբյուր Բարձրագույն Կրթության Խորհրդի (Հարավային Աֆրիկա) համացանցի կայք

Շվեցարական ԲՈՒՀ-երի Հավատարմագրման և որակի ապահովման մարմին (ՀՈՄ)

Հավատարմագրման որոշումները կարող են բողոքարկվել երեք անդամից բաղկացած անկախ արբիտրաժային հանձնաժողովին: Արդարադատության Դաշնային Նախարարությունը և Կանտոնների Արդարադատության Նախարարությունների Համաժողովը նշանակում են մեկական անդամի, իսկ նշանակված երկու անդամները միասին նշանակում են երրորդ անդամին: Նրանց պաշտոնավարման ժամկետը չորս տարի է, մեկ անգամ վերընտրության հնարավորությամբ: Արբիտրաժային հանձնաժողովի որոշումները կարող են բողոքարկվել Դաշնային Դատարանին վարչական բողոքարկման միջոցով:

Աղբյուր Vroeijenstijn, 2003.

5. Կարողությունների ձևավորում

Որակի ապահովումը բարդ գործընթաց է որակի ապահովման գործակալությունների համար, իսկ ԲՈՒՀ-երից պահանջում է ռեսուրսների մեծ ներդրավում: Որակի ապահովման գործընթացի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է համակարգում զարգացնել անհրաժեշտ կարողություններ: Կարողությունների ձևավորումը և զարգացումը պետք է իրականացվի երեք՝ գնահատողների, ԲՈՒՀ-երի և գործակալության անձնակազմի մակարդակներում:

Գնահատողների կարողությունների ձևավորում: Որակի ապահովման գործակալության կողմից գնահատողների կարողությունների ձևավորմանը լրջորեն վերաբերելու համար գոյություն ունի առնվազն երեք պատճառ.

1. աջակցել գնահատողներին պատշաճ կերպով և մանրակրկիտ իրականացնելու իրենց պարտականությունները, ի օժանդակություն գործակալության որակի ապահովման գործառույթի,
2. կողմնորոշել գնահատողներին դեպի որակի ապահովման շրջանակ, որպեսզի նրանք կարողանան գործել գործակալության անունից՝ հավատարիմ մնալով գործակալության ուղեցույցներին,
3. նվազեցնել գնահատողների միջխմբային տարբերությունները, ինչը որակի ապահովման գործընթացի և դրա արդյունքների վստահելիության երաշխավորման հիմնական պայմաններից է:

Այս մոդուլի նախորդ մասերում մենք դիտարկեցինք գնահատողների պարտականությունները: Այցելությունների օրակարգում առանձնացվեց նաև այցելության ընթացքում կատարվելիք տարբեր գործողությունները: Դրանց իրականացումը պահանջում է, որպեսզի գնահատողները կարողանան դեմ առ դեմ արդյունավետ հաղորդակցվել, պահպանեն լավ անձնական հարաբերություններ և որոշումների կայացման ընթացքում լինեն օբյեկտիվ ու անկողմնակալ: Այս ամենը հնարավոր է արհեստավարժ կերպով իրականացվել միայն այն դեպքում, եթե գնահատողները պատշաճ կերպով պատրաստված լինեն:

Շատ կարևոր խնդիրներ են հանդիսանում գործակալության որակի ապահովման շրջանակին համապատասխան գնահատողների վերապատրաստումը և միջխմբային տարբերությունների նվազեցումը: Գործակալությունը պարտավոր է ապահովել, որ յուրաքանչյուր գնահատում իրականացվի մեթոդաբանական հիմնական կանոններին համապատաս-

խան և գնահատող խումբը հավատարիմ մնա որակի ապահովման գործակալության շրջանակին: Ուսումնական վայրեր կատարվող այցելություններին գործակալության անձնակազմի մասնակցությունը մեծապես նպաստում է դրան: Այդուհանդերձ, գործակալության անմիջական մասնակցությունը այցելություններին միշտ հնարավոր չէ: Այցելություններում անմիջականորեն չընդգրկված գործակալությունները պատասխանատվության զգալի մասը փոխանցում են փորձագետներին միաժամանակ ապահովելով, որպեսզի կիրառվող մոտեցումները համատեղելի լինեն: Այդ մոդելներում հիմնական հիմնախնդիրը միջխմբային տարբերություններն են: Հետևաբար հարկավոր է գնահատողներին համապատասխան կերպով վերապատրաստել և կողմնորոշել, ինչպես նաև խմբերի ղեկավարությունը վստահել փորձառու գնահատողներին:

Մի շարք երկներում ձևավորվել է հատուկ պատրաստված անձնակազմ, որի անդամները աշխատում են գնահատող խմբերում: Նախապես ընտրվում են մի շարք փորձագետներ, որոնց ինտենսիվ կերպով վերապատրաստում են նախանշված գործառույթների կատարման համար և նրանցից առավել հաջողվածներին ընդգրկում այդ անձնակազմի կազմում: Որոշ երկրներում, սակայն, գնահատող խմբերը ձևավորվում են յուրաքանչյուր կոնկրետ դեպքի համար: Խմբերի կազմում ընդգրկելուց հետո նրանց պատշաճ կերպով ուղղություն են տալիս որակի ապահովման գործընթացի վերաբերյալ: Ուղղորդման և վերապատրաստման ռազմավարությունը կարող է բավականին տարբեր լինել գնահատող խմբի անդամներին ուղղորդիչ նշումներից սկսած մինչև մանրակրկիտ վերապատրաստման ծրագրերը, որոնք կազմակերպվում են մինչև խմբերի կազմերում գնահատողների նշանակումը:

Որակի ապահովման գործակալությունը պետք է նաև վերապատրաստման ռազմավարություն մշակի: Գնահատողները պետք է տեղյակ լինեն այն զարգացումներին, որոնք կատարվում են որակի ապահովման գործակալության կողմից ընթացակարգերի կատարելագործման, փոփոխությունների իրականացման, նոր գործընթացների մշակման և առավել մեծ ուշադրության կարիք ունեցող ոլորտների բացահայտման ուղղությամբ: Որակի ապահովման գործակալությունները ապահովում են այս ամենը գնահատողների տարեկան ժողովների, ինչպես նաև որակի ապահովման գործընթացում ընդգրկված անձանց ուղղված տեղեկագրերի և համացանցային ֆորումների միջոցով:

<u>ԲՈՒՀ-երում կարողությունների ձևավորում:</u> Այն չի վերաբերում միայն գնահատման այցելություններին ԲՈՒՀ-երի նախապատրաստմանը: Կարողությունների ձևավորումը նաև ներառում է ԲՈՒՀ-երին կողմնորոշելը իրականացնելու բովանդակային ինքնագնահատում, գործելու գնահատման հաշվետվության երաշխավորությունների համաձայն, հետևելու երաշխավորությունների կատարման ընթացքին և պահպանելու որակի ավանդույթները: Այս ամենին որոշ չափով նպաստում են որակի ապահովման գործակալությունների երաշխավորություններին հետևելու ընթացա-

կարգերը և գործակալության ու ԲՈՒՀ-երի շարունակական փոխգործակցությունը աշխատաժողովների և տարբեր համաժողովների միջոցով: Որոշ գործակալություններ իրականացնում են հատուկ ծրագրեր, որոնք ուղղված են օգնելու ԲՈՒՀ-երին բարելավելու իրենց որակը: Նման նախաձեռնության օրինակ է Քոլեջների և Դպրոցների Հյուսիս-Կենտրոնական Ասոցիացիայի (ԱՄՆ) Կրթական Որակի Կատարելագործման Ծրագիրը (ԿՈԿԾ): Ինքնագնահատման սովորական գործընթացի փոխարեն ԲՈՒՀ-երը կարող են որոշել մասնակցել այս նորարարական ծրագրին:

Ներդիր 8. ԲՈՒՀ-երի կարողությունների ձևավորումը

Կրթական Որակի Կատարելագործման Ծրագիրը աջակցում է բարձրագույն կրթության ոլորտում կատարողականի շարունակական բարձրացմանը: ԿՈԿԾ-ը քոլեջների և համալսարանների համար տարածաշրջանային հավատարմագրումը պահպանելու այլընտրանքային գործընթաց է ապահովում: Բարձագույն Կրթության Հանձնաժողովը գործարկեց ԿՈԿԾ-ը 1999թ. Pew Charitable Trusts բարեգործական կազմակերպության դրամաշնորհի օգնությամբ: Ներկայումս թվով 127 կազմակերպություններ ցուցադրում են համապատասխանություն Բարձրագույն Կրթության Հանձնաժողովի հավատարմագրման չափորոշիչներին փոփոխելով կատարողականի բարձրացմանն ուղղված հիմնական համակարգերի շրջանակում իրականացվող սովորական քայլերը: Գործընթացների բարելավման և կատարողականի բարձրացման արդյունքները Բարձրագույն Կրթության Հանձնաժողովին տրամադրելով ԿՈԿԾ-ին մասնակցող կազմակերպությունները հիմքեր են ստեղծում որակի ապահովման հանրային դատողությունների և ուղղորդվում բարելավման համար՝ բարձրագույն կրթության ոլորտում իրենց կողմից որդեգրված առաքելության հասնելու համար: Այս նպատակներին հասնելու համար ԿՈԿԾ-ը քիչ ծախսատար շարունակաբար ձգտում է գործի դնել և կատարելագործել ծախսախնայող, բարձր տեխնոլոգիական գործընթացներ: «Գործողությունների ծրագրերի», «Ռազմավարության ֆորումների», «Համակարգային պորտֆելների և գնահատումների», «Ստուգման այցելությունների» և «Հավատարմագրման վերահաստատման» մանրամասները կարելի է գտնել այս համացանցի կայքում: ԿՈԿԾ-ը նաև հնարավորություն է ընձեռում անհատներին ընդլայնելու որակի և համակարգային բարելավման իրենց ընկալումը մասնակցելով իր գործընթացներին կամ այլ ծառայություններին որպես գործընկերային փորձագետներ:

Աղբյուր՝ Կրթական Որակի Կատարելագործման Ծրագրի համացանցի կայք

Կարողությունների ձևավորումը որակի ապահովման գործակալության կարևոր գործառույթներից է հատկապես բարձրագույն կրթության այն համակարգերում, որտեղ ԲՈՒՀ-երի միջև առկա են զգալի որակական տարբերություններ: Նույնը կարելի է ասել նաև այն համակարգերի համար, որտեղ որակի արտաքին ապահովումը նոր է ներդրվում: Նման դեպքում գործակալությունը պետք է մշակի այնպիսի ռազմավարություն և իրականացնի այնպիսի միջոցառումներ, որոնք կամրապնդեն ԲՈՒՀ-երի կարողությունները աջակցելու և օգտվելու որակի արտաքին ապահովումից: Կարևոր է նաև հետևել որակի բարելավման վերաբերյալ այն նախաձեռնություններին, որոնք առաջարկվել են որակի ապահովման գործընթացի արդյունքում:

ԲՈՒՀ-երում որակի կարողությունների ձևավորման ուղղությամբ որակի ապահովման գործակալությունների կողմից իրականացվող հիմնական նախաձեռնությունները ընդգրկում են: ԲՈՒՀ-երում հաջողված փորձառության վերաբերյալ տվյալների բազաների ստեղծումը, կրթության որակի որոշակի ասպեկտների կատարելագործմանն ուղղված նախագծերին աջակցելը, որակի բարելավման կարիք ունեցող ոլորտներում նախագծերի և ուսումնասիրությունների իրականացումը, անդամ ուսումնական հաստատությունների մասնակցությամբ որակի ապահովման վերաբերյալ խորհրդակցությունների և քննարկումների կազմակերպումը, ԲՈՒՀ-երի միջև տեղեկատվության փոխանակմանն աջակցումը:

Որակի ապահովման գործակալությունների հրատարակչական գործունեությունը ևս նշանակալի արդյունք կարող է ունենալ ԲՈՒՀ-երի համար ուղեցույցների, ձեռնարկների և այլ նյութերի հրապարակման միջոցով: Որակի կառավարման մասնագետների, ինքնագնահատման հանձնաժողովի համակարգողների ու գնահատողների վերապատրաստումը և որակի ապահովման գործընթացներում նրանց ընդգրկումը ապահովում է ակադեմիական հանրության իրազեկվածությունը կրթության որակի հետ կապված հարցերին: Նախապատրաստական դասընթացն անցած անձինք իրենց հերթին կնպաստեն իրենց ԲՈՒՀ-երում կարողությունների ձևավորմանը: ԱՀՈԳ-ի և ԲԿՈՀ-ի համացանցի կայքերի ուսումնասիրությունը կօգնի ձեզ ծանոթանալ ԲՈՒՀ-երում կարողությունների ձևավորման ուղղությամբ այդ գործակալությունների կողմից իրականացվող միջոցառումներին:

<u>Գործակալության անձնակազմի կարողությունների ձևավորում:</u> Գործակալության անձնակազմը կարևոր դեր է կատարում կիրառվող ընթացակարգերի արհեստավարժ ներդրման գործում: Որոշ գործակալություններում նրանք առաջատար դեր ունեն որակի ապահովման գործընթացների, գործիքների և արդյունքների ձևակերպման գործում: Նրանք ևս մասնագիտական զարգացման կարիք ունեն, որպեսզի կարողանան արդյունավետ գործել որակի ապահովման սցենարի փոփոխությունների

պայմաններում: Գործակալությունները հոգ են տանում այդ մասին ապահովելով իրենց անձնակազմի մասնակցությունը որակի ապահովման ոլորտում գիտական միջոցառումներին: Փորձի և գիտելիքների փոխանակմանը նպաստում են անձնակազմի այցելությունները այլ որակի ապահովման գործակալություններ նրանց գործընթացները ուսումնասիրելու նպատակով, ինչպես նաև այլ գործակալությունների մասնագետներին հյուրընկալումը: Մասնագետների փոխանակումը, ուսումնական այցելությունները և տարբեր գործակալությունների ընդհանուր խնդիրների քննարկմանը նվիրված միջոցառումներին մասնակցությունը շատ տարածված է: Դրանք էլ ավելի են տարածվում որակի ապահովման գործակալությունների գնահատականների փոխադարձ ճանաչման վերաբերյալ քննարկումների հաճախակիացմանը զուգահեռ: Որոշ որակի ապահովման գործակալություններ խրախուսում են իրենց անձնակազմին մասնակցելու իրենց մասնագիտական զարգացմանը նպաստող հետազոտություններին, հրապարակումներին և խորհրդատվություններին:

Վարժություն 3

Ուսումնասիրեք որակի ապահովման գործակալությունների համացանցի կայքերը. Առանձնացրեք մի շարք դրական հատկանիշներ, որոնք պետք է հաշվի առնել բողոքարկման հանձնաժողովի ստեղծման ժամանակ Ինչպե՞ս կգործի նման մեխանիզմը ձեր երկրի պարագայում.

Համացանցում գտեք և ընթերցեք նյութեր ԱՀՈԳ-ի «Հաջողված փորձառության տվյալների բազայի» (Good Practice Database), ինչպես նաև ԲԿՈՀ-ի Որակի Կատարելագործման Վարչության գործունեության վերաբերյալ: Ինչպիսի հետևություններ կարող եք անել ձեր ազգային համակարգում որակի կատարելագործման ռազմավարության զարգացման համար:

Գործակալության կառուցվածքը

1 Կառավարումը և կազմակերպչական կառուցվածքը

Որակի ապահովման գործակալության կառավարման եղանակը և կազմակերպչական կառուցվածքը կարող են տարբեր լինել՝ կախված գործակալության կարգավիճակից: Ընդհանուր առմամբ, որակի ապահովման գործակալության քաղաքականությունը և նպատակները սահմանվում են գործադիր կառավարման ղեկավարի կամ կառավարման մարմնի կողմից: Հաջորդ մակարդակում անձնակազմը պատասխանատու է այդ քաղաքականությունը իրագործելու համար: Կառավարման մարմնի անդամները կարող են նշանակվել, առաջադրվել կամ ընտրվել համաձայն կազմակեպության կանոնադրության:

Կառավարման մարմինները սովորաբար կազմված են բարձրագույն կրթության ոլորտում շահառու տարբեր խմբերի ներկայացուցիչներից: Գոյություն ունեն հստակ ուղեցույցներ, որոնք սահմանում են, թե ինչպես են տարբեր հատվածների՝ ԲՈՒՀ-երի, պետության, գործատուների և լայն հասարակության ներկայացուցիչները նշանակվում կամ ընտրվում կառավարման մարմնի կազմում: Այս անդամները կարող են փոխանցել իրենց անդամակցությունը, եթե հետագայում զրկվեն տվյալ ոլորտում իրենց դիրքից, ինչպես օրինակ համալսարանի նախագահը, որի պաշտոնավարման ժամկետը մոտեցել է ավարտին: Որոշ գործակալություններում, սակայն, ղեկավար մարմնի անդամները չեն ընտրվում որպես իրենց հատվածների ներկայացուցիչներ, նույնիսկ եթե նշանակման ժամանակ խնդիր է դրվում հասնելու ներկայացուցչականության առումով հավասարակշռության: Օրինակ, Հարավային Աֆրիկայում ԲԿՈՀ-ը ղեկավարվում է 13 անդամից բաղկացած խորհրդի կողմից: Այս անդամները նշանակվում են Բարձրագույն Կրթության Խորհրդի (ԲԿԽ) կողմից, որպես առանձին անհատներ, այլ ոչ թե որպես որոշակի շահառուների կամ կազմակերպությունների ներկայացուցիչներ: Հնդկաստանում որպես Ազգային Գնահատման և Հավատարմագրման Խորհրդի (ԱԳՀԽ) անդամներ նշանակվում են առանձին դասախոսներ: Սակայն մեծամասնությունը նշանակվում են որպես որոշակի հատվածների՝ կենտրոնական համալսարանների, նահանգային համալսարանների, «համալսարան համարվող հաստատությունների» և ինքնավար քոլեջների ներկայացուցիչները: Այս անդամները կարող են ղեկավար մարմնի կազմում գտնվել քանի դեռ իրենք ներկայացնում են իրենց հաստատությունը:

Կառավարման մարմնի կազմը հաճախ բնորոշում է, թե հարաբերական ազդեցության ինչ չափ են ցանկանում ունենալ տարբեր շահառուները գործակալության որոշումների վրա: Պետության կողմից հիմնադրված գործակալություններում պետության ներկայացուցիչը նախագահում կամ անդամակցում է կառավարման մարմինը: Որակի ապահովման որոշ գործակալություններ կարևորում են, որ կառավարման մարմնում

ներկայացված լինեն ուսանողները, լայն հասարակությունը և/կամ արդյունքների վերջնական օգտագործողները:

Որակի ապահովման որոշ գործակալությունների կառավարման մարմնում ընդգրկվում են միջազգային փորձագետներ, որպեսզի ներկայացվեն ընդհանուր տեսակետներ: Խաղաղ-Օվկիանոսյան տարածաշրջանում Հոնգ Կոնգի ՀԿՈՒՀԽ-ը և ՀԴՀ-ն, Նոր Զելանդիայի ՆԶՀՈՒԱԿ-ը, Ճապոնիայի ԳԱՀԳԱԻ-ն իրենց խորհուրդների կազմում ունեն արտասահմանյան անդամներ: ՀԿՈՒՀԽ-ի անդամների քառորդից ավելին արտասահմանցիներ են:

Կառավարման մարմնի կազմը կախված է նաև այլ գործոններից: Դրանց շարքում, մասնավորապես, կարող է լինել տարածաշրջանային համագործակցությանը տրվող կարևորությունը և դրան աջակցելու քաղաքական կամքը: Եվրոպայի որակի ապահովման գործակալությունների կառավարման մարմիններում արտասահմանյան ներկայությունը սկսել է ավելի հաճախ հանդիպել՝ Բարձրագույն Կրթության Եվրոպական Ընդհանուր Տարածքի ձևավորմանը զուգահեռ: ԱՀԽ-ում անդամների կեսը ավստրիացիներ են, իսկ մյուս կեսը՝ եվրոպական այլ երկների փորձագետներ:

Գնահատման խմբերում արտասահմանյան ներկայությունը ավելի սովորական է դառնում և որակի ապահովման գործակալությունների կառավարման մարմինները դրական են մոտենում այդ միտմանը: Դա կապված է որակի ապահովման գործակալությունների միջև տարածաշրջանային երկխոսության աճող կարևորության և ԲՈՒՀ-երի միջազգայնացման հետ: Եվրոպայում հավատարմագրման հանձնաժողովներում / խորհուրդներում արտասահմանյան փորձագետներ են նշանակվում: Այդպես է ԱՀԽ-ի (Ավստրիա), *Akkreditierungsrat-ի* (Գերմանիա), ԿՇՈԱՀԳ-ի (Իռլանդիա), ՀՍՈԱԻ-ի (Գերմանիա) և Բիզնեսի Կազմակերպման Միջազգային Հավատարմագրման Հաստատության (ԲԿՄՀՀ) պարագայում: Ասիայում և Խաղաղ-Օվկիանոսյան գոտում նման օրինակ են հանդիսանում ԱՀՈԳ-ը (Ավստրալիա) և ՆԶՀՈՒԱԿ-ը (Նոր Զելանդիա):

Ներդիր 9 - Որակի ապահովման գործակալությունների կառավարման մարմինների կառուցվածքը (Իռլանդիա, Չիլի)

Բարձրագույն Կրթության և Մասնագիտական Պատրաստման Պարգևատրման Խորհուրդ (ԲԿՄՊՊԽ), Իռլանդիա

Խորհրդի անդամների նշանակումը ամրագրված է օրենսդրորեն: Խորհուրդն ունի 15 անդամ: Նախագահը և Գործադիր տնօրենը Խորհրդի անդամներ են: Մյուսները ներկայացուցչական անդամներ են, որոնք նշանակվում են Կրթության և Գիտության նախարարարության (2), Զեռնարկատիրության և Զբաղվածության նախարարության (1) և ճանաչված ուսումնական հաստատությունների (3) կողմից: Կրթության և Գիտության նախարարի համաձայնությամբ մեկ անձ նշանակվում է

Մոդուլ 3 - Որակի ապահովման գործակալության հիմնում և զարգացում

որպես ճանաչված Ուսումնական հաստատությունների ուսանողների և ևս մեկը՝ աշխատակիցների ներկայացուցիչ: Մյուս անդամները նշանակվում են Ձեռնարկությունների և Գործատուների Կոնֆեդերացիայի (1) և Արհեստակցական Միությունների Կոնգրեսի (1) կողմից: Ձևավորված Խորհուրդն այնուհետև կարող է նշանակել ևս երկու անդամի, որոնք տիրապետում են Խորհրդի գործառույթներին առնչվող հատուկ գիտելիքների և փորձի, որոնցից մեկը պետք է նաև միջազգային փորձ ունենա: Խորհրդի անդամները գործում են կամավոր սկզբունքներով և ոչ լրիվ աշխատաժամանակով: Միակ լրիվ աշխատաժամանակով աշխատող անդամը Գործադիր տնօրենն է: Պաշտոնավարման ժամկետը հինգ տարի է:

Աղբյուր՝ Vroeijenstijn, 2003.

Հավատարմագրման Ազգային Հանձնաժողով, Չիլի

1998 թ, Կրթության նախարարությունը հիմնադրեց Հավատարմագրման Ազգային Հանձնաժողովը (ՀԱՀ), որը պատասխանատու է հավատարմագրման գործընթացի մշակման և իրականացման համար: Հանձնաժողովն ունի տասնչորս անդամ, որոնք նշանակվում են Կրթության նախարության կողմից և տեխնիկական անձնակազմ, որը պատասխանատու է հավատարմագրման գործընթացների համակարգման ու կառավարման համար: Այս հանձնաժողովի հիմնական պարտականություններից է սեփական փորձառության հիման վրա որակի ապահովման մշտապես գործող համակարգի ստեղծումը:

Հանձնաժողովի նախապատրաստած օրենքի նախագիծի հիման վրա Խորհրդարանն արդեն հաստատել է որակի ապահովման գործակալության առաջարկվող կառուցվածքը՝ ըստ հետևյալ սկզբունքների.

- Հանձնաժողովի նախագահը նշանակվում է երկրի նախագահի կողմից,
- այն ունի 7 անդամ, որոնք նշանակվում են ԲՈՒՀ-երի հիմնական խմբերի կողմից (մասնավոր և պետական համալսարաններ, մասնագիտական ուսումնական հաստատություններ, տեխնիկական վերապատրաստման կենտրոններ),
- երկու անդամ նշանակվում են Գիտության և տեխնոլոգիայի ազգային հանձնաժողովի կողմից,
- անդամներից է նաև Կրթության նախարարության Բարձրագույն կրթության բաժնի ղեկավարը
- այս անդամները միասին նշանակում են ևս երկու անձանց, որոնցից մեկը ներկայացնում է գործատուներին, իսկ մյուսը՝ մասնագի-

տական ասոցիացիաներին,

- անդամ են հանդիսանում նաև երկու ուսանող, որոնք ընտրվում են ուսանողական կազմակերպությունների կողմից՝ համաձայն օրենքով ամրագրված կարգի,
- Հանձնաժողովը նշանակում է Գլխավոր քարտուղարի, որը ղեկավարում է տեխնիկական անձնակազմը և կարող է ելույթ ունենալ նիստերի ժամանակ, սակայն առանց ձայնի իրավունքի,
- Հանձնաժողովի բոլոր անդամները գործում են իրենց անձնական նախաձեռնությամբ, չորս տարի պաշտոնավարման ժամկետով՝ անկախ իրենց հիմնադիրների կամ ներկայիս պաշտոնի փոփոխություններից,
- Այս ղեկավար մարմինը կայացնում է քաղաքականության և հավատարմագրման վերաբերյալ բոլոր որոշումները, որոնք ներառում են ուսումնական հաստատությունների հավատարմագրումը, ուսումնական ծրագրերի հավատարմագրման համար որակի ապահովման գործակալությունների հաստատումը, գրանցումը և վերահսկումը, ինչպես նաև դոկտորական ծրագրերի հավատարմագրումը:

Աղբյուր. Lemaître, 2005.

Կառավարման մարմինը կարող է իրականացնել տարբեր տեսակի վարչարարական, վերահսկողական և որոշումների կայացման գործառույթներ: Այս մարմինն ամբողջապես պատասխանատու է որակի ապահովման գործակալությունների քաղաքականության և գործունեության, ինչպես նաև նրանց կողմից կայացված որոշումների համար: Արդյունքում այն կարող է փոխանցել լիազորությունները գործակալության ղեկավարին կամ տնօրենին, սակայն որոշումները, միևնույն է, մնում են կառավարման մարմնի իրավասությանը:

Գործակալության ղեկավարը կամ տնօրենը սովորաբար նշանակվում է կառավարման մարմնի կողմից: Ղեկավարը կամ տնօրենը, հավատարիմ մնալով գործակալությունը կանոնակարգող կանոններին և կանոնակարգերին, կարող է կայացնել ամենօրյա վարչական որոշումներ և այդ մասին տեղեկատվություն ներկայացնել կառավարման մարմնին: Էական փոփոխությունները կամ որոշումների կայացումը պահանջում են հաստատում կառավարման մարմնի կողմից:

Որակի ապահովման որոշումները և գործընթացի վստահելիության մոնիտորինգը, որոնք հանդիսանում են գործակալության հիմնական գործառույթները, գտնվում են կառավարման մարմնի իրավասության և պա-

տասխանատվության ներքո: Կառավարման մարմինը ապահովում է, որպեսզի որակի ապահովման գործընթացի արդյունքում ձևավորվեն մանրակրկիտ, իրազեկ և անկախ դատողություններ: Այն կարող է ուշադրություն դարձնել գործակալության գործունեության արդյունավետությանը և ուղղորդի նրա զարգացումը: Ժամանակ առ ժամանակ կառավարման մարմնի անդամները կարող են գործել որպես ենթահանձնաժողովների կամ կոնկրետ դեպքի համար ստեղծված աշխատանքային խմբերի անդամներ: Նրանք նաև կարող են գործակալության անունից մասնակցել որակի ապահովմանը վերաբերող միջոցառումներին, ելույթ ունենալ հանձնաժողովներում կամ ժողովներում գործակալության գործունեության վերաբերյալ, խորհուրդներ տալ գործակալության անձնակազմին՝ հիմնվելով իրենց մասնագիտական գիտելիքների և փորձի վրա, կամ աշխատել անձնակազմի հետ այնպիսի կարևոր հարցերի վրա, ինչպես օրինակ՝ միջազգային կրթության վերաբերյալ գիտական աշխատանքների և մենագրությունների պատրաստումը:

Ներդիր 10 - Կառավարման մարմնի պարտականությունները. Ավստրալիական Համալսարանների Որակի Գործակալություն (ԱՀՈԳ)

- ԱՀՈԳ-ի Խորհրդի առաքելությունն է իրականացնել կազմակերպության նպատակները:
- Խորհուրդն ամրագրում է ԱՀՈԳ-ի որակի ապահովման գործառույթների ընդհանուր համատեքստը, որի շրջանակներում անձնակազմի աջակցությամբ իրենց գործունեությունն են իրականացնում աուդիտորական խմբերը:
- Աուդիտի առնչությամբ, Խորհուրդը պատասխանատու է քաղաքականության, ընթացակարգերի, մարդկային ռեսուրսների և հրապարակման համար:
- ԱՀՈԳ-ի Խորհուրդը գործում է պատշաճ զգուշությամբ՝ կորպորատիվ կառավարման իր խնդրի հետ կապված:

Խորհրդի պարտականությունների ամփոփ նկարագիրը

- Խորհուրդը սահմանում է իր կանոնադրությանը համահունչ քաղաքականություն:
- Խորհուրդը աուդիտորներին ընդգրկում է Ռեեստրում:
- Խորհրդի նախագահը և գործադիր տնօրենը ձևավորում են աուդիտորական խմբեր Ռեեստրի անդամներից՝ ընդ որում Խոր-

հրդի նախագահը գործում է Խորհրդի անունից:

- Աուդիտի խումբը ձևավորելիս, համաձայն սահմանված քաղաքականության և ընթացակարգի Խորհուրդը խմբին է փոխանցում աուդիտի իրականացման պատասխանատվությունը:
- Խորհուրդը հաստատում է աուդիտորական հաշվետվությունը, եթե այն ըստ էության է, համոզիչ (ներկայացված փաստերի առումով), պատասխանատու կերպով ներկայացված և համահունչ է ԱՀՈԳ-ի պարտականությունների բնույթին ու շրջանակին :

Խորհրդի գործառույթների ամբողջական ներկայացում

Խորհրդի գործառույթներն են.

- ստանձնել պատասխանատվություն կազմակերպության գործունեության արդյունքների համար՝ նպատակներին հասնելու առումով,
- մշակել ԱՀՈԳ-ի ռազմավարական ուղղությունները՝ կանոնադրությամբ սահմանված նպատակներին համապատասխան և հաշվի առնելով ազգային և միջազգային համատեքստերը,
- սահմանել ԱՀՈԳ-ի քաղաքականությունը՝ կանոնադրությամբ ամրագրված չափանիշներին համապատասխան,
- հետևել գործադիր տնօրենի և մնացած անձնակազմի կողմից քաղաքականության իրականացմանը,
- հավաստիանալ, որ ԱՀՈԳ-ի գործունեության ընթացակարգերը գործի են դրվում,
- աուդիտորներին ընդգրկել Ռեեստրում,
- հաստատել աուդիտորական հաշվետվությունները,
- հաստատել ԱՀՈԳ-ի բյուջեն,
- նշանակել ԱՀՈԳ-ի գործադիր տնօրենին,
- ստանձնել պատասխանատվություն ԱՀՈԳ-ի ֆինանսական վիճակի և հաշվետվությունների համար,
- անդամներին ներկայացնել ԱՀՈԳ-ի տարեկան հաշվետվությունը՝ ներառյալ աուդիտ անցած ցուցանիշները,
- անդամներին խորհրդատվություն մատուցել՝ կապված ԱՀՈԳ-ի կանոնադրության հետ:

Աղբյուր՝ Ավստրալիական Համալսարանների Որակի Գործակալության համացանցի կայք, ԱՀՈԳ-ի քաղաքականության էջ

Կազմակերպչական կառուցվածքը և քաղաքականությունը, կարող է լինել շատ թե քիչ բարդ՝ կախված գործակալության գործառույթներից: Ինչպես ավելի վաղ քննարկվել է, կառուցվածքը կարող է պահանջել անձնակազմի բոլոր անդամներից, որպեսզի նրանք զբաղվեն ամեն ինչով: Կամ էլ կարող են լինել առանձին բաժիններ և անձնակազմ, որոնք կզբաղվեն որոշակի խնդիրներով, ինչպես օրինակ՝ ԲՈՒՀ-երի հետ հաղորդակցումը, գնահատողների նախապատրաստումը կամ նյութերի մշակումը:

Որակի ապահովման որոշ գործակալություններում առկա է պարտականությունների ներքին բաժանում՝ հիմնված այնպիսի գործառույթների վրա, ինչպիսիք են ընդհանուր վարչարարությունը, գնահատողների վերապատրաստումը, ԲՈՒՀ-երի կողմնորոշումը, արտաքին կապերը, գնահատման այցելությունների կազմակերպումը, փաստաթղթավորումը, տեղեկատվական համակարգերի և համացանցի հետ կապված աշխատանքները: Մասնագիտացումները կարող են նաև կապված լինել որակի ապահովման գործընթացի հիմնական գործառույթների հետ: Դրանք կարող են նաև լինել որակի ապահովման գործընթացի և գործակալության հիմնական կարևոր գործառույթների համադրությունը: Դրանց հետ գործ ունենալու համար կարող է ստեղծվել առանձին բաժին կամ անձնակազմ:

Գոյություն ունեն նաև որակի ապահովման գործակալություններ, որոնցում կարող են ստեղծվել բաժիններ, որոնք կհետևեն որոշակի տարածաշրջաններում գտնվող ԲՈՒՀ-երի աշխատանքին, կամ որոնք կիրառում են ոչ թե գործառույթային մասնագիտացումը, այլ որոշակի տեսակի ԲՈՒՀ-երի դիտարկումը: Օրինակ, *X* ուսումնական հաստատության (ենթադրենք՝ Մեքսիկայի Ազգային Համալսարանի), որոշակի տարածաշրջանի ուսումնական հաստատությունների խմբի (ենթադրենք՝ Իլլինոյս նահանգի բոլոր համալսարանների և տարածքային քոլեջների) կամ ուսումնական հաստատության որոշակի տեսակի (ենթադրենք՝ ուսուցիչների պատրաստման բոլոր քոլեջների) հետ կապված բոլոր պարտականությունները կարող են դրվել հատուկ ստեղծված անձնակազմի կամ ստորաբաժանման վրա:

Եթե գործակալությունն իրականացնում է ավելի քան մեկ տեսակի գնահատում, պարտականությունների բաժանումը կարող է հիմնվել նաև գնահատման տեսակի վրա (ենթադրենք՝ *X* –ը կզբաղվի ուսումնական հաստատությունների գնահատմամբ, իսկ *Y*-ը՝ ուսումնական ծրագրերի): Հաճախ կարելի է գտնել այս երկու մոտեցումների համադրություն: Գործակալությունը պետք է պարզի, թե պարտականությունների բաժանման և օժանդակող կառուցվածքի որ տարբերակն ավելի լավ կգործի տվյալ համատեքստում:

2. Անհրաժեշտ ռեսուրսներ

Որակի ապահովման գործակալությունները իրենց գործառույթները իրականացնում են փոքրաթիվ և բանիմաց հիմնական անձնակազմի միջոցով: Գնահատման գործընթացների իրականացումը սովորաբար վստահվում է արտաքին գնահատողներին: Շատ կարևոր է հաշվի առնել գործակալության գործունեության համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսները: Ցանկացած որակի ապահովման համակարգ ունի ծախսերի երեք հիմնական հոդված

- գործընթացների կազմակերպման հետ կապված ծախսեր (ընդգրկում է գործակալության գործունեության վարման հետ կապված բոլոր ծախսերը, ներառյալ անձնակազմի աշխատավարձերը, օժանդակ ծառայությունների ապահովումը, ուսումնական նյութերի մշակումը և այլն),
- ԲՈՒՀ-երում ինքնագնահատման գործընթացների հետ կապված ծախսեր: Դրանք սովորաբար ուսումնական հաստատությունների ծախսերն են, սակայն նաև ներառում են բոլոր վերապատրաստման ծրագրերի հետ կապված ծախսերը,
- արտաքին գնահատման հետ կապված ծախսեր: Դրանց մեջ կարող են մտնել արտաքին գնահատողների վարձատրությունը (չնայած ոչ բոլոր համակարգերն են վճարում իրենց գնահատողներին), ճանապարհածախսն ու օրապահիկը, և այլ առընչվող ծախսեր:

Այն դեպքում, երբ որակի ապահովման գործակալությունը պետական գործառույթների իրականացման համար պետության նախաձեռնությամբ ստեղծված կառույց է, ֆինանսավորման մեծ մասն իրականացվում է պետության կողմից: Քվազի-պետական կառույցի պարագայում, երբ գործակալությունը սերտ կապի մեջ է պետության հետ, սակայն կառավարվում է անկախ ղեկավար մարմնի կողմից, սկզբնական ֆինանսավորումը կարող է իրականացվել պետության կողմից: Փաստացի, որակի ապահովման գործընթացների համար մեծամասամբ վճարում են դիտարկվող ԲՈՒՀ-երը:

Որոշ երկրներում մասնավոր ԲՈՒՀ-երը պետության կողմից ֆինանսական աջակցություն են ստանում հավատարմագրման ծախսերը հոգալու համար: Գոյություն ունեն նաև որակի ապահովման գործակալություններ, որոնք հավատարմագրման գործընթացի հետ կապված ծախսերի փոխհատուցումը ստանում են անմիջապես պետությունից և հետևաբար դրանք չեն գանձում ԲՈՒՀ-երից: Եթե գործակալությունը ստեղծվել է ԲՈՒՀ-երի կողմից, հնարավոր է, որ ուսումնական հաստատություններն իրենք ֆինանսավորեն հավատարմագրային կառույցը և գործընթացները:

Պետությունից և ԲՈՒՀ-երից անկախ որակի ապահովման կառույցները, ինչպիսիք են որակի ապահովման բազմաթիվ միջազգային մարմինները, որոնք գործում են որպես հասարակական կազմակերպություններ և մասնագիտական հավատարմագրման կառույցներ, փոխհատուցում են իրենց ծախսերը գնահատման ծառայությունների համար գանձվող վճարներից:

Հաշվի առնելով այս տարբերակները և գործակալության գործունեության կազմակերպման համար անհրաժեշտ ծախսերը կարելի է առանձնացնել ֆինանսավորման տարբեր սխեմաներ: Դրանք կարող են ներառել հետևյալ տարբերակները կամ դրանց համադրությունը

- պետական ֆինանսավորում: Պետական մասնակցությամբ համակարգերում պետությունը առնվազն տրամադրում է սկզբնական ֆինանսավորումը: Սովորաբար վճարվում են առնվազն այն ծախսերը, որոնք կապված են գործակալության գործունեության վարման հետ:

- ԲՈՒՀ-երից ստացվող վճարներ: Համակարգերից շատերում ուսումնական հաստատությունները վճարում են ստացվող ծառայությունների դիմաց: Այս վճարները սովորաբար ծածկում են արտաքին գնահատման և վերապատրաստման ծրագրերի ծախսերը:

- եկամուտ, որը գործակալությունը ստանում է ուսումնական հաստատություններից կամ կազմակերպություններից, որոնք դիմում են ոչ հավատարմագրային ծառայություններ ստանալու համար: Այս եկամտի աղբյուրներ կարող են լինել համաժողովները, սեմինարները, խորհրդատվությունները և այլն:

Գործակալությունները զգալիորեն տարբերվում են միմյանցից իրենց չափերով, բյուջեի մեծությամբ, գործունեության ծավալներով և շրջանակով: Դրանք կարող են տարբերվել սկսած ութ համալսարանի որակի ապահովման համար պատասխանատու երկու հիմնական անձնակազմով գործակալություններից մինչև 16,000 ԲՈՒՀ սպասարկող 20 հիմնական անձնակազմեր ունեցող գործակալությունների: Օրինակ, Ֆիլիպիններում հավատարմագրման յուրաքանչյուր գործակալություն ունի քարտուղարություն, որի ղեկավարը գործադիր տնօրենն է: Դպրոցների, քոլեջների և համալսարանների հավատարմագրման Ֆիլիպինների ասոցիացիայի (ԴՔՀՀՖԱ) քարտուղարության անձնակազմը ամենամեծաթիվն է: ԴՔՀՀՖԱ-ն ծառայություններ է մատուցում ամենաշատ թվով ուսումնական հաստատությունների: 2006թ. դրա անդամ էին հանդիսանում 410 ուսումնական հաստատություն և իրականացվում էր թվով 27 կրթական հավատարմագրային ծրագրեր: Մյուս կողմից, Ֆիլիպինների Որակավորված Քոլեջների և Համալսարանների Հավատարմագրման Գործակա-

լության (ՖՈՔՀՀԳ) անդամ են հանդիսանում ընդամենը 48 ուսումնական հաստատություններ և այն իրականացնում է քիչ թվով կրթական հավատարմագրման ծրագրեր: Համապատասխանաբար, նրա քարտուղարության անձնակազմը ամենափոքրաթիվն է:

Ֆինանսավորման ծավալը ևս էապես տարբերվում է: Այն տարեկան կարող է կազմել մի քանի հազարից մինչև ավելի քան մեկ միլիոն ԱՄՆ դոլար: Այդ ծավալները միշտ չէ, որ կախված են գործակալության չափերից: Դրանք կարող են կախված լինել նաև աշխատավարձի կառուցվածքից և գործունեության ծավալներից, ինչն իր հերթին կախված է որակի ապահովման գործընթացներում գործակալության ընդգրկման աստիճանից:

Բացի գործակալության չափերից, նաև անձնակազմի գիտելիքները և կարողությունները պետք է համապատասխանեն որակի ապահովման գործընթացներում նրանց կողմից իրականացվելիք գործառույթներին: Որակի ապահովման որոշ գործակալությունների անձնակազմի անդամները ակտիվ դեր են խաղում գնահատման գործընթացներում: Դա կարող է ներառել հաշվետվությունների կազմումը և/կամ գնահատողների վերապատրաստման և ԲՈՒՀ-երի կողմնորոշման ծրագրերին որպես փորձագետներ մասնակցությունը: Նման գործակալությունները պահանջում են բանիմաց և փորձառու անձնակազմ (առնվազն ավագ մասնագետների մակարդակում), որի անդամները հանդիսանում են ակադեմիական հանրության անդամներ: Եթե գործակալությունն ուսումնական ծրագրեր է հավատարմագրում, ապա նրան հավանաբար անհրաժեշտ կլինի տվյալ մասնագիտացմամբ անձնակազմ: Եթե գործակալության անձնակազմն իրականացնում է միայն վարչական և օժանդակող գործառույթներ, համապատասխանաբար կտարբերվի նաև դրա անդամներից պահանջվող գիտելիքների, հմտությունների և ընդունակությունների բնույթը:

Ներդիր 11 - Որակի ապահովման գործակալության համար անհրաժեշտ ռեսուրսները. ԱՄՆ և Կոլումբիա

ԱՄՆ

Տարածաշրջանային հավատարմագրման գործակալությունները սովորաբար ունեն սահմանափակ թվաքանակով անձնակազմ (ամբողջովին վերցրած 12-20 աշխատակից), իսկ տարեկան գործառնական բյուջեն 2-3 միլիոն ԱՄՆ դոլար է, որը բավարարում է աշխատավարձին, գրասենյակային ծախսերին և տարեկան 2-3 ժողով կազմակերպելուն: Մասնագիտական անձնակազմն ունի տարբեր մակարդակի և ոլորտի կրթու-

թյուն, սակայն դրա անդամները սովորաբար ունենում են դոկտորի աստիճան, ուսումնական հաստատություններում աշխատանքային փորձ, կազմակերպչական հմտություններ և շրջահայաց ու պրոֆեսիոնալ վարվելակերպ: Ուսումնական ծրագրերի հավատարմագրման դեպքում անձնակազմը հաճախ ունենում է տվյալ մասնագիտական ոլորտի գիտական աստիճան և մասնագիտական պատրաստվածություն, ինչպես օրինակ ինժեներության կամ բուժքույրական գործի դեպքում:

Աղբյուր El-Khawas, 2001: 14.

Կոլումբիա

Խորհուրդն ունի իր գրասենյակը և բյուջեն, որը յուրաքանչյուր տարի սահմանվում է Պլանավորման ազգային վարչության և Ֆինանսների նախարարության կողմից: Այս բյուջեն մաս է կազմում Բյուջեի մասին ազգային օրենքի և որի համար միջոցներ են հատկացվում «Ազգային հավատարմագրման համակարգի կազմակերպման» հոդվածով: ՀԱԽ-ի որոշումների համաձայն, Խորհրդի բյուջեն կատարվում է Կոլումբիայի Բարձրագույն Կրթության Զարգացման ինստիտուտի միջոցով: Ներկայումս ռեսուրսները տրամադրվում են Խորհրդի գործառնական ծախսերի նպատակով, ինչպես նաև բոլոր այն ծախսերի, որոնք կապված են դեպի այն ուսումնական հաստատություն կատարվող սկզբնական պայմանների գնահատման այցելությունների հետ, որոնք դիմում են իրենց ուսումնական ծրագրերի կամավոր հավատարմագրման համար: Բացի այդ, բյուջեն ծածկում է այն ծախսերը, որոնք կապված են ԲՈՒՀ-երի համար հավատարմագրման և գնահատման վերաբերյալ աշխատաժողովների կազմակերպման հետ, տեղեկատվական տեխնոլոգիաների, ՀԱԽ-ի հրապարակումների տարածման ծախսերը, ինչպես նաև ԲՈՒՀ-երի կողմից ՀԱԽ-ին ներկայացված հավատարմագրմանն ուղղված ինքնագնահատման ծրագրերի մասնակի ֆինանսավորումը:

Աղբյուր Revelo Revelo and Augusto Hernandez, 2003: 33.

Հիմնադիրները որակի ապահովման գործակալությանը, կախված դրա կարգավիճակի ու ֆինանսավորման հետ, ներկայացնում են նաև որոշակի ակնկալիքներ և գործունեության սկզբունքներ: Հետևաբար գործակալությունը պետք է որոշի ֆինանսական և մարդկային ռեսուրսների պահանջը կախված ակնկալվող գործառույթների քանակից և տեսակներից:

Որակի ապահովման գործակալությունը պետք է գնահատի, թե մարդկային ռեսուրսների ինչպիսի պահանջ ունի ներքին անձնակազմի և արտաքին գնահատողների առումով: Արտաքին գնահատողների վերապատրաստումը նույնպես կարող է շատ ռեսուրսներ պահանջել: Սկզբնա-

կան շրջանում գործակալության հիմնադրումը պահանջում է ռեսուրսներ՝ հասարակական խորհրդակցությունների իրականացման և լայն շրջանակների կողմից ընդունվող մեթոդաբանության մշակման համար: Մյուս կողմից, այնպիսի գործառույթները, ինչպիսիք են ԲՈՒՀ-երի կողմնորոշման և գնահատողների վերապատրաստման ծրագրերը, շարունակական ուշադրություն են պահանջում: Այն պահից, երբ մեթոդները արդեն սահմանված են, գնահատման գործառույթները և վերապատրաստման ծրագրերը սկսում են մեծ ծավալի ռեսուրսներ պահանջել: Գործակալությունների մեծ մասը գնահատման համար ԲՈՒՀ-երից գանձում են վճարներ:

3. Տեղեկատվական համակարգ

Որակի գնահատման արդյունքն ուժի մեջ է որոշակի ժամանակահատվածի ընթացքում: Որակի ապահովման գործակալությունները գրանցում և պահպանում են որակի ապահովման վերաբերյալ տվյալներ: Դրանք կարող են ներառել այս ժամանակատվածի ընթացում ինքնագնահատման հաշվետվությունները, որոնք կազմում են որակի ապահովման որոշումների հիմքը, գնահատող խմբի երաշխավորությունները, ուսումնական հաստատության արձագանքները, եթե այդպիսիք առկա են, որակի ապահովման գործակալության որոշումները, առկայության դեպքում՝ բողոքարկումները և դրանց արդյունքները:

Գործակալությունը պետք է պահպանի ԲՈՒՀ-երի կողմից տրված տեղեկատվությունը, գնահատողների կողմից դիտարկված տեղեկությունները, որակի ապահովման որոշումների ժամանակ օգտագործված փաստերի հիմնավորումները և որակի ապահովման գործընթացի վերաբերյալ տվյալները այն ժամանակատվածի ընթացքում, քանի դեռ իր որոշումն ուժի մեջ է: Սա հատկապես կարևորվում է այն պարագայում, երբ որակի ապահովման որոշումները կարող են կասկածի տակ դրվել կամ եթե որակի ապահովման արդյունքը կարող է լուրջ հետևանքներ ունենալ: Տվյալների նման պահպանումն օժանդակում է գնահատման գործառույթներին: Որոշ գործակալություններ կարևորություն են տալիս նաև որակի ապահովման արդյունքների հանրային տեղեկատվական համակարգին:

Որոշ գործակալություններ չեն բավարարվում պարզապես գնահատման գործառույթի օժանդակմամբ և ընդլայնում են տեղեկատվական համակարգերը, որպեսզի որքան հնարավոր է ավելի շատ տվյալներ հասանելի լինեն հանրությանը և այլ ազգային տվյալների բազաներին: Դրա նպատակն է երաշխավորել, որ ԲՈՒՀ-երի կողմից տրված տեղեկատվությունը հուսալի է, գնահատողների կողմից օգտագործված տեղեկությունները հիմնավորված են, դատողությունների կատարման համար օգտա-

գործված տվյալները համարժեք են և տվյալների հավաքագրման արդյունքները բովանդակալից կերպով են օգտագործվում:

Ուսումնական հաստատությունների վերաբերյալ հաշվետվություններում տեղ գտած կարևոր տվյալները կարող են տեղադրվել նաև ազգային այլ տվյալների բազաներում: Կամ ուսումնական հաստատության վերաբերյալ որոշակի տեղեկատվություն կարող է ստացվել ազգային մեկ այլ տվյալների բազայից՝ հետագա դիտարկման կամ ԲՈՒՀ-երի կողմից տրամադրված տվյալները խաչաձև ստուգելու համար:

Այդուհանդերձ, պետք է նշել, որ ԲՈՒՀ-երը մեծ ծավալով տեղեկատվություն կցանկանան տալ, եթե այն օգտագործվի միայն գնահատման նպատակով: Շատ դեպքերում նրանք գնահատման համար զգայուն և ռազմավարական տեղեկություններ կտրամադրեն միայն հավաստիանալով, որ այն չի հրապարակվի: Նման դեպքերում է, որ որակի ապահովման գործակալությունը պետք է հստակեցնի, թե ինչ տեսակի տեղեկություններ է հասանելի դարձնելու հանրությանը և ինչ տեսակի տեղեկատվություն է իրեն անհրաժեշտ գնահատման գործառույթներին օժանդակելու համար:

Կան լուրջ հիմնավորումներ տարանջատելու գնահատման գործառույթներին օժանդակման համար ստացված տեղեկատվությանը հանրային հրապարակման համար ստացվող տեղեկատվությունից: Նման հիմնավորումներից է այն, որ չնայած հանրային տեղեկատվական համակարգերին ճշգրիտ, ճշմարիտ և հուսալի տեղեկատվության տրամադրումը կարող է լինել հավատարմագրման պահանջներից մեկը, այն չպետք է նույնացվի ուսումնական հաստատության որակի վերաբերյալ որոշումների համար անհրաժեշտ տեղեկատվության հետ: Այդպես է նույնիսկ այն դեպքում, երբ տեղեկատվության այս երկու խմբերը որոշ չափով համընկնում են: Այս իմաստով, բարձրագույն կրթության բոլոր համակարգերը պետք է սահմանեն, թե ինչպիսի տվյալներ են իրենք տրամադրելու հանրային տեղեկատվական համակարգերին: Այդ տեղեկությունների տրամադրման համար պատասխանատու են ԲՈՒՀ-երը:

Որակի ապահովման գործակալությունը պետք է տեղեկություններ տրամադրի հասարակությանը և առկայության պարագայում պատասխանի հարցերին՝ համաձայն օրենսդրության կամ իր հիմնադրման պայմանների պահանջներին: Դա ներառում է նաև իր քաղաքականությունների, ընթացակարգերի և չափանիշների հրապարակումը: Գործակալության պարտականությունների մեջ կարող է մտնել նաև շահառուներին որակի ապահովման արդյունքների վերաբերյալ հուսալի տեղեկատվության տրամադրումը: Նման դեպքերում գործակալությունը պետք է ուշադիր լինի տեղեկատվության կառավարման նկատմամբ: Սովորաբար գործակալությունները ստեղծում են ուղեցույցներ և ձեռնարկներ, որոնք ներկայացնում են մանրամասն տվյալներ: Որոշ գործակալություններում գործում է շահառուների հարցումներին պատասխանների տրամադրման ծառայություն: Համացանցի կայքերում առանձնացվում են տեղեկատվության

տարածման և հասարակության հարցումներին նվիրված բաժիններ: Այս բոլորը նպաստում են որակի ապահովման գործակալության հանրային ընկալման ձևավորմանը:

Որակի ապահովման գործակալությունը, պարտադրման տարբեր աստիճաններով, որոշակի տեղեկատվություն է պահանջում՝ մոնիտորինգի և իրականացման միջոցառումներին հետևելու նպատակով: Մոնիտորինգը կարող է իրականցվել միջոցառումների ընթացքի վերաբերյալ հաշվետվությունների, կատարված քայլերի կամ որակի ապահովման արդյունքի ուժի մեջ լինելու ժամանակահատվածում կատարված էական փոփոխությունների վերաբերյալ հաշվետվությունների միջոցով: Օրինակ, եթե ԲՈՒՀ-ն իրականցնում է իր գործունեության փոփոխություններ, որոնք էական ազդեցություն են ունենում, հնարավոր է, որ այն պարտավորվի ներկայացնել դրանք որակի ապահովման գործակալությանը: Գործակալությունն այնուհետ կարող է քննարկել փոփոխությունները և որոշել, թե արդյոք որակի ապահովման արդյունքը դեռ ուժի մեջ է, թե՝ ոչ: Կամ ԲՈՒՀ-ում կարող է մեծ սկանդալ տեղի ունենալ, որը հնարավոր է ազդի իր կրթական առաջարկների որակի վրա: Նաև երրորդ անձը կարող է ծանուցել գործակալությանը, որ ԲՈՒՀ-ը կեղծ տեղեկատվություն է տրամադրում՝ որակի ապահովման շահեկան արդյունք ստանալու նպատակով: Սրանք պարզապես մի քանի օրինակներ են, որոնք ցույց են տալիս, որ տեղեկություններն ու տվյալները, որոնց վրա հիմնված են որակի ապահովման արդյունքները, պետք է ճիշտ կառավարվեն, որպեսզի հնարավոր լինի հեշտությամբ հղում կատարել դրանց: ՈԱ գործակալությունները պետք է ճիշտ պլանավորեն փաստաթղթավորման և տեղեկատվության կառավարման համակարգերը: Սա այնպիսի ոլորտ է, որը պահանջում է հատուկ անձնակազմ կամ մասնագիտացված ստորաբաժանում:

Դժվարին գործ է նաև գնահատողների վերաբերյալ տվյալների բազայի վարումը՝ նրանց կենսագրական մանրամասն տվյալներով: Այդ տվյալները պետք է ներառեն՝ անձնական և մասնագիտական տեղեկատվություն, հաճախած մասնագիտական ու վերապատրաստման դասընթացների նկարագրությունը, կատարված այցելությունների քանակը, գնահատված ուսումնական հաստատությունների կամ ծրագրերի ցանկը, նրանց այցելությունների գնահատումը և այլն: Գործակալությանը կարող է մեծ թվով տեղեկատվություն անհրաժեշտ լինել՝ գնահատող խմբի հավասարակշռված կազմ ձևավորելու համար: Սա հատկապես ճշմարիտ է խոշոր և բազմազան բարձրագույն կրթության համակարգերում, որտեղ առկա է արտաքին գնահատողների լայն ցանկ: Խմբում պետք է լինեն տարբեր վայրերից, տարբեր կրթությամբ, մասնագիտացմամբ, տարբեր սեռի և հավատքի մարդիկ:

Անհրաժեշտ է խուսափել առանձին գնահատողներին ավելի հաճախ օգտագործելուց և պատրաստված որոշ գնահատողներին ընդհանրապես չօգտագործելուց: Այս խնդիրը լուծելու համար անհրաժեշտ է ունենալ գնահատողների վերաբերյալ լավ կազմակերպված և մշտապես թար-

մացվող տվյալների բազա: Որոշ գործակալություններ այս մանրամասները հրապարակային են դարձնում և կարծիք են տրամադրում գնահատողների վերաբերյալ իրենց համացանցի կայքերի կամ տվյալների բազաների միջոցով: Նման ռազմավարությունն օգնում է խուսափելու խեղաթյուրումներից և կեղծ տեղեկատվությունից: Պետք է դիտարկել արտաքին գնահատողների աշխատանքը և այդ դիտարկման արդյունքները պետք է ընդգրկվեն տվյալների բազայում: Իհարկե, այս տեղեկատվությունն ամբողջովին պետք չէ հանրային դարձնել: Այդուհանդերձ, եթե արտաքին գնահատողը անվստահելի է համարվում կամ գործակալությունը որոշում է, որ նա չպետք է կրկին ընտրվի, խորհուրդ է տրվում այդ տեղեկատվությունը գրանցել որևէ կերպ: Դա թույլ կտա խուսափել հետագա վերընտրումից՝ նրա ձախողումների վերաբերյալ տեղեկության բացակայության պատճառով:

Քանի որ գործակալությունը բարելավում է իր մեթոդները, վերանայում է քաղաքականությունը, մշակում է նոր պլաններ կամ սահմանում է վերջնաժամկետներ, այդ ամենի վերաբերյալ տեղեկատվությունը պետք է արդյունավետ կերպով փոխանցվի շահառուներին: Որակի ապահովման գործակալությունները սովորաբար դա անում են թե ավանդական եղանակներով, թե տեղեկատվական և հաղորդակցության ժամանակակից միջոցներով: Սովորաբար օգտագործվում են առաքման սերվերները, համացանցի կայքերը, էլեկտրոնային փոստի առաքման ցանկերը, նորությունների նամակները, լրագրերում գովազդները, ՁԼՄ-ներում հայտարարությունները և ակադեմիական ժողովներում քննարկումները:

Վարժություն 4

Վերլուծեք, թե որակի ապահովման գործակալության կառավարման և կազմակերպչական կառուցվածքի որ տեսակն ավելի արդյունավետ կլինի ձեր երկրի պարագայում:

Գործակալության վստահելիությունը և հաշվետվողականությունը

Որակի ապահովման գործակալությունները պետք է ցույց տան, որ իրենց կողմից իրականացվող որակի ապահովման գործընթացը նախանշած նպատակներին հասնելու տեսակետից արդյունավետ է: Այս առումով նրանք հաշվետու են բազմաթիվ շահառուների: Նրանք պետք է ապացուցեն շահառուներին, որ իրենց գործընթացը վստահելի է և պետք է երաշխավորեն արդյունքի օբյեկտիվությունը:

1. Որակի ապահովման գործընթացի վստահելիությունը

Որակի ապահովման գործընթացի վստահելիությունը բազմազան գործոնների համադրություն է: Այս գործոնները կարող են վերաբերվել քաղաքականության հստակությանը, որակի ապահովման շրջանակի համարժեքությանը, ընթացակարգերի թափանցիկությանը, գործընթացին մասնակից անձանց անկողմնակալությանը և համակարգի վրա ցանկալի ազդեցությանը:

Որակի ապահովման գործընթացի վստահելիությունը երաշխավորելու համար գործակալությունը պետք է համոզվի, որ իր ռազմավարությունն ունի մի շարք հիմնական տարրեր: Այս տարրերից կարող են լինել նորմերի և չափանիշների ձևավորման գործընթացին ԲՈՒՀ-երի լայն մասնակցությունը, կոնսենսուսի ձևավորման միջոցով լայն շրջանակների աջակցությունը, գնահատման եղանակների և գործիքների մանրակրկիտ մշակումը, քաղաքականությունների և ընթացակարգերի թափանցիկությունը, ընթացակարգերի անշեղ իրագործումը, գնահատման արհեստավարժությանը նպաստող երաշխիքների կիրառումը:

Այն համակարգերում, որտեղ ուշադրության կենտրոնում որակի վերահսկողությունն է, գործակալությունը կարող է ստիպված լինել ընտրելու տարբերակների այնպիսի համախումբ, որպեսզի կարողանա վերացնել ցածրորակ կրթության տրամադրումը: Օրինակ, չափանիշների վերաբերյալ ազգային մակարդակով խորհրդակցությունների կազմակերպումը կարող է լինել ոչ նպաստավոր, եթե գնահատման արդյունքներն օգտագործվելու են ցածրորակ ուսումնական հաստատությունների փակման համար: Սակայն ունենալով բողոքարկման արդյունավետ համակարգ՝ գործակալությունը կարող է անշեղորեն կիրառվող հստակ և թափանցիկ ընթացակարգերի միջոցով ապահովել վստահելիություն: Գործակալության վերաբերյալ բարձր հասարակական կարծիքի ձևավորմանը կարող են նպաստել մեծաթիվ նախապատրաստական ծրագրերը և ուսումնական

հաստատությունների հետ տարվող մեծ աշխատանքը: Այս պարագայում գործակալությունը հնարավոր է, որ չկարողանա ԲՈՒՀ-երի հետ կոնսենսուսի հասնել: Սակայն գործակալությունը կարող է լսել ցանկացած անձի կողմից որակի ապահովման ընթացակարգերի վերաբերյալ ներկայացված մեկնաբանությունները և հաշվի առնել արժեքավորները:

Կարևոր է ունենալ հստակ շրջանակ, որը կկարողանա արձագանքել փոփոխություններին, սակայն պահպանել մոտեցման հետևողականությունը: Չնայած ընթացքում կատարվող ճշգրտումները նոր ձևավորված գործակալության գործընթացների անբաժան մաս են կազմում, չափազանց մեծ թվով փոփոխությունները հաճախ կարող են հանգեցնել որակի ապահովման գործակալության նկատմամբ ԲՈՒՀ-երի վստահության կորստին: Որակի ապահովման շրջանակը պետք է նաև զգայուն լինի ազգային համատեքստի նկատմամբ, ինչպես նաև իր հիմնական տարրերի առումով համահունչ լինի միջազգային զարգացումների հետ: Դրան կարելի է հասնել եթե գործակալությունը ունի լավ կշռադատված նպատակներ և հստակ գիտի, թե ինչ է պատրաստվում անել առնվազն հետագա 5-7 տարիների ընթացքում: Շրջանակի անհստակության հետևանքով կձևավորվի այնպիսի իրավիճակ, երբ գործակալությունը կփորձի միևնույն ընթացակարգի միջոցով հասնել միմյանց հակասող նպատակների:

Շրջանակի ձևավորումից հետո, վստահելիության հետ կապված խնդիրների մեծ մասն առնչվում է այն իրագործող անձանց հետ: Անհրաժեշտ է լրջորեն մոտենալ փորձագետների ընտրությանը, որպեսզի ընտրվեն միայն իրենց ազնվությամբ հայտնի անձինք: Ուսումնական հաաստատության վստահությունը գնահատողների փորձագիտությանը միայն բավարար չի կարող լինել: Ամենից առաջ, ուսումնական հաստատությունը պետք է կարողանա վստահել գնահատողներին: Նրանք պետք է լինեն արեհստավարժ որակի ապահովման նկատմամբ իրենց մոտեցման մեջ: Բնականաբար, գնահատողների արհեստավարժության բարձրացման գործում որակի ապահովման գործակալությունը էական դեր ունի:

Գնահատող խմբերի մեջ ընդգրկվող անձանց որակավորումները և կարողությունները չափազանց կարևոր են ամբողջ գործընթացի վստահելիության համար: Սակայն, գնահատող խմբի հաջողության համար նույնքան կարևոր է նաև արհեստավարժությունը, որով հավատարմագրման գործակալությունը պլանավորում և իրագործում է հավատարմագրման գործընթացը: Նույնիսկ առավել բարձր որակավորում ունեցող խումբը կարող է իր գործում հաջողության չհասնել, եթե հավատարմագրման գործակալությունը չկարողանա հստակ ներկայացնել իր ակնկալիքները խմբից:

Ուշադրության կարիք ունեցող մեկ այլ հարց է խմբի կազմի որոշումը: Որևէ գնահատող միայնակ չի կարող տեղեկանալ ԲՈՒՀ-ի կամ ուսումնական ծրագրի գործունեության բոլոր կողմերին: Որակի վերաբերյալ յուրաքանչյուր անձի պատկերացումների վրա ազդում են բազ-

մաթիվ գործոններ, որոնք դուրս են որակի ապահովման գործակալության վերահսկողությունից: Գործակալությունը չի կարող չեզոքացնել բոլոր այդ պատկերացումները վերապատրաստման ծրագրի միջոցով, որքան էլ որ այն մանրամասն լինի: Սա հաշվի առնելով՝ գործակալությունը պետք է ապահովի խմբի այնպիսի կազմ, որը կիրականացնի որակյալ կոլեկտիվ գնահատում: Խմբի կազմում տարբեր հմտություններ համադրելու միջոցով գնահատումը կդառնա ավելի հավասարակշռված:

Հարկ է ի նկատի ունենալ շահերի բախման խնդրին անդրադառնալու անհրաժեշտությունը: Գնահատողները իրենց ազնվությամբ հայտնի փորձագետներ են: Սակայն գործակալությունների մեծ մասը նրանցից հավաստիացում է պահանջում այն բանի վերաբերյալ, որ գնահատողը չունի որևէ առնչություն գնահատման ներկայացված հաստատության հետ: Այդ առնչությունը, լինի դա ներկա թե անցյալ, կարող է լինել ուղղակի կամ անուղղակի, որևէ մոտ բարեկամի միջոցով որպես այդ հաստատության աշխատակից կամ ղեկավար որևէ մարմնի անդամ, խորհրդատու կամ շրջանավարտ: Դա արվում է օբյեկտիվության ապահովման և երաշխավորման նպատակով: Նաև պետք է համարժեք կերպով վարվել անձնակազմի անդամների դեպքում հնարավոր շահերի բախման նկատմամբ: Այս քայլերը ամրապնդում են որակի ապահովման գործակալության վստահելիությունը:

Որակի ապահովման գործընթացներում ԲՈՒՀ-երին որպես հավասար գործընկերներ ընդգրկելը նույնպես կնպաստի վստահելիության ձևավորմանը: Որոշ երկրներում ուսումնական հաստատությունները որևէ ազդեցություն չեն ունենում գնահատող խմբի կազմի ձևավորման վրա: Խմբի կազմի ձևավորման ժամանակ ուսումնական հաստատությունների հետ խորհրդակցելը դիտվում է որպես լավ պրակտիկա: Իրականում այն գործընկերային ոգի է տալիս որակի ապահովման գործընթացին: Բացի այդ, բավականին անօգուտ կլինի այնպիսի խումբ ուղարկելը, որի դատողությունները չեն ընդունվելու ուսումնական հաստատության կողմից: Դա ամրապնդում է չափանիշներին համապատասխանությունը միայն առանց նպաստելու բարելավմանը:

ԲՈՒՀ-երից և որակի ապահովման գործընթացում ընդգրկված անձանցից հետադարձ կարծիքի ստացումը և դրա օգտագործումը հետագա բարելավման նպատակով նույնպես նպաստում է ճիշտ ուղղությամբ որակի ապահովման գործակալության ընթացքին: Գործուն բողոքարկման մեխանիզմի առկայությունը մյուս քայլն է, որը պետք է դիտարկվի որակի ապահովման գործակալության կողմից վստահելիության և հաշվետվողականության ապահովման համար:

Այլ կերպ ասած, վստահելիությանը և որակի ապահովման գործընթացի ընդունմանը կարող են մեծապես նպաստել նպատակների և գնահատման շրջանակի հստակեցումը, այդ շրջանակին հավատարիմ մնալը, օբյեկտիվությունն ապահովող համարժեք երաշխիքների կիրառումը,

ԲՈՒՀ-երին որպես հավասար գործընկերներ դիտարկումը և շահառուների վստահությունը շահելը:

Գոյություն ունեն նաև մեխանիզմներ, որոնք ապահովում են, որ որակի ապահովման գործակալությունը բացահայտ կերպով ցույց տա իր հաշվետվողականությունը: Հաջորդ հատվածում կքննարկվեն գործակալությունների կողմից իրենց հաշվետվողականության ապահովման եղանակների մի քանի օրինակներ:

2. Հաշվետվողականության միջոցները

Որոշակի առումով որակի ապահովման գործակալության կարգավիճակը ազդում է դրա հաշվետվողականության վրա: Պետության կողմից հիմնադրված գործակալությունների դեպքում, պետական պաշտոնյաները, ինչպես օրինակ Կրթության նախարարության ներկայացուցիչը, ղեկավարում կամ անդամակցում են ղեկավար մարմնին: Բացի այդ, պետությունը կարող է գործադրել տարբեր մեխանիզմներ, ինչպես օրինակ գործակալություններից իրենց գործունեության վերաբերյալ տարեկան հաշվետվությունների պահանջելը: ԲՈՒՀ-երին պատկանելու դեպքում, որակի ապահովման գործակալությունը հաշվետու է դառնում ԲՈՒՀ-երին: Հաշվետվողականությունը կարող է իրականացվել բազմաբնույթ տարբերակների միջոցով: Դրանցից որոշները քննարկվում են ստորև:

Տարբերակ 1 Որակի ապահովման գործակալության գործառնություններում ներառված հսկողության գործիքները ապահովում են որոշակի հաշվետվողականություն

Ներառված բազմաթիվ հսկողության գործիքներն ապահովում են շահառուների ընդգրկումը որակի ապահովման գործընթացների ձևակերպման և դրանց մոնիտորինգի գործում: Գործակալության հաշվետվողականության ապահովման եղանակներից մեկը կառավարման մարմիններում տարբեր շահառուների և հատկապես ակադեմիական հանրության տարբեր ներկայացուցիչների ընդգրկումն է: Որոշ գործակալություններում ընդգրկված են լայն հասարակության ներկայացուցիչներ: Որոշները կառավարման մարմնում ունեն կրթական ծառայություններն օգտագործողների ներկայացուցիչներ: Կան նաև որակի ապահովման գործակալություններ, որոնք մշակել են կառավարման մարմնում հասարակության ներկայացուցիչների թեկնածությունների առաջադրման մանրակրկիտ ընթացակարգեր: Գործակալությունները սովորաբար կառավարման մարմիններին ներկայացնում են իրենց ծրագրերը և տարեկան հաշվետվությունները: Դրանք նույնիսկ կարող են հրապարակվել թափանցիկության և հաշվետվողականության մեծացման համար: Հաշվետվությունների հրա-

պարակային դարձնելն օգնում է գործակալություններին հաշվետու լինել: Քաղաքականությունը և ընթացակարգերի ողջամիտ դարձնելու մեկ այլ եղանակ է արտասահմանյան ներկայացուցչի ընդգրկումը կառավարման մարմիններում: Այդուհանդերձ, այս ամենը մեծապես կախված է որակի ապահովման գործակալության կարգավիճակից:

Որպես օրինակ կարելի է բերել Ինդոնեզիայի ԲԿՀԱԽ-ը, որը հիմնադրված լինելով պետության կողմից՝ կառավարությանն է ներկայացնում տարեկան հաշվետվությունը և իր գործունեությունը ուղղորդվում է կառավարության կողմից իրեն հատկացված տարեկան բյուջեով: Օնտարիոյի Ասպիրանտական Կրթության Խորհուրդը (ՕԱԿԽ), որը հիմնադրվել է Օնտարիոյի Համալսարանների Խորհրդի (ՕՀԽ) կողմից, տարեկան առնվազն մեկ անգամ պետք է գրավոր հաշվետվություն ներկայացնի ՕՀԽ-ին անցած տարվա ընթացքում իր գործունեության արդյունքների վերաբերյալ:

Տարբերակ 2. Կանոնակարգող կազմակերպությունը կարող է հետևել որակի ապահովման գործակալությունների հաշվետվողականությանը

Որակի ապահովման գործակալությունները, որպես հաշվետվողականության գործիք, կարող են ճանաչում փնտրել կանոնակարգող մարմնի կողմից: ԱՄՆ-ում ԲՈՒՀ-երի կողմից հիմնադրված տարածաշրջանային հավատարմագրման մարմինները կարող են ճանաչվել Բարձրագույն Կրթության Հավատարմագրման Խորհրդի (ԲԿՀԽ) կամ ԱՄՆ-ի Կրթության դեպարտամենտի կողմից: Չնայած այս մարմինների ճանաչումը ստանալը կամավոր է, սակայն դաշնային ֆոնդերի, ինչպես օրինակ՝ ուսանողների աջակցության ֆոնդի միջոցները ուղղվում են միայն դեպի ճանաչված գործակալության կողմից հավատարմագրված ուսումնական հաստատությունները: Հավատարմագրող մարմինները, որոնք ձգտում են ճանաչում ստանալ ԲԿՀԽ-ի կողմից, պետք է ցույց տան, որ իրենք բավարարում են ԲԿՀԽ-ի չափորոշիչներին: Հավատարմագրող կազմակերպություններից ակնկալվում է կրթական որակի զարգացում, հաշվետվողականության ցուցադրում, բարելավման խրախուսում, համարժեք ընթացակարգերի կիրառում, հավատարմագրման գործընթացների շարունակական վերագնահատում և բավարար ռեսուրսների առկայություն: Ճանաչումը կատարվում է ԲՈՒՀ-երի հավատարմագրման գործընթացի նման ինքնագնահատմամբ և արտաքին գնահատմամբ: Այդ գործընթացում (որը կատարվում է յուրաքանչյուր վեց տարին մեկ) նույնիսկ կան փուլեր, որոնք բաց են հասարակության համար:

Ավստրալիայում ԱՀՈԳ-ը պարտավոր է հինգ տարվա պարբերականությամբ իրականացնել պետական և տեղական կառավարման մարմինների ենթակայության բարձրագույն կրթության հավատարմագրման մարմինների որակի աուդիտ: Համապատասխան ստորաբաժանումը պատասխանատու է աուդիտի հաշվետվությանն ի պատասխան գործողությունը-

ների համար: ԱՀՈԳ-ի աուդիտը ծառայում է որպես հավատարմագրման մարմինների հաշվետվողականության ապահովման միջոց:

Ներդիր 12 - Հավատարմագրողների հաշվետվողականություն. Բարձրագույն Կրթության Հավատարմագրման Խորհուրդ (ԲԿՀԽ)

ԲԿՀԽ-ն պահպանում է այն հին ավանդույթը, որի համաձայն հավատարմագրող կազմակերպությունների ճանաչումը պետք է հանդիսանա բարձրագույն կրթության որակի, հաշվետվողականության և բարելավման կարևոր ռազմավարություն: ԲԿՀԽ-ի կողմից ճանաչումը հաստատում է, որ հավատարմագրող կազմակերպությունների չափորոշիչները և գործընթացները համահունչ են որակի, բարելավման և հաշվետվողականության ակնկալիքներին: ԲԿՀԽ-ն ճանաչում է տարածաշրջանային, մասնագիտացված, ազգային և պրոֆեսիոնալ հավատարմագրող կազմակերպություններին:

Հավատարմագրող կազմակերպությունների ճանաչումը ԲԿՀԽ-ի կողմից հետապնդում է երեք հիմնական նպատակ.

- ԲԱՐՁՐԱՑՆԵԼ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԸ...
- ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ: Հաստատել, որ հավատարմագրող կազմակերպություններում գործում են չափորոշիչներ, որոնք ապահովում են հաշվետվողականությունը հասարակությանը և բարձրագույն կրթության ոլորտի ներկայացուցիչներին իրենց կրթական գործընթացների վերաբերյալ հետևողական, պարզ և հստակ տեղեկությունների տրամադրման միջոցով: Հաշվետվողականությունն ընդգրկում է նաև հավատարմագրող կազմակերպության պատրաստակամությունը հանրությանը ընդգրկելու հավատարմագրման որոշումների կայացման գործում:
- ԽՐԱԽՈՒՍԵԼ ՆՊԱՏԱԿԱՈՒՂՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԲԱՐԵԼԱՎՈՒՄՆԵՐԸ...

Աղբյուր Բարձրագույն Կրթության Հավատարմագրման Խորհրդի համացանցի կայք

Տարբերակ 3. Տարածաշրջանային ցանցերի շրջանակում իրականացվող կամավոր փոխհամաձայնեցումը և դրանց չափորոշիչներին ու չափանիշներին համապատասխանեցումը

Որակի ապահովման գործակալությունները կարող են կամավոր կերպով միանալ ձևավորելով ցանցեր և առաջնորդվել փոխհամաձայ-

նեցված սկզբունքներով կամ գործընթացներով: Չնայած հաշվետվողականությունը կարող է չլինել այդ ցանցերին միանալու հիմնական դրդապատճառը, սակայն ընդհանուր չափորոշիչներին և չափանիշներին համապատասխանությունը կարող է ծառայել գործակալության հաշվետվողականության ապահովման միջոց: Որպես օրինակ կարելի է բերել ԲԿՈԱԳՄՑ-ի և ԲԿՈԱԵԱ-ի կողմից մշակված հաջողված փորձառության տարրերը: *Ներդիր 13-ում* ներկայացված են ԲԿՈԱԳՄՑ-ի հաջողված փորձառության տարրերի մի մասը, որոնք վերաբերում են հանրության նկատմամբ հաշվետվողականությանը: Սկզբունքների ամբողջ ցանկը առկա է ԲԿՈԱԳՄՑ-ի համացանցի կայքում:

Ներդիր 13 - Հաջողված փորձառության ուղենիշներ (ԲԿՈԱԳՄՑ)

Իր գործունեության ընթացքում որակի արտաքին ապահովման գործակալությունը տեղեկություններ և պատասխաններ է տրամադրում հանրությանը գործակալությանը առնչվող օրենսդրության կամ մշակութային համատեքստին համաձայն: Դա ներառում է իր փաստաթղթերի, մասնավորապես՝ քաղաքականությունների, ընթացակարգերի և չափանիշների հրապարակումը և բացահայտումը:

Գործակալությունը նաև հանրային հաշվետվողականություն է ցուցադրում հրարապարակային և բացահայտ դարձնելով իր գնահատման որոշումներն ու արդյունքները տվյալ երկրի օրենսդրությանը և իրականացված գնահատման եղանակին համապատասխան ձևով: Հրապարակային հաշվետվության բովանդակությունը կարող է տարբեր լինել՝ կախված մշակութային համատեքստից և հաշվետվողականության վերաբերյալ պահանջներից:

Աղբյուր՝ Բարձրագույն Կրթության Որակի Ապահովման Գործակալությունների Միջազգային Ցանցի համացանցի կայք

Տարբերակ 4. Գործակալությունների պարբերական գնահատումը՝ որպես հաշվետվողականության ապահովման եղանակ

Մեծ ճանաչում է սկսում ստանալ մետա-գնահատման կամ «գնահատման գնահատման» օգտակարությունը հաշվետվողականության երաշխավորման գործում: Որակի ապահովման գործակալությունների հաջողված փորձառությունը նույնպես խոսում է դրա մասին: Եվրոպական որակի ապահովման գործակալություններից ակընկալվում է ենթարկվել պարբերական գնահատման յուրաքանչյուր հինգ տարին մեկ: Որոշ գործակալություններ իրականացնում են գործունեության հետևանքների վեր-

լուծություններ և միջանկյալ ճշգրտումների նպատակով ուսումնասիրություններ, որոնք օգնում են հասկանալ իրենց նպատակներին հասնելու ուղղությամբ առաջընթացը: Որոշ գործակալություններ գնահատման այցելությունները դիտարկելու համար հրավիրում են արտասահմանյան փորձագետների, ովքեր մասնակցում են վերապատրաստման ծրագրերին ու խորհրդակցություններին և կարծիքներ են ներկայացնում: Հարավային Աֆրիկայի ԲԿՈՀ-ը ստեղծել է երեք անդամներից բաղկացած Միջազգային Խորհրդակցական Խումբ, որը գործում է որպես զարգացման փորձարարական խումբ: ԱՀՈԳ-ը, Չիլիի Բարձրագույն կրթության գնահատման ազգային խորհուրդը, Հաննովերի Գնահատման և Հավատարմագրման Կենտրոնական Գործակալությունը (ZEVA), Գնահատման Դանիական Կենտրոնը և ՆՉՀՈՒԱԿ-ն արտաքին գնահատում են անցել:

Տարբերակ 5. Գործակալությունների ռեեստր՝ ուղղված հաշվետվողականության ապահովմանը

Եվրոպական տարածաշրջանի որակի ապահովման գործակալությունները համաձայնվել են ընդունել «Եվրոպայում գործող որակի արտաքին ապահովման գործակալությունների ռեեստրի» ստեղծմանն ուղղված ռազմավարությունը: *Ներդիր 14-ը* լուսաբանում է, թե ինչպիսին կլինի այդ ռեեստրը:

Ներդիր 14 - Եվրոպայում գործող որակի արտաքին ապահովման գործակալությունների ռեեստր (ԲԿՈԱԵԱ)

2003 թ. նախարարների Բեռլինյան հանդիպման ժամանակ ԲԿՈԱԵԱ-ն հանձն է առել, համապատասխան շահառուների համագործակցությամբ, մշակելու որակի ապահովման գործակալությունների եվրոպական ռեեստրը, որի մեջ կընդգրկվեն Եվրոպայում գործող կամ հիմնադրման գործընթացում գտնվող հանրային, մասնավոր և թեմատիկ գործակալությունները: Եվրոպայում գործող որակի ապահովման ահրեստավարժ և վստահելի գործակալություններին բացահայտելու հնարավորություն ընձեռելով ռեեստրը կբխի ԲՈՒՀ-երի և պետությունների շահերից: Այդ շահերը առաջին հերթին կապված են ոչ ազգային ակադեմիական որակավորումների ճանաչման բարդ խնդրի հետ: Ճանաչման ընթացակարգերը կշահեն, եթե բացահայտ լինի, թե որակավորում տրամադրողների որակն ինչ չափով է ապահովված ճանաչված գործակալությունների կողմից: Բացի այդ, կմեծանան արտասահմանյան գործակալություններից որակի ապահովում ստանալու ԲՈՒՀ-երի հնարավորությունները: ԲՈՒՀ-երը անշուշտ կշահեն այս գործընթացից հուսալի ռեեստրից պրո-

ֆեսիոնալ գործակալություններ ընտրելու հնարավորություն ստանալով ...

Եվրոպական ռեեստրում ընդգրկման որոշումը կայացնելու է «Եվրոպական ռեեստրի հանձնաժողովը»: Որպես ռեեստրում ընդգրկման չափանիշներից մեկը, հանձնաժողովը կօգտագործի գործակալության պարբերական գնահատման ժամանակ բացահայտված համապատասխանությունը որակի արտաքին ապահովման եվրոպական չափորոշիչներին:

Աղբյուր Բարձրագույն Կրթության Որակի Ապահովման Եվրոպական Ասոցիացիա, 2005.

1999թ. դիմադրության հանդիպեց ՀՆՄԱ-ի և ԲԿՈԱԳՄՑ-ի կողմից առաջարկված «Որակի նշանի» գաղափարը, որը որակի ռեեստրի նման թույլ կտար առանձնացնել որակի արտաքին ապահովման վստահելի գործակալություններին: Արդյունքում ԲԿՈԱԳՄՑ-ը հրաժարվեց որակի նշանի գաղափարից, սակայն մշակեց ավելի վաղ դիտարկված հաջողված փորձառության համակարգը:

Այս տարբերակների և ազգային համատեքստի դիտարկումը օգտակար կլինի որակի արտաքին գործակալության ստեղծման, կառավարման, կազմակերպման և վերահսկողության վերաբերյալ որոշումների կայացման ժամանակ:

Վարժություն 5

1 Հաշվետվողականության ինչպիսի՞ ուղղակի և անուղղակի միջոցներ են գործում ձեր երկրի որակի ապահովման ոլորտում:

2 Վերլուծեք, թե հաշվետվողականության ո՞ր միջոցները հաջողությամբ կկիրառվեին ձեր երկրի համատեքստում գործող որակի ապահովման գործակալությունների նկատմամբ:

Յուրացված դասեր

Դաս 1 - Որակի ապահովման գործակալությունը պետք է լինի անկախ թե՛ պետությունից, թե՛ ԲՈՒՀ-երից:

Որպես հաջողված փորձառություն է դիտարկվում որակի ապահովման գործակալության ինքնավարության բավարար աստիճանը թե պետական ապարատից և թե ակադեմիական հանրությունից: Արդյունքում գործակալությունը միշտ գործում է որպես մասնավոր կամ կիսաինքնավար հաստատություն: Դրա անհրաժեշտությունը պայմանավորված է ակադեմիական հանրության մոտ վստահության ձևավորման կարևորությամբ: Գործակալությունը գործում է անկախ կամ որպես բուֆեր պետության և բարձրագույն կրթության ոլորտի միջև: Երբ բուֆերային կազմակերպության դերն արդեն ապահովված է, գործակալությունը կարող է ձգտել անկախ դառնալ պետական ադմինիստրացիայից և նոր դերակատարում ձեռք բերել: Բոլոր դեպքերում, պետության և գործակալություն միջև համագործակցությունը և հաղորդակցումը մեծապես կարևորվում է:

Դաս 2 - Որակի ապահովման գործակալությունը էական և երբեմն նաև գործառնական դեր է խաղում, սակայն չպետք է միջամտի փորձագետների գնահատման գործընթացին:

Որակի ապահովման գործակալության դերը կամ զուտ վարչական է, կամ վարչական և գործառնական: Գործակալությունը սովորաբար զբաղվում է որակի ապահովման մեթոդաբանության և ընթացակարգերի մշակմամբ: Այն պլանավորում և կազմակերպում է որակի ապահովման գործընթացները, հաճախ մասնակցում է նաև գնահատողների խմբի ընտրությանը և կարող է մասնակցել դրա պատրաստմանը կամ առնվազն ընդհանուր կողմնորոշմանը: Երբեմն գործակալությունը գնահատող խմբի կազմում ընդգրկում է իր մշտական անձնակազմի անդամներից մեկին, որպեսզի ավելի համադրելի դարձնի գործընթացը: Գործակալությունները սովորաբար սկսում են վարչական գործառույթից: Համակարգում լեգիտիմություն ձեռք բերելուց հետո նրանք կարող են ավելի գործնական դեր կատարել: Սակայն թափանցիկության պահպանման համար շատ կարևոր է գործակալության և գնահատող խմբի գործառույթների տարանջատումը, ընդ որում գնահատող խումբը պետք է պատասխանատու լինի միայն մասնագիտական դատողություններ կատարելու համար:

Դաս 3 - Վստահության ձևավորումը էական է որակի ապահովման համակարգի ստեղծման սկզբնական փուլերում

Վստահությունը կարող է ձեռք բերվել թափանցիկության միջոցով: Օրինակ, այն կարող է ամրապնդվել, եթե ուսումնական հաստատությունն ունի ձայնի իրավունք գնահատող խմբի կազմի որոշման ժամանակ և կարող է դեմ լինել գնահատողներին, եթե առկա է շահերի բախում: Ուսումնական հաստատությունը կարող է նաև արտաքին գնահատման հաշվետվության վերաբերյալ մեկնաբանություններ կատարելու հնարավորություն ունենալ: Թափանցիկությունը կարող է մեծացվել նաև հանրությանը որակի ապահովման գործիքների և հաշվետվությունների վերաբերյալ տեղեկատվության տարածման միջոցով: Լավագույն գործելակերպ է համարվում համացանցում կամ մասնագիտական ամսագրերում որակի ապահովման հաշվետվությունների և գնահատման ու վարկանիշավորման չափանիշների ու ուղեցույցների հրապարակումը:

Դաս 4 - Որակի արտաքին ապահովման համակարգի ձևավորումը պահանջում է փորձագիտական գիտելիքներ, իսկ գործունեությունը՝ ռեսուրսներ:

Որակի արտաքին ապահովման համակարգի ձևավորումը և գործունեությունը պահանջում է շարունակական պատրաստականություն դրան տրամադրելու անհրաժեշտ ֆինանսական և մարդկային ռեսուրսներ: Որակի ապահովման մոդելի մշակման և գործադրման, ինչպես նաև որակի ապահովման գործընթացի բոլոր փուլերի համար փաստաթղթավորման մշակումը պահանջում է մասնագիտացված փորձագիտական գիտելիքներ: Որակի ապահովման գործակալությունները պետք է անընդհատ աջակցեն բարձրագույն կրթության համակարգին բովանդակալից ինքնագնահատման համար կարողությունների ձևավորման գործում: Նրանք պետք է նաև օգնեն ուսումնական հաստատություններին ձևավորելու գնահատող փորձագետների խումբ: Այս գործընթացները պահանջում են ժամանակ և համարժեք ռեսուրսներ:

Դաս 5 - Որակի ապահովումը հեռանկարում պետք է նպաստի որակի բարձրացմանը:

Որակի ապահովումն ինքնանպատակ չէ: Ավելին, որակի ապահովման մեխանիզմի առկայությունը անհրաժեշտաբար և մեխանիկորեն չի նշանակում, որ բարձրագույն կրության համակարգը համապատասխան որակի է: Որակի ապահովման գործակալությունը մշտապես պետք է ծառայի բարձրագույն կրթության համակարգի որակի բարձրացմանը առանձին ուսումնական հաստատության, կրթական ծրագրի կամ ամբողջ համակարգի մակարդակով: Հետևաբար նրա արդյունավետությունը որոշվում է միայն այն որակով, որը նա ապահովում է կամ զարգացնում:

Գրականություն

Arcelo, A.A. 2003. *In pursuit of continuing quality in higher education through accreditation: the Philippine experience.* Paris: IIEP-UNESCO.

El-Khawas, E. 2001. *Accreditation in the United States: origins, developments and future prospects.* Paris: IIEP-UNESCO.

European Association for Quality Assurance in Higher Education (ENQA). 2005. *Standards and guidelines for quality assurance in the European higher education area.* Helsinki: ENQA. Available at: http://www.enqa.eu/files/ENQA%20Bergen%20Report.pdf

Kozma, T. 2003. *Accreditation in the higher education system in Hungary: a case study for international comparison,* Paris: IIEP-UNESCO.

LemaStre, M.J. 2005. *Between privatization and state control: Chiles experience of regulating a widely privatized system through quality assurance.* Paper presented at the IIEP Policy Forum on Accreditation and the Global Higher Education Market, Paris, France, 13-14 June, 2005.

Martin, M. (Ed). 2007 (forthcoming)."Comparative synthesis of the case study research on the global higher education market". In: M. Martin (Ed.), *Cross-border higher education: regulation, quality assurance and impact.* Paris: IIEP-UNESCO.

Papers presented at the IIEP Policy Forum on Accreditation and the Global Higher Education Market, Paris, France, 13-14 June 2005.

Revelo Revelo, J.; Augusto Hernandez, C. 2003. *The national accreditation system in Columbia: experiences from the National Council of Accreditation (CNA).* Paris: IIEP-UNESCO.

Stella, A. 2002. *External quality assurance in Indian higher education: case study on the National Assessment and Accreditation Council (NAAC).* Paris: IIEP-UNESCO.

Stella, A. 2004. *Quality assurance mechanisms in higher education in the Asia-Pacific.* Desk study overview commissioned by the Higher Education Division of UNESCO, Paris.

Vroeijenstijn, T. 2003. *Similarities and differences in accreditation: looking for a common framework.* Document prepared for the workshop on the Establishment of a European Consortium for Accreditation,

The Hague, 12-13 June, 2003. Retrieved 10 August 2006 from www.ecaconsortium.net/download.php/?id=20

Համացանցային ռեսուրսներ

Academic Quality Improvement Programme web site, USA: www.aqip.org and www.aqip.org/index.php?option=content&task=view&id=24&Itemid=39

Association of Professional Engineers of Nova Scotia (APENS) web site, Canada: www.apens.ns.ca

Australian Universities Quality Agency (AUQA) web site: www.auqa.edu.au

Australian Universities Quality Agency (AUQA) web site, AUQA policies page: www.auqa.edu.au/aboutauqa/policies/003/index.shtml

Badan Akreditasi Nasional Perguruan Tinggi (BAN) web site, Indonesia: www.ban-pt.net

Council on Higher Education (CHE) web site, South Africa: www.che.ac.za

Council on Higher Education Accreditation (CHEA) web site, USA: www.chea.org

Danish Evaluation Institute (EVA) web site: www.eva.dk

European Association for Quality Assurance in Higher Education (ENQA) web site: www.enqa.net

Hong Kong Council for Academic Accreditation (HKCAA) web site: www.hkcaa.edu.hk

International Network for Quality Assurance Agencies in Higher Education (INQAAHE) web site: www.inqaahe.org

Lembaga Akreditasi Negara (LAN) web site, Malaysia: www.lan.gov.my

National Assessment and Accreditation Council (NAAC) web site, India: www.naacindia.org

National Council for Higher Education Accreditation (NCHEA) web site, Mongolia: www.accmon.mn

New Zealand Universities Academic Audit Unit (AAU) web site: www.aau.ac.nz

Ontario Council for Graduate Studies (OCGS) web site, Canada: http://ocgs.cou.on.ca

Quality Assurance Agency (QAA) web site, UK: www.qaa.ac.uk

Մոդուլ 4

..... ՈՐԱԿԻ ԸՄԲՌՆՈՒՄ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Մոդուլի նպատակները 242

Խորհելու հարցեր 243

Ներածություն 244

Որակի ընմբռնում 246

1. Որակի տարբեր ընմբռնումներ 246
2. Բարձրագույն կրթության որակը 248
3. Հիմնական տերմինների սահմանում 254

Որակի ապահովման մոտեցումներ 266

1. Չափորոշիչների վրա հիմնված համեմատությունը ի հակադրություն «համապատասխանություն նպատակին» մոտեցմանը 266
2. Նվազագույն պահանջները ի հակադրություն որակի բարձր չափորոշիչների (կամ հաջողված փորձառության) 275

Որակի գնահատման ոլորտներ 277

Որակի ապահովման հետ կապված որոշումների ընդունում 283

1. Չափորոշիչների օգտագործման տարբեր մոտեցումներ 283
2. Քանակական գնահատման կիրառումը 286
3. Փորձագետների մասնագիտական դատողությունների կիրառումը 294
4. Համատեքստին հարմարվելու ճկունություն 297

Յուրացված դասեր 304

Գրականություն 312

Հապավումների ցանկ

ՔՀՀՖԳ	Քոլեջների և համալսարանների հավատարմագրման ֆիլիպինների գործակալություն AACCUP, Accrediting Agency of Chartered Colleges and Universities of the Philippines
ՔԴՔՀՀԱ	Քրիստոնեական դպրոցների, քոլեջների և համալսարանների հավատարմագրման ասոցիացիա ACSCU-AAI, Association of Christian Schools, Colleges and Universities Accrediting Agency
ՏԿՀԽ	Տեխնիկական կրթության համահնդկական խորհուրդ AICTE, All India Council for Technical Education
ԿՈԿՕ	Կրթության որակի կատարելագործման ծրագիր AQIP, Academic Quality Improvement Program
ԱՀՈԳ	Ավստրալիական համալսարանների որակի գործակալություն AUQA, Australian Universities Quality Agency
ԲԿԱՀԽ	Բարձրագույն կրթության ազգային հավատարմագրման խորհուրդ, Ինդոնեզիա (BAN-PT *Badan Akreditasi Nasional - Perguruan Tinggi* (National Accreditation Board for Higher Education, Indonesia)
ՈՀ	Որակավորված հաշվապահ CA, Chartered Accountant
ԲԿԽ	Բարձրագույն կրթության խորհուրդ (Հարավային Աֆրիկա) CHE, Council of Higher Education (South Africa)
ՈՀԿԻ	Որակավորված հաշվապահների կանադական ինստիտուտ CICA, Canadian Institute of Chartered Accountants
ՈԱԽ	Որակավորման ազգային խորհուրդ (Կոլումբիա) CAN, National Council for Accreditation (Colombia)
ՀԱՀ	Հավատարմագրման ազգային հանձնաժողով, Չիլի CNAP, *Comisión Nacional de Acreditación* (National Commission of Accreditation, Chile)

ԲԿՀ	Բարձրագույն կրթության հանձնաժողով, Չիլի CSE, *Consejo Superior de Educación* (Chile)
ՈԱԱ	Որակի արտաքին ապահովում EQA, External Quality Assurance
ՀՆ	Համապատասխանություն նպատակին FFP, Fitness for Purpose
ՆՀ	Նպատակի համապատասխանություն FOP, Fitness of Purpose
ԼԱՀ	Լրիվ աշխատաժամանակային համարժեք FTE, Full-time Equivalent
ԱԲԿՖԽ	Անգլիայի բարձրագույն կրթության ֆինանսավորման խորհուրդ HEFCE, Higher Education Funding Council of England
ԲՈՒՀ	Բարձրագույն ուսումնական հաստատություն HEI, Higher education institution
ԲԿՈԿ	Բարձրագույն կրթության որակի կոմիտե (Հարավային Աֆրիկա) HEQC, Higher Education Quality Committee (South Africa)
ԿՊՄԻ	Կրթության պլանավորման միջազգային ինստիտուտ IIEP, International Institute for Educational Planning
ԲԿՈԱԳՄՑ	Բարձրագույն կրթության ոլորտում որակի ապահովման գործակալությունների միջազգային ցանց INQAAHE, International Network for Quality Assurance Agencies in Higher Education
ՄՆԲԿԽ	Միջին նահանգների բարձրագույն կրթության խորհուրդ (ԱՄՆ) MSCHE, Middle States Council for Higher Education (USA)
ԳՀԱԽ	Գնահատման և հավատարմագրման ազգային խորհուրդ (Հնդկաստան) NAAC, National Assessment and Accreditation Council (India)
ՀԱԽ	Հավատարմագրման ազգային խորհուրդ (Հնդկաստան) NBA, National Board of Accreditation (India)
ԴՔՀՀՖԱ	Դպրոցների, քոլեջների և համալսարանների հավատարմագրման Ֆիլիպինների ասոցիացիա

	PAASCU, Philippine Accrediting Association of Schools, Colleges and Universities
ՖՔՀԱ-ՀՀ	Ֆիլիպինների քոլեջների և համալսարանների ասոցիացիա – Հավատարմագրման հանձնաժողով PACU-COA, Philippine Association of Colleges and Universities – Commission on Accreditation
ԱՑ	Կատարողականի ցուցանիշ PI, Performance Indicator
ՈԱ	Որակի ապահովում QA, Quality Assurance
ՈԱԳ	Որակի ապահովման գործակալություն (Միացյալ Թագավորություն) QAA, Quality Assurance Agency (UK)
ՄԹ	Միացյալ Թագավորություն UK, United Kingdom
ԱՄՆ	Ամերիկայի Միացյալ Նահանգներ USA, United States of America

Ներդիրների ցանկ

Ներդիր 1. Որակը = համապատասխանություն նպատակին՝ սահմանում բոլոր ժամանակների համար.....252

Ներդիր 2. Միացյալ Թագավորության Ջերրաթի զեկույցում (1985թ.) առաջարկված կատարողականի ցուցանիշները 257

Ներդիր 3. Չափորոշիչներ և չափանիշներ. ԱՄՆ, Հարավային Աֆրիկա և Հնդկաստան 261

Ներդիր 4. Օրինակելի ցուցանիշների տեսակները.....264

Ներդիր 5. Որակական և քանակական չափորոշիչներ 268

Ներդիր 6. Որակի տարբեր բաղադրիչների համակշռում. Հարավաֆրիկյան Հանրապետության ԲԿՈՀ.....272

Ներդիր 7. Չիլիի որակի ապահովման գործակալության մոտեցումը ..274

Ներդիր 8. Նոր մասնավոր հաստատությունների լիցենզավորումը Չիլիում 275

Ներդիր 9. Չափորոշիչներ որակի ապահովման համար ծրագրային հավատարմագրումը Ֆիլիպինների հավատարմագրային չորս ասոցիացիաների կողմից 277

Ներդիր 10. Մասնագիտական մարմինների կողմից կարողություններ սահմանող չափորոշիչների որդեգրումը (ԱՄՆ) 284

Ներդիր 11. Կարողությունների քարտեզ՝ Կանադա 285

Ներդիր 12. Բնութագրիչները նկարագրող ցուցանիշներ և փոփոխականներ (Կոլումբիա) 288

Ներդիր 13. Գիտական հետազոտությունների ցուցանիշներ 291

Ներդիր 14. Քանակական ցուցանիշների օգտագործումը գործընկերային գնահատման ժամանակ ՀԱԽ (Հնդկաստան).....293

Ներդիր 15. Ուղղորդող շրջանակ. ԱՀՈԳ.....295

Ներդիր 16. Ինքնագնահատման ճկունություն. ԱՄՆ 298

Ներդիր 17. Չափորոշիչների սահմանման ճկունություն 300

Ներդիր 18. Ինստիտուցիոնալ համատեքստին հարմարվելու ճկունություն. ԳՀԱԽ.....302

Մոդուլի նպատակները

Այս մոդուլը.

- կնկարագրի որակի ըմռնման և սահմանման տարբեր մոտեցումները,
- կսահամանի որակի գնահատման ժամանակ օգտագործվող հիմնական հասկացությունները՝ չափորոշիչներ, ցուցանիշներ (ինդիկատորներ) և օրինակելի ցուցանիշներ,
- կբացատրի որակի գնահատման ժամանակ վերլուծության ենթարկվող հիմնական ոլորտները,
- կքննարկի որակի գնահատման տարբեր մեթոդները,
- կշեշտադրի որակի գնահատման տարբեր ըմբռնումների և մեթոդների բնորոշ գծերը:

Ակնկալվում է, որ այս մոդուլը ավարտելուց հետո դուք կկարողանաք՝

- հասկանալ որակի տարբեր սահմանումները,
- հասկանալ որակի գնահատման ժամանակ վերլուծության ենթարկվող ընդհանուր ոլորտները,
- առանձնացնել որակի գնահատման տարբեր մոտեցումների առանցքային տարրերի և մեթոդաբանության տարբերությունները,
- վերլուծել որակի ըմբռնման և մեթոդաբանության այն հատկանիշները, որոնք արդյունավետ կլինեն ձեր ազգային համատեքստում:

Խորհելու հարցեր

Ո՞րը պետք է լինի որակի սահմանման հիմնական շեշտադրումը իմ երկրում:

Իմ երկրում կրթության ո՞ր հինգ կարևորագույն ոլորտներին պետք է ուշադրություն դարձնի որակի ապահովման գործակալությունը և ինչու՞:

Իմ երկրի համար որո՞նք են որակի սահմանման և գնահատման ցանկալի մեթոդները:

ՄՈԴՈՒԼ 4

..... ՈՐԱԿԻ ԸՄԲՌՆՈՒՄ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ներածություն

Առաջին և երկրորդ մոդուլները ցույց տվեցին որակի ապահովման հիմնական ուղիները, մեխանիզմների պլանավորմանն անհրաժեշտ և որակի ապահովման գործակալությանը հասանելի միջոցները:

Երրորդ մոդուլը հատուկ ուշադրություն դարձրեց գործակալության ստեղծմանը, գարծունեությանը, դերին և աշխատանքների իրականացման տարբեր փուլերին: Որպես շարունակություն *չորրորդ մոդուլը* կքննարկի որակի սահմանման տարբեր ուղիները և դրա գնահատման մեթոդները:

Որակի ապահովման գործակալությունները սովորաբար իրարից տարբերվում են որակի սահմանման ձևով և դրա գնհատման համար օգտագործվող մեթոդաբանությամբ: Տարբերությունը սկսվում է որակի նրանց սահմանումներից և այն մոտեցումներից, որոնք ընկած են գործակալության որակի ապահովման քաղաքականության հիմքում: Հետևաբար, որակի ապահովման համար գործակալությունների ընտրած մեթոդաբանությունները տարբերվում են: Որոշ գործակալություններ հետևում են որակի «համապատասխանություն նպատակին» սահմանմանը և ուսումնասիրում են այն ուղիները որոնցով բարձրագույն ուսումնական հաստատությունները (ԲՈՒՀ-եր) կամ ծրագրերը հասնում են իրենց նախատեսած նպատակների իրականացմանը: Այս մոտեցմամբ մեծ ուշադրություն է դարձվում ԲՈՒՀ-երի կամ ծրագրերի առաջնահերթություններին և նպատակներին, ինչպես նաև ինստիտուցիոնալ բազմազանությանը: Կան որակի ապահովման գործակալություններ, որոնք որակ երաշխավորելիս հիմնվում են ԲՈՒՀ-երի կամ ծրագրերի վերաբերյալ նախապես սահմանված չափորոշիչների վրա: Չափորոշիչներին հետևելը և համապատասխանելը այստեղ դառնում է առանցքային:

Որոշ դեպքերում որակի ապահովումը նպատակ ունի ապահովել միայն որոշակի կարգավիճակի համար անհրաժեշտ նվազագույն պահանջների բավարարումը: Այսպիսի մոտեցումները սովորաբար նախատեսվում են համապատասխանության նպատակների համար: Արդյունքը հաստատության դիմումը հաստատելու կամ դրա նկատմամբ պատժամիջոցներ կիրառելու հիմք է հանդիսանում:

Մյուս կողմից, որակի ապահովման որոշ գործակալություններ սահմանում են բարձր որակի չափորոշիչներ: Այս դեպքում գնահատման հիմքը «գերազանցն է», այլ ոչ թե նվազագույն պահանջներին բավարարելը: Այսպիսի չափորոշիչները սովորաբար գործում են զուգահեռ որակի նվազագույն մակարդակն ապահովող այլ մեխանիզմների հետ:

Որակի ապահովման որոշ գործակալություններ որակի չափորոշիչներ են սահմանում՝ բնորոշելով որակի համակարգերում պահանջվող գործընթացներն ու գործողությունները: Հետագայում այդ չափորոշիչներն օգտագործվում են որպես օրինակելի ցուցանիշներ համեմատական դատողություններ անելու համար: Մյուսները առանձնացնում են ցուցանիշներ, որոնց նկատմամբ կարելի է չափել համակարգի կատարողականը: Այս մոտեցումների դեպքում, «կատարողականի ցուցանիշ» և «որակի ցուցանիշ» տերմինները օգտագործվում են փոխարինաբար (ինչպես «չափորոշիչ» և «օրինակելի ցուցանիշ» տերմինները): Իրականում, նույն տերմինը տարբեր մարմիններ կարող են օգտագործել տարբեր երևույթներ մատնանշելու համար:

Ընդհանրապես, որակի ներքին ապահովման ուժեղ մեխանիզմներ ունեցող զարգացած համակարգերը ավելի շատ հիմնվում են ոչ թե արտաքին, այլ հենց ԲՈՒՀ-ի կողմից սահմանված ցուցանիշների և օրինակելի չափանիշների վրա: Այդ համակարգերում կատարողականի ավելի բարձր ցուցանիշներին հասնելը և գործընկերների կողմից գնահատականը առանցքային են որակի ապահովման շրջանակի համար: Զևավորվող համակարգերում, որտեղ առկա են միաժամանակ ԲՈՒՀ-ի հաշվետվողականության և ինքնաբարելավման խնդիրները, որակի ապահովման գործակալությունները զգուշորեն օգտագործում են և քանակական ցուցանիշները, և գործընկերային գնահատումը:

Տարբեր են նաև որակի ապահովման միավորները: Մինչդեռ որոշ որակի ապահովման գործակալություններ հետևում են ինստիտուցիոնալ մոտեցմանը, մյուսները որդեգրել են ծրագրային մոտեցումը (տես *առաջին մոդուլը*): Չնայած որակի ապահովման միավորը կարող է տարբերվել, այն անպայման պետք է վերաբերի հետևյալ կողմերին՝ ակադեմիական ծրագրեր, ուսանողներ, պրոֆեսորադասախոսական անձնակազմ, որակի ներքին վերահսկողություն, ենթակառուցվածք, հետազոտություններ, կազմակերպում և ղեկավարում: Օրինակ, հաստատությունների հավատարմագրումը Հնդկաստանի գնահատման և հավատարմագրման ազգային խորհրդի (ԳՀԱԽ) կողմից, ԱՄՆ-ի տարածաշրջանային հավատարմագրողների չափորոշիչները և ծրագրերի հավատարմագրումը Ինդոնեզիայի Բարձրագույն կրթության հավատարմագրման ազգային խորհուրդի կողմից (ԲԿՀԱԽ), որոնք բոլորը վերաբերում են վերհոհիշյալ ոլորտներին: Տարբերությունները պայմանավորված են որակի ապահովման գործակալություններին տրված մանդատով, ինչպես նաև քանակական ցուցանիշների կամ գործընկերային գնահատման կիրառման աստիճանով:

Որակի ապահովման համար գործընկերային գնահատականների կամ բարձրագույն կրթության ոլորտի փորձառու մասնագետների դատողությունների անհրաժեշտությունը հայտնի է: Սա ճշմարտացի է նույնիսկ այն մոտեցումների դեպքում, որոնք ավելի շատ հիմնված են ցուցանիշների և քանակական նորմերի վրա: Այս մոդուլը կքննարկի այդ հարցերը՝ ներկայացնելով օրինակներ և փորձի ուսումնասիրություններ:

Որակի ըմբռնում

Առաջին մոդուլում հակիրճ ներկայացվեցին բարձրագույն կրթության որակի հետ կապված բանավեճերում առկա դժվարությունները: Որակի ապահովման գործակալությունները էապես տարբերվում են իրենց որդեգրած որակի սահմանումներով և դրա գնահատման համար ընդունված մեթոդաբանությամբ: Տարբերությունները կապված են գործակալություններին տրված մանդատից և կրթության որակին առընչվող խնդիրներից, որոնք դրանք քննարկում են տրված մանդատի շրջանակում, ինչպես նաև որակի ապահովման մեխանիզմների հիմքում ընկած մոտեցումներից:

1.Որակի տարբեր ըմբռնումներ

Որակի սահմանման բանավեճում ներգրավված են եղել տարբեր ոլորտներ: Որակի սահմանման քննարկումներում ամենատարածված դիտողությունը հետևյալն է՝ «Որակը.....դե, դուք գիտեք ինչ է այն, բայց միևնույն ժամանակ դուք չգիտեք, թե դա ինչ է» (Պիրսինգ, Pirsig, 1974) Մեկ այլ հաճախակի հանդիպող մեջբերում՝ «Որոշ բաներ ավելի լավն են, քան մյուսները, այն է՝ դրանք ավելի բարձր որակ ունեն»:

Չեյմբերսի (Chambers) բառարանը որակը սահմանում է և որպես «դրականով օժտվածության աստիճան», և որպես «գերազանցություն»: Այս սահմանումը մատնանշում է իմաստային անորոշությունը, այն է՝ «որակ» կատեգորիան կարող է արտահայտել ինչպես «դրականով օժտվածության աստիճանը», այնպես էլ «այդ աստիճանի մեծությունը»: Նմանապես, Ուեբստերի (Webster) բառարանը որակը բնութագրում է որպես «գերազանցության աստիճան» և «գերազանցություն տվյալ տեսակում»: Օքսֆորդի անգլերեն բառարանը (ՕԱԲ, Oxford English Dictionary) տալիս է նմանատիպ սահմանումներ՝ «որևէ բանի գերազանցություն», «ընդհանուր գերազանցություն» և «բարձր որակ ունեցող»: «Գերազանցու-

թյան աստիճան» սահմանումը ենթադրում է, որ դուք կարող եք խոսել ինչ որ բանի մասին որպես բարձր կամ ցածր որակ ունեցող:

Ըստ մյուս սահմանումների, «որակը» ինքնին նշանակում է հենց գերազանցություն (օրինակ երբ ասում ենք «որակյալ արտադրանք» կամ «նրանց աշխատանքը որակյալ է»): Նմանատիպ երկիմաստությունը հանգեցնում է բազմաթիվ մեկնաբանությունների: Հետևաբար, անհրաժեշտ է բացատրել, թե յուրաքանչյուր համատեքստում «որակ» ասելով ինչ նկատի ունենք:

Պատմականորեն որակի ապահովման հասկացությունը ծագել է արդյունաբերության ոլորտից (ՕԱԲ, 1996): Այս ոլորտում որակ ասելով հասկանում են փոփոխականության նվազեցում և արտադրանքի՝ սահմանված հստակ բնութագրիչների համապատասխանության ապահովում: Սա նշանակում է, որ սպառողները կարող էին ակնկալել արտադրանքի հուսալիություն: Փաստորեն, որակ ասելով հասկանում ենք **«թերությունների բացակայություն»**:

Մինչդեռ արդյունաբերական ընկերությունները կենտրոնանում են արտադրանքի փոփոխականությունը վերահսկելու վրա, ծառայությունների ոլորտի ընկերությունները ունեն որակի ավելի լայն ընկալում: Նրանք մտահոգված են ոչ միայն թերությունները նվազագույնի հասցնելով, այլ նաև զգացողությունների, սպասումների և փորձի կառավարմամբ: Ներկայումս ծառայությունների ոլորտը շեշտադրումը «թերությունների բացակայությունից» տեղափոխում է «սպառողների դժգոհության բացակայություն»: Ծառայությունների ոլորտի ներկայացուցիչների կարծիքով, ընկերությունները պետք է գիտակցեն որ բնութագրիչներ սահմանվում են ոչ միայն արտադրողների կողմից, ովքեր սպառողներին տեղեկացնում են, թե ինչ ակնկալել, այլ հակառակը՝ սպառողները նույնպես կարող են մասնակցել մասնագրերի սահմանմանը: Այս դեպքում, որակ ասելով հասկանում ենք «սպառողի բավարարվածություն»:

Ծրագրային ապահովման և տեղեկատվական ծառայությունների ոլորտում որակի հասկացությունը սովորաբար ներառում է որակի համապատասխանության ու սպասարկման ասպեկտները: Մի կողմից գոյություն ունի հիմնական սպառողական հատկանիշների ամբողջություն, որը պետք է միշտ առկա լինի: Մյուս կողմից, երբ ծրագրային ապահովման օգտագործողները ունեն որոշակի խնդիրներ, ապա որակը նրանց համար նաև այն տեխնիկական օժանդակությունն է, որ ստանում են վաճառող ընկերությունից: Ծրագրային ապահովման ոլորտում որակ հասկացությունն ունի ևս մեկ կողմ: Օգտագործողները ակնկալում են ծրագրային ապահովման տարբեր տեխնիկական հատկանիշների շարունակական նորացում՝ օրինակ. նոր լրամշակումներ, արդյունավետ աշխատանք, հուսալիություն և ծրագրի տեղակայման, կիրառման ու պահպանման դյուրինություն: Որակի նրանց ընկալումը բաղկացած է **համապատասխանության, հարմարվողականության, նորարարության և շարունակական բարելավման համադրությունից**: Շատ առումներով այսպիսին է նաև որակի ընկալումը

բարձրագույն կրթության մեջ՝ որպես բազմաթիվ շահառուների տարբեր ակընկալիքների համադրություն:

2. Բարձրագույն կրթության որակը

Բարձրագույն կրթության ոլորտի շատ շահառուներ կդժվարանան տալ որակի հստակ սահմանումը: Իրականում, այն տարբեր մարդկանց համար տարբեր նշանակություն ունեցող հարաբերական հասկացություն է: Օրինակ՝ ԲՈՒՀ-ի որակը քննարկելիս, ուսանողները կարող են շեշտադրել ԲՈՒՀ-ի կողմից տրամադրվող հարմարությունները և հետագայում աշխատանքի տեղավորման գործում կրթությունից ակընկալվող օգտակարությունը: Մյուս կողմից, օրինակ, դասախոսները կարող են կարևորել դասավանդման և ուսումնառության գործընթացը: Ղեկավարությունը կարող է կարևորել հաստատության հաջողությունները: Ծնողները կարող են հիմք ընդունել իրենց երեխաների ձեռքբերումները: Վերջիվերջո, գործատուները կարող են կարևորել հաստատության շրջանավարտների կարողությունները:

Յուրաքանչյուր շահառու որակի սահմանման հարցում ունի յուրովի մոտեցում: Հետևաբար, հնարավոր չէ խոսել որակի մասին որպես միասնական հասկացության: Որակի յուրաքանչյուր սահմանում պետք է հաշվի առնի նաև երկրի համատեքստը, որտեղ այն կիրառվում է:

ԲՈՒՀ-ի դեպքում պետք է հաշվի առնել, որ կրթական հաստատությունը կարող է բարձրորակ համարվել որևէ առանձին չափանիշի կամ շահառուների որևէ խմբի տեսակետից, սակայն ցածրորակ համարվել մյուսների համար:

Հաշվի առնելով այս գործոնները՝ Հարվինը և Գրինը (Harvey and Green, 1993) և Գրինը (Green, 1994) տարբերում են որակի սահմանման մի շարք մոտեցումներ: Գրինը առանձնացրել է բարձրագույն կրթության ոլորտում որակի սահմանման հինգ տարբեր մոտեցում: Ըստ նրա որակը կարելի է սահմանել որպես.

- բացառիկություն (բարձրագույն չափորոշիչ),
- համապատասխանություն չափորոշիչներին,
- համապատասխանություն նպատակին,
- ինստիտուցիոնալ նպատակների իրականացման արդյունավորություն,
- հաճախորդների ներկայացրած կամ ենթադրվող պահանջմունքների բավարարում:

Որակը որպես բացառիկություն

Սա որակի ամենաավանդական հասկացությունն է: Այն փոխկապակցված է սեփականատիրոջը կամ օգտագործողին որոշակի կարգավիճակ ապահովող որևէ առանձնահատուկ և յուրօրինակ ապրանքի կամ ծառայության տրամադրման գաղափարի հետ: Բարձրագույն կրթության ոլորտում բացառիկ խիստ չափորոշիչներին համապատասխանող ԲՈՒՀ-ը դիտարկվում է որպես որակյալ կրթական հաստատություն:

Այս մոտեցումը կարող է կիրառվել «բացառիկության մրցանակի» թեկնածուներ կամ շատ բարձր մակարդակի փոքրաթիվ հաստատություններ առանձնացնելու համար: Սակայն նման մոտեցումը խնդիրներ է ստեղծում որակի ապահովման գործակալությունների համար: Որակի գործակալությունը կարող է գովաբանել բացառիկ որակ ապահովող հաստատություններին, սակայն հնարավորություն չի ունենա փնովել մնացած ԲՈՒՀ-երին: Այս մոտեցումը չի ծառայի նաև հաշվետվողականության և ինքնաբարելավման նպատակներին: Այդ իսկ պատճառով, «որակը որպես բացառիկություն» մոտեցումը այնքան էլ ընդունված չէ որակի ապահովման գործակալությունների շրջանում:

Սակայն, բարձրագույն կրթությունում կան ոլորտներ, որտեղ այս մոտեցումը կարող է անհրաժեշտ լինել: Օրինակ՝ այն կարող է օգտագործվել դոկտորանտուրայի ծրագրերի կամ նորարարական հետազոտական աշխատանքների գնահատման համար: Ավելին, բարձրագույն կրթության համակարգում կարող են նույնիսկ լինել հաստատություններ, որոնք կցանկանան գնահատվել բացառիկության չափանիշներով (ինչպես օրինակ դրոշակակիր հաստատությունները):

Այսպիսով, չնայած որակի՝ որպես բացառիկության ընկալումը չի կարող օգտագործվել բարձրագույն կրթության ամբողջ համակարգում, այնուամենայնիվ այն չի անտեսվում, քանի որ հանդիսանում է որակի սահմանումներից մեկը:

Որակը որպես համատասխանություն չափորոշիչներին

Որակի նկատմամբ այս մոտեցումը ծագել է արդյունաբերության ոլորտում որակի հսկողության հայեցակարգից: Այստեղ «չափորոշիչ» բառը նշանակում է նախապես սահմանված մասնագրեր կամ ակընկալիքներ: Քանի դեռ հաստատությունը բավարարում է նախապես սահմանված չափորոշիչներին, այն կարելի է համարել որոշակի կարգավիճակի համապատասխանող որակյալ հաստատություն:

Այս մոտեցումը կիրառվում է կարգավորող մարմինների կողմից հաստատությունների կամ ծրագրերի որակի որոշ շեմային մակարդակներին համապատասխանությունը ապահովելու նպատակով: Նոր ծրագրերի հաստատումը, կոնկրետ կարգավիճակի կամ ֆինանսավորման ստացումը կարող է կախված լինել որակի չափորոշիչներին տվյալ հաստատության համապատասխանությունից: Իհարկե, այստեղ չափորոշիչների

խնդիրն առանցքային է դառնում: Հաճախ դրանք ֆորմալ կերպով են սահմանված, օրինակ՝ լրիվ դրույքով դասախոսների թիվը, գիտական աստիճան ունեցող դասախոսների տեսակարար կշիռը կամ ֆակուլտետի լրիվ հաստիքադրույքին համարժեք մեկ աշխատակցի հաշվով տպագրված հոդվածների քանակը: Չնայած այսպիսի չափորոշիչները հեշտացնում են գնահատումը, սակայն, միևնույն ժամանակ, այն նաև իմաստազրկում են: Իրականում միշտ էլ հնարավոր է համապատասխանել սահմանված ֆորմալ պահանջներին առանց բովանդակությանն ուշադրություն դարձնելու, որին էլ հենց ուղղված են այդ չափորոշիչները.

Որակը որպես համապատասխանություն նպատակին

Այս սահմանումը հիմնված է այն տեսակետի վրա, որ «որակ» հասկացությունը իմաստալից է միայն ապրանքների և ծառայությունների նպատակի համատեքստում: Ակնհայտ է, որ պարզ բազմապատկման գործողություններ անելու համար գերարտադրողական համակարգիչ անհրաժեշտ չէ: Այն, ինչը կարելի է դիտարկել որակի համակարգ պարզ թվաբանական գործողությունների համար տարբերվում է գիտական փորձերի համար անհրաժեշտ որակի համակարգից:

Ո՞վ պետք է որոշի նպատակը: Որո՞նք են համապատասխան նպատակները: Այս հարցերի պատասխանները կախված են այն համատեքստից, որում քննարկվում է որակը: Նպատակները կարող են որոշվել հաստատության, կառավարության կամ շահառուների որևէ խմբի կողմից:

Որակը որպես ինստիտուցիոնալ նպատակների իրականացման արդյունավետություն

Այս սահմանումը որակի «համապատասխանություն նպատակին» սահմանման տարատեսակ է, որի դեպքում նպատակները սահմանվում են հենց հաստատության կողմից: Այս մոտեցման պարագայում, բարձրորակ է համարվում այն հաստատությունը, որը հստակ սահմանում է իր առաքելությունը (նպատակը) և արդյունավետորեն իրականացնում այն: Նման մոտեցման դեպքում կարող են խնդիրներ առաջանալ, կապված հաստատության կողմից նպատակների (բարձր, միջին կամ ցածր) սահմանման ուղիների և դրանց տեղին լինելու հետ:

Որակը որպես սպառողների ներկայացրած կամ ենթադրվող կարիքների բավարարում

Սա նույնպես որակի «համապատասխանություն նպատակին» սահմանման տարատեսակ է: Նպատակը այստեղ հաճախորդի կարիքները և բավարարվածությունն են: Խնդիրը սակայն կայանում է նրանում, թե արդյոք հաճախորդի բավարարվածությունը համարժեք է այն ամենին ինչն

անհրաժեշտ է հաճախորդին: Արդյո՞ք «կարիքներն» ու «ցանկությունները» համընկնում են: Բարձրագույն կրթության ոլորտում սա նշանակում է, որ այն ինչ ուսանողներն ուզում են կարող է չհամընկնել նրա հետ, ինչն իրենց իրոք անհրաժեշտ է: «Հաճախորդների կարիքներն ու բավարարվածությունը» որոշելիս, ավելի հուսալի է դիտարկել տարբեր խմբեր, օրինակ՝ պետություն, ուսանողներ և ծնողներ, քան հիմնվել հաճախորդների մեկ խմբի՝ օրինակ ուսանողների վրա:

Բարձրագույն կրթության ոլորտում որակը սահմանելիս օգտագործում են նաև այնպիսի հասկացություններ ու տերմիններ, ինչպիսիք են՝ «արժեք փողի դիմաց», «ավելացված արժեք» և «փոխակերպման գործընթաց»:

Ըստ «արժեք փողի դիմաց» մոտեցման, ինչ որ բան համարվում է որակյալ, եթե այն համապատասխանում է հաճախորդի կողմից վճարված գումարի համեմատ ունեցած սպասումներին: Հետևաբար, որակը համապատասխանում է սպառողի բավարարվածությանը: Սպառողների դերում կարող են հանդես գալ ուսանողները (ովքեր ուղղակի սպառողներ են և ուսուցման մեջ ժամանակային ներդրում են կատարում), ծնողները (ովքեր վճարում են իրենց երեխաների կրթության համար) կամ պետությունը (որը պետական քաղաքականություն է մշակում և հարկատուների գումարները ծախսում կրթական ծառայություններ տրամադրելու համար):

Ըստ «ավելացված արժեքի» մոտեցման, այն հաստատությունը, որը ուսանողին հնարավորություն է ընձեռում ավելացնել իր գիտելիքները, մասնագիտական կարողությունները և մեծացնել աշխատանքի տեղավորվելու հնարավորությունը, համարվում է հաջողված ներդրած ջանքերի արդյունավետության առումով՝ ուստի որակ ապահովող:

«Փոխակերպման գործընթացի» մոտեցումը ակադեմիական գիտելիքների տրամադրումից զատ բարձրագույն կրթության դերը դիտարկում է ուսանողների մոտ տարբեր բնույթի ընդհանուր կարողությունների ձևավորման տեսակետից:

Չնայած Հարվինը և Գրինը (1993) և Գրինը (1994) տարանջատեցին և դիտարկեցին որակի բոլոր հնարավոր սահմանումները, այնուամենայնիվ, քննադատություն հնչեցվեց, որ սահմանումների այսպիսի բազմազանությունը կարող է անօգուտ լինել: Օրինակ՝ «փոխակերպման», «ավելացված արժեքի» և «արժեք փողի դիմաց» սահմանումները տեղի են տալիս քննադատության, քանի որ դրանք բոլորը գործընթացների «սպասվող արդյունքների» հատկանիշներ են: Եթե ուշադրություն չդարձնենք «սպասվող արդյունքներին», ապա այդ սահմանումները կկորցնեն իրենց իմաստը: Այդ իսկ պատճառով, «համապատասխանություն նպատակին» սահմանումը որակի ապահովման բազմաթիվ փորձագետներ համարում են որակի սահմանման հիմնարար մոտեցում: Ներդիր 1-ում ներկայացված է, թե ինչպես որակի դիտարկումը որպես «համապատասխանություն նպատակին» կարող է ընդգրկել վերևում ներկայացված բոլոր սահմանումները:

ՍՈԴՈՒԼ 4 - Որակի ըմբռնում և գնահատում

Ներդիր 1. Որակը = համապատասխանություն նպատակին՝ սահմանում բոլոր ժամանակների համար

Պատմականորեն որակը սահմանվում էր որպես բացառիկություն, իսկ ժամանակի ընթացքում հաճախ սկսեցին հանդիպել որակի՝ որպես սպասարկման հարմարավետության սահմանումներ: 1990-ականների սկզբներին «որակ» բառի նշանակությունը գտնվում էր թեժ բանավեճերի կիզակետում, հատկապես կապված բարձրագույն կրթության ոլորտում դրա կիրառման հետ: Արդյունքում առաջարկվեցին մի շարք այլընտրանքային սահմանումներ: Ոլորտի որոշ ականավոր գործիչներ փաստարկում էին միայն մեկ սահմանման անհրաժեշտության օգտին, իսկ գործիչների մեկ այլ խումբ հանդսիանում էր բազմաթիվ սահմանումների գոյության կողմնակից: Առաջարկվող սահմանումները ներառում էին փոխակերպումը, արժեք փողի դիմաց, ավելացված արժեքի և սպառողների ընկալման բնորոշումները:

«Համապատասխանություն նպատակին» սահմանումը համարվում էր ընդհանուրի կողմից առաջարկվող մոտեցում: Կարելի է պնդել, որ այն առաջարկվող սահմանումներից պարզապես մեկը չէր, այլ ներառում էր բոլոր մյուսները և հետևաբար, հանդիսանում էր որակի ձեռքբերման ու ստուգման մոտեցումների կազմակերպական սկզբունք: Բացի դա, «համապատասխանություն նպատակին» սկզբունքը հաշվի է առնում բարդ համակարգերում որակի սահմանման և ապահովման հետ կապված դժվարություններն ու համապատասխան կերպով հասցեագրում դրանք: Այս մոտեցումը հստակորեն տարբերվում էր նախկին, «նպատակի համապատասխանություն» մոտեցումից:

Եթե դուք նպատակադրվել եք որևէ բացառիկ բան անել, ապա, քանի որ որակը=«համապատասխանություն նպատակին», ուստի որակը համապատասխանում է բացառիկությանը: Եթե դուք նպատակ ունեք փոխակերպել ուսանողներին, ապա որակը= «համապատասխանություն նպատակին» համարժեք է որակի՝ որպես փոխակերպման: Եթե դուք ձգտում եք հավելյալ արժեք ստեղծել, ապա որակը=«համապատասխանություն նպատակին» և հավելյալ արժեքի ստեղծումը համարվում է որակ:

Բարդ կառուցվածք ունեցող կազմակերպություններում նպատակը, ամենայն հավանականությամբ, բազմաթիվ ձևակերպումների միջոցով արտահայտվող ամփոփ հասկացություն է, օրինակ՝ առաքելություն, թիրախներ, խնդիրներ, մասնագրեր և այլն: Սակայն նպատակի առաջնահերթ սահմանման ու դրա հետագա իրացման մոտեցումը բովանդակային առումով մնում է անփոփոխ:

Համապատասխանություն նպատակին սկզբունքը կիրառելի է տարբեր նպատակներ ունեցող բազմատեսակ հաստատությունների համար՝ մասնագիտացված համալսարան, ընդհանուր ուղղվածության համալսարան, միջին մասնագիտական կրթության քոլեջ, տեխնոլոգիական ինստիտուտ: Թվարկվածներից բոլորը կարող են սահմանել իրենց նպա-

տակները և հասնել որակի՝ ըստ միևնույն սահմանման, սակայն տարբեր ճանապարհներով: Ցանկացած հաստատությունում կարելի է փաստել նպատակների բազմազանություն, քանի որ այդ հաստատության առկա համատեքստում մարդիկ կարող են գործել տարբեր կերպ և հասնել տարբեր անձնական նպատակների:

Որակի՝ որպես համապատասխանություն նպատակին սահմանումը մեզ ազատում է կաղապարներից, քանի որ այն ընձեռում է մեծ ճկունություն: Այն մեզ չի սահմանափակում որակի նախկին սահմանումներով և խրախուսում է առանձնացնել նպատակների մի ամբողջ շարք ու ձգտել հասնելու դրանց: Երկմշակույթ և բազմամշակույթ հասարակություններում, աշխարհում իր տեղը ունենալ ցանկացող հասարակության համար համապատասխանություն նպատակին հիմնադրույթը չափազանց արժեքավոր է:

Շատ դեպքերում հնարավոր չէ հստակ նպատակ սահմանել: Սակայն սա ամենևին չի արժեզրկում որակի՝ որպես համապատասխանություն նպատակին սահմանումը: Ընդհակառակը, այն մատնանշում է նպատակի սահմանման կարևորությունը մինչ մենք կկարողանանք բովանդակային առումով ուսումնասիրել «որակ» կատեգորիան: Գործնականում շատերը նախընտրում են որակը սահմանել որպես համապատասխանություն նպատակին՝ շեշտադրելու, որ պարզունակ և անօգուտ նպատակները չեն կարող հանգեցնել լավ որակի: Միևնույն ժամանակ, լավ նպատակ հետապնդող վատ կազմակերպված գործողությունները նույնպես չեն կարող որակ ապահովել: Այսպիսով, հասնել համապատասխանությանը նպատակին չափազանց կարևոր է որակ ապահովելու համար:

Հետևաբար, կարող ենք արձանագրել, որ որակը = համապատասխանություն նպատակին մոտեցումը ներառում է բոլոր մյուս սահմանումները:

Աղբյուրը՝ Վուդհաուզ (Woodhouse), 2006թ.

Նշենք, որ որակի միակ ճիշտ սահմանում գոյություն չունի: Վերը դիտարկված բոլոր սահմանումները (և բազմաթիվ այլ սահմանումներ) արժեքավոր են: Այնուամենայնիվ, երբ որակի ապահովման գործակալությունը ընտրում է որևէ սահմանում, ապա այն պետք է հստակ ձևակերպվի: Երբ այս մոդուլի հետագա հատվածներում քննարկենք որակի ապահովման տարբեր մոտեցումները, ապա կհամոզվենք, որ որակի նկատմամբ տարբեր մոտեցումներից և ոչ մեկը առանձին վերցված բավարար չէ: Որակի ապահովման գործակալությունները իրենց նպատակներին հասնելու համար պետք է համադրեն տարբեր մոտեցումներ:

Վարժություն 1:

1. Լրացրեք բաց թողնված հատվածները

Որակը դա.. . ... , սակայն..... . .....
Որակը հնարավոր է ...., սակայն.. .. ..
Որակը կարող է... ...., սակայն..... ....
Որակը պետք է..... ...., սակայն..... ..
Որակը պարտադիր չէ..... .... .., սակայն..... ....
Որակը դա ....,ինչպես նաև..... .....

2. Որակին առընչվող քննարկումների վերաբերյալ ձեր ընբռնումը խորացնելու նպատակով ընթերցեք հետևյալ նյութերը.

Woodhouse, D. 2006. Quality = Fitness for Purpose (FFP): definition for all seasons. Paper presented at the APQN Conference on Cooperation in Quality Assurance, Shanghai, 1-4 March, 2006. (http://www.apqn.org/events/past/details/32/presentations/)

Green, D. 1994. *What is quality in higher education?* Buckingham: SRHE; Open University Press.

3. Մտածեք ձեր երկրում որակի օգտագործվող սահմանումների մասին և առանձնացրեք երեք գերակայություն, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել որակը ձեր երկրի ազգային համատեքստում սահմանելիս:

3. Հիմնական տերմինների սահմանում

Որակի գործակալությունները որակի ապահովման իրենց ընթացակարգերը մշակում են ելնելով որակի հասկացությունից: Այդ նպատակով նրանք օգտագործում են բազմաթիվ տերմիններ, ինչպիսիք են՝ վիճակագրություն, ցուցանիշներ, չափանիշներ, չափորոշիչներ և օրինակելի ցուցանիշներ: Այդ գործակալությունները «ցուցանիշներ», «կատարողական» և «որակի ցուցանիշներ» տերմինները բավականին անփույթ են օգտագործում: Նույնը վերաբերվում է «չափանիշներ», «չափորոշիչներ» և «օրինակելի ցուցանիշներ» հասկացություններին: Հաճախ նույն տերմինը տարբեր մարմինների կողմից օգտագործվում է տարբեր երևույթներ կամ միջոցառումներ անվանակոչելու համար: Այս մոդուլն ընթերցողի համար ավելի օգտակար կլինի, եթե մենք տերմինները օգտագործենք հետևողականորեն:

Մենք կփորձենք հստակ սահմանել բոլոր վերը թվարկված տերմինները ինչպես առանձին-առանձին, այնպես էլ միմյանց հետ փոխկապակցված: Սահմանումների մեծամասնությունը վերցված է Որակի ասիական-խաղաղօվկեանոսյան ցանցի «Որակի ցուցանիշներ» նախագծի շրջանակում մշակված ելակետային նյութից:

Վիճակագրություն և ցուցանիշներ

Մենք գիտենք, որ վիճակագրությունը մաթեմատիկայի ճյուղ է, որը իրականացնում է տվյալների համակարգված հավաքագրում, խմբավորում և վերլուծություն: Վիճակագրական տվյալները վերաբերում են փաստերին և երևույթներին, որոնք կարող են դիտարկվել վիճակագրորեն կամ հավաքվել ու խմբավորվել վերլուծության համար: Վիճակագրության պարզագույն եղանակները օգտագործվել են մարդկային քաղաքակրթության սկզբնավորումից ի վեր, երբ կաշիների, թիթեղների, փայտի կտորների և քարանձավների պատերի վրա պատկերվում էին նկարներ կամ նշաններ մարդկանց, կենդանիների ու այլ անշունչ առարկաների հաշվառումն իրականացնելու համար: Մինչ մ.թ.ա. 3000թ. բաբելոնացիները գյուղատնտեսական բերքի և վաճառված կամ փոխանակված ապրանքների գրանցման համար օգտագործում էին կավի կտորներ: Հռոմեական կայսրությունը առաջին պետությունն էր, որ մեծածավալ տվյալներ էր հավաքագրում երկրի բնակչության, տարածքի, հարստության և վերահսկողության ներքո գտնվող տարածքների վերաբերյալ: Միջնադարյան Եվրոպայում իրականացվել էին մի քանի համընդգրկուն մարդահամարներ:

Այս բոլորը տվյալների համակարգված հավաքագրման և խմբավորման օրինակներ են: Հետագայում վիճակագրության նշանակությունը էլ ավելի մեծացավ և այն վերածվեց կյանքի տնտեսական, քաղաքական ու սոցիալական կարևորություն ունեցող կողմերի վերաբերյալ տվյալների համակարգված հավաքագրման հուսալի միջոցի: **Շատ հաճախ վիճակագրություն տերմինը օգտագործվում է վիճակագրական տվյալներ իմաստով: Այս մոդուլում վիճակագրություն նշանակում է վիճակագրական տվյալներ**:

Որակի ապահովման գործակալությունները տվյալներ են հավաքագրում ինստիտուցիոնալ գործունեության կամ ծրագրերի իրականացման տարբեր կողմերի վերաբերյալ: Համակարգված կերպով հավաքագրված տվյալները՝ առաջնային և երկրորդային, կոչվում են վիճակագրական տվյալներ: Այդ տվյալները հանդիսանում են արժեք ստեղծող գործողություններ բնութագրող տերմինների, օրինակ՝ կատարողականի ցուցանիշների հիմքը: Օրինակ՝ ուսանողների ներգրավվածության տոկոսը, ուսումնական ժամանակացույցը և ուսման վարձի կառուցվածքը վիճակագրական տվյալների օրինակներ են: Երբ այդ տվյալները վերլուծվում են և օգտագործվում որևէ երևույթ նկարագրելու համար, ապա դրանք վերածվում են ցուցանիշների (ինդիկատորների): Վիճակագրական տվյալները

ինքնին բավարար չեն դատողություններ անելու համար: Դրանք անհրաժեշտ է վերլուծել համապատասխան համատեքստում կամ որևէ նորմատիվի հետ համեմատության մեջ. Այսպիսով այդ վիճակագրական տվյալները վերածվում են ցուցանիշների:

Ցուցանիշները կարող են լինել որակական և քանակական Դրանք կարող են հանդիսանալ հաստատության կամ ծրագրի որակի տարբեր կողմերի գնահատականներ· Մինչդեռ յուրաքանչյուր ցուցանիշ վիճակագրական տվյալ է, ոչ բոլոր վիճակագրական տվյալներն են ցուցանիշ : Ցուցանիշները հավելյալ արժեքով վիճակագրական տվյալներ են: Բացի այդ, ցուցանիշները մեկնաբանվում են համեմատության մեջ: Այլ կերպ ասած՝ ցուցանիշները վիճակագրական տվյալներից տարբերվում են նրանով, որ դրանք դիտարկվող երևույթի տարբեր կողմերի չափումներ են:

Որոշ որակի ապահովման գործակալություններ տարբերակում են մուտքային, գործընթացային և ելքային ցուցանիշներ· Փաստորեն, այդ գործակալությունները կրթությունը նմանեցնում են արտադրական գործընթացին, որտեղ ռեսուրսները տարբեր գործընթացների միջոցով վերածվում են արդյունքի: Մուտքային ցուցանիշները բնութագրում են կրթական հաստատության արդյունքների ստացման համար օգտագործվող ռեսուրսները և գործոնները (ֆինանսական ռեսուրսներ, նյութա-տեխնիկական ապահովվածություն և ուսանողների ու դասախոսական համակազմի բնութագրեր): Գործընթացային ցուցանիշները վերաբերում են գործոնների և ռեսուրսների համակցման ձևերին, որոնք ապահովում են հաստատության արդյունքի ստացումը (դասավանդման, հետազոտական աշխատանքների և ծառայությունների կառավարում): Ելքային ցուցանիշները բնութագրում են կրթական հաստատությունների արդյունքները (դասավանդման, հետազոտությունների և ծառայությունների արդյունքները). Սրանց մենք կարող ենք ավելացնել արտադրողականության և արդյունքների ցուցանիշները: Արդյունքի ցուցանիշները ստացված ելքային տվյալների դրսևորումներն են (օրինակ՝ զբաղվածության մակարդակը): Կատարողականի ցուցանիշները գնահատում են աշխատանքների կատարողականի տարբեր կողմերը:

Կատարողականի ցուցանիշներ

Հաստատությունը գնահատելու կամ առաջարկվող ծրագրերի արդյունավետության մասին դատողություններ անելու համար օգտագործվող ցուցանիշները կոչվում են «կատարողականի ցուցանիշներ»: Բարձրագույն կրթությունը գործունեության կատարողականի գնահատման գաղափարը փոխառել է տնտեսագիտությունից: Այս տեսակետից, հաստատության կամ համակարգի հաջողակ լինելը կախված է նրա գործունեության կատարողականից՝ արտահայտված արդյունավետությամբ և արտադրողականությամբ: Արդյունքում, կատարողականի ցուցանիշները դիտարկելիս մենք հաճախ օգտվում ենք արդյունավետության և արտադրողականության ցուցանիշներից: Արդյունավետության ցուցանիշ-

ները ցույց են տալիս, թե որքանով է տվյալ գործողությունը ապահովում նախատեսված նպատակի կամ գործառույթի իրականացումը: Այդպիսի ցուցանիշների օրինակներ են՝ ավարտողների տոկոսը, շրջանավարտների աշխատանքի տեղավորման տոկոսը և ուսանողների բավարարվածությունը: Արտադրողականության ցուցանիշները ցույց են տալիս, թե որքանով է տվյալ գործողությունը ռեսուրսների հնարավոր նվազագույն սպառման միջոցով հասել իր վերջնական նպատակին: Այդպիսի ցուցանիշների օրինակներ են՝ դասախոսական անձնակազմ-ուսանողներ հարաբերակցությունը, մեկ միավորի հաշվով ծախսերը, տարածքի օգտագործումը կամ դիպլոմի ստացման ժամանակահատվածը:

Միացյալ Թագավորության պրոռեկտորների և ռեկտորների հանձնաժողովի կողմից հրապարակված Ջերրաթի զեկույցը (Jarratt Report, 1985թ.) ամբողջ աշխարհում զգալի հետաքրքրություն առաջացրեց ցուցանիշների միջոցով բարձրագույն կրթության տարբեր կողմերը գնահատելու համար: Մշակվել են բազմաթիվ նմանատիպ ցուցանիշներ: Դրանց մեծամասնությունը վերաբերում է հաստատությունների կատարողականին: Բոտրիլն ու Բորդենը (Bottrill and Borden, 1994թ.) առանձնացրել են 264 այդպիսի ցուցանիշ (այդ թիվն այժմ ավելի մեծ է): Ներդիր 2-ում ներկայացված են ինչպես Ջերրաթի զեկույցում պարունակվող, այնպես էլ Անգլիայի բարձրագույն կրթության ֆինանսավորման խորհրդի (ԱԲԿՖԽ) կողմից ներկայումս օգտագործվող ցուցանիշները:

Ներդիր 2. Միացյալ Թագավորության Ջերրաթի զեկույցում (1985թ.) առաջարկված կատարողականի ցուցանիշները

Ներքին կատարողականի ցուցանիշներ

- Բակալավրիատ ընդունելության դիմումների շուկայական կշիռը (ըստ առարկաների),
- Ավարտողների տեսակարար կշիռը և ավարտական որակավորումները,
- Մագիստրատուրա և դոկտորանտուրա պոտենցիալ դիմորդների ներգրավումը,
- Բարձր կրթական աստիճանով ավարտողների կշիռն այդ ծրագրերում ներգրավվածների ընդհանուր թվի համեմատ և ներդրված անհրաժեշտ ժամանակը,
- Գիտահետազոտական աշխատանքների ֆինանսավորման հայթայթումը,
- Դասավանդման որակը:

Արտաքին կատարողականի ցուցանիշներ

- Շրջանավարտների աշխատանքի տեղավորման գործակիցը,
- Շրջանավարտների հետավարտական առաջին գործունեությունը,
- Հեղինակությունն ըստ արտաքին փորձագետների,

ՄՈԴՈՒԼ 4 - Որակի ըմբռնում և գնահատում

- Անձնակազմի հրապարակումները և դրանց՝ որպես սկզբնաղբյուր օգտագործումը,
- Արտոնագրերը, գյուտերը և խորհրդատվական ծառայությունները,
- Անդամակցություն, մրցանակներ և մասնագիտական միությունների շքանշաններ,
- Զեկույցներ կոնֆերանսներում:

Գործառնական կատարողականի ցուցանիշներ

- Միավորի ծախսերը
- Դասախոսական անձնակազմ -ուսանողներ հարաբերակցությունը,
- Խմբերի չափը,
- Դասավանդվող առարկաների բազմազանությունը,
- Անձնակազմի ծանրաբեռնվածությունը,
- Գրադարանային ֆոնդը,
- Համակարգչային տեխնիկայի առկայությունը:

Անգլիայի բաձրագույն կրթության ֆինանսավորման խորհրդի կողմից օգտագործվող ցուցանիշները

Յուրաքանչյուր տարի հրապարակվող կատարողականի ցուցանիշները համեմատական գնահատականներ են տալիս ԲՈՒՀ-երում ընդգրկվածության ընդլայնման, ընդունված և սովորող ուսանողների հարաբերակցության, ուսումնառության և դասավանդման արդյունքների, հետազոտական աշխատանքների ու շրջանավարտների աշխատանքի տեղավորման արդյունավետության վերաբերյալ: Դրանք հրապարակվում են Միացյալ Թագավորության պետական ֆինանսավորմամբ բոլոր ԲՈՒՀ-երի վերաբերյալ:

Կատարողականի ցուցանիշները օգտագործվում են հետևյալ բնագավառների համար.

- բարձրագույն կրթության հասանելիությունը - ո՞րքանով է կրթական հաստատություններին հաջողվում ներգրավել քիչ ընդգրկված շրջաններից և ցածր կրթական բազայով ուսանողների,
- առաջին տարուց հետո տվյալ հաստատությունում ուսումը դադարեցնող ուսանողների տոկոսը,
- ակնկալվող ավարտողների տեսակարար կշիռը - հաշվարկված ըստ ուսանողների հաջորդ կուրս տեղափոխվելու ընթացիկ դինամիկայի,
- ավարտելուց վեց ամիս հետո աշխատող կամ ուսումը շարունակող շրջանավարտների տեսակարար կշիռը,
- Գիտա-հետազոտական աշխատանքների արդյունքները:

(Վերոնշյալ բոլոր ոլորտների համար հաշվարկվում են կատարողականի ցուցանիշներ: Ստորև ներկայացված են ոլորտներից մեկի ցուցանիշները):

ՄՈԴՈՒԼ 4 - Որակի ըմբռնում և գնահատում

Գիտահետազոտական աշխատանքների արդյունավետությունը չափվում է հետևյալ չորս ցուցանիշներով.

- Դասախոսական անձնակազմի պահպանման ծախսերի միավորի հաշվով շնորհված գիտությունների դոկտորի կոչումների թիվը,
- Ֆինանսավորման խորհրդի կողմից հատկացված ֆինանսավորման գումարների միավորի հաշվով շնորհված գիտությունների դոկտորի կոչումների թիվը,
- Դասախոսական անձնակազմի պահպանման ծախսերի միավորի հաշվով ստացված հետազոտական աշխատանքների դրամաշնորհների և պայմանագրերի քանակը,
- Ֆինանսավորման խորհրդի կողմից հատկացված ֆինանսավորման գումարների միավորի հաշվով ստացված հետազոտական աշխատանքների դրամաշնորհների և պայմանագրերի քանակը,

(Ծանոթագրություն: Իրականացվել է կատարողականի ցուցանիշների առաջին պաշտոնական վերանայումը: «Կատարողականի ցուցանիշների վերանայում» հրապարակումը կարելի է բեռնավորել Անգլիայի բարձրագույն կրթության ֆինանսավորման հանձնաժողովի ինտերնետային կայքից: Հրապարակման համարը՝ 2006/34)

Աղբյուրը՝ Անգլիայի բարձրագույն կրթության ֆինանսավորման խորհրդի կայք (հրապարակում 2003/59)

Կատարողականի ցուցանիշների հիմնական նպատակը համակարգի, հաստատության կամ կազմակերպական կառուցվածքի կատարողականի գնահատումն է: Այս ցուցանիշը կարող է օգտագործվել տարբեր նպատակների համար՝ մոնիտորինգ, որոշումների հիմնավորում, համեմատություն, գնահատում և բարելավում: Կատարողականի ցուցանիշներն օգնում են բացահայտել հիմնախնդիրները, սակայն դրանք չեն բացահայտում պատճառահետևանքային կապերը: Օրինակ՝ ԱԲԿՖԽ-ն կատարողականի ցուցանիշներն օգտագործում է ֆինանսավորման վերաբերյալ որոշումներ ընդունելու համար:

Կրթական հաստատությունը կարող է կատարողականի ցուցանիշներն օգտագործել այլ նմանատիպ հաստատությունների համեմատ իր գործունեության արդյունավետությունը համեմատելու համար: Օրինակ՝ որակի ապահովման գործակալությունը կարող է որևէ հաստատության կամ կառավարության ուշադրությունը հրավիրել կրթական հաստատությունների գործունեության այն կողմերի վրա, որոնք բարելավման կարիք ունեն:

Կախված այն բանից, թե ինչ նպատակով են օգտագործվելու կատարողականի ցուցանիշները, որակի ապահովման գործակալություններն օգտագործում են տարբեր մոտեցումների համակցում: Կատարողականի

ցուցանիշների օգտագործումը որակի ապահովման համար բարդ խնդիր է: Մենք այս մոդուլի շրջանակում դեռ կանդրադառնանք այդ հարցին:

Չափորոշիչներ

Սա նույնպես արդյունաբերությունից փոխառնված տերմին է· Չափորոշիչները բնութագրիչների կամ քանակությունների ամբողջություն են, որոնք բնութագրում են արտադրանքի, գործընթացի, ծառայության, փոխներգործության կամ նյութի առանձնահատկությունները: «Նոր Զելանդիայի չափորոշիչներ» կազմակերպությունը չափորոշիչները սահմանում է որպես նյութերը, մեթոդները, գործընթացները կամ գործունեությունը սահմանող մասնագրեր:

Արդյունաբերությունում չափորոշիչները ապահովում են որակի, աշխատանքային արդյունավետության, անվտանգության և հուսալիության հետևողական ու ընդունելի նվազագույն մակարդակը որոշելու հիմքը: Օրինակ՝ բանկային քարտերի ձևաչափը, որը հնարավորություն է տալիս դրանք օգտագործել ամբողջ աշխարհում, սահմանված է միջազգային չափորոշիչներով:

Բարձրագույն կրթության և որակի ապահովման ոլորտներում չափորոշիչները սահմանում են սկզբունք (կամ էտալոն), որին պետք է համապատասխանել և որով որոշվում է հաստատության որակը (կամ համապատասխանությունը): Այն ունի նաև այլ նշանակություններ, ինչպիսիք են «որևէ նպատակի համար անհրաժեշտ կատարելության աստիճան» և «ուրիշների համար մոդել հանդիսացող որևէ բան»: Շատ համատեքստերում չափորոշիչ նաև նշանակում է «բազային», առանց որևէ հավելյալ արժեքի հատկանիշների կամ «միջին որակ» կամ նվազագույն պահանջներ: Չափորոշիչները կարող են լինել ինչպես քանակական, այնպես էլ որակական: Մենք դրանց դեռ կանդրադառնանք: Այս մոդուլում չափորոշիչ ասելով նկատի ունենք «տարբեր կողմերի, տարրերի կամ սկզբունքների մասնագրեր, որոնց պետք է համապատասխանել կամ որոնցով դատում են որակը»:

Չափանիշներ

Չափանիշը որևէ բանի կողմ է կամ տարր, որով դատողություն են անում որևէ երևույթի մասին: Բարձրագույն կրթության ոլորտում որակի ապահովման գործակալությունների միջազգային ցանցի (ԲԿՈԱԳՄՑ) բառարանը (http://www.qualityresearchinternational.com/glossary) չափանիշը սահմանում է որպես «մասնագրեր կամ տարրեր, որոնց հետ համեմատության միջոցով դատողություն է արվում»:

Հարկավոր է նշել չափորոշիչի և չափանիշի տարբերությունը: Եթե չափանիշները հանդիսանում են որևէ բանի կողմեր և տարրեր, ապա չափորոշիչները որոշակի մակարդակ են սահմանում: Ըստ Ավստրալիական համալսարանների որակի գործակալության (ԱՀՈԳ)՝ «չափորոշիչների

գործառույթը չափանիշների գնահատումն է, որոնց միջոցով կարելի է որակի մասին դատողություններ անել»:

Գործնականում որակի ապահովման գործակալությունները չափանիշներ և չափորոշիչներ տերմինները փոխարինաբար են օգտագործում: Գնահատման և հավատարմագրման Հնդկաստանի ազգային խորհուրդը (ԳՀԱԽ) սակայն տարբերակում է «չափանիշ» և «ցուցանիշ» հասկացությունները: Ըստ ԳՀԱԽ-ի՝ չափանիշներն որևէ երևույթ բնութագրող ընդհանրական ցուցանիշներ են, որոնց հիման վրա գնահատվում է հաստատության որակը: ԳՀԱԽ-ն առանձնացնում է յոթ այսպիսի չափանիշ: «Այս ցուցանիշները» նման են ԱՄՆ-ի տարածաշրջանային հավատարմագրման գործակալությունների կողմից սահմանված չափորոշիչների ձևակերպումներին: Այդ ձևակերպումները սահմանում են այն մակարդակը կամ չափորոշիչները, որոնց պետք է բավարարել յուրաքանչյուր չափանիշի ներքո:

Ներդիր 3-ում ներկայացված են «չափանիշ» և «չափորոշիչ» տերմինների օգտագործման տարբեր օրինակներ: Դուք կնկատեք, որ Հնդկաստանի ԳՀԱԽ կողմից մշակված չափանիշներն ավելի շատ վերաբերում են հաստատության գործառնական տարբեր կողմերին և ընդհանրական են, մինչդեռ Հարավաֆրիկյան Հանրապետության բարձրագույն կրթության որակի կոմիտեի (ԲԿՈԿ) կողմից սահմանված չափանիշներն հստակ ձևակերպումներ են: Դուք նաև կնկատեք, որ ԱՄՆ-ի տարածաշրջանային հավատարմագրման գործակալությունների չափորոշիչների ձևակերպումները նման են Հարավային Աֆրիկայի ԲԿՈԿ և Հնդկաստանի ԳՀԱԽ չափանիշներին:

Ներդիր 3. Չափորոշիչներ և չափանիշներ (ԱՄՆ, Հարավային Աֆրիկա և Հնդկաստան)

ԱՄՆ-ի Միջին նահանգների բարձրագույն կրթության խորհրդի (ՄՆԲԿԽ) կողմից մշակված գերազանցության բնութագրիչներ

ԱՄՆ-ի ՄՆԲԿԽ-ն մշակել է 14 չափորոշիչ, որոնցից 10-րդ չափորոշիչը վերաբերվում է պրոֆեսորա-դասախոսական անձնակազմին:
10-րդ չափորոշիչ - պրոֆեսորա-դասախոսական անձնակազմ.
Հաստատության դասախոսական, հետազոտական և ծառայություններ ծրագրերը մշակվում, զարգացվում, դիտարկվում ու օժանդակվում են որակյալ արհեստավարժների կողմից:

Հարավաֆրիկյան Հանրապետության ԲԿՈԿ-ի Ինստիտուցիոնալ աուդիտի չափանիշները

9-րդ չափանիշ.
Աշխատակիցների ընտրության, աշխատանքի ընդունման, զարգաց-

ման և աջակցության քաղաքականությունն ու ընթացակարգերը նպաստում են ծրագրերի իրագործման համար անհրաժեշտ համապատասխան որակյալ, փորձառու պրոֆեսորա-դասախոսական անձնակազմի և օժանդակ աշխատակիցների առկայությանը: Անձնակազմի կարողությունները կապված ծրագրերի հետ պարբերաբար վերանայվում են:

Հնդկաստանի ԳՀԱԽ-ի գնահատման չափանիշները

Հնդկաստանի ԳՀԱԽ-ն իր գնահատման ընթացակարգերի համար մշակել է հետևյալ յոթ չափանիշները՝ ուսումնական ծրագրեր, դասավանդում-ուսումնառություն և գնահատում, հետազոտություններ, խորհրդատվություն և այլ ծառայություններ, ենթակառուցվածքներ և ուսմանական ռեսուրսներ; աջակցություն ուսանողներին և առաջադիմություն, կազմակերպում և կառավարում ու սպորտային գործունեություն: Դասավանդում-ուսումնառություն և գնահատում չափանիշի ներքո ներկայացված են ութ առանձին ցուցանիշներ, որից երեքը վերաբերվում են պրոֆեսորա-դասախոսական անձնակազմին՝

- Հաստատությունն ունի որակյալ և իր պահանջներին բավարարող պրոֆեսորա-դասախոսական անձնակազմ աշխատանքի ընդունելու արդյունավետ մեխանիզմ,
- Հաստատությունն ունի դասավանդման, հետազոտական աշխատանքների և պրոֆեսորա-դասախոսական անձնակազմի աշխատանքային բավարարվածության գնահատման թափանցիկ ու շահառուների մասնակցությունն ապահովող մեխանիզմ,
- Պրոֆեսորա-դասախոսական անձնակազմն ունի շարունակական ակադեմիական առաջընթացի և մասնագիտական առաջխաղացման հնարավորություններ:

Աղբյուրը՝ ԱՄՆ-ի Միջին նահանգների բարձրագույն կրթության խորհրդի և Բարձրագույն կրթության և գնահատման ու հավատարմագրման ազգային խորհրդի ինտերնետային կայքերը:

Գործակալությունները միմյանցից տարբերվում են «չափորոշիչ» և «չափանիշ» տերմինների օգտագործմամբ: Սակայն այդ տերմինները բոլոր դեպքերում վերաբերում են կրթական հաստատության գործունեության տարբեր կողմերին (ցուցանիշների մակարդակներով կամ առանց դրանց), որոնք պետք է հաշվի առնվեն որակը գնահատելիս:

Օրինակելի ցուցանիշներ

Օրինակելի ցուցանիշը դա մի հիմք է, որի հետ համեմատվում են: Օրինակելի ցուցանիշն ի սկզբանէ երկրաբաշխի կողմից պատի, սյան կամ շենքի վրա արված նշան էր, որը սկզբնակետ էր հանդիսանում բարձրության չափման համար: Այսօր այդ տերմինն օգտագործվում է համեմատություն ենթադրող բոլոր գործողություններում: Բարձրագույն կրթության ոլորտում որակի ապահովման գործակալությունների միջազգային ցանցի (ԲԿՈԱԳՄՑ) բացատրական բառարանը տալիս է վերոնշյալ տերմինի հետևյալ սահմանումը՝ «Օրինակելի ցուցանիշը մի հիմք է, որի հետ համեմատելիս կարելի է գնահատել որևէ բան»:

Պարզագույն իմաստով, գնահատումը համեմատությունների միջոցով սովորելու գործընթաց է: Դարեր շարունակ համեմատությունները կատարվել են բազմաթիվ ոչ ֆորմալ ձևերով: Այսօր օրինակելի ցուցանիշների համեմատ գնահատումը վերածվել է բարելավման համար գաղափարների (հատկապես հիմնարար բնույթի) առաջադրման ֆորմալ գործընթացի:

Որակի ամերիկյան միությունը օրինակելի ցուցանիշների հետ համեմատությունը սահմանում է որպես մի գործընթաց, երբ կազմակերպությունները իրենց գործունեության կատարողականը համեմատում են տվյալ ասպարեզի լավագույնների հետ, բացահայտում թե ինչպես են լավագույններն ապահովել այդպիսի արդյունքներ և օգտագործում այդ տեղեկատվությունը իրենց կատարողականը բարձրացնելու համար:

ԲԿՈԱԳՄՑ-ի բառարանը օրինակելի ցուցանիշների հետ համեմատումը սահմանում է որպես «մի գործընթաց, որը հնարավորություն է տալիս համեմատել տարբեր հաստատությունների (կամ հաստատությունների բաժինների) կամ ժամանակի ընթացքում դիտարկվող միևնույն հաստատության մուտքային գործոնները, գործընթացները և արդյունքները»:

Գոյություն ունեն օրինակելի ցուցանիշների հետ համեմատության տարբեր եղանակներ, որոնք ծառայում են տարբեր նպատակների: Տարբերությունները հասկանալու համար անհրաժեշտ է դիտարկել համեմատության առկա տարբերակները և մեթոդաբանությունները: Միացյալ Թագավորության բարձրագույն կրթության կառավարման ծառայությունը իր «Համեմատությունը բարձրագույն կրթության ոլորտում. միջազգային ուսումնասիրություն» աշխատության մեջ (Լոնդոն, 1998թ., հասանելի է www.chems.org ինտերնետային կայքում), կատարում է հետևյալ դասակարգումը.

- **Ներքին օրինակելի ցուցանիշներ**: Դրանք օգտագործվում են նույն համակարգի տարբեր ստորաբաժանումները համեմատելիս՝ սովորաբար առանց համեմատվելու որևէ արտաքին չափորոշչի հետ:
- **Արտաքին մրցակցային օրինակելի ցուցանիշներ**: Օգտագործվում են որևէ հաստատության գործունեության հիմնական ոլորտների կա-

տարողականը իր հիմնական մրցակիցների վերաբերյալ տեղեկատվության հիման վրա համեմատելու համար:

- **Արտաքին համագործակցային օրինակելի ցուցանիշներ**: Օգտագործվում են ուղղակի մրցակից չհամարվող մեծաթիվ հաստատությունների հետ համեմատություններ անելու համար:
- **Արտաքին միջճյուղային (իրենց դասում լավագույնը համարվող) օրինակելի ցուցանիշներ**: Դրանք ձևավորվում են տարբեր ճյուղերում նոր և նորարարական գործելակերպի փնտրման արդյունքում:

Ներդիր 4 - ը ներկայացնում է մեկ այլ դասակարգում:

Ներդիր 4 - Օրինակելի ցուցանիշների տեսակները

Կարելի է առանձնացնել օրինակելի ցուցանիշների երկու տեսակ՝ հղում չափանիշին և քանակական:

Հղում չափանիշին մոտեցումը պարզապես սահմանում է հաջողված փորձառության հատկանիշները գործունեության որևէ բնագավառում: Իր հաջողությունը որևէ բնագավառում օրինակելի փորձի հետ համեմատել ցանկացող համալսարանը կարող է պարզապես գնահատել, թե արդյոք հասել է սահմանված չափանիշներին: Օրինակ, ֆինանսների վերաբերյալ. համալսարանի դյուրիրացնելիության գործակիցը պետք է լինի դրական: Օրինակելի ցուցանիշը կարող է լինել լավագույն փորձառություն հանդիսացող հիմնական հատկանիշների ցանկ: Մեծ թվով համալսարաններ կարող են հասնել բազմաթիվ հատկանիշներով բնութագրվող լավագույն փորձառության՝ ձեռքբերելով այսպիսի օրինակելի ցուցանիշի մակարդակ: Սակայն լավագույն փորձառությունից ցածր մակարդակը, այն է՝ հատկանիշների բացակայություն կամ չափորոշիչից ցածր մակարդակի հատկանիշները նույնպես կարող են լինել բացահայտող և ահազանգել բարելավման անհրաժեշտության մասին:

Մյուս կողմից, **քանակական օրինակելի ցուցանիշները** անխուսափելիորեն տարբերակում են ձեռքբերումների նորմատիվ և մրցակցային մակարդակները: Հաճախ տարբերությունը մատնանշում է լավագույն փորձառության մասին, սակայն շատ դեպքերում (օրինակ, ասպիրանտների տեսակարար կշիռն ընդունվածների թվի մեջ), այդ ցուցանիշները նույնքան ընտրության և քաղաքականության հարցեր են, որքան լավագույն փորձառության արդյուք:

Օրինակելի ցուցանիշների նկատմամբ այս երկու մոտեցումներն էլ կարևոր են:

Աղբյուրը՝ Մակքինոն և ուրիշներ (McKinnon *et al*), 2000թ.

Գրականության մեջ հանդիպում են բազմաթիվ այլ օրինակելի ցուցանիշներ: Առկա են նաև բազմաթիվ մեթոդաբանություններ, որոնց միջոցով այդ օրինակելի ցուցանիշները կարող են մշակվել: Օրինակ՝ ըստ «կատարյալ չափորոշչի (կամ «ոսկե չափորոշչի») մոտեցման, ստեղծվում է մտացածին լավագույն փորձառության վրա հիմնված մոդել: Հետագայում այն օգտագործվում է հաստատությունների համապատասխանությունը այդ մոդելին գնահատելու համար:

Մյուս կողմից, ուղղահայաց համեմատությունների մոտեցումը փորձում է գնահատել որևէ գործառնական հատվածի ծախսերը, աշխատանքային ծանրաբեռնվածությունը, արտադրողականությունը և արդյունավետությունը: *Վարժություն 2-ում* դուք կծանոթանաք համեմատությունների բնագավառում այլ զարգացումների հետ:

Քննարկված նյութը վկայում է այն մասին, որ օրինակելի ցուցանիշները կարող են տարբեր ձևեր ունենալ: Դրանք կարող են քանակական (օրինակ՝ գործակիցները) կամ որակական լինել (օրինակ՝ լավագույն փորձառությունը): Դրանք կարող են արտահայտվել որպես «փորձառություն», «ձևակերպումներ» կամ «արդյունքների առանձնահատկություններ»: Այս բոլոր հասկացությունները կարող են միմյանց հետ հատվել: Մասնավորապես, օրինակելի ցուցանիշները կարող են լինել կամ «փորձառություն», կամ «չափիչ»: Չափիչը որևէ փորձառության իրագործման արդյունքում ստացված արդյունքների քանակական գնահատականների արտահայտությունն է: Այս մոդուլի նպատակից ելնելով, ներկայացված ցուցանիշների վերաբերյալ լրացուցիչ մանրամասնություններ չենք դիտարկի:

Հաշվի առնելով վերոնշյալ քննարկումները, մոդուլի շրջանակում մենք կօգտագործենք հետևյալ սահմանումները.

- Վիճակագրություն - համակարգված ձևով հավաքագրված վիճակագրական կամ այլ տվյալներ:
- Ցուցանիշ - որևէ երևույթ արտահայտող կամ ազդանշանող տվյալ կամ վիճակագրություն:
- Կատարողականի ցուցանիշ - գործունեության կատարողականի որևէ կողմը բնութագրող տվյալ:
- Չափանիշ - որևէ բանի կողմ կամ տարր, որով դատողություն են անում այլ բանի մասին:
- Չափորոշիչ - սկզբունքների, կողմերի կամ որևէ տարրի սահմանում, որին պետք է համապատասխանել և որով որոշվում է որակը:
- Օրինակելի ցուցանիշ - հիմք, որի հետ համեմատվում են գնահատման համար:

Վարժություն 2

1. Ուսումնասիրեք Հարավաֆրիկյան հանրապետության ԲԿՈԿ-ի (www.che.ac.za), Միացյալ Թագավորության Որակի ապահովման գործակալության (ՈԱԳ) (www.qaa.ac.uk), Որակավորված հաշվապահների կանադական ինստիտուտի (ՈՀԿԻ) (www.cica.ca) և Հնդկաստանի ԳՀԱԽ-ի (www.naac-india.com), ինտերնետային կայքերը և վերլուծեք, թե ինչպես են նրանք օգտագործում «ցուցանիշ», «չափանիշ» և «օրինակելի ցուցանիշ» տերմինները:

2 Խորհեք ձեր երկրում վերը դիտարկված տերմինների տարբեր կիրառության մասին: Ինչպիսի՞ նմանություններ ու տարբերություններ եք տեսնում:

Որակի ապահովման մոտեցումներ

Հիմնվելով որակի տարբեր ըմբռնումների և համատեքստերի վրա՝ որակի ապահովման գործակալությունները որդեգրում են որակի որևէ սահմանում և ըստ այդմ մշակում իրենց ընթացակարգերը: Մենք կդիտարկենք որակի տարբեր ընկալումների երկու խոշոր խումբ, որոնք կարող են որդեգրվել որակի ապահովման գործակալությունների կողմից:

1. Չափորոշիչների վրա հիմնված համեմատությունը ի հակադրություն «համապատասխանություն նպատակին» մոտեցմանը

Ինչպես մենք քննարկեցին Մոդուլ 1-ում, որակի ապահովման որոշ գործակալություններ որակի իրենց ընկալումը ձևավորելիս որպես սկզբնակետ հաշվի են առնում իրենց կողմից սահմանված նպատակները կամ առանձին ծրագրերի թիրախները: Որակի ապահովման այլ գործակալություններ որակը սահմանում են համեմատական հղում կատարելով հաստատությունից դուրս սահմանված չափորոշիչներին, բնութագրիչներին կամ սպասումներին: Այս գործակալությունները որակը սահմանելիս հիմք են ընդունում արտաքին հիմքը: Դրանց կարող է չհետաքրքրել, թե ինչ է ձգտում անել կոնկրետ հաստատությունը: Դրանք պարզապես պահանջում են, որ հաստատությունը կատարի Ա-ն, Բ-ն կամ Գ-ն, որոնք սահմանված արտաքին պահանջներ են:

Տարբերվում են նաև որակի ապահովման գործակալությունների որակի մակարդակի պահանջները. արդյոք՞ դրանք նվազագույն պահանջներ են, թե՞ բարձր չափորոշիչներ: Այդ տարբերությունները կդիտարկենք այս մոդուլի հետագա հատվածներում:

Որակի ըմբռնում՝ հիմնված չափորոշիչների վրա

Չափորոշիչների վրա հիմնված որակի ըմբռնման դեպքում հաստատությունները իրենց որակը պետք է ցուցադրեն ի համեմատ նախապես սահմանված չափորոշիչների համախմբի: Այլ մարմինների կողմից մշակված արտաքին չափորոշիչներին հետևելը դիտարկվում է որպես որակի շեմային մակարդակի ապահովում: Այս մոտեցման դեպքում կարևորվում է համապատասխանությունը նորմերին, հաշվետվողականությունը, կանոններին հետևը և գործունեության հստակ կանոնակարգումը: Սա մի գործելաոճ է, երբ ձեռք բերված արդյունքներն ու հմտությունները կարևոր են, ինչպես մասնագիտական գործունեության լիցենզավորման դեպքում:

Նշենք որ, չափորոշիչները պարտադիր չէ, որ լինեն քանակական: Չափորոշիչներին համապատասխանությունը որոշելու համար անհրաժեշտ է սահմանել կամ ընդունել որոշակի մակարդակ: Այդ մակարդակը կարող է լինել քանակական (օրինակ՝ ուսանող- դասախոս հարաբերակցությունը) կամ որակական (համապատասխան, բանիմաց և որակյալ պրոֆեսորա-դասախոսական անձնակազմ): Փակագծում ներկայացված օրինակներից պարզ է դառնում, որ քանակական ցուցանիշները կարող են ունենալ որակական հիմք: Գործունեության շատ որակական կողմեր կարող են քանակական արտահայտություն ունենալ: Մենք խոսում ենք ուսանող-դասախոս հարաբերակցության մասին, ենթադրելով որ, լավ դասավանդման և ուսումնառության համար անհրաժեշտ է այդ հարաբերակցության որոշակի մակարդակ: Նմանապես, բանիմաց և որակյալ պրոֆեսորա-դասախոսական անձնակազմը կարելի է բնութագրել ակադեմիական որակավորումով, փորձով, գիտական հրապարակումների քանակով, ուսանողների կողմից տրված գնահատականով և այլն:

Որակի ապահովումն այսօր փոփոխվում է: Եթե անցյալում քանակական ցուցանիշները բավարար էին համապատասխանությունը չափորոշիչներին ցույց տալու համար, ապա ներկայումս ավելի շատ որակական ցուցանիշներ են ներդրվում և հաստատությունները խրախուսվում են պահպանելու իրենց ինքնատիպությունը: Չափորոշիչները կարող են հանդես գալ նաև որպես որակական ձևակերպումներ, ինչպես օրինակ ԱՄՆ-ի տարածաշրջանային հավատարմագրման գործակալությունների սահմանած չափորոշիչները:

Որոշ գործակալություններ չափորոշիչները մշակում են հիմնվելով որակյալ հաստատությունների կամ ծրագրերի հաջողված փորձառության վրա: Գոյություն ունեն նաև մանրամասն բնութագրիչներ սահմանող որակի ապահովման գործակալություններ: Դրանք ավելի շատ հիմնվում են

քանակական բնութագրիչների վրա: Բարձրագույն ուսումնական հաստատությունների հանձնաժողովի և Նոր Անգլիայի դպրոցների և քոլեջների ասոցիացիայի կողմից մշակված չափորոշիչները հաջողված փորձառության կիրառում պահանջող ցուցանիշների օրինակներ են: Տեխնիկական կրթության համահնդկական խորհրդի (ՏԿՀԽ) կողմից մշակված չրափորոշիչները քանակականի օրինակ են: ՏԿՀԽ-ն մշակել է մի շարք չափորոշիչներ որոնց պետք է համապատասխանեն տեխնիկական բնագավառներում բակալավրական ծրագրեր առաջարկել ցանկացող բոլոր նորաստեղծ հաստատությունները: ՏԿՀԽ-ի սահմանած չափորոշիչները նպատակ ունեն ստուգելու, թե արդյոք հաստատությունները ունեն որակյալ ծրագրեր առաջարկելու ներուժ և կարողություններ: Գործունեության որոշ բնագավառների համար ՏԿՀԽ-ն սահմանել է քանակական չափորոշիչներ՝ օրինակ, ընդունված ուսանողների թիվը, հողատարածքը, ուսումնական տարածքները, բյուջեն, պրոֆեսորա-դասախոսական անձնակազմի քանակը և գրադարանին ներկայացվող պահանջները. Այդ չափորոշիչներից մեկին՝ կենտրոնական գրադարանին, ներկայացվող պահանջների որոշ մանրամասներ ներկայացված են *Ներդիր 5*-ում:

Ներդիր 5. Որակական և քանակական չափորոշիչներ

Տեխնիկական բնագավառի որակավորումներ շնորհող կրթական ծրագրեր տրամադրող նոր հաստատությունների հիմնադրման քանակական չափորոշիչներ

Կենտրոնական Գրադարան

Տարեկան 240 ուսանողի ընդունելություն ունեցող հաստատության կենտրոնական գրադարանը պետք է ունենա 400 մ^2 գորգածածկ տարածք:

Երեք մասնագիտություններով կրթություն առաջարկող տեխնիկական հաստատության հիմնադրման ժամանակ կենտրոնական գրադարանը պետք է պարունակի 4000 միավոր գրականություն հետևյալ կազմով.

(i) Յուրաքանչյուր մասնագիտության համար գրադարանը պետք է պարունակի 250 հեղինակ՝ յուրաքանչյուրից չորսական օրինակով:
(ii) Մաթեմատիկա, հումանիտար գիտություններ, ֆիզիկա, քիմիա և մյուս գիտությունների գծով գրադարանը պետք է պարունակի ընդհանուր 1000 միավոր գրականություն:

Գրադարանը պետք է ունենա առնվազն տասներկու ամսագիր՝ վեց անուն հնդկական և վեց անուն միջազգային ամսագիր տեխնիկական կրթության յուրաքանչյուր մասնագիտության համար: Այս չափորոշիչ-

ները պարտադիր են մագիստրոսական ծրագրեր առաջարկող հաստատությունների համար: Բակալավրական ծրագիր առաջարկող հաստատություններում ամսագրերի քանակը կարող է պակաս լինել:

Համապատասխանաբար, գրքերի սկզբնական քանակների, դրանց տարեկան համալրումների և բաժանորդագրվող ամսագրերի նորմերը ներկայացված են ստորև.

Հ/Հ	Անվանում	Նվազագույն քանակ
1.	Երեք մասնագիտությունների համար գրքերի նվազագույն քանակը	4000
2.	ա/ Տեխնիկական կրթության յուրաքանչյուր մասնագիտության գծով (Ա): բ/ Մաթեմատիկա, կիրառական ֆիզիկա և քիմիա, հումանիտար գիտություններ, հասարակական գիտություններ և կառավարում (Բ):	1000 (յուրաքանչյուր մասնագիտության գծով)
3.	Գրքերի տարեկան համալրումներ (միջինը) ա/ Ա-ի համար 1 անվանում տարեկան ընդունված յուրաքանչյուր ուսանողի հաշվով: բ/ Բ-ի համար 0.2 անվանում տարեկան ընդունված մեկ ուսանողի հաշվով:	
4.	Տեխնիկական ամսագրերի քանակը ա/ 12 անվանում Ա-ի համար (6 ազգային + 6 միջազգային) բ/ 12 անվանում Բ-ի համար (6 ազգային + 6 միջազգային)	

Աղբյուրը՝ ՏԿՀԽ ինտերնետ կայքը:

Չափորոշիչների որակական ձևակերպումներ

ԲՈՒՀ-երի հանձնաժողովի ու Դպրոցների և քոլեջների Նոր Անգլիական ասոցիացիայի հավատարմագրման չափորոշիչներ.

1-ին չափորոշիչ՝ Առաքելություն և նպատակներ: Հաստատության առաքելությունն ու նպատակները համահունչ են բարձրագույն կրթության ոլորտին, համարժեք են հաստատության կանոնադրության կամ կանոնակարգող մարմնի պահանջներին և իրագործվում են ԲՈՒՀ-երի հանձնաժողովի չափորոշիչներին համապատասխան: Հաստատության առաքելությունը ուղղորդում է նրա գործունեությունը և հանդիսանում է հիմք՝ հաստատության արդյունավորության գնահատման ու բարելավման համար:

2-րդ չափորոշիչ՝ Պլանավորում և գնահատում: Հաստատությունն իր

առաքելությանը ծառայելու և նպատակներին հասնելու ջանքերի ուղղորդումը բարելավելու համար իրականացնում է գործունեության համարժեք պլանավորում ու գնահատում: Այն սահմանում է իր պլանավորման և գնահատման առաջնահերթություններն ու արդյունավետորեն հետևում դրանց:

3-րդ չափորոշիչ՝ Կառուցվածք և կառավարում: Հաստատությունն ունի իր առաքելության և նպատակների ձեռքբերմանը, հաստատության արդյունավետությանն ու ամբողջականությանը նպաստող կառավարման համակարգ: Կազմակերպական և կառավարման կառուցվածքի միջոցով հաստատությունը ստեղծում ու պահպանում է դասավանդմանը, ուսումնառությանը, ծառայությունների մատուցմանը, կրթաթոշակներին և ըստ անհրաժեշտության, հետազոտական ու նորարական աշխատանքներին նպաստող միջավայր: Այն երաշխավորում է կազմակերպության յուրաքանչյուր բաղադրիչի համապատասխան գործունեության ապահովման համար անհրաժեշտ օժանդակության տրամադրումը:

4-րդ չափորոշիչ՝ Ակադեմիական ծրագիր...
5-րդ չափորոշիչ՝ Պրոֆեսորա-դասախոսական անձնակազմ...
6-րդ չափորոշիչ՝ Ուսանողներ.....
7-րդ չափորոշիչ՝ Գրադարան և այլ տեղեկատվական ռեսուրսներ...
8-րդ չափորոշիչ՝ Ֆիզիկական և տեխնիկական ռեսուրսներ...
9-րդ չափորոշիչ՝ Ֆինանսական ռեսուրսներ...
10-րդ չափորոշիչ՝ Հասարակական թափանցիկություն...
11-րդ չափորոշիչ՝ Մասնագիտական էթիկա...

Աղբյուրը՝ Նոր Անգլիայի դպրոցների և քոլեջների ասոցիացիայի ինտերնետ կայք.

Որակի՝ չափորոշիչների վրա հիմնված ըմբռնման դեպքում վերը դիտարկված օրինակները հաստատում են, որ որևէ տարրի որակը կախված է արտաքին մարմնի կողմից սահմանված չափորոշիչներին դրա համապատասխանությունից:

Ի տարբերության այս մոտեցման, որակի՝ որպես «համապատասխանություն նպատակին» ըմբռնումը սկսվում է հաստատության նպատակներից:

Որակի՝ որպես «համապատասխանություն նպատակին» ըմբռնումը

Որակի որպես «համապատասխանություն նպատակին» ըմբռնման դեպքում որևէ կազմակերպություն կամ միավոր համապատասխանում է իր նպատակներին, եթե.

1. ներդրված են կոնկրետ նպատակների կամ նպատակներին համապատասխան ընթացակարգեր,
2. առկա են ապացույցներ, որ այդ ընթացակարգերը ապահովում են սահմանված նպատակների իրականացումը:

Այս իմաստով, հաստատությունը, որն իրականացրել է իր սահմանած նպատակները, համարվում է որակյալ: Հաստատության կամ ծրագրի նպատակները վերածվում են ոսպնյակի, որոնց միջոցով որակի ապահովման գործակալությունը վերլուծում է հաստատության կամ ծրագրի որակը:

Այն պնդումը, որ հաստատության առաքելությունը կարող է սահմանվել հաստատությունից դուրս՝ կառավարության կամ այլ շահառուների կողմից, վիճելի է: Սա հենց այն է, ինչը կկոչվի «համապատասխանություն նպատակին» մոտեցում: Այս մոտեցման դեպքում յուրաքանչյուրն ինքն է որոշում, թե որ նպատակներն են ընդունելի: Այդ նպատակները հետագայում համեմատվում են արտաքին չափորոշիչների հետ: «Համապատասխանություն նպատակին» մոտեցումն ենթադրում է, որ պետք է նկատի ունենալ հենց հաստատության կողմից սահմանված նպատակները: Այն պահից, երբ հաստատությունը իր առաքելությունը վերածում է նպատակների, դրանք բոլորը վերածվում են հաստատության կողմից սահմանված նպատակների: Սա ճշմարտացի է նույնիսկ այն դեպքերում, երբ հաստատության առաքելությունը սահմանվում է հաստատությունից դուրս այլ շահառուների կողմից. այդ դեպքում հաստատությունը գնահատում են հենց այդ նպատակների համեմատ:

Այս մոտեցումը ընդունելի է այն համակարգերում, որտեղ նախապես սահմանված կամ շեմային չափորոշիչներին հաստատության կամ ծրագրի համապատասխանության ապահովումը կատարվում է այլ մեխանիզմներով: Այն նաև արդյունավետ է լավ ինքնակարգավորվող համակարգերում, որտեղ խրախուսվում է ինստիտուցիոնալ բազմազանությունը և որտեղ ԲՈՒՀ-երը ունեն իքնավարության բարձր աստիճան:

Ավստրալիական համալսարանների որակի գործակալությունը (ԱՀՈԳ) որդեգրել է «համապատասխանություն որակին» հստակ մոտեցում: ԱՀՈԳ-ն վերահսկվող ԲՈՒՀ-ին չի պարտադրում արտաքին մարմնի կողմից սահմանված չափորոշիչներ, այլ հակառակը՝ օգտագործում է հաստատությունների կողմից սահմանված նպատակները որպես աուդիտի սկզբնակետ: Այս մոտեցումը ընդունում է վերահսկվող հաստատությունների՝ նպատակներ սահմանելու և դրանց հասնելու համար ընթացակարգեր մշակելու ինքնավարությունը: ԱՀՈԳ աուդիտի հանձնաժողովների հիմնական նպատակը աուդիտ անցնող հաստատության գործունեության արդյունավետությունը իր նպատակների համեմատ գնահատելն է:

Միևնույն երկրում որակի ապահովման տարբեր գործակալություններ, կախված իրենց տրված մանդատից, կարող են ունենալ որակի տարբեր ընկալում: Օրինակ, տարբեր մասնագիտական ոլորտներում դասավանդման որակը ուսումնասիրող մասնագիտական մարմինները որակի

իրենց ըմբռնումը կառուցում են շրջանավարտների՝ կոնկրետ մասնագիտական գործունեությամբ զբաղվելու պիտանելիության շուրջ: Նույն երկրում նոր հաստատությունների հիմնադրման մոնիտորինգի համար պատասխանատու հաստատությունը կունենա այլ ակնկալիքներ: Շատ հաճախ որակի ապահովման գործակալությունները օգտագործում են այդ ըմբռնումների զուգակցում՝ կախված իրենց գործունեության համատեքստից: Հետագայում գործակալություններից յուրաքանչյուրը որակի ապահովման իրենց գործունեությունը զարգացնում է արդեն ընդունված մոտեցման շուրջ: Ինչպես ներկայացված է *Ներդիր 6-ում*, Հարավաֆրիկյան Հանրապետության ԲԿՈՀ-ը դրա օրինակ է:

Ներդիր 6. Որակի տարբեր բաղադրիչների համակշռում. Հարավաֆրիկյան Հանրապետության ԲԿՈՀ

Որակի ապահովման համակարգի և ֆինանսավորման ու պլանավորման մյուս երկու կանոնակարգող գործիքների միջև համակարգված մոտեցումը խթանելու համար ԲԿՈՀ-ը օգտագործում է որակի հետևյալ սահմանումները՝

- Սահմանված առաքելությանը համարժեք «համապատասխանություն նպատակին»՝ տարբերակումը և բազմազանությունը խրախուսող ազգային շրջանակում;
- «Արժեք փողի դիմաց» դատողությունը կատարվում է հաշվի առնելով կթության կարևոր հարցերի վերաբերյալ կառավարության կողմից մշակված և օրենսդիր մարմնին ներկայացվող զեկույցի մեջ ներառված բարձրագույն կրթության նպատակների ամբողջ տիրույթը: Կրթական ծառայությունների արդյունավետության վերաբերյալ դատողությունները ներառում են աշխատաշուկայի արձագանքը և ծախսածածկումը:
- «Փոխակերպումը» որպես անհատ սովորողների կարողությունների ձևավորում՝ անձնական բարգավաճման ինչպես նաև սոցիալական զարգացման և տնտեսական աճի ու զբաղվածության ավելացման պահանջներ»: (ԲԿՈՀ, 2001:14)

Աղբյուրը՝ Naidoo and Singh, 2005

«Համապատասխանություն նպատակին» մոտեցման կամ «չափորոշիչների վրա հիմնված ըմբռնման» ընտրությունը կանխորոշում է որակի ապահովման գործակալության ընդհանուր մոտեցումը: Օրինակ, բնական է, որ առաջինը հիմնված է «համապատասխանություն նպատակին», իսկ հավատարմագրումը՝ «չափորոշիչների վրա հիմնված» մոտեցմանը:

«Համապատասխանություն նպատակին» մոտեցումը ենթարկվում է քննադատության, քանի որ այն արժեզրկում է «նպատակի համապատասխանությունը»: Մասնավորապես, երբ արդյունավետությունը գնա-

հատում ենք ըստ հաստատության կողմից սահմանված նպատակների իրականացման, ապա գնահատող թիմը կարող է հայտնաբերել, որ հաստատությունը հասել է իր բոլոր նպատակներին: Միևնույն ժամանակ, դա մեզ ոչինչ չի ասում այդ նպատակների և թիրախների ակադեմիական արժեքի մասին: Դրանք կարող էին դիտավորյալ սահմանվել համեստ մակարդակի:

Կարելի է բանավիճել, որ դժվար է այդ երկու սահմանումները տարանջատել: Գործնականում հնարավոր չէ ունենալ որակի՝ որպես «համապատասխանություն նպատակի», բացարձակ ըմբռնում: Որակի բոլոր սահմանումներում առկա են «ընդունելիի և համապատասխանության» նվազագույն տարրեր, որոնք կարող են դիտարկվել որպես որակի հատկանիշ: Այսպես, գոյություն ունեն ազգային զարգացման որոշ անվիճելի պահանջներ, որոնց շրջանակում ԲՈՒՀ-երը պետք է ձևավորեն իրենց առաքելությունը: Սա ապահովում է նպատակների համապատասխանությունը, նույնիսկ, եթե որակի ապահովման գործակալությունը նախընտրում է սևեռվել «համապատասխանություն նպատակին» մոտեցման վրա:

Օրինակ՝ Արևմտյան Սիդնեյի համալսարանը իր «Որակի ապահովման շրջանակում» որակը սահմանում է որպես «համապատասխանություն բարոյական նպատակին»: Չնայած ԱՀՈԳ-ը իր աուդիտի սխեմաներում հետևում է որակի՝ որպես համապատասխանություն նպատակին սկզբունքին, ավստրալիական բոլոր ԲՈՒՀ-երը ենթարկվում են որակի ապահովման ավելի ընդհարձակ համակարգի պահանջներին: Այդ համակարգը ներառում է.

- Դաշնային կառավարությունն իր Զբաղվածության, գիտության և թրեյնինգի դեպարտամենտի միջոցով (ԶԳԹԴ);
- Զբաղվածության, կրթության, թրեյնինգի և երիտասարդության հարցերի նախարարական խորհուրդը (ԶԿԹԵՀՆԽ);
- Ավստրալիայի որակավորման շրջանակը (ԱՈՇ);
- ԶԿԹԵՀՆԽ-ի մշակած և յուրաքանչյուր նահանգի ու տարածաշրջանի կողմից ընդունված Ազգային արձանագրությունները;
- Ավստրալիայի պրոռեկտորների խորհուրդ (ԱՊԽ):

Այլ կերպ ասած, նպատակների համապատասխանությունը բարձրագույն կրթության ոլորտում հաջողությամբ կարգավորվում է այլ մեխանիզմներով: Սա ԱՀՈԳ-ին հնարավորություն է տալիս կենտրոնանալ «համապատասխանություն նպատակին» խնդրի վրա:

Խնդիրը այլ տեսակետից դիտարկելիս ակընհայտ է, որ բոլոր ԲՈՒՀ-երը գործում են ըստ որոշակի կանոնակարգերի և ուղեցույցների: Նրանք ստանում են գործունեության թույլտվություն՝ համաձայնվելով հետևել որոշակի կանոնների և գործունեության օրենքների: Այն չափով, որքանով այդ կանոններն ու երաշխավորություններն ընդունվում են հաստատության կողմից, նրանք դառնում են հաստատության քաղաքականության մի մասը (և ենթադրաբար նաև հաստատության նպատակների մաս): Հետևաբար, ԱՀՈԳ-ը կարող է որոշել, թե արդյոք հաստատությունն

ընդունել կամ տեղայնացրել է այդ կանոնները և երաշխավորությունները ու պարզել, թե արդյոք այս առումով հաստատությունն հասել է իր նպատակներին: ԱՀՈԳ աուդիտի ձեռնարկը (www auqa.edu.au) պարունակում է լրացուցիչ մանրամասներ վերոնշյալի մասին:

Չիլիի որակի ապահովման գործակալությունը կիրառում է վերոնշյալ երկու կողմերն էլ ներառող որակի սահմանում և շեշտադրում ԲՈՒՀ-երի՝ իրենց որակի համար պատասխանատու լինելու անհրաժեշտությունը: *Ներդիր 7-ում* նկարագրված է Չիլիի մոտեցումը:

Ներդիր 7: Չիլիի որակի ապահովման գործակալության մոտեցումը

Այս դեպքում որակը սահմանվում է որպես երկու կարևոր տարրերի զուգակցում՝

- Արտաքին հետևողականություն՝ այն ուղին, որի միջոցով որևէ ծրագրի կամ հաստատության գործունեությունը հարմարեցվում է ակադեմիական, առարկայական կամ մասնագիտական համապատասխան խմբի կողմից սահմանված պահանջներին (համալսարանական հանրությունն է որոշում, թե ինչ է ակնկալվում համալսարանից, ճարտարապետական հանրությունն է որոշում, թե ինչ է ակնկալվում ճարտարապետական որևէ բուհական ծրագրից): Կարևոր է, որ այդ պահանջները համապատասխանեն այն կարողություններին կամ գործառույթներին, որոնց ձեռքբերումը պետք է ապահովվի:

- Ներքին հետևողականություն՝ այն ուղին, որի միջոցով հաստատությունը կամ ծրագիրը հարմարվում է իր առաքելության և նպատակի սահմանումներից բխող գերակայություններին ու ուղեցույցներին: Այսպես՝ չնայած բոլոր ճարտարապետները կունենան նույն բազային կարողությունները, Ա համալսարանի ճարտարապետները զգալիորեն կտարբերվեն Բ համալսարանի ճարտարապետներից, քանի որ դրանք հետևելու են գերակայությունների մեկ այլ բազմության:

Կոնկրետ ծրագրերի դեպքում սա վերածվում է ավարտական բնութագրերի, որոնք հստակ սահմանում են ուսանողների ուսումնառության արդյունքները և այն պարտավորությունները, որոնք ստանձնում է համալսարանը ուսանողներ ընդունելիս:

Աղբյուրը՝ Հավատարմագրման Չիլիի ազգային հանձնաժողով (ՀՉԱՀ), Handbook for Self Assessment, 2006 (Թարգմանություն իսպաներենից)

2. Նվազագույն պահանջները ի հակադրություն որակի բարձր չափորոշիչների (կամ հաջողված փորձառության)

Որակի ապահովման որոշ մոդելների միակ նպատակն այն է, որ սահմանված կարգավիճակ ձեռքբերելու համար հաստատությունները բավարարեն նվազագույն պահանջները: Պահանջների կատարման արդյունքները ազդում են թույլտվություն ստանալու կամ տույժերի ենթարկվելու որոշման վրա: Բազմազանության և սեփականաշնորհման համատեքստում, զարգացող երկրների մեծամասնությունը ունեն ցածր որակով կրթական հաստատությունների առկայության և դրանց վերահսկելու համակարգի բացակայության խնդիրը: Այդ իսկ պատճառով, ներկայումս նվազագույն չափորոշիչների կիրառկումը հաճախ վերածվում է գերակայության: 1990-ականներին Չիլիի դեպքը կանոնակարգման միջոցով որակի ապահովման մոտեցման օրինակ է (տես *Ներդիր 8-ը*):

Ներդիր 8: Նոր մասնավոր հաստատությունների լիցենզավորումը Չիլիում

Նպատակը. համոզվել, որ նոր հաստատությունների հիմնադրման բոլոր առաջարկները համապատասխանում են որակին ներկայացվող հիմնական պահանջներին, առկա են գործունեության համար անհրաժեշտ ռեսուրսները և նոր հաստատությունները գործունեության սկզբնական տարիներին գործում են ըստ իրենց ներկայացրած պայմանների: Գործընթացի վերջում հաստատությունները կամ արտոնագրվում են որպես ինքնավար միավորներ, կամ կորցնում են պետական լիցենզիան (որն իրենց լիազորում է վավեր կրթական որակավորումներ շնորհել) և պետք է փակվեն:

Գործակալությունը. 1990թ. սահմանդրական օրենքի շրջանակում հիմնադրվեց Բարձրագույն կրթության խորհուրդը (ԲԿԽ), որը բաղկացած է ԲՈՒՀ-երը և այլ հանրային կազմակերպությունները ներկայացնող ինն անդամներից: Այն գլխավորում է կրթության նախարարը և ֆինանսավորվում է երկու աղբյուրից՝ պետական բյուջեից ու լիցենզավորման համար դիմող հաստատությունների վճարներից: Խորհուրդն ունի միայն վարչական աշխատակազմ և գործում է հիմնվելով հստակ նպատակների համար վարձվող արտաքին խորհրդատուների ու գնահատողների աշխատանքի վրա:

Ընթացակարգը. ԲԿԽ-ը դիտարկում է նոր մասնավոր հաստատություններ հիմնադրելու բոլոր դիմումների փաթեթները: Այն գնահատում է յուրաքանչյուր դիմումի փաթեթ. կամ այն հաստատում է, կամ էլ մատնանշում այդ առաջարկի հետ կապված խնդիրները: Վերջինիս դեպքում առաջարկի փաթեթը վերադարձվում է հաստատությանը, որն ունի երկու ամիս այն բարելավելու և նորից ներկայացնելու համար: Դրանից հետո ԲԿԽ կայացնում է այդ առաջարկը հաստատելու կամ մերժելու վերջնական որոշումը: Եթե այն մերժում է առաջարկության փաթեթը, ապա հաս-

ՄՈԴՈՒԼ 4 - Որակի ընբռնում և գնահատում

տատությունը բացվել չի կարող: Եթե առաջարկությունը հավանություն է ստանում, ապա այն իրավական ճանաչում է ստանում և հաստատությունը կարող է սկսել իր գործունեությունը ԲԿԽ վերահսկողության ներքո:

Գործունեության առաջին վեց տարիների ընթացքում հաստատությունը ամեն տարի պետք է ներկայացնի հաստատության վերաբերյալ ամբողջական տվյալները (ներառյալ մանկավարժական և ֆինանսական) տեղեկատվություն: Ուսանողներին կարող են քննել ԲԿԽ-ի փորձագետները և, առնվազն երկու անգամ հաստատությունն է այցելելու արտաքին գնահատողների թիմը, որը վերլուծում է տվյալ հաստատության զարգացման համապատասխանությունը ներկայացված առաջարկին և նպատակների իրականացման աստիճանը: Այս ժամանակահատվածի ընթացքում ԲԿԽ-ն նաև հաստատում է նոր ծրագրերը կամ կրթական աստիճանները: Ամեն տարի ԲԿԽ-ն հաստատությանը գործողությունների ծրագրի նամակ է ուղարկում՝ նշելով ուժեղ ու թույլ կողմերը և այն միջոցառումները, որոնք հաստատությունը պետք է իրականացնի: Վեցերորդ տարվա վերջում անցկացվում է ընդհանուր գնահատում և եթե որոշում է կայացվում, որ հաստատության զարգացումը բավարար է, ապա ԲԿԽ-ը այն արտոնագրում է որպես ինքնավար կառույց: Եթե զարգացումը ոչ բավարար է գնահատվում, ապա վերահսկողության ժամանակահատվածը կարող է երկարաձգվել մինչև հինգ տարի ժամկետով, որից հետո հաստատությունը կամ արտոնագրվում է որպես ինքնավար կամ փակվում:

Վերհասկողության ժամանակահատվածի ընթացքում հաստատությունը կարող է փակվել, եթե ԲԿԽ-ը վճռի որ հաստատությունը չի իրագործում իր երաշխավորությունները:

Աղբյուրը՝ Lemaître, 2005թ.

Հաճախ նույն գործակալությունը կարող է որդեգրել երկու տարբեր մոտեցումներ: Մեկը ապահովում է համապատասխանությունը նվազագույն պահանջներին, իսկ մյուսը ուշադրություն է դարձնում բարձր չափորոշիչներին:

Կախված բարձրագույն կրթության համակարգի զարգացման փուլից, որակի ապահովման գործակալությունները կարող են սահմանել բարձր որակի չափորոշիչներ: Բացի այդ գնահատումը կարող է իրականացվել «գերազանցության» նկատմամբ, այլ ոչ թե նվազագույն պահանջներին համապատասխանության: ԱՄՆ-ի Միջին նահանգների բարձրագույն կրթության հանձնաժողովը հավատարմագրման իր չափորոշիչները կոչում է «բարձրագույն կրթության գերազանցության բնութագրիչներ»:

Վերոհիշյալ մոտեցումները կարող են ստեղծել որակի ապահովման գործում միմյանց հակասող մոտեցումների տպավորություն: Սակայն պետք է հիշել, որ որակի ապահովումը գործ ունի որակի տարբեր աստիճաններ ունեցող հաստատությունների և ծրագրերի հետ: Բացի այդ, տարբեր են երկրների մտահոգությունները որակի խնդիրների հարցում:

Միևնույն երկրում կարող են գոյություն ունենալ որակի հետ կապված տարբեր խնդիրները հասցեագրելու բազմաթիվ մեխանիզմներ: Որակի ապահովման այդ տարաբնույթ ջանքերը պետք է համաձայնեցնել:

Ընդհանուր առմամբ, նվազագույն պահանջներին բավարարելու և նվազագույն չափորոշիչներից ավելի բարձր որակ ապահովելու խնդիրներ լուծող գործակալությունները լրացնում են միմյանց: Անհրաժեշտ են ինչպես որակի նվազագույն մակարդակ ապահովող, այնպես էլ այդ նվազագույն որակին բավարարող հաստատությունների որակի. հետագա բարձրացումը խթանող մեխանիզմներ:

ՈՐԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ

Որակի ապահովման գործակալությունների կողմից դիտարկվող ոլորտները ունեն շատ ընդհանրություններ: Չնայած իրենց տարբեր անվանումներին կամ կազմակերպական կառուցվածքներին, որակի ապահովման գործակալությունները որակը գնահատելիս ուշադրություն են դարձնում նույն ոլորտներին: Անշուշտ դրանք ունեն նաև առանձին շեշտադրումներ: Օրինակ՝ Ֆիլիպիններում ծրագրերի հավատարմագրմամբ զբաղվում են չորս գործակալություններ: Ներդիր 9-ը ներկայացնում է, թե որքանով են դրանք իրար նման որակի ապահովման շրջանակի տեսանկյունից: Նմանատիպ են նաև այդ գործակալությունների կողմից որակի գնահատման ժամանակ ուսումնասիրվող ոլորտները:

Ներդիր 9. Չափորոշիչներ որակի ապահովման համար - ծրագրային հավատարմագրումը Ֆիլիպինների հավատարմագրային չորս ասոցիացիաների կողմից

Որակի ապահովման կամ հավատարմագրման գործակալությունները յուրաքանչյուր կրթածրագրին կամ առարկայական ծրագրին ներհատուկ մանրակրկիտ չափանիշների մշակման համար ներգրավում են պրոֆեսորա-դասախոսական անձնակազմի որակյալ անդամների և ծրագրի բնագավառի պրոֆեսիոնալների: Ըստ գործակալությունների չափանիշները և չափորոշիչները ու դրանց կիրառկումը կարող է տարբերվել, սակայն որակի գնահատման ժամանակ նրանց կողմից ուսումնասիրվող ոլորտները գրեթե նույնն են:

ՄՈԴՈՒԼ 4 - Որակի ըմբռնում և գնահատում

	Հավատարմագրման գործակալություններ			
Հ/Հ	ՔՈՔՀՀԱ	ՈՔՀՀՖԱ	ՖՔՀԱ-ՀՀ	ՖՔՀՀԳ
1	Նպատակները և խնդիրները	Նպատակները և խնդիրները	Նպատակները և խնդիրները	Առաքելությունը, նպատակները և խնդիրները
2	Պրոֆեսորա-դասախոսական անձնակազմ	Պրոֆեսորա-դասախոսական անձնակազմ	Պրոֆեսորա-դասախոսական անձնակազմ	Պրոֆեսորա-դասախոսական անձնակազմ
3	Դասավանդում	Դասավանդում	Դասավանդում	Ուսումնական և առարկայական ծրագիրը
4	Գրադարան	Գրադարան	Գրադարան	Գրադարան
5	Լաբորատորիա	Լաբորատորիա	Լաբորատորիա	Ֆիզիկական հարմարություններ և լաբորատորիա
6	Ֆիզիկական ենթակառուց-վածք և հարմա-րություններ	Ֆիզիկական ենթակառուցվածք և հարմարություններ	Ֆիզիկական ենթակառուցվածք և հարմարություններ	
7	Ուսանողներին և աշխատակից-ներին մատուցվող ծառայություններ	Ուսանողներին մատուցվող ծառայություններ	Ուսանողներին և աշխատակիցներին մատուցվող ծառայություններ	Ուսանողներ
8	Սոցիալական կողմնորոշում և մասնակցություն համայնքի գործերին	Սոցիալական կողմնորոշում և մասնակցություն համայնքի գործերին	Սոցիալական կողմնորոշում և մասնակցություն համայնքի գործերին	Մասնակցություն համայնքի գործերին
9	Կազմակեր-պության և հետազոտական աշխատանքների ղեկավարում	Ղեկավարում	Կազմակերպում և ղեկավարում	Ղեկավարում

Աղբյուրը՝ Phelps, 2001
In Pursuit of Continuing Quality in Higher Education through Accreditation: The Philippine Experience, IIEP case study, 2003

Որակը գնահատելիս որոշ ոլորտների նշանակությունը հիմնարար է: Սա ճշմարտացի է անկախ այն ազգային համատեքստից, որտեղ տվյալ գործակալությունները գործում են և որակի ապահովման միավորից:

2002թ. օգոստոսին ՅՈՒՆԵՍԿՕ-ի Բանգկոկի տարածաշրջանային բյուրոն կազմակերպեց Ասիական-խաղաղօվկեանոսյան տարածաշրջանի կթության ոլորտի փորձագետների «Որակի ցուցանիշներ և որակի գործակալությունների միջոցով ակադեմիական շարժունակության խթանում» համաժողովը: Այս համաժողովին մասնակցեցին ութ երկրներից

որակի ապահովման և բարձրագույն կրթության բազմաթիվ մասնագետներ: Մասնակիցները միակարծիք էին, որ որակի ապահովման համար հիմնարար ոլորտներ են.

1. շիտակությունը և առաքելությունը,
2. կառավարումը և ղեկավարումը,
3. մարդկային ռեսուրսները,
4. ուսումնառության ռեսուրսները և ենթակառուցվածքները,
5. ֆինանսական կառավարումը,
6. ուսանողների պրոֆիլը և օժանդակ ծառայությունները,
7. ուսումնական ծրագրերը,
8. դասավանդում-ուսումնառությունը և գնահատումը,
9. գիտա-հետազոտական աշխատանքները և խորհրդատվական ծառայությունները,
10. որակի ապահովումը:

Մասնակիցները նաև առանձնանցրեցին որակի գնահատման հիմնարար ոլորտների հետևյալ տարրերը.

1. <u>շիտակություն և առաքելություն</u>՝ ազնվություն և թափանցիկություն քաղաքականություններում և ընթացակարգերում, փոխգործակցություն հանրության և շահառուների հետ, հստակ սահմանված իրատեսական առաքելություն, նպատակների և խնդիրների մասին իրազեկություն հաստատության բոլոր բաժիններում, հավասարություն և արտոնություններ հասարակության հատուկ խմբերի համար:

2. <u>կառավարում և ղեկավարում</u>՝ ղեկավարման ինքնավարություն, կազմակերպական կառուցվածք, իշխանության պատվիրակում, ինստիտուցիոնալ արդյունավորություն, ռազմավարական պլան, փաստաթղթավորում, վարչարարության արդիականացում:

3. <u>մարդկային ռեսուրսներ</u>՝ աշխատանքի ընդունման ընթացակարգեր, համապատասխանություն, անձնակազմի որակավորում և բանիմացություն, մրցանակներ, պարգևներ, պրոֆեսիոնալ ասոցիացիաների շքանշաններ, աշխատողների հոսունություն, աշխատողների պրոֆեսիոնալ աճ, ճանաչում և վարձատրություն, աշխատողների ծանրաբեռնվածություն, կենսաթոշակային սխեմաներ, վնասի փոխհատուցում:

4. <u>ուսումնառության ռեսուրսներ և ենթակառուցվածքներ</u>՝ հող և շինություններ, սեփականություն, լաբորատորիաներ և լսարաններ, գրադարան և տեղեկատվական տեխնոլոգիաներ, մեկ ուսանողի հաշվով գրադարանի ծախսեր, մեկ ուսանողի հաշվով համակարգչային տեխնիկայի ծախսեր, առողջապահական ծառայություններ, սպորտ, ֆիզիկական կուլտուրա և հանրակացարաններ, համալ-

սարանի տարածքի պահպանում, օպտիմալ օգտագործում, հաստատության հարմարությունների համայնքային օգտագործում, հաստատության հարմարությունների առևտրային օգտագործում.

5. Ֆինանսական կառավարում՝ ֆինանսավորման աղբյուրներ, ռեսուրսների սեփականություն, ֆինանսավորման կայունություն, իրացվելիություն, գիտական և զարգացման ծրագրերի բյուջե, կրթության միավորի արժեքը, ակտիվների ռազմավարական կառավարում, եկամուտների և ծախսերի համապատասխանություն:

6. ուսանողների պրոֆիլը և օժանդակ ծառայություններ՝ ընդունելության ընթացակարգեր, ուսանողների բնութագիր (սեռը, տարիքը, սոցիալական պատկանելիությունը, աշխարհագրական բաշխումը, արտասահմանյան ուսանողները, տարբեր կրթածրագրերում ընդունվածների թիվը, տարիքային կազմը, դասախոս-ուսանող հարաբերակցությունը, այլ նահանգներից ընդունված ուսանողների թիվը), դուրս մնացած և ավարտած ուսանողների քանակ, աշխատանքի տեղավորում և հետագա ուսուցում, ուսանողների ձեռքբերումներ, ուսանողների բավարարվածություն, անհատական և գիտական խորհրդատվություն, դասախոսական անձնակազմի մասնակցությունը ուսանողներին տրվող խորհրդատվությանը, առաջադիմության վրա հիմնված կրթաթոշակներ, այլ կրթաթոշակներ, տարբեր հարցերի վերաբերյալ ուսանողներից կարծիքների ստացման ֆորմալ և ոչ ֆորմալ մեխանիզմներ, ուսանողների ներկայացուցչականություն, ուսանողների և դասախոսների բողոքները, ուսանողների շարժունակություն, ուսանողների հանգստի հնարավորություններ, շրջանավարտների աշխատանքի տեղավորման գործակիցը, գործատուների բավարարվածությունը շրջանավարտներից, շրջանավարտների եկամուտներն ըստ մասնագիտությունների, շրջանավարտների ասոցիացիաներ և պրոֆիլներ:

7. ուսումնական ծրագրերը՝ համապատասխանություն նպատակներին և խնդիրներին, համապատասխանություն սոցիալական կարիքներին, տեղական համատեքստի ինտեգրում, ծրագրերի նախաձեռնում, վերանայում և վերափոխում, ծրագրերի տարբերակներ, ծրագրերի որակի վերաբերյալ կարծիքի ստացման մեխանիզմներ, փոխգործակցություն գործատուների և գիտական գործընկերների հետ, տարբեր ուսումնական ծրագրերի զուգակցման պահանջ:

8. դասավանդում-ուսումնառություն և գնահատում՝ դասավանդման նորարարություններ, նոր մեթոդների և մեխանիզմների օգտագործում, ուսումնական ծրագրերին հարակից գործունեություն, կարո-

ղությունների և հմտությունների զարգացում, նախագծեր և ուսումնառության այլ միջոցներ, դասավանդման նպատակով այլ հաստատությունների, արդյունաբերության և առևտրային ընկերությունների հետ կապերի հաստատում, արտաքին քննողների ներգրավում, քննությունների ժամանակացույց, քննությունների կազմակերպում, գնահատում և արդյունքների հայտնում, վատ առաջադիմություն ունեցող ուսանողներին օժանդակության ծրագրեր:

9. <u>գիտա-հետազոտական աշխատանքներ և խորհրդատվական ծառայություններ</u>՝ գիտա-հետազոտական աշխատանքների ինստիտուցիոնալ օժանդակություն, գիտա-հետազոտական աշխատանքներում ներգրավված աշխատակիցներ, դոկտորանտների ներգրավվածությունն ըստ ուսուցման ոլորտների, գիտության դոկտորի շնորհված աստիճաններ պրոֆեսորա-դասախոսական անձնակազմի մեկ հոգու հաշվով, հետազոտական նախագծեր պրոֆեսորա-դասախոսական անձնակազմի մեկ հոգու հաշվով, արդյունաբերության կողմից հովանավորվող գիտա-հետազոտական նախագծեր, գիտա-հետազոտական աշխատանքների ֆինանսավորում պետբյուջեից, գիտա-հետազոտական աշխատանքների ծախսերի և եկամուտների հարաբերակցություն, գիտա-հետազոտական աշխատանքների թոշակներ, արտաքին աղբյուրներից աշխատակիցների ստացած հետազոտական դրամաշնորհներ, գիտա-հետազոտական աշխատանքների համար առկա սարքավորումներ, գիտա-հետազոտական աշխատանքների կիրառելիությունը կրթության համար, գիտահետազոտական աշխատանքների սոցիալական օգուտները, միջդիսցիպլինար հետազոտություններ, ուսանողների ներգրավվածությունը գիտա-հետազոտական աշխատանքներում, գիտա-հետազոտական աշխատանքների որակը (հրապարակումների՝ որպես սկզբնաղբյուր օգտագործման հաճախականություն, ազդեցության գործոններ, արտոնագրեր և լիցենզիաներ, խորհրդատվության օգուտները արդյունաբերության և հանրության համար), հանրությանն ուղղված միջոցառումներ:

10. <u>որակի ապահովում</u>՝ որակի ներքին ապահովում, որակի կառավարման գծով ինստիտուցիոնալ հետազոտություններ, գիտական և վարչական գործառույթների համակարգում, որակի արտաքին գնահատման արդյունքներ, ակադեմիական միջավայր, կրթական բարեփոխումներ:

Սրանք այն ոլորտներն են, որոնք որակի ապահովման գործակալությունները ԲՈՒՀ-երի որակի վրա ունեցած ազդեցության առումով հիմնարար են համարում: Հավանաբար նկատեցիք, որ դրանց մի մասը արտահայտվում են քանակապես, իսկ մնացած մասը որակական բնույթի են:

Վերը ներկայացված օրինակը շեշտադրում է ԲՈՒՀ-ի որակի գնահատման համար կարևոր ոլորտները: Ներդիր 11-ում ներկայացված Ֆիլիպինների օրինակում դիտարկված է ծրագրային որակի կարևորությունը:

Այս երկու օրինակները ցույց են տալիս, որ հաստատության և առանձին ծրագրերի հավատարմագրման նպատակով դիտարկվող ոլորտները շատ առումներով համընկնում են. Այնուամենայնիվ, կան տարբերություններ առաջնահերթության և գնահատման առարկայի առումով: Եթե հաստատության հավատարմագրման ժամանակ ուսումնական ծրագրի դիտարկումը իրականացվում է ընդհանուր քաղաքականության և գործունեության համատեքստում, ապա ծրագրերի հավատարմագրման ժամանակ ուսումնական ծրագրի որակի խնդիրները ավելի մանրամասն են դիտարկվում: Հաստատության հավատարմագրման ժամանակ ելնելով գնահատման նկատառումներից, կարող են դիտարկվել մեկ և ավել ծրագրեր, սակայն դրա նպատակը այդ ծրագրերի որակի մասին դատողություններ անելը չէ, այլ դիտարկելով ուսումնական ծրագրերի առանձին կողմերը, հաստատության վերաբերյալ եզրակացությունները ամբողջացնելը:

Վարժություն 3

1. Ուսումնասիրեք մի քանի որակի ապահովման գործակալությունների համացանցի կայքերը և առանձնացրեք որակի գնահատման ժամանակ դրանց կողմից ուսումնասիրվող ընդհանուր ոլորտներ: Նույն վերլուծությունն արեք նաև ծրագրերի որակի գնահատման համար:

2. Ներկայումս որ մոտեցումը պետք է համարել գերակայություն ձեր երկրի համատեքստում՝ «նվազագույն պահանջները», թե «բարձր որակի չափորոշիչները»: Ո՞րն է ավելի օգտակար երկարաժամկետում:

3 Եթե «նվազագույն պահանջներին» բավարարելը երաշխավորելու համար ձեր երկրին անհրաժեշտ է որակի ապահովման գործակալություն, ապա բարձրագույն կրթության ո՞ր առաջնահերթ ոլորտները այն պետք է դիտարկի:
4. Եթե ձեր երկրում հիմնադրված որակի ապահովման գործակալությունը առաջնորդվի «բարձր որակի չափորոշիչներով», ապա ինչ տիպի հաստատություններ ու ծրագրեր դրանից կշահեն:

Որակի ապահովման հետ կապված որոշումների ընդունում

Որակի ապահովման գործակալությունները որակի իրենց ըմբռնումը «որակի ապահովման որոշումների» փոխակերպման համար պետք է կառուցեն հստակ շրջանակ: Գնահատման ուղեցույցները կամ շրջանակը, որի համեմատ գործակալությունները որոշումներ են կայացնում, որակի ապահովման համար վճռորոշ տարր են:

Որակի գնահատման գործընթացը կարող է ուսումնասիրել դիտարկվող հաստատության կամ ծրագրի գիտական ու վարչական կողմերը և դրանց վերաբերյալ տվյալներ հավաքագրել: Սակայն, հավաքագրված տեղեկատվությունը ինքնին ոչինչ չի ասում: Այդ տեղեկատվության հիման վրա պետք է գնահատող դատողություն անել և հավաքագրված տվյալները պետք է մեկնաբանվեն առաջնահերթ հարցերի տեսանկյունից: Դա կարող է կատարվել ուղղակի, երբ սահմանվում են ցանկալի արդյունքների քանակական ու որակական օրինակելի ցուցանիշներ և գնահատողները պարզապես հաստատում են փաստերը: Սակայն գոյություն ունեն համակարգեր, երբ որակի գնահատումը հիմնված է գնահատողի մասնագիտական դատողությունների վրա:

Փաստերի այսպիսի օգտագործումը, երբ դրանք համեմատվում են որակի ապահովման շրջանակի հետ, հանգեցնում է լուրջ հետևանքներով որոշումների: Գործակալությունները այն տարբեր կերպ են իրականացնում. որոշները չափորոշիչներ են մշակում, մյուսները ցուցանիշների համախումբ են ընդունում, իսկ մի մասն էլ օրինակելի ցուցանիշներ է սահմանում:

Եթե որոշ գործակալություններ մշակում են հատուկ ցուցանիշներ, ապա կան նաև այնպիսիք, որոնք մշակում են չափորոշիչների ընդհանրական պահանջներ, որոնց հետ համեմատության միջոցով փորձագետները գնահատում են որակը:

1. Չափորոշիչների օգտագործման տարբեր մոտեցումներ

Որակի ապահովման գործակալությունները որդեգրում են չափորոշիչների մշակման և օգտագործման տարբեր մոտեցումներ: ԲԿՀԽ (տես Ներդիր 5-ը) կողմից սահմանված չափորոշիչները հիմնականում վերաբերում են հաստատությունում որակյալ ծրագրեր առաջարկելու համար անհրաժեշտ «մուտքային գործոններին» կամ «ռեսուրսներին»: Որոշ գործակալություններ իրենց ուշադրության առարկան արդյունքներն են:

Մասնագիտական տարբեր բնագավառներին առընչվող ուսումնական ծրագրերի մեծամասնության հավատարմագրման չափորոշիչները

վերաբերում են ինստիտուցիոնալ գործունեության հաջողված փորձառությանը և ընթացակարգերին. Այս դեպքում ընդունվում է փորձառության վրա հիմնված մոտեցումը: Այդ գործակալությունները գնահատում են, թե որքանով տվյալ մասնագիտության բնագավառը համալրած նոր շրջանավարտները պատրաստ են իրականացնել իրենց պարտականությունները: Արդյունքում, վերջին տարիներին բազմաթիվ մասնագիտական մարմիններ ուշադրություն են դարձնում կարողությունները արձանագրող չափորոշիչներին Վերջիններս կենտրոնացած են գիտելիքի, հմտությունների և վարքագծի համապատասխան ու արդյունավետ կիրառման վրա: Դրանք շեշտադրում են ֆորմալ կրթության և աշխատանքի արդյունքների փոխկախվածությունը: Սա նշանակում է, որ չափորոշիչների հիմնական նպատակը մասնագիտական բնագավառում համապատասխան գիտելիքների տեղին և արդյունավետ կիրառումն ապահովելն է: Որակն այսպես ըմբռնող գործակալությունները սովորաբար պահանջում են, որ հաստատությունները կամ ծրագրերը ավելի շատ ցուցադրեն «վերջնական արդյունքը», այլ ոչ թե դրա ստացման համար օգտագործված «ռեսուրսները (մուտքեր)»: Հետևաբար, հիմնական ուշադրությունն ուսանողների մոտ լավ մասնագետ դառնալուն անհրաժեշտ հմտությունների և կարողությունների զարգացման վրա է, այլ ոչ թե ընդհանուր դասաժամերի կամ գործնական պարապմունքների փորձառության: ԱՄՆ-ում կարողություններ արձանագրող չափորոշիչների մշակումը ներկայացված է *Ներդիր 10-ում*:

Ներդիր 10. Մասնագիտական մարմինների կողմից կարողություններ սահմանող չափորոշիչների որդեգրում (ԱՄՆ)

Ճարտարապետության բնագավառի ծրագրերի չափորոշիչների էվոլյուցիան վերոհիշյալ քննարկումը հաստատող պատկերավոր օրինակ է: Հետևելով իրավագիտության և բժշկության բնագավառների ընթացակարգերին, դեռևս 1902թ. ճարտարապետական գործունեությամբ զբաղվող մասնագիտական խմբերը մշակեցին քննական համակարգ Իլինոիս նահանգում չորրորդ կուրսերի ճարտարապետության ուսանողների համար· 1914թ սահմանվեցին ճարտարապետության բնագավառի ծրագրերի նվազագույն չափորոշիչները: 1940թ. պետական մակարդակով ճարտարապետական ԲՈՒՀ-երի հավատարմագրումը վերահսկելու նպատակով հիմնադրվեց ազգային խորհուրդ: Հետագա մի քանի տասնամյակների ընթացքում այս մոտեցումը զգալի փոփոխությունների ենթարկվեց, իսկ 1982թ. ընդունվեց մի կարևոր նոր մոտեցում: Ստեղծված նոր խորհուրդը ստացավ նոր մանդատ՝ ճարտարապետական ծրագրերի գնահատման համար օգտագործել «դեպի ձեռքբերումները միտված կատարողականի չափանիշներ»: Ըստ այս մոտեցման, յուրաքանչյուր ԲՈՒՀ «... պարտավոր է վերահսկել, որ յուրաքանչյուր ուսանող

ՄՈԴՈՒԼ 4 - Որակի ըմբռնում և գնահատում

կատարի հումանիտար գիտությունների գծով ներկայացվող պահանջները և հասնի անհրաժեշտ առաջադիմության ծրագրի յուրաքանչյուր հիմնարար ոլորտի գծով»: Չափանիշները խմբավորված են չորս խոշոր վերնագրերի ներքո՝ հիմնարար գիտելիքներ, նախագծում, հաղորդակցություն և պրակտիկա: Ձեռքբերումների մակարդակները ամրագրված են մասնագիտական 54 բնագավառների համար:

Աղբյուրը՝ El-Khawas, 2001: 63-64

Կանոնակարգման մասնագիտական մարմինները կարողություններ արձանագրող չափորոշիչների վրա հիմնված իրենց մեթոդոլոգիաները տարբեր կերպ են մշակում: Օրինակ՝ Որակավորված հաշվապահների կանադական ինստիտուտը (ՈՀԿԻ) մշակել է «Որակավորված հաշվապահի թեկնածուների կարողությունների քարտեզ», որն օգտագործվում է հաշվապահների որակավորման (ճանաչման կամ գրանցման) գործընթացի համար: ՈՀԿԻ-ը ներկայացնում է մոտ 68000 որակավորված հաշվապահների և 8000 ուսանողների Կանադայում և Բերմուդյան կղզիներում: Այն առանձնացնում է կարողությունների երկու տեսակ՝ ընդհանուր որակներ կամ հմտություններ (ակնկալվում է որ ցանկացած առաջադրանքի վրա աշխատող հաշվապահները դրանք պետք է ունենան) և հատուկ կարողություններ: Հատուկ կարողությունները խմբավորված են վեց խմբերում: ՈՀԿԻ կողմից «Հարկեր» կատեգորիայի ներքո թվարկված կարողությունները ներկայացված են *Ներդիր 11-ում*:

Ներդիր 11: Կարողությունների քարտեզ՝ Կանադա

Հատուկ հմտություններ. հարկեր

1. Վերլուծել տնտեսվարող միավորի հարկային բնութագիրը և բացահայտել հարկային խնդիրները.
   - 1.1. Փորձել բարելավել տնտեսվարող միավորի հարկային գործունեությունը:
   - 1.2. Շարունակաբար գնահատել և խորհրդատվություն մատուցել ղեկավարությանը առընչվող հարկային նոր օրենսդրության վերաբերյալ:
   - 1.3. Բացահայտել, վերլուծել և խորհրդատվություն մատուցել հարկային օրենսդրության հետ համապատասխանության ապահովման և պահանջների կատարման հարցերով:
   - 1.4. Վերլուծել հնարավոր հարկային խնդիրների վերաբերյալ խորհրդատվություն մատուցելուն անհրաժեշտ մասնագիտական

փորձագիտության տիրույթը:

2. Ըստ օրենսդրության պահանջի՝ պատրաստել և ներկայացնել համապատասխան հարկային հայտարարագրերը.

2.1 Խորհրդատվություն մատուցել հարկային օրենսդրությանը համապատասխանության վերաբերյալ:
2.2 Հարկային հաշվետվությունների ներկայացվող պահանջների բավարարում:

3. Իրականացնել արդյունավետ հարկային պլանավորում հարկումից հետո շահույթը առավելագույնի հասցնելու համար.
3.1 Բացահայտել, վերլուծել և խորհրդատվություն մատուցել հարկային պլանավորման հնարավորությունների վերաբերյալ:
3.2 Վերլուծել գործարքների և բիզնես հնարավորությունների հարկային հետևանքները:

4. Օժանդակել, պաշտպանել և բանակցել հարկային դիրքորոշումները
4.1 Վերլուծել և արձագանքել գնահատումներին:
4.2 Պատրաստել տեղեկատվություն առարկություններին, բողոքներին և դատական գործերին օժանդակելու համար:

Աղբյուրը՝ Որակավորված հաշվապահների կանադական ինստիտուտի համացանցի կայք

Ի հավելում չափորոշիչների օգտագործման տարբեր ուղիների, որոշումների կայացման գործընթացը ընձեռում է մասնագիտական դատողությունների կիրառման տարբեր մակարդակներ: Որակի ապահովման գրեթե բոլոր գործակալությունները առանձին խոշոր ցուցանիշները բաղդատում են և փորձում դրանք թվայնացնել: Որակի ապահովման որոշ համակարգերում գործընկեր-փորձագետները բավականաչափ ազատ են դատողություններ անելու որակի ընդհանուր շրջանակի համեմատ: Շատ այլ համակարգերում գործընկերային դատողություններն ուղղորդվում են հստակ նկատառումներով, օրինակ՝ քանակական բնութագրիչներով և ցուցանիշներով:

2. Քանակական գնահատման կիրառումը

Որակի ապահովման գործակալությունները կարող են կիրառել տարբեր տեսակի քանակական ցուցանիշներ: Մասնավորապես, ուսումնական հաստատություններից կարող է պահանջվել, որ դրանք բավարարեն որոշակի քանակական չափորոշիչների, կամ գործընկերնե-

ից պահանջվում է գնահատել, թե արդյոք այդ չափորոշիչները կատարվել են, գործընկերային գնահատումը գրանցվի քանակական սանդղակով և պահանջել որպեսզի վերջնական արդյունքը արտահայտված լինի քանակական ցուցանիշներով: Այստեղից հարց է ծագում կարո՞ղ է արդյոք որակը գնահատվել քանակական ցուցանիշներով:

Այս հիմնարար հարցի վերաբերյալ գոյություն ունեն մի շարք տեսակետներ: Որակի գնահատումն անհրաժեշտ է մարդկային գործունեության մի շարք ոլորտներում: Սակայն կիրառվող մեթոդները կարող են լինել բավականին սուբյեկտիվ: Օրինակ, գեղեցկության, երաժշտության, թեյի, օդի կարգավորման որակի և օծանելիքի գնահատումը մեծապես կախված է մարդկանց զգայական ընկալումներից: Հայտնի է նաև, որ կյանքում կան բաներ, որոնց չափման հստակ միջոցներ գոյություն չունեն, ինչպես օրինակ զգացմունքները, ինտելեկտը և հույզերը: Լայնորեն ընդունված է, որ որակը, ինչպես գեղեցկությունը, անընմբռնելի են:

Ավելի վաղ մենք որակը դիտարկեցինք որպես ընդհանրական և բազմաչափ հասկացություն: Անկասկած, գոյություն ունեն բազմաթիվ այլ կարևոր երևույթներ: Դրանցից են, օրինակ, զարգացումը, աճը, գերազանցությունը, ժողովրդավարությունը և կրոնը: Մենք սովորել ենք, թե ինչպես վարվել դրանց հետ: Նույն տրամաբանությամբ, որակի գնահատման ուղղությամբ բազմաթիվ ջանքեր են եղել, որոնց մի մասը հիմնվում են քանակական, մինչդեռ մյուսները որակական մեթոդների վրա:

Որոշ գործակալություններ որոշումների կայացման ժամանակ հիմնվում են մեծամասամբ քանակական տվյալների վրա: Ինժեներական գործունեության հավատարմագրման մեքսիկական գործակալությունը կարող է որպես նման օրինակ ծառայել: Երբ ուշադրության կենտրոնում են հետևողականությունը, համապատասխանությունը կամ արդյունքների սպասվելիք մակարդակի որոշումը, որակի ապահովման գործակալությունները սովորաբար մշակում են քանակական չափանիշներ: Այնուհետև դրանք օգտագործվում են որպես հիմնական չափորոշիչներ, որոնց հղում է կատարվում որակի ապահովման ժամանակ: ՏԿՀԽ չափորոշիչները (տես *Ներդիր 5*) կարող են նման օրինակ հանդիսանալ: Միաժամանակ, որոշ գործակալություններ ձգտում են ապահովել նվազագույն չափորոշիչներ, որոնք չունեն քանակական արտահայտություն: Նման օրինակ է ԱՄՆ-ի հավատարմագրման գործակալությունների կողմից կիրառվող համապատասխանության չափորոշիչների համակարգը: Մյուս կողմից որոշ գործակալություններ հիմնվում են ուսումնական հաստատությունների գերազանց որակը քանակապես արտահայտելու վրա: Օրինակ, Կոլումբիայի Հավատարմագրման Ազգային Խորհրդի (ԿՀԱԽ) ուշադրության կենտրոնում «գերազանց որակն» է: Այն որակը սահմանում է որպես 66 բնութագրիչների ամբողջություն: Յուրաքանչյուր բնութագրիչի համար առանձնացվել են մի շարք քանակական և որակական փոփոխականներ: *Ներդիր 12*-ը ստորև նկարագրում է, թե ինչպիսի ցուցանիշներ և փոփոխականներ են առանձնացվել բնութագրիչներից մեկի համար:

Ներդիր 12. Բնութագրիչները նկարագրող ցուցանիշներ և փոփոխականներ (Կոլումբիա)

Բնութագրիչ 16: Դասախոսական կազմը համապատասխանում է ուսումնական հաստատության նպատակներին և դասավանդվող ուսումնական ծրագրի առանձնահատկություններին, դասախոսները բավարար չափով ընդգրկված են տվյալ ուսումնական ծրագրում ու պատրաստված դրա համար:

Նկարագրություն: Ուսումնական հաստատության և ծրագրի նպատակներին իրականացնելու համար պետք է ունենալ անհրաժեշտ քվով դասախոսներ, որոնք ունեն համապատասխան որակավորում և բավարար չափով ընդգրկված են տվյալ ուսումնական հաստատությունում կամ տվյալ ուսումնական ծրագրում Համապատասխանաբար փորձ է արվում պարզել, թե արդյոք ուսումնական ծրագրում ներգրավված դասախոսների թիվը, նրանց պատրաստվածությունը և զբաղվածությունը մոտ են տվյալ ուսումնական ծրագրի և հաստատության համար իդեալական վիճակին: Դրա միջոցով ստուգվում է կրթության որակի հիմնական կողմերից մեկը:

Փոփոխականներ.

- Դասախոսական կազմի զբաղվածության, պատրաստվածության մակարդակի և որակավորման համապատասխանությունը ուսումնական ծրագրի պահանջներին:
- Ուսումնական ծրագրում ընդգրկված դասախոսական կազմի գիտական որակը:

Ցուցանիշներ.

- Պատրաստվածության մակարդակը (բակալվր, մագիստրոս, ասպիրանտ, դոկտոր), դիրքը պաշտոնեական սանդղակում և դասախոսների զբաղվածությունը ուսումնական հաստատությունում ու ուսումնական ծրագրում:
- Դասախոսների կրթական այլ փորձառություն, որն առնչվում է տվյալ ուսումնական ծրագրում նրանց արդյունավետության հետ:
- Տվյալ ուսումնական հաստատությունում և ուսումնական ծրագրում դասախոսի աշխատաժամանակը, ինչպես նաև դասախոսական կազմի այլ կրթական և մասնագիտական փորձառությունը:
- Ուսումնական ծրագրում ընդգրկված ուսանողների և դասախոսների հարաբերակցությունը: Համեմատությունը պետք է կատարվի լրիվ դրույքով զբաղվածության նկատմամբ:
- Ուսումնական ծրագրում ընդգրկված դասախոսների գնահատականը տրված գիտական հանրության հայտնի ներկայացուցիչների կողմից:

- Ուսումնական ծրագրում ընդգրկված ուսանողների գնահատակա-նը նրանց որակի և բավարար քանակի տեսանկյունից, ինչպես նաև ծրագրում ընդգրկված դասախոսների ծրագրով ծանրաբեռն-վածության գնահատականը:

Աղբյուրը՝ Revelo Revelo and Augusto Hernandez, 2003. 47-48.

Այլ կերպ ասած, քանակական ցուցանիշների վրա կարելի է հիմն-վել անկախ նրանից, թե տվյալ գործակալությունը փորձում է ապահովել նվազագույն, թե բարձր որակի չափորոշիչներ: Որակի ապահովման այն գործակալությունները, որոնք ձգտում են մեծացնել օբյեկտիվության աստիճանը և նվազեցնել գործընկերային գնահատման սուբյեկտիվությունը, հատկապես այն համակարգերում, որտեղ բանիմաց փորձագետներ գտնելը խնդրահարույց է, ընտրում են քանակական ցուցանիշներով գնա-հատելու տարբերակը: Դրանք հավաստիացնում են, որ քանակական ցու-ցանիշներն օգնում են երաշխավորելու որակի ապահովման գործընթացի թափանցիկությունը:

Քանակական գնահատում իրականացնելու տարածված եղանակ է կատարողականի ցուցանիշների օգտագործումը՝

Կատարողականի ցուցանիշների օգտագործում

Որակի ապահովման ոլորտում կատարողականի ցուցանիշների օգտագործումը դեռևս բանավեճերի առարկա է: Այդուհանդերձ, այն ընդունված մոտեցում է հաշվետվողականությանը վերաբերող որոշ որո-շումների կայացման համար: Մեծ Բրիտանիայում այն առաջ եկավ ի պատասխան շուկայական ուժերին, որոնք համալսարաններից ավելի բարձր որակի ծառայություններ էին պահանջում: Ավստրալիայում կա-տարողականի ցուցանիշները մշակվեցին, որպեսզի ուսումնական հաս-տատությունները կարողանան արդյունավետորեն արձագանքել պետա-կան առաջնահերթ նպատակներին: Նիդերլանդներում կատարողականի ցուցանիշները կիրառվում են հարկային ազդակներին արձագանքման և կարգապահության նպատակով: Իսկ ԱՄՆ-ում դրանց օգտագործումը ուսումնական հաստատություններին թույլ տվեց ձեռք բերել ավելի մեծ ինքնավարություն նահանգային օրենսդիրներից (Gaither *et al.*, 1994).

Կատարողականի ցուցանիշների կողմնակիցները պնդում են, որ դրանք կարող են օգտակար լինել հետևյալ նպատակների համար:

1. Կատարողականի ցուցանիշները կարող են օգտագործվել հաշվետվողականության հարցերը դիտարկելու համար
2. Կատարողականի ցուցանիշները օգնում են նմանատիպ ուսումնական հաստատությունների արդյունքների համե-մատության գործում:

3. Կատարողականի ցուցանիշները կարող են տարբեր տեղեկություններ տալ գործունեության կատարողականի վերաբերյալ ինքնաբարելավման և արդյունավետ կառավարման ռազմավարության մշակման նպատակով:
4. Կատարողականի ցուցանիշները կարող են հստակ հրապարակային տեղեկություններ տալ ուսումնական հաստատության գործունեության տարբեր ոլորտների ընդհանուր վիճակի վերաբերյալ:
5. Կատարողականի ցուցանիշները կարող են ազդել քաղաքականության մշակման վրա:

Այլ կերպ ասած, համարվում է, որ կատարողականի ցուցանիշները օգնում են ԲՈՒՀ-երին ինքնաբարելավման նպատակով պլանավորման և կառավարման գործընթացներում, հրապարակային տեղեկություններ տալու, ինչպես նաև համեմատություններ կատարելու և օրինակելի ցուցանիշներ սահմանելու գործում: Դրանք կարող են օգնել պետությանը որպես հաշվետվողականության միջոցներ և քաղաքականության ձևակերպման համար:

Չնայած շատերը ցանկանում են կատարողականի ցուցանիշները կիրառել ինքնաբարելավման նպատակներով, սակայն առկա է մտավախություն, որ դրանք կարող են օգտագործվել ուսումնական հաստատությունների վերահսկման համար: Դեյվիսը (Davis,1996) հետևյալ կերպ է ամփոփում ստեղծված իրավիճակը. «Կատարողականի ցուցանիշները դառնում են առավել հակասական այն պարագայում, երբ շեշտը տեղափոխվում է դրանց՝ որպես արդյունավետ որոշումների կայացման համար օգտագործվող տվյալներից դեպի կիրառումը որպես դասակարգման և ֆինանսավորման տարբերակման որոշումների ցուցանիշներ»:

Որակի ապահովման ոլորտում կատարողականի ցուցանիշների հակառակորդները ներկայացնում են այն փաստը, որ ուսումնական հաստատության արդյունավետությունը կամ կրթական ծրագրի արդյունքների որակը կարող են պայմանավորված լինել տարբեր գործոններով: Ավելին, այդ բոլոր գործոնների դիտարկմամբ ուսումնական հաստատության կամ ծրագրի գնահատումը դժվար գործ է: *Սերդիր 13-ը* ներկայացնում է ուսումնական հաստատության գործունեության ոլորտներից մեկի գիտական հետազոտությունները նկարագրող ցուցանիշների բազմազանությունը:

Ներդիր 13. Գիտական հետազոտությունների ցուցանիշներ

Գիտական հետազոտությունների մուտքային գործոններն են հետազոտողները, ասպիրանտները, ռեսուրսները (ինչպես օրինակ ժամանակ, դրամաշնորհների և դրամաշնորհների միջոցով ստացված գումարներ, սարքավորումներ, գրասենյակային պիտույքներ և այլն): Դրանց միջանկյալ արդյունքները ներառում են հետազոտական նախագծերը, գիտական հետազոտություններին ուղղված նախապատրաստական ծրագրերն ու թեկնածության դիմումները, իսկ վերջնական արդյունքներն են հաշվետվությունները, առևտրային արտադրանքը, հրապարակումները, ատենախոսությունները, համաժողովների նյութերը և ներկայացումները: Դրանց նկատմամբ կարելի է կիրառել արդյունավետության և արտադրողականության ցուցանիշներ:

Արդյունավետության ցուցանիշներից են

1 գիտական հետազոտություններին օժանդակող ենթակառուցվածքների մակարդակը, դրամաշնորհների, արտաքին ֆինանսավորման մեծությունը,
2 գիտական հետազոտություններին ուղղված նախապատրաստական ծրագրեր անցած անձնակազմի թվաքանակը,
3 գիտական հետազոտություններին ուղղված նախապատրաստական ծրագրեր անցած նորանշանակ աշխատակիցների թվաքանակը,
4 ասպիրանտուրայի տեղերի նկատմամբ պահանջարկը,
5 ասպիրանտների բավարարվածության աստիճանը, նրանց ստացած եկամուտները,
6 նոր տեխնոլոգիաների ներդրմամբ ձեռնարկությունների քանակը:

Վերջիններիս համար պետք է սահմանել կարճաժամկետ և երկարաժամկետ նպատակային թիրախներ և համապատասխան ցուցանիշներ: Գիտական հետազոտությունների արդյունավետության ստանդարտ ցուցանիշներից են

- գիտական հետազոտությունների արդյունավետության տարեկան ինդեքսն ըստ ուսումնական ծրագրերի,
- գիտական հետազոտություններից ստացվող տարեկան եկամուտը համեմատած նմանատիպ այլ ծրագրերի հետ և ընդհանրացված ըստ ծրագրերի այլ նմանատիպ ուսումնական հաստատությունների հետ համեմատելու համար,
- յուրաքանչյուր հետազոտողի, ծրագրի և ուսումնական հաստատության տարեկան հրապարակումները համեմատած մյուսների հետ:

Արտադրողականության ցուցանիշները սովորաբար տեղեկություն են տալիս ծախսերի կամ արտադրողականության մակարդակի վերաբերյալ, օրինակ

1	հետազոտության ինդեքսի մեկ կետին բաժին ընկնող հետազոտության գծով ծախսերը,
2	գիտահետազոտական անձնակազմի լրիվ դրությամբ մեկ անդամին բաժին ընկնող գիտահետազոտական արդյունքների ծավալը,
3	գիտահետազոտական անձանակազմի լրիվ դրությամբ ո թվով (օրինակ տասը հոգի) անձնակազմին բաժին ընկնող գիտահետազոտական եկամուտը համեմատած նմանատիպ այլ ուսումնական հաստատությունների հետ,
4	գիտահետազոտական անձնակազմի լրիվ դրությամբ ո թվով անձնակազմին բաժին ընկնող հրապարակումների քանակը համեմատած նմանատիպ այլ ուսումնական հաստատությունների հետ.

Աղբյուրը Liston, 1999

Երդիր 13-ը ներկայացնում է, թե ինչպես գործունեության որևէ առանձին կողմի հետ կապված կատարողականը և որակը կարող են կախված լինել տարբեր ցուցանիշներից: Այն նաև ցույց է տալիս, թե որքան բարդ խնդիր է որակի գնահատումը, որը պետք է հավասարկշռվի գործընկերային գնահատման հետ:

Քանակական ցուցանիշների օգտագործումը գործընկերային գնահատման ժամանակ

Գնահատողներից կարող է պահանջվել, որ որակի վերաբերյալ դատողություններ կատարելիս նրանք առաջնորդվեն քանակական ցուցանիշներ պարունակող ուղեցույցներով: Օրինակ, ՀԱԽ-ի (Հնդկաստան) հավատարմագրման մեթոդաբանությունը պահանջում է գնահատողներից արտահայտելու իրենց դատողությունները որոշակի ցուցանիշների միջոցով, որոնց առավելագույն մեծությունները նախապես սահմանված են ՀԱԽ-ի կողմից (տես *Երդիր 14*)

Ներդիր14. Քանակական ցուցանիշների օգտագործումը գործընկերային գնահատման ժամանակ ՀԱԽ (Հնդկաստան)

Ուք չափանիշներից յուրաքանչյուրը բաժանված է որոշակի բնութագրիչների, որոնց համար ՀԱԽ-ը կշիռներ է սահմանել: Ստորև ներկայացված են այդ բնութագրիչները և դրանց կշիռները, որոնք տարբեր են բակալավրիատի (Բ), մագիստրատուրայի (Մ) և ասպիրանտուրայի (Ա) ուսումնական ծրագրերի համար:

ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐ	Բ (30)	Մ (80)	Ա (50)
Ի. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ			
Ա. Պլանավորում և մոնիտորինգ			
Բ.Ընդունելության գործընթաց և դրա արդյունավետություն			
Գ. Առաջխաղացման քաղաքականություն/ընթացակարգ			
Դ. Առաջնորդում			
Ե. Խրախուսման նախաձեռնություններ			
Զ. Թափանցիկություն			
Է. Ապակենտրոնացում, պարտականությունների փոխանցում և դասախոսական կազմի մասնակցություն			
Ը. Կառավարման խորհրդի կազմ			

Աղբյուրը՝ Հավատարմագրման Ազգային Խորհրդի վեբ-կայք

Արդյունքների քանակական ներկայացումը

ԳՀԱԽ-ի պարագայում, գնահատողների կողմից տրված գնահատականներն օգտագործվում են ուսումնական հաստատության գնահատականը տոկոսային արտահայտությամբ հաշվարկելու համար: Ուսումնական հաստատության գնահատականից է կախված նրա կարգը ինը աստիճանից բաղկացած սանդղակով: Գ կարգն ընդգրկում է գնահատականների 55-60% միջակայքը, Գ+-ը 60-65%, Գ++-ը՝ 65-70%, Բ-ն՝ 70-75%, Բ+-ը՝ 75-80%, Բ++-ը՝ 80-85%, Ա-ն՝ 85-90%, Ա+-ը՝ 90-95% և Ա++-

ը 95-100%. Նվազագույն՝ 55%-ը չստացած ուսումնական հաստատությունները չեն հավատարմագրվում:

Վերջերս ստեղծված որոշ համակարգեր օգտագործում են այս մոտեցումը վստահելիության և օբյեկտիվության ապահովման համար: Դա հատկապես ճշմարիտ է գնահատողների ձևավորված կազմի բացակայության պայմաններում կամ միջխմբային մեծաթիվ տարբերություններ ունեցող խոշոր համակարգերում: Այդուհանդերձ, քանակական ցուցանիշների և օբյեկտիվության միջև կապը վիճահարույց է: Քանակական ցուցանիշներն օգտակար են միայն որոշակի պայմանների առկայության դեպքում: Մասնավորապես, դրանք գործում են, եթե դուք կարող եք վստահաբար պնդել, որ 50%-ի և 60%-ի միջև տարբերությունը նույքան է, որքան, օրինակ 75%-ի և 85%-ի միջև: Սովորաբար, գործնականում այդպես չի լինում: Քանակական ցուցանիշները օբյեկտիվության խաբուսիկ տպավորություն են ստեղծում քողարկելով գնահատականների սահմանման հիմքում ընկած սուբյեկտիվությունը:

Տարբեր շահառուների կողմից քանակական ցուցանիշների վրա հիմնվելը տարաբնույթ պատճառներով վիճարկվում է: Քանակական ցուցանիշները կարող են օգնել գործակալությանը իր մոտեցումները համասեռ դարձնելու և գնահատողների խմբերի միջև տարբերությունները նվազեցնելու գործում: Դրանք կարող են օգտակար լինել նաև նոր ձևավորվող համակարգերում թափանցիկության ապահովման համար: Սակայն դրանք կարող են ԲՈՒՀ-երին դրդել ներկայացնելու իրենց համար շահեկան քանակական ցուցանիշներ, իրական որակական գնահատման փոխարեն, կամ կարող են ԲՈՒՀ-երին մղել հասնելու հենց այդպիսի քանակական ցուցանիշների, այլ ոչ թե դրանց կողմից արտահայտվող բնութագրիչներին:

Նաև մտավախություն է արտահայտվում որակի ապահովման գործակալությունների կողմից օգտագործվող կամ օգտագործվելիք բազմաթիվ ցուցանիշների տեղին լինելու, ճշգրտության և արդյունավետության վերաբերյալ: Քանակական ցուցանիշների վրա հիմնվելը առավել հակասական է դառնում, երբ շեշտը տեղափոխվում է որպես որոշումների կայացման մուտքային տվյալներ դրանց օգտագործումից դեպի որպես վարկանիշային դասակարգման գործիք կիրառումը:

Շատ բան է կախված նրանից, թե որքանով է քանակական ցուցանիշների կիրառումը հավասարակշռվում գործընկերային գնահատմամբ:

3. Փորձագետների մասնագիտական դատողությունների կիրառումը

Որակի ապահովման որոշ գործակալություններ հստակ չափորոշիչներ և քանակական նպատակային ցուցանիշներ չեն տրամադրում, քանի որ, եթե չափորոշիչները լինեն բացահայտ, ապա դրանք կգործեն ընդդեմ «ուսումնական հաստատությունների բազմազանության» և «հա-

մապատասխանություն նպատակին» մոտեցմանը: Սա չի նշանակում որ չափորոշիչներին համապատասխանությունը կարևոր չէ: Այդ համապատասխանությունը սակայն կարող են ապահովել այլ մեխանիզմներ:

Երբ նվազագույն մակարդակն արդեն ապահովված է, գործակալությունը կարող է ստուգել, թե ինչպես է ԲՈՒՀ-ն իրեն հարմար ձևով ընթանում դեպի իր նպատակների և խնդիրների իրականացումը: Այս պարագայում կարևորվում է բազմազանությունը և քանակական գնահատականների կիրառումը չի կարող օգտակար լինել: Այստեղ կենտրոնական դերակատարում ունեն գործակալության որակի ապահովման շրջանակին համապատասխան մասնագիտական դատողությունները:

Այն գործակալությունները, որոնք չեն ցանկանում չափազանց ուղղորդիչ լինել, ուսումնական հաստատություններից չեն պահանջում համապատասխանել հատուկ քանակական չափանիշների: Սակայն նրանք կարող են սահմանել մանրամասն ուղենիշներ (կամ չափորոշիչներ) տարբեր խնդիրների վերաբերյալ, ինչպես համապատասխանության և արտադրողականության վերհանման դեպքում: Օրինակ, գործակալությունը կարող է չպահանջել, որպեսզի յուրաքանչյուր 10 ուսանողին բաժին ընկնի մեկ դասախոս: Նմանապես, այն կարող է չպահանջել, որպեսզի ասպիրանտական ծրագրերը վարեն միայն դոկտորի աստիճան ունեցողները: Սակայն գործակալությունը կարող է ընդհանուր առմամբ պահանջել, որ ուսումնական հաստատությունը գնահատվող ուսումնական ծրագրի համար ունենա համարժեք և բանիմաց դասախոսական անձնակազմ:

Օրինակ, ԱՀՈԳ-ը միայն նախանշում է այն հարցերի շրջանակը, որոնց պետք է անդրադառնալ գնահատման ժամանակ: Այս դեպքում առավել կարևորվում են գործընկերներ փորձագետների մասնագիտական դատողությունները (տե՛ս *Ներդիր 15*):

Ներդիր 15. Ուղղորդող շրջանակ. ԱՀՈԳ

ԱՀՈԳ-ը առանձնակի ուշադրություն է դարձնում ուսումնական հաստատության կողմից իրականացվող ուսումնական նախաձեռնություններին: Ուսումնական հաստատությունների աուդիտի ուղղորդող շրջանակն ընդգրկում է

- ղեկավարումը, կառավարումը, պլանավորումը,
- դասավանդումը և ուսումնառությունը (բոլոր եղանակները), ուսումնական ծրագրերի հաստատման և մոնիտորինգի գործընթացը, տեղական և արտասահմանյան ծրագրերի համապատասխանությունը կրթական չափորոշիչներին,
- գիտահետազոտական գործունեությունը և արդյունքները ներառյալ դրանց առևտրային կիրառումը,
- ծառայությունների մատուցումը հանրությանը,
- միջազգայնացումը, ներառյալ արտասահմանյան գործընկերների հետ պայմանագրերը,

- անձնակազմին և ուսանողներին օժանդակության ծրագրերը,
- հաղորդակցությունը ներքին և արտաքին շահառուների հետ,
- ներքին նախաձեռնությամբ իրականացվող համակարգային գնահատումները (օրինակ բաժինների, թեմաների), ներառյալ օգտագործվող գնահատման մեխանիզմների լրջությունը և արդյունավետությունը,
- վարչական օժանդակությունը և ենթակառուցվածքը.

Աղբյուրը Աուդիտի ձեռնարկ, 2007, Ավստրալիական Համալսարանների Որակի Գործակալության ինտերնետ-կայքից

Գործակալությունները, որոնք հիմնականում հիմնվում են գնահատող խմբի մասնագիտական դատողությունների վրա, պետք է գիտակցեն այն սուբյեկտիվությունը, որ կարող է թափանցել որակի ապահովման գործընթաց: Որակի ապահովման գործակալությունները փորձում են լուծել այս խնդիրը մշակելով գործընկերային գնահատման ուղղորդման համար նախատեսված ձեռնարկներ և ուղեցույցներ:

Ինչպես քննարկվեց նախորդ մոդուլներում, մանրակրկիտ վերապատրաստումների ռազմավարությունը չափազանց կարևոր է վստահելի գործընկերային գնահատում ապահովելու համար: Գործընկերային փորձաքննության խմբի դատողությունների օբյեկտիվությունը բարձրացնելու համար հետաքրքիր մոտեցում է եզրակացությունների կայացումը կոնսենսուսի, այլ ոչ թե քվեարկության միջոցով: Այս դեպքում օբյեկտիվությունն ապահովվում է տարբեր կարծիքների համադրման միջոցով, որի ընթացքում ծայրահեղ տեսակետները չեզոքացվում են: Ընդունվում է այն, ինչին խմբի բոլոր անդամները համաձայն են:

Խմբի կազմը, տարբեր տեսակետներ կիրառելու եղանակները և կարգապահական մոտեցումները նույնպես կարևոր գործոններ են ողջամիտ որոշումների կայացման համար:

Ինչպես պարզվեց վերը ներկայացված քննարկումների արդյունքում, որակի ապահովման գործակալությունները սովորաբար հիմնվում են և բանակական ցուցանիշների, և գործընկերային գնահատման վրա Նրանք պետք է ընտրեն այնպիսի մոտեցում, որը համապատասխան լինի իրենց գործունեության համատեքստին և շրջանակին: Վերը դիտարկված տարբերակները չպետք է դիտվեն որպես հստակ սահմանված լուծումներ Իրականում դրանք կարող են օգտագործվել որոշակի համադրությամբ, քանի որ ունեն տարբեր առավելություններ և թերություններ:

4. Համատեքստին հարմարվելու ճկունություն

Թե ինքնագնահատման, թե արտաքին գնահատման շրջանակներում որակի ապահովման գործակալությունները պետք է լուծեն որակի գնահատման գործընթացի ճկունության խնդիրը: «Համապատասխանություն նպատակին» մոտեցումը այն եղանակներից է, որի շնորհիվ ապահովվում է տեղական համատեքստով պայմանավորված առանձնահատուկ պահանջները հաշվի առնելու ճկունությունը: Ըստ էության, գործակալությունը պետք է իր համար որոշի, թե արդյոք տարբեր ուսումնական հաստատությունների և ծրագրերի համար կարող է օգտագործվել չափորոշիչների և չափանիշների միևնույն համակարգը:

Ինքնագնահատման ճկուն մոտեցումներ

Որակի ապահովման գործակալությունը նախապես կարող է մշակել ուսումնական հաստատությունների և ծրագրերի ինքնագնահատման ընդհանուր շրջանակը: Սակայն մեթոդաբանության զարգացմանը զուգընթաց անհրաժեշտ է կատարելագործել մոտեցումները: Դիտարկվող հարցերից մեկը կարող է լինել «ուսումնական հաստատությունների բազմազանության» վերաբերյալ տեղեկացվածությունը:

Գործակալությունը պետք է նաև ավելի հիմնավոր և օգտակար դարձնի ինքնագնահատումը ուսումնական հաստատությունների համար: Բարձրագույն կրթության ցանկացած համակարգում ուսումնական հաստատություններն ունեն տարբեր բնութագրեր: Օրինակ, դրանք կարող են լինել նոր, հին, մասնագիտացված և/կամ ունիվերսալ, ակտիվորեն զբաղվել գիտահետազոտական աշխատանքներով կամ միայն կողմնորոշված լինել դեպի ուսուցումը: Այս համակարգերում կարևոր հարց է, թե արդյոք ինքնագնահատման ուղենիշների, չափանիշների և ակնկալիքների միևնույն համակարգը կարող է յուրաքանչյուր առանձին իրավիճակում կիրառելի լինել: Սովորաբար գործակալությունները ինքնագնահատման պլանավորման և կազմակերպման գործում չափազանց փոքր ճկունություն են ապահովում: Որոշ գործակալություններ մշակում են տարբեր ուղեցույցներ և ձեռնարկներ տարաբնույթ ուսումնական հաստատություններին օժանդակելու նպատակով: Որոշ դեպքերում նորարարական մոտեցումների միջոցով փորձ է արվում ճկունություն ապահովել:

ԱՄՆ-ում, որտեղ հավատարմագրումը երկար պատմություն ունի, առկա են ինքնագնահատման ճկուն մոտեցումների բազմաթիվ օրինակներ: Մասամբ սա պատասխան է ուսումնական հաստատությունների աճող բազմազանությանը: Մասամբ էլ այն կապված է հավատարմագրման հաճախակի այցելությունների հարուցած դժվարությունների վերաբերյալ ուսումնական հաստատությունների բողոքների հետ: Տարածաշրջանային հավատարմագրման որոշ գործակալություններ առաջարկում են ինքնանա-

վերլուծության (ինքնագնահատման) տարբեր եղանակներ: Օրինակ, Կենտրոնական Նահանգների Բարձրագույն Կրթության Հանձնաժողովն (ԿՆԲԿՀ) առաջարկում է ինքնագնահատման չորս հիմնական մոդել համապարփակ մոդել, առանձնակի կողմնորոշմամբ համապարփակ մոդել, ընտրովի թեմաների մոդել և այլընտրանքային ինքնագնահատման մոդել:

Նոր Անգլիայի Ասոցիացիան նույնպես ճկուն է ինքնագնահատման իր մոտեցումներում: *Ներդիր 16-ը* նկարագրում է, թե ինչպես են ԿՆԲԿՀ-ի երկու մոդելներն ապահովում ինքնագնահատման ճկունություն և ներկայացնում է դրանց օգտակարությունը ԲՈՒՀ-երի համար:

Ներդիր 16. Ինքնագնահատման ճկունություն. ԱՄՆ

Ընտրովի թեմաների մոդել - Այս մոդելը ենթադրում է ավելի մեծ ուշադրություն ուսումնական հաստատության որոշակի, նախապես ընտրված ոլորտների, կառուցվածքային միավորների կամ կողմերի վրա (ինչպես օրինակ ուսումնական ծրագրի գնահատումը): Համապարփակ մոդելի համեմատ, ընտրովի թեմաների մոդելն ավելի նեղ մասնագիտացված է, սակայն ընտրված թեմաները պետք է հնարավորինս ընդգրկեն ամբողջ ուսումնական հաստատությունը չնայած ընտրված թեմաներից դուրս գտնվող ոլորտներին անդրադարձի մակերեսայնությանը:

Ինքնագնահատման այլընտրանքային մոդել - Այս տարբերակից կարող են օգտվել միայն հավատարմագրված ԲՈՒՀ-երը: Հավատարմագրված ուսումնական հաստատությունները կարող են առաջարկել իրենց վերահավատարմագրումը այլընտրանքային մոդելի միջոցով, որը նրանք կարող են քննարկել ԿՆԲԿՀ-ի հետ: Յուրաքանչյուր ուսումնական հաստատություն կարող է ինքնագնահատման այլընտրանքային մոտեցման օգտագործման թույլտվություն խնդրել, բացառությամբ այն հաստատությունների, որոնք իրականացնում են ինքնագնահատում սկզբնական հավատարմագրման նպատակով, կամ որոնք առաջին անգամ են փորձում ստանալ իրենց հավատարմագրման վերահաստատումը: Առավել հաջող դրանից օգտվում են գիտահետազոտական համալսարանները մշակելով ինքնագնահատման այնպիսի մոտեցում, որն անդրադառնում է իր բնույթով ինստիտուցիոնալ որևէ հատուկ թեմայի, սակայն որը կենտրոնանանում է ընթացիկ խնդիրների վրա: Այլընտրանքային մոդելի մեկ այլ մոտեցում կարող է առնչվել ուսումնական հաստատության մասնագիտացված լինելու հետ. օրինակ դա կարող է վերաբերվել արվեստի կամ երաժշտական դպրոցներին, սեմինարիաներին կամ մասնագիտացված ծրագրերով աշխատող այլ ուսումնական հաստատություններին:

Աղբյուր El-Khawas, 2001.

Հավատարմագրման որոշ տարածաշրջանային գործակալություններ ներդրել են հավատարմագրման շարունակմանն ուղղված նախագծեր: Դրանք կարող են դիտվել որպես ինքնագնահատման ճկուն մոտեցման տարբերակներ, չնայած պահանջում են առավել համաձայնեցված ջանքեր և լուրջ ընդգրկվածություն նախագծում: Այդպիսի օրինակ է *Մոդուլ 3-ում քննարկված* ԿՈԿՕ-ը: ԿՈԿՕ -ի միջոցով ուսումնական հաստատությունը հնարավորություն ունի ցույց տալու, որ ինքը բավարարում է Բարձրագույն Կրթության Հանձնաժողովի հավատարմագրման չափանիշներին և ակնկալիքներին: Դա կարող է արվել որոշակի քայլերի հաջորդականության միջոցով, որոնք սովորաբար համահունչ են այն շարունակական գործընթացների հետ, որոնք բնութագրում են, որ կազմակերպությունը ձգտում է բարելավել իր գործունեությունը:

Չափորոշիչների սահմանման և ինքնագնահատման գործընթացի ճկունությունը

Ճկուն լինելու առավել տարածված և արդյունավետ եղանակը չափորոշիչների որակական նկարագրությունն է: Չափորոշիչներից շատերը ուսումնական հաստատություններից պահանջում են տրամադրել որոշակի գործընթաց իրականացնելու համար անհրաժեշտ ռեսուրսների բավարար առկայության փաստեր: Կամ դրանք կարող են պահանջել ուսումնական հաստատություններից ապահովել *համարժեք* հարմարություններ, զարգացնել գիտահետազոտական աշխատանքների *զգալի* մակարդակ կամ օգտագործել *համապատասխան* ուսուցման մեթոդներ: Այնուհետև ուսումնական հաստատության պարտականությունն է ցուցադրելու, որ առկա կարողությունները բավարար են, համարժեք, զգալի և/կամ համապատասխան իրենց աշխատանքները հաջող կազմակերպելու համար: Դա օգնում է ուսումնական հաստատություններին իրոք մտահոգվելու իրենց փաստացի գործունեությամբ: Մասնավորապես, այն դրդում է դիտարկելու, թե արդյոք իրենց ռեսուրսները իրենց աշխատանքի ոճն իրոք այն է, ինչն իրենց անհրաժեշտ է:

Իհարկե, որպեսզի այս մոտեցումն արդյունավետ լինի, ուսումնական հաստատությունները պետք է տրամադրեն համապատասխան քանակական և որակական տեղեկատվություն: Այս տեղեկատվությունը նրանց կօգնի ցույց տալու, որ իրենց գործունեությունը ճիշտ է կազմակերպված, գոհացնելու արտաքին գնահատող խմբին և գործակալությանը (տե՛ս *Ներդիր 17*):

ՀԱՀ-ը ուսումնական ծրագրերի գնահատման համար օգտագործում է որակական չափորոշիչներ: Ուսումնական ծրագրերից ակնկալվում է քանակական տվյալների և որակական փաստերի տրամադրում (ներառյալ դասախոսական կազմի, ուսանողների, շրջանավարտների և գործատուների կարծիքները) սահմանված ակնկալիքների բավարարման վերաբերյալ: Օրինակ կարելի է բերել հետևյալը

Մարդկային ռեսուրսներ
Հաստատությունը պետք է հիմնավորի, որ ուսումնական ծրագիրը համալրված է համապատասխան դասախոսական անձնակազմով (բավարար քանակով, նվիրվածությամբ և որակավորմամբ), որպեսզի կարողանա իրականացնել իր նպատակներով սահմանված բոլոր գործառույթները: Հաստատությունը պետք է ունենա դասախոսական և վարչական անձնակազմի ընտրության, աշխատանքի ընդունման, վերապատրաստման ու գնահատման հստակ և ձևավորված չափանիշներ:

Այս ձևակերպմանը հաջորդում են ավելի մանրամասն նկարագրություններ ներառյալ այն մասին, թե ինչ է նշանակում «բավարար որակավորումը»:

Աղբյուրը Lemaître, 2005

Չափորոշիչների սահմանման ճկունության անհրաժեշտության կոնկրետ օրինակ է այն, որ իրավագիտության ուսումնական ծրագրի համար դասախոսների անհրաժեշտ քանակը կամ լրիվ դրույքով աշխատողների տոկոսը կարող է ամբողջովին անհամապատասխան լինել ճարտարագիտության կամ ատամնաբուժական ծրագրի պարագայում: Մյուս կողմից, այն ինչ բավարար է միայն կրթական հաստատության համար, կարող է լիովին անբավարար լինել գիտահետազոտական բարձրագույն ուսումնական հաստատության համար:

Գնահատման շրջանակի ճկունություն

Եթե գործակալության գործունեության շրջանակն ընդգրկում է տարբեր տիպի ուսումնական հաստատություններ, որակի վերաբերյալ բանավեճերում հաճախ բարձրացվում է հետևյալ հարցը. «ինչպես կարող է չափորոշիչների միևնույն համախումբը կիրառելի լինել բոլոր ուսումնա-

կան հաստատությունների և ծրագրերի համար»: Որոշ գործակալություններ ինստիտուցիոնալ բազմազանությունը հաշվի առնելու նպատակով հիմնվում են գործընկերային գնահատման վրա: Ուրիշներն էլ այս խնդիրը հաջողությամբ լուծում են տարբերակված շրջանակների մշակման միջոցով: *Ներդիր 18-ը* ներկայացնում է գնահատման չափանիշների մի օրինակ, որտեղ ուսումնական հաստատության տիպից կախված այդ չափանիշներին տարբեր տեսակարար կշիռ է տրվում:

Ներդիր 18. Ինստիտուցիոնալ համատեքստին հարմարվելու ճկունություն. (ԳՀԱԽ)

Հնդկաստանում գործում է բարձրագույն կրթության բազմազան և բարդ համակարգ, որտեղ ուսումնական հաստատությունները միմյանցից տարբերվում են իրենց կառավարման բնույթով, ֆինանսավորման ձևերով, ուսումնական ծրագրի արդիականացման համար ունեցած ազատությամբ, գտնվելու վայրով, թիրախային խմբով, որին նրանք ծառայում են, առաքելությամբ և այլն: Քանի որ յուրաքանչյուր տիպի ուսումնական հաստատության համար անհնար է մշակել առանձին շրջանակ, հաստատությունների էական տարբերությունները հաշվի են առնվում երեք հիմնական խմբերում դասակարգման միջոցով: Այդ խմբերն են համալսարանները և համալսարանական մակարդակի հաստատությունները, ինքնավար քոլեջները, մասնաճյուղ/կից քոլեջները: ԳՀԱԽ-ի մեթոդաբանությամբ այս խմբերի միջև տարբերությունները երկու մակարդակով են հաշվի առնվում գնահատման տարբերակված շրջանակի և չափանիշների կշիռների տարբերակման միջոցով: Տարբերակված շրջանակի բացատրությունը ներկայացվում է ԳՀԱԽ-ի կողմից ուսումնական հաստատությունների յուրաքանչյուր խմբի համար առանձին մշակված ուղենիշներ պարունակող ձեռնարկներում:
Ի նկատի ունենալով ուսումնական հաստատությունների գործունեության կազմակերպման և նպատակների տարբերությունը, չափանիշներին տրվել են տարբեր կշիռներ, ինչպես ներկայացված է ստորև:

Չափանիշ	Համալսարան	Մասնաճյուղ/կից քոլեջ	Ինքնավար քոլեջ
Ուսումնական ծրագրի հետ կապված ասպեկտներ	15	10	15
Դասավանդում-ուսումնառություն և գնահատում	25	40	30
Գիտահետազոտական	15	05	10

ՄՈԴՈՒԼ 4 - Որակի ըմբռնում և գնահատում

աշխատանքներ և խորհրդատվություն			
Ենթակառուցվածքներ և ուսուցման ռեսուրսային բազա	15	15	15
Ուսանողների առաջխաղացում և օժանդակություն	10	10	10
Կազմակերպում և կառավարում	10	10	10
Սպորտային գործունեություն	10	10	10

Ինչպես տեսնում ենք, առաջին երեք չափանիշների կշիռները տարբերվում են ըստ տարբեր տիպի ուսումնական հաստատությունների: Հաշվի առնելով ուսումնական ծրագրերի նախագծման գործում մասնաճյուղ քոլեջների սահմանափակ ազատությունը կշիռն ընդամենը 10 է, մինչդեռ դասավանդմանը, որն ամբողջովին հաստատության իրավասության ներքո է, տրվել է 40 միավոր: Նմանապես, քանի որ մասնաճյուղ քոլեջների մեծ մասը առանց գիտահետազոտական մեծ ներուժի բակալավրական քոլեջներ են, որպես գիտահետազոտական աշխատանքներ սկզբնավորելու միջոց մասնաճյուղ քոլեջների «Գիտահետազոտական աշխատանքներ և խորհրդատվություն» չափանիշին տրվել է 5 միավոր կշիռ: Մյուս կողմից, հաշվի առնելով գիտահետազոտական կողմնորոշումը, որն ակնկալվում է ինքնավար քոլեջներից, այդ չափանիշի կշիռը բարձրացվել է մինչև 10 միավորի:

Եթե վերը բերված օրինակում կշիռները տարբերվում են ըստ ուսումնական հաստատության տիպի, ապա *Երրորդ 14-ում ներկայացված* ՀԱԽ-ի օրինակում կշիռները տարբերակվում են ըստ ուսումնական ծրագրին համապատասխան անկախ ուսումնական հաստատության տիպից: Մեկ այլ օրինակ է Կոլումբիայի Հավատարմագրման ազգային խորհրդի կողմից տարբեր կշիռների օգտագործումը հաստատության գիտահետազոտական ուղղվածությունը հաշվի առնելու համար:

Աղբյուր Stella, 2002

(Նշում: ԳՀԱԽ-ը փոքր-ինչ վերանայել է ընդհանուր գնահատականները: Օգտագործելով նմանատիպ հիմնավորում ԳՀԱԽ-ը շարունակում է տարբերակված կշիռներ կիրառել, սակայն առավելագույն ընդհանուր 100 միավորից անցում է կատարել ընդհանուր 1000 միավորին: Գնահատականները բաշխվում են վերը ներկայացված նույն կշիռներով: Տե՛ս www.naacindia.org):

Գործընկերներ փորձագետների դերը գնահատումը համատեքստին համապատասխանեցնելու գործում

Յուրաքանչյուր հաստատություն ունի յուրօրինակ բնութագիր: Իրականում գործակալությունը չի կարող հաշվի առնել բոլոր տարբերությունները մշակելով գնահատման տարբերակված շրջանակներ: Սակայն գործակալությունները տարբերությունները համարում են կարևոր խնդիր և դրա վրա են հրավիրում գնահատողների ուշադրությունը: Վերապատրաստման և ուղղորդման ծրագրերում հաճախ է քննարկվում համատեքստին գնահատման համապատասխանեցման խնդիրը:

Ավելին, «ինստիտուցիոնալ բազմազանության» և «համատեքստին համապատասխանեցման» խնդիրների հետ առնչվող գործակալությունները մեծ զգուշությամբ են ձևավորում գնահատող խմբերի կազմը: Նրանք ընտրում են այնպիսի գնահատողների, որոնք թիմ կբերեն համապատասխան փորձառություն և գիտելիքներ: Դա օգնում է խմբին հասկանալու համատեքստը առանց վտանգելու որակի ապահովման շրջանակը և գործակալության մոտեցումների հետևողականությունը: Եթե գնահատողները չեն տարբերում «համատեքստի ըմբռնումը» և «անարդյունավետության պատրվակները», ապա գործակալության վստահելիությանը և գնահատման օբյեկտիվությանը կարող է վնաս հասցվել: Գործընկերային գնահատման միջոցով ճկունություն ապահովելու ցանկության դեպքում որակի ապահովման գործակալությունները պետք է ունենան նախապատրաստական համապատասխան ծրագրեր և երաշխիքներ:

Վերը ներկայացված քննարկումներում դիտարկվեցին որակի ապահովման տարբեր մոտեցումները: Յուրաքանչյուր մեթոդ ունի իր առավելություններն ու թերությունները կախված նրանից, թե որտեղ է այն օգտագործվում, ինչպես և ինչ նպատակով է այն իրականացվում: Համարժեք ընտրություն կատարելու համար շատ կարևոր է տարբեր գործոնների մանրամասն վերլուծությունը: Ներկայացված քննարկումները և իրական դեպքերի լուսաբանումները կարող են օգտակար լինել գոյություն ունեցող տարբերակների վերաբերյալ պատկերացումներն ընդլայնելու համար:

Սակայն որևէ մոտեցում չի կարող ձեր երկրի խնդիրների համար կատարյալ լուծում հանդիսանալ: Իրականում յուրաքանչյուր ռազմավարություն պետք է համապատասխանի կիրառման համատեքստին: Այնուամենայնիվ, որակի ապահովման ռազմավարության մշակման ընթացքում այլ երկրների փորձի դիտարկումը միշտ էլ օգտակար է: Այս մոդուլում ներկայացված քննարկումները պետք է դիտարկել հենց այդ տեսակետից:

Վարժություն 4

1. Համացանցում փնտրեք և ուսումնասիրեք որակի ապահովման գործակալությունների կողմից որակի չափորոշիչների գնահատման համար օգտագործվող տարբեր մոտեցումները:

2. Մոտեցումների ո՞ր զուգակցումը կիրառելի կլինի ձեր երկրում:

3. Խորհեք ձեր երկրում որակի ապահովման գործակալությունների / ծրագրերի համար պահանջվող ճկունության մասին:

4. Վերլուծեք որակի ապահովման գործակալությունների կողմից օգտագործվող հավասարակշռման միջոցները, երբ վերջիններս ավելի շատ հենվում են գործընկերների մասնագիտական դատողությունների վրա և խորհեք, թե ինչպիսի միջոցներ են անհրաժեշտ ձեր երկրում:

Յուրացված դասեր

Դաս 1. Որակի ըմբռնումները կախված են ենթատեքստից: Գոյություն չունի որակի մեկ միասնական սահմանում: Սակայն կախված որակի ապահովման նպատակից՝ գործակալությունը պետք է ամրագրի «որակ» հասկացության ընդունելի սահմանում:

Որակի ապահովման գործակալությունները ունեն որակ հասկացության տարբեր ըմբռնումներ՝ պայմանավորված հիմնականում իրենց գործունեության ենթատեքստով և մանդատով:

Բարձրագույն կրթություն տրամադրող հաստատությունները կանոնակարգող և կասկածելի հաստատություններին հետևող գործակալության համար որակյալ լինել կնշանակի համապատասխանել կրթական հաստատությունից դուրս սահմանված չափորոշիչներին: Ինստիտուցիոնալ ինքնավարության առկայությամբ լավ կանոնակարգվող համակարգերում որակի ապահովման գործակալությունը կարող է ունենալ որակի այլ ընկալում:

Քանի որ «որակը» ընդհանրական և հարաբերական հասկացություն է, որը շահառուները տարբեր կերպ են մեկնաբանում, ապա շատ դժվար է տալ այդ հասկացության միասնական սահմանումը: Որքան ավելի շատ են փորձում հստակեցնել այդ հասկացությունը, այնքան ավելի քիչ տեղ են թողնում նորարարությունների և ստեղծագործական մոտեցման համար: Կայացած համակարգերում, որտեղ ինստիտուցիոնալ ինքնավա-

ությունը ի զորու է բարելավել որակը նորարարությունների և ստեղծագործ մոտեցման միջոցով այս խնդիրը չի ծագում: Այնուամենայնիվ, պետք չէ թերագնահատել հաշվետվողականության վերաբերյալ մտահոգությունները: Անհրաժեշտ է ունենալ դրա գնահատման արդարացի և վստահելի միջոցներ: Այդ իսկ պատճառով, որակի ապահովման նպատակով որակի սահմանումը պահանջում է ազգային ենթատեքստի և որակի ապահովման գործակալության մանդատի համապարփակ դիտարկում: ·

Անհրաժեշտ է նաև հստակ սահմանել, թե ինչպես ընկալել որակը որևէ յուրահատուկ ենթատեքստում: Եթե այդպիսի հստակություն չկա, ապա սկսում են բազմաթիվ ենթադրություններ կատարվել: Դրանց արդյունքում կարող են ծագել մի շարք հակասական տարրեր: Դրանք կարող են վտանգել ինքնագնահատման, արտաքին գնահատման կամ որակի ապահովման սահմանման նույնիսկ ամենաարդյունավետ ջանքերը:

Դաս 2. Որակի ապահովման քննարկումների ժամանակ անհրաժեշտ է հստակ սահմանել «ցուցանիշներ», «չափորոշիչներ» և «օրինակելի ցուցանիշներ» հիմնական տերմինները: Սա անհրաժեշտություն է, չնայած որակի ապահովման գործակալությունները այդ տերմինները հաճախ օգտագործում են միևնույն երևույթը անվանակոչելու համար: Հստակ սահմանումներ տալուց հետո պետք է ապահովել այդ տերմինների հետևողական օգտագործումը:

Որակի ապահովման գործակալությունները որակի երաշխավորման իրենց ընթացակարգերը մշակում են՝ ելնելով որակի իրենց ըմբռնումից: Այդ ընթացքում դրանք օգտագործում են բազմաթիվ տերմիններ, օրինակ՝ «վիճակագրական տվյալներ», «ցուցանիշ», «չափանիշ», «չափորոշիչ» և «օրինակելի ցուցանիշ»: Որակի ապահովման գործակալություններն այս տերմինները բավականին անկանոն են օգտագործում: Օրինակ՝ «ցուցանիշներ», «արդյունավետության ցուցանիշներ» և «որակի ցուցանիշներ» տերմինները օգտագործվում են փոխարինաբար: Նույնը վերաբերում է նաև «չափանիշներ», «չափորոշիչներ» և «օրինակելի ցուցանիշներ» տերմիններին: Նույն տերմինը տարբեր գործակալություններ օգտագործում են տարբեր հասկացություններ և միջոցներ անվանակոչելու համար: Ստորև ներկայացված սահմանումները կարող են ընդհանուր առմամբ ընդունելի լինել որակի ապահովման համատեքստում.

- Վիճակագրություն - համակարգված ձևով հավաքագրված վիճակագրական կամ այլ տվյալներ:
- Ցուցանիշ - որևէ բան արտահայտող կամ ազդանշանող տվյալ կամ վիճակագրություն:
- Կատարողականի ցուցանիշ - գործունեության կատարողականի որևէ կողմը բնութագրող տվյալ:

- Չափանիշ - որևէ բանի կողմ կամ տարր, որով դատողություն են անում այլ բանի մասին:

- Չափորոշիչ - սկզբունքների, կողմերի կամ որևէ տարրի սահմանում, որին պետք է համապատասխանել և որով որոշվում է որակը:

- Օրինակելի ցուցանիշ - հիմք, որի հետ համեմատվում են գնահատման համար:

Դաս 3. Որոշ համակարգերում որակյալ լինել նշանակում է համապատասխանել արտաքին մարմնի կողմից սահմանված չափորոշիչներին: Գոյություն ունեն նաև համակարգեր, որտեղ հաստատության նպատակները և խնդիրները տվյալ հաստատության որակի գնահատման գործընթացի սկզբնակետն են: Որոշ համակարգեր համակցում են ներկայացված երկու մոտեցումները: Այս դեպքում հաստատությունը կամ ծրագիրը պետք է բավարարեն արտաքին մարմնի կողմից սահմանված չափորոշիչներին: Միևնույն ժամանակ, դրանք դա կարող են ինքնուրույն անել՝ առաջ քաշելով սեփական սկզբունքներն ու գերակայությունները:

Երբ համապատասխանությունը նորմերին, հաշվետվողականությունը, կանոններին և կանոնակարգմանը հետևելը դառնում են գերիշխող, ապա հաստատությունները պետք է իրենց որակը ապացուցեն՝ համեմատվելով նախապես սահմանված չափորոշիչների հետ: Այս չափորոշիչները կարող են լինել քանակական և որակական:

Տարբեր մասնագիտական ոլորտների ծրագրերի հավատարմագրման քաղաքականության հիմքում ընկած չափորոշիչները վերաբերում են լավագույն ինստիտուցիոնալ ընթացակարգերին և գործնական ուղղվածություն ունեցող փորձին: Այդ գործակալությունները որակը մեկնաբանում են շրջանավարտների կողմից մասնագիտական պարտականությունները ստանձնելու պատրաստվածության տեսանկյունից: Վերջին տարիներին բազմաթիվ որակի ապահովման գործակալություններ մեծ ուշադրություն են դարձնում հմտությունների վրա հիմնված որակի գնահատման չափորոշիչներին:

Ի տարբերություն այս մոտեցման, «համապատասխանություն նպատակին» որակի ըմբռնումը սկզբնակետ է համարում հաստատության նպատակները: «Համապատասխանություն նպատակին» կամ չափորոշիչների վրա հիմնված մոտեցումների որդեգրումը կանխորոշում է որակի ապահովման գործակալությունների աշխատանքի ընդհանուր մոտեցումները: Օրինակ, աուդիտը բնականաբար հիմնված է «համապատասխանություն նպատակին» մոտեցման վրա, իսկ հավատարմագրումը՝ չափորոշիչների: «Համապատասխանություն նպատակին» մոտեցումը կիրառելի է

այն համակարգերում, որտեղ այլ մեխանիզմներ երաշխավորում են, որ հաստատությունները կամ ծրագրերը բավարարում են նախապես սահմանված կամ նվազագույն չափորոշիչներին: Այն նաև արդյունավետ է լավ ինքնակարգավորման մեխանիզմներ ունեցող համակարգերում, որտեղ խթանվում է ինստիտուցիոնալ բազմազանությունը (ի հակադրություն չափորոշիչներին համապատասխանության մոտեցման) և ԲՈՒՀ-երը ունեն մեծ ինքնավարություն:

«Համապատասխանություն նպատակին» մոտեցումը նաև ենթարկվում է որոշակի քննադատության: Դրանք հիմնված են այն ենթադրության վրա, որ այդ մոտեցումը թուլացնում է «նպատակի համապատասխանությունը»: Միաժամանակ, կարելի է պնդել, որ դժվար է տարանջատել այդ երկու մոտեցումները («համապատասխանություն նպատակին» և «նպատակի համապատասխանություն»): Գործնականում հնարավոր չէ ունենալ «համապատասխանություն նպատակին» մոտեցման վրա հիմնված որակի բացարձակ ըմբռնում:

Գոյություն ունեն անվիճելի ազգային զարգացման որոշ պահանջներ, որոնց շրջանակում ԲՈՒՀ-երը սահմանում են իրենց առաքելությունը: Այս հանգամանքը հոգ է տանում նպատակների համարժեքության մասին, նույնիսկ եթե որակի ապահովման գործակալությունը գործում է «համապատասխանություն նպատակին» մոտեցման շրջանակներում:

Բազմաթիվ գործակալություններ օգտագործում են «համապատասխանություն նպատակին» և «նպատակի համապատասխանություն» մոտեցումների զուգակցում:

Դաս 4. Որոշ գործակալությունների համար որակի ապահովում նշանակում է առնվազն սահմանված նվազագույն մակարդակի ձեռքբերում: Մյուսները կարող են որակը դիտարկել միայն որպես համապատասխանություն որակի բարձր չափորոշիչներին (կամ հաջողված փորձառությանը): Գրեթե բոլոր համակարգերում առկա են որակի նվազագույն մակարդակը և որակի բարձր չափորոշիչներին համապատասխանություն ապահովող փոխլրացնող մեխանիզմներ:

Որոշ որակի ապահովման գործակալություններ նպատակ ունեն երաշխավորելու միայն նվազագույն պահանջների բավարարումը հաստատությանը որևէ կարգավիճակ շնորհելիս: Նմանատիպ մոտեցումները գործում են ելնելով համապատասխանության նկատառումներից: Որակի գնահատման արդյունքները ազդում են այս կամ այն հաստատության գործունեության թույլտվության կամ արգելման վրա:

Բարձրագույն կրթության և տարբերակման և սեփականաշնորհման համատեքստում զարգացող երկրների մեծամասնությունն ունի ցածրորակ ԲՈՒՀ-երի խնդիր: Դեռևս գոյություն չունի ցածրորակ ԲՈՒՀ-երի դեմ պայքարելու համակարգ: Այսպիսի դեպքերում նվազագույն չափորոշիչ-

ները առաջնահերթություն են: Այս մոտեցումը կոչվել է «որակի հսկողություն»:

Ի տարբերություն այս մոտեցման, նույն երկրում կարող են գոյություն ունենալ այլ նախաձեռնություններ, որոնք ուղղված են կրթական «հաստատությունների բարելավմանը»: Սակայն, այդ նախաձեռնությունները կարող են կանոնակարգման մոտեցման մաս չկազմել: Այս դեպքում որակի ապահովման գործակալությունները սահմանում են «համապատասխանություն նպատակին» մոդելի վրա կենտրոնացած չափորոշիչներ և հաստատություններից պահանջում են զարգացնել ինքնակարգավորման ուժեղ կարողություն: Փաստորեն, դրանք գնահատում են հաստատության կողմից իր ուժեղ և թույլ կողմերը հայտնաբերելու և բարելավման իրատեսական ու չափելի ծրագիր մշակելու կարողությունը:

Որոշ գործակալություններ նաև սահմանել են բարձր որակի, այլ ոչ թե նվազագույն պահանջների բավարարման չափորոշիչներ:

Ընդհանրապես, համակարգերի մեծամասնությունը զուգորդում է վերը դիտարկված երկու մոտեցումները, երբ որոշ մեխանիզմներ ապահովում են նվազագույն պահանջների կատարումը (կանոնակարգող մարմնի վերահսկողության ներքո), իսկ մյուսները՝ ապահովում շարունակական բարելավումը:

Դաս 5. Որակի գնահատման ոլորտները որակի ապահովման գործակալությունների մոտ ընդհանուր առմամբ նույնն են, սակայն որակի տարբեր կողմերին վերաբերող հարցերի շեշտադրումը, շրջանակը և գնահատման խորությունը տարբերվում են:

Որակի ապահովման գործակալությունների կողմից գնահատման ընթացքում ուսումնասիրվող ոլորտները կամ կողմերը ընդհանուր առմամբ համընկնում են: Գործնականում գոյություն ունի համաձայնություն որակի գնահատման համար առանցքային համարվող ոլորտների հարցում: Սա նույնիսկ ճշմարտացի է տարբեր ազգային համատեքստում գործող և որակի ապահովման տարբեր միավորներ ունեցող գործակալությունների համար:

Այդ առանցքային ոլորտներն են՝ ուսումնական ծրագրերը, ուսանողները, դասախոսական անձնակազմը, որակի ներքին հսկողությունը, ենթակառուցվածքները, գիտահետազոտական աշխատանքները, հասանելիությունը, կազմակերպումը և ղեկավարումը:

Երբ հավատարմագրվում է հաստատությունը, ապա ուսումնական ծրագրերի գնահատումը դիտարկվում է առավելապես հաստատության ընդհանուր քաղաքականության և գործունեության ենթատեքստում: Առանձին ծրագրի հավատարմագրման ժամանակ առավել մեծ ուշադրություն է դարձվում այդ ծրագրի որակական կողմին:

Հաստատության հավատարմագրման ժամանակ կարող են ուսումնասիրվել մեկ կամ մի քանի ծրագրեր՝ գնահատողների եզրակացությունների շրջանակը ընդլայնելու համար: Այս դեպքում նպատակը

ուսումնական ծրագրի որակական կողմի վերաբերյալ դատողություններ անելը չէ, այլ նպատակ ունի ընդհանուր եզրակացության հանգել հաստատության կողմից առաջարկվող ծրագրերի վերաբերյալ: Այլ կերպ ասած, որակի ապահովման համար ուսումնասիրվող ոլորտները նույնն են որակի ապահովման գրեթե բոլոր նպատակների համար, սակայն տարբերվում են ուսումնասիրության շրջանակի և առանձին տարրերի վրա շեշտադրմամբ:

Բազմաթիվ համակարգերում արդեն գիտակցում են, որ բավարար չէ կենտրոնանալ կրթության մուտքային գործոնների և գործընթացների վրա: Դրանք հեշտ չափելի են և ներկայացնում են որակի ապահովման գործակալությունների մեծամասնության կողմից կիրառվող չափորոշիչների և չափանիշների մեծամասնությունը:

Այդուհանդերձ, անհրաժեշտ է նաև կենտրոնանալ ելքային ցուցանիշների և արդյունքների վրա: Սա հանգեցրեց նոր ցուցանիշների մշակմանը՝ առաջադիմություն, ուսումնառությունը լքողների տոկոս, ավարտողների տոկոս, գբաղվածության ցուցանիշներ, շրջանավարտների բավարարվածություն, գործատուների բավարարվածություն: Այս ցուցանիշները շատ ավելի դժվար գնահատելի են, սակայն ապահովում են հաստատության կամ կրթական ծրագրի հասարակության վրա ունեցած ազդեցության ավելի լավ գնահատական:

Դաս 6. Որակի ապահովման գործում կարևորագույն տարրերից է գնահատման ուղեցույցի կամ շրջանակի օգտագործումը, որի հիման վրա գործակալությունը որոշումներ է կայացնում: Գործակալությունները դա տարբեր կերպ են իրականացնում: Մի մասը մշակում են չափորոշիչներ և չափանիշներ, իսկ մյուսները՝ ցուցանիշների մի ամբողջություն: Կան գործակալություններ, որոնք սահմանում են օրինակելի ցուցանիշներ: Որակի ապահովման գործակալությունները տարբեր չափով են օգտագործում քանակական գնահատականները և մասնագիտական դատողությունները: Քանակական գնահատականների և գործընկերային գնահատման հավասարակշռված օգտագործումը առանց գնահատման անաչառության նվազեցման էական է:

Որակի ներքին ապահովման ուժեղ մեխանիզմներ ունեցող կայացած համակարգերը ավելի շուտ հենվում են իրենց իսկ կողմից ձևավորած օրինակելի ցուցանիշների վրա: Այդպիսի համակարգերում, ավելի բարձր արդյունավետության հասնելը և գործընկերային գնահատականը կենտրոնական նշանակություն ունեն որակի գնահատման շրջանակում:

Զարգացման փուլում գտնվող համակարգերում կարող են լինել հավշետվողականության մտահոգություններ՝ հիմնական ֆինանսավորման և ԲՈՒՀ-երի ինքնաբարելավման հետ կապված: Այսպիսի դեպքերում որակի ապահովման գործակալությունները զգուշորեն օգտագործում են և քանակական ցուցանիշները, և գործընկերային գնահատումը:

Երբ կարևորվում է հետևողականությունը, համապատասխանությունը կամ առկա է համաձայնություն կատարողականի սպասվող ցուցանիշների վերաբերյալ, ապա որակի ապահովման գործակալությունները հակված են սահմանել նվազագույն մակարդակի չափորոշիչներ: Հետագայում այդ չափորոշիչները օգտագործվում են որպես որակի ապահովման շրջանակ: Սա ենթադրում է, որ հաստատությունները որակի ապահովման գործակալության չափորոշիչներին համապատասխանությունը ապացուցելու համար պետք է տրամադրեն համարժեք քանակական տվյալներ:

Մյուս կողմից, շատ որակի ապահովման գործակալություններ չեն ստուգում հաստատության համապատասխանությունը չափորոշիչներին: Նրանք նաև չեն սահմանում հստակ նորմեր: Այդ գործակալությունները կարծում են, որ հստակ սահմանված նորմերը դառնում են ոչ արդյունավետ՝ խոչընդոտելով «ինստիտուցիոնալ բազմազանությանը» և «համապատասխանությունը նպատակին» մոտեցմանը: Սա չի նշանակում, որ չափորոշիչներին համապատասխանելը կարևոր չէ, այլ պարզապես ցույց է տալիս, որ կան համապատասխանությունը ապահովող այլ մեխանիզմներ: Հենց որ հաստատությունը բավարարում է նվազագույն պահանջներին, որակի ապահովման գործակալությունները սկսում են դիտարկել, թե որքանով է արդյունավետ սեփական նպատակները իրականացրել տվյալ ԲՈՒՀ-ի գործունեությունը: Այստեղ շատ կարևոր է հաշվի առնել բազմազանությունը: Բացի այդ, զուտ քանակական գնահատականների վրա հենվելը կարող է անօգուտ լինել:

Չափորոշիչների սահմանված չլինելը չի նշանակում, որ որակի ապահովման գործակալությունը դրանք չի կարևորում: Նույնիսկ այն գործակալությունները, որոնք շեշտադրում են «համապատասխանություն նպատակին» մոտեցումը որոշակի ձևակերպումներով ներկայացնում են, թե ինչ նկատի ունեն: Այդ գործակալությունները նաև տեղեկատվություն են տրամադրում, թե ինչպես գնահատել տվյալ հաստատության գործունեության համապատասխանությունը իր նպատակին:

Դաս 7. Որակի ապահովման գործակալությունը կարող է սկզբում մշակել հաստատությունների և ծրագրերի ինքնագնահատման ընդհանուր շրջանակ, սակայն մեթոդաբանության զարգացմանը զուգահեռ պետք է նաև լրամշակի իր մոտեցումները: Որակի ապահովման գործակալության դիտարկման հնարավոր հիմնախնդիրներից են «ինստիտուցիոնալ բազմազանության» վերաբերյալ իրազեկման բարձրացումը և հաստատությունների համար ինքնագնահատման նպատակայնությունն ու օգտակարության մեծացումը:

Որակի ապահովման գործակալությունները որակի գնահատման ժամանակ պետք է նաև անդրադառնան ճկունության խնդրին: Այն անհրաժեշտ է և ինքնագնահատման, և գնահատման շրջանակի համար:

«Համապատասխանություն նպատակին» մոտեցումը տեղական պայմանները հաշվի առնելու ուղիներից մեկն է: Առաջին հերթին, գործակալությունը պետք է որոշի, թե արդյոք կարող է տարբեր հաստատությունների ու ծրագրերի համար կիրառել չափորոշիչների և չափանիշների նույն համախումբը:

Բարձրագույն կրթության բոլոր համակարգերում հաստատությունները միմյանցից տարբերվում են: Դրանք կարող են լինել կողմնորոշված դեպի հետազոտությունները կամ դասավանդումը, նոր, հին, մասնագիտացված և/կամ բազմապրոֆիլ: Այսպիսի համակարգերում ինքնագնահատման համար ուղեցույցների, չափանիշների և սպասումների նույն համախմբի կիրառումը խնդրահարույց է: Ընդհանուր առմամբ, որակի ապահովման գործակալությունները ինքնագնահատման պլանավորման և կազմակերպման համար սահմանափակ ճկունություն են ապահովում:

Կան նաև օրինակներ, երբ նորարարական մոտեցումները մեծացրել են գործընթացների ճկունությունը: Սա կարող է արվել նաև առկա ուղեցույցների և չափանիշների ճկուն կիրառման միջոցով: Այս դեպքերում հաճախ օգտագործվում են «ընդունելի», «համապատասխան» և «բավարար» բառերը: Բացի այդ, հաստատություններից պահանջում են ներկայացնել սահմանված պահանջներին բավարարելու ապացույցներ, իսկ գնահատողները հետագայում գնահատում են հաստատության ձևակերպումների իսկությունն ու ճշգրտությունը:

Հետևյալ քայլերը էական են երաշխավորելու համատեքստին հարմարվելը՝ (ա) գնահատողների վերապատրաստում, որպեսզի նրանք կարողանան հաշվի առնել համատեքստը առանց գնահատման անաչառությունը վտանգելու, (բ) այնպիսի գնահատողների ընտրություն, ովքեր հասկանում են համատեքստի կարևորությունը՝ չհեռանալով որակի գնահատման շրջանակից և (գ) համապատասխան պաշտպանական միջոցների ներդրում:

Գրականություն

Australian Universities Quality Agency (AUQA) No date *Audit manual* Available at. www auqa.edu.au.

Arcelo, A A 2003. *In pursuit of continuing quality in higher education through accreditation: the Philippine Experience* Paris: IIEP-UNESCO

Bottrill, K V, Borden, V M H, *Performance indicators : history, definitions, and methods*. New Direction for Institutional Research

CNAP No date. *Handbook for self-assessment* Available at www cnap cl (in Spanish)

Commonwealth Higher Education Management Service *1998. Benchmarking in higher education: an international review* London CHEMS Available at www chems org

El-Khawas, E 2001 *Accreditation in the United States: origins, developments and future prospects* Paris IIEP-UNESCO.

Davis, D 1996 *The real world of performance indicators: a review of their use in selected countries*. London: CHEMS

Green, D. 1994 *What is quality in higher education?* Buckingham SRHE, Open University Press

Harvey L, Green D 1993 *Defining quality* In :" Assessment and Evaluation in Higher Education",*18*(1)

Kozma, T 2003 *Accreditation in the higher education system in Hungary: a case study for international comparison.* Paris: IIEP-UNESCO

Lemaître, M J 2005 *Between privatization and state control: Chile's experience of regulating a widely privatized system through quality assurance.* Paper presented at the IIEP Policy Forum on Accreditation and the Global Higher Education Market, Paris, France, 13-14 June, 2005.

Liston, C. 1999 *Managing quality and standards* Buckingham, UK: Open University Press

McKinnon *et al* 2000 *Benchmarking: a manual for Australian universities.* Canberra Department of Education, Training and Youth Affairs

Naidoo, P, Singh, M 2005 *In the aftermath of liberalization: designing a common framework for public and private providers to serve national development goals: South Africa* Paper presented at the IIEP Policy Forum on Accreditation and the Global Higher Education Market, Paris, France, 13-14 June 2005

Oxford English Dictionary (OED) 2006 Oxford University Press Available at http //dictionary oed com/

Phelps, M 2001 *Accreditation and the quality assurance system for higher education* TA-3500-PHI: Education Sector Development Programme Asian Development Bank; World Bank.

Pirsig, R M 1974. *Zen and the art of motorcycle maintenance: an inquiry into values* New York: William Morrow.

Revelo Revelo, J.; Augusto Hernandez, C. 2003. *The national accreditation system in Columbia: experiences from the National Council of Accreditation (CNA)*. Paris: IIEP-UNESCO.

Stella, A. 2002. *External quality assurance in Indian higher education: case study on the National Assessment and Accreditation Council (NAAC)*. Paris: IIEP-UNESCO.

Stella, A. 2004. *Quality assurance mechanisms in higher education in the Asia-Pacific.* Desk study overview commissioned by the Higher Education Division of UNESCO, Paris

Woodhouse, D. 2006. *Quality = Fitness for Purpose (FFP): definition for all seasons*. Paper presented at the APQN Conference on Cooperation in Quality Assurance, Shanghai, 1-4 March, 2006

UNESCO 2002 Report of the Experts meeting on indicators of quality and facilitating academic mobility through quality assurance agencies, UNESCO-Bangkok and National Assessment and Accreditation Council, India.

Համացանցային ռեսուրսներ

All India Council for Technical Education (AICTE) web site, India: www aicte.ernet in

Australian Universities Quality Agency (AUQA) web site: www.auqa edu au

Canadian Institute of Chartered Accountants (CICA) web site, Canada: www cica.ca

Comisión Nacional de Acreditación web site, Chile. www.cnap cl

Commonwealth Higher Education Management Service (CHEMS) web site· www.chems.org

Council on Higher Education (CHE) web site, South Africa· www.che.ac.za.

Council on Higher Education Accreditation (CHEA) web site, USA: www.chea org

Higher Education Funding Council ·of England (HEFCE) web site, UK: www hefce.ac uk

International Network for Quality Assurance Agencies in Higher Education (INQAAHE) web site· www.inqaahe nl

Middle States Commission on Higher Education, USA www msche.org,

National Assessment and Accreditation Council (NAAC) web site, India www.naacindia.org.

National Board of Accreditation web site, India: www.nba-aicte.ernet.in

New England Association of Schools and Colleges web site, USA: www.neasc.org

Quality Assurance Agency (QAA), UK: www.qaa.ac.uk

Մոդուլ 5

.....ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐՈՂՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ ԵՎ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Մոդուլի նպատակները **321**

Հարցեր խորհելու համար **322**

Միջազգային կրթություն տրամադրողների բնութագրումը **323**

Ներածություն 323

1. Ի՞նչ է միջազգային կամ վերազգային բարձրագույն կրթությունը 325
2. Ովքե՞ր են միջազգային բարձրագույն կրթություն տրամադրողները 326
3. Ի՞նչ խնդիրներ է հարուցում միջազգային առևտրային բարձրագույն կրթությունը հատկապես զարգացող երկրներում 334

Միջազգային բարձրագույն կրթության կանոնակարգման տարբերակներ **341**

1. Որո՞նք են միջազգային բարձրագույն կրթության կանոնակարգման հիմնական մոտեցումները 341
2. Կանոնակարգման ռեժիմներ մասնաճյուղերի համար 346

3. Կանոնակարգման ռեժիմները ֆրանչայզինգային դասընթացների և զուգակցման/համատեղ ուսուցման սխեմաների համար 361

Միջազգային բարձրագույն կրթության որակի արտաքին ապահովման տարբերակներ **372**

1. **Միջազգային բարձրագույն կրթության ինստիտուցիոնալ հավատարմագրումը** 372

2. Միջազգային բարձրագույն կրթության ծրագրային հավատարմագրումը 376

Կանոնակարգման և որակի ապահովման ռեժիմներն ու ազգային կրթական քաղաքականության նպատակները **383**

Միջազգային բարձրագույն կրթության կանոնակարգման և որակի ապահովման միջազգային շրջանակները **389**

Յուրացված դասեր **392**

Գրականություն **396**

Հապավումների ցանկ

ԲԿՀ	Բարձրագույն կրթության հանձնաժողով (Քենիա) CHE, Commission on Higher Education (Kenya)
ԲԿԿ	Բարձրագույն կրթության կոմիտե (Ֆիլիպիններ) CHED, Commission on Higher Education (Philippines)
ՀԳՀԱՀ	Համալսարանների գնահատման և հավատարմագրման ազգային հանձնաժողով, Արգենտինա CONEAU, *Comisión Nacional de Evaluación y Acreditación Universitaria* (National Commission for University Assessment and Accreditation, Argentina)
ԿՎ	Կրթության վարչություն DoE, Department of Education
ՈԱԱ	Որակի արտաքին ապահովում EQA, External quality assurance
ՍՈԱԸՀ	Սպասարկման Ոլորտում Առևտրի Ընդհանուր Համաձայնագիր GATS, General Agreement on Trade in Services
ԲՈՒՀ	Բարձրագույն կրթության հաստատություն HEI, Higher education institution
ԲԿՈԿ	Բարձրագույն կրթության որակի կոմիտե (Հարավային Աֆրիկա) HEQC, Higher Education Quality Committee (South Africa)
ՄՌԶ	Մարդկային ռեսուրսների զարգացում HRD, Human Resources Development
ՏՀՏ	Տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիա ICT, Information and Communication Technology
ԲԿՕ	Բարձրգույն կրթության մասին օրենք LHE, Law on Higher Education
ՄԼՆ	Միջանկյալ լիազորության նամակ LIA, Letter of Interim Authorization
ՈՄԳ	Որակավորումների Մալազիական գործակալություն MQA, Malaysian Qualifications Agency
ՈՄՀ	Որակավորումների Մալազիական հենք MQF, Malaysian Qualifications Framework

ՀԱԽ	Հավատարմագրման ազգային խորհուրդ NAB, National Accreditation Board
ՕԻՄ	Ծրագրային և ինստիտուցիոնալ մոբիլություն PIM, Programme and institutional mobility
ՈԱԳ	Որակի ապահովման գործակալություն QAA, Quality Assurance Agency
ՈԱԲ	Որակի ապահովման բաժին QAD, Quality Assurance Division
ՈՀԱՄ	Որակավորումների հարավաֆրիկյան մարմին SAQA, South African Qualifications Authority
ՄԲԿ	Միջազգային բարձրագույն կրթություն TNHE, Transnational Higher Education
ԱՀԿ	Առևտրի համաշխարհային կազմակերպություն WTO, World Trade Organization

Ներդիրների ցանկ

Ներդիր 1. Ծրագրային շարժունակությունը հետազոտվող յոթը երկրներում 330

Ներդիր 2. Միջազգային բարձրագույն կրթության վիրտուալ ծրագրերը հետազոտվող յոթը երկրներում 332

Ներդիր 3. Միջազգային բարձրագույն կրթություն տրամադրողների ազդեցությունը տեղական բարձրագույն կրթության համակարգերի վրա 336

Ներդիր 4. Դեպքերի ուսումնասիրության ամփոփ արդյունքներ որակի, հասանելիության և հավասարության վերաբերյալ 338

Ներդիր 5. Գրանցման պահանջները Քենիայում 346

Ներդիր 6. Լիցենզավորումը որպես շարունակական գործընթաց Չիլիում 349

Ներդիր 7. Արգենտինայում ՀԳՀԱՀ-ի կողմից օգտագործվող լիցենզավորման պահանջները 351

Ներդիր 8. Հատուկ օրենսդրություն Հարավային Աֆրիկայում և Ֆիլիպիններում սահմանափակելու «համալսարան» տերմինի օգտագործումը 354

Ներդիր 9. Շահույթ հետապնդող համալսարանական կրթություն տրամա դրողների վերաբերյալ օրենսդրությունը Արգենտինայում 356

Ներդիր 10. Կապիտալում մասնակցության սահմանափակումները Ֆիլիպիններում 357

Ներդիր 11. Նոր ուսումնական ծրագրեր ներդնելու կանոնները և կանոնակարգերը Ֆիլիպիններում 362

Ներդիր 12. Ֆրանչայզինգային կրթության ուղղակի խրախուսումը Օմանում 363

Ներդիր 13. Կանոնակարգման բացակայությունը Քենիայում արտոնագրված պետական համալսարանների համար 364

Ներդիր 14. Ֆրանչայզինգային կրթության նկատմամբ սահմանափակ կարգավորման մոտեցումը Հոնկոնգում 365

Ներդիր 15. Ֆրանչայզինգային կրթության խիստ կանոնակարգման մոտեցումը Ֆիլիպիններում և Հարավային Աֆրիկայում....367

Ներդիր 16. Հարկային ռեժիմները և արտարժութային կարգավորումները Ռուսաստանում և Ֆիլիպիններում 368

Ներդիր 17. Աշակերտների իրազեկումը բարձրագույն կրթություն տրամադրողների մասին հիմնավորված ընտրություն կայացնելու համար. Հարավային Աֆրիկա 369

Ներդիր 18. Ինստիտուցիոնալ հավատարմագրումը Քենիայում 373

Ներդիր 19. Ինստիտուցիոնալ աուդիտը Հարավային Աֆրիկայում.....375

Ներդիր 20. Ծրագրային հավատարմագրումը Հարավային Աֆրիկայում 377

Ներդիր 21. Միջազգային կրթություն տրամադրողների որակի ապահովումը Մալազիայում 378

Ներդիր 22. Հասարակությանը հաստատությունների և ծրագրերի կարգավիճակի վերաբերյալ տեղեկատվության տրամադրում Քենիայում և Չիլիում 381

Ներդիր 23. Կանոնակարգման ազատական ռեժիմները Օմանում, Քենիայում և Ռուսաստանում.....385

Ներդիր 24. Չափավոր ազատական ռեժիմներ միջազգային բարձրագույն կրթություն տրամադրողների համար Արգենտինայում և Չիլիում.....386

Ներդիր 25. Կանոնակարգման խիստ ռեժիմներ Ֆիլիպիններում և Հարավային Աֆրիկայում 387

Ներդիր 26. Պայմաններ, որոնց առկայության դեպքում երկրները կարող են օգուտ քաղել միջազգային բարձրագույն կրթությունից 390

Աղյուսակների ցանկ

Աղյուսակ 1. Միջազգային կրթություն տրամադրողների շարժունության տիպաբանությունը 328

Աղյուսակ 2. Միջազգային ծրագրային շարժունության տիպաբանությունը..... 329

Աղյուսակ 3. Միջազգային բարձրագույն կրթության կանոնակարգման ազգային շրջանակները..... 344

Մոդուլի նպատակները

Այս մոդուլը՝

- կծանոթացնի զարգացող երկրներում միջազգային բարձրագույն կրթության տարբեր ձևերին և դրանց առաջացրած խնդիրներին,
- կներկայացնի միջազգային բարձրագույն կրթության կանոնակարգման տարբեր մոտեցումները և գործիքները,
- կներկայացնի միջազգային բարձրագույն կրթության որակի արտաքին ապահովման մոտեցումներն ու գործիքները,
- կծանոթացնի կրթական քաղաքականության տարբեր հիմնավորումներին և նպատակներին, կանոնակարգման ու որակի ապահովման տարբեր ռեժիմների հետ դրանց կապին:

Այս մոդուլի ավարտին ակնկալվում է, որ դուք կկարողանաք՝

- գնահատել միջազգային բարձրագույն կրթություն տրամադրողների որակի ապահովման համակարգերի և կանոնակարգման ռեժիմների զանազան տարբերակները,
- այդ տարբերակները կապել քաղաքականության հիմնավորումների ու խնդիրների հետ,
- դասակարգել միջազգային կրթության տարատեսակ տրամադրողներին,
- գնահատել ձեր երկրի համատեքստում կանոնակարգման և որակի ապահովման գործող տարբերակների համապատասխանությունը:

Հարցեր խորհելու համար

Ի՞նչ առանձնահատուկ խնդիրներ է առաջացնում միջազգային բարձրագույն կրթությունը իմ երկրում:

Ինչպե՞ս կարող են միջազգային կրթություն տրամադրողները նպաստել ազգային զարգացմանը և բարձրագույն կրթության քաղաքականության համապատասխան խնդիրների լուծմանը:

Միջազգային բարձրագույն կրթության կանոնակարգման և որակի ապահովման ինչպիսի՞ ռեժիմ է գործում իմ երկրում:

Արդյո՞ք կանոնակարգման և որակի ապահովման այս ռեժիմը համապատասխանում է կրթության ազգային քաղաքականության խնդիրներին:

Մոդուլ 5

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ
ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐՈՂՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄԸ
ԵՎ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

Միջազգային կրթություն տրամադրողների բնութագրումը

Ներածություն

Գլոբալացման գործընթացները մեծապես ազդում են աշխարհում բարձրագույն կրթության համակարգերի վրա: Առավել բաց աշխարհում համալսարանական ուսանողները և անձնակազմը, գիտական հետազոտությունները և կրթական ծրագրերը շահում են տարբեր արժեքների, գաղափարների և մտածելակերպի փոխազդեցությունից: Հաստատություններն ունենում են հավելյալ ուսումնական վճարներ և ուսանողների համակազմի աճ: Ազգային կրթական համակարգերը հավասարակշռում են տեղական և արտասահմանցի ուսանողների կողմից կրթության նկատմամբ պահանջարկը՝ ավելացնելով ուսանողների թվաքանակը կամ նրանց կրթական կարիքների բավարարման համար ներգրավելով արտաքին տրամադրողների:

Բարձրագույն կրթության գլոբալիզացիան տեղի է ունենում արտերկրից ուսանողների ներգրավման, ուսանողների փոխանակման, արտերկրյա գործընկերների հետ համագործակցության, միջազգային անձնակազմ վարձելու կամ միջազգային կրթական ծրագրերով դասավանդելու շնորհիվ:

Շատ երկրներում բարձրագույն կրթության նկատմամբ պահանջարկը հանգեցրել է աննախադեպ աճի: Որոշ երկրներ ցանկանում են

օգտագործել այլ երկրների բարձրագույն կրթության ենթակառուցվածքները իրենց կարճաժամկետ կարիքների համար: *Ուսանողների գլոբալ շարժունակության զեկույց 2025* (*Global student mobility report 2025*) , որը պատրաստվել է IDP Education-ի կողմից Ավստրալիայում, կանխատեսում է, որ միջազգային կրթության նկատմամբ պահանջարկը 2000 թվականի 1.8 մլն միջազգային ուսանողներից 2005թ կհասնի մինչև 7.2 միլիոնի.: Ակնկալվում է, որ այլ երկրներ սովորելու տեղափոխվող ուսանողների քանակը բավարար չի լինի թեթևացնելու բարձրագույն կրթության նկատմամբ պահանջարկը խիտ բնակչությամբ երկրներում:

Այս մոդուլը դիտարկում է միջազգային բարձրագույն կրթություն տրամադրողների կանոնակարգման և որակի ապահովման հարցը ընդունող երկրի տեսանկյունից: Այս առումով պատասխանատու են թե դոնոր, թե ընդունող երկրները: Այնուամենայնիվ, ընդունող երկիրն անկասկած այն միավորն է, որը պետք է ապահովի միջազգային բարձրագույն կրթության համապատասխանությունը սեփական կրթական չափորոշիչներին և ազգային զարգացման նպատակներին:

Գլուխ 1-ում Ձեզ է ներկայացվելու միջազգային բարձրագույն կրթություն տրամադրողների դասակարգումը և տրամադրումը՝ ծրագրերի ու ինստիտուցիոնալ շարժունակության տեսակետից:

Գլուխ 2-ը բացահայտում է միջազգային բարձրագույն կրթություն տրամադրողների օրենսդրական գործունեության միջոցով կանոնակարգման տարբերակները և գործիքները:

Գլուխ 3-ը կենտրոնանում է որակի արտաքին ապահովման վրա, որպես միջազգային բարձրագույն կրթություն տրամադրողների կանոնակարգման մեկ այլ գլխավոր գործիք:

Քանի որ կանոնակարգումը և որակի ապահովումը չեն կարող զարգանալ առանց կրթական քաղաքականության ընդհանուր հիմնավորումների, *Գլուխ 4-ը* նպատակ ունի կապ հաստատել այդ երկուսի միջև:

Վերջապես, *Գլուխ 5-ը* դիտարկում է միջազգային բարձրագույն կրթության տրամադրման միջազգային շրջանակը՝ որպես ազգային քաղաքականության մշակումը ուղղորդող գործիք:

1. Ի՞նչ է միջազգային կամ վերազգային բարձրագույն կրթությունը

Վերազգային կամ միջազգային բարձրագույն կրթությունը (Transnational education) ՅՈՒՆԵՍԿՕ-ի և Եվրոպայի Խորհրդի «*Վերազգային կրթության տրամադրման պրակտիկայի կոդեքս*» համատեղ փաստաթղթում սահմանվում է հետևյալ կերպ՝

> «Ցանկացած տեսակի բարձրագույն կրթության ծրագրերը, ուսումնական դասընթացների խմբերը կամ կրթական ծառայությունները (ներառյալ հեռավար կրթության ծառայությունները), որոնց սովորողները գտնվում են (դիպլոմ կամ վկայագիրքարգմ.) շնորհող հաստատության գտնվելու երկրից տարբեր երկրում: Այսպիսի ծրագրերը կարող են պատկանել մի պետության կրթական համակարգին, որը տարբեր է տրամադրող երկրից, կամ կարող են գործել ցանկացած ազգային համակարգից ինքնուրույն » :
> (UNESCO and Council of Europe, 2001)

Ավանդաբար բարձրագույն կրթությունը բնութագրվել է իր միջազգային ուղղվածությամբ և կապերով, քանի որ գիտությունը, հետազոտությունները և գիտական համայնքները բնական միջսահմանային փոխազդեցության մեջ են գտնվում: Միջազգային ուսանողների ներկա մակարդակը, ծրագրային և ինստիտուցիոնալ շարժունակությունը, սակայն, նոր երևույթ են: Ավելին, այս ավանդական միջազգային կապերի մեծամասնությունը նախկինում սովորաբար գոյություն են ունեցել գլխավորապես ակադեմիական և մշակութային նպատակների համար: Վերջերս միջազգային կրթության մեծ մասը տրամադրվում է առևտրային նպատակով: Անցումը «օգնությունից առևտրի» տեղի է ունեցել այնտեղ, որտեղ ակադեմիական համագործակցությունը ներառում է և զարգացած, և զարգացող երկիր: (OECD, 2004a)

Սպասարկման ոլորտում առևտրի ընդհանուր համաձայնագրի (ՍՈԱԸՀ) շրջանակում «կրթական ծառայությունների» ընդգրկումը քննարկումների թեմաներում ընթացքի մեջ է Առևտրի համաշխարհային կազմակերպությունում (ԱՀԿ): Այն բարձրագույն կրթությունը համարում է որպես պոտենցիալ առևտրային ծառայություն: ՍՈԱԸՀ-ը առանձնացնում է կրթական ծառայությունների միջազգային առաջարկի չորս եղանակ՝

Եղանակ 1 - միջազգային առաջարկ (հեռավար կրթություն, վիրտուալ կրթական հաստատություններ, կրթական ծրագրային ապահովվածություն և կորպորատիվ ուսուցում տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների միջոցով),

Եղանակ 2 - սպառում արտասահմանում (արտասահմանում սովորող ուսանողներ),

Եղանակ 3 - առևտրային ներկայություն (տեղական համալսարանի կամ մասնաճյուղի տարածք, լեզվական ուսուցման ընկերություններ, կրթական մասնավոր ընկերություններ) կամ ծրագրային կամ ինստիտուցիոնալ շարժունակություն,

Եղանակ 4 - ֆիզիկական անձանց ներկայություն (պրոֆեսորներ, դասավանդողներ, արտասահմանում աշխատող հետազոտողներ):

Առևտրային ներկայությունը (եղանակ 3) այն դեպքն է, երբ ծառայությունը և ոչ թե նրա սպառողն են հատում սահմանը: Այս դեպքում օտարերկրյա ներդրումը հանգեցնում է մասնաճյուղի / ստորաբաժանման, օտարերկրյա սեփականություն հանդիսացող կորպորատիվ հաստատության կամ վստահագրային (ֆրանչայզինգային) ծրագրերի հիմնադրմանը (ծրագրային և ինստիտուցիոնալ շարժունակություն): Ներկայումս առևտրային ներկայությունը ընդունող երկրի համար ստեղծում է կանոնակարգման և որակի ապահովման մարտահրավերներ, քանի որ այն խնդրոհարույց է կապված դիպլոմների ու հաստատությունների ճանաչման հետ: Ավելին, այն ստեղծում է խնդիրներ որակի և ազգային զարգացմանը համարժեքության առումով:

2. Ովքե՞ր են միջազգային բարձրագույն կրթություն տրամադրողները

Առևտուրը բարձրագույն կրթությունում վերաբերում է կրթական ծրագրերի տրամադրմանը: Սակայն, գոյություն ունեն նաև այլ առնչվող ծառայություններ, ինչպիսիք են կրթական թեստավորման և քննությունների ծառայությունները կամ մուլտիմեդիա կրթությունը: Դրանք առաջարկվում են երբեմն հին, իսկ ավելի հաճախ բարձրագույն կրթության նոր տրամադրողների կողմից: Ըստ Մաչո Դոս Սանթոսի (Machado Dos Santos, 2002) և Նայթի (Knight, 2006) վերջիններս ներառում են՝

- բաց բաժնետիրական ընկերություններ[1],
- կորպորատիվ համալսարաններ, որոնց միջոցով միջազգային կորպորացիաները հիմնում են իրենց սեփական ուսուցողական մասնաճյուղը կամ «համալսարան» սեփական աշխատողների կամ ուրիշների համար[2],

[1]. Ինչպես օրինակ Apollo-ն (ԱՄՆ), Informatics-ը (Սինգապուր) և Aptech-ը (Հնդկաստան)

[2]. Ինչպես օրինակ Motorola –ն և Toyota-ն:

- մասնավոր և շահույթ հետապնդող տրամադրողներ, որոնք գործում են միջազգային մակարդակում,
- լրատվական և հրատարակչական բիզնեսներ,
- կրթական ծառայություններ և բրոքերներ:

Եվ պետական, և մասնավոր ֆինանսավորման ոլորտներից կարելի է առանձնացնել հետևյալ տրամադրողներին՝

- տարածաշրջանային և միջազգային կոնսորցիումներ,
- վիրտուալ համալսարանների ազգային նախաձեռնություն,
- սովորական ազգային համալսարաններ:

Աղյուսակ 1-ը թվարկում է շարժունակությանն առնչվող ինստիտուցիոնալ սխեմաները:

Աղյուսակ 1. Միջազգային տրամադրողի շարժունակության տիպաբանություն

Կատեգորիա	Շարժունակության ձևի/տեսակի նկարագրություն
Մասնաճյուղ	Ա երկրի տրամադրողը Բ երկրում հիմնում է մասնաճյուղ՝ Բ երկրում ուսանողներին մատուցելու դասընթացներ և ծրագրեր (կարող է նաև ընդգրկել Ա երկրի ուսանողներ, ովքեր մեկ կիսամյակ կամ դասընթացներ են անցնում արտասահմանում) Որակավորումը շնորհվում է Ա երկրի տրամադրողի կողմից:
Անկախ հաստատություն	Ա օտարերկրյա տրամադրողը (ավանդական համալսարան, առևտրային կազմակերպություն կամ միություն/ցանց) Բ երկրում հիմնում է ինքնավար ԲՈՒՀ, որն առաջարկում է դասընթացներ/ծրագրեր և շնորհում է որակավորումներ:
Ձեռք բերում/ միաձուլում	Ա օտարերկրյա տրամադրողը գնում է Բ երկրում տեղական ԲՈՒՀ-ի մի մասը կամ 100%-ը:
Ուսումնական կենտրոն / դասավանդման վայր	Ա օտարերկրյա տրամադրողը Բ երկրում հիմնում է ուսումնական կենտրոններ՝ աջակցելու իրենց դասընթացները/ծրագրերը անցնող ուսանողներին: Ուսումնական կենտրոնները կարող են լինել անկախ կամ համագործակցել Բ երկրում տեղական տրամադրողների հետ:

Միացում/ ցանցեր	Տարաբնույթ «պետական և մասնավոր», «ավանդական և նոր» տրամադրողներ տարբեր երկրներից համագործակցում են գործընկերության նորարարական ձևերով ցանցեր / հաստատություններ հիմնելու նպատակով, որոնք մատուցում են դասընթացներ և ծրագրեր տեղում ու արտերկրում՝ հեռավար կամ առկա եղանակներով:
Վիրտուալ համալսարան	Տրամադրող, որը կրեդիտային դասընթացներ և որակավորում շնորհող ծրագրեր է մատուցում ուսանողներին տարբեր երկրներում հեռավար կրթության եղանակով, որը չունի առերես աջակցության ծառայություններ ուսանողների համար:

Աղբյուր՝ Knight, 2005.

Աղյուսակ 2-ը ըստ ծրագրային շարժունակության վեց է միջազգային տրամադրման վեց տարատեսակ:

Աղյուսակ 2. Միջազգային ծրագրային շարժունակության տիպաբանություն

Տարատեսակ	Շարժունակության ձևի/տեսակի նկարագրություն
Վստահագիր (Ֆրանչայզ)	Համաձայնություն, որի միջոցով դոնոր հանդիսացող Ա երկրի տրամադրողը լիազորում է մեկ ուրիշ տրամադրողի Բ երկրում տրամադրելու իր դասընթացը/ծրագիրը/ծառայությունը Բ կամ մեկ այլ երկրում: Որակավորումը շնորհվում է Ա երկրի տրամադրողի կողմից: Սա սովորաբար շահույթ հետապնդող համաձայնություն է:
Զուգակցում	Իրավիճակ, որտեղ դոնոր հանդիսացող Ա երկրի տրամադրողը համագործակցում է Բ երկրում տեղակայված տրամադրողի հետ՝ մշակելու դասավանդման փոխանակման համակարգ, որը թույլ կտա ուսանողներին կրեդիտային դասընթացներ անցնելու Բ երկրում և/կամ դոնոր հանդիսացող Ա երկրում: Շնորհվում է միայն մեկ որակավորում դոնոր երկրի տրամադրողի կողմից: Սա կարող է իրականացվել ինչպես առևտրային, այնպես էլ ոչ առևտրային հիմունքներով:

Մոդուլ 5 - Միջազգային բարձրագույն կրթություն տրամադրողների կանոնակարգում և որակի ապահովում

Կրկնակի/համատեղ որակավորում	Համաձայնություն, որի միջոցով տարբեր երկրների տրամադրողներ համագործակցում են՝ առաջարկելու ծրագիր, որի համար ուսանողը ստանում է որակավորում յուրաքանչյուր տրամադրողից կամ միացյալ որակավորում համագործակցող տրամադրողներից: Սովորաբար սա հիմնված է ակադեմիական փոխանակության վրա:
Փոխանակում	Տարբեր երկրների տրամադրողների միջև փոխանակման տարաբնույթ սխեմաները թույլ են տալիս ուսանողներին ակադեմիական կրեդիտ վաստակել համագործակցող տրամադրողների կողմից առաջարկվող դասընթացների/ծրագրերի համար:
Հաստատում	Տարբեր երկրների տրամադրողների միջև հաստատման պայմանավորվածություններ, որոնք ընդունող Բ երկրի տրամադրողին թույլ են տալիս շնորհել դոնոր Ա երկրի տրամադրողի որակավորում:
Վիրտուալ/հեռավար	Պայմանավորվածություններ, որոնց միջոցով տրամադրողները տարբեր երկրների ուսանողներին հեռավար կամ առցանց եղանակով մատուցում են դասընթացներ/ծրագրեր: Կարող է ընդգրկել առկա աջակցություն ուսանողներին որոշ տեղական ուսումնական կամ աջակցության կենտրոնների միջոցով:

Աղբյուր՝ Knight, 2005.

Միքաելա Մարտինի (Michaela Martin, 2007) ղեկավարությամբ Կրթության պլանավորման միջազգային ինստիտուտում իրականացված հետազոտությունը յոթը երկրներում (Արգենտինա, Չիլի, Քենիա, Օման, Ֆիլիպիններ, Ռուսաստան և Հարավային Աֆրիկա) միջազգային բարձրագույն կրթություն տրամադրողների բնութագրման, կանոնակարգման և որակի ապահովման ոլորտում ներկայացնում է եզրակացություններ ծրագրային շարժունակության վերաբերյալ: Ներդիրներ 1-ում և 2-ում բերված այս եզրակացությունները կիրառելի են ինչպես բարձրագույն կրթության առկա, այնպես էլ վիրտուալ իրականացման նկատմամբ:

Ներդիր 1. Ծրագրային շարժունակությունը հետազոտության յոթ երկրներում

Մինչ մասնաճյուղերը և կորպորատիվ հաստատությունները միջազգային բարձրագույն կրթության ամենատեսանելի տարրն են, քանակապես առավել գերիշխող միջազգային բարձրագույն կրթության ձևերը ուսումնական ծրագրերի մակարդակում են: Միջազգային առևտրային (շահույթ հետապնդող) ուսումնական ծրագրերը կարող են դասակարգվել՝

- Ֆրանչայզինգային ծրագրեր, երբ օտարերկրյա համալսարանը կամ վաճառում է իր ողջ ուսումնական ծրագիրը, դրա հետ կապված ուսուցողական նյութերը կամ դրանց մի մասը, և / կամ պատասխանատու է կրթական գործընթացի մեկ կամ մի քանի տարրերի, ինչպես նաև ողջ ծրագրի կամ միայն դրա մի մասի գնահատման կամ վկայագրության համար:
- Համատեղ կրթական ծրագրեր, երբ ծրագրի մատուցումը (կրեդիտների փոխանցումը), գնահատումը և վկայագրումը տեղական և օտարերկրյա համալսարանների կողմից իրականացվում է համատեղ, իսկ ուսանողները որակավորումը ստանում են բարձրագույն կրթության երկու հաստատություններից:
- Հաստատման պայմանավորվածություն, որի համաձայն օտարերկրյա երկիրը տեղական բարձրագույն կրթության հաստատությունում հիմնում է դասընթաց՝ իր սեփականին համարժեք, ինչը թույլ է տալիս շնորհել օտարերկրյա որակավորում (այս վերջին ձևին կարելի է հանդիպել միայն Ռուսաստանում):

Հետազոտության երկրներում զուգակցված և համատեղ կրթական ծրագրերը արտահայտում են շատ տարբեր իրականություններ: Միայն այնպիսի երկրներ, ինչպիսին է Օմանը, որն ուղղակիորեն խրախուսում է դրանց տրամադրումը, ունեն մանրամասն տեղեկատվություն այդպիսի ծրագրերի վերաբերյալ: Չիլիում նշվում է, որ շատ զուգակցված ծրագրեր կազմակերպվում են լիցենզավորված տեղական համալսարանի «ակադեմիական հովանու ներքո», բայց դրանք հաճախ համարժեք չեն սեփական երկրում առաջարկվողներին և հաճախ չեն ճանաչվում արտասահմանյան երկրի կողմից: Որոշ դեպքերում, ուսանողներից պահանջվում է ճանապարհորդել օտարերկրյա տրամադրող հաստատություն որոշակի ժամանակով սովորելու: Չիլիում զուգակցված ծրագրերի մեծամասնությունը (45-ից 32-ը) մագիստրատուրայի մակարդակի են: Դրանցից 7-ը դիպլոմի, իսկ մյուսները՝ դոկտորատուրայի մակարդակի են:

Համատեղ ծրագրերը, որոնց դեպքում երկու բարձրագույն կրթական հաստատություններ պարտավորվում են շնորհել երկու որակավորում, երկրները ուսումնասիրող հեղինակների կողմից համարվել են որակի

տեսանկյունից առավել վստահելի:

Մատուցվող ծրագրերը հիմնականում հանդիպում են ծառայությունների ոլորտի մասնագիտությունների գծով, ինչպիս օրինակ համակարգչային, տեղեկատվական տեխնոլոգիաները, գործարար կառավարումը, իրավագիտությունը և հաշվապահությունը: Միջազգային բարձրագույն կրթության տրամադրման մեծ մասը կենտրոնանում է ծրագրերի վրա ոչ համալսարանական հատվածում, առաջարկելով բարձրագույն մասնագիտական կրթություն միջին մակարդակի կառավարիչների համար՝ դիպլոմի կամ հավաստագրի շնորհմամբ: Ծրագրերի մյուս խումբը վերաբերում են գործարար կառավարման մագիստրոսների կամ այլ մասնագիտացված մագիստրական դասընթացներին:

Քանի որ միջազգային բարձրագույն կրթության ծրագրերը վճարովի են, դրանք ուղղորդված են շուկայի կողմից և սովորաբար կադրեր են պատրաստում մասնավոր հատվածում աշխատելու համար: Շատ հեղինակներ շեշտում են, որ միջազգային ծրագրերի առաջարկը անհրաժեշտաբար չի առընչվում մարդկային ռեսուրսների ազգային պահանջարկին, ինչպես կարծում են պետական մարմինները: Ռուսաստանում, օրինակ, ընդգծվել էր, որ առկա է գործարար կառավարման մագիստրոսների գերարտադրություն՝ կապված զարգացող մասնավոր հատվածի զբաղվածության ապահովման իրական կարողության հետ: Խնդիրը գործարար կառավարման մագիստրատուրայի ծրագրերի ավելցուկային առաջարկի մեջ է, որոնց մեծամասնությունը ցածրորակ է: Հարավային Աֆրիկայում մասնավոր տրամադրողներին ասվել էր, որ այդ ծրագրերի մեծ մասը հիմնականում պետք է իրականացնել տարածքներում, ուր ծախսերը ցածր են և որտեղ դրանք արդեն առաջարկվում են պետական հաստատությունների կողմից: Ուստի դրանք լրացուցիչ ոչինչ չեն առաջարկում պետական համակարգին: Օմանում 2003թ. միջազգային բարձրագույն կրթության հատվածում ընդգրկվածների միայն 19 տոկոսն էր սովորում բժշկության, տեխնիկական և բնական գիտությունների ոլորտում: Մնացած մասն ընդգրկված էր հումանիտար և սոցիալական գիտությունների բնագավառում (որից 21 տոկոսը՝ համակարգչային գիտությունների):

Միջազգային բարձրագույն կրթության ծրագրերը հաճախ առաջարկվում են որպես աստիճանավորված ծրագրեր, այսպիսով հնարավորություն տալով շարունակել և որակավորում ստանալ արտասահմանյան հաստատությունում: Երբ տեղական աշխատուժի շուկան սահմանափակ է և երբ առկա են առավել եկամտաբեր զբաղվածության հնարավորություններ օտարերկրյա տրամադրողի երկրում, միջազգային բարձրագույն կրթությունը կարող է առաջարկել գրավիչ զբաղվածության հնարավորություններ արտերկրում: Այսպիսի ծրագրերը մեծ պահաջարկ

են վայելում, քանի որ դրանք արտասահմանյան աշխատաշուկա առավել հեշտ մուտքի հնարավորություն են տալիս: Հարավային Աֆրիկայում նասնաճյուղում ստացված որակավորումների փոխադրելիության ընձեռած հնարավորությունները առանձնակի կարևոր են հարավաֆրիկացի սպիտակամորթ ուսանողների համար, ովքեր հատկապես հետաքրքրված են Ավստրալիա, Միացյալ Թագավորություն կամ Նիդեռլանդներ գաղթելով:

Դեպքերի ուսումնասիրությունները միայն հազվադեպ են նշում ֆինանսական համաձայնագրերի մասին, որոնց համաձայն իրականացվում են ֆրանչայզինգային ծրագրերը: Հետաքրքիր է նշել, որ Մոսկվայում գտնվող Ազգային տնտեսագիտական ակադեմիայի և Կինգստոնի համալսարանի կողմից համատեղ իրականացվող գործարար կառավարման մագիստրոսի ծրագրով կանխատեսում է, որ ստեղծված եկամտի 40 տոկոսը հետ է վերադարձվում Կինգստոնի համալսարանի Գործարար դպրոցին: Օմանում բրիտանական մի համալսարանի հետ Բանկային և ֆինանսական հետազոտությունների քոլեջի առաջարկած ծրագրերից մեկի շրջանակում Բրիտանական համալսարանը ստանում է ուսման վարձերի 70, իսկ տեղական հաստատությունը՝ 30 տոկոսը:
Այս թվերը ցույց են տալիս, որ գոյություն ունեն զգալի ֆինանսական շահեր օտարերկրյա բարձրագույն կրթության հաստատությունների համար:

Աղբյուր՝ Martin, 2007.

Ներդիր 2. Միջազգային բարձրագույն կրթության վիրտուալ ծրագրերը հետազոտության յոթ երկրներում

Վիրտուալ միջազգային բարձրագույն կրթությունը առկա է և առաջարկվում է ուսումնասիրված բոլոր երկրներում, քանի որ համացանցի հասանելիությունը աճում է հետազոտության երկրներում: Այնուամենայնիվ, առաջարկի մասին տեղեկացվածությունը և դրա կիրառությունը սահմանափակ է, քանի որ ուսանողները կարող են գրանցվել արտասահմանում առաջարկվող այդ դասընթացների համար առանց թույլտվության կամ առանց տեղեկացնելու իրենց ազգային իշխանություններին: Ազգային իշխանությունները սովորաբար առավել մանրամասն պատկերացում ունեն հեռավար ուսուցման ծրագրեր առաջարկող տեղական համալսարաններում սովորող ուսանողների մասին: Ազգային իշխանությունները վիրտուալ միջազգային տրամադրողների մասին տեղեկատվություն են ստանում, երբ ուսանողները ձգտում են վիրտուալ կերպով ստացած որակավորումների ճանաչմանը կամ դրանց համարժեքին: Այս տեսակետից, դեպքերի ուսումնասիրությունները ի հայտ են բերում

տարբեր մեխանիզմներ. ճանաչմանն առնչվող որոշումները Կրթության նախարարության, որակի ապահովման ազգային գործակալության կամ տեղական համալսարանի (ինչպես Չիլիում) իրավասությունն են: Սրա պատճառը ակադեմիական ինքնավարության ուժեղ ավանդույթն է, երբ պետական իշխանությունները իրավասություն չունեն ակադեմիական ծրագրերի սահմանման գործում:

Աղբյուր՝ Martin, 2007.

Փորձառության վերլուծությունը ցույց է տալիս, որ ռազմավարական միությունները ձևավորվում են պետական և մասնավոր ԲՈՒՀ-ների միջև: Սակայն, գոյություն ունեն նաև կապեր մասնավոր ընկերությունների և պետական/մասնավոր բարձրագույն կրթության հաստատությունների միջև: Հաճախ միազգային ընկերությունը կամ մասնավոր/պետական համալսարանը գործում է տեղական մասնավոր տրամադրողների հետ, քանի որ դրանք ամենահասանելի հատվածն են բարձրագույն կրթության ազգային համակարգում:

Միջազգային առևտրային բարձրագույն կրթությունը առավելապես հանդիպում է զգալի թվով անգլիախոս ուսանողներ ունեցող երկրներում, որովհետև տրամադրողների մեծամասնությունը Ավստրալիայից, Միացյալ Թագավորությունից և ԱՄՆ-ից են: Ավելին, անգլիալեզու միջավայրը հաճախ տալիս է համեմատական առավելություններ թե ազգային, թե միջազգային աշխատաշուկայում: Արևելյան Ասիայի և Մերձավոր Արևելքի երկրները ամենաշատն են կրում միջազգային առաջարկի ազդեցությունը: Այնուամենայնիվ, այլ տարածաշրջանների երկրները նույնպես միջազգային բարձրագույն կրթություն ստացողներ են: Լատինական Ամերիկայում Իսպանիան նույնպես դառնում է տրամադրող. իսպանական համալսարանները հաճախ առաջարկում են ֆրանչայզինգային դասընթացներ լատինամերիկյան համալսարանների հետ:

Միջազգային առևտրային տրամադրման գերակշիռ մասին կարելի է հանդիպել մասնավոր բարձրագույն կրթության համեմատաբար մեծ հատված և արդեն բարձր ուսման վարձեր ունեցող երկրներում: Վերջապես, պահանջարկը եկամտի միջին մակարդ ունեցող երկրներում կարող է հեշտացնել միջազգային առևտրային բարձրագույն կրթության հիմնումը:

Միջազգային բարձրագույն կրթությունն, այնուամենայնիվ, չի ներառում միայն հյուսիսային երկրներից միակողմանի կրթության տրամադրում հարավային երկրներին: Զարգացող երկրների հաստատությունները նույնպես բարձրագույն կրթություն են արտահանում հարևան երկրներ: Սա միջազգային բարձրագույն կրթությունը վերածում է հիրավի բազմաթիվ ուղղություններով ծառայությունների հոսքի:

3. Ի՞նչ խնդիրներ է հարուցում միջազգային առևտրային բարձրագույն կրթությունը հատկապես զարգացող երկրներում

Միջազգային բարձրագույն կրթության տրամադրումը ստեղծում է ինչպես հնարավորություններ, այնպես էլ խնդիրներ բարձրագույն կրթության համակարգերի, ակադեմիական հանրության և ընդհանրապես երկրների համար: Զարգացող շատ երկրներում պետությունը չի կարող բավարարել կրթության նկատմամբ հասարակության պահանջարկը: Այս հանգամանքներում մասնավոր կրթության տրամադրումը բարձրագույն կրթության հասանելիությունը մեծացնելու միջոց է: Ի լրումն, կրթության օտարերկրյա տրամադրողները կարող են բերել կրթության նորարարական փորձառություն և ստեղծել հնարավորություն սովորելու միմյանցից: Նրանք կարող են նաև առաջարկել ուսումնական ծրագրերի միջազգայնացում: Միջազգային տրամադրողները կարող են տրամադրել երկրում դեռևս անհասանելի ուսումնական նոր ծրագրեր կամ լրացնել առկա ուսումնական ծրագրերը: Երկու ԲՈՒՀ-ների միջև ուղղակի համագործակցության դեպքում, գիտելիքների և նորարարական փորձառության փոխանցման հնարավորությունները կարող են առանձնակի օգտակար լինել:

Միաժամանակ գոյություն ունեն բազմաթիվ մտավախություններ միջազգային բարձրագույն կրթության հետ կապված, որոնք բարձրաձայնվում են բարձրագույն կրթության ազգային տրամադրողների կողմից: Միջազգային կրթությունը հատկապես խնդրահարույց է որակի չափորոշիչների և սպառողների իրավունքների տեսակետից այն երկրներում, որտեղ վարչական կարողությունները թույլ են և որտեղ չկան որակի ապահովման գործող համակարգեր: Մասնավորապես կարող են խնդիրներ առաջանալ կապված չճանաչված, չկանոնակարգվող ԲՈՒՀ-երի հետ, որոնք որակի վերահսկման ազգային համակարգին չեն ենթարկվում (դոնոր կամ էլ ընդունող երկրի կողմից): Սպառողների պաշտպանությունը նույնպես կարևոր ազգային խնդիր է: Սա առանձնակի կարևորություն է ներկայացնում՝ կապված «դիպլոմ արտադրողների» հետ, ովքեր խարդախ ծառայություններ են առաջարկում:

Մեկ այլ խնդիր է միջազգային բարձրագույն կրթության տրամադրման անկայունությունը: Դրա գոյությունը կարող է դադարեցվել, երբ այն այլևս շահութաբեր չէ՝ կիսատ թողնելով ուսանողների կրթությունը և հնարավորություն չտալով ստանալ վերջնական որակավորում:

Մեկ այլ խնդիր է սխալ տեղեկատվության տրամադրումը ուսումնական ծրագրերի և որակավորումների վերաբերյալ:

Ներկայումս այս խնդիրները հատկապես կարևորվում են այն զարգացող երկրներում, որտեղ բարձրագույն կրթության նկատմամբ հասարակության պահանջարկը բարձր է և աճի միտում ունի: Զարգացող շատ

երկրներում, որտեղ բնակչությունը երիտասարդ և աճող է, մոտ ապագայում ավելի շատ երիտասարդներ կպահանջեն բարձրագույն կրթության հնարավորություն: Այսօր բարձրագույն կրթության համակարգերը հաճախ թույլ են: Ավելին, դրանք տուժում են որակյալ դասախոսական անձնակազմի պակասից, «ուղեղների արտահոսքից» և անբավարար ֆինանսավորումից: Բարձրագույն կրթության համակարգերը կանոնակարգելու և կառավարելու պետական պատկան մարմինների կարողությունները նույնպես հաճախ բավական թույլ են: Ի լրումն, տեղեկատվական համակարգերը թերզարգացած են ինչպես ինստիտուցիոնալ, այնպես էլ համակարգային մակարդակներում:

Միջազգային բարձրագույն կրթության որակի ապահովման խնդրից բացի գոյություն ունեն նաև հնարավոր բացասական հետևանքներ հավասարության տեսակետից: Անշուշտ, ուսման վարձերը կարող են լինել սահմանափակող և միջազգային կրթությունը մատչելի դարձնել միայն հասարակության արտոնյալ դասերին: Միջազգային կրթության տրամադրումը կարող է կենտրոնացած լինել գլխավոր քաղաքներում, ինչը մեծացնում է երկրում կրթության անհամաչափ տրամադրման միջոցով առաջացած անհավասարությունը:

Պետությունը կարող է ցանկանալ էլ ավելի կրճատել բարձրագույն կրթության հետ կապված ծախսերը, ենթադրելով, որ շուկան կարող է կրել դրա աճող բաժինը: Բացի դա, պետական հաստատությունները շատ զարգացող երկրներում հաճախ վճարովի են, իսկ արևմտյան բարձրագույն կրթությունը ընկալվում է որպես տեղական կամ միջազգային աշխատաշուկա մուտք գործելու համար համեմատական առավելություն:

Ներկայումս ճնշում է գործադրվում ազգային իշխանությունների վրա՝ ընդունելու կրթության միջազգային տրամադրողներին: Այն ընդգրկվածության համեմատաբար ցածր մակարդակի, գիտելիքի վրա հիմնված համաշխարհային տնտեսությանը միանալու մտադրության և բարձրագույն կրթության նկատմամբ աճող պահանջարկի առաջացրած քաղաքական ճնշումների արդյունք է: Մասնաճյուղերը և ֆրանչայզինգային բարձրագույն կրթությունը հաճախ դրականորեն են ընկալվում, քանի որ դրանք բարձրագույն կրթություն են առաջարկում երկրում և դրանով նվազեցնում ուղեղների արտահոսքի հնարավորությունը: Անշուշտ, ուղեղների արտահոսքի խնդիրը հատկապես սուր է, երբ ուսանողները արտերկրում բնակվում են երկար ժամանակով: Այս բոլոր պատճառները զարգացող երկրներին հատկապես բաց են դարձնում օտարերկրյա կրթություն տրամադրողների համար:

Կրթության պլանավորման միջազգային ինստիտուտի հետազոտությունը նպատակ ուներ գնահատելու բարձրագույն կրթության տեղական համակարգերի վրա միջազգային բարձրագույն կրթության տրա-

մադրման ազդեցությունը: Հետազոտությունն արվել է նպատակ ունենալով լույս սփռել ազգային համակարգին միջազգային բարձրագույն կրթության նպաստման խնդրի վրա, որը հանդիսանում է թեժ քննարկումների առկա: Կառավարությունները հակված են ողջունելու միջազգային բարձրագույն կրթության տրամադրումը, քանի որ այն առաջարկում է ուսման նոր և հաճախ նորարարական հնարավորություններ: Ավելին, այն ընդլայնում է կրթության հասանելիությունը՝ միաժամանակ քիչ նպաստելով ուղեղների արտահոսքին: Մինչդեռ, ԲՈՒՀ-երի պետական հատվածը այս նոր առաջարկը ընկալում է որպես սպառնալիք: *Ներդիր 4-ը* ներկայացնում է միջազգային բարձրագույն կրթություն տրամադրողների ազդեցության որոշ օրինակներ տեղական բարձրագույն կրթության համակարգերի, որակի, հասանելիության և հավասարության վրա ուսումնասիրված յոթ երկրներում:

Ներդիր 3. Միջազգային բարձրագույն կրթություն տրամադրողների ազդեցությունը տեղական բարձրագույն կրթության համակարգերի վրա

Բոլոր ուսումնասիրված դեպքերում միջազգային բարձրագույն կրթություն տրամադրողները մեծամասամբ գործ ունեն պետական համալսարանների ակադեմիական անձնակազմի հետ: Օրինակ, ուսումնասիրությունը Քենիայում փաստում է, որ այստեղ միջազգային բարձրագույն կրթություն տրամադրողների անձնակազմի 70 տոկոսը դասավանդում է միաժամանակ տեղական համալսարաններում: Օտարերկրյա մասնագետները հաստատություններին և ծրագրերին միանում են սովորաբար կարճ ժամանակով:

Միջազգային տրամադրողները համալսարանական դասախոսներին այսպիսով առաջարկում են եկամուտ ստանալու լրացուցիչ հնարավորություններ: Ռուսաստանի դեպքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ համալսարանական դասախոսների 50 տոկոսի միջին վաստակը 1,500 ռուբլուց քիչ է (մոտ 50 ԱՄՆ դոլար ամսական): Հեղինակները գտնում են, որ ներկայիս չափորոշիչներով դասախոսների միայն 10 տոկոսի վարձատրությունը կարելի է համարել ընդունելի: Որպես հետևանք 2002թ. համալսարանական դասախոսների 85,5 տոկոսը ունեին երկրորդ աշխատանք, այդ թվում դասախոսների 43,7 տոկոսը աշխատում են կանոնավոր կերպով, 31,8 տոկոսը՝ ժամանակ առ ժամանակ, իսկ 10 տոկոսը՝ հազվադեպ:

Միջազգային կրթության որոշ տրամադրողներ առաջարկում են հնարա-

Ներդիր 4. Դեպքերի ուսումնասիրության ամփոփ արդյունքներ որակի, հասանելիության և հավասարության վերաբերյալ

Որակ

Հարավային Աֆրիկայում Կրթության վարչությունը 1999թ. հունվարին սկսեց մասնավոր ԲՈՒՀ-երի, այդ թվում միջազգային տրամադրողների գրանցման գործընթացը: Միջազգային կրթություն 14 տրամադրողները (11 համալսարան և 3 քոլեջ) Միացյալ Թագավորությունից, ԱՄՆ-ից, Ավստրալիայից ու Նիդեռլանդներից դիմեցին գրանցման համար և հաստատված որակի ազգային չափորոշիչներին համապատասխան միայն չորսը գրանցվեցին: 2003թ. Բարձրագույն կրթության հարավաֆրիկյան խորհուրդը ձեռնարկեց գործարար կառավարման մագիստրատուրայի բոլոր ծրագրերի հավատարմագրումը: Այս գործընթացը բացահայտեց, որ միջազգային բարձրագույն կրթության հատվածում առաջարկվող գործարար կառավարման մագիստրատուրայի չորս ծրագրերից միայն մեկը կարող էր ստանալ պայմանական հավատարմագրում, իսկ մյուս երեքի հավատարմագրումը մերժվեց: Պատճառը հետևյալ գործոններից մեկն էր. բանիմաց և համապատասխան անձնակազմի պակաս, մեծ կախվածություն կես դրույքով աշխատող անձնակազմից, ուսումնական ծրագրերի չտեղայնացումը կառավարման ոլորտում կրթության հարավաֆրիկյան կարիքները ներառելու համար, վերահսկող/ուսանող բարձր հարաբերակցությունը, սահմանափակ և թերֆինանսավորված գրադարանները, գլխամասային հաստատությունից կախված որակի ապահովում և վերջապես որակի արտաքին ապահովման համակարգերի անարդյունավետ գործունեությունը:

Այնուամենայնիվ, հաշվետվություններից մեկը միջազգային բարձրագույն կրթություն դեպքերում փաստում է ուսումնական ծրագրերի բարելավման, գիտելիքների և դասավանդման մեթոդների փոխադարձ զարգացման մասին: Ֆիլիպինները և Քենիան նշում են, որ տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների ոլորտում միջազգային բարձրագույն կրթության իրականացումը ուղեկցվել է նոր տեխնոլոգիաների և սարքավորումների ներդրմամբ: Փաստվում է նաև միջազգային բարձրագույն կրթության շատ ծրագրերի մասին, որոնք առաջարկվում են անգլերեն լեզվով կրթություն այնպիսի երկրներում, ինչպիսիք են Ռուսաստանը, Օմանը, ինչպես նաև Չիլին և Արգենտինան: Անգլերեն լեզվով ծրագրերի առաջարկը շրջանավարտներին տալիս է լրացուցիչ առավելություն, մասնավորապես, երբ նրանք փորձում են մուտք գործել միջազգային աշխատաշուկա (միջազգային ընկերություններ) կամ աշխատել արտերկրում:

վորություններ տեղական անձնակազմի կարողությունների զարգացման համար: Ֆիլիպինների փորձի ուսումնասիրությունը ներկայացնում է միջազգային տրամադրողի մոտ դասընթացներ վարելու վերապատրաստում անցած տեղական անձնակազմի և դասախոսական կազմի որակավորումների, թարմացման ու բարելավման օրինակներ: Ռուսաստանի դեպքը ցույց է տալիս, որ բրիտանական համալսարանի հետ գործարար կառավարման մագիստրատուրայի ծրագրում ներգրավված տեղական համալսարանի ակադեմիական անձնակազմը վերապատրաստվել է արտերկրում: Գործարար կառավարման մագիստրատուրայի ծրագրում, որը միջազգային բարձրագույն կրթության իրականացման օրինակ է Ռուսաստանում, գոյություն ունի զուգահեռ ուսուցման համակարգ. ռուս փորձագետը հետևում է բրիտանական կոլեգաների դասավանդմանը և յուրացնում մեթոդներն ու բովանդակությունը: Միաժամանակ, դժվար է ասել որ այսպիսի դեպքերը հաճախակի են կամ ավելի շուտ բացառություն:

Դեպքերի ուսումնասիրման հեղինակները նաև պատասխանել են այն հարցին, թե արդյոք միջազգային բարձրագույն կրթություն տրամադրողները մրցակցություն են ստեղծում տեղական բարձրագույն կրթության համակարգում ուսանողների ներգրավման առումով: Մի քանի դեպքերի ուսումնասիրությունից պարզվեց որ որոշ սահմանային մրցակցություն գոյություն ունի, սակայն ոչ տեղական պետական համակարգի հետ, քանի որ ուսման վճարները միջազգային բարձրագույն կրթության հատվածում համեմատաբար բարձր են և պետական հատվածը ուսանողների համար սովորաբար նախընտրելի տարբերակ է: Մրցակցությունը գլխավորապես ծագում է տեղական և միջազգային մասնավոր կրթություն տրամադրողների միջև, քանի որ ուսման վճարները համեմատելի մակարդակների վրա են: Միևնույն համակարգի որոշ մասերում կարող են լինել բացառություններ. օրինակ մագիստրական բարձրագույն կրթություն տրամադրելիս արգենտինյան համալսարանները դրանց համար համեմատաբար բարձր ուսման վարձ են գանձում, մինչդեռ բակալավրական դասընթացները սովորաբար անվճար են:

Խնդիր էր դրվել նաև պարզելու, թե արդյոք գոյություն ունեն ինստիտուցիոնալ կապեր տեղական և միջազգային բարձրագույն կրթություն տրամադրողների միջև: Դեպքերի ուսումնասիրության հեղինակները պնդում էին, որ բացի անհատների շարժից, կազմակերպված շատ քիչ փոխգործակցություն կա միջազգային բարձրագույն կրթություն տրամադրողների և տեղական պետական հաստատությունների միջև: Նրանք պարզապես համատեղ գոյություն ունեն առանց ազդելու միմյանց գործունեության վրա:

Աղբյուր՝ Martin, 2007.

Դեպքերի ուսումնասիրման մի քանի հեղինակներ նշում են, որ միջազգային բարձրագույն կրթություն տրամադրողները լրացնում են այն քանակական և որակական անհամապատասխանությունը, որն առկա է ազգային բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտի առաջարկներում, գլխավորապես մասնավոր ծառայությունների բնագավառին վերաբերող կրթական առաջարկներում: Նման լրացումը ընկալվում է որպես նպաստավոր, միտած բարելավելու շրջանավարտների աշխատանքի ընդունման հնարավորությունները: Սակայն ոչ մի երկրում չկար հասանելի տեղեկատվություն, որը կհիմնավորեր և քանակական գնահատական կտար այս ընկալմանը: Օմանի դեպքը ցույց է տալիս, որ բնական գիտությունների հատվածում միջազգային բարձրագույն կրթության միջոցով կրթական առաջարկների աճի ակնկալիքը չի արդարացվել: Թվում է, թե միջազգային բարձրագույն կրթության տրամադրումը լրացնում է որակավորումների ազգային համակարգում առկա անհամապատասխանությունները: Սակայն դա տեղի է ունենում միայն այն ոլորտներում, որտեղ բարձր է շահութաբերությունը (քանի որ կրթության տրամադրումը կարող է վերարտադրվել ցածր ծախսերով) և աշխատաշուկայում առկա են գրավիչ թափուր տեղեր: Այս ընդհանուր սկզբունքը բացառում է արդիական և հետազոտությունների վրա հիմնված ծրագրերի տարածումը:

Հասանելիություն և հավասարություն

Դեպքերի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ միջազգային բարձրագույն կրթության տրամադրումը ստեղծում է կրթության հասանելիության նոր, բայց հաճախ փոքր հնարավորություններ: Օրինակ, Քենիայում գոյություն ունեցող հաստատությունները կարող են բավարարել բարձրագույն կրթության նկատմամբ պահանջակի միայն 30 տոկոսը (չհաշված սովորել ցանկացող բարձր տարիքի անձանց): Օմանում 2003թ. բարձրագույն կրթության պետական հաստատություն ընդունված միջնակարգ կրթությամբ շրջանավարտները կազմել են միայն 27.8 տոկոսը:

1993 թվականից ի վեր մոտ 10,000 ուսանող է Քենիայում ավարտել միջազգային բարձրագույն կրթություն տրամադրող հաստատություններ: Օմանում նաև նշվում է, որ մասնավոր հատվածի մեծացումը միջազգային բարձրագույն կրթության տրամադրման օգնությամբ «համեմատաբար արագ և էժան ուղի» էր հասնելու բարձրագույն կրթության արագ տարածմանը: 2002թ. Օմանում բարձրագույն ուսումնական հաստատություններում ընդգրկվածների 34.5 տոկոսը մասնավոր հատվածում էին:

Հասանելիությունը բոլոր դեպքերում տարբեր չափերով է մեծանում,

բայց բոլոր հեղինակները պնդում են այն փաստը, որ տեղի էր ունենում միայն գլխավոր քաղաքներում (մեծամասամբ մայրաքաղաքում), որտեղ առկա է ակադեմիական անձնակազմի և պոտենցիալ ուսանողների զգալի քանակություն: Ռուսաստանի դեպքը ցույց է տալիս, որ միջազգային բարձրագույն կրթության տրամադրումը որոշակիորեն սրել է տարածաշրջանային անհավասարությունները երկրում բարձրագույն կրթության տրամադրման հարցում: Սա նաև հաստատվել է Օմանի դեպքում, որտեղ մասնավոր քոլեջների մեծամասնությունը տեղակայված են Մասկատի շրջանում:

Հավասարության հարցում Քենիայի, Չիլիի, Արգենտինայի և Ֆիլիպինների դեպքերը ընդգծում են, որ միջազգային բարձրագույն կրթության տրամադրումը հասանելի է միայն նրանց, ովքեր կարող են վճարել դրա համար: Այս երկրներում միջազգային բարձրագույն կրթություն տրամադրողները ուսման բարձր վճարների պայմաններում ուսանողներին ընդունում են բնակչության վերնախավից: Իսկապես, Չիլիում, Արգենտինայում և Ֆիլիպիններում միջազգային բարձրագույն կրթության տրամադրողները առաջարկում են մասնավոր ուսուցման ամենաթանկ հատվածը: Բացառություն է Քենիան, որտեղ դրանք համեմատելի են տեղական մասնավոր կրթական առաջարկներին, բայց երկու անգամ ավելի են պետական հատվածի առաջարկներից:
Հարավային Աֆրիկայում արտասահմանյան չորս մասնաճյուղեր ընդունված ուսանողների միայն 24 տոկոսն է սևամորթ աֆրիկացիներ, մինչդեռ սպիտակամորթները մեծամասնություն են կազմում 54 տոկոսով: Սրա պատճառը հիմնականում ուսման վարձի կառուցվածքն է, որը երկու անգամ ավել է տեղական պետական ԲՈՒՀ-երի վարձերից և չորս անգամ ավելի թանկ է տեղական մասնավոր տրամադրողների համեմատությամբ:

Որոշ երկրներում, ինչպիսին է Քենիան, գոյություն ունի օրենսդրական պարտավորություն մասնավոր կրթություն տրամադրողների համար՝ առաջարկելու որոշակի քանակությամբ կրթաթոշակներ, բայց հաճախ նույնիսկ կարիքավոր ուսանողները իրազեկված չեն և այդ պատճառով չեն դիմում դրանց համար: Օմանը կրկին բացառություն է կազմում միջազգային բարձրագույն կրթության միջինից բարձր խավերի ուսանողներին հասանելիության կանոնից: Իրականում, Օմանի կառավարությունը կրթաթոշակներ է առաջարկում մասնավոր հատվածում սովորող ուսանողների 80 տոկոսին: Սա էր այստեղ մասնավոր կրթության հատվածի արագ ընդարձակման պատճառը:

Աղբյուրը՝ Martin, 2007.

Վարժություն 1

1 Կիրառելով ինստիտուցիոնալ և ծրագրային շարժունակության վերոնշյալ տիպաբանությունը՝ կազմեք Ձեր երկրում գործող միջազգային կրթություն տրամադրողների ցանկ Տեղեկատվության ի՞նչ (պաշտոնական) աղբյուրներ են հասանելի դրա համար:

2 Կազմեք Ձեր երկրում միջազգային կրթություն տրամադրողների գործունեության հետևանքով ծագող խնդիրների ցանկ

Միջազգային բարձրագույն կրթության կանոնակարգման տարբերակներ

1. Որո՞նք են միջազգային բարձրագույն կրթության կանոնակարգման հիմնական մոտեցումները

Միջազգային բարձրագույն կրթությունը կանոնակարգելիս առաջին հարցը վերաբերում է դրա չափերին և որևէ երկրում նրա ունեցած դերի որոշման անհրաժեշտությանը կոնկրետ ժամանակամիջոցում:

Որոշ երկրների համար միջազգային բարձրագույն կրթությունը արդյունավետ պատասխան է բարձրագույն կրթության չբավարարված պահանջարկին ինչպես ընդգրկվածության, այնպես էլ կրթության ոլորտների առումով, որը հնարավոր չէ բավարարել ազգային ռեսուրսների օգտագործմամբ: Այն նաև ապահովում է նոր մանկավարժական կամ ծրագրային մոտեցումներ, որոնք օգնում են արդիականացնելու ազգային բարձրագույն կրթությունը և կարող է նեմուծել դասավանդման նոր տեխնոլոգիաներ կամ մեթոդներ:

Այլ երկրների համար դա այդքան էլ մեծ առավելություն չէ: Միջազգային բարձրագույն կրթությունը կարող է իրականացնել մի երկրում, որտեղ արդեն առկա են համապատասխան հնարավորություններ բարձրագույն կրթություն ստանալ ցանկացողների համար: Կամ այն կարող է

գործել այն շրջաններում, որոնք ազգային բարձրագույն կրթությունը արդեն լայնորեն ընդգրկում է: Արդյունքում միջազգային բարձրագույն կրթությունը առաջարկում է «նույն բանից ավելի շատ», գանձում է ավելի բարձր ուսման վարձ կամ նույնիսկ տրամադրում է մի ծառայություն, որը որակապես զիջում է ազգային առաջարկներին:

Գոյություն ունեն տարբեր մոտեցումներ բարձրագույն կրթության միջազգային առևտրի վերաբերյալ: Այս մոտեցումները հաճախ առնչվում են առևտրի ընդհանուր քաղաքականությանը այն չափով, թե որքանով է առևտրի նկատմամբ ազատական մոտեցումը տվյալ երկրում նախընտրելի:

Որպես ծայրահեղ մոտեցում կարող է բնութագրվել «չմիջամտելու մոտեցումը»: Այն կանոնակարգում չի ենթադրում. այս դեպքում երկրները պարզապես անտեսում են միջազգային բարձրագույն կրթություն տրամադրողների գոյությունը: Որպես հետևանք նրանք չեն ճանաչում դրանց որակավորումները պետական զբաղվածության ոլորտում: Այս մոտեցումը հաճախ ընդունվում է «ըստ սահմանման», քանի, որ միջազգային կրթության տրամադրումը համեմատաբար փոքր է և դրա նկատմամբ կարծես թե մեծ պահանջարկ չկա: Պատահում է նաև, որ քաղաքականապես դժվար է սահմանել ազգային քաղաքականություն և կանոնակարգման ռեժիմ: Երբեմն, չմիջամտելու մոտեցումը կարող է օգտագործվել, երբ երկրները որոշում են, որ միջազգային բարձրագույն կրթությունը պարտադիր չէ որ վատը լինի: Դրա համար նրանք դրա դեմ չեն գործում: Այս դեպքերում որակավորումների ճանաչումը այլևս խնդիր չէ, քանի որ մեծամասամբ միջազգային բարձրագույն կրթություն տրամադրողները որակավորումներ են առաջարկում չկանոնակարգվող ոլորտներում (որտեղ ճանաչումը պարտադիր չէ): Սա նաև ամենահավանական ռազմավարությունն է, երբ երկրները չունեն ազգային բարձրագույն կրթության որևէ կանոնակարգման ռեժիմ: Այս դեպքում դժվար կլինի կանոնակարգման միջոցներ սահմանել օտարերկրացիների նկատմամբ, եթե նույնիսկ կառավարությունը ցանկանում է:

Երկրորդ տարբերակը կարող է կոչվել «կանոնակարգման մոտեցում»: Այս մոտեցման դեպքում երկրները ընդունում են միջազգային կրթություն տրամադրողների գործունեությունը երկրում, բայց միևնույն ժամանակ փորձում են վերահսկել այն: Դա արվում է որակի նվազագույն մակարդակ երաշխավորելու նպատակով՝ ի շահ ուսանողների և ազգային ընդհանուր շահերի: Նման ազգային շահեր կարող են լինել ազգային ինքնության զարգացումը կամ տեղական բարձրագույն կրթական համակարգի պաշտպանությունը: Կանոնակարգման մոտեցումն ունի շատ ենթատարբերակներ. ազատական ռեժիմներից մինչև խիստ կանոնակարգվող ռեժիմները:

Վերբիկը և Ջոկիվիրտան (Verbik and Jokivirta) առանձնացնում են հետևյալ մոտեցումները՝

- կանոնակարգման բացակայություն (չմիջամտելու մոտեցում),
- ազատական,
- չափավոր ազատական,
- խիստ սահմանափակող կանոնակարգում (տես Աղյուսակ 3):

Երկրները նաև տեղափոխվում են մեկ կատեգորիայից մյուսը՝ ազատականից դեպի սահմանափակող և սահմանափակողից՝ ազատական: Սա կարող է տեղի ունենալ ինքնաբերաբար («ըստ սահմանման») մոտեցման վերանայման արդյունքում: Կամ կարող է լինել փոփոխություն քաղաքականության մեջ (երբեմն կրթության ոլորտից դուրս), որը միջազգային բարձրագույն կրթության նկատմամբ պահանջում է նոր մոտեցում:

Աղյուսակ 3 - Միջազգային բարձրագույն կրթության կանոնակարգման ազգային շրջանակները

Մոդել	Կանոնակարգում
Կանոնակարգման բացակայություն	Չկա հատուկ կանոնակարգում կամ միջազգային տրամադրողների վերահսկողություն, որոնք ազատ են գործելու առանց հյուրընկալող երկրի թույլտվության
Ազատական	Կրթության օտարերկրյա տրամադրողները պետք է բավարարեն որոշակի նվազագույն պայմաններ նախքան գործունեություն սկսելը (օրինակ՝ պաշտոնական ճանաչում սեփական երկրում):
Չափավոր ազատական	Ներմուծող երկիրը ակտիվորեն ներգրավված է միջազգային կրթություն տրամադրողների լիցենզավորման և (որոշ դեպքերում) հավատարմագրման գործընթացներում: Այս մոդելը պահանջում է, որ օտարերկրյա հաստատությունները ստանան հավատարմագրում կամ այլ պաշտոնական թույլտվություն հյուրընկալող երկրի կողմից (օրինակ՝ Կրթության նախարարության կողմից) նախքան գործունեություն սկսելը: Այս կատեգորիան բազմազան է՝ սկսած պարտադիր գրանցումից մինչև ակադեմիական չափանիշների պաշտոնական գնահատումը: Պահանջները սովորաբար պարզ են և չծանրաբեռնող:

Մոդուլ 5 - Միջազգային բարձրագույն կրթություն տրամադրողների կանոնակարգում և որակի ապահովում

Խիստ սահմանա-փակող	Կառավարությունը կամ բարձրագույն կրթության կառավարման մեկ այլ պետական մարմին սահմանում է խիստ պահանջներ կրթության օտարերկրյա տրամադրողների նկատմամբ: Այսպիսի հաստատություններից կարող է պահանջվել հաստատել ֆիզիկական ներկայություն երկրում (օրինակ՝ կրթության ֆրանչայզինգային տրամադրումը արգելվում է), միայն հյուրընկալ երկրի գործակալության կողմից հավատարմագրված հաստատությունները/ծրագրերն են արտոնագրվում, և/կամ կրթության օտարերկրյա տրամադրողները պետք է փոխեն իրենց ուսումնական ծրագրերը տեղական կրթական առաջարկներին համապատասխանելու համար և այլն:

Աղբյուր՝ Verbik and Jokivirta, 2005.

Այս չորս մոտեցումները ներկայացնում են գործողությունների միայն ընդհանուր (լայն) գծերը և իրենց շրջանակում ներառում են շատ տարբերակներ:

«Կանոնակարգման բացակայությունը» տարբերակ է, որը խրախուսում է երկրում միջազգային բարձրագույն կրթության զարգացումը՝ հավանաբար «հասանելիության ընդարձակման» հիմնավորմամբ: Այս տարբերակը չի պահանջում նոր վարչական կառույցների հիմնում կամ զարգացում, որոնք պատասխանատվություն կկրեն որակի գնահատման և հսկողության և/կամ հանրությանը տեղեկատվության տրամադրման համար: Այնուամենայնիվ այն նաև ռիսկային տարբերակ է, քանի որ պետական իշխանությունները ոչինչ չեն իմանա բարձրագույն կրթության տրամադրման կամ այն ուղիների մասին, որով այն ազդում և փոխգործակցում է պետական համակարգի հետ: Հետևաբար իշխանությունները կորցնում են վերահսկողությունը երկրի բարձրագույն կրթության երբեմն զգալի մասի նկատմամբ:

Կանոնակարգման մոտեցումը, որն ավելի շատ միջամտություն է ենթադրում, ստեղծում է տեղեկատվական բազա միջազգային բարձրագույն կրթության տրամադրման մասին և ունակ է ուղղորդելու այն ազգային քաղաքականության նպատակներին համապատասխան: Մասնավորապես չափավոր ազատական կանոնակարգման ռեժիմը թույլ է տալիս միջազգային բարձրագույն կրթություն տրամադրողներին հարմարվել որակի ազգային պահանջներին: Սա հատկապես ճիշտ է, երբ ազգային կրթության բոլոր տրամադրողները՝ պետական և մասնավոր, ենթարկվում են որակի ապահովման միևնույն ռեժիմին: Այս դեպքում առողջ մրցակցություն կարող է ստեղծվել բոլոր տրամադրողների միջև և հաջողված փորձառությունը կարող է փոխանակվել: Խիստ սահմանափակող կանոնակարգման ռե-

ժիմը կարող է սահմանափակել միջազգային բարձրագույն կրթություն տրամադրողների զարգացումը, որոնց համար կարող է դժվարանալ կանոնակարգման այսպիսի շրջանակում ձևավորվելը և զարգանալը:

Արդյոք անհրաժեշտ է ունենալ առանձին օրենսդրություն միջազգային բարձրագույն կրթություն տրամադրողների վերաբերյալ:

Հիմնական հարցերից մեկը, որին երկիրը պետք է անդրադառնա՝ կապված միջազգային կրթություն տրամադրողների կանոնակարգման հետ, այն է, թե արդյոք մասնավոր կրթություն տրամադրողների համար սահմանված ռեժիմը բավարար է ընդգրկելու միջազգային բարձրագույն կրթություն տրամադրողներին: Այն պետք է հաշվի առնի, թե արդյոք կան միջազգային կրթություն տրամադրողների կողմից հարուցված առանձնահատուկ խնդիրներ, որոնք պահանջում են քաղաքականության հատուկ ռեժիմ, որի հիմքերը պետք է սահմանվեն առանձին օրենսդրությամբ:

Չնայած միջազգային բարձրագույն կրթության աճող տրամադրմանը՝ շատ երկրներ դեռ չեն մշակել հատուկ օրենսդրություն միջազգային կրթություն տրամադրողների համար: Կամ նրանք որոշել են, որ անօգուտ է, կամ՝ անհրաժեշտ չէ դա անել: Տեղական տրամադրողների նկատմամբ կիրառվող կանոնակարգումը կարող է բավարար լինել, եթե այն իրոք արդյունավետ է: Այս դեպքում ակընկալվում է, որ միջազգային բարձրագույն կրթություն տրամադրողները պետք է հետևեն երկրում մասնավոր բարձրագույն կրթության կանոնակարգման ռեժիմին:

Որոշ երկրներ պարզապես միջազգային բարձրագույն կրթություն տրամադրողներին վերաբերող մաս են ավելացնում մասնավոր բարձրագույն կրթության մասին իրենց օրենսդրությանը: Այս ավելացումը նշանակում է, որ միջազգային բարձրագույն կրթություն տրամադրողները պետք է հետևեն կանոնակարգման միևնույն շրջանակին:

Այնուամենայնիվ, գնալով ավելի տարածված է դառնում միջազգային տրամադրողներին առնչվող առանձին օրենսդրության ընդունումը տարբեր երկրներում: Այս օրենսդրությունն ուղղված է ինչպես շահույթ չհետապնդող, այնպես էլ շահույթ հետապնդող կրթություն տրամադրողներին, կորպորատիվ համալսարաններին, մասնաճյուղերին և ֆրանչայզինգային կրթությանը:

Խնդիրները, որոնք այն պետք է կանոնակարգի, կքննարկվեն ստորև:

2. Կանոնակարգման ռեժիմներ մասնաճյուղերի համար

Մասնաճյուղերի համար կանոնակարգման ռեժիմները լայնորեն տարածված են: Սովորաբար արտասահմանյան ԲՈՒՀ-երի մասնաճյուղերին վերաբերում են ինչպես տեղական մասնավոր կրթություն տրամադրողների: Որոշ երկրներ միջազգային բարձրագույն կրթություն տրամադրողներից պահանջում են անցնել առանձին գրանցում և մասնավոր կրթություն տրամադրողների նկատմամբ կիրառվող լիցենզավորում:

Բարձրագույն կրթություն տրամադրողները, որոնք հիմնադրվում են շահույթ ստանալու նպատակով, պետք է սովորաբար գրանցվեն առևտրի համար պատասխանատու մարմնում (ինչպես օրինակ Առևտրի պալատը): Ի լրումն՝ մասնաճյուղերը պետք է հաճախ անցնեն լիցենզավորման որոշ գործընթացներ: Լիցենզավորման ընթացքում գնահատվում են կրթություն տրամադրողի տվյալ կրթական ծրագիրը իրականացնելու ակադեմիական, կառավարչական և ֆինանսական կարողությունները: Գրանցումը իրականացվում է սովորաբար մասնավոր ձեռնարկատիրության համար պատասխանատու ազգային մարմնում: Օրինակ, այդպես է Քենիայի դեպքում (տես Ներդիր 5):

Ներդիր 5. Գրանցման պահանջները Քենիայում

Ինչպես սահմանված է Համալսարանների մասին ակտի Cap 210B բաժնում մասնավոր համալսարանի հիմնադրման պահանջները շարադրված են 1989թ. Համալսարանների կանոնների երրորդ մասում (մասնավոր համալսարանների հիմնադրում, ստանդարտացում, հավատարմագրում և վերահսկողություն): Օտարերկրյա համալսարանների մասնաճյուղերի համար օգտագործվում են նույն կանոնները: Դրանք ներառում են՝

1. Գրավոր դիմումի ներկայացում ԲԿՀ Form ACC/CHE3 ձևաչափով,

2. Գրավոր առաջարկի ներկայացում, որը նկարագրում է առաջարկվող անունը, տեղը, ակադեմիական բնույթը, նպատակները և խնդիրները, կառավարման ձևը, առաջարկվող ակադեմիական ծրագրերը, ակադեմիական ռեսուրսները և առաջին երեք տարիների գործունեությունը ներառող ժամանակացույց,

3. Դիմումի համար վճարի մուծում: Այն հազար քենիական շիլինգից բարձրացվել է մինչև հիսուն հազար շիլինգի,

4. Թույտվության (Չարտերի) տրամադրման համար անհրաժեշտ բո-

լոր գործողությունների համար վճարի մուծում: Դրանք ներառում են ակադեմիական ծրագրերի գնահատումը, վերահսկողությունը, միջանկյալ լիազորագրի թողարկումը, նախնական թույլտվության գնահատումը և թույլտվության շնորհումը:

Գրանցման գործընթացում ընդգրկված են մի քանի մարմիններ, այդ թվում Հետազոտությունների, տեխնիկական ուսուցման և տեխնոլոգիաների նախարարությունը (այս նախարարությունը միավորվել է Կրթության նախարարության հետ՝ ձևավորելով MOEST-ը) և Ընկերությունների ռեգիստրը, որը գրանցում է միջազգային առևտրային ոչ համալսարանական մակարդակի կրթություն տրամադրողներին: Արժե նշել, որ որոշ պետական հետմիջնակարգ կրթական հաստատություններ, որոնք համագործակցում են միջազգային առևտրային կրթություն տրամադրողների հետ, ինչպիսին է Քենիայի Հաղորդակցման տեխնոլոգիաների քոլեջը, գրանցված են որպես ընկերություններ:
MOEST-ը բարձրագույն կրթական հաստատություններին գրանցում է Կրթության մասին ակտի Cap 211 4-րդ մասի համաձայն: Այս մասը վերաբերում է օժանդակություն չունեցող հաստատությունների գրանցմանը: 14-րդ բաժինը գրանցման պահանջներից մեկը սահմանում է որպես դիմումի ներկայացում կրթության համար պատասխանատու նախարարությանը: Բաժին 17-ում սահմանված է, որ «Նախարարությունը կարող է կանոնակարգել օժանդակություն չունեցող հաստատությունների գրանցումը...»: Սա բավական անորոշ է, բայց Կրթական հաստատությունների տեսուչների համար ձեռնարկը տալիս է հաստատություն հիմնելու հիմնական պահանջները (որոնք հիմնականում նաև գրանցման պահանջներն են)՝

- գրանցված կառավարիչի առկայություն,
- համապատասխան ֆիզիկական կարողությունների առկայություն,
- համապատասխան քանակի որակավորված դասավանդող անձնակազմ,
- տեսչական հաշվետվություն տեսուչների և հանրային առողջության աշխատակցի կողմից,
- դիմում Կրթության նախարարությանը:

Այն պահից երբ համապատասխան նախարարությունը գրանցում է հաստատությունը, հաստատությունից պահանջվում է ստանալ տարեկան առևտրային լիցենզիա քաղաքային իշխանություններից: Հաստատությունը ներկայացնում է գրանցման փաստաթղթերը և վճարում լիցենզավորող գրասենյակին լիցենզավորման գործընթացը սկսելու համար: Սա նշանակում է, որ հաստատությունը չի կարող լիցենզիա ստանալ մինչև նրա գրանցումը:
Համաձայն Ընկերությունների մասին ակտի գրանցման պահանջներն են՝

- ունենալ ընկերության անուն (վճարի դիմաց պետք է արվի ուսումնասիրություն համոզվելու, որ այդ անունը չի օգտագործվում մեկ այլ ընկերության կողմից),
- դիմումի ներկայացում ընկերությունների ռեգիստր՝ նշելով առաջարկվող ընկերության կողմից նախատեսվող բիզնեսի տեսակը և ընկերության տնօրենների նույնականացումը,
- դիմումի համար վճարի մուծում:

Աղբյուր՝ Kaberia, 2007.

Լիցենզավորումը որպես մեկանգամյա կամ շարունակական գործընթաց

Լիցենզավորման ընթացակարգը կարող է կազմակերպվել որպես եզակի իրադարձություն կամ որպես գործընթաց: Որոշ երկրներում, ընթացակարգերը հաստատություններից պահանջում են անցնել երկու փուլ «ինքնավար» կարգավիճակ ստանալու համար: Երկրորդ փուլը սկսում է առաջինից 5-6 տարի հետո: Հիմնավորումն այն է, որ ԲՈՒՀ-ի նախագիծ իրագործելու կարողությունը կարող է գնահատվել միայն ստացված արդյունքների հիման վրա: Հարավային Աֆրիկան օրինակ սահմանել է հատուկ պայմաններ միջազգային բարձրագույն կրթություն տրամադրողների գրանցման համար: Այն շարունակական տարեկան հսկողության գործընթաց է: Միջազգային բարձրագույն կրթություն տրամադրողները պետք է հավաքեն և Ազգային կրթության վարչություն հանձնեն տարեկան տվյալներ անձնակազմի/ուսանողների քանակի, որակավորումների, առաջարկվող ծրագրերի և ուսանողների առաջադիմության մասին: Այս տվյալները թույլ են տալիս Վարչությանը մոտիկից հսկել միջազգային բարձրագույն կրթություն տրամադրողի զարգացումը և կատարողականը:

Չիլիում հաստատությունները վերահսկման ժամանակաշրջանում պետք է ներկայացնեն ակադեմիական տեղեկատվությամբ տարեկան հաշվետվություններ ուսանողների և անձնակազմի մասին: Կատարվում են առնվազն երեք արտաքին գնահատման այցելություններ և տարբեր ծրագրերում ընդգրկված ուսանողների քննում:

Ներդիր 6. Լիցենզավորումը որպես շարունակական գործընթաց Չիլիում

Չիլիական օրենքը չի ճանաչում օտարերկրյա հաստատությունների մասնաճյուղերը որպես այդպիսիք, այլ դրանք դիտարկում է որպես նոր հաստատություններ, որոնք ենթակա են նույն կանոնակարգմանը, ինչպես նոր ազգային հաստատությունները: Այդ պատճառով, եթե օտարերկրյա կրթություն տրամադրողը ցանկանում է գործունեություն սկսել Չիլիում, ապա այն պետք է ենթարկվի լիցենզավորման ընթացակարգերին և Կրթության բարձրագույն խորհուրդի հսկողությանը վեց տարուց ոչ պակաս և տասնմեկ տարուց ոչ ավել ժամանակով:

Իհարկե, 1980 - 1990 թվականների միջև հաստատությունների քանակը կտրուկ աճել է, իսկ կանոնակարգումը թողնվել է շուկային, որը ի վիճակի չլինելով զբաղվել որակի խնդիրներով, ձախողեց մասնավոր բարձրագույն կրթության առաջարկների օրինականացումը: Արդյունքում նույն նեոլիբերալ ռազմական կառավարությունը, որն ապականոնակարգել էր համակարգը, որոշեց, որ լիցենզավորման համակարգն անխուսափելի է:

Այսպիսով, 1990 թվականի մարտին սահմանադրական օրենքով ստեղծվեց նոր պետական գործակալություն՝ Կրթության բարձրագույն խորհուրդ, բոլոր նոր մասնավոր համալսարանների և մասնագիտական ինստիտուտների թույլտվության և նրանց գործունեության վերահսկման իրավասությամբ՝ նպատակ ունենալով ապահովել, որ դրանք կատարեն իրենց սկզբնական ինստիտուցիոնալ առաջարկում ստանձնած պարտավորությունները: Խորհուրդը նախագահում է Կրթության նախարարը և ներառում է ութ ակադեմիական աշխատողների, ովքեր նշանակվում են տարբեր հաստատությունների կողմից:

Այս մեխանիզմը խիստ պահանջներ է սահմանում բոլոր նոր բարձրագույն ուսումնական հաստատությունների համար՝

- դրանք պետք է ստանան սկզբնական թույլտվություն, ներառյալ հայտարարություն այն մասին, որ ունեն բավարար ռեսուրսներ զարգացնելու իրենց նախագիծը,
- Թույլտվությունը ստանալուց հետո դրանք պետք է ենթարկվեն վեց տարվա վերահսկողության, որը կարող է երկարացվել ևս հինգ տարով,
- Վերահսկողության ընթացքում Կրթության բարձրագույն խորհուրդը պետք է պատրաստի տարեկան հաշվետվություն՝ հաստատության գործունեությանն առնչվող բոլոր էական փոփոխականների (դասավանդում, կառավարում, ֆինանսներ, դասավանդման և ուսումնառության ռեսուրսներ, ենթակառուցվածքներ և այլ) գնահատման հիման վրա: Դա անելու համար Խորհուրդը պահանջում է ինք-

նագնահատման հաշվետվություններ, այցելում է հաստատություն՝ օգտագործելով արտաքին փորձաքննողների, ստուգում է թեստերի և քննությունների արդյունքները և կարող է նույնիսկ անմիջականորեն քննել տվյալ ծրագրի ուսանողներին:

- Արդյունքում խորհուրդը գրում է տարեկան «գործողությունների նամակ», որտեղ նշվում են բացահայտված ուժեղ ու թույլ կողմերը և սահմանվում անհրաժեշտ գործողությունները:
- Վերահսկողության այս ժամանակահատվածում, եթե խորհուրդը գտնում է, որ հաստատությունը չի հետևում իր պահանջներին կամ չի գործում որակի չափորոշիչներին և իր սեփական առաքելությանը համապատասխան, ապա կարող է հաստատությանը արգելել նոր ուսանողներ ընդունել կամ նույնիսկ կարող է հետ վերցնել լիցենզիան:
- Վերահսկման ժամանակահատվածի վերջում Կրթության բարձրագույն խորհուրդը պետք է վկայագրի հաստատության ինքնավարությունը կամ, եթե նրա զարգացումը համարում է անբավարար, կարող է հետ վերցնել նրա լիցենզիան և այսպիսով փակել այն: 1990 թվականից ի վեր խորհուրդը փակել է 11 համալսարան և 19 մասնագիտական ինստիտուտ ու ինքնավարություն է շնորհել 33 հաստատությունների (որից 24-ը համալսարաններ են):

Նույն գործընթացը կիրառվում է նոր ծրագրերի նկատմամբ, որոնք առաջարկում են գործող հաստատությունները: Սկզբնական նախագծում բոլոր փոփոխությունների կամ նոր զարգացումների մասին հաստատությունները պետք է զեկուցեն Կրթության բարձրագույն խորհրդին:

Լիցենզիա ստանալուն անհրաժեշտ ողջ ժամանակահատվածի ընթացքում բարձրագույն ուսումնական հաստատությունը պետք է տրամադրի պահանջվող տեղեկատվությունը «իր զարգացմանն առնչվող բոլոր էական փոփոխականների վերաբերյալ, ինչպիսիք են՝ դասավանդում, մանկավարժություն, ֆիզիկական ռեսուրսներ, ենթակառուցվածքներ, ինչպես նաև տնտեսական և ֆինանսական ռեսուրսներ, որոնք անհրաժեշտ են ակադեմիական և մասնագիտական որակավորումների շնորհման համար»: (LOCE, 1990, հոդված 39).

Աղբյուր՝ Lemaître, 2007.

Լիցենզավորումը կարող է իրականացվել տարբեր չափանիշների հիման վրա: Առավել հաճախ դրանք առնչվում են կառավարման պետական մարմնին հանձնված ինստիտուցիոնալ նախագծի ակադեմիական, վարչական և ֆինանսական կենսունակությանը: Արգենտինայի ազգային գործակալության կողմից օգտագործվող չափանիշները թվարկված են *Ներդիր 7*-ում:

Ներդիր 7. Արգենտինայում ՀԳՀԱՀ-ի կողմից օգտագործվող լիցենզավորման պահանջները

Մասնավորապես մասնավոր համալսարանների և օտարերկրյա համալսարանների պարագայում Համալսարանների գնահատման և հավատարմագրման ազգային հանձնաժողովը (ՀԳՀԱՀ) գնահատում է ինստիտուցիոնալ նախագծի համապատասխանությունը և որպես համալսարան գործելու հնարավորությունը: Դա վերլուծություն է, որի ընթացքում հաշվի են առնվում յուրաքանչյուր հաստատության առաքելությունը, ստեղծման և զարգացման հիմնավորումները: Այն նաև էթիկական և պատասխանատու վերլուծություն է, որը հաստատության կողմից ներկայացված տվյալները և զարգացման ռազմավարությունները պահպանում է գաղտնի: Գնահատումը իրականացվում է փորձագետների կողմից, ովքեր ծանոթ են վերլուծվող թեմաներին և ովքեր հետևելով ընթացիկ կանոնակարգերին ու հարգելով յուրաքանչյուր հաստատության պատմությունը կամ նախագիծը, գնահատում են, թե արդյոք հաստատությունը բավարարում է որպես հաստատություն գործելու համար սահմանված ակադեմիական պահանջներին:

ՀԳՀԱՀ-ի կողմից թողարկվող հաշվետվության մեջ ներկայացված հիմնական հարցերն են.

Նոր համալսարանի ստեղծումը նախաձեռնող հիմնադրամների կամ ասոցիացիաների անդամների բարոյական, ֆինանսական և տնտեսական պատասխանատվությունը

Պետք է ապահովել հետևյալ պայմանները. ընթացիկ օրենսդրության խախտումների բացակայություն, որակավորումից զրկման դեպքերի բացակայություն, հաստատության հաջող գործունեությունը երաշխավորող ֆինանսական և տնտեսական պայմանների ապացույցներ: Դիմող հաստատության և դրա անդամների ակադեմիական, կրթական և մշակութային պատմությունը նույնպես հաշվի է առնվում: Վերջինս պետք է ունենա համալսարանական հետազոտությունների և դասավանդման, ինչպես նաև կրթական ու հետազոտական հաստատությունների կառավարման փորձ: Ի լրումն՝ պետք է ապահովվի նախագծի թափանցիկությունը:

Ինստիտուցիոնալ կամ ակադեմիական նախագծի կենսունակությունը և համապատասխանությունը Բարձրագույն կրթության մասին օրենքի սկզբունքներին և կանոններին

Անհրաժեշտ է, որ ձեռնարկության բնույթը, դրա ուղղակի հասցեատե-

ները, նախագծում ստանձնած պարտավորությունների տեսակը, կարճաժամկետում, միջնաժամկետում ու երկարաժամկետում դրա զարգացման հիմնարար ուղեցույցները և հատկապես նպաստը կրթական, սոցիալական զարգացմանը հստակ սահմանված լինեն, ինչն իր հերթին պետք է ամբողջովին համապատասխանի Բարձրագույն կրթության մասին օրենքին: Հիմնադրվող հաստատության առաքելությունը և նպատակները պետք է ներառեն դրանք: Ֆիզիկական, մարդկային և ֆինանսական ռեսուրսների զարգացման, ինչպես նաև կազմակերպչական և վարչական պլանները պետք է հետևողական լինեն՝ հաջողությունը երաշխավորելու համար: Իր հերթին, հաստատության առաքելությունը և նպատակները պետք է համապատասխանեն բարձրագույն կրթության օրենքի 28-րդ հոդվածում սահմանված հիմնական պարտավորություններին և հոդված 33-ում սահմանված գործառնական ընդհանուր պահանջներին: Նախագիծը պետք է պարունակի համալսարանական գործընթացների կազմակերպման և իրականացման համար պատասխանատու ինստիտուցիոնալ մարմինների ձևավորումը՝ երաշխավորելով այն կազմող ակադեմիական մարմինների ակադեմիական ազատությունն ու ինքնավարությունը:

Գործունեության սկզբում առկա դասավանդող անձնակազմի ակադեմիական մակարդակը և գիտական հետազոտությունների ու համալսարանական դասավանդման նախկին փորձառությունը

Ակադեմիական անձնակազմը պետք է ունենա համալսարանական նախագծին համարժեք պատրաստվածություն և փորձ, ինչպես նաև դասավանդման ու հետազոտական աշխատանքի նախկին հաջողված փորձառություն: Անձնակազմը պետք է լինի բավարար քանակի և անհրաժեշտ նվիրվածությամբ, մասնագիտացմամբ և ակադեմիական մակարդակով, որպեսզի երաշխավորի հաստատության հաջող մեկնարկն ու գործունեությունը: Գործունեության առաջին տարիների ընթացքում նախագծի պահանջները բավարարելու համար հաստատությունը պետք է ապահովի առաջարկվող ակադեմիական անձնակազմի արդյունավետ մասնակցությունը և համապատասխան պլանի մշակումը: Իր հերթին, այն պետք է ունենա ընթացակարգեր դասախոսների կատարողականի գնահատման համար և օգտագործի այդ արդյունքները նրանց մասնագիտական առաջխաղացման համար:

Որակ և առաջարկվող ուսումնական ու հետազոտական պլանների նորացում

Ուսումնական պլանը պետք է ներառի առարկայական և մասնագիտա-

կան ընթացիկ չափորոշիչները, համապատասխանի շրջանավարտների ձգտումներին: Նախագիծը պետք է մանրամասնի ընդունելության և ուսանողների ակադեմիական առաջադիմության գնահատման ընթացակարգերը: Դասախոսների, հետազոտողների անձնակազմը պետք է ունենա դասընթացների, դասավանդման և հետազոտական նախագծերի հաջող զարգացմանն անհրաժեշտ համապատասխան ակադեմիական մակարդակ: Կենտրոնների, ինստիտուտների կամ հետազոտական խմբերի ստեղծումը, խրախուսվող հետազոտական ոլորտները, համալսարանի ընդարձակման միջոցառումների և ծառայությունների մեկնարկն ու զարգացումը պետք է ներառվեն պլաններում՝ հստակեցնելով կապը դասավանդման ծրագրերի հետ: Դրանց ղեկավարները պետք է ունենան այդ առաջադրանքների կատարմանը համապատասխան որակավորումներ, իսկ նախագծերը պետք է ունենան ֆինանսավորման հեռանկարներ:

Առկա տնտեսական միջոցները, սարքավորումները և ենթակառուցվածքները, որոնք թույլ կտան իրագործել դասավանդման, հետազոտական ու համալսարանի ընդարձակման գործառույթները

Հաստատության ունեցած ռեսուրսները՝ մասնավորապես շենքային ենթակառուցվածքները, սարքավորումները և գրադարանները, պետք է համարժեք լինեն գործունեությունը սկսելու և սահմանված ժամանակահատվածում այն շարունակելու համար: Հակառակ դեպքում, այն պետք է ունենա հավաստի միջոցներ հաստատության բացման ժամանակ դրանք ունենալու վերաբերյալ: Ամեն դեպքում նախագիծը պետք է ունենա մանրամասն ներդրումային և սպասարկման պլան, ինչպես նաև կայուն ֆինանսական պլան՝ դրանց պահանջները բավարարելու համար:

Աշխարհի այլ կենտրոնների հետ միջազգային կապերը և համաձայնության հասնելու հնարավորությունները

Պաշտոնական կապերը տեղական և օտարերկրյա համալսարանների և հետազոտական կենտրոնների հետ էական են ակադեմիական, գիտական ու ֆինանսական օժանդակության համար: Այս փոխանակումներից ակնկալվող ձեռքբերումները և օգուտները նույնպես կարևոր են դասավանդման ծրագրի և նախատեսված հետազոտության համար:

Եթե օտարերկրյա հաստատությունն ունի հավատարմագրում իր ծագման երկրում կամ այլ հավատարմագրում միջազգային կազմակերպությունների կողմից, ապա այն հաշվի է առնվում գնահատման ժամանակ որպես լրացուցիչ տարր, ինչը սակայն չի բացառում օտարերկրյա հաստատության՝ օրենքով սահմանված հավատարմագրում անցնելը: Հիմնական չափանիշները, որոնցով ՀԳՀԱՀ-ը գնահատում է օտարերկրյա

համալսարանների ինստիտուցիոնալ նախագծերը, վերաբերում են տեղական գրասենյակի նախագծի որակին և հետևողականությանը, օտարերկրյա գնահատվող համալսարանի առանձնահատկություններին և մայր հաստատության հետ տեղական գործընկերոջ ունեցած իրական կապին: Եթե օտարերկրյա համալսարանն ունի հավատարմագրումներ, ապա դրանք կդիտարկվեն որպես լրացուցիչ տվյալներ և կավելացվեն ընդհանուր գնահատմանը, սակայն ոչ մի դեպքում վճռորոշ չեն լինի: Արգենտինյան պետությունը իրավունք է վերապահում իրականացնելու սեփական գնահատումը և հավատարմագրումը:

Աղբյուր՝ Villanueva, 2007.

«Համալսարան» տերմինի կիրառության սահմանափակումը

Շատ երկրներ մշակել են հատուկ օրենսդրություն կամ կանոնակարգեր՝ սահմանափակելու «համալսարան» տերմինի կիրառությունը. Մասնավոր կրթություն տրամադրողները հեշտությամբ իրենց հաստատությունները կոչում են «համալսարան» կամ «ակադեմիա» այս տերմինների հաղորդած հեղինակության պատճառով: Դրանց համար մասնագիտությունների շրջանակը և առաջարկվող ծրագրերի մակարդակը հաճախ սահմանվում են օրենքով: Հարավային Աֆրիկայում հատուկ օրենսդրություն է մշակվել «համալսարան» անվան օգտագործումը սահմանափակելու նպատակով, քանի որ մասնավորեցման բարձր մակարդակի արդյունքում շատ մասնավոր ԲՈՒՀ-եր սկսեցին չարաշահել այդ տերմինը: Ֆիլիպիններում համալսարանը պետք է առաջարկի քառամյա կրթական ծրագրեր, մագիստրական մակարդակի դասընթացներ և որոշ ծրագրեր, որոնք ստացել են բարձր մակարդակի հավատարմագրում (3-րդ մակարդակի հավատարմագրում հնարավոր չորսից):

Ներդիր 8. «Համալսարան» տերմինի օգտագործումը սահմանափակելու հատուկ օրենսդրություն Հարավային Աֆրիկայում և Ֆիլիպիններում

Հաստատության որպես համալսարան սահմանումը Հարավային Աֆրիկայում

Հարավային Աֆրիկայում Կրթության վարչությունը 1999թ. կանոնակարգեց մասնավոր հաստատությունների անվանակոչումը: Ոչ մի մասնավոր հաստատության չի թույլատրվել կոչվելու համալսարան կամ տեխնիկում՝ չնայած դրանցից շատերի ցանկությանն օգտագործելու այդպի-

սի անվանումներ: Մասնավոր բարձրագույն ուսումնական հաստատությունները մշտապես ձգտել են առաջարկել բակալավրական ծրագրեր, ինչպես նաև հետբուհական և դոկտորական ծրագրեր: Բարձրագույն կրթության խորհուրդը 2002 թվականին ստանձնել է երաշխավորություններ առաջարկել բարձրագույն կրթական հաստատությունների տերմինաբանության վերաբերյալ, որոնք պետք է հրապարակվեին 2005 թվականին:

Աղբյուր՝ Naidoo and Singh, 2007.

«Համալսարանի» հիմնումը Ֆիլիպիններում

Արժեթղթերի հանձնաժողովում գրանցման դիմումը և լիցենզիան պետք է հաստատվեն ԲԿԿ-ի կողմից: Որպես «համալսարան» գրանցվել ցանկացող ԲՈՒՀ-ի համար գոյություն ունեն որոշակի չափանիշներ, որոնք պետք է բավարարվեն, այդ թվում՝ 1) քառամյա ուսումնական ծրագրերի առաջարկում հումանիտար առարկաների, հիմնարար գիտությունների / մաթեմատիկայի և սոցիալական գիտությունների գծով, երեք մասնագիտական ու դեպի դոկտորի աստիճան տանող մագիստրական մակարդակի երկու դասընթացների առաջարկում, 2) 3-րդ մակարդակի հավատարմագրում բակալավրական ծրագրերից առնվազն չորս (որոնցից մեկը հումանիտար գիտությունների, իսկ մյուսը՝ բնական գիտությունների գծով) և երկու մագիստրոսական ծրագրերի համար, 3) հետազոտությունների համար համապատասխան բյուջետային հատկացումներ, 4) մասնագիտացման ոլորտներում համայնքային / ընդլայնված ծրագրերի ապահովվում, 5) անձնակազմի պահանջներ. դասախոսական անձնակազմի առնվազն 50 տոկոսը պետք է լինի լրիվ դրույքով աշխատող, դասախոսական անձնակազմի առնվազն 35 տոկոսը պետք է ունենա մագիստրոսի որակավորում իրենց համապատասխան մասնագիտացման ոլորտներում, որոնցից առնվազն 70 տոկոսը աշխատում են լրիվ դրույքով: Դասախոսների առնվազն 20 տոկոսը համապատասխան մասնագիտացումների գծով պետք է ունենան դոկտորի աստիճան, որոնց 50 տոկոսը պետք է աշխատեն լրիվ դրույքով, 6) համապատասխան գրադարանային հարմարություններ և այլն:

Աղբյուր՝ Tayag, 2007.

Հատու՞կ օրենսդրություն շահույթ հետապնդող բարձրագույն կրթության համար

Երկրները կարող են նաև ունենալ ընդհանուր պահանջներ շահույթ հետապնդող բարձրագույն կրթության ոլորտում: Որոշ երկրներում շահույթ հետապնդող բարձրագույն կրթությունը կարող է ուղղակի արգելվել օրենքով, որն իրավական խոչընդոտ է բոլոր մասնավոր կրթություն տրամադրողների գործունեության համար: Քանի որ միջազգային բարձրագույն կրթության շատ տրամադրողներ հիմնադրվում են որպես շահույթ հետապնդող, ապա դրանք ավելի շատ են կրում այդ ազդեցությունը:

Այդպես է Արգենտինայում, որտեղ շահույթ հետապնդող համալսարաններին չի թույլատրվում գործել և շնորհել ճանաչված որակավորումներ: Դրանք այնուամենայնիվ կարող են գործել որպես այդպիսիք չշնորհող հաստատություններ, ինչպես դա անում են բարձրագույն մասնագիտական ինստիտուտները: Կամ դրանք կարող են տրամադրել շարունակական մասնագիտական կրթություն:

Ներդիր 9 - Շահույթ հետապնդող համալսարանական կրթություն տրամադրողների վերաբերյալ օրենսդրությունը Արգենտինայում

Բարձրագույն կրթության մասին օրենքի 5-րդ գլուխը մասնավորապես առնչվում է մասնավոր համալսարանների կանոնակարգմանը. այս բաժնի հոդվածները սահմանում են դրանց ստեղծման և գործունեության պայմաններն ու ընթացակարգերը: Մասնավոր համալսարանական հաստատությունները պետք է լինեն շահույթ չհետապնդող և պետք է ստանան թույլտվություն Ազգային գործադիր մարմնի կողմից ՀԳՀԱՀ-ի կողմից ներկայացված դրական հաշվետվության հիման վրա (հոդվածներ 62 և 63): Ժամանակավոր թույլտվությունից հետո, երբ բավարարվեն համապատասխան պահանջները, նրանք ստանում են վերջնական ճանաչում (հոդված 65): Գործադիր մարմինը վերոնշյալ հաստատությունների գործունեությունը շարունակաբար վերահսկելու իրավունք ունի՝ ապահովելու, որ դրանք համապատասխանեն հայտարարված նպատակներին և այն պայմաններին, որոնց հիման վրա նրանց թույլատրվել է գործել: Առանց համապատասխան լիազորության գործող հաստատությունները չեն կարող օգտագործել համալսարան անվանումը և շնորհել համալսարանական որակավորումներ (հոդված 68):

Աղբյուր՝ Villanueva, 2007.

Կապիտալում մասնակցության սահմանափակումներ

Կրթությունը սոցիալապես զգայուն ոլորտ է: Շատ երկրներում հասարակության ընկալմամբ կրթություն տրամադրողների նկատմամբ պետք է լինի ազգային վերահսկողություն: Այդ պատճառով որոշ երկրներ սահմանափակումներ են մտցրել կրթական հաստատություններում օտարերկրյա կրթություն տրամադրողների սեփականության մասնաբաժնի (կամ «կապիտալում մասնակցության») վրա: Սովորաբար այս սահմանափակումները այնպիսին են, որ ընկերությունը մեծամասամբ լինի տեղացիների սեփականությունը, ովքեր դրա շնորհիվ ի վիճակի կլինեն վերահսկել այն:

Ներդիր 10 - Կապիտալում մասնակցության սահմանափակումները Ֆիլիպիններում

Բոլոր առևտրային հաստատությունները՝ շահույթ հետապնդող կամ չհետապնդող, պարտադիր գրանցվում են համապատասխան կառավարական մարմիններում: Կորպորացիաները (բաժնետիրական և ոչ բաժնետիրական) և ընկերակցությունները պետք է գրանցվեն Արժեթղթերի և բորսաների հանձնաժողովում, անհատ ձեռներեցները՝ Առևտրի և արդյունաբերության վարչության Առևտրի կարգավորման ու սպառողների պաշտպանության բյուրոյում, իսկ կոոպերատիվները՝ Կոոպերատիվների զարգացման մարմնում:

Ֆիլիպինների նոր Սահմանադրությունը (1987թ.) սահմանում է, որ՝

Ոչ մի օտարերկրացի և որևէ ընկերություն, ասոցիացիա, ընկերակցություն, կորպորացիա կամ առևտրային կազմակերպության ցանկացած այլ ձև, որը ձևավորվում, կազմակերպվում և լիազորվում է, կամ որը Ֆիլիպիններում ոչ ռեզիդենտ է, և որի թողարկած կապիտալի ավելի քան քառասուն տոկոսը (40%) պատկանում և վերահսկվում է օտարերկրացիների կողմից, չպետք է առևտրային գործունեություն ծավալի կամ ցանկացած տնտեսական գործունեության մեջ ընդգրկվի Ֆիլիպիններում: (Հոդված 4)

Ավելին, Սահմանադրությունը սահմանում է, որ կրթական հաստատությունները (բացառությամբ կրոնական խմբերի կամ միսիոներական առաքելությունների խորհուրդների), պետք է ղեկավարվեն միայն Ֆիլիպինների քաղաքացիների կողմից, կամ պետք է հանդիսանան կորպորացիաների կամ ասոցիացիաների սեփականություն, որտեղ կապիտալի առնվազն 60 տոկոսը քաղաքացիների սեփականությունն է: Կոնգրեսը կարող է, այնուամենայնիվ, պահանջել բոլոր կրթական հաստատություններում ֆիլիպինյան կապիտալի ավելի բարձր մասնակցություն

(հոդված 14, բաժին 4): Համատեղ ձեռնարկատիրության համաձայնագրի ներքո օտարերկրյա կրթական հաստատությունը կարող է ունենալ միայն կապիտալի մինչև 40 տոկոս սեփականություն և ոչ մի դեպքում օտարերկրացին չի կարող տեղ ունենալ Տնօրենների խորհրդում կամ որևէ կերպ մասնակցել հաստատության կառավարմանը:
Գործակալները, բրոկերները, միջնորդները կամ երրորդ կողմ հանդիսացող անձիք, ովքեր գործում են որպես միջնորդներ հաստատությունների և հաճախորդների կամ միջազգային կրթական ծառայություններ ստացողների միջև, չեն ներգրավվում կրթական ծառայությունների տրամադրման գործընթացում: Սակայն նրանք պետք է լինեն պատշաճ կերպով գրանցված կամ լիցենզավորված:

1991թ. Օտարերկրյա ներդրումների մասին ակտի ընդունմամբ թույլատրվում է օտարերկրյա կապիտալի մինչև 100 տոկոս մասնակցություն բոլոր ոլորտներում, բացառությամբ, Սահմանադրությամբ կամ հատուկ օրենքներով առանձնացվածների (ներառյալ կրթությունը), որոնք վերապահված են Ֆիլիպինների քաղաքացիներին, որոնց դեպքում օտարերկրյա կապիտալի մասնակցությունը չի կարող գերազանցել 40 տոկոսը: Կրթությունը Օտարերկրյա ներդրումների «սև» ցուցակում է, որն ընդգրկում է այն ներդրումային գործունեությունները կամ ոլորտները, որտեղ օտարերկրյա կապիտալի մասնակցությունը սահմանափակված է Սահմանադրությամբ և հատուկ օրենքներով:

Աղբյուր՝ Tayag, 2007.

Դասավանդման լեզվի կիրառությունը կանոնակարգող ռեժիմներ

Որոշ երկրներում դասավանդման լեզուն մեկ այլ սոցիալապես զգայուն ոլորտ է լեզվի օգտագործման և ազգային ինքնության միջև կապի պատճառով: Դասավանդման պրոցեսում տեղական լեզվից տարբեր լեզվի (օրինակ անգլերենի) օգտագործումը որոշակի կրթական օգուտ է բերում (լեզվական կարողության զարգացում և մշակութային բացություն): Այնուամենայնիվ կարող են լինել առնաձնակի հնարավորություններով սոցիալական խմբեր (օրինակ՝ փոքրամասնություններ), որոնք կարող են ավելի շատ օգուտ ստանալ դրանից, քան մյուսները: Սա կարող է սրել անհավասարությունները: Մալազիան երկիր է, որը երկար ժամանակ պաշտպանում էր ազգային լեզվի օգտագործումը պետական հատվածում որպես դասավանդման միակ լեզվի: Սակայն այս դեպքը ավելի շուտ բացառություն է, քան կանոն: Իրականում, երկրների մեծ մասը ողջունում են կրթության տրամադրումը միջազգային հաղորդակցման լեզվով:

Հատուկ պահանջներ՝ ի նպաստ հատուկ քաղաքական նպատակների

Առանձին ազգային համատեքստեր և ավանդույթներ կարող են ձևավորել ազգային զգոնություն: Սա կարող է հանգեցնել որոշակի բացահայտ պահանջների հաստատմանը: Օրինակ Հարավային Աֆրիկայում, , որտեղ ռասայական խտրականության ռեժիմը ձևավորեց խիստ մասնատված բարձրագույն կրթության համակարգ, միջազգային բարձրագույն կրթություն տրամադրողների համար կանոնակարգման ներկա ռեժիմը պահանջում է, որ և մասնավոր, և միջազգային կրթություն տրամադրողները ստորագրեն ուսանողների ու դասավանդող անձնակազմի նկատմամբ խտրականության չկիրառման հայտարարություն:

Ինչպե՞ս մասնաճյուղերի կանոնակարգման շրջանակը դարձնել առավել արդյունավետ

Կանոնակարգման գործիքների այս նկարագրությունը ցույց է տալիս, որ որպես նոր հաստատություն գործելու թույլտվություն ստանալու ընթացակարգերը համեմատաբար լավ զարգացած են բարձրագույն կրթության մասնավոր տրամադրողների համար: Սակայն դրանք համեմատաբար ծանր են և բավական ժամանակատար: Միջազգային բարձրագույն կրթություն տրամադրողները միշտ կընտրեն գրանցման նվազ սահմանափակող ուղին: Նրանք կնախընտրեն գրանցվել պարզապես որպես ընկերություններ և առաջարկել կրթական ծրագրեր՝ առանց շնորհելու պետականորեն ճանաչված որակավորում դիպլոմների և վկայագրերի մակարդակով: Սակայն դա նրանց չի խոչընդոտում իրենց սեփական երկրի հաստատությունների որակավորումներ շնորհելու: Եվ քանի որ դրանք հիմնականում ուսանողներին պատրաստում են մասնավոր հատվածում կամ արտասահմանում աշխատելու համար, որակավորումների պաշտոնական ճանաչումը հաճախ էական չի համարվում:

Երբ միջազգային բարձրագույն կրթություն տրամադրողները ցանկանում են գործել առանց պաշտոնական ճանաչման ընթացակարգերն անցնելու, նրանք կարող են նաև գրանցվել ազգային գործակալություններում, որոնք լիցենզավորում չեն պահանջում: Օրինակ, այդպես է որոշ երկրների ոչ համալսարանական հատվածների դեպքում: Որպեսզի միջազգային բարձրագույն կրթություն տրամադրողները հնարավորություն չունենան ընտրելու գրանցման հեշտ ճանապարհ, կարևոր է, որ լիցենզավորման պահանջները գործեն ինչպես համալասարանական, այնպես էլ ոչ համալսարանական հատվածների համար: Եթե գոյություն ունեն մի քանի ազգային գործակալություններ, ապա նրանք պետք է կոորդինացնեն իրենց աշխատանքները, որպեսզի երաշխավորեն, որ երբ մասնաճյուղ կամ նոր հաստատություն է բացվում ոչ մի միջազգային բարձրագույն

կրթություն տրամադրող վերահսկողությունից դուրս չի մնում,:

Կանոնակարգման ռեժիմները պետք է ապահովեն, որ կապիտալում մասնակցության առավելագույն չափը կամ «կապիտալի առավելագույն չափը» հնարավոր չլինի հեշտությամբ շրջանցել՝ ստեղծելով նոր ընկերություններ: Դա վերաբերում է նաև միջազգային կորպորատիվ համալսարաններին, որոնք կապիտալի մեծամասնական բաժին են ձեռք բերում գոյություն ունեցող լիցենզավորված մասնավոր հաստատությունում և այնուհետև վերափոխում հաստատության կողմից առաջարկվող ծրագրերը՝ առանց նոր լիցենզավորում անցնելու: Կանոնակարգման ռեժիմները դրա համար պետք է նաև պարունակեն հաստատությունների գործունեության և նրանց ծրագրերի շարունակական վերահսկողության որոշակի հնարավորություն:

Այնուամենայնիվ, պետք է նաև ընդգծել, որ արդյունավետ կանոնակարգումը չպետք է կիրառվի միայն միջազգային կրթություն տրամադրողների նկատմամբ: Կարևոր է ունենալ կանոնակարգման ռեժիմ, որը կիրառվում է ինչպես կրթության ազգային, այնպես էլ օտարերկրյա տրամադրողների նկատմամբ: Կանոնակարգման անհրաժեշտությունը պայմանավորված չէ այն փաստով, որ, որոշ հաստատություններ պատկանում են օտարերկրացիներին: Այն անհրաժեշտ է, որովհետև որակը բոլոր հաստատություններում՝ ազգային, օտարերկրյա, պետական թե մասնավոր, կարևոր է:

Վարժություն 2

Ներկայումս կանոնակարգման ի՞նչ ռեժիմ է առկա Ձեր երկրում ինստիտուցիոնալ շարժունակության կապակցությամբ (կանոնակարգման բացակայություն, ազատական, չափավոր ազատական և խիստ սահմանափակող) Ո՞րն է դրա պատճառը

Ընդունվել է արդյոք որևէ կոնկրետ օրենսդրություն կանոնակարգելու միջազգային հաստատությունները (օրինակ լեզվային քաղաքականության կամ կապիտալում մասնակցության կապակցությամբ)

3. Կանոնակարգման ռեժիմները ֆրանչայզինգային դասընթացների և զուգակցման/համատեղ ուսուցման սխեմաների համար

Բարձրագույն կրթության համակարգերի մեծամասնությունում ֆրանչայզինգային դասընթացները և համատեղ ուսուցան ծրագրերը միջազգային կրթության առևտրային առաջարկների առավել տարածված տեսակներն են: Այստեղ կանոնակարգման շրջանակը ներառում է նոր ուսումնական ծրագրեր հաստատելու ընդհանուր ռեժիմներ և կարգավորման հատուկ ընթացակարգեր զուգակցված և ֆրանչայզինգային կրթության համար:

Ընդհանուր պահանջներ՝ կապված նոր ուսումնական ծրագրերի ներդրման հետ

Նոր ուսումնական ծրագրերի ընդհանուր կանոնակարգման շրջանակը ըստ երկրների բավական տարբեր է: Շատ երկրներում նոր ծրագրերի հաստատումը լիցենզավորված համալսարաններում պարտադիր չէ նախարարության կամ ազգային բուֆերային կազմակերպության կողմից: Սակայն գնալով ավելի շատ պաշտոնական մարմիններ (նախարարություն կամ բուֆերային կազմակերպություն) պահանջում են, որ որոշ տեսակի ծրագրեր անցնեն թույլտվության գործընթաց: Անգլիախոս արևմտյան երկրների մեծ մասում և որոշ լատինամերիկյան երկրներում լիցենզավորված համալսարանները կարող են բացել նոր ուսումնական ծրագրեր առանց որևէ լրացուցիչ կառավարական թույլտվության: Այնուամենայնիվ կառավարության հաստատումը անհրաժեշտ է նոր ծրագրերի հասար, որոնք բացվել են ոչ համալսարանական հատվածում: Այլ տարածաշրջանների մեծ մասում նախարարական կամ բուֆերային մարմինները ներգրավված են նոր ուսումնական ծրագրի հետ կապված թույլտվության որևէ գործընթացում, որոնք կարող են շատ տարբեր լինել՝ կախված նոր ուսումնական ծրագրի մակարդակից և տեսակից:

Ներդիր 11-ը ներկայացնում է նոր ուսումնական ծրագրեր ներդնելու ընդհանուր պահանջները Ֆիլիպինների մասնավոր ԲՈՒՀ-երի համար:

Ներդիր 11 - Նոր ուսումնական ծրագրեր ներդնելու կանոնները և կանոնակարգերը Ֆիլիպիններում

Կառավարական լիազորման այս պահանջը բաղկացած է երկու մակարդակից՝ 1) թույլտվության փուլ, և 2) ճանաչման փուլ (DECS 1992).

Թույլտվության փուլը հետևում է հաստատության դիմումին, որը պետք է ներկայացնել ոչ ուշ, քան առաջարկվող ծրագիրը գործարկելու ուստարուն նախորդող ուսումնական տարվա սկիզբը: Թույլտվությունը հաստատությանը տալիս է իրավունք իրականացնելու կոնկրետ դասընթաց կամ դասընթացներ որոշակի ժամանակահատվածի համար: Այն ուժի մեջ է միայն կոնկրետ ծրագրի համար մեկ ուսումնական տարում և որևէ հիմնավոր պատճառի դեպքում կարող է արգելվել: Ընդունված ուսանողներին սակայն տրվում են նույն իրավունքներն ու արտոնությունները, ինչ ճանաչված ծրագրերում ընդգրկվածներին:

Ճանաչման փուլի համար պետք է դիմել ոչ ուշ, քան այն ուսումնական տարվա հունվար ամսվա վերջը, որը նախորդում է տվյալ ծրագրի առաջին շրջանավարտների թողարկման տարուն (3-րդ ուսումնական տարում քառամյա կրթական ծրագրի և 4-րդում՝ հնգամյա կրթական ծրագրի դեպքում): Ճանաչման վկայականը պետք է տրվի դասընթացի վերջին ուսումնական տարվա սկզբին:
Ճանաչման վկայականը շարունակում է վավեր մնալ մինչև որևէ հիմնավոր պատճառով անվավեր ճանաչելու գործընթացի ավարտը. Սա նշանակում է, որ տվյալ ծրագիրը կարող է հաստատության կողմից առաջարկվել մինչև մոնիտորինգի և գնահատման միջոցով որևէ հիմնախնդրի հայտնաբերումը:

Թույլտվությունը և ճանաչումը շնորհվում են այն ծրագրերին, որոնք բավարարում են ԲԿԿ-ի կողմից իր քաղաքականությունում, չափորոշիչներում և ուղեցույցներում սահմանված նվազագույն պահանջները, ինչպես նաև ակադեմիական ծրագրերի չափորոշիչները: Այս քաղաքականությունը, չափորոշիչներն ու ուղեցույցները նկարագրում են յուրաքանչյուր ծրագրի բովանդակության (ուսումնական պլան), մուտքային և գործընթացների գործոնների ու մեթոդի վերաբերյալ նվազագույն պահանջները:

ԲԿԿ-ն թողարկել է այսպիսի քաղաքականություն, չափորոշիչներ ու ուղեցույցներ ավելի քան 40 ծրագրերի համար: Դրանք ձևակերպվել (և թարմացվել) են 10 տեխնիկական հանձնաժողովների կողմից, որոնք բաղկացած են փորձագետներից և ակադեմիական աշխատակիցներից, ինչպես նաև Մասնագիտական կարգավորման հանձնաժողովի ներկայացուցիչներից:

Աղբյուր՝ Tayag, 2007

Քաղաքականության մոտեցումներ կապված ֆրանչայզինգային կրթության հետ

Ի լրումն ընդհանուր բնույթի այս պահանջների՝ երկրները մշակել են բավական տարաբնույթ մոտեցումներ ֆրանչայզինգային կրթության նկատմամբ: Այս մոտեցումները ուղղակիորեն առնչվում են բարձրագույն կրթության քաղաքականության ավելի լայն նպատակներին: Դրանք ընդգրկում են միջազգային բարձրագույն կրթության նկատմամբ ընդհանուր մոտեցումները և հետևաբար ունեն հետևյալ երեք խոշոր տարբերակները՝

- ուղղակի խրախուսում,
- կանոնակարգման բացակայություն,
- կանոնակարգում:

Ֆրանչայզինգային կրթության ուղղակի խրախուսում

Ուղղակի խրախուսման կարելի է հասնել, երբ կառավարությունները ներդնում են ֆրանչայզինգային կրթության զարգացման համար խթաններ: Այս խթանները իրենց բնույթով ընդհանուր առմամբ ֆինանսական են: Այդպես է օրինակ Օմանում: Օմանում բարձրագույն կրթության նկատմամբ սոցիալական և տնտեսական պահանջարկը կտրուկ աճել է հատկապես վերջին 10 տարիներին. նախորդ 30 տարիներին իրականացված զարգացման ծրագրերը հանգեցրել են բարձրագույն կրթության համար դիմորդների քանակի կտրուկ աճի: Սակայն բարձրագույն կրթության համակարգի զարգացումը չի հասել այնպիսի մակարդակի, որ կարողանար բավարարել այդ պահանջարկը: Ի պատասխան այս խնդրին՝ Օմանի կառավարությունը ընտրել է մասնավոր հաստատությունների (համալսարանների և քոլեջների) բացման խրախուսման քաղաքականություն: Հաստատությունների կողմից մատուցվող ծրագրերի որակի ապահովման նպատակով մասնավոր ԲՈՒՀ-երը պետք է հանդիսանան ճանաչված օտարերկրյա համալսարանների մասնաճյուղեր:

Ներդիր 12 - Ֆրանչայզինգային կրթության ուղղակի խրախուսումը Օմանում

Օմանը հետևում է մի մոտեցման, որն ուղղակիորեն խրախուսում է ֆրանչայզինգային բարձրագույն կրթությունը կրթության մասնավոր հատվածում: Միաժամանակ, լիցենզավորման պահանջները որպես մասնավոր բարձրագույն կրթական հաստատության հիմնադրման և կրթության տրամադրման համար պարունակում են պայման, որ տեղական համալսարաններն ու քոլեջներն ունենան «ակադեմիական միության համաձայնագիր» արտասահմանում «ճանաչված և հավատարմագրված բարձրագույն կրթական հաստատությունների» հետ: Բնականաբար, բարձրագույն կրթության տեղական մասնավոր հաստա-

տությունների հետ միություններ կազմելու և «որակյալ» բարձրագույն կրթության տրամադրումը արագորեն ընդլայնելու նպատակով Օմանը փնտրում է ճանաչված օտարերկրյա հաստատություններ: Օմանի Բարձրագույն կրթության նախարարությունը մշակել է ակադեմիական միության տիպային համաձայնագիր, որի միջոցով առանձնացվում են տեղական և օտարերկրյա բարձրագույն կրթության հաստատությունների միջև համագործակցության եղանակներն ու ծառայությունները: Դասավանդման համակարգերը, առաջարկվող ծրագրերը, գնահատման մեթոդները և որակավորման տեսակները սահմանվում են միավորված համալսարանի կողմից: Հետաքրքիր է, որ Օմանը բացահայտ պահանջ է սահմանում, որ տեղական հաստատությունների հետ ֆրանչայզինգային համաձայնության մեջ մտած օտարերկրյա հաստատությունները պետք է ուսանողներ ընդունեն մասնաճյուղերից կամ ֆրանչայզինգային կրթական հաստատությունից:

Աղբյուր `Martin, 2007.

Ֆրանչայզինգային կրթության կանոնակարգման բացակայություն

Երկրորդ տարբերակը «կանոնակարգման բացակայությունն» է: Սա հաճախ ինքնաբերաբար ռեժիմ է այն երկրներում, որտեղ համալսարանի կարգավիճակը ավտոմատ կերպով իրավունք է տալիս ստեղծելու նոր ուսումնական ծրագրեր: Այսպիսի համատեքստում համալսարանն ինքն է պատասխանատու իր սեփական ուսումնական ծրագրերի որակի ապահովման համար: Այդպես է օրինակ Քենիայում: Այս երկրի համալսարանական արտոնագրման ռեժիմի ներքո պետական համալսարանները նոր ծրագրերի (ներառյալ ֆրանչայզինգային) թույլտվության պարտադրանք չունեն: (տես *Ներդիր 13*).

Ներդիր 13. Կանոնակարգման բացակայություն Քենիայում արտոնագրված պետական համալսարանների համար

Ցանկացած պետական համալսարանի և միջազգային կրթություն տրամադրողի միջև համագործակցությունը սկսվում է հաստատությունների միջև Փոխըմբռնման հուշագրի ստորագրումից: Օրենքները, որոնցով հիմնում են տարբեր պետական համալսարաններ, վերջիններիս նպատակները առաջ մղելու նպատակով թույլ են տալիս համագործակցություն համալսարանների և այլ հաստատությունների ու կազմակերպությունների միջև: Այս պարագայում համագործակցող տեղական համալսարանի պարտականությունն է համալսարանական խորհրդի միջոցով ապահովելու, որ առաջարկվող ծառայությունները լինեն լավ որակի են,

և որ հաստատությունը, որի հետ նրանք համագործակցում են, հավատարմագրված է և/կամ ճանաչված լինի իր սեփական երկրում.

Աղբյուր՝ Kaberia, 2007.

Ֆրանչայզինգային կրթությունը կանոնակարգող մոտեցում

Այն երկրները, որոնք որոշել են ակտիվ դերակատարում ունենալ ֆրանչայզինգային կրթության հարցում, ընտրում են կանոնակարգման մոտեցումը: Դրանց մեծամասնությունը սահմանում են կանոնակարգման մեխանիզմներ երկու փուլով. երբ օտարերկրյա և տեղական հաստատությունների միջև համատեղ ձեռնարկություններ են հիմնվում, և շարունակական վերահսկման համակարգի միջոցով: Այս մոտեցումը արդյունավետ է, երբ առկա են համապատասխան կանոնակարգեր տեղական կրթություն տրամադրողների համար, քանի որ ֆրանչայզինգը գործում է նրանց միջոցով:

Երբ գոյություն ունեցող ֆրանչայզինգային կրթությունը հանգեցնում է դրա ընկալմանը որպես ցածրակարգ կրթություն, երկրները պարզապես որոշում են սահմանափակ կամ խիստ կերպով կանոնակարգել միջազգային բարձրագույն կրթության այս տեսակի տրամադրումը: Հոնկոնգը որդեգրել է սահմանափակ կարգավորումը: Միջազգային բարձրագույն կրթություն տրամադրողները պետք է գրանցվեն տեղական կառավարման մարմիններում և հրապարակեն տեղեկատվություն առաջարկվող դասընթացների մասին: Հարավային Աֆրիկայում և Ֆիլիպիններում որդեգրվել է կանոնակարգման խիստ ռեժիմ: Այս երկրներում միջազգային բարձրագույն կրթություն տրամադրողները ենթարկվում են որակի ապահովման տեղական ռեժիմներին (տես *Ներդիրներ 14 և 15*):

Ներդիր 14. Ֆրանչայզինգային կրթության նկատմամբ սահմանափակ կարգավորման մոտեցումը Հոնկոնգում

Հոնկոնգի կառավարությունը կրթության օտարերկրյա տրամադրումը կանոնակարգում է «Ոչ տեղական բարձրագույն և մասնագիտական կրթության (կանոնակարգման) մասին» որոշման միջոցով, որն ընդունվել է 1997թ.: Կառավարությունը ներկայացնում է կանոնակարգման հետևյալ հիմնավորումները.

Օրենսդրության նպատակն է պաշտպանել Հոնգկոնգի սպառողներին՝ թույլ չտալով ընդունված չափորոշիչներին չհամապատասխանող ոչ տեղական դասընթացների առաջարկներ Հոնկոնգում: Այն նաև կբարելավի Հոնգկոնգի հեղինակությունը որպես երկրի, որը կարևորում է վստահելի, միջազգայնորեն ճանաչված ակադեմիական և մասնագի-

տական չափորոշիչները: Այս նպատակին կարելի է հասնել գրանցման համակարգի, ինչպես նաև գովազդների, վճարումների և փոխհատուցման խոստումների նկատմամբ հսկողության միջոցով:

Որոշումը կանոնակարգման թափանցիկության մոդել է և պարունակում է միջազգային կրթության իրականացման բաղադրիչների օգտակար թվարկում: Կրթության օտարերկրյա տրամադրողներից պահանջվում է տրամադրել մանրամասն տեղեկատվություն իրենց դասընթացների տարբեր կողմերի մասին: Դասընթացները ներկայացված են կառավարության ինտերնետի կայքում, իսկ մանրամասն փաստաթղթերը հասարակության համար հասանելի են Հոնգկոնգի կենտրոնում գտնվող գրանցման գրասենյակում:
Պահանջվում են գործառնական մանրամասներ, այդ թվում՝ դասընթացի բովանդակությունը (նպատակները, խնդիրները, կառուցվածքը և տեղայնացումը Հոնգկոնգի համար), մատուցման մեթոդները, ուսանողների նկատմամբ պահանջները (ընդունելության չափորոշիչները, այդ թվում՝ լեզվի իմացությունը, դասընթացի գնահատման առաջադրանքները և համակարգը, մանրամասներ գնահատումը իրականացնողի վերաբերյալ), ներգրավված դասախոսական անձնակազմը (որակավորումները և համապատասխան փորձը), Հոնգկոնգում առաջարկվող հարմարությունները և օժանդակությունը (լսարաններ, գրադարան, համակարգչային լաբորատորիաներ): Օտարերկրյա և տեղական կրթություն տրամադրողի պարտականությունները պետք է սահմանվեն հետևյալ գործունեության կապակցությամբ՝ գովազդ և մարքեթինգ, ընդունելություն, գրանցում, ուսման վարձերի ստացում, տեղական դասավանդողների ներգրավում, տեղական դասավանդողների վերահսկողություն, ուսանողների աջակցություն, քննությունների և հանձնարարությունների գնահատում, ուսանողների կարծիքի հավաքագրում: Պետք է տրամադրվի որակի ապահովման ընթացակարգի բնութագիր: Կրթություն տրամադրողները պետք է ներկայացնեն տարեկան մանրամասն հաշվետվություն ընդունված և ավարտած ուսանողների քանակի ու դասընթացում փոփոխությունների մասին:
«Ոչ տեղական բարձրագույն և մասնագիտական կրթության (կանոնակարգման) մասին» որոշումը ծառայում է որպես գրանցման համակարգ և դիմորդների համար տեղեկատվության աղբյուր: Այն որակ չի ապահովում: Ինչպես սպառողների պաշտպանության այլ օրենսդրություն, Որոշումը պարունակում է նախազգուշացում. «Տեղական սպառողները պետք է ուշադրություն դարձնեն, որ ոչ տեղական դասընթացի գրանցումը ինքնաբերաբար դասընթացին չի ապահովում առանձնակի հեղինակություն կամ տեղական որակավորման համարժեքության ճանաչում»:

Աղբյուր՝ Govrenment of Hong Kong SAR, 1997.

Մոդուլ 5 - Միջազգային բարձրագույն կրթություն տրամադրողների կանոնակարգում և որակի ապահովում

Ներդիր 15. Ֆրանչայզինգային կրթության խիստ կանոնակարգման մոտեցումը Ֆիլիպիններում և Հարավային Աֆրիկայում

Ֆիլիպինները և Հարավային Աֆրիկան ֆրանչայզինգային կրթության նկատմամբ կիրառում են կարգավորման մոտեցում: Հարավային Աֆրիկայում 2002 թվականից ֆրանչայզինգային կրթությունը պարզապես արգելված է, եթե օտարերկրյա կրթություն տրամադրողը չունի մասնաճյուղի տեսքով տեղական ներկայություն: Իրականում պարզվել է, որ շատ ցածրորակ ֆրանչայզինգային ծրագրեր են հայտնվել և չափազանց դժվար է ապահովել, որ սպառողները ստանան ճիշտ տեղեկատվություն այդպիսի ծրագրերի որակի և հավատարմագրման կարգավիճակի մասին: Վերջերս ապացույցներ են տրամադրվել Հարավային Աֆրիկայում գործարար կառավարման մագիստրատուրայի ծրագրերի մասին, որոնք իրենց սեփական երկրներում անցել են որակի ապահովում, բայց չեն ստացել հավատարմագրում Հարավային Աֆրիկայում: Պատճառն այն էր, որ ծրագրերը տրամադրողի երկրում գնահատվել էին թղթի վրա միայն՝ առանց այդպիսի ծրագրի իրականացման իրական պայմանները ստուգելու նպատակով տեղանք այցելելու:

Ֆիլիպիններում երկու գործընկեր հաստատությունների համար որակի պահանջները ներկայացվում են և զուգակցված, և ֆրանչայզինգային ծրագրերի համար: Բարձրագույն կրթության կոմիտեն (ԲԿԿ)՝ բարձրագույն կրթության կանոնակարգման Ֆիլիպինների բուֆերային կազմակերպությունը, պահանջում է, որ միայն ԲԿԿ-ի կողմից ճանաչված բարձրագույն կրթական հաստատությունները (որոնք ունեն թույլտվություն և ճանաչում ստացած ծրագրեր) միավորվեն ճանաչված և հավատարմագրված օտարերկրյա բարձրագույն կրթական հաստատության հետ: Ի լրումն՝ օտարերկրյա կրթություն տրամադրողը կարող է վերապատրաստման դասընթացներ առաջարկել միայն այն դեպքում, եթե ծրագիրը հավատարմագրվել է իր սեփական երկրում կամ տեղական գործընկեր ԲՈՒՀ-ի միջոցով (եթե վերջինս տեղական մասնավոր հավատարմագրողների կողմից ստացել է II մակարդակի հավատարմագրում): Նաև, հաստատությունները պետք է ստորագրեն Փոխըմբռնման հուշագիր ԲԿԿ-ի պատրաստած ձևաչափով:

Աղբյուր՝ Martin, 2007.

Հարկային ռեժիմներ և արտարժութային կանոնակարգում

Ի լրումն լիցենզավորման և կանոնակարգման այլ պահանջների՝ երկրները կարող են որդեգրել նաև հատուկ կանոնակարգող ռեժիմներ հարկային և արժութային ոլորտներում: Այսպիսի ռեժիմները սովորաբար

մաս են կազմում օտարերկրյա ներդրումներին, արտաքին առևտրին և օտարերկրյա եկամուտի հարկման հետ կապված օրենսդրությանը առնչվող առավել ընդհանուր տնտեսական քաղաքականությունների:

Ներդիր 16. Հարկային ռեժիմները և արտարժութային կարգավորումները Ռուսաստանում և Ֆիլիպիններում

Ֆիլիպիններում ներդրվել է բավականին նպաստավոր հարկային ռեժիմ կրթություն տրամադրողների, այդ թվում օտարերկրյա ներկայացուցիչների համար: Շահույթ չհետապնդող հաստատությունների ողջ եկամուտը ազատված է եկամտահարկից և գույքահարկից, ինչպես նաև մաքսատուրքերից: Շահույթ հետապնդող հաստատությունները նույնպես կարող են որոշ չափով օգտվել հարկերից և տուրքերից ազատումից, սակայն շահույթը ենթակա է հարկման:

Ռուսաստանում տեղական և օտարերկրյա բարձրագույն կրթական հաստատությունների միջև համագործակցության համաձայնագրերը հաճախակի առընչվում են արժութային կարգավորման, հարկային օրենսդրության և արտաքին առևտրի մասին օրենքի հետ կապված խնդիրների: Ռուսական գործընկերոջ կողմից օտարերկրյա համալսարանի ծառայությունների (դասավանդման ծառայություններ, դասավանդման մեթոդի և բովանդակության օգտագործման իրավունք) դիմաց ուղղակի վճարումները, որոնք ենթադրում են կապիտալի արտահոսք, պահանջում են հատուկ թույլտվություն Ռուսաստանի Կենտրոնական բանկից, ինչը երկար և բարդ գործընթաց է: Նաև պետք է տրամադրվի ապացույց առ այն, որ ծառայությունը (այդ թվում՝ մտավոր սեփականության տրամադրումը), որի դիմաց տեղի է ունենում կապիտալի արտահոսք, ենթարկվել է ավելացված արժեքի հարկով համապատասխան հարկման: Համագործակցության համաձայնագրերը ռուսական և օտարերկրյա համալսարանների միջև պետք է հաստատվեն սպասարկող բանկերի կողմից: Երբ բանկային փոխանցման գումարը գերազանցում է 10,000 ԱՄՆ դոլարը, անհրաժեշտ է ստանալ փոխանցման հատուկ թույլտվություն Ռուսաստանի Ֆինանսների նախարարությունից:

Աղբյուր՝ Martin, 2007.

Ինչպե՞ս ֆրանչայզինգային բարձրագույն կրթության կանոնակարգման ռեժիմները դարձնել ավելի արդյունավետ

Ֆրանչայզինգային և զուգակցման սխեմաները հաճախ գործում են կանոնակարգման բավական թույլ շրջանակում: Նաև գոյություն ունեն այս շրջանակը շրջանցելու շատ հնարավորություններ: Արդյունավետ լի-

նելու համար ֆրանչայզինգային կրթության կանոնակարգման շրջանակը պետք է կիրառելի լինի բարձրագույն կրթության համակարգի բոլոր հատվածների համար (համալսարաններ և ոչ համալսարանական հատվածներ): Հաճախ, միջազգային բարձրագույն կրթություն տրամադրողները համագործակցում են տեղական ԲՈՒՀ-երի հետ, որոնք նոր ծրագրեր բացելու թույլտվության կարիք չունեն: Երբ բարձրագույն կրթության համակարգի մեծ մասը կանոնակարգված է, նրանք կարող են ուսումնական ծրագրեր վաճառել որակավորում չշնորհող առաջարկների տեսքով: Այս դեպքում սակայն, որակավորումը պետականորեն չի ճանաչվի, քանի որ կրթություն տրամադրողը պարզապես գրանցված է որպես առևտրային ձեռնարկություն:

Էապես կարևոր է, որ կառավարությունները հրապարակային տեղեկատվություն տրամադրեն իրենց կողմից ճանաչված բարձրագույն կրթության ծրագրերի վերաբերյալ: Շատ կառավարություններ հրապարակում են այսպիսի տեղեկատվություն: Դա կարող են անել իրենց Կրթության նախարարությունների համացանցի կայքերի կամ ճանաչման հարցերի համար պատասխանատու բուֆերային կազմակերպությունների միջոցով: Որոշ երկրներ նույնիսկ հատուկ ջանք են գործադրում՝ հանրությանը տեղեկացնելու այսպիսի տեղեկատվության հասանելիության մասին: Մասնավորապես նրանք միջնակարգ կրթության մակարդակում աշակերտների շրջանում իրականացնում են իրազեկման ծրագրեր պետականորեն ճանաչված լինելու վերաբերյալ տեղեկատվության ձեռք բերման ուղիների մասին:

Ներդիր 17. Աշակերտների իրազեկումը բարձրագույն կրթություն տրամադրողների մասին հիմնավորված ընտրություն կատարելու համար. Հարավային Աֆրիկա

Հարավային Աֆրիկայում, ինչպես այլ զարգացող երկրներում, բարձրագույն կրթության ազատականացումը բարձրացել է: Բարձրագույն ուսումնական հաստատություն ընդունվածների շրջանում դիպլոմը և հատկապես օտարերկրյա որակավորումը հաճախ դիտվում են որպես միջազգային շարժունակության «տոմսեր» դեպի զարգացած երկրների աշխատաշուկաներ: Վատորակ կամ նույնիսկ ոչ իրավական հաստատություն կամ ծրագիր ընտրելը նշանակում է ոչ միայն մեծ հիասթափություն ուսանողի համար, այլ նաև այն կարող է կործանարար հետևանքներ ունենալ ընտանիքների գոյատևման վրա, քանի որ ընտանիքները ուսման համար սովորաբար վճարում են վարկերով:

Ուսանողների ներգրավումը գլխավորապես իրականացվում է հարավաֆրիկյան լրատվամիջոցներում, հատկապես թերթերում գովազդի միջոցով: Այս գովազդները հաճախ չեն պարունակում բավարար կամ ճիշտ տեղեկատվություն հաստատության մակարդակի մասին, կամ այն մասին, թե արդյոք այն գրանցված է պաշտոնական գրասենյակներում՝ Կրթության վարչությունում (ԿՎ) կամ Որակավորումների հարավաֆրիկյան մարմնում (ՈՀԱՄ): Հաստատությունները նաև կարող են միտումնավոր ապակողմնորոշել ուսանողներին վերոնշյալ տեղեկատվության առնչությամբ:

Դիմորդների և հանրության կողմից բազմաթիվ բողոքների արդյունքում ԲԿՈԿ (Բարձրագույն կրթության որակի կոմիտե) ձեռնարկեց հետազոտություն և 2002թ. հունվարին սկսեց տեղեկատվական արշավ: Այն նպատակ ուներ հանրությանը տեղեկացնել և դիմորդներին տրամադրել առավելագույն տեղեկատվություն նրանց կրթության անբարեխիղճ և անօրինական տրամադրողներից պաշտպանելու համար: Նաև ակնկալվում էր, որ մարդիկ կսովորեն տարբերակել կրթության օրինական և անօրինական տրամադրողներին: Ազգային տեղեկատվական արշավը կազմակերպվել էր զանգվածային լրատվական միջոցներով (ռադիո և տպագիր մամուլ) և ուղղված էր բարձրագույն ուսումնական հաստատությունների դիմորդներին: (Տեղեկատվական արշավին մանրամասն կարող եք ծանոթանալ http://www.che.ac.za/student_literacy/index.php կայքում):

Նաև երկու ամսվա ընթացքում հետազոտվեցին և վերլուծվեցին հաստատությունների գովազդները: Բացահայտվեց, որ տեղեկատվական արշավի ընթացքում կրճատվել են ապակողմնորոշող գովազդները, իսկ այն շարունակող հաստատություններին հրահանգվեց դադարեցնել դրանք:

Տեղեկատվական արշավից հետո աշակերտները ավելի տեղյակ էին բարձրագույն կրթություն օրինական և անօրինական տրամադրողների միջև տարբերությունների մասին: Բայց այնուամենայնիվ նրանք և ընդհանրապես հանրությունը չեն ընկալում հավատարմագրման և որակի ապահովման գաղափարը: Սա ցույց է տալիս, որ պետք է ավելի շատ աշխատանք տարվի հատկապես որակի մասին աշակերտների գրագիտությունը բարձրացնելու և ինստիտուցիոնալ մակարդակում որակի ապահովման գործընթացում ուսանողներին ներգրավելու ուղղությամբ:

Գովազդները դեռ հսկվում են ԲԿՈԿ-ի կողմից: ԲԿՈԿ-ը նաև մշակել է հաջողված փորձառության ուղեցույցներ և գովազդների կանոններ: Աշխատաժողովներ են կազմակերպվել՝ օգնելու հաստատություններին

բարելավելու գովազդային գործունեության էթիկան, իսկ ՈՀԱՄ նաև մշակել է գովազդի կանոններ, մասնավորապես ՈՀԱՄ-ի լոգոյի օգտագործման վերաբերյալ: Ներկայումս ԲԿՈԿ-ը վերանայում է ընթացիկ տեղեկատվական արշավը և պլանավորում է մշակել նոր մոտեցում ուղղված որակի մասին աշակերտների գրագիտության բարձրացմանը:

Աղբյուր՝ Naidoo, 2004.

Վարժություն 3

Կանոնակարգման ի՞նչպիսի մոտեցում է օգտագործվում Ձեր երկրում ֆրանչայզինգային բարձրագույն կրթության նկատմամբ (ուղղակի խրախուսում, կարգավորման բացակայություն կամ կանոնակարգման մոտեցում): Ձեր կարծիքով ո՞րն է այդ ռեժիմի ընտրության տրամաբանությունը:

Եթե գոյություն ունի կանոնակարգման մոտեցում, ապա ի՞նչ ոլորտներ է այն ներառում: Արդյո՞ք այն արդյունավետ է:

Եթե կանոնակարգումը բացակայում է, ապա ի՞նչ է անհրաժեշտ լուծելու ֆրանչայզինգային բարձրագույն կրթության հարուցած խնդիրները:

Միջազգային բարձրագույն կրթության որակի արտաքին ապահովման տարբերակներ

Ինչպես ներկայացվեց *մոդուլներ 1-4*-ում, որակի արտաքին ապահովման համակարգերը ունեն բավականին տարբեր շրջանակ և գործունեության եղանակներ: Որակի արտաքին ապահովման գործող մոտեցումներից շատերը մշակվել են լուծելու այն ազգային խնդիրները, որոնք կապված են հաստատությունների և ծրագրերի բազմազանության հետ: Այլ խոսքով, դրանք սահմանվել են սնկերի նման աճող մասնավոր բարձրագույն կրթության հաստատությունների և ցածրորակ ծրագրերի տարածման վերահսկողության նպատակով: Քանի որ միջազգային բարձրագույն կրթությունը դեռևս համեմատաբար նոր և հաճախ հազվադեպ երևույթ է, որակի արտաքին ապահովման գործակալությունների միայն փոքր քանակությունն է անդրադառնում դրան առանձին ռեժիմների միջոցով:

1. Միջազգային բարձրագույն կրթության ինստիտուցիոնալ հավատարմագրումը

Շատ երկրներ հիմնել են որակի ապահովման գործակալություններ, որոնք պատասխանատու են ինստիտուցիոնալ հավատարմագրման և աուդիտի համար: Ինչպես քննարկվել է *Մոդուլ 1 և 2-ում,* հավատարմագրումը և աուդիտը հաճախ ոչ պարտադիր ընթացակարգեր են, որոնք հաստատվում են գլխավորապես խթանելու որակի բարելավումը, քան պարտադրելու նվազագույն չափորոշիչներ: Այն երկրներում, որտեղ ինստիտուցիոնալ հավատարմագրումը պարտադիր է, այն հաճախ կիրառվում է միայն մասնավոր համալսարանների նկատմամբ: Այդպես է Քենիայում: Այս համատեքստում այն պարտադիր կերպով վերաբերում է բոլոր կորպորատիվ համալսարաններին (եթե նրանք որակավորում շնորհող են): Հետևաբար այն վերաբերում է տեղական մասնաճյուղերին և միջազգային կրթության ինստիտուցիոնալ տրամադրման մյուս ձևերին: Քենիայում կիրառվող ինստիտուցիոնալ հավատարմագրումը օրինակ, պարտադիր է մասնավոր համալսարանների համար, որոնք ունեն գործելու ժամանակավոր թույլտվություն: Սակայն ժամանակահատվածը, որի ընթացքում ԲՈՒՀ-երը պետք է բավարարեն այս պահանջին, չի կոնկրետացվում:

Ներդիր 18 - Ինստիտուցիոնալ հավատարմագրումը Քենիայում

ԲԿՀ-ի հավատարմագրման գործընթացը բաղկացած է հետևյալ քայլերից՝

1. Մասնավոր համալսարան հիմնելու դիմում-առաջարկ: Առաջարկը ներկայացվում է ACC/CHE-3 ձևաչափը լրացնելու միջոցով: Հիմնադրման մանրամասն առաջարկը ներառյալ պատմական նկարագիրը, առաքելությունը, տեսլականը, առաջարկվող անունը, տեղը, ակադեմիական բնույթը, նպատակները և խնդիրները, կառավարման ձևը, ակադեմիական ծրագրերը, ռեսուրսները ու համալսարանի հիմնադրման պլանը ներկայացվում է պարտադիր վճարի անդորագրի հետ միասին:

2. Առաջարկի և առաջարկում պարունակվող կետերի գնահատում: Սա ենթադրում է փաստաթղթերի ուսումնասիրում, այցելություն առաջարկվող համալսարանի տեղանք և հանդիպումներ Հանձնաժողովի ու դիմողների կամ նրանց ներկայացուցիչների միջև:

3. «Ժամանակավոր լիազորագրի» տրամադրում, երբ ԲԿՀ-ը բավարարված է լինում, որ առաջարկվող համալսարանը կատարել է համալսարանական գործունեությանն անհրաժեշտ բոլոր պահանջները: Հանձնաժողովը իր Նախագահի միջոցով հաստատությանը հանձնում է ժամանակավոր լիազորագիր, որը կառավարության կողմից ճանաչում է այն փոաստը, որ հաստատությունն ունի համալսարանական մակարդակի կրթություն տրամադրելու կարողություն: Սա նաև ցույց է տալիս, որ հաստատությունը աշխատում է լրիվ հավատարմագրում ստանալու ուղղությամբ:

4. Ինստիտուցիոնալ իրավական փաստաթղթերի պատրաստում: Ժամանակավոր լիազորագրի հանձնումից հետո հաստատությունը սկսում է իր ռեսուրսների համախմբումը «Թույլտվության» շնորհմանը պատրաստվելու ուղղությամբ: Հաստատությունը նաև ընդլայնում է իր ակադեմիական դասընթացները և ֆիզիկական ենթակառուցվածքները: Այդ ժամանակահատվածում Հանձնաժողովը ուղղորդում է հաստատությանը համապատասխան իրավական փաստաթղթերի (Թույլտվություն և կանոնադրություն) պատրաստման գործում: Հաստատությունը պահում է ժամանակավոր լիազորագիրը մինչև «Թույլտվության» բոլոր պայմանների բավարարումը: Այս գործընթացի համար կոնկրետ ժամկետ չի սահմանվում, քանի որ այն գլխավորապես կախված է այն արագությունից, որով հաստատությունը համախմբում է իր ռեսուրսները: Չնայած Հանձնաժողովը ժամանակվոր լիազորագիր ունեցող հաստատություններին լրիվ հավատարմագրում ստանալուն օգնելիս նրանց ընդունում է որպես գործընկեր, որոշ հաստատությունների հավատարմա-

գրման համար մի փոքր ավելի երկար ժամանակ է պահանջվում: Հանձնաժողովը պլանավորում է հրավիրել խորհրդակցական հանդիպումներ հաստատությունների հետ որոշելու ժամանակավոր լիազորագրով աշխատելու ողջամիտ ժամանակահատվածը:

5. Վերջնական ստուգում: Երբ առաջարկվող համալսարանը զգում է, որ բավարարում է լիարժեք ճանաչված համալսարան դառնալու պայմանները պատրաստում է ներքին գնահատման հաշվետվություն: Հանձնաժողովը քննադատաբար ուսումնասիրում է այս հաշվետվությունը և եթե համոզվում է, որ հաստատությունը պատրաստ է, կազմակերպում է վերջնական ստուգում: Եթե ստուգումը բացահայտում է, որ հաստատությունը պատրաստ է համարվելու լիարժեք համալսարան, Հանձնաժողովը երաշխավորություն է տալիս կառավարությանը հաստատությանը շնորհելու «Թույլտվություն»: Հանձնաժողովը այնուհետև պատրաստում է հավատարմագրման հաշվետվություն հաստատության համար:

6. «Թույլտվության» շնորհում: Այն շնորհվում է միայն պետության ղեկավարի կողմից: Թույլտվության հանձնման արարողության ընթացքում հաստատությանը տրվում է հավատարմագրման հաշվետվությունը, որը պատրաստվել է Հանձնաժողովի կողմից: Արտոնագրման խորհրդանիշները՝ պաշտոնական լոգոն, գայիսոնը և կնիքը նույնպես հանձնվում են այս արարողության ընթացքում:

Աղբյուր՝ Kaberia, 2007.

Գնալով մեծանում է այն գիտակցությունը, որ որակի ապահովումը պետք է կիրառվի և պետական, և մասնավոր հաստատությունների նկատմամբ: Բնականաբար, պետք է ենթադրել, որ երկուսն էլ նպաստում են սոցիալական, տնտեսական և մշակութային զարգացման ազգային նպատակների իրագործմանը: Սա նշանակում է, որ որակի չափորոշիչները և գործընթացները պետք է բարձրագույն կրթության երկու հատվածներում էլ նույն կերպ գնահատվեն: Այս ենթադրությունը ուղղորդում էր Հարավային Աֆրիկայում ինստիտուցիոնալ աուդիտորական համակարգի ստեղծումը: Ի լրումն, Հարավային Աֆրիկայի մոտեցումը բացահայտորեն նշում է, որ միջազգային բարձրագույն կրթության հաստատությունները պետք է աուդիտ անցնեն արտահանող երկրի որակի ապահովման գործակալության ներգրավմամբ:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման կամավոր կամ պարտադիր բնույթը քննարկումների կարևոր թեմա է: Կամավոր հավատարմագրումը ավելի հաճախակի է հանդիպում, առնվազն ինստիտուցիոնալ մակարդակում: Այն բացահայտորեն հեշտացնում է ակադեմիական հանրության կողմից հավատարմագրման ընդունումը: Այնուամենայնիվ, ակնկալվում է, որ

կամավոր հավատարմագրումը ժամանակի ընթացքում կդառնա քվազի-պարտադիր, երբ հաստատությունների մեծամասնությունը կլինեն հավատարմագրված: Կամավոր հավատարմագրումը կարող է կապվել բավականին գրավիչ խթանների կամ հաստատությունների հավատարմագրման հետևանքների հետ: Բայց եթե անհրաժեշտ է լուծել ցածրորակ կրթության բարելավման անհետաձգելի խնդիրը, ապա պարտադրության մոտեցումը կլինի ավելի արդյունավետ կարճաժամկետում: Այս լուծումը նախընտրել են Հարավային Աֆրիկայում, որտեղ ցածրորակ կրթության մասնավոր տրամադրողները հետապարտեիդյան ժամանակաշրջանում հաստատված ազատական ռեժիմից հետո սնկերի նման աճեցին:

Ներդիր 19. Ինստիտուցիոնալ աուդիտը Հարավային Աֆրիկայում

Ինստիտուցիոնալ աուդիտի համակարգը գործում է վեցամյա պարբերաշրջանով, որի ընթացքում բոլոր բարձրագույն կրթական հաստատությունները պետք է գոնե մեկ անգամ աուդիտ անցնեն: Աուդիտի ուշադրության առարկան որակի ներքին կառավարման համակարգերի արդյունավետությունն է երեք հիմնական գործառույթների համար՝ դասավանդում, հետազոտություն և հանրության ներգրավում: Աուդիտը հետևվում է ստանդարտ մեթոդաբանության, ըստ որի հաստատությունները պատրաստում են ինքնագնահատման փաթեթ ԲԿՈԿ-ի կողմից առանձնացված 19 չափանիշների առնչությամբ: Հաստատության կողմից ներկայացված ինքնագնահատման հաշվետվությունը հաստատելու նպատակով կատարվում է գործընկերներից և փորձագետներից կազմված հանձնաժողովի այցը տեղանք: Հատուկ ուշադրություն է դարձվում որակի չափորոշիչների հետ կապված ապացույցներին: Փորձաքննող հանձնաժողովի գնահատման հիման վրա ԲԿՈԿ-ը հաստատությանը տրամադրում է հաշվետվություն, որը պարունակում է խորհուրդներ հաջողված փորձառության, նորարարությունների և բարելավման անհրաժեշտություն ունեցող ոլորտների մասին: Հաշվետվության համառոտագրությունը նաև հասանելի է դարձվում հանրությանը: Հաստատությունից պահանջում են ներկայացնել բարելավման պլան խորհուրդների կապակցությամբ և պարբերաշրջանի կեսին պատրաստել բարելավման պլանի իրագործման առաջընթացի մասին հաշվետվություն: Աուդիտը չի դասակարգում հաստատությունները, չի ունենում ֆինանսական կամ այլ իրավական հետևանքներ և հիմնականում կապված է որակի զարգացման ու բարելավման հետ:

Օտարերկրյա համալսարանների դեպքում, որոնք ենթակա են իրենց սեփական երկրի ինստիտուցիոնալ աուդիտին կամ որակի ապահովման այլ պահանջներին, ԲԿՈԿ-ը պայմանավորվում է դոնոր երկրի որակի

ապահովման գործակալության հետ հնարավորության դեպքում իրականացնել միացյալ աուդիտորական այց: Այս դեպքում Հարավային Աֆրիկայի աուդիտորները և ԲԿՈԿ-ի անձնակազմի ավագ անդամները միանում են աուդիտորական հանձնաժողովին, որը ստեղծվում է դոնոր երկրի որակի ապահովման գործակալության կողմից: Օտարերկրյա հաստատության կողմից պատրաստած աուդիտորական ինքնագնահատման փաթեթը պետք է անդրադառնա ԲԿՈԿ-ի չափանիշների պահանջներին՝ ի լրումն ուրիշ այլ պահանջների: Այս պայմանավորվածությունը նախատեսված է վերացնելու Հարավային Աֆրիկայում օտարերկրյա հաստատության երկու երկրներում ինստիտուցիոնալ աուդիտորական այցեր անցնելու անհրաժեշտությունը: Այս հարցի առընչությամբ ԲԿՈԿ-ն Ավստրալիական համալսարանների որակի գործակալության (ԱՀՈԳ) հետ ունի համագործակցության հուշագիր Հարավային Աֆրիկայում բարձրագույն կրթության ծրագրեր առաջարկող ավստրալիական համալսարանների համար: Ներկայումս պատրաստում է նաև Միացյալ Թագավորության Որակի ապահովման գործակալության հետ համագործակցության նմանատիպ հուշագիր Հարավային Աֆրիկայում գործող Միացյալ Թագավորության համալսարանների կապակցությամբ: Վերոնշյալ համաձայնագրերը նաև ընդգրկում են ԲԿՈԿ-ի և այլ երկրներում գործընկեր գործակալությունների միջև համագործակցության ավելի լայն ոլորտներ, որը նպատակ ունի փոխանակելու հաջողված փորձառությունը, նախաձեռնելու համատեղ հետազոտական և զարգացման նախագծեր, ինչպես նաև փոխանակելու համապատասխան տեղեկատվություն միջազգային կրթության տրամադրման ավելի արդյունավետ կանոնակարգման վերաբերյալ: Մինչ օրս միջազգային կրթության որևէ տրամադրողի աուդիտ տեղի չի ունեցել, և մնում է տեսնել, թե ինչպես կարելի է հնարավորինս արդյունավետ դարձնել այսպիսի համագործակցության համաձայնագրերը:

Աղբյուր՝ Naidoo and Singh, 2007.

2. Միջազգային բարձրագույն կրթության ծրագրային հավատարմագրումը

Ուսումնական ծրագրերի հավատարմագրումը նույնպես հաճախ կամավոր գործընթաց է: Պարտադիր չէ, որ այն ներառի և պետական, և մասնավոր ծրագրերը, համալսարանական ու ոչ համալսարանական հատվածները: Ահա թե ինչու շատ ֆրանչայզինգային ծրագրեր հաճախ չեն անցնում ծրագրային հավատարմագրում: Կրկին Հարավային Աֆրի-

կան բացառություն է ընդհանուր կանոնից, քանի որ այս երկրում բոլոր ծրագրերը պետք է հավատարմագրվեն որակավորման մարմնի չափորոշիչների համեմատությամբ:

Ներդիր 20. Ծրագրային հավատարմագրումը Հարավային Աֆրիկայում

Բարձրագույն կրթության անհավասար որակի և որակի հարցերի վերաբերյալ ուսանողների ցածր իրազեկվածության համատեքստում, ԲԿՈԿ-ը կարևորում է ուսանողների պաշտպանությունը ցածրորակ ծրագրերից և որակավորումների վստահելիության պահպանումը: Նոր ծրագրերի հավատարմագրման շրջանակում, որն սկսեց գործել 2005թ., ԲԿՈԿ-ն օգտագործում է եռափուլ գործընթաց, որը հավատարմագրվածի կարգավիճակ է շնորհում միայն այն ծրագրերին, որոնք կարող են բավարարել հավատարմագրման 18 չափանիշներով սահմանված նվազագույն չափորոշիչները: Ծրագրին սահմանված ժամանակով հավատարմագրում կշնորհվի այն բանից հետո, երբ ԲԿՈԿ-ի գնահատումը ցույց տա, որ այն բավարարում է կամ գերազանցում կրթության որակի նվազագույն շեմը: Շեշտը կդրվի նոր ծրագրերի վրա, որոնք անցնելու են փորձաշրջանի փուլով մինչև լրիվ հավատարմագրման վերջնական ստացումը: Հաշվի առնելով համակարգում առկա բարձրագույն կրթական ծրագրերի մեծ ծավալը և դրանց բոլորին վերահավատարմագրելու համար հասանելի սահմանափակ ռեսուրսներն ու կարողությունը, ԲԿՈԿ-ը պլանավորում է առկա ծրագրերին անդրադառնալ ազգային փորձաքննությունների և հաստատություններին ինքնահավատարմագրվածի կարգավիճակ շնորհելու համակցության միջոցով:

Հարավային Աֆրիկայի բարձրագույն կրթական հաստատությունները, որոնք ծրագրեր են առաջարկում իրենց երկրից դուրս, ենթակա են ԲԿՈԿ-ի ծրագրային հավատարմագրման պահանջներին, որոնք սահմանված են բոլոր տեղական, ինչպես նաև նրանց միջազգային ակադեմիական ծրագրերի համար: Ի լրումն՝ պետք է համապատասխանել ընդունող երկրի որակի պահանջներին: ԲԿՈԿ-ը պլանավորում է համագործակցել որակի ապահովման ազգային գործակալությունների հետ այն երկրներում, որտեղ Հարավային Աֆրիկայի բարձրագույն կրթական հաստատություններն ունեն գործառնական ներկայություն և դրանց հետ փոխանակել որակին առնչվող համապատասխան տեղեկատվություն: Համագործակցությունը նպատակ ունի երաշխավորելու, որ հարավաֆրիկյան հաստատությունները սահմանը հատելիս համապատասխան ուշադրություն դարձնեն որակի հարցերին:

Օտարերկրյա հաստատությունները, որոնք առաջարկում են բարձրագույն կրթական ծրագրեր Հարավային Աֆրիկայում (այդ թվում այն հաս-

տատությունները, որոնք կիրառում են այլ ազգային, տարածաշրջանային և միջազգային գործակալությունների հավատարմագրման պահանջները), ենթակա են ԲԿՈԿ-ի ծրագրային հավատարմագրման պահանջներին: Ավելին, այս հաստատությունները պետք է բավարարեն Կրթության վարչության և ՀԱՈՄ-ի որակավորման գրանցման պահանջները:

Աղբյուր՝ Naidoo and Singh, 2007.

Մալազիան խրախուսել է միջազգային բարձրագույն կրթությունը, ներառյալ ֆրանչայզինգը: Այնուամենայնիվ որակի արտաքին ապահովման վերջին զարգացումները ցույց են տալիս միտումներ, որոնք նման են հարավաֆրիկյանին: Դրանք ներառում են, օրինակ, բոլոր բարձրագույն կրթություն տրամադրողների համար բազմակողմանի համակարգի հիմնումը: Այս համակարգը ընդգրկում է ինստիտուցիոնալ աուդիտ և ծրագրային հավատարմագրում, որը հիմնված է ազգային որակավորումների շրջանակում առկա չափորոշիչների ընդհանուր շրջանակի վրա: Այս օրինակը ցույց է տալիս, որ չնայած կրթական քաղաքականության նպատակները կարող են տարբերվել, միջազգային բարձրագույն կրթության որակի ապահովման ռեժիմները ավելի ու ավելի են զուգամիտում:

Ներդիր 21. Միջազգային կրթություն տրամադրողների որակի ապահովումը Մալազիայում

Մալազիայում կանոնակարգման շրջանակը, որը ներդրվել է 1996թ., ընդգրկում էր միայն մասնավոր կրթությունը: Մինչև 2002թ. պետական հաստատությունները ամբողջովին մնում էին որակի ապահովման ընթացակարգերից դուրս, երբ Կրթության նախարարի հրամանով ստեղծվեց Որակի ապահովման բաժինը (ՈԱԲ): Պետական հաստատությունների որակավորումների և ծրագրերի մատուցման չափորոշչի նկատմամբ վստահությունը բարձրացնելու գործում ՈԱԲ շեշտը դնում էր աշխատաժողովների վրա՝ նպատակ ունենալով զարգացնելու ինքնագնահատման, արտաքին գործընկերային փորձաքննություն անցկացնելու և ուժեղ կողմերը ներկայացնելու կարողությունը, ստեղծելու որակի շարունակական բարելավման համար որակի մշակույթի ձևավորման հնարավորություններ: ՈԱԲ միավորում է ինստիտուցիոնալ աուդիտը ծրագրային հավատարմագրման հետ ֆակուլտետային կամ հաստատության մակարդակում: Հավատարմագրումը իրականացվում է ըստ ճյուղերի կամ ոլորտների բարձրագույն կրթության համար կարևոր ինքը ուղղություններով: Ճյուղային մոտեցումը առաջ բերեց մեկ այլ առանձնահատկություն՝ լայն ճյուղերի չափորոշիչների վերաբերյալ ուղեցույցների մշակում, որոնք օգտագործվում են ծրագրային հավատարմագրման համար: Այս չափորոշիչները, որոնք մշակվել են ճյուղի համապա-

տասխան շահառուների (ակադեմիական, արդյունաբերության, կառավարության ներկայացուցիչներից և հայտնի մասնագետներից) ազգային կոնսենսուսի արդյունքում, հանգեցրել են Մալազիական որակավորումների շրջանակի (ՄՈՀ) ձևավորմանը:

ՄՈՀ-ը ենթարկվել է բազմամակարդակ, բազմակողմանի ընդլայնված քննարկումների տեղական և օտարերկրյա շահառուների հետ ու հավանության է արժանացել 2005 թվականի հունվարին: Այն գործիք է որակավորումների զարգացման և դասակարգման համար՝ համաձայն ըստ մակարդակների ակընկալվող ուսումնառության արդյունքների չափանիշների համախմբի: Այդ չափանիշներն ընդգրկում են ուսման արդյունքների առանձնացումը և ուսանողական աշխատանքային ծանրաբեռնվածության հիման վրա կրեդիտների ընդհանուր սահմանումը: Լինելով որակավորումների և որակի ապահովման մասին տեղեկատվության աղբյուր՝ ՄՈՀ-ը օգտագործվում է ճանաչման նպատակով օտարերկրյա որակավորումների ազգային «համարժեքը» որոշելու համար: ՄՈՀ-ը ապահովում է շարունակականության սկզբունքներ անհատական առաջընթացի համար՝ հավատարմագրելով նախկին ուսումնառության արդյունքները և կրեդիտների փոխանցումը ֆորմալ, ոչ ֆորմալ և ինքնաբուխ կրթության համար, ինչը ճանաչում է ողջ կյանքի ընթացքում ինքնաուղղորդված ուսումնառությունը, վերապատրաստումն ու փորձառությունը աշխատավայրում:

Մալազիական բարձրագույն կրթության մեջ նշանակալի իրադարձություն էր 2004թ. մարտին Բարձրագույն կրթության նախարարության ստեղծումը: Այն խթան էր միասնականացնելու որակի համակարգերը և վերակազմակերպելու որակի ապահովման և հավատարմագրման մարմինները մեկ ընդհանուր միավորի, որը կոչվեց Մալազիայի որակավորումների գործակալություն (ՄՈԳ): ՄՈԳ-ը գաղափարի ներքո բարձրագույն կրթության որակի կանոնակարգմանը առնչվող բոլոր գործընթացները (հաստատում, ինստիտուցիոնալ աուդիտ, հավատարամագրում և ճանաչում) ուսումնասիրվում են հաշվի առնելով երկու գործոն՝ 1) միջազգային միջավայրում արագ փոփոխությունները, որոնք զուգորդվում են հեռահաղորդակցության տեխնոլոգիաներով՝ մասնաճյուղերի կրթությունը ուսուցումը բարելավելու նպատակով և 2) ՍՈԱԸՀ - շրջանակում ազգային ինքնիշխանության պաշտպանության և թափանցիկության ապահովման անհրաժեշտությունը: ՄՈՀ-ում կգրանցվեն միայն այն ծրագրերը, որոնց որակը ապահովված է:

Աղբյուր՝ Shahabudin, 2005.

Ինչպե՞ս հավատարմագրման սխեմաները դարձնել ավելի արդյունավետ

Միայն մի քանի բարձրագույն կրթության համակարգեր ունեն որակի ապահովման համակողմանի մոտեցում, ներառյալ միջազգային բարձրագույն կրթության որակի ապահովումը: Շատ երկրներում միջազգային բարձրագույն կրթություն տրամադրողները կարող են հեշտությամբ խուսափել հավատարմագրման ընթացակարգերից: Ավելին, այս ընթացակարգերը կարող են լինել ծանր, ժամանակատար և ծախսատար: Երբ գոյություն ունեն ինստիտուցիոնալ լիցենզավորման և հավատարմագրման պարտադիր պահանջներ, միջազգային բարձրագույն կրթություն տրամադրողները կարող են փորձել մուտք գործել շուկաներ ֆրանչայզինգային սխեմաների միջոցով: Դրանք կարող են նաև մասնակցություն ձեռք բերել տեղական հաստատությունների կապիտալում կամ իրենց միջազգային բարձրագույն կրթության ծրագրերը դիրքավորել համակարգի այն մասերում, որտեղ հավատարմագրումը պարտադիր չէ:

Այդ պատճառով կարևոր է, որ որակի ապահովման ռեժիմները հաշվի առնեն այն պայմանները, որոնցում առաջարկվում է բարձրագույն կրթությունը երկրում: Դրանք նաև պետք է ջանան անդրադառնալ որակի հարցերին, որոնք առավել կարևոր են թվում ինստիտուցիոնալ և ծրագրային մակարդակներում:

Կանոնակարգման և որակի ապահովման մեխանիզմների կիրառության ապահովումը այսպիսով կարևոր է: Շատ երկրներ հիմնել են կանոնակարգման այդպիսի մեխանիզմներ: Սակայն գործնականում դեռևս գոյություն ունեն մեծ թվով չճանաչված և չհավատարմագրված ԲՈՒՀ-եր ու ծրագրեր: Շատ երկրներում կանոնակարգերի և որակի պարտադիր ապահովման կիրառումը պահանջում է զգալի քաղաքական կամք և ապակենտրոնացված վարչական կարողություններ որակի ապահովման ընթացակարգերը ներդնելու համար:

Կամավոր հավատարմագրման համակարգերը սովորաբար օգտագործում են մի շարք խթաններ: Դրանք կարող են ներառել հեղինակությունը, որոշ ֆինանսական խթաններ, ինչպես օրինակ զարգացման հիմնադրամների և ուսանողական դրամաշնորհների կամ վարկերի հասանելիություն, ինքնավարության ավելի բարձր մակարդակ և այլն: Այսպիսի խթանները պետք է բավականին գրավիչ լինեն՝ երաշխավորելու, որ միջազգային բարձրագույն կրթություն տրամադրողները կհամաձայնեն անցնել հավատարմագրում: Սա հատկապես ճիշտ է ֆինանսական խթանների պարագայում: Ֆինանսական միջոցների տրամադրումը այն ուսանողներին, ովքեր սովորում են հավատարմագրված ԲՈՒՀ-երում հանդիսանում է հավատարմագրման դիմելու արդյունավետ խթան բոլոր կրթություն տրամադրողների համար (պետական և մասնավոր): Այսպիսի համակարգ գործածվում է ԱՄՆ-ում:

ԲՈՒՀ-երի համար մեկ այլ ուժեղ խթան է ազգային իշխանություն-

ների կողմից բոլոր ԲՈՒՀ-երի որակի ապահովման կարգավիճակի մասին տեղեկատվության տրամադրումը: Ինչ վերաբերում է միջազգային բարձրագույն կրթություն տրամադրողներին, ապա դրանց հավատարմագրման կարգավիճակը և դոնոր, և հյուրընկալող երկրներում պետք է հասանելի լինի: Ավելին, նրանք, ովքեր որոշումներ են կայացնում ուսումնական ծրագրերի վերաբերյալ, պետք է իրազեկված լինեն դրա հասանելիության մասին:

Ներդիր 22. Հասարակությանը հաստատությունների և ծրագրերի կարգավիճակի վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը Քենիայում և Չիլիում

Քենիա

Բարձրագույն կրթության հանձնաժողովը ժամանակ առ ժամանակ տեղեկատվություն է հրապարակում ճանաչված և հավատարմագրված համալսարանների մասին տեղական տպագիր մամուլում: Հանձնաժողովը ունի ճանաչված համալսարանների մասին գրքույկ, որը հանրությանը տրամադրվում է անվճար: Հանձնաժողովը նաև այդ տեղեկատվությունը տեղադրում է իր ինտերնետային կայքում հանրային օգտագործման համար:

2002 թվականից ի վեր Հանձնաժողովը կազմակերպում է տարեկան ցուցահանդեսներ ճանաչված և հավատարմագրված համալսարանների համար: Այս ցուցահանդեսների ընթացքում հանրությունը տեղեկանում է տեղական մասնավոր համալսարանական հաստատությունների հավատարմագրման կարգավիճակի մասին:

Հանձնաժողովը պատրաստում է երկրում գործող հետմիջնակարգ կրթական հաստատությունների ժողովածու: Սա դիտվում է որպես հետմիջնակարգ հաստատությունների հավատարմագրման կամ այս հաստատությունների կողմից առաջարկվող որոշ դասընթացների վավերացման առաջին քայլ: Ակնկալվում է, որ հավատարմագրումը և/կամ վավերացումը հաստատությունը կդասեն մի մակարդակում, որտեղ դրա շրջանավարտները իրավունք կունենան ընդունվելու համալսարան, կամ հաստատությանը կարող է թույլատրվել առաջարկել որոշ համալսարանական մակարդակի ծրագրեր:

Աղբյուր՝ Kaberia, 2007

Չիլի

Չիլիի Կրթության նախարարությունը ներկայումս աշխատում է հանրային տեղեկատվական համակարգի բարելավման ուղղությամբ, որը նախատեսված է բավարարելու երեք տարբեր կարիքներ՝

- քաղաքական որոշումների համար անհրաժեշտ տեղեկատվություն,
- ինստիտուցիոնալ կառավարման և որակի ապահովման համար տեղեկատվություն,
- հանրային տեղեկատվություն բոլոր շահառուների համար:

Երրորդ կողմը ամենակարևորն է այս համատեքստում և ջանքեր են գործադրվելու բարձրագույն կրթական հաստատությունների հետ որոշելու այն հիմնական տվյալները, որ դրանք ցանկանում են տարածել ու ստեղծել ընդհանուր հիմքի վրա կազմակերպված ինստիտուցիոնալ տեղեկատվական համակարգեր:

Միևնույն ժամանակ Նախարարությունը արտաքին խորհրդատուների հետ աշխատում է զբաղվածության կենտրոնի ստեղծման ուղղությամբ՝ նպատակ ունենալով որոշելու մասնագիտական և տեխնիկական տարբեր բնագավառների շրջանավարտների զբաղվածության, եկամուտների մակարդակը և կապը ուսումնառության տարիների, որակավորման, զբաղվածության մակարդակի ու եկամուտների միջև: Այս տեղեկատվությունը հրապարակվում է և ամմբողջացնում յուրաքանչյուր բարձրագույն ուսումնական հաստատության կողմից տրամադրված տեղեկատվությունը:

Նաև աշխատանք է կատարվել վերացնելու հաստատությունների կողմից ապակողմնորոշող հրապարակումները և կեղծ հայտարարությունները, սակայն այն դեռ սկզբնական փուլում է, բացառությամբ՝ հաստատությունների և ծրագրերի, որոնք մասնակցում են վերը նկարագրված հավատարմագրման գործընթացներին:

Ակնկալվում է, որ համապատասխան տեղեկատվության հրապարակումը կունենա ոչ միայն կարգավորիչ ազդեցություն համակարգի վրա (ապահովելով հաստատությունների համար խթաններ բարելավելու այն ոլորտները, որոնց վերաբերյալ ցուցանիշներ են հրապարակվում), այլև մանկավարժական ազդեցություն՝ շահառուներին ավելի ուշադիր դարձնելով որոշակի փոփոխականների նկատմամբ և նվազ կախյալ գովազդից:

Աղբյուր՝ Lemaître, 2007.

Վարժություն 4

1. Ձեր երկիրն ունի՞ արդյոք ինստիտուցիոնալ և ծրագրային մակարդակներում միջազգային բարձրագույն կրթության որակի արտաքին ապահովման հատուկ ռեժիմ

Եթե ոչ, ապա այն դիտարկվում է արդյոք որակի ապահովման ընդհանուր համակարգի կողմից:

2. Գոյություն ունի՞ արդյոք տեղեկատվության որևէ հանրային աղբյուր, որից ուսանողները կարող են պարզել, թե արդյոք միջազգային կրթության տրամադրումը (ծրագիրը կամ հաստատությունը) ճանաչված են, լիցենզավորված և/կամ որակապես ապահովված Հայաստանի իշխանությունների կողմից:

Կանոնակարգման և որակի ապահովման ռեժիմներն ու ազգային կրթական քաղաքականության նպատակները

Միջազգային բարձրագույն կրթությունը բազմակողմանի իրողություն է, որը բազմաթիվ քաղաքական մարտահրավերներ է առաջացնում զարգացող երկրների համար: Կախված տեղական սոցիալ-տնտեսական պայմանների և տեղական բարձրագույն կրթության համակարգի զարգացումից ու գործունեությունից, երկրները տարբեր չափով են կրում միջազգային բարձրագույն կրթության ազդեցությունը: Դրանցից հիմնականներն են՝

- երկրների ընդհանուր զարգացման և տնտեսական քաղաքականությունները,
- տարածաշրջանային ինտեգրացիայի առկա նախաձեռնությունները և առևտրային համաձայնագրերը,
- տեղական գնողունակությունը, տեղական ուսման վարձերը և ուսանողներին աջակցության գոյություն ունեցող համակարգերը,
- տեղական բարձրագույն կրթության համակարգի զարգացումը,

- բարձրագույն կրթության համակարգերի կարողությունը բավարարելու հասարակական պահանջարկը ինչպես քանակական, այնպես էլ որակական տեսանկյունից:

Այս տեղական գործոնները հանգեցնում են տարբեր քաղաքական հիմնավորումների՝ կապված բարձրագույն կրթության միջազգայնացման հետ: Լարսենը և ուրիշները (Larsen et al. 2004) ընդգծել են քաղաքականության չորս հիմնական հիմնավորումներ, որոնց վրա կարող են հիմնվել բարձրագույն կրթության միջազգայնացման քաղաքականությունները: Դրանք են՝

- փոխադարձ ըմբռնումը (ընդգրկում է քաղաքական, մշակութային, ակադեմիական և զարգացման օգնության նպատակները),
- որակյալ միգրացիա (ուղղված է գրավելու օտարերկրյա ուսանողներին առանձնահատուկ գիտական ոլորտներում, որոնք ռազմավարական նշանակություն ունեն ազգային զարգացման համար),
- եկամուտների ստեղծումը,
- տեղական կարողությունների ձևավորում:

Ընդունող երկրների տեսանկյունից (որոնք հաճախ զարգացող կամ նոր շուկայական տնտեսությունների անցնող երկրներ են) տեղական կարողությունների ձևավորումը իհարկե կարևոր քաղաքական պատճառ է, քանի որ բարձրագույն կրթության համակարգերը հաճախ ի վիճակի չեն բավարարելու հասարակական պահանջարկը: Գոյություն ունեն նաև առաջարկվող դասընթացների որակական անհամապատասխանություն: Այլ քաղաքական պատճառները ներառում են՝

- ուսանողների և մասնագետների շարժունակության ավելի մեծ հնարավորություններ,
- կրթության ոլորտների ընդլայնում և պատասխան կրթության չբավարարված պահանջարկին,
- ուսումնական ծրագրերի և մանկավարժական ռազմավարությունների բարելավում:

Ընդհանուր քաղաքականության հիմնավորումներից բացի, երկրները պետք է կատարեն մի շարք հիմնական ընտրություններ, անդրադառնալով այնպիսի հարցերի, ինչպիսիք են՝

- արդյոք կառավարությունը կարող է գործել որպես կանոնակարգող և/կամ բարձրագույն կրթության գլխավոր տրամադրող,
- արդյոք միջազգային բարձրագույն կրթությունը կխրախուսվի կամ կհանդուրժվի և այնուհետև պաշտոնապես կճանաչվի դառնալով բարձրագույն կրթության մի մասը,
- արդյոք ծրագրային և ինստիտուցիոնալ շարժունակությունը կլինի միջազգային բարձրագույն կրթության նախընտրելի տարբե-

ռակը՝ ուսանողական շարժունակության փոխարեն, և վերջապես,
- կանոնակարգման և որակի ապահովման ինչ ռեժիմներ են առավելագույնս համապատասխանում ազգային համատեքստին և քաղաքական նպատակներին:

Կանոնակարգման և որակի ապահովման ռեժիմները կրթական քաղաքականության գործիքներ են, որոնք պետք է համահունչ լինեն քաղաքականության ընդհանուր նպատակներին: Օրինակ, դրանք կարող են ուղղված լինել հասանելիության ընդլայնմանը, բարձրագույն կրթության տրամադրման ոլորտում որակական անհամապատասխանության լրացմանը կամ տեղական բարձրագույն կրթության դեռևս փխրուն համակարգի պաշտպանությանը անհավասար համարվող մրցակցությունից: Միաժամանակ պետք է ընդունել, որ կանոնակարգման և որակի ապահովման ռեժիմները քաղաքականության գործիքներից միայն մի տեսակն են: Մյուսները ներառում են կրթաթոշակների, վիզաների և էմիգրացիոն քաղաքականությունները (OECD, 2004a):

Ստորև ներկայացվում է քաղաքականության ընդհանուր նպատակների և կանոնակարգման մխանիզմների միջև կապի օրինակներ :

Ներդիր 23. Կանոնակարգման ազատական ռեժիմները Օմանում, Քենիայում և Ռուսաստանում

Օմանում միջազգային բարձրագույն կրթության համար մշակված կանոնակարգման ռեժիմը պարզորոշ ցույց է տալիս, որ քաղաքականության հիմնական հիմնավորումը, որն ուղորդում է կանոնակարգումը բարձրագույն կրթության տրամադրման ընդարձակման միջոցով կարողությունների ստեղծումն է՝ նպատակ ունենալով բարձրացնել բարձրագույն կրթության հասանելիությունը: Այս նպատակով զարգացվում է տեղական մասնավոր բարձրագույն կրթության հատվածը, ակընկալելով, որ ակադեմիական միության համաձայնագրեր կկնքվեն միջազգային կրթություն տրամադրողների հետ: Հասանելիության մեծացումը շատ արագ աճող,երիտասարդ բնակչության համար, որի միայն մեկ երրորդն է հնարավոր ընդունել պետական հաստատություններ, հիմնավոր պատճառ է խրախուսող կանոնակարգման ռեժիմի համար: Սա նաև հեշտությամբ բացատրում է Օմանի կառավարության մեծահոգի աջակցությունը տեղական մասնավոր հատվածին:

Քենիան և Ռուսաստանը գտնվում են բարձրագույն կրթության նկատմամբ հասարարական պահանջարկը բավարարելու համար բավարար տեղական կարողություններ չունենալու նմանատիպ իրավիճակում: Քենիայում ոչ համալսարանական հատվածը թերզարգացած է, մինչդեռ

աշխատաշուկան ծառայությունների հատվածում, մասնավորապես տեղեկատվական տեխնոլոգիաների և հաշվապահության ոլորտներում միջին մակարդակի աշխատուժի պահանջարկ ունի:
Բարձրագույն կրթության նկատմամբ աճող պահանջարկը Ռուսաստանին դնում է նմանատիպ իրավիճակի մեջ, երբ առկա են անբավարար հնարավորություններ բավարարելու կրթության աճող պահանջարկը: Ի հավելումն, որակական անհամապատասխանությունը նույնպես պետք է բարելավվի նոր դասընթացների տրամադրման միջոցով: Երկու երկրներն էլ օգտագործում են ազատական կամ սահմանափակ կանոնակարգման ռեժիմներ միջազգային կրթություն տրամադրողների նկատմամբ, ինչը լայն հնարավորություններ է ստեղծում տեղական բարձրագույն կրթության համակարգերում զարգանալու և գործելու համար:

Աղբյուր՝ Martin, 2007.

Ներդիր 24 - Չափավոր ազատական ռեժիմներ միջազգային բարձրագույն կրթություն տրամադրողների համար Արգենտինայում և Չիլիում

Արգենտինան և Չիլին միջազգային բարձրագույն կրթություն տրամադրողների գործունեությունը կանոնակարգում են մասնավոր կրթություն տրամադրողների համար գոյություն ունեցող ռեժիմների միջոցով: Երկու երկրներում էլ տեղական կարողությունները բավական զարգացած են բավարարելու հասարակական պահանջարկը, սակայն գոյություն ունի տեղական մասնավոր հատվածի զարգացման անհրաժեշտություն: Չիլին այժմ ունի մասնավոր բարձրագույն կրթության հատվածի զարգացման և կանոնակարգման որոշ ավանդույթ և միջազգային բարձրագույն կրթության տրամադրումը պարզապես ընկալվում է որպես մասնավոր կրթության մաս, որը կարող է կանոնակարգվել նույն կերպ: Նաև կա ինքնավարության կայուն պահանջ համալսարանների կողմից, որը կարծես թե հակասության մեջ է ծրագրերի շարունակական խիստ վերահսկողության համակարգերի հետ: Գործող տեղական տրամադրողների ազդեցությունը և միջազգային կրթություն տրամադրողների դեռևս չափավոր ներկայությունը ներկայումս պայմանավորում են կանոնակարգման համեմատաբար մեղմ ռեժիմը: Դրանք նույնն են ազգային և օտարերկրյա կրթություն տրամադրողների համար առնվազն որակավորումների մակարդակում:

Աղբյուր՝ Martin, 2007.

Ներդիր 25 - Կանոնակարգման խիստ ռեժիմներ Ֆիլիպիններում և Հարավային Աֆրիկայում

Եվ Ֆիլիպինները, և Հարավային Աֆրիկան ունեն խստիտ կանոնակարգման ռեժիմներ միջազգային բարձրագույն կրթություն տրամադրողների համար: Երկու երկրներում էլ բարձրագույն կրթության տեղական տրամադրումը բավարար է, սակայն գոյություն ունի չբավարարված պահանջարկ մի շարք ոլորտներում:

Ֆիլիպինները հստակ նշում են չբավարարված պահանջարկի մասին տեղական աշխատաշուկայում, թեև միևնույն ժամանակ շրջանավարտների շրջանում առկա է գործազրկություն: Այս պահանջարկը վերաբերում է տեխնիկական և բնական գիտությունների որոշ ոլորտներում մագիստրական և բակալավրական կրթությանը: Գոյություն ունի նաև չբավարարված պահանջարկ տեղեկատվական տեխնոլոգիաների, բժշկության և բիզնեսի ոլորտներում, ինչպես օրինակ հաշվապահությունը, ձեռնարկատիրությունը և շարունակական մասնագիտական կրթությունը:
Ֆիլիպիններում միջազգային բարձրագույն կրթության ընթացիկ առաջարկը, ինչպես այլ երկրներում, ուղղված է միջին մակարդակի աշխատուժի պատրաստմանը և այսպիսով հետազոտական չէ: Ֆիլիպիններում առկա սահմանափակող կանոնակարգման ռեժիմը կարծես թե առանձնապես ուղղված չէ միջազգային բարձրագույն կրթություն տրամադրողների գրավմանը, որոնք կարող են լրացնել այդ անհամապատասխանությունը: Որակական անհամապատասխանությունը վերացնելու համար մասնավոր կրթություն տրամադրողները պետք է զգալի ներդրումներ անելու պարտավորություն ստանձնեն: Այս պայմաններում կասկածելի է, որ բյուրոկրատական կանոնակարգումը կարող է խնդրի լուծում համարվել:

Իրավիճակը Հարավային Աֆրիկայում բավականին տարբեր է: Չնայած այնտեղ նույնպես գոյություն ունեն նույն բնույթի որակական անհամապատասխանություններ, երկրում միջազգային բարձրագույն կրթություն տրամադրողների կանոնակարգման ազատական ռեժիմը վերափոխվել է խիստ կանոնակարգող ռեժիմի: Սա անհրաժեշտ էր, քանի որ համարվում էր, որ շատ ցածրորակ կրթություն տրամադրողներ են մուտք գործել հարավաֆրիկյան համակարգ և որ դրանք իրականում չեն նպաստում տեղական կարողությունների ձևավորմանը: Կանոնակարգման ներկա ռեժիմը հաստատվել է այն տրամաբանությամբ, որ հարավաֆրիկյան բոլոր կրթություն տրամադրողները՝ պետական թե մասնավոր (այդ թվում միջազգային բարձրագույն կրթության հատվածը), պետք է հավասարապես նպաստեն ազգային զարգացման միևնույն նպատակներին և բոլորը որակը ապահովեն ազգային չափորոշիչների նույն հա-

մակարգին համապատասխան: Ֆրանչայզինգային կրթությունը հաճախ համարվում էր ցածրորակ և դժվար կարգավորելի, քանի որ այս դեպքում միջազգային բարձրագույն կրթություն տրամադրողները չունեն ֆիզիկական ներկայություն: Նման կանոնակարգումը հանգեցրել է միջազգային բարձրագույն կրթություն տրամադրողների ներկայության շատ ցածր մակարդակի. 2005թ. միջազգային տրամադրողների մոտ ընդունվել են բոլոր հարավաֆրիկյան ուսանողների միայն 0.2 տոկոսը :

Աղբյուր՝ Martin, 2007.

Որպես եզրակացություն. որևէ առանձին և ունիվերսալ մոդել չի կարող օգտագործվել միջազգային բարձրագույն կրթության կանոնակարգման և որակի ապահովման համար: Նաև դժվար է բացահայտել կանոնակարգման և որակի ապահովման ռեժիմների զարգացման հստակ միտումները: Ներկայումս ազատական կամ չափավոր կանոնակարգումը առավել հաճախ են ընտրվում, քան խիստ կանոնակարգումը: Սա կարող է լինել ինքնաբերաբար կամ գիտակցված ընտրություն: Ավելին, շատ երկրներ համարվում են կամ հակված են դառնալու ներմուծող և արտահանող երկրներ: Համապատասխան կանոնակարգման շրջանակի ընտրությունը դժվարացնում է այն անորոշությունը, թե արդյոք ազգային կրթություն տրամադրողները ի վիճակի կլինեն մրցելու տարածաշրջանային և միջազգային շուկաներում: Ավելին, ՍՈԱԸՀ շրջանակներում շարունակվող բանակցությունները կարող են երկրներին ստիպել որդեգրելու «սպասիր և տես» ռազմավարությունը:

Ներկա իրավիճակը կանոնակարգման տեսակետից կարելի է հիարկե բնութագրվել որպես բազում «սոցիալական գիտափորձերից» մեկը: Այս մոդուլը նպատակ ունի լուսաբանել այս շարունակվող գիտափորձի պատճառները, բովանդակությունը և ազդեցությունը: Նպատակն է օգնել երկրներին կայացնելու առավել հիմնավորված ընտրություն միջազգային կրթություն տրամադրողների կանոնակարգման իրենց քաղաքականությունների մշակման գործում:

Վարժություն 5

Արդյո՞ք միջազգային բարձրագույն կրթություն տրամադրողների կանոնակարգման և որակի ապահովման Ձեր երկրի ներկա ռեժիմը համապատասխանում է ազգային կրթական քաղաքականության նպատակներին: Կամ այն ինքնաբերաբար («ըստ սահմանման») գործող ռեժի՞մ է.

Ի՞նչ ռեժիմ Դուք կառաջարկեիք կանոնակարգումը Ձեր բարձրագույն կրթության քաղաքականության նպատակներին (հասանելիություն, որակ, հավասարություն, համապատասխանություն, արժեք) համապատասխանեցնելու համար. Ինչու՞:

Միջազգային բարձրագույն կրթության կանոնակարգման և որակի ապահովման միջազգային շրջանակները

Այս մոդուլը անդրադառնում է միայն ներմուծող երկրի խնդիրներին քաղաքականության և կանոնակարգման տեսակետից: Սակայն, կրթություն արտանող երկրները նույնպես որոշակի շահ ունեն միջազգային բարձրագույն կրթությունից: երկրները կարող են եկամուտներ ստանալուց բացի նաև քաղաքական նպատակներ ունենալ: Դրանք կարող են ներառել որակյալ աշխատուժի գրավումը, երկրի իմիջի և միջազգային դիրքի բարելավումը այլ երկրներում միջազգային բարձրագույն կրթության տրամադրման շնորհիվ մշակույթի տարածման և գործուն կապերի միջոցով: Ահա թե ինչու շատ արտահանող երկրներ գտնում են, որ իրենք պատասխանատու են իրենց հաստատությունների արտահանած բարձրագույն կրթության որակի ապահովման համար: Դրա համար երկրները պնդում են, որ իրենց միջազգային բարձրագույն կրթությունը ենթարկվի կանոնակարգման և որակի ապահովման ինչպես ազգային բարձրագույն կրթության տրամադրումը:

Այս տեսակետից միջազգային բարձրագույն կրթությունը ենթադրում է միջազգային պատասխանատվություն: Հետևաբար, միջազգային կազմակերպությունները, այդ թվում Եվրոպայի Խորհուրդը, Համալսարանների նախագահների միջազգային ասոցիացիան և բոլորովին վերջերս ՅՈՒՆԵՍԿՕ-ն ՏՀԶԿ-ի հետ միասին միջոցներ են ձեռնարկել մշակելու միջազգային բարձրագույն կրթության տրամադրման ուղեցույցներ:

ՅՈՒՆԵՍԿՕ/ՏՀԶԿ-ի *Միջազգային բարձրագույն կրթության որակյալ տրամադրման ուղեցույցները* ուղղված են աջակցելու և խրախուսելու միջազգային համագործակցությունը և ընկալելու միջազգային բարձրագույն կրթության որակի ապահովման կարևորությունը: Դրանք նաև փորձում են ուսանողներին և այլ շահառուներին պաշտպանել կրթության անբարեխիղճ տրամադրողներից և խրախուսել որակյալ միջազգային բարձրագույն կրթության զարգացումը, որը բավարարում է մարդկային, սոցիալական, տնտեսական ու մշակութային պահանջները: Միջազգային բարձրագույն կրթության որակի և համապատասխանության ապահովման գործում գլխավոր պայմաններից մեկը արտահանող (դոնոր) և ներմուծող (ընդունող) երկրների միջև գործընկերության, փոխանակության, երկխոսության և փոխադարձ հարգանքի ու վստահության հանդեպ պատասխանատվության բարձրացումն է:

Բարձրագույն կրթության միջազգայնացումը և առևտուրը կարող են օգուտ բերել և դոնոր, և ընդունող երկրներին: Միաժամանակ պետք է բավարարվեն որոշակի պայմաններ, որպեսզի ընդունող երկիրը կարողանա շահել դրա հնարավոր օգուտներից (OECD, 2004a): Հուգոնիերը (Hugonnier, IIEP, 2005) առանձնացրել է ութը հիմնական պայմաններ, որոնք ներկայացված են *Ներդիր 26-ում:*

Ներդիր 26. Պայմաններ, որոնց առկայության դեպքում երկրները կարող են օգուտ քաղել միջազգային բարձրագույն կրթությունից

- օտարերկրյա կրթության տրամադրումը բավարարում է ներմուծող երկրի պահանջները (տնտեսական, սոցիալական և մշակութային) (համապատասխանության պայման):
- ուսանողները պաշտպանված են ցածրորակ կրթության տրամադրումից (որակի պայման):
- որակավորումները միջազգայնորեն վավեր են և փոխանցելի (օգտակարության պայման):
- ընդունող երկրի կրթական համակարգի կայունության և շարունակականության ռիսկը սահմանափակ է (ինքնիշխանության պայման):
- մեծ է որակի ապահովման և հավատարմագրման ազգային գործակալությունների միջև միջազգային համագործակցությունը (համագործակցության պայման):
- գոյություն ունեն որակի ապահովման և հավատարմագրման ուժեղ համակարգեր կամ նրանց զարգացումը աջակցության կարիք ունի (կարողությունների ձևավորման պայման):
- ուղեղների արտահոսքի ռիսկը հասցված է նվազագույնի (ուղեղների արտահոսքի պայման):

- թույլ զարգացած երկրների և այլ զարգացող երկրների միջև կրթական անհամապատասխանությունը մեղմվում է շնորհիվ կրթության ոլորտում զարգացման համապատասխան օգնության (կրթական անհամապատասխանության պայման):

Աղբյուր՝ Hugonnier, 2005.

Այս բոլոր պայմանների բացակայության դեպքում, կարող են հարցեր ծագել ներմուծող երկրների համար բարձրագույն կրթական ծառայությունների ներմուծման, ինչպես նաև այդ ոլորտում օտարերկրյա ներդրումների ընդլայնման միջոցով բարձրագույն կրթության միջազգայնացման օգուտների մասին: Դա հատկապես ճիշտ է զարգացող երկրների համար:

ՅՈՒՆԵՍԿՕ/ՏՀԶԿ-ի ուղեցույցների տեքստը հասանելի է ինտերնետի հետևյալ կայքում՝
http://www.unesco.org/education/amq/guidelines/

Վարժություն 6

Որպես կրթական քաղաքականություն մշակող կամ որակի ապահովման ոլորտի մենեջեր ինչ կարող եք դուք սովորել ՅՈՒՆԵՍԿՕ/ՏՀԶԿ-ի /ՏՀԶԿ-ի միջազգային կրթության վերաբերյալ ուղեցույցներից՝

Յուրացված դասեր

Դաս 1 - Միջազգային բարձրագույն կրթության որակի ապահովումն ընդունող երկրի պատասխանատվությունն է (դոնոր երկրի հնարավոր համագործակցությամբ)

Շատ երկրներում գործում են չափավոր սահմանափակումներով կանոնակարգման ռեժիմներ միջազգային կրթություն տրամադրողների համար: Օտարերկրյա կրթություն տրամադրողները պետք է պարզապես բավարարեն նվազագույն պայմանները նախքան գործունեություն սկսելը, ինչպես օրինակ պաշտոնական ճանաչումը իրենց սեփական երկրում: Այնուամենայնիվ, այդպիսի ռեժիմը կարող է բավարար չլինել երաշխավորելու օտարերկրյա կրթության համապատասխանությունը որակի ազգային պահանջներին: Դրա համար հիմնական սկզբունք է համարվում այն, որ բարձրագույն կրթության ցանկացած տրամադրման համար գլխավոր պատասխանատուն ընդունող երկիրն է: Միջազգային բարձրագույն կրթության տրամադրման որակի ապահովումը կարող է իրականացվել՝ համագործակցելով դոնոր երկրի հետ: Այդ նպատակով այն կարող է հաշվի առնել տեղեկատվությունը, որը ստացվում է դոնոր երկրի որակի ապահովման համակարգից (որակի կրկնակի ապահովումից խուսափելու նպատակով), սակայն, անհրաժեշտ է ապահովել որակի ազգային պահանջների պարտադիր կատարումը:

Դաս 2 - Միջազգային բարձրագույն կրթության տրամադրման վերաբերյալ ամբողջական, թարմացվող տեղեկատվական և վերահսկողական համակարգի անհրաժեշտությունը

Երկրների մեծամասնությունը չունեն տվյալների հավաքագրման և միջազգային բարձրագույն կրթություն տրամադրողների վերահսկողության կենտրոնացված համակարգ: Առկա իրավիճակը պատկերացնելու համար դրանք պետք է տեղեկատվություն հավաքեն տարբեր աղբյուրներից, որպեսզի կրթության տրամադրման վերաբերյալ մոտավոր պատկեր ստանան: Ավելին, կրթության տրամադրումը անընդհատ փոփոխվում է: Տեղեկատվությունը կարող է հավաքվել տպագրված և ԶԼՄ-ով գովազդներից կամ մասնավոր կրթության տեղեկագրքերից: Ուսումնասիրված երկրների մեծ մասում չկա կենտրոնացված տեղեկատվություն համատեղ ուսուցման ծրագրերի կամ հեռավար կրթության տրամադրման վերաբերյալ: Չնայած դժվար է պլանավորել միջազգային բարձրագույն կրթության հատվածը, սակայն այն վերահսկողության կարիք ունի՝ մտապահելով հետևյալ հարցերը.

- Ովքե՞ր են միջազգային կրթություն տրամադրողները,

- Ինչպիսին է նրանց ազդեցությունը ազգային համակարգի վրա,
- Ինչպե՞ս են զարգանում միջազգային կրթություն տրամադրողները:

Դաս 3 - Միջազգային կրթություն տրամադրողների կարգավիճակի վերաբերյալ հրապարակային տեղեկատվության միջոցով սպառողների պաշտպանության կայուն մեխանիզմների անհրաժեշտությունը

Ուսանողները կարիք ունեն ճանաչման և հավատարմագրման վերաբերյալ հասանելի տեղեկատվության (և դոնոր, և ընդունող երկրների կողմից), որպեսզի կարողանան հիմնավորված ընտրություն կատարել: Նրանց պետք է նաև տեղյակ պահել կրթություն անբարեխիղճ տրամադրողների հնարավոր գոյության և այն մասին, թե ինչպես նրանք կարող են տեղեկանալ միջազգային կրթություն տրամադրողի կարգավիճակի մասին: Հարավային Աֆրիկայում սա արվում է միջնակարգ կրթության մակարդակում: Վերջապես կարևոր է կարգավորել գովազդը՝ երաշխավորելու, որ սխալ տեղեկատվություն չմատուցվի:

Դաս 4 - Կանոնակարգման և որակի ապահովման տարբեր փուլերի համար պատասխանատու պետական գործակալությունների միջև համագործակցության բարելավման անհրաժեշտությունը

Կանոնակարգման և որակի ապահովման մեխանիզմները հաճախ առկա են, սակայն դրանք թույլ են, քանի որ մասնատված են և բացակայում է համագործակցությունը պետական կառավարման մարմինների միջև: Շատ դեպքերում գրանցման ստացման և լիցենզավորման ընթացակարգերը հստակ ձևակերպված չեն, քանի որ պետական մարմինները կոորդինացնող համակարգերի պակաս ունեն: Միջազգային կրթություն տրամադրողները կարող են նաև շրջանցել տեղական կանոնակարգման շրջանակը, եթե հստակեցված չեն պատասխանատվությունները տեխնիկական ու մասնագիտական ոլորտների և բարձրագույն կրթության ոլորտի համար աշխատող պետական գործակալությունների միջև: Կան նաև չկանոնակարգվող ոլորտներ, ինչպիս օրինակ «աստիճանավորված» որակավորում շնորհող և կարճատև ծրագրերը:

Դաս 5 - Կրթական քաղաքականության երկարաժամկետ նպատակներին (որակ, հավասարություն) համահունչ լայն ընդգրկմամբ և երկարաժամկետ հեռանկարով կանոնակարգման քաղաքականության անհրաժեշտությունը (բարձրագույն կրթության համակարգը հաճախ չի ցանկանում անդրադառնալ այդ խնդրին)

Շատ երկրներ միջազգային բարձրագույն կրթության կարգավորման հատուկ շրջանակ չունեն: Պարզապես օգտագործվում է այն, ինչը ստեղծվել է մասնավոր բարձրագույն կրթության հատվածի համար: Որտեղ առկա է այդպիսի շրջանակ, կանոնակարգման ռեժիմները և որակի ապահովման քաղաքականությունը հաճախ որոշվում են տարերայնորեն, առանձին խնդիրներ լուծելու նպատակով: Մասնավորապես դրանք չեն արտացոլում հստակ պատկերացում այն մասին, թե ինչ կարող է տալ միջազգային բարձրագույն կրթության տրամադրումը: Թվում է, թե բարձրագույն կրթության համակարգերը չեն ցանկանում անդրադառնալ միջազգային բարձրագույն կրթության հարուցած քաղաքականության խնդիրներին: Դրա համար անհրաժեշտ է մշակել առավել լայն ընդգրկմամբ կանոնակարգման քաղաքականություն: Մասնավորապես, պետք է անդրադառնալ որակի և հավասարության հարցերին: Քաղաքականությունը պետք է նաև հեռանկարային լինի և մշակվի բարձրագույն կրթության զարգացման ազգային այլ նպատակներին համապատասխան: Երկրները պետք է որոշեն այն ոլորտները, որտեղ միջազգային բարձրագույն կրթություն տրամադրողները պետք է ծառայեն մարդկային ռեսուրսների զարգացման պահանջներին: Այնուհետև երկրները պետք է գտնեն համապատասխան միջազգային բարձրագույն կրթություն տրամադրողների և սահմանեն անհրաժեշտ կրթության տրամադրման ձևերը:

Դաս 6 - Կամավոր ծրագրային հավատարմագրման հետ առընչվող ուժեղ խթանների համակարգի անհրաժեշտությունը (որակի տեղական վերահսկման կամ ֆրանչայզինգային կրթության համար)

Շատ երկրներում լիցենզավորման ընթացակարգերը համեմատաբար զարգացած են և արդյունավետ ֆիլտր են հանդիսանում ցածրորակ կրթական առաջարկների համար: Միաժամանակ կան որակի ապահովման այլ մեխանիզմներ, որոնք չեն ընդգրկում բարձրագույն կրթության ողջ համակարգը, կամ իրենց բնույթով պարտադիր չեն: Սա նշանակում է, որ մեծ հնարավորություններ կան միջազգային բարձրագույն կրթություն տրամադրողների համար շրջանցելու որակի ապահովման ազգային մեխանիզմները, հատկապես ծրագրային մակարդակում: Շատ դեպքերում ֆրանչայզինգային ծրագերը հաճախ ընդհանրապես որակի ապահովում չեն անցնում, քանի որ ֆրանչայզինգային բարձրագույն կրթությունը մատուցվում է արդեն լիցենզավորված հաստատություններում, իսկ հավատարմագրումը կամավոր է: Երբ որակի ապահովման համակարգերը կամավոր են, անհրաժեշտ է դրանք կապել խթանների ուժեղ համակարգերի հետ՝ միջազգային բարձրագույն կրթություն տրամադրողներին խրախուսելու անցնել հավատարմագրում:

Դաս 7 - Պետական և մասնավոր կրթություն տրամադրողների նկատմամբ միևնույն մոտեցման անհրաժեշտությունը

Անցյալում որակի ապահովման շատ համակարգեր ուղղված էին ընդլայնվող մասնավոր բարձրագույն կրթության տրամադրմանը: Այս տրամադրումը համարվեց խնդրահարույց որակի տեսակետից: Վերջերս երկրներն ընդունեցին, որ կան որակի հետ կապված խնդիրներ նաև պետական հատվածում, որոնք անհրաժեշտ է լուծել: Ավելին, պետականի և մասնավորի միջև սահմանը որոշ չափով վերանում է: Եվ պետական, և մասնավոր հաստատությունները պետք է նպաստեն կրթական քաղաքականության նույն խնդիրների իրագործմանը: Այդ պատճառով, որակի ապահովման մեխանիզմները ավելի ու ավելի են ընդգրկում թե պետական և թե մասնավոր բարձրագույն կրթության տրամադրումը:

Գրականություն

1. Altbach, P.G. 2002. "Knowledge and education as international commodities: the collapse of the common good". In: *International Higher Education*, Summer 2002.
2. Breton, G.; Lambert, M. (Eds). 2003. *Universities and globalization: private linkages, public trust*. Paris: UNESCO.
3. Committee of Vice-Chancellors and Principals (CVCP). 2000. *The business of borderless education: UK perspectives*. London: CVCP.
4. French, N.J. 1999. "Transnational education – competition or complementarity: the case of Hong Kong". In: *Higher education in Europe, 24*(2), 219-225.
5. Government of Hong Kong SAR. 1997. *Non-Local Higher and Professional Education (Regulation) Ordinance*. Available at: http://www.emb.gov.hk/index.aspx?nodeID=226&langno=1
6. Hugonnier, B. 2005. *The UNESCO/OECD guidelines on quality provision in cross-border higher education: What do they bring to international co-operation?* Paper presented at the IIEP Policy Forum, Paris, France, 13-14 June 2005.
7. IDP. 2002. *Global student mobility 2025 report*. Canberra: IDP Australia
8. Kaberia, F. 2007 (forthcoming). "Regulation and quality assurance mechanisms for transnational (commercial) providers of higher education in Kenya". In: M. Martin (Ed.), *Cross-border higher education: regulation, quality assurance and impact*. Paris: IIEP-UNESCO.
9. Knight, J. 2005. "Commercial cross-border education: implications for financing higher education". In: *Higher education in the world 2006. The financing of universities* (GUNI Series on the Social Commitment of Universities 1) (pp. 103-112). New York: Palgrave.
10. LemaStre, M.J. 2007 (forthcoming). "Transnational higher education in Chile: a new development". In: M. Martin (Ed.), *Cross-border higher education: regulation, quality assurance and impact*. Paris: IIEP-UNESCO.
11. Machado Dos Santos, S. 2002. "Regulation and quality assurance in transnational education". In: *Tertiary education and management, 8(2)*, 97–112.
12. Martin, M. 2007 (forthcoming). "Comparative synthesis of the case study research on the global higher education market". In: M. Martin (Ed.), *Cross-border higher education: regulation, quality assurance and impact*. Paris: IIEP-UNESCO.
13. McBurnie, G.; Ziguras, C. 2001. "The regulation of transnational

higher education in Southeast Asia: case studies of Hong Kong, Malaysia and Australia". In: *Higher Education*, *42*(1), 85-105.
14. Middlehurst R.; Campbell C. 2003. "Quality assurance and borderless higher education: finding pathways through the maze". In Bjarnason S. (Ed.), *Mapping borderless higher education: policy, markets and competition*, 2004, (pp. 89-103). London: OBHE.
15. Middlehurst, R; Woodfield, S. 2004. *The role of transnational private and for-profit higher education in meeting the global demand for tertiary education: mapping, regulation and impact*. Report commissioned by the Commonwealth of Learning and UNESCO. Vancouver: COL.
16. Mirone, J.A. 1999. "Transnational factors influencing the establishment of educational standards for professional licensure". In: *Higher Education in Europe*, *24*(2), 213-218.
17. Naidoo, P. 2004. *Student quality literacy and empowerment*. Paper presented at the Second Global Forum on International Quality Assurance, Accreditation and the Recognition of Qualifications, UNESCO, Paris, France, 28-29 June, 2004.
18. Naidoo, P.; Singh, M. 2007 (forthcoming). "National regulation of transnational higher education: South African Case study". In: M. Martin (Ed.), *Cross-border higher education: regulation, quality assurance and impact*. Paris: IIEP-UNESCO.
19. Organization for Economic Co-operation and Development (OECD). 2004*a*. *Internationalization and trade in higher education. Opportunities and challenges*. Paris: OECD.
20. Organization for Economic Co-operation and Development (OECD). 2004*b*. *Quality and recognition in higher education: the cross-border challenge*. Paris: OECD.
21. Prakash, V. 2005. *Internationalization of higher education: the Indian context*. Paper presented at the IIEP Policy Forum, Paris, France, 13-14 June, 2005.
22. Shahabudin, S.A. 2005. *Regulation of cross-border education in Malaysia*. Paper presented at the IIEP Policy Forum, Paris, France, 13-14 June, 2005.
23. Tayag, J. 2007 (forthcoming). "Transnational commercial provision of higher education: Philippines case". In: M. Martin (Ed.), *Cross-border higher education: regulation, quality assurance and impact*. Paris: IIEP-UNESCO.
24. UNESCO. 2003. *Synthesis report on trends and developments in higher education since the World Conference on Higher Education (1998-2003)*. Paris: UNESCO.
25. UNESCO; Council of Europe. 2001 (June). *Code of Good Practice in the Provision of Transnational Education*. Riga: UNESCO-CEPES;

Council of Europe. Available at:
26. www.cepes.ro/hed/recogn/groups/transnat/code.htm
27. Van Damme, D. 2001. "Quality issues in the internationalization of higher education". In: *Higher education, 41*(4), 415-441.
Verbik, L.; Jokivirta, L. 2005 (February). *National regulatory frameworks for transnational higher education: models and trends, Part 1*. Briefing Note *22*. Observatory on Borderless Higher Education.
28. Villanueva, E. 2007 (forthcoming). "Transnational commercial provision of higher education. The case of Argentina". In: M. Martin (Ed.), *Cross-border higher education: regulation, quality assurance and impact*. Paris: IIEP-UNESCO.
29. World Bank. 2003. Constructing knowledge societies: new challenges for tertiary education. Washington, DC: World Bank.

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՈՐԱԿԻ ԱՐՏԱՔԻՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Ուղեցույց բարձրագույն կրթության մենեջերների համար

Հեղինակներ՝ Միքաելա Մարսին
Էնտոնի Ստելլա

Մասնագիտական խմբագիր՝ Արայիկ Նավոյան

Խմբագիրներ՝ Վրեժ Սարգսյան
Վաղարշակ Խաչատրյան

Թարգմանիչներ՝ Արմեն Խաչիկյան
Արթուր Կոչնակյան

Համակարգչային
ձևավորումը և դիզայնը՝ Նոյ Հովհաննիսյան

Սառրագրված է տպագրության՝ 10.03.2009թ., ծավալը՝ 25 մամուլ,
ֆորմատը 64X90 1/16, տպաքանակը՝ 5000, տպագրությունը՝ օֆսեթ :
«Կրթության ազգային ինստիտուտ», Երևան, Տիգրան Մեծի 67, հեռ. 57 21 00